ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ՁՈՒՂԱՅԵՑԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

# ՄԱՏԹԷՈՍ ՁՈՒՂԱՅԵՑԻ

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund express
their gratitude to “JTI ARMENIA” CJSC for sponsoring
the publication of this book

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

MATENADARAN

MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

# MATT‘EOS JUGHAYETS‘I

## INTERPRETATIONS OF THE GOSPEL OF LUKE

*Critical Text by*

HOVHANNES BEYLERYAN *and* VIGEN GHAZARYAN

*Preface and Index by*

HOVHANNES BEYLERYAN

YEREVAN 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՄԱՏԹԷՈՍ ՁՈՒՂԱՅԵՑԻ

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

*Բնագիրը հրատարակութեան պատրաստեցին՝*
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԵՅԼԵՐՅԱՆԸ և ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԸ**

*Առաջաբանը և ցանկերը՝*
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԵՅԼԵՐՅԱՆԻ**

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Մ 332

*Տպագրվում է*
*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի*
*գիտական խորհրդի որոշմամբ*

*Նվիրվում է գրքի խմբագիր՝ Ա. Տեր-Ստեփանյանի հիշատակին*

*Մատթէոս Ջուղայեցի*
Մ 332 *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու / Մատթէոս Ջուղայեցի։ Բնագիրը՝ Հովհաննես Բեյլերյանի և Վիգեն Ղազարյանի։ Առաջաբանը և ցանկերը՝ Հովհաննես Բեյլերյանի.- Եր.։ Մատենադարան, 2022.- 319 էջ։*

*Մատթեոս Ջուղայեցին Գրիգոր Տաթևացուց ժառանգել է Տաթևի համալսարանի ղեկավարությունը։ Իր ժամանակի մասին նրա վկայությունները կարևոր սկզբնաղբյուրի արժեք ունեն։ Նա ներկայացնում է Սյունիքի իրավիճակը մոնղոլական արշավանքի օրերին, հիշատակում Տանձափարախի (Բեխի), Բզենո-Նորավանքի, Երնջակի անապատները, ցույց տալիս, որ եղել են դիմադրության կենտրոններ, օրինակ՝ Երնջակի պաշարված բերդը, որտեղ ինքը տարիներով ապրել է ու աշխատել։ XVII դ. հեղինակ Վարդան Բաղիշեցին Մատթեոս Ջուղայեցուն համեմատում է Առաքել Սյունեցու հետ և համարում Սյունյաց աշխարհի ամենանշանավոր վարդապետներից մեկը։ Սույն հրատարակությամբ ներկայացվում է Ղուկասի Ավետարանի Ջուղայեցու մեկնությունը, որը հեղինակի առաջին ստվարածավալ և առանցքային աշխատությունն է։*

ISBN 978-9939-897-04-2
© Մատենադարան, 2022
ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

# ԱՌԱՋԱԲԱՆ

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Հայ դպրությունը և հոգևոր մշակութային կյանքը ձևավորվել են Աստվածաշնչի հայերեն թարգմանության շնորհիվ, որի արդյունքում բացվում են ժամանակի առաջադեմ երկրների գրավոր մշակույթի հետ համաքայլ ընթանալու հորիզոններ։*

*Ժամանակի ընթացքում Սուրբ Գիրքն առավել հանգամանալից քննարկելու, մասնավորապես աշխարհական հոտին աստվածաշնչյան խորհրդաբանությունը մատչելի դարձնելու առաջնային խնդիր էր ձևավորվում։ Այս ձեռնարկումները թելադրված էին ևս մի անհրաժեշտությամբ։ Հարկավոր էր արձանագրել, թե ինչպես է Սուրբ Գրքի այս կամ այն դրվագը հասկանում Հայ Առաքելադավան Եկեղեցին, ըստ էության ո՞րն է Աստվածաշնչի ուղղափառ ընկալումը։ Խնդիր էր դրված, որ պարզ հավատացյալը ոչ միայն հավատա Տիրոջ Հայտնությանը՝ մտապահելով Տիրոջ խոսքերից որոշ հատվածներ, այլև որպեսզի նրա համար հնարավորինս հասկանալի լինեն նորկտակարանյան իրադարձությունների և Տիրոջ խոսքի խորհրդաբանության առանցքային կապերը։*

*Սուրբ Գրքի շրջանառման առաջին իսկ փուլից Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Եղնիկ Կողբացին և այլք ձեռնարկեցին Աստվածաշնչի առավել հաճախ կիրառվող գրքերի և բաժինների մեկնաբանման գործը։ Հարկ է նշել, որ նույն այս ընթացքի ու տրամաբանության մեջ էր ողջ քրիստոնեական Եկեղեցին։ Այդ է պատճառը, որ, ասենք, հինկտակարանյան Սաղմոսների մեկնություններ են գրվել*

դեռևս IV դարում Աթանաս Ալեքսանդրացու, Եպիփան Կիպրացու, Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու կողմից։ V դարից սույն գրքի մի համառոտ մեկնություն է հասել մեզ Դավիթ Անհաղթի հեղինակությամբ[1]։ Աստվածաշնչի այս և մյուս գրքերը XII դարից հանգամանալից մեկնաբանել են՝ Ներսես Լամբրոնացին[2], Վարդան Արևելցին[3], Գրիգոր Տաթևացին[4] և այլ նշանավոր հայ վարդապետներ։

Հայ մեկնողական դպրոցի վաղագույն շրջանի առանցքային մեկնություններից են Եղիշեի (V դ.) «Արարածոց մեկնութիւնը»[5] և «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորացը»[6]։

IX դ. հեղինակ Համամ Արևելցին մեկնել է աստվածաշնչյան Առակաց գիրքը[7], որի մեկ այլ, առավել ընդարձակ մեկնություն

---

[1] **Դավիթ Անհաղթ** (VI դ.), Մատենագիրք հայոց, հտ. Ի., ԺԶ. դար, Երևան, 2014, Յաւելուած՝ *Դաւիթ Անյաղթին վերագրուած և նրա անուանն առնչուող գրուածքներ*, բնական բնագրեր և առաջաբան Գ. Մուրադեանի, էջ 630-645. *Դաւթի փիլիսոփայի նախակարգեալ առաջաբանք Սաղմոսաց։*

[2] **Ներսէս Լամբրոնացի** (XII դ.), Վենետիկ 92, թ. 1ա-663բ, Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր 1526, թ. 1ա-852բ (այսուհետ՝ ՄՄ ձեռ.) և այլն։ Ինչպես նաև՝ **Հ. Ներսէս Ակինեան**, *Ներսէս Լամբրոնացի, կեանքն ու գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթումեանց*, Վիեննա, 1956, էջ 122-129։ Լամբրոնացին մեկնել է նաև հինկտակարանյան՝ Առակաց, Ժողովողի, Սողոմոնի իմաստությունները և Երգ Երգոց գրքերը։

[3] **Վարդան Արևելցի** (XIII դ.), ՄՄ ձեռ. 5075, թ. 1ա-323բ։

[4] **Ս. Գրիգոր Տաթևացի** (XIV-XV դդ.), ՄՄ ձեռ. 1126, թ. 4ա-65բ, ձեռ. 1130, թ. 147ա-195բ, թ. 250ա-256բ, ձեռ. 1198, թ. 3ա-267բ, ձեռ. 4370, թ. 69ա-118բ և այլ։

[5] **Լևոն Խաչիկյան**, Եղիշե, Մատենագիրք հայոց, հտ. Բ., Ա. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 765-929։ Արարածոց մեկնութիւն, Երևան, 1992։ Արարածոց գրքի VIII-IX դդ. հատվածական մի մեկնություն է պահպանվել **Տիմոթեոսի** հեղինակությամբ՝ ՄՄ ձեռ. 1981, թ. 176ա-185բ և ՄՄ ձեռ. 2679, թ. 210ա-221բ։ Ինչպես և **Գրիգոր վարդապետի** (հավանաբար XIII դ.) մեկնությունը՝ ՄՄ ձեռ. 2152, թ. 85ա-127բ, թ. 188ա-192ա։ Նույն հեղինակից մեզ է հասել **Ելից** գրքի մի համառոտ մեկնություն, ՄՄ ձեռ. 1096, թ. 62-82ա։

[6] **Եղիշէ վրդ.** (V դ.), ՄՄ ձեռ. 1097, թ. 153բ-187բ, Տպ. *Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վրդապետի Մատենագիտութիւնք*, Վենետիկ, 1838, էջ 179-210։

[7] **Համամ Արևելցի** (հավանաբար IX դ.), ՄՄ ձեռ. 1151, թ. 1ա-65բ։

*ունենք Ներսես Լամբրոնացուց[8] (XII դ.)։ Վերջինս, ի դեպ, բեղուն մեկնողական ժառանգություն է թողել։ Նրա հեղինակությամբ մեզ են հասել նաև հինկտակարանյան Ժողովողի[9] և Սողոմոնի իմաստության[10] մեկնությունները։ Առակաց, Ժողովողի և Սողոմոնի իմաստության գրքերի[11] համառոտ մեկնություններ է գրել նաև եռամեծ վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին։*



ՄՄ ձեռ. 2519, թերթ 5ա

---

[8] **Ներսէս Լամբրոնացի**, ՄՄ ձեռ. 4211, թ. 1ա-286ա, ՄՄ ձեռ. 1143, թ. 1ա-187բ։

[9] Նույնի, ՄՄ ձեռ. 4211, թ. 286ա-408բ, ՄՄ ձեռ. 2603, թ. 158ա-224ա։

[10] Նույնի, ՄՄ ձեռ. 4211, թ. 408բ-529բ և այլն։

[11] **Ս. Գրիգոր Տաթևացի**, ՄՄ ձեռ. 1264, թ. 338ա-403ա։

## Մատենաշրջանի, Մեկնություն Աստվածաշնչին Հայկական

*Մեծ տարածում է ունեցել Գրիգոր Նարեկացու Երգ երգոցի մեկնությունը*[12]*, այն մեկնել են նաև Վարդան Արևելցին*[13]*, Ներսես Լամբրոնացին*[14] *և Գրիգոր Տաթևացին*[15]*։*

*Մինչև XIV դ. հայերն արդեն մեկնել էին Հոբի*[16]*, Դանիելի*[17]*, Եսայու*[18]*, Երեմիայի*[19]*, Բարուքի*[20]*, Եզեկիելի*[21]*, Տաներկու մարգարեների Գրքերը*[22]*։*

---

[12] **Գրիգոր Նարեկացի** (X-XI դդ.), ՄՄ ձեռ. 2602, թ. 306բ-358բ և այլն:

[13] **Վարդան Արևելցի**, ՄՄ ձեռ. 5452, թ. 1ա-65բ և այլք:

[14] **Ներսէս Լամբրոնացի**, ՄՄ ձեռ. 4066, թ. 342ա-349բ:

[15] **Ս. Գրիգոր Տաթևացի**, Երուսաղեմի մատեն. ձեռ. 1190, էջ ՊՀԷ-ՋԻԸ, ՄՄ ձեռ. 5869, թ. 376բ-402բ:

[16] **Վանական վարդապետ** (XII-XIII դդ.), ՄՄ ձեռ. 5565, թ. 1ա-105բ, ՄՄ ձեռ. 1166, թ. 1ա-99ա և այլն: Հոբի գիրքը մեկնել է նաև **Ս. Գրիգոր Տաթևացին**, ՄՄ ձեռ. 1115, թ. 2ա-123բ, Երուսաղեմի մատեն. ձեռ. 1128, էջ ՃԼԱ 1-ՄԻԵ 2, Վիեննա, ձեռ. 493, էջ 260ա-317ա և այլն:

[17] **Վարդան Արևելցի**, Երուսաղեմի մատեն. ձեռ. 1681, էջ 7-150, ՄՄ ձեռ. 4834, թ. 168ա-212ա: Հինկտակարանյան սույն Գիրքը մեկնել է նաև՝ **Յովհաննէս Երզնկացին [Մործորեցի],** (հավանաբար XIII-XIV դդ.), Երուսաղեմի մատեն. ձեռ. 327, էջ 313-390, ՄՄ ձեռ. 1187, թ. 305ա-379ա:

[18] **Սարգիս Կունդ** (հավանաբար՝ XII-XIII), պահպանվել են հատվածներ **Գևորգ Սկևռացու** և **Հովհաննես Կոլոտի** երկերում: Այս մասին տե՛ս **Հ. Ներսէս Ակինեան**, *Յովհաննու Ոսկեբերանի Եսայեայ մեկնութիւնը հայ մատենագրութեան մէջ,* Մատենագրական հետազոտութիւններ, հտ. Դ., Վիեննա, էջ 39: **Դավիթ Քոբայրեցի** (հավանաբար XII-XIII դդ.), Երուսաղեմի մատեն. ձեռ. 1758, էջ 1-451, Վիեննա, ձեռ. 656, էջ 2ա-234ա: Եսայու մարգարեությունները մեկնել են նաև **Գևորգ Սկևռացին** (XIII դ.), ՄՄ ձեռ. 4825, թ. 1ա-206բ, **Ս. Գրիգոր Տաթևացին**, Վենետիկ, ձեռ. 218, էջ 310ա-382բ, ՄՄ ձեռ. 5871, թ. 61ա-110ա և այլն, **Հովհաննես Կոլոտիկը** (XIV-XV դդ.), ՄՄ ձեռ. 1128, թ. 7ա-199բ:

[19] **Մխիթար Գոշ** (XII-XIII դդ.), ՄՄ ձեռ. 2606, թ. 2ա-226բ, թ. 239ա-256բ և այլն:

[20] Նույնի, ՄՄ ձեռ. 1244, թ. 159բ-168բ:

[21] **Ստեփանոս Սիւնեցի** (VIII դ.), ՄՄ ձեռ. 5906, թ. 362ա-395բ, Երուսաղեմի մատեն. ձեռ. 69, էջ 578-586: Եզեկիելի մարգարեությունները հայ իրականության մեջ մեկնել են նաև՝ **Վարդան Արևելցին** (XIII դ.), ՄՄ ձեռ. 1270, թ. 34բ-45ա, ինչպես և՝ **Եսայի Նչեցին** (XIII-XIV դդ.), ՄՄ ձեռ. 5906, թ. 3ա-203ա, Երուսաղեմի մատեն. ձեռ. 671, էջ 3-375:

[22] **Ներսէս Լամբրոնացի**, ՄՄ ձեռ. 1216, թ. 3ա-218ա, ՄՄ ձեռ. 4980, էջ 1ա-299բ և այլն:

*Նոր Կտակարանի խիստ արժեքավոր մեկնություններից են՝ Ս. Գրիգոր Տաթևացու՝ Մատթեոսի[23] և Հովհաննու[24] Ավետարանների մեկնությունները։ Մատթեոսի Ավետարանը մեկնել են նաև Անանիա Սանահնեցին[25] (XI դ.), Ս. Ներսես Շնորհալին[26], Հովհաննես Ծործորեցին[27] և այլք։*

*Մարկոսի Ավետարանի ամբողջական միակ մեկնությունը հայ իրականության մեջ կատարել է, ամենայն հավանականությամբ, XIII դարի հեղինակ Բարսեղ Մաշկևորցին[28]։*

*Ղուկասի Ավետարանի մեկնության մեզ հասած ամբողջական վաղագույն օրինակը պատկանում է Իգնատիոս Սկևռեցուն, ով կաթողիկոսի պատվերով այն իրականացրել է 1130 թ.[29]։ Հետագայում նրա մեկնությունն այնքան արժեքավոր և հիմնավոր է համարվել, որ Ղուկասի Ավետարանի բոլոր մեկնիչներն այս կամ այն չափով օգտվել են սույն աշխատությունից։ Բացառություն չէ նաև մեր այս գրքում ներկայացված մեկնությունը։*

*Վերջապես, Հովհաննու Ավետարանը միջնադարյան վարդապետներից մեկնել են Սարգիս Կունդը[30] (XII դ.) և, ինչպես վերը նշեցինք,*

---

[23] **Ս. Գրիգոր Տաթևացի**, ՄՄ ձեռ. 3578, թ. 2ա-284բ, ՄՄ ձեռ. 1295, թ. 2ա-340բ և այլն։

[24] Նույնի, ՄՄ ձեռ. 1394, թ. 2ա-363բ, ՄՄ ձեռ. 1396, թ. 4ա-132բ։

[25] **Անանիա Սանահնեցի**, աշխ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 208։

[26] Ս. Ներես Շնորհալին մեկնել է մինչև Ե. գլխի 17 համարը, Երուսաղեմի մատեն. ձեռ. 332, էջ 13-205, նույն ձեռագրատուն՝ ձեռ. 458, էջ 5ա-168բ, ՄՄ ձեռ. 1247, թ. 2ա-107ա։ Շնորհալու կիսատ թողած մեկնությունը շարունակել է նրա աշակերտ Արիստակեսը, և ավարտին է հասցրել արդեն վերջինիս աշակերտ Եփրեմը, Երուսաղեմի մատեն. ձեռ. 332, էջ 206-604, ՄՄ ձեռ. 1283, թ. 65ա-180ա և այլն։ Տպ. *Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի*, Կոստանդնուպոլիս, 1825, էջ 658։

[27] **Հովհաննես Ծործորեցի**, *Մեկնություն Մատթեոսի Ավետարանի*, Ս. Էջմիածին, 2010։

[28] **Բարսեղ Մաշկևորցի**, ՄՄ ձեռ. 1314, թ. 2ա-308ա (ինքնագիր), Վիեննա, ձեռ. 73, էջ 1ա-191բ։

[29] **Իգնատիոս Սկևռեցի**, *Մեկնութիւն Ավետարանին որ ըստ Ղուկասու*, Կ. Պոլիս, 1824, 515 էջ։

[30] **Սարգիս Կունդ**, Վենետիկ, ձեռ. 970, էջ 11ա-269ա, ՄՄ ձեռ. 5448, թ. 30ա-269բ։

*Ս. Գրիգոր Տաթևացին ու Մատթեոս Զուղայեցին[31] (XIV-XV դդ.)։ Զուղայեցուց մեզ է հասել է նաև Գործք Առաքելոցի մեկնությունը[32]։*

*Սույն մեկնությունների էջերում հայ վարդապետներն օգտվում էին ընդհանրական եկեղեցու հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Գրիգոր Նյուսացու, Հովհան Ոսկեբերանի և այլոց՝ աստվածաշնչյան նույն գրքերին առնչվող աշխատություններից։ Հարկ է ընդգծել, որ հայերն առաջիններից էին, որ համաքրիստոնեական հայրախոսական գրականության առանցքային աշխատությունները թարգմանեցին սեփական լեզվով։ Արդեն V դարի առաջին կեսին արված թարգմանությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ հիմնական խմբերի.*

**Ծիսական** *բնույթի երկեր՝ պատարագամատույցներ, ժամագրքեր և այլն*

**Եկեղեցու պատմությանը** *նվիրված աշխատություններ[33]*

**Կանոնական** *գրքեր՝ եկեղեցական ժողովների ու սուրբ Հայրերի գրած կանոններ և սահմանումներ*

**Հակաճառական** *գրականություն՝ աշխատություններ, որոնցում խոսվում է ուղղափառ վարդապետության մասին, և քննադատվում են սուրբգրային թյուրընկալումներն ու տարաբնույթ աղանդները[34]*

**Մարտիրոլոգիա՝** *վարքեր ու վկայաբանություններ*

**Հայրաբանական** *գրականությունը բազմակողմանի դրսևորումներով՝ Ճառեր, քարոզներ, ուղերձներ և այլն*

*Եվ, անշուշտ, Սուրբ Գրքի* **մեկնությանն** *առնչվող աշխատություններ։*

---

[31] **Մատթեոս Զուղայեցի**, ՄՄ ձեռ. 5871, թ. 13ա-60բ, ՄՄ ձեռ. 5232, թ. 154բ-241ա։

[32] Նույնի, ՄՄ ձեռ. 2519, թ. 75ա-287ա, ՄՄ ձեռ. 5854, թ. 2ա-9ա, 25ա-264բ։

[33] Զորօրինակ՝ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ը և այլք։

[34] **Եպիփան Կիպրացու** «Ընդդէմ աղանդոց» երկի որոշ հատվածներ պահպանվել են **Եզնիկ Կողբացու** «Եղծ աղանդոց»-ում, **Հիպպոլիտոս Բոստրացու** ճառերն ու մեկնությունները, նրա՝ «Բոլոր աղանդների հերքումը», պահպանվել է միայն Եզնիկ Կողբացու վերընշյալ աշխատությունում։

*Այսպիսով, մինչև V-XV դարերը, հայ իրականության մեջ արդեն բազմակողմանիորեն մեկնաբանված էին աստվածաշնչյան առանցքային բոլոր գրքերը։*

## ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԴՐԱՆՑ

*Աստվածաշունչը մեկնվում էր երկու հիմնական մեթոդով.*

*1) Երբ փորձ էր արվում բացահայտել Տիրոջ խոսքի այլաբանական, միստիկ ենթաշերտերը (այլաբանական մեկնության այս մեթոդը կիրառում էին հիմնականում ալեքսանդրյան դպրոցի վարդապետները)*

*2) Բառացի, ուղիղ մեկնություն էր արվում, որի ջատագովներն էին Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները։*

*Ընդ որում՝ «բառացին» կապվում էր «հոգևոր և նյութական իրողությունները մեկնաբանելու հրեական ավանդույթի» հետ, «մինչդեռ այլաբանականը կրում էր արևմտյան, անտիկ աշխարհընկալման մեջ տիրապետող վերացարկման դրոշմը»[35]։ Մեկը՝ բառացին, ձգտում էր շոշափել սուրբգրային տեքստի «մարմինը», իսկ մյուսը՝ այլաբանականը, փորձում էր որսալ Նրա ոգին։ Հարկ է, սակայն, նշել, որ այս տարբաժանումն էլ բավական պայմանական էր, քանի որ անտիոքցիները, ի վերջո, հասկանում էին, որ ամեն ինչ տրամաբանական բանաձևումների մաղով հնարավոր չէ անցկացնել, այլ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Տիրոջ Խոսքի և՛ բառացի, և՛ այլաբանական կողմերին, խոսքն այս կամ այն դպրոցի նախապատվությունների մասին էր՝ կախված մասնավորապես այն հանգամանքից, թե որ մեկնաբանման սկզբունքներն էին գերադասվում, պլատոնական մտահայեցական մեկնաբանությա՞ն, թե՞ արիստոտելյան ճշգրիտ բանաձևումների սկզբունքները։*

---

[35] **Հակոբ Քյոսեյան**, «Մեկնողական գրականություն», *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան*, 2002, էջ 715, այս մասին տե՛ս նաև՝ **Փայլակ Անթապյան**, «Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ», *Բանբեր Մատենադարանի*, № 15, 1986, էջ 66։

## Մաթեոս Զո-ղայեցի, Մեկնո-ի-ն Ա-ելոտարանին Ղո-կասո-

*Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանիչներն, ըստ էության, միաժամանակ և Սուրբ Գրքի առաջին մեկնիչներն էին։ Հայ վարդապետարաններում օգտվում էին այս երկու դպրոցների առաջարկած մեթոդներից էլ, սակայն փորձելով մնալ ողջամիտ չափավորության մեջ, որպեսզի այլաբանական (իրենց խոսքով ասած՝ խորհրդական) իմաստավորումներով տուրք չտան ավելորդ միստիցիզմի, և հակառակը, չափից ավելի տառացի, պատմական սկզբունքին հետևելով՝ իրենց մեկնությունը չվերածեն պարզունակ նկարագրության։*

*Հայ մեկնողական գրականության ձևավորումը և զարգացումն անհնար է պատկերացնել առանց հայրաբանական գրականության։ Այդօրինակ թարգմանությունները հիմք էին դառնում սեփական մեկնողական դպրոցի ձևավորման համար։ Հետևելով այս թարգմանություններին՝ գաղափար ենք կազմում, թե մեզանում եկեղեցու հայրերի հատկապես որ երկերն էին առավել տարածված կամ ընդունված և երկրորդ՝ հետևում ենք մեկնողական մեթոդների վերաբերյալ քննարկումների ընթացքին, թե ինչպիսի բացատրական ելակետ է ընդունում կոնկրետ մեկնիչն աստվածաշնչյան այս կամ այն դրվագը քննելիս։*

*Այսպիսով՝ արդեն առաջին թարգմանություններին զուգահեռ, ձևավորվում էր սեփական մեկնողական եզրաբանությունը։*

*Հայ մեկնողական գրականությունը կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի՝ միջնադարյան, որ անվանվում է նաև հայրախոսական (IV-XV դդ.) և նոր շրջանի (XVI-XVIII դդ.)։ Տակավին Սահակ Ա Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը և նրանց թարգմանիչ աշակերտները մեծապես կարևորել են եկեղեցու սուրբ Հայրերի՝ Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու, Հովհան Ոսկեբերանի, Պրոկղի և այլոց երկերի, Ճառերի ու մեկնությունների թարգմանության գործը։ Հայ գրականության ձևավորման հենց սկզբում՝ հետագայում մեր կողմից կոչված Ոսկեդարում, համաքրիստոնեական որոշ հեղինակներ թարգմանվելով և տարածվելով հայկական միջավայրում, թողել են*

*հայ մեկնաբանական մտքի վրա ընդգծված և տարողունակ ազդեցություն։ Այսպիսի բացառիկ մի հեղինակ է մեզ համար, անշուշտ, սուրբ* **Հովհան Ոսկեբերանը**[36]*։*

*Եկեղեցու Հայրերը, ապա և մեկնիչները, միմյանցից փոխառելով, փոխանցել են քարոզի ոչ միայն ընդհանուր դավանաբանական հայեցակարգը, այլև Աստվածաշնչի տարբեր գրքերից ի մի են բերել տվյալ թեմային առնչվող սուրբգրային համապատասխան տեղիները։ Հատկապես առակների մեկնության դեպքում, որով հագեցած է Ղուկասի Ավետարանը, հայրախոսությունից ժառանգված խորհրդաբանական կառույցները տեսանելի են և ավանդաբար կայուն։*

*Հովհան Ոսկեբերանը, հաճախ ամբողջովին գծագրում է տվյալ աստվածաշնչյան դրվագի ողջ այլաբանական մանրակերտը, որով և հետագա դարերում այն զարգացում է ապրում և հեղինակից հեղինակ փոխանցվելով ձյուղավորվում՝ նորանոր չնչին հավելումներ ստանալով։ Ասենք, երբ նա խոսում է կերպարի խորհրդաբանությունից. «Հաստատ, ծանոթ-ցեալ յեղ պատգամ է մեզ, ո՛վ ասպատ-ածասէրդ, թէ ո՞վ է այգին Ի կամ ո՞վ է գէտ այգոյն, ո՞վ է այգեգործն Ի ո՞վ թպէնին»*[37]*։ Առակի այլաբանությունը նա տեսնում է այսպես. «Թպէնին» Ադամն է՝ «ի ղաղտ ճաշակմամբ մեղացն», «այգին»՝ դրախտն է, «գանկագործն»՝ Հայր Աստված։ Նմանօրինակ զուգադրումները գրեթե անփոփոխ նույնությամբ կիրառվում են բոլոր հետագա մեկնիչների կողմից, ինչպես և հայ մեկնողական ավանդույթում։*

---

[36] Հովհան Ոսկեբերանի հայերեն թարգմանությունների իրական արժեքն այսպես է բնութագրում անվանի բանասեր Գ. Զարպհանալյանը. «Աստվածաշունչ գրէն ետոր և գրեթէ անոր հավասար, մեր մատենագրութեան Ոսկեղէն դարու ամենընտիր և թանկագին ընծայք են Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետի հոգելից և սրտառուչ ճառից և մեկնութեանց թարգմանութիւնք», **Գ. Զարպհանալեան**, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց*, Վենետիկ, 1889, էջ 581։

[37] **Ս. Յովհան Ոսկեբերան**, *Ճառք, նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց*, Ս. Էջմիածին, 2008, էջ 333։

*Երբ վաղքրիստոնեական ականավոր սրբերից մեկը տալիս է աստվածաշնչի որևէ դրվագի կամ կերպարի ընկալման իր տեսլականը, հետագայում այն ողջ մեկնաբանական գրականության մեջ այս կամ այն կերպ պահպանվում է, ասես շաղախ, որի վրա ձևավորվելու էր Սուրբ Գրքի ընկալման ավանդույթը։*

*Հայրերը, սակայն, այս ամենը վերջնական չեն սեպում։ Իբրև անբեկանելի տեսակետ, այլ, իբրև կանոն, ինչպես նույն Ոսկեբերանի մոտ ենք հանդիպում, մատուցում են այդ տեսլականը որոշ թեկանությամբ. «...ինձ այսպէս թուի»՝ կարծես ընթերցողին խորհրդածելու ու որոնելու ազատություն և հնարավորություն տալով։ Ասել է թե՝ սիմվոլների ընկալումները, համեմատությունները, քարացած ու դոգմատիկ կերպով նրանց կողմից երբեք չէին ընկալվում։*

*Հայրախոսական գրականության մեջ տրվում է առարկայի, երևույթի, իրադրության համեմատությունների մոտածողության ընդհանուր եղանակը, բնույթը միայն։ Առավել ուշ շրջանի հեղինակներն արդեն հրաժարվում են նման պարզաբանող բառերից. «Ինձ այսպես թուի» և այլն։*

*Այսպիսով, հայ վարդապետական գրականության մեջ աստիճանաբար սկսվում են արծարծվել նաև մեկնաբանական արվեստի սկզբունքներին վերաբերող առանձին տեսական դիտարկումներ։ Ներսես Շնորհալին առաջադրում է բնագրի մեկնաբանման երեք եղանակ, նախ՝ տառացի, որի նպատակն է ներկայացնել առարկան կամ երևույթը՝ իր նյութական ձևի մեջ, երկրորդ՝ խորհրդանշական-փոխաբերական և երրորդ՝ հոգևոր-սրբազան, որն առաջին երկուսի ընդհանրացումն է։*

*«Գործք առաքելոց»-ի մեկնության էջերում Սուրբ Գրքի ընկալման երեք հիմնական միջոց է առաջարկում նաև Մատթեոս Զուղայեցին՝ սահմանելով բնագրի բացատրության նախ՝ մեկնաբանության, ապա՝ լուծման և, ի վերջո, ընտրության մեթոդը։ Այդպիսով, առաջին՝ մեկնաբանության եղանակը ենթադրում է սուրբգրային բնագրից արտածվող բաղում իմաստների վերհանում։ Երկրորդ՝ «լուծման» մեթոդը առավելապես ներառում է Եկեղեցու Հայրերի և մեծանուն վարդապետների մեկնությունների պարզաբանումները, որոշ իմաստով*

*դառնալով մեկնության մեկնություններ։ Եվ, վերջապես, «ընտրությամբ» իրականացվող մեթոդը թույլ է տալիս քննել աստվածաշնչյան դժվար ըմբռնելի կոնկրետ հատվածը։*

*Այս շրջանի հեղինակների մեկնաբանական սկզբունքների մասին խոսելիս, սակայն, տեղին է հիշել Մեսրոպ արք. Գրիգորյանի՝ Ստեփանոս Սյունեցու մեկնողական մեթոդների մասին դիտարկումը, որն, ըստ էության, կարելի է կիրառել ողջ հայ միջնադարյան մեկնողական գրականության նկատմամբ. «Ստ. Սիւնեցու մեկնաբանման մեթոդը՝ մեթոդէ մը աւելի՝ սիստեմ մըն է մեթոդներու։ Անիկա փաստօրէն գիտէ մեկնաբանման բազում մեթոդներ՝ պարզաբանական, այլաբանական, պատմական, բնագրային-բնաղատական, աստուածաբանական, բարոզչական զորս կը գործածէ ըստ տեղւոյն՝ գեղեցկայարմար կերպով, մեկնելու համար աւետարանական դժուարիմաց պատմութիւնները, խօսքերն ու բառերը»[38]։*

## ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹՈՆՔԸ

*Սուրբ Գրքի մեկնության գործը մեզանում սկսում է թափ հավաքել X դարից և իր ծաղկմանը հասնում XII-XIII դդ.։ Հետաքրքրական է, սակայն, որ VIII դարի հեղինակ Ստեփանոս Սյունեցու «Հորից Աւետարանչաց մեկնութիւն»[39]-ից հետո, մինչև XII-XIII դարերի մեծ վարդապետ Մխիթար Գոշի աշխատությունները[40], մեզ չի հասել Սուրբ Գրքի հայ հեղինակի որևէ մեկնություն։ Ինչո՞վ է պայմանավորված այս ընդհատումը։ Դժվար է նշել մեկ պատճառ։ Ստվարածավալ աշխատությունների պակասի պատճառներից մեկը պետք է համարել պետության օժանդակության բացակայությունը։ Գիտական միտքը*

---

[38] **Ստեփանոս Սիւնեցի**, *Մեկնութիւն չորից Աւետարանչացն*, աշխ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի, Երևան, 1994, էջ 11։

[39] Տե՛ս նույն տեղում, էջ 251։

[40] **Մխիթար վրդ. Գոշ**, *Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի, Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ* և այլն։

*պատշաճ աստիճանի վրա պահելու համար հարկավոր էր քիչ թե շատ անկախ իշխանական տների օժանդակությունն ունենալ. (Մխիթար Գոշը Հին Գետիկի վանքը՝ ներկա Գոշավանքը, հիմնեց Զաքարե Ամիրսպասալար և Իվանե Զաքարյան իշխանների աջակցության շնորհիվ, իսկ առանց Գոշի գործունեության դժվար է պատկերացնել Հայ վարդապետական մտքի վերածնունդը, որն, սկսվելով Հին Գետիկի վանքից, հետագայում տարածվեց՝ գիտական հիմնակշիռ բովանդակություն հաղորդելով Գլաձորի, ապա՝ Տաթևի գիտակրթական կենտրոններին)։*

*Չի կարելի նաև բացառել, որ որոշ մեկնություններ ոչնչացվել են. չէ որ այս շրջանից մեզ հայտնի են մի շարք օրինակներ, երբ ասպատակողները ոչ միայն սպանում, գերեվարում և թալանում էին տեղի հայ բնակչությանը, այլև ոչնչացնում մշակութային արժեքները, այրում ձեռագրատները*[41]։

*Սակայն վերադառնանք XIV դ., երբ Սյունյաց աշխարհում հայ գիտական մտքի մի նոր, վառ օջախ էր ձևավորվում։ Այս մասին Թովմա Սյունեցին վկայում է. «Յայսմ ժամանակի, յորո-մ փայլէր ի մէջ եկեղեց-ոյ պայծառ ջահն անշէջանելի Ի երկրորդ լո-սա-որիշն Հայկապէշան սե-ի, մեծ վարդապետն Գրիգոր, որ ոչ միայն հոմանո-ն գոլ սո-րբ Լ-ո-սա-որշին, այլ քանի-վ Ի արդեամբվ, դասդիսրակելով զմանկո-նա սո-րբ կարո-զիկէ, դիւցազ-ցանելով զշնորհս Հոգւոյն սրբոյ, զանչն ապացոյց գալով Ի վերնաջան վարդակա-վ յորդորելով զամենեսեան, զոմանս ի սէր ասդո-ա-ծային առ-ա-ջին-ո-թեան Ի զոմանս ի ճաշակս ասդո-ա-ծաշո-նշ վարդապետդ-թեան, դիրսպէս մատակարարելով...»*[42]։

---

[41] Միայն Բաղաբերդ ամրոցում 1170-ին սելջուկ-թյուրքերը ենթադրաբար այրել են 10.000 ձեռագիր: Միակ ամբողջական ավետարանական մեկնությունը, որ փրկվեց Սյունյաց դպրոցից, Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից Աւետարանչաց»-ն է: Մեկ օրում ոչնչացվեց Սյունյաց դպրոցի շուրջ 600 տարվա ընթացքում ձևավորված ժառանգությունը: Տե՛ս **Արմեն Տեր-Ստեփանյան**, **Եզնիկ եպս. Պետրոսյան**, *Ս. Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն*, Երևան, 2002, էջ 12:

[42] **Լևոն Խաչիկյան**, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, հտ. Ա., Երևան, 1955, էջ 24, (այսուհետ՝ **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ԺԵ. դ.*)։

*Մի պահ փորձենք հասկանալ՝ ի՞նչ ժամանակներում է գործել Հայոց եկեղեցին, քանի որ որոշ մասնագետներ կարծում են, թե այդ ամենը հնարավոր եղավ մոնղոլների կողմից Սյունյաց աշխարհում մի քանի իշխանական տների ներքին ինքնուրույնություն շնորհվելու հետևանքով միայն*[43]*։*

## ՁՈՒՂԱՅԵՑԻՆ ՄԻԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՄՐԱՊՆԴՎՈՂ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*XIV-XV դարերում հայության համար նոր փորձությունների շրջան է սկսվում։ Նախ՝ Կիլիկիան թագավորության կորուստն արևմուտքում, ինչպես և բուն Հայաստանի տարածքն աստիճանաբար դառնում է արևելքից մեր տարածաշրջան արշավող մոնղոլ-թաթարական, ապա թյուրքական ցեղերի ասպատակության դոտի։ Այս արհավիրքների արդյունքում ահագնանում է զանգվածային գաղթը դեպի Ղրիմ, Աստրախան, Ուկրաինա, Լեհաստան և այլուր։*

*Հայերիս համար աշխարհաքաղաքական ոչ բարենպաստ այս իրավիճակից զատ առկա էր և հոգևոր ճգնաժամ, որին Ձուղայեցին այսպես է անդրադառնում. «Թէպէտ յայսմ ժամանակի պակասէալ է հա-ապէ ի մարդկանէ, զի ոչ հա-ապան Աստուա-ածաշո-նչ Գրոցն, այլ՝ զոր ինվէանէ ի մերս քէրքէն ի այնմ հա-անին, ի զոր մարմնոյ աչօվ տէսանէն, նոցին ի ցանկան, որոց ոչ է մէջ փո-ըալ ո-զկը վրկոտոնէիցս, այլ կալ ըստ Հրամանա- Տէառ-ն մերոյ»*[44]*։*

*Այս ամենը հատկապես ծանր էր Հայոց Եկեղեցու համար։ Վանքերի համատարած թալանի հետևանքով, այլևս անհնար էր ապահովել դպրոցների և վարդապետարանների կանոնավոր գործունեությունը, ինչի արդյունքում դրանց թիվը երկրով մեկ խիստ նվազել էր։*

---

[43] **Գրիգոր Կիրակոսյան,** «Վանքապատկան հողատիրության ընդարձակման ուղիները XIV-XV դդ.», *Լրաբեր հասարակական գիտությունների,* 1971, № 4, էջ 78-87։

[44] Տե՛ս ՄՄ ձեռ. 2219, թ. 60ա։

*Պետք է նաև հավելել, որ այս շրջանում գոյություն ուներ, այսպես կոչված, «քաղաքական իսլամ» հասկացությունը։ Այն համագործակցում էր տեղերում եղած բոլոր կենտրոնախույս ուժերի հետ, և, ի դեմս տարաբնույթ կրոնական աղանդների, դաշնակիցներ էր գտնում*[45]*։*

*Իսլամին զուգահեռ, Հայաստանում, XII դարի սկզբից պառակտչական գործունեություն սկսեցին ծավալել արևմուտքից՝ նախ Կիլիկիա, ապա և Մեծ Հայքի տարածք թափանցող լատին քարոզիչները՝ ունիթորները (միարարներ)։ Ֆրանսիացիները և դոմինիկյան եղբայրները Փոքր Ասիայում հիմնում էին բազմաթիվ միսիոներական կենտրոններ*[46]*, որոնց դեմ, այս կողմերում հայտնվելու առաջին փուլում, հարկ է խոստովանել, թե՛ տեղի քրիստոնյա բնակչությունը, թե՛ իշխանական կամ հոգևոր դասը, առանձնապես չէին պայքարում։ Ամգամ Կիլիկիայի երկու կաթողիկոսները՝ Գրիգոր Անավարզեցին (1293-1307) և Կոստանդին Գ. Կեսարացին (1307-1322), կարծում էին, որ Եվրոպայից ակնկալվող օգնության դիմաց կարելի է և դավանական հարցերում ինչ-ինչ զիջումների գնալ*[47]*։*

*Հայ միարարները կենտրոններ են հիմնում Վասպուրականի Արտազ գավառում*[48]*, Նախիջևանի Քռնայի վանքում, Պարսկահայքի Մարաղայում և այլուր։ Անկասկած այս իրողությամբ է պայմանավոր-*

---

[45] Տես՝ **Seta B. Dadoyan**, *Islam and Armenian Political Strategies at the End of an Era: Matt'eos Jowlayec'i and Grigor Tat'ewac'i*, Le Muséon 114(3), p. 307

[46] Դրանցից էին՝ Թեոդորոս Առաքյալի վանքը, Ծործորի դպրոցը՝ Վասպուրականի Արտազ գավառում, Նախիջևանի Քռնայի վանքը և այլն։ Ըստ Գալանոսի՝ հայ միարարները քարոզչական կենտրոններ են ստեղծել անգամ Մեծ Հայքի սահմաններից դուրս, մասնավորապես Վրաստանում և Ղրիմում (առավել մանրամասն՝ տե՛ս **Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ*, հտ. Ա., Հռոմ, 1650, էջ 523։

[47] Մինչ այս, սակայն, մեզ հայտնի է, որ Հայոց Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսը 1246-ին մերժել էր Հռոմի Պապի հատուկ գրությունը, որով պետք է Հայոց դավանանքը հերձվածողական համարվեր, և իր պատասխանում հիշատակում է, որ Հայոց Եկեղեցին, ինչպես մյուս եկեղեցիները, նույնքան Առաքելադավան է (այս մասին առավել հանգամանալից տե՛ս **Մաղաքիա Օրմանեան**, *Ազգապատում*, հտ. Բ., գիրք Ա., Բեյրութ, 1960, էջ 1643)։

[48] Թադեոս Առաքյալի վանքը և Ծործորի նշանավոր դպրոցը։

*ված, որ Մատթեոս Զուղայեցուն երկար տարիներ գտնում ենք մասնավորապես Նախիջևանի Երնջակ գավառում: Իր քարոզչական անձնվեր առաքելությամբ նա պայքար էր մղում միարարականների դեմ, որոնք, ինչպես գիտենք հետագա իրադարձությունների ընթացքից, տարածվելով այս շրջաններում՝ բնակչությանը նախ դարձրին կաթոլիկ, ապա՝ նույն այս գավառներն ընդունեցին մահմեդականություն և կորցրեցին իրենց ազգային նկարագիրը*[49]*: Այս ընթացքը Զուղայեցին այսպես է նկարագրում. «...յեղակարծ ժամա- գրեալ եղեալ ի յարկէղս գրոց յեկեղեցւոջ առաւելական աղոտոյն Տաթեւոս, յորոմ ժամանակի էր կրկին ընդի-ղեալ դառն ի դաժան երկաբնակ աղանդն Բաղկեդոնի ի կոչեցեալ Գեօղն Բոնա, շրջաբնակ գա-ւառի: Ե- մեվ... առեալ ի-դաւանչի-ր ով օրինակեցավ՝ ի վարժո-ման ո-ղղաւէր մրցաց: Որոց ի էա, ըստ ինո-մ կարի, գիրեղջ մարդամբ գծագրեցի ցնա, առ ոչ մեծի վարժապետին իմոյ Յոհաննու- Որոգնեց-ոյ...: Ե- ապա առեալ ընթացավ ի վերոյ ասացեալ գա-առն, ի պարտավարեալ ովա- հարկավ պհայհոյիշն ճակար, ի ցրո-եցա- փաղանկն աղթարմայո-թեան, ի բապտ-մ վանորայս առեալ ի նոցանէ եղեալ ո-րախո-թի-ն ո-ղղափառաց դառոց ամա բապտ-ման: Յորո-մ ի էր ի թի- շրջագայո-թեան պօմարին մեծի Պ. ի ԻԸ. (1379) ամի»*[50]*:*

*Այսպիսով, թեև լատին միաբանները՝ մասնավորապես Բարդուղիմեոս Մարաղացին, Պետրոս Արագոնացին, ինչպես և Հովհաննես և Հակոբ Քոնեցիներն, իրենց թարգմանություններով որոշակի թարմություն էին բերում տեղի՝ որոշ վայրերում ներփակված գիտական միջավայրին, սակայն, կարճ ժամանակ անց, միարարների ակտիվ քարոզչությունը դուրս է գալիս արդեն կաթոլիկացած հայերի գյուղերից և սկսում պառակտչական կործանարար գործունեություն ծավալել առաքելադավան համայնքներում:*

---

[49] **Լևոն Խաչիկյան**, «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը», *Բանբեր Մատենադարանի*, № 11, 1973, էջ 167:

[50] **Լևոն Խաչիկյան**, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1950, էջ 529-530 (այսուհետ՝ **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ԺԴ. դ.*):

*Ըստ Զուղայեցու՝ լատինների հաջողությունները, ի թիվս այլոց, պայմանավորված էին մեր ժողովրդի որոշ հատվածի օտարասիրության հակումներով. «Այլ ի սովորութիւն է քնական մեղոյ ապինա՝ ի յօտար ապգաց ի մասուրից քանին ցանկալ ի սրտնել, թէի կարի յերթոց է արարեալ, ի վնոյն ընթերցանել ի պիրոյ Հօր, թէի կարի մեծաց է աշխատեալ՝ ոչ ընդունել. վասն որոյ աղաչեմ՝ մի պանմտութիւնա պայս ի գործ ածել, այլ ընդ օրատրացն ի պէոյս սիրել ի մեծարել»[51]։*

*Կիլիկիայում և Հայաստանի որոշ գավառներում, աստիճանաբար սկսվում են ձևավորվել և այս պրոցեսների հակազդեցության կենտրոնները, որոնց առաջնային նպատակն էր պահպանել Հայոց Եկեղեցու ունեցած նախկին դիրքերը։ Այս շարժումը մասնավորապես գլխավորում էին Գլաձորի (որը ժամանակակիցները հաճախ երկրորդ Աթենք էին անվանում)[52] և Տաթևի համալսարանների տանիքի տակ ճգնող վարդապետները, որոնցից հատկապես մեծ առաքելություն կատարեցին Եսայի Նչեցին, Հովհան Արճիշեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին, Մատթեոս Զուղայեցին, Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մեծոփեցին և այլք։*

*Մատթեոս վարդապետ Զուղայեցին քարոզելով Տաթևի դպրոցում, ինչպես և այս շրջանի մի շարք այլ վարդապետներ, ստիպված էր պայքարել ոչ միայն՝ եկեղեցին կեղեքող ներքին աղանդավորականության կամ Արևմուտքից մեծապես օժանդակություն ստացող և Հայաստանում տարածվող ունիթորականության, այլև այս տարածաշրջանում հաստատվող նոր կրոնի՝ մահմեդականության դեմ։ Սրա վկայությունն է 1393 թվականից առաջ, ամենայն հավանականությամբ Զուղայեցու՝ Աղթամարում գտնվելու տարիներին գրած «*Վասն հարցմանց անօրինաց զանազան պատասխանիք*»[53] երկը, որն ըստ Զուղա-*

---

[51] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ժե. դ.*, էջ 120-121:

[52] **Сен Аревшатян, Самсон Лалафарян**, «Сочинение Иоанна Воротнеци “об элементах”», *Բանբեր Մատենադարանի*, № 3, 1956, էջ 343:

[53] Տե՛ս ՄՄ ձեռ. 969, թ. 107ա-112բ:

*յեցու՝ մահմեդական «դանիշմանի»[54] հետ տեղի ունեցած վեճի մի համառոտագրված սղագրություն է։ Բովանդակային առումով այն, իհարկե, մի շարք աղերսներ ունի իր ուսուցչի՝ Գրիգոր Տաթևացու «Հարցմանց» գրքի «Ընդդէմ տաճկաց» հատվածի հետ[55]։ Ի դեպ՝ Զուղայեցու քննախույզ ընթերցողը կնկատի, որ նա ոչ միայն տիրապետել է արաբերենին, այլև քաջածանոթ է եղել մահմեդականության հիմնադրույթներին։*

*Այս առումով, Տաթևի դպրոցի վարդապետները հայ իրականության մեջ առաջիններից էին, որ գիտակցում էին իսլամի առանձին կրոն լինելու եղելությունը և չէին դիտում այն, ինչպես շատերը նախկինում, որպես լոկ մի արիոսական աղանդ[56]։ Զուղայեցու ժամանակներում ուղղակի օրապահանջ էր դառնում ուսումնասիրել այս կրոնն առավել հանգամանալից, մասնավորապես նրա մուտքը դավանական տեսանկյունից կանխելու առաջնահերթությունից ելնելով։ Ինչպես գրում է Մատթեոսը. «Նմանապէս և մահմետականքն մոլորեալ են, զի ի Սէյթանէ ա-ան և ոչ զան այն պայքարին, զէ Քրիստոս Թլփատեցա-, նոքա զան այն Թլփատին, այլ զի ի խորհրդէ Հնոյն Հա-ատարելոյ, զան այն և ընդ Հնոյն ապէլիք են Քրիստոսի»[57]։*

*Հատկապես մեծ արժեք է ներկայացնում Մատթեոսի՝ իբրև վկայի, անդրադարձը Լանկ-Թամուրի ու կարա-կոյունլու ցեղերին։ Զուղայեցու՝ մահմեդական արշավանքների հիշատակումները XIV դ.*

---

[54] Նույնն է ինչ ուսուցչապետը, մոլլան իսլամում։

[55] Տե՛ս **Հակոբ Քյոսեյան**, «Մատթեոս Զուղայեցու ջատագովական գրությունը», Էջմիածին, Ե (2010), էջ 97-110։

[56] «One of the theses of this study is that for the first time in Armenian literature these authors dealt with Islam not as a variant of the Arian heresy – a current practice for centuries – but as a competitive religion and an alternative culture. Consequently, the objective of both Grigor and Matt'eos was primarily social, hence didactic. Their language and choice of examples indicate to a clear strategy to instruct the public and arm them with rhetorical weapons for a popular resistance, as it were, against campaigns to convert them to Islam», **Seta B. Dadoyan,** *Islam and Armenian Political Strategies at the End of an Era: Matt'eos Jowlayec'i and Grigor Tat'ewac'i,* Le Muséon 114(3): 305-326, July 2001, p. 306-7:

[57] **Մատթէոս Զուղայեցի**, *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու*, ՄՄ ձեռ. 2519, թ. 9ա։

*արժեքավոր վկայություններ են ասպատակողների կողմից այլադավանների (մասնավորաբար քրիստոնյաների) նկատմամբ տարվող քաղաքականության մասին. «Աչք ասեն պովա, երբէ ով պէրիսպոնեայ կուղպրէ կամ ապանանէ՝ ապվայուրիւն նամա է»[58]: Եվ կամ 1395-ով թվագրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ վակեաց պաշխարհս ամենայն Հուրն Հարայոյն Թամուր կոչեցեալ...»[59]: Մատթեոսի հիշատակումներն ի ցույց են դնում, որ, չնայած ուժերի անհավասարությանը, հայերը, փակվելով որոշ քաղաք-ամրոցներում, աներևակայելի քաջագործություններով ինքնապաշտպանության օջախներ են ստեղծել, որոնց հաջողությունը երբեմն տևել է մի քանի տարի, երբեմն՝ ձգվել շուրջ մեկ տասնամյակ:*

*Նման մի ապաստան էր այդ շրջանում Երնջակի անառիկ բերդը[60], որը թշնամուն դիմադրում է մոտ 13 տարի (ՅՊԷ. ամէն մինչև ի ՊԽԸ. (1386-1399) ամ թուականին): Ահա այս պաշարման մեջ ենք գտնում և Մատթեոսին, ով թե քանի տարի է ստիպված եղել անցկացնել այդ հարկադրական պաշարման մեջ, մեզ համար մնում է անհայտ[61]:*

---

[58] ՄՄ 2229, ժողովածոյ, թ. 118բ-123ա, *Նորին Մատթէոս վարդապետի քարոզ ի բանն. Մի՛ սպանանէր...*:

[59] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ԺԴ. դ.*, էջ 613:

[60] Սույն բերդը գտնվել է այժմյան Նախիջևանի տարածքում, պատմական Գողթն գավառում: Կոյունի՝ Մաշտոցի վարքում ճիշտ տեղը չի շեշտվում, բայց պատումից կարելի է ենթադրել, որ Երնջակ գավառը եղել է Մաշտոցի ճգնակեցության մենավայրը, ուր հետագայում կառուցվել է Մեսրոպավանքը: Մարավանիս գյուղի անվանումը նույնպես խոսում է այդ եղելության արձագանքի մասին: Տե՛ս **Մանուկ Աբեղյան**, *Երկեր*, հտ. Գ., Երևան, 1968, էջ 88: Բերդի պաշարման և ընդհանուր այս իրադարձությունների շուրջ առավել մանրամասն տե՛ս **Լևոն Խաչիկյան**, *Աշխատություններ*, «Հայաստանի քաղաքական վիճակը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները XIV-XV դարերում», հտ. Գ., Երևան, 2008, էջ 27-28:

[61] Ջուղայեցին հիշատակում է, որ այստեղ է գրել Հակոբ Մծբնա Հայրապետին նվիրված իր տաղը. *Տաղ ազնիւ Յակոբայ Մծբնայ հայրապետին ի Մատթէոս վարդապետէ*, ՄՄ ձեռ. 425, թ. 46բ-47բ:

# ՄԱՏԹԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՅԵՑՈՒՆ ՍԱԿԱՎ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

*Հայ բանասիրության մեջ մի շարք հեղինակների նկատմամբ թռուցիկ, մակերեսային անդրադարձը միայն խորհրդային տարիների անբարեհաճությամբ ճիշտ չէ պայմանավորելը։ Անհարկի մոռացության մատնված հեղինակների շարքում Մատթեոս վրդ. Ջուղայեցին, ցավոք, միակը չէ։ Ինչպես նշում է Լ. Խաչիկյանը*[62]*, Մատթեոս Ջուղայեցուն իրենից առաջ անդրադարձել է միայն XVII դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին՝ իր* «Ով nf են արարեալ զլուծմունս և զքաղուածոյս Աստուածաշունչ Գրոց»[63] *ցուցակի մեջ։ Միջնադարյան այս նշանավոր մեկնիչի մասին ևս մի անդրադարձ ենք տեսնում 1750 թ. Կ. Պոլսում լույս տեսած* «Վասն քարոզութեան բանի՝ առեալ ի վարդապետութենէ սուրբ հօրն Եւագրեայ...»[64] *գրքում։ Բարսեղ վրդ. Սարգսյանը, Եվագր Պոնտացուն նվիրված իր աշխատասիրության շրջանակներում, հպանցիկ անդրադառնալով Մատթեոսին, ենթադրում է, որ վերջինս պետք է որ ծնունդով Երզնկայից լիներ*[65]*։ Հ. Ոսկյանը, փորձելով հասկանալ՝ որտեղից կարող է բխել սույն ենթադրությունը, միակ վարկածը, որ առաջարկում է ի հաստատումն այս պնդման, այն է, որ Եվագրով զբաղվում էին մասնավորապես երզնկացիները, իհարկե Ոսկյանը հավելում է նաև, որ Սարգսյանը, անշուշտ, կարող էր և առավել ամուր կռվան ունենալ, որի մասին, ցավոք, որևէ տեղ չի նշել*[66]*։*

*Բարսեղ վրդ. Սարգսյանն իր հերթին, նույն այս դրվագում այնպես է ներկայացնում իրավիճակը, որից կարելի է եզրակացնել, թե*

---

[62] **Լևոն Խաչիկյան**, «Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը», *Բանբեր Մատենադարանի*, № 3, 1956, էջ 57-58 (այսուհետ՝ **Լևոն Խաչիկյան**, *Մատթեոս Ջուղայեցի*)։

[63] Տե՛ս ՄՄ 8444, թ. 182աբ։

[64] **Եւագր**, *Գիրք ուղղն խորհրդոց մեղաց*, Կ. Պոլիս, 1750։

[65] *Սրբոյն հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք*, աշխ. և ծնթ. Բարսեղ վրդ. Սարգսեան, Վենետիկ, 1907, էջ ՃԽԸ։

[66] **Հ. Համազասպ Ոսկեան**, «Մատթէոս վ. Ջուղայեցի», *Հանդէս Ամսօրեայ*, յուլիս-սեպտեմբեր, 1966, էջ 275-290։

Զուղայեցին մոնղոլներից խուսանավելու նպատակով իր կեցության վայրը մշտապես փոխելու, ինչ-ինչ դեպքերի բերումով է, որ հայտնվում է, այդ պահին առավել ապահով համարվող, Տաթևի վանական միջավայրում, և դա է պատճառը, որ նրան հետագայում համարել են եռամեծ վարդապետի՝ **Գրիգոր Տաթևացու** սաներից մեկը:

Ինչ խոսք, հնարավոր է, հենց այդպես է եղել, այսինքն՝ թշնամուց խուսանավելու, և դեգերումների արդյունքում Զուղայեցին ապաստան է գտնում Տաթևում[67], սակայն, այս շրջանից սկսյալ, մինչև իր մասին վերջին մեզ հասած վկայությունը, Մատթեոսին տեսնում ենք միայն Տաթևում:

Ինչ վերաբերում է նրա՝ **Գրիգոր** եռամեծ վրդ. **Տաթևացուն** աշակերտելու շահարկումներին, այս հանգամանքը նախ՝ Թովմա Մեծոփեցու կողմից վկայված փաստ է[68], ինչպես և ինքը՝ Մատթեոսը, մի շարք խորագրերում բազմիցս նշում է իր՝ Հովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթևացուն ուսանելու մասին.

«Աշակերտ տէառն Յովհաննու- Որոտնեց-ոյն...»,
«...նու-ատ Ի յերկին աշակերտի Յովհաննու- Ի Գրիգորի...»,
«Նու-ատ Մատթէոսի՝ աշակերտի եռ-ամեծին Գրիգորի...»,
«յաշխատու-թենէ վարժապետին իմոյ Գրիգորի մեծի...» և այլն:

Ավետարանների մեկնության խորագրից բացի, նա Տաթևացու անունը հիշատակում է նաև «Վեցօրէից»-ի, «Գործք Առաքելոցի»-ի իր աշխատությունների խորագրերում, ինչպես նաև մի քանի գանձերում, ուր թողնված է հետևյալ ակրոստիքոսը՝ «Ի Մատթէոսէ, ընդրեաց Գրիգոր»[69]:

---

[67] Այս մտայնության աղբյուրը 1395-ին գրված Զուղայեցու մի հիշատակարանն է, ուր նա ակնարկում է, որ դեգերումները հասցրել են իրեն Տաթև՝ «պանդխտական կենսոֆ»: Տե՛ս **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ*, ԺԴ. դ., էջ 613:

[68] *Պատմութիւն Թովմա Մեծոփեցւոյ*, Փարիզ, 1860, էջ 50-51: Այս և երանչակի բերդի պաշարման մասին տե՛ս առավել մանրամասն **Լևոն Խաչիկյան**, *Աշխատություններ*, «Թովմա Մեծոփեցի, Դարաշրջանը, կյանքը, գործը», հտ. Գ., Երևան, 2008, էջ 632-634, 641:

[69] Ակրոստիքոսը տե՛ս ՄՄ ձեռ. 425, թ. 261ա-262բ, *Կանոն Մեծահրաշ Կիրակէի*, ՄՄ ձեռ. 474, թ. 152ա-157ա, *Գանձ Մեծի երկուշաբթիին:*

*Վերը նշված վարդապետ Բ. Սարգսյանը, Ջուղայեցու լեզուն բնորոշում է «գռեհիկ», մեկնաբանությունները՝ «ցամաք», իսկ հեղինակին համարում լոկ տեղային հեղինակություն՝ հավելելով, թե սա.* «Տաթևի դպրոցից դուրս բազմաթիւ ընթերցողներ ունեցած չպիտի ըլլայ»[70]:

*Այս տեսակետը, իհարկե, ևս որևէ քննադատության չի դիմանում, քանի որ Սարգսյանի նշած.* «Միչ ընթերցող ունեցած հեղինակին» *դժվար թե այդքան շատ անդրադառնային միջնադարյան մեր գրիչները, ինչպես հայրենիքում, այնպես էլ նրանից դուրս հայաշատ համայնքներում: Եվ վերջապես, Գրիգոր Տաթևացին հերթական հոգևորականի չէր կարող վստահել իրենից հետո Տաթևի դպրոցը կառավարելու դժվարին առաքելությունը, չէ որ մեզ հասել է 1402 թվագրված Թովմա Սյունեցու այդ հանգամանքը փաստող վկայությունը.* «...ա–նելով որդի Հարցապար ի ժառանգ վարդապետութեան ի–դոյ՝ պՃաղկեալն ամենայն քարոզութեամբ ի պարդարելն ամենալի շնորհի–՝ վարդապետական խոհեմութեամբ ի փիլիսոփէական արհեստի–՝ պակոյեանն ընդդէմ հերձուածողաց՝ պվարդապետն Մատթէոս, պոր յայսմ ամի (1402 թ.), կամակցութեամբն Սուրբ Հոգւոյն, ի ջանի– մեծ վարդապետին Գրիգորի, ի աղաչանա–վ գրոց աշակերտեալ անչանց՝ նորա– յաթոռ դէլէգութեան, (Ճեմարանի տեսչություն-Հ.Բ.) պոր Տէր Աստուա–ած վայել դացէ, ի պահեացէ պոռայ Հայր Ողորմ– թերկրեալ՝ պռակ պարծանաց կանոնիկէ եկեղեցի–ոյ»[71]:

*Հավելենք նաև, որ միջնադարում միայն բացառիկ վարդապետական շնորհ ունեցող հոգևորականներին էր Եկեղեցին պատվիրում կամ, այլ կերպ ասած, իրավունք շնորհում մեկնելու Սուրբ Գիրքը: Սրա վկայությունն է հենց միայն սուրբգրային մեկնությունների առկա քանակը, որոնք V-XVIII դարերի ընթացքում զարմանալիորեն սակավ են:*

---

[70] *Սրբոյն հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք*, աշխ. և ծնթ. Բարսեղ վրդ. Սարգսեան, Վենետիկ, 1907, էջ ճխը-ճխթ:

[71] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ԺԵ. դ.*, էջ 25:

## Մատթէոս Զուղայեցի, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասայ

*Վենետիկյան միաբան Հայր Համազասպ Ոսկեանը Մատթեոս Զուղայեցուն նվիրված իր հոդվածում, փորձելով Տաթևի համալսարանը ներկայացնել որպես գրչության, երաժշտության, մանրանկարչության կենտրոն, կարծիք է հայտնում, որ Մատթոս վրդ. Զուղայեցուն՝ հավանաբար շփոթելով Մատթեոս Ղրիմեցու հետ, ոմանք ենթադրել են, որ նա ունեցել է եպիսկոպոսական աստիճան, այնինչ, մեծ հավանականությամբ, նա եղել է սոսկ վարդապետ[72]: Ըստ այս տրամաբանության, այն եկեղեցական կենտրոնը, որի ջանքերի արդյունքում 1441 թվականին ի վերջո Կիլիկիայից Էջմիածին տեղափոխվեց Հայոց Կաթողիկոսական գահը, իրեն թույլ չէ՞ր կարող տալ եպիսկոպոսներ ունենալ: Ինչպես և, ինչքանո՞վ է հավանական, որ Գրիգոր Տաթևացին իր մեծ ջանքերով կայացրած համալսարանը ժառանգեր իր աշակերտներից «...մի պարզ վարդապետի նման՝ Գահանայի»[73]: Այնպես որ, շատ մեծ հավանականությամբ Հայ եկեղեցու նվիրապետության համակարգում Մատթեոս վարդապետն ունեցել է հենց եպիսկոպոսական աստիճան:*

*Եվ այս փաստերի համադրման արդյունքում ուսումնասիրողի մոտ բնական հարց է առաջանում, թե, ի վերջո, ո՞րն է այսօրինակ նենգափոխումների իրական պատճառը, քանի որ ինչպես կխոսենք ստորև նմանօրինակ վերաբերմունքը միայն վենետիկյան մեկ հոգևորականի գրչով չէր սահմանափակվում:*

*Բանն այն է, որ դեպքերի բերումով հայագիտությունը XVIII-XIX դարերում, եթե չասենք զարգացել, ապա գոյատևել է եվրոպական կաթոլիկ միջավայրում: Եվ եթե, նույն մխիթարյաններն ինչ-ինչ հարցերում չափազանց անաչառ են իրենց մոտեցումներում և վերլուծությունների մեջ, ապա հատկապես այն եկեղեցու վարդապետների*

---

[72] **Հ. Համազասպ Ոսկեան**, Ստեփանոս վրդ. Ռօշա, *Մատթէոս վրդ. Զուղայեցի*, Վիեննա, Մխիթարեան տպ., 1968, էջ 120-121:

[73] Ձեռագրական աղբյուրներից մեզ հայտնի է նաև այն երևույթը, երբ եպիսկոպոսը, համայնքում քահանա չլինելու պատճառով, ժամանակավորապես կատարում է քահանայի՝ կնունքի, թաղման և մի շարք այլ պարտականություններ: Այսինքն՝ անգամ եթե միջնադարյան այս կամ այն հեղինակը նշում է եկեղեցական այս կամ այն ծեսն իր կողմից կատարելու մասին, դա դեռ չի փաստում նրա քահանա լինելու հանգամանքը: Մեր հեղինակի դեպքում նման վկայություն նույնպես չկա:

*նկատմամբ, ովքեր* **հակաքաղկեդոնական** *և հետագայում հայրենի-քում՝* **հակաունիթորական** *լայն գործունեություն են ծավալել, մխի-թարյանների օբյեկտիվությունն այս հեղինակների նկատմամբ նկա-տելիորեն նվազում է։ Զորօրինակ՝ «Պատմութիւն հայերէն դպրութեան» ընդարձակ երկհատորյակի մեջ, որն, իդեպ, իր ժամանակի համար, անշուշտ, արժեքավոր ձեռնարկ պետք է համարել, նշանավոր բանա-սեր՝ Գ. Զարբհանալյանը Մատթեոս վրդ. Ջուղայեցուն ընդամենը երկու տող է հատկացնում*[74]*։ Նմանատիպ մակերեսային վերաբեր-մունքը նկատելի է և այս շրջանի այլ ուսումնասիրողների մոտ։*

*Ըստ էության, առաջին անգամ նմանատիպ հեղինակներին, այս-պես ասած, մոռացության խավարից հանում է XX դ. նշանավոր հայա-գետ Հրաչյա Աճառյանը, իր «Հայոց անձնանունների բառարան»-ում պատշաճ կերպով անդրադառնալով նման հեղինակների, զորօրինակ իր «Հայոց անձնանունների» III հատորում մեր առջև դնելով* **Մատթեոս վրդ. Ջուղայեցու** *աշխատանքների առաջին գիտական հանգամանալից ցանկը*[75]*։ Աճառյանը փորձում է պարզաբանել նաև կենսագրական հանգամանքներ՝ նշելով, որ Մատթեոսը Մեծոփա վանքում աշակեր-տել է նախ՝ Սարգիս բաբունապետին, իսկ հետագայում, հավանաբար 1410 թվականին, Հովհան Որոտնեցուն, ապա և նշանավոր Գրիգոր Տաթևացուն։*

*Մեզ հասած աղբյուրները մատնանշում են, որ մինչ 1395 թ. Մատթեոսը շրջագայել է ոչ միայն Հայաստանի տարբեր գավառնե-րում, այլև ճանապարհորդել է Փոքր Ասիայում, ուխտագնացությամբ եղել Երուսաղեմում, ինչպես և Կոստանդնուպոլսում։ Լևոն Խաչիկ-յանը հավանական է համարում, որ Մատթեոսն անձամբ եղել է* Սեբաստիայում, Կարինում, Արճեշում, Խլաթում։ *Նման ենթադրության աղբյուրը, հավանաբար, Ջուղայեցու «Բանն յԱւետարանէն Յովհաննու» աշխատության մեջ տեղ գտած այն դրվագն է, ուր Մատթեոսը ման-*

---

[74] **Գարեգին Զարպհանալեան**, *Պատմութիւն հայերէն դպրութեան*, Վենետիկ, 1878, էջ 219-220:

[75] **Հրաչյա Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ., Երևան, 1946, էջ 223-224:

*բամասնում է «օն» ձայնարկության իմաստը և պարզաբանում, որ այն ինքնըստինքյան իմաստ չունի. «...զի քաջ է երկրէ, որպէս Սէքաս-տացիք կան ասէն, և Կարնոյ վաղավացիք՝ տի, Ըստ ինչ՝ անէ, իսկ Իլարէացիք, որ է Բզնոնէք՝ օ ասէն յամենայն քանէ»[76]: Զուղա-յեցու ժառանգության քննությունը, ի թիվս այլոց, ցույց է տալիս, որ նա տիրապետել է մի քանի լեզուների, այդ թվում՝ արաբերենին, ծանոթ է եղել իսլամական կրոնական գրականությանը, որոնցից իր գործերում՝ քաղաբերումներ է արել:*

## ՄԱՏԹԵՈՍ ՎՐԴ. ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

*Անցյալում՝ մեր հոգևոր հայրերն ունեցել են քրիստոնեությունը հասանելի, մատչելի դարձնելու առաջնային կարիք՝ հաճախ իրենց առաքելությունն սկսելով դպրոցի սաներից՝ սեփական ջանքերն ուղ-ղելով առավելապես ճանաչողական բնույթի աշխատությունների վրա: Այս երկի ընդօրինակությունների քանակը ցույց է տալիս, որ Հայոց վարդապետարաններում՝ այն միանշանակ կիրառվել է իբրև դասագիրք: Կարելի է ենթադրել, որ սույն համառոտ աշխատանքը գրելուց հետո Մատթեոսը, ինչպես իր ուսուցիչ Գրիգոր Տաթևացին, օրինակ, Սաղմոսաց Մեկնության պարագայում[77] համառոտը գրելուց հետո, նպատակ է ունեցել ընդարձակել իր աշխատանքը, սակայն ինչ-ինչ պատճառներով դա անել չի հասցրել:*

*Մատթեոսը, հավանաբար առաջացած տարիքում՝ բարկանում է, որ իր ժամանակը ստիպված է վատնել հաճախ ծույլ և անհեռանկար աշակերտների վրա, փոխարենը զրկվելով նոր աշխատություններ գրելու հնարավորությունից. «Այլ՝ անմեղատիր լինել աղաչեմ, զի պատանոյ-ին ժամանակիս և աշխատանէ շատ խորհրդոց շփոթեալ աղբեղացու-ցին զհոգի և զմարմին իմ, մանա-անդ ծա-լո-ին*

---

[76] **Լևոն Խաչիկյան**, *Մատթեոս Զուղայեցի*, էջ 59, տե՛ս նաև ՄՄ 5871, էջ 34ա:

[77] Համառոտ տարբերակը տպագրել է **Արմինե Քյոշկերյանը**, Երևան, 1993: Իսկ Տաթևացու սույն մեկնության ընդարձակ տարբերակը դեռևս հրատարակված չէ:

անգո-ը և անհնապանդ աշակերտաց վերա-որբեցին զնա, և յա-երբ վերջուի ի սո-ր երբեալց, որպ անհրաժեշտ վարքարա-ռեանքի դասա-նացո-ցին զնա, վասն որոյ և ոչ կարացի զբովանդակն մակագրել այլ զսակա-ս ի քաղմաց...»[78]: Զուղայեցու Ղուկասի Ավետարանին նվիրված սույն քարոզգիրքը բացառություն չէ, այն գրվել է սաների համար. «Գործս գրեցի սա- ի յիշատակ սա- յապեղեալոց մանկանց եկեղեցեացդ Հայաստանեաց»[79]:

Եվ ինչն է մեզ խորագրից և նմանատիպ հազվադեպ հեղինակային շեշտադրումներից բացի թույլ տալիս կարծել, որ Զուղայեցին իր աշխատանքը գրել է եկեղեցու սաների կարիքների համար: Մենք տեսնում ենք, որ Մատթեոս վարդապետը, Ղուկասի Ավետարանի մեկնաբանվող հատվածների իր կողմից առանձնացված ծաղկաքաղում, միանշանակ նախընտրությունը տվել է նորկտակարանյան առակներին առնչվող դրվագների պարզաբանմանը, իսկ, ինչպես հայտնի է, նախ և առաջ առակների և առակավոր խոսքի առաջնային հասցեատերերը պատանիներն ու երիտասարդներն են:

**Մատթեոս վրդ. Զուղայեցուց** մեզ հասած աշխատությունների թվագրումը ցույց է տալիս, որ նրա գիտական գործունեությունը տևել է շուրջ մեկուկես տասամյակ: Օգտվելով Հովհան Ոսկեբերանի և Եփրեմ Ասորու «Գործք Առաքելոց»-ի մեկնություններից, նա պատրաստում է համանուն մի նոր մեկնություն[80]: Սույն մեկնության մեջ Մատթեոսը հիմնականում քաղաբերումներ է արել Գևորգ Լամբրոնացու (կամ Սկևռացու), Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի «Գործքի Առաքելոց»-ի ավելի վաղ հայերեն թարգմանված մեկնություններից, որոնց անունները, ինչպես մյուս դեպքերում, նա հետևողականորեն հիշատակել է իր խորագրերում:

---

[78] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ԺԵ. դ.*, էջ 120:

[79] **Մատթէոս Զուղայեցի**, ՄՄ ձեռ. 2219, 73բ:

[80] Ըստ Անառյանի, վերջինս շարունակում է արդեն իր ուսուցչի՝ Սարգիս վարդապետի սկսած գործը: **Հրաչյա Անառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ., էջ 223:

*Հարկ է նշել, որ վերջին երկու համաքրիստոնեական վարդապետների մեկնությունները մեզ հասել են հատվածաբար, ուստի Զուղայեցու աշխատանքը կարող է ինչ-որ առումով պատկերացում տալ նաև այդ կորսված հատվածների ընդհանուր բովանդակության մասին: Նման մի օրինակ է Սարգիս Կունդի «Ղուկասի Ավետարանի մեկնությունը»[81] (1153-1198), որը կարող է նպաստել Եփրեմ Ասորու և Հովհան Ոսկեբերանի մի նոր, թեկուզ և ոչ ամբողջական բնագրի պատրաստման աշխատանքներում: Այս ձեռնարկում կարևոր հավելումով կարող է իր էական նպաստը բերել և Իգնատիոս վրդ. Սկլեռցու (XI-XII դդ.) «Ղուկասի Ավետարանի մեկնությունը»[82], որտեղ նույնպես առատ քաղաբերումներ կան նշված հեղինակներից: Այս աշխատանքի մասին կխոսենք ստորև* (էջ 32-34)*:*

*Մեզ հայտնի է նաև, որ սույն՝ «Ղուկասի Ավետարանի մեկնությունը» Մատթեոսը գրել է իր «Գործքից» շուտ, քանի որ այստեղ մի հատվածում նա նշում է, որ Թեոփիլոսի մասին կխոսի մյուս իր ձեռնարկում՝* Գործքի *մեկնության մեջ* (տե՛ս սույն աշխ. էջ 59)*:*

*Ավելի ուշ՝ Տանձափարախում[83], 1393-ին, Մատթեոսը՝ հիմնվելով Եվագրի մեկնության վրա, գրում է «Գիրք ութ խորհրդոց մեղաց»-ը: Սրանից հետո մեզ հայտնի նրա հաջորդ աշխատությունը 1395-ով թվագրված «Վեցօրեայք»-ի մեկնությունն է[84], որը նույնպես գրվել է Սարգիս կրոնավորի պատվերով:*

---

[81] **Սարգիս Կունդ**, *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու*, Ս. Էջմիածին, 2005, սույն աշխատ. լավագույն բնագիրն է ՄՄ ձեռ. 2609, թ. 1ա-318բ (1184թ.): Այս բանաձևական սկզբունքով իրականացված մեկնությունը հայ իրականության մեջ մեզ հասած առաջին «շարժ մեկնությունն» է, որտեղ օգտագործվել են Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Ստեփանոս Սյունեցու և Իգնատիոս Սկլեռցու գործերից հատվածներ:

[82] *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի...*, Պոլիս, 1824:

[83] **Բեխի** անապատ, այլ անուններով՝ **Տանձափարախ** կամ Արիստակես, գտնվում է Սյունյաց Կապան քաղաքի մոտակայքում, ենթադրվում է, որ սա պատմության մեջ հիշատակվող նույն **Փառավարտ** վանական համալիրն է:

[84] ՄՄ ձեռ. 6847, թ. 268ա-365ա, ՄՄ ձեռ. 2229, թ. 160ա-245ա և այլն:

*Մեր ուսումնասիրության նյութ դարձած «Ղուկասի Ավետարանի» մեկնությունը», ամենայն հավանականությամբ, հեղինակի առաջին ամբողջապես ինքնուրույն արված մեկնությունն է, որն, ինչպես ձեռագրի հիշատակարանից ենք պարզում, գրվել է 1391 թ. Երնջակի Ապրակունեաց վանքում. «Աստ՝ եղև սքա՝ համառօտութեանն քանից վարդապետեան ի թվականութիւն Հայոց Պ. և Խ. ամ ոգս արդիւնաբան հաւատարին՝ Գրիգորի մեծի, յերկիրս Երնջակոյ, ի վանս Ապրակունեաց, զոր մեծ ջանիւ էառ ի յանթառմայից երկաբնակացն վաղ նահապետն Բրիգորոսի Մաղաքիա...»*[85]*:*

*Հայտնի է նաև, որ 1395-ից նա վերջնականապես հաստատվել է Տաթևում:*

*Հարկ է հիշատակել, որ Զուղայեցին եղել է նաև հմուտ գրիչ և ծաղկող: Մեզ են հասել նրանից մի քանի ընդօրինակություններ, որոնցից հիշարժան են 1397-ով թվագրված՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» աշխատությունը*[86]*, ինչպես և 1407-ին՝ տարբեր անձանց կողմից պատվիրված նրա երկու Ավետարանները:*

*1411 թվականից հետո Մատթեոսի մասին որևէ հիշատակություն չենք գտնում, այդ միջոցին նա պետք է որ առաջացած տարիքում լիներ: Ի դեպ, Զուղայեցու տարիքի առնչությամբ հետաքրքիր մի դիտարկում ևս: Կա վարկած, որ Մատթեոսը, չնայած Գրիգոր Տաթևացու աշակերտն էր, սակայն նրանք կարող էին լինել և տարեկիցներ*[87]*: Ինչևէ, մենք չենք կարող ճշգրիտ նշել ո՛չ նրա տարիքը, ո՛չ մահվան թվականը, ինչպես օրինակ դա կարելի է բավական ճշգրտությամբ նշել Գրիգոր Տաթևացու պարագայում: Սակայն, որ Մատթեոսը մահացած պետք է լիներ 1411-22-ի միջև, կասկածի տեղիք չի տալիս, քանի որ 1422-ով թվագրված մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Թվ. ՊՀԱ (1422) յիշեսջիք ի Քրիստոս զտէր*

---

[85] **Մատթէոս Զուղայեցի**, *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու*, ՄՄ ձեռ. 2519, էջ 73բ:

[86] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ, ԺԴ. դ.*, էջ 615:

[87] Միջնադարյան իրականության համար սա հազվադեպ երևույթ չէր, մարդիկ սկսում էին կրթություն ստանալ ինչպես երիտասարդ, այնպես էլ հասուն տարիքում:

Ստեփանոսն, զտէր Յովանէս… ընդ սոցին զվարժապետսն մեր վասն Գոշայ, Վարդանա…, Յովանիսի, Գրիգորի քաջ հռետորի, Մատթէոսի, որ ի Քրիստոս են հանգուցեալ»[88]։

## ԻԳՆԱՏԻՈՍ ՍԵՎԼԵՌՑՈՒՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԵՎ ՄԻՄՅԱՆՑԻՑ ՔԱՂԱԲԵՐՈՒՄՆԵՐ ԱՆԵԼՈՒ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՇՈՒՐՋ

*Երկու խոսքով անդրադառնանք Իգնատիոսից Մատթեոսի օգտվելու հանգամանքին։ Արդեն սույն գործի մեջ հանդիպող երեք խորագրերից երկուսում նշվում է հեղինակի՝ Իգնատիոս վրդ. Սևլեռցու «Ղուկասի Ավետարանի» մեկնությունից օգտվելու հանգամանքի մասին. «Ի գլխոյն Ղուկասու, Հաւաքումն բանից և քարոզք յոլովք ի մեկնութենէ Իգնատիոսի սուրբ վարդապետի Հայոց ժողովեալ աշխատասիրութեամբ Մատթէոսի՝ աշակերտի մեծի Գրիգորի հռետորի»։*

*Մեզ հայտնի է, որ XII դ. Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի հորդորով, այդ շրջանում Հայոց Եկեղեցում մեծ համարում ունեցող Իգնատիոս վարդապետը, ձեռնարկել է Ղուկասի Ավետարանի մեկնությունը[89]։ Սույն աշխատասիրությունը յուր մեջ հմտորեն ներառում է անտիոքյան մեկնողական դպրոցի հայրերից Եփրեմ Ասորու և Հովհան Ոսկեբերանի՝ Ղուկասի Ավետարանին առնչվող մի շարք հատվածներ։ Նրան հատուկ է գրաբարյան ճոխ լեզուն, և հաջորդող ժամանակների որևէ մեկնիչ, եթե ձեռնարկել է գրել Ղուկասի Ավետարանի իր մեկնությունը, այս կամ այն չափով անպայման քաղաբերումներ է արել Իգնատիոսի կատարած աշխատանքից։*

---

[88] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ*, *ԺԵ. դ.*, էջ 297։

[89] **Իգնատիոս վրդ. Սևլեռցի**, *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու*, Կ. Պոլիս, 1824։

| Իգնատիս վրդ. Սկլեռցի | Մատթէոս վրդ. Ջուղայեցի |
|---|---|
| «Զի՞նչ իցեն այս իմաստք, զի երկուս գիրս գրեաց Ղուկաս և յերկոսին ի նոսա զԹէոփիլոսն կարգեաց եդ: Եւ յառաջնումն հանդերձ գովութեամբ՝ քաջդ Թէոփիլէ ասէ, իսկ երկրորդումն սոսկ առանց գովութեան, զբանն առաջին զոր արարի...:<br>Որպէս թէ ոք քաջ նաւտղիդ, որ կամիցի զխորս ծովուն հատանել անցանել, ուսուցանէ որոց ոչ տեղեակն իցէն, քաջ լինիլ, զօրանալ, տանել ամենայնի, որ ինչ միանգամ բնաւորեցաւ ի ծովու յամբառնալ ալեացն: Եւ դարձեալ զօրաւոր ոք առաքինի, որ զօրացուցանէ զնահատակսըն քաջ լինիլ, մղել զնակատն: Ըստ այնմ օրինակի և աւետարանիչս նախ առաջին քաջալերս տայ Թէոփիլեայ զօրանալ, քաջ լինիլ ի խորս անքննին աստուածային անօրէնութեանն...»[90]: | «Զի՞նչ է, որ Ղուկաս յերկոսին գիրս իւր հիշատակէ զԹեոփիլոս և յառաջինն՝ գովութեամբ, իսկ երկրորդին՝ ոչ, այլ սոսկ Թէոփիլէ:<br>Պատասխան. Այս է՝ զի յառաջագոյն քաջալերս տայ ասելով. «քաջդ Թեոփիլէ» (Ղուկ. Ա. 3), իբր զանտեղեակ ոք: Զոր օրինակ՝ նաւավար, յորժամ կամիցի ի խորս ծովու նաւել, խրատէ զանգետքն [ո՛չ] խոովել ի մեծամեծ ալեացն, և, որպէս զաւրավար, գովէ զ[աւ]րս իւր՝ «քաջ» ասելով, իբր թէ բարիոք մղեսցեն զպատերազմն, այսպէս յառաջն գովութիւն եդ Ղուկաս, և յերկրորդին՝ ոչ, իբր թէ հասու [եղեալ] է խորհրդոցն Աստուծոյ և ոչ ունի խոովութիւն ինչ»[91]: |

*Նման զուգահեռները քիչ չեն, հավասիկ* **Իգնատիոս** *վրդ.* **Սկլեռցու** *և* **Մատթեոս** *վրդ.* **Ջուղայեցու** *աշխատությունների նմանաբովանդակ էջերը, առաջինը՝ ըստ 1824 թ. Պոլսո հրատարակության, երկրորդը՝ ըստ սույն բնագրի:*

---

[90] Մեկնութիւն Ս. Աւետարանին, որ ըստ Ղուկասու արարեալ Ս. վրդ. Իգնատիոսի, Կ. Պոլիս, 1824, էջ 11:

[91] Սույն աշխատ., էջ 59:

| Իգնատիոս վրդ. Սկլեռցի | Մատթէոս վրդ. Զուղայեցի |
|---|---|
| էջ 12 | էջ 44 |
| էջ 53 | էջ 77-78 |
| էջ 56 | էջ 130-31 |
| էջ 78-80 | էջ 96-99 |
| էջ 134-5 | էջ 104-107 |
| էջ 209-13 | էջ 195-201 |
| էջ 184-5 | էջ 165-7 |
| էջ 264-77 | էջ 279-300 |
| էջ 297-305 | էջ 308-323 |
| էջ 365 | էջ 375 |
| էջ 369-370 | էջ 264-5 |
| և այլն… | և այլն… |

*Միևնույն ժամանակ, Իգնատիոս Սկլեռցու և Մատթեոս Զուղայեցու, ասենք, Սիմոն ծերունուն նվիրված ավետարանական դրվագի պարզաբանումները քաղված են* **Եպիփան Կիպրացու** *Ճառից*[92]*։ Այսպիսի զուգահեռներ կարող ենք գտնել Սուրբ Բարսեղի Տեառնընդառաջին նվիրված Ճառի և Զուղայեցու քարոզի միջև, և այլն և այլն։*

*Մինչ Մատթեոս Զուղայեցու տվյալ աշխատանքը, Իգնատիոս վարդապետից քիչ ավելի ուշ, Ղուկասի Ավետարանի մի նոր ընդարձակ մեկնություն է գրել* **Սարգիս Կունդը**[93]*, որի բանաքաղական սկզբունքով արված մեկնությունը հայ իրականության մեջ առաջին «շարք մեկնությունն» է, որտեղ մեկնվում է ոչ թե հեղինակի կողմից առանձնացված աստվածաշնչյան որևէ դրվագ կամ խոսք, այլ Ավետարանի բոլոր տնահամարներն առանց որևէ բացառության։ Սակայն, Կունդի այս «խմբագիր» մեկնությունը նման չէ ո՛չ նախորդների և ո՛չ*

---

[92] *Նորին երանելւոյն Եպիփանու ասացեալ ի Գալուստն Տեառն քառասնաւորեայ յԱւետարանէն ըստ Ղուկասու*, ՄՄ ձեռ. 2619, թ. 91բ-97ա։

[93] **Սարգիս Կունդ**, *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու*, աշխ. Պետրոսյան Եզնիկ եպս., էջմիածին, 2005։

էլ հաջորդների գործերին։ Սա, կարծես, ժամանակի վարդապետի համար հակիրճ ձեռնարկ է, որտեղ խորացվել է Ընդհանրական Հայրերից[94] քաղաբերումներ անելու գաղափարը, և այդ ծաղկաքաղի մեջ, իր իսկ՝ Սարգիս Կունդի խոսքը հասցված է նվազագույնի։ Միջնադարյան վարդապետական ավանդույթում սա նույնպես տարածված երևույթ էր, երբ հեղինակի առաջնային նպատակը նախորդող նշանավոր վարդապետների՝ Սուրբ Գրքի տվյալ դրվագին առնչվող քարոզների և մեկնաբանությունների հավաքումն էր, համակարգումը և, իհարկե, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանությունը։

Այսպիսով, միմյանցից բանաքաղելու, երբեմն ընդարձակորեն օգտվելու հանգամանքը պայմանավորված էր ոչ միայն ավետարանական անփոփոխ բովանդակությամբ, այլև Տիրոջ Խոսքը մեկնելու՝ գոյություն ունեցող հայրախոսական ավանդույթով։ Միջնադարյան վարդապետական գրականության մեջ, կարևոր էր մեկնության ժամանակ առաջ բերված մոտեցումները, ասված խոսքը հավաստել Եկեղեցու Հայրերից կատարված վկայակոչմամբ։ Ինչպես և Վարդապետության տարածման վաղ շրջանում կար ևս մի հանգամանք, հարկավոր էր ի ցույց դնել փոխանցականությունը Հին Կտակարանից Նորը, և այս կապը նույնպես անհնար կլիներ կառուցել առանց Հայրերի համապատասխան պարզաբանումների։ Այսպիսով, մեկնիչներն իրենց խոսքը հաստատագրում էին Հին Կտակարանից համարժեք մեջբերմամբ՝ որպես կանխասացություն Նոր Կտակարանում հիշված համապատասխան իրադարձության։ Արդյունքում՝ մեր մեկնողական գրականությունը հարստանում էր ոչ միայն հայ հեղինակների՝ փոխներհյուսված շարադրանքով, այլև թարգմանվում և ընդարձակորեն կիրառվում էին՝ Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքին չհակասող մի շարք Հայրերի սրբախոսական աշխատություններից տարաբնույթ հատվածներ։

---

[94] Մասնավորապես՝ Եփրեմ Ասորուց, Հովհան Ոսկեբերանից, Կյուրեղ Ալեքսանդրացուց, Ստեփանոս Սյունեցուց և Իգնատիոս Սալեցուց։

| Ս. Բարսեղ ի Գալուստն Տեառն ի տաճարն Ղուկասու Աւետարանին Մեկնութենէ | Մատթէոս Զուղայեցի<br>սույն աշխատութիւն |
|---|---|
| Աստանաւր երիս իմն արձակութիւնս հայցէ յերանելի ծերս յամենեցունց Տեառնէ: Մինն՝ յաւրինացն յԱւետարանն: Միւսն՝ ի կապանաց մեղացն յարդարութիւն և մահկանուացս յանմահական կեանսն. Նորոգեսցէ զհնութիւն հոգւոց և մարմնոց Սուրբ Հոգին ի մշտնջենաւորսն արձակելով...: Ետես զՓրկիչն՝ հայցէր ի խաղաղութիւն. Իմացաւ զարձակիչն կապելոց, խնդրել լուծանել յաւրինաց մահու և մեղաց[95]: | Առդ արձակել յերից իրաց:<br>Նախ՝ ի հնութենէ օրինաց ի նորոգութիւն Աւետարանին:<br>Երկրորդ՝ զհին մարդոյն Ադամայ ի նորոգութիւնն կենացս յափտեանց:<br>Երրորդ՝ ի կապանաց մարմնոյն ազատանել և նորոգիլ խաղաղութեան կեանս[96]: |

*Այս երևույթը մերօրյա ուսումնասիրողին տալիս է ևս մի կարևոր հնարավորություն, որի շնորհիվ մեկի տեքստով կարելի է գաղափար կազմել մյուսի կորուսված մեկնության մասին: Զորօրինակ գիտենք, որ Մ. վրդ. Զուղայեցին «Գործք Առաքելոցի» մեկնության ժամանակ օգտվել է Հովհան Ոսկեբերանի Ճառերից, որոնք մեզ հասել են հատվածաբար, ուստի հետագայում, նաև հայկական աղբյուրներն ի մի բերելով, հնարավոր է վերականգնել Ոսկեբերանի տվյալ գործը կամ գոնե նրա ընդհանուր ուրվապատկերը: Նման համաշխարհային արժեք ունեցող աշխատությունները բազում են, որ պահպանվել են միայն ժամանակին հայերեն թարգմանության կամ հայ վարդապետների առատորեն օգտագործման շնորհիվ[97]:*

---

[95] Վիեննայի Մխիթարյան մատենադարան, N. 1, թղ. 91ա:

[96] Սույն աշխատ., էջ 79:

[97] Այսպես օրինակ՝ **Փիլոն Եբրայեցու** «Առարածոց» և «Ելից» գրքերի մեկնությունները, **Տիմոթեոս Կուզի** «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղեդոնի», **Եվսեբիոս Կեսարացու** «Քրոնիկոն»-ը, **Իրենեոսի** «Յոյցք առաքելական քարոզութեան» երկերը և այլն:

## ԻՆՉ Է ԳՐՈՒՄ ՋՈՒՂԱՅԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*ՄՄ 2519-ի ընդարձակ հիշատակարանից պարզ է դառնում ոչ միայն վերջինիս ստեղծման վայրն ու ժամանակը, ինչպես հաճախ հանդիպում ենք մեր մատենագիտության մեջ, այլև հեղինակը մանրամասնում է իր կատարած աշխատանքի առաջնային նպատակները, մասնավորում, որ այն գրված չէ խորագետ վարդապետների համար, այլ խնդիր է հետապնդում մանուկների (խոսքը Ջեմարանների սաների մասին է-Հ.Բ.) համար ձեռնարկ դառնալ. «Երդ, եա՝ վերջինս ապաստարոց քանին ե- գրոհապ քանասիրաց Մաթէոս վահանայ, որ մեյն անոհամբ ե- ոչ արդեամբէ, գիսեղց մգոհ ե- գարգամ լեպհա- յեհանարկեցի յայս գոգթգեոհ-թեան, ոչ ա-եվ ինչ հոգեցեալ այլ ճշմարգոհ-թեանն հեգեվեալ...: Երդ, է պիգանացոհ-թիհ-ն ոորա ի վարոպս քանի ե- ի կարգս պրոհ-ցաց ե- ի բեմասացոհ-թիհ-նա. Ի պայս ոչ գիգանոց վասն, այլ վասն մանկանց իմայս խորհրդակցացն: Ե- արդ, թեպէր իմասգանոցդ ամենայն յայգնի է այս, քայց յինէն գաժանելի կրի-ե յահ-աջնեկն, վասն որոյ աղաչեմ պրերին լնո-լ ե- պա-ելորդն կշռ-ել ե- սխալանացն նեբելլ մանա-անդ ո-ղիղ մգոհ ընթեռանո-լ: Ընդ որ ե- Հայցեմ, որե պարարհիե մաղթել առ մարդասէրն [Աստո-ած], թերբե-ա իջցէ մասն ինշ ի որբանո-էր աղօթից յերոց ի շարա-ալի հոգիս ե- որբեացէ պաղդ հնո-թեան մեղօհ մեռ-ելոյս ե- ապարեացէ կո-գակեալ ալեացս ե- արժանացո-ացէ յեգին մշակացն», ապա նշվում է գրչության վայրը, ժամանակը, որն էլ Ջուղայեցուց մեզ հասած առաջին հստակ տարեթիվն է. «Ընդ որ ի Հայցեմ ի սխալանացն նեբելլ մանա-անդ ո-ղիղ մգոհ ընթեռանո-լ ընդ որ ի Հայցեմ, որե պարարհիե մաղթել առ մարդասէրն Աստո-ած, թերբի-ա իջցէ մասն ինշ ի որբանո-էր աղօթից յերոց ի շարա-ալի հոգիս ի որբեացէ պաղդ հնո-թեան մեղօհ մեռ-ելոյս ի ապարեացէ կո-գակեալ ալեացս ի արժանացո-ացէ յեգին մշակացն: Երդ, եղեր պրա- համառ-օգո-թեան քանիցս վարոպդ-թեան ի թիհ- Հայոց Պ. ի Խ. (1391), առ որս արդեհ-նաբան հոռեգորին Գրիգորի Մեծի, յերկիրս յերնջակոյ, ի վանէս Սպրակո-նեաց. որ*

*է՝ այս է՝ ի նորին նշոյլից շնորհացն առեալ գծագրեցի առ ի յիշատակ առ յապա եղելոց մանկանց եկեղեցեացդ Հայաստանեաց»[98]։ Այսպիսով՝ այս գործով Մատթեոսը շարունակում է իր ուսուցչի՝ Գրիգոր Տաթևացու աշխատանքը, հենց մեթոդական-մանկավարժական տեսանկյունից, որի նպատակն էր նախ ձեռնարկներ պատրաստել և համակարգել հայ դավանաբանական միտքը եկեղեցու սաների կարիքների համար, որոնց միջոցով և հետագայում բարելավել հավատավոր հոտի կրթական որակը։*

*Հավելենք, որ միջնադարյան վարդապետարանների սաների համար իբրև դասագիրք գրված այս և նմանատիպ աշխատությունները չպետք է ժամանակակից ընթերցողին շփոթության մեջ գցեն, թե դրանք առանձնահատուկ պարզունակ բնույթ են ունեցել։ Թերևս ճիշտ հակառակն է։ Վարդապետարանների սաներն ամենաընկալունակն էին աստվածաբանական մտքի բազում կատեգորիաների սերտման հարցերում։ Այսպիսով, թեև Մատթեոսն ինքը, յուր մի շարք աշխատություններում նշում է, որ դրանք գրված են եկեղեցու սաների համար (այսպես ասած, նրանց գիտելիքներին համապատասխան), սակայն տեքստերի կրոնական բովանդակությունը պարզունակ չէ, ժամանակակից լեզվով ասած, ամենևին էլ «ադապտացված» չէ։ Ճիշտ է, մենք նույն ժամանակի հեղինակների մոտ տեսնում ենք աստվածաբանական առումով և շատ ավելի բազմաշերտ գրականություն, որի ընթերցողը, ընկալելու համար հեղինակի ասելիքի այս կամ այն ենթատեքստը, նախապես պետք է որոշակի գիտելիքների պաշար ունենար, մասնավորապես քաջատեղյակ լինելով հակաճառական գրականությանը[99], բայց և այնպես, Զուղայեցու Սուրբ Գրքի այս մեկնությունն օգտակար կարող է լինել ոչ միայն մերօրյա հոգևորականի համար, այլև բավարարի քիչ բանիմաց աշխարհիկ ընթերցողի հետաքրքրասիրությունը։*

---

[98] **Լևոն Խաչիկյան**, *Հիշատակարաններ*, *ԺԴ. դ.*, էջ 591:

[99] Ինչը միանգամայն բացատրելի էր, քանի որ այսօրինակ աշխատությունների հասցեատերերը պարզ մարդիկ չէին, այլ այս կամ այն եկեղեցին՝ իր նշանավոր վարդապետներով և ուսուցչապետերով:

*Այսպիսով, վարդապետարանների սաների համար առանձնապես ոչ պարզեցված ձեռնարկների առկայությունը սույն դարերում, միջնադարյան Հայոց ճեմարանների գիտական ձեռքբերումների՝ այս դեպքում ամենևին էլ ոչ համր վկայությունն է։*

## ՍՈՒՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

*Երկու խոսքով անդրադառնանք մեր ուսումնասիրությանը.*

*Մատթեոս Ջուղայեցու՝ Ղուկասի Ավետարանի մեկնության բնագիրը հանդիպում ենք Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերում՝*

*1. ՄՄ ձեռ. 2519, թերթ 4ա-79ա ինքնագիր՞ (1391 թ.)*

*2. 20, 199ա-246բ (1497 թ.)*

*3. 1130, 196բ-261բ (ԺԵ. դ.)*

*4. 1880, 396ա-404 (մասնակի՝ 1786-1787 թթ.)*

*5. 1262, 71բ-142ա (ԺԷ. դ.)*

*6. 1344, 175ա-250բ (1693 թ.)*

*7. 1345, 6ա-81բ (1697 թ.)*

*8. 1386, 3ա-59բ (ԺԷ. դ.)*

*9. 1387, 11ա-130ա (1735 թ.)*

*10. 1388, 2ա-129 (ԺԸ. դ.)*

*11. 1389, 5ա-123բ (ԺԷ. դ.)*

*12. 2518, 3բ-87բ (ԺԵ. դ.)*

*13. 3939, 138ա-228ա (ԺԵ. դ.)*

*14. 4985, 58բ-141ա ( 1738 դ.)*

*15. 5232, 57ա-154բ (1403 թ.)*

*16. 5502, 51ա-133բ (ԺԶ. դ.)*

*17. 5769, 1ե-92բ (ԺԸ. դ.)*

*Սույն երկը ձեռագրերում հանդիպում է երեք խորագրերով՝*

*Առաջին՝ «Ն-ասպ Ի յԵպին աշակերտ Մատթէոս Եռամեծաց Յովհաննու- Ի Գրիգորի աշխատասիրեաց Հա-ավո-մն Բանին Ա-էդասրանին Ղ-կասու- Ի վասրոզ յոլովէ ի վայելո-մն մանկանց*

Հայաստանեաց», սա հավանական ինքնագրի՝ ՄՄ 2519 ձեռագրի խորագիրն է։ Սույն խորագիրը մենք հանդիպում ենք և 1388, 1389, 2518, 3939, 4985, 5769 ձեռագրերում։

Երկրորդ՝ «Ի Գլխոյն Ղուկասայ Աւետարանչին ի մեկնութիւնէ Իգնատիոսի սուրբ վարդապետին Հայոց, զոր յետոյ ետ Մատթէոս վարդապետ, աշակերտ տեառն Յովհաննու Որոտնեցւոյն, ժողովեալ հաւատեցի ի սրտի զայս էաղս-ածոյ գիրս սա ի յօգուտ ուսումնասիրաց անձանց», ՄՄ ձեռ. 1130, 1344, 1345, 1386, 3939 և այլն։

Երրորդ՝ «Ի Գլխոյն Ղուկասայ հաւատումն քանից ի յոլով էտրուած ի մեկնութիւնէ Իգնատիոսի Հայոց վարդապետի, ժողովեալ աշխատասիրութիւամբ Մատթէոսի աշակերտի Գրիգորի», ՄՄ ձեռ. 20, 1262, 5202, 5232։

Չնայած խորագրերի տարբերության, սույն աշխատությունը ձեռագրերի երեք խմբերում էլ սկսվում է նույն սկզբնատողով։

Առաջին և երրորդ ձեռագրերի շարքը բնագրային առումով ոչ միայն տարբերություններ չունեն, այլև ՄՄ 5232 ձեռագիր օրինակը՝ գրված 1401 թվականին, ի ցույց է դնում, որ սույն խորագրով մեզ հասած առաջին ձեռագիրը գրվել է դեռևս Մատթեոս Զուղայեցու կենդանության օրոք, ըստ էության, բնագրային տարբերակից մեկ տասնամյակ անց, այդպիսով՝ իր վրա կրելով Զուղայեցու բնագրի վաղագույն շերտերը։

Համեմատական բնագիրը կազմելիս, հիմք ենք ընդունել հնագույն՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Հ՝ 2519 ձեռագիրը, ընթացքում պարզելով, որ այս մեկնությունը ձեռագրերում հանդիպում է երկու խմբագրությամբ։

Մատթեոսն իր աշխատությունների խորագրերում ներառում է այն հեղինակների անունները, որոնցից ինքը զգալիորեն օգտվել է։ Այս հանգամանքը, անշուշտ, նկատել է և Լևոն Խաչիկյանը։ Վերջինս իր հոդվածում համառոտ կերպով տալիս է Մատթեոս Զուղայեցուց մեզ

*հասած աշխատությունների ցանկը[100]։ Ջուղայեցու մատենագրական վաստակին է անդրադառնում և Վիգեն Ղազարյանը՝ Մատթեոսի քարոզներին նվիրված իր աշխատության մեջ՝ բարեխղճորեն ի մի բերելով Մ. Ջուղայեցու քարոզների նախկին և նոր ցանկերը[101], այդ-պիսով թույլ տվեք այս մասին չանդրադառնալ։*

*Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը 1950 թ. իր կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» աշխատության՝ սույն ՄՄ 2519 ձեռագրի հիշատակարանի ընդօրինակման տողատակում նշում է, որ սա հեղինակի ինքնագիրն է[102], սակայն ավելի ուշ՝ 1956 թ., սույն հեղինակին նվիրված իր միակ հոդվածում, վերնագրի տարբերակների ճշտման գործում ենթադրում է, որ հիմք պետք է ընդունել ՄՄ 5332 ձեռագիրը, ինչպես և նշում, որ ավելի ուշ շրջանում ընդօրինակված (1697 թ.) ՄՄ Հմ 1345 ձեռագրի խորագրի երկրորդ հատվածը. «...ԸՆԴ ՅԵՐԳՈՅ Է՝ ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԱՇԱԿԵՐՊ ՊԵՏՈՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՊՆԵՑՈՅՆ ԺՈՂՈՎԵԼ ՀԱՒԱՏԵՑԻ Ի ԱՐԱՐԻ ՏԱՂՈՒԱԾ ԳԻՐՔՆ ԱՌ Ի ՅՕԳՈՒՊ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ԱՆՅԱՆՑ» իրեն ավելի նախնական է թվում[103]։ Ենթադրում ենք, որ Խաչիկյանի նման բազմազբաղ գիտնականը, ով միաժամանակ գրում էր մի շարք խորածավալ ուսումնասիրություններ, պարզապես ժամանակ չուներ բնագրի բոլոր տարբերակները մանրամասն քննելու՝ իր տեսանկյունից այդ պահին երկրորդական թվացող խնդիրների ճշտման համար։*

*Մենք, սակայն, պարզեցինք, որ 1697 թ. Ադրիանապոլսում գրված և Լ. Խաչիկյանի վերնշյալ հոդվածում հիշատակված ՄՄ Հմ 1345 ձեռագիրը լրջագույն խմբագրության է ենթարկվել. հանվել են բնագրից ընդարձակ հատվածներ, ընդ որում գործի նմանօրինակ աղճատումը տարերային բնույթ չի կրում, այստեղ հետևողականորեն դուրս են թողնվել Սուրբ Երրորդությանը և Հայ Առաքելական եկեղեցուն*

---

[100] **Լևոն Խաչիկյան**, *Մատթեոս Ջուղայեցի*, էջ 64-67։

[101] **Մատթէոս վրդ. Ջուղայեցի**, *Քարոզներ*, աշխ. խազ Բահանա Ղազարյանի, Ս. Էջմիածին, 2015, էջ 21-51։

[102] **Լևոն Խաչիկեան**, *Հիշատակարաններ, ԺԴ. դ.*, էջ 591։

[103] **Լևոն Խաչիկյան**, *Մատթեոս Ջուղայեցի*, էջ 64։

*վերաբերող հատվածները, ինչպես նաև հեղինակային այն փոքրաթիվ շեղումները, որտեղ Մատթեոսն անդրադառնում է իր ժամանակներին՝ դատապարտում այն հայրենակիցներին, ովքեր չդիմանալով դժվար կյանքին՝ դավանափոխ են լինում. «...Ի այն, որ անառակ որդի-ոյն դիպեցա-, առ-ա-էլ քաղաքապարկ ապգիս Հայկազեան պարահէ-ցա-: Զի գնացեալ յարեցաւ ի խուզեանն Թուրքաստանեաց, Ի զոր ինչ նոցա դիւ-դին անկանի, մեզ ոչ ոք դայ: Ե- վա՛յ է ինչ, զի անառակ որդին եկեալ ի միտս, Ի զպակասու-ին-ն ի-ր գտեալ, դարձյա-՝ մեղայ առելով: Իակ ի յապգի իմա-մ ոչ ոք է, որ զմտա- ածէ զկորո-ապ Հոգ-ոց Ի մարմնոց մերոց Ի կամ ին իմասցի, ին այսչափ վրանգի եմ դարձակո-ուեալ...»[104]:*

*Մատթեոսն անդրադառնում է Նեստորի մոլորություններին, որոնցից էլ իր կարծիքով սերում են Հին Ուխտով առաջնորդվող և մանկանը ֆիզիկապես թլպատող մահմեդականների՝ թլպատության խորհրդի թյուրընկալումները. «Իակ [ին Ն]եստոր ասիցէ. «Ոչ եմ անիրա-, զի Ի Քրիստոս ինչպարեցա- վասն [որոյ] Ի եա Հրամայեցի»: Պատասխանեացէա, ին կարէիր, զոր ինչ Քրիստոս արար զամենայն դա- առնել, ապա յիրա-ի էր այդ, զի ահա Քրիստոս Ի. (40) օր ոչ ինչ եկեր Ի զամենայն ցա-ա եքարչ Ի կամա-ուրա-ինամբ մեռա-, Ի Ի-ր զօրա-ինամբն յարեա- [ա]պա Ի յայդ է, ին ոչ արարեալքն ի Քրիստոսէ առնել արժան է մեզ, այլ ա[ցեալ]քն, զի նորայն գործքն այսի- զանազանի, զի ինքն ի վեր, քան զբն[ա-ին-ն], քայց զոր ինչ բնա-ին-ն դանէր զայն էարարէր, Ի զինչ [առ-]նել արժան էր, ասաց պա-հոցն Ի ասաց աղօթիցն Ի ասաց՝ ողոր[մա-ին]նն Ի ասաց, Ի որ ինչ յանչն ի-ր էզԻ մկրտա-ին-նն Ի ասաց՝ խաչն Ի ասաց մահն Ի ասաց:*

*Ե- զայդ ին արժան էր առնել [ապա ա]ցեալ էր, զի ոչ, քան զխաչն մեծ է Ի ոչ, քան զմկրտա-ին-նն փա[էր] յայդ էր, զի ինչպիսին Նորա: Այդ են պարճառ-ք, որք ասացան Ի ո՛չ [այն], որ Նեստորը մոլորեցա- մոռ-ացեալ զՊա-զրոնի յայդանի խափանա-ան ինչպարա-ինանն, որ քերանն էր Քրիստոսի:*

[104] Նույն աշխատ., էջ 211:

Նմանապէս ի մահմեդականէն մոլորեալ են, զի ի Նէսթորէ ասան ի ոչ վասն այն պայքարին, թէ Քրիստոս թլփատեցա-, նոքա վասն այն թլփատին, այլ զի ի խորհուրդ հնոյն հա-ատարելոյ, վասն այն ի ընդ հնոյն ապէլիէ են Քրիստոսի»[105]:

*Դուրս է թողնվել Տիրամորը և Մկրտությանը վերաբերող հետևյալ հարց ու պատասխանը.* «Ե- ապ զինի ի հարցո-ն, թէ- Աստո-ածածին Կոյսն ոչ էր ի նէրքո հարկի բնո-թի-նէս, իսկ այլ կանայէ էրիստոնէից, ըստ նոյն սարսի-ռէն, արժան է նպէլ Ի. (40) օր ի վերայ դաշտանի, վասնզի ի նա մեռելակիր է եղեալ:

Այսմ պատասխանէմէ, թէ ըստ հին ա-րինացն կապարս-ն ոչ է արժան նպէլ, վասնզի ոչ մեռելո-թի-ն մարմնոյ ի կարգի մեղայ, այլ է հա-ատարեալ ընդ արդարո-թեանն յայտ է, զի վարուզի մարմնով մեռանել: Այլ է մեռելո-թի-ն հոգ-ոյ ի հա|ւսա|մարի մեղայ, յորմէ գարշի Աստո-ած, որ բնակիշն է [նորա: Այլ] զի աղարեզի է բնո-թի-նն մինչև ի Ի. (40) ա-րն, վասն որոյ ի հրամայէաց՝ ոչ ամո-ան առնո-ալ մինչև ի Ի. (40) ա-րն, մինչև արքէացի բնո-թի-նն: Ե- մի՛ ծնանիցի խեղ, կամ հաշմանդամ, վասն որոյ, զի գարշելի է ըստ շարժո-ածոյ ի գեսո-թեան, յորմէ գարշին ի գայթակղի գկարդն, կարգեցա- ոչ առնել կերակո-ր մինչև ի Ի. (40) ա-ր, ի ապա արասցէ կերակո-ր:

Ե- ոչ է այն, ըստ ա-անդո-թեան եկեղեցոյ, որ մայրն ոչ առնէ կերակո-ր մինչև մկրտի մանո-կն, վասնզի ոչ թէ մկրտո-թի-ն մանկանն արքէ զբնո-թի-ն մօրն, այլ զանչն մանկանն, որով ոչ ինչ մաքրո-թի-ն գտանի ի մայրն, վասնզի մայրն վաղ ժամանակա- մկրտեալ է, այլ կալն նորա առանց առնելոյ կերակո-ր, վասն աղարեղո-թեանն մարմնոյ ի-րոյ, որ ոչ ապարի յայնմանէ մինչև ի Ի. (40) ա-ր: Վասն որոյ, թէ մանո-կն ժամ առանց մկրտո-թեան կացցէ, ոչ ինչ պղծո-թի-ն է մօրն, զի ի սրինդիրելն բնո-թենէ կարարելո-թի-ն ի նովա- ոչ պղծի մայրն ի յայտ է զի ի բաղո-մ իր հասանէ չեռն մարդոյ ի շո-ն ի ի կարո- ի այլ անո-ր իր, որ պեղծէ, էան զմարդն ի ոչ պղծի չեռն մարդոյն, ապա ի ոչ են ա-անդո-թի-էն այն ի սահմանէ եկեղեցոյ, այլ ի գգիրարաց, որէ զմժղո-կա էամեն ի զո-ղրա կլանեն»[106]:

---

[105] Նույն աշխատ., էջ 72:

[106] Նույն տեղում, էջ 75-76:

*Նման խմբագրումները շատ են, հաճախ մի քանի տող, երբեմն ողջ պարբերություն և հազվադեպ՝ մի քանի էջ, և այս առաջաբանում հնարավոր չէ անդրադառնալ բոլորին։ Նմանօրինակ շեղումներն ի ցույց են դրված սույն աշխատության բնագրի տողատակում։*

*Անշուշտ, ՄՄ Հմտ 1345 ձեռագիրը սույն գործի միակ խմբագրության ենթարկված օրինակը չէ։ Նրա շնորհիվ հաստատվեց, որ գոյություն ունի առնվազն մեկ խմբագրված տարբերակ ևս, որտեղ որոշակի հատվածներ բացակայում են։ Հետագա մեր ուսումնասիրությունը ՄՄ Հմտ 3939 ձեռագրի օրինակով ցույց տվեց, որ սույն խմբագրության առաջին փորձը կատարվել է դեռևս XV դ. վերջերում։ Մենք պայմանական այս ձեռագրերը խմբավորել ենք երկրորդ խմբում՝ մայր օրինակից այն տարբերակելու համար։ Այսպիսով, արված համեմատական քննությունը ցույց տվեց, որ նույն հատվածները հիմնականում բացակայում են՝ ՄՄ Հմտ 20, 1130, 1262, 3939, 5232 ձեռագրերում։*

*Առավել ամբողջական բնագրեր են մեր կողմից առանձնացված առաջին խումբ ձեռագրերը՝ ՄՄ Հմտ 2519, 2518, 4985, 5769։*

*Այսպիսով, թեև վերջնականապես չենք կարող պնդել, որ ՄՄ 2519 ձեռագիրը հեղինակի ինքնագիրն է, սակայն այն մեր բնագրային համեմատությունների շրջանակում, նաև իր ամբողջականության պատճառով, ընտրվել է որպես հիմք ձեռագիր։*

*Մի քանի դիտարկում տեխնիկական որոշ հարցերի վերաբերյալ. բոլոր ավետարանյան մեջբերումներն արված են ըստ «Աստուածաշունչ մատեան հին և նոր Կտակարանաց, ըստ Ճշգրիտ թարգմանութեան նախնեաց...», **Յովհաննու Զօհրապեան** վարդապետի, Վենետիկի 1805 թ. հրատարակության, ընդ որում, երբ այդ մեջբերումն արված է բառացի, մեջբերման ավարտին տեքստի մեջ տեղադրում ենք նրա համապատասխան ավետարանական տնահամարը, իսկ երբ հեղինակն աստվածաշնչյան հատվածը մեջբերում է մոռվի, մոտավոր կերպով, նշում ենք՝* հմմտ. *բառի հետ զուգահեռ, իսկ* տե՛ս*-ը կիրառում ենք այն դեպքերում, երբ Զուղայեցին ուղիղ կամ մոռվի մեջբերում չի կատարում, այլ վերապատմում կամ ակնարկում է ավետարանական որևէ դրվագ։*

## Առաջաբան

*Քանի որ մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՄՄ 2519 ձեռագիրը շատ մեծ հավանականությամբ գրված է հենց Զուղայեցու ձեռքով, այն նաև տվյալ աշխատության մեջ հասած ամենանախնական և ամբողջական օրինակներից մեկն է, ուստի մյուս ձեռագրերը մեզ անհրաժեշտ են եղել պարզելու համար, թե հետագայում ինչ խմբագրական ճանապարհ է անցել սույն մեկնությունը, ինչպիսի բնույթ են կրում ձեռագրից խմբագրության հետևանքով հանված հատվածները, այն է՝ դրանք արված են տեխնիկական պատճառներով, այսինքն թուղթ խնայելու, հետագա՝ գրչի տեսանկյունից որոշ ոչ առանցքային դրվագները սղելու, թե, ինչպես 1697 թ. Ադրիանապոլսում արտագրված ՄՄ Հմ 1345 ձեռագրի պարագայում*[107]*, հաճախ կրում են միտումնավոր բնույթ։*

*Մատենադարանում առկա՝ սույն աշխատության մյուս ձեռագրերի համեմատական քննության նպատակներից էր նաև հիմք ձեռագրի բնագրային թերի հատվածների լրացումը, որոնք վերաբերում են հիմնականում նշված ձեռագրի որոշ էջերում նկատվող գրադաշտի խաթարումներին։ Այսպիսով՝ թերի հատվածները վերականգնվել են ՄՄ Հմ 20, 1130, 1262, 1345, 1389, 2518, 3939, 4585, 4985, 5232, 5769 ձեռագրերի համեմատությամբ, որոնցից յուրաքանչյուրի վերականգնման աղբյուրը՝ տողատակում նշելու անհրաժեշտությունն անիմաստ ենք գտել՝ ավելորդ անգամ ընթերցողի ուշադրությունը բուն տեքստից չշեղելու և տողատակերը հավելյալ, ոչ առաջնային տեղեկությամբ չծանրաբեռնելու համար։*

*Այսպիսով, մի շարք ձեռագրերում սույն մեկնությունն առկա է հատվածաբար, դրանք այս կամ այն չափով մնասված ձեռագրերն են, այսինքն՝ պրակները թերի են, նյութը թափված, կամ հենց ի սկզբանե գրիչն արտագրել է քարոզների մի մասը։ Ահա Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող այն ձեռագրերը, որտեղ բնագիրն ունի լրջագույն կորուստներ՝ ՄՄ ձեռ. 1389, որի մեջ սույն գործն ավարտվում է ԺԶ. ճառի հետևյալ տողով. «Զորդորդ՝ զի ոչ զամանց կարո-պո-ղի-ն ընո-ն Ի ոչ իակապէս, իակ նա՝ զամենեցո-ն...»,*

---

[107] Սույն աշխատ., էջ 41-42։

*և ՄՄ ձեռ. 4985, որն ունի թափված և մնասված մի շարք էջեր։ ՄՄ 3939 ձեռագիրն ավարտին ունի երկու հարց և պատասխան, 1345-ը՝ դրանցից միայն մեկը։*

*Բնագրային աշխատանքներում կիրառվել են հետևյալ պայմանական նշանները. մայր օրինակը՝ ՄՄ 2519 ձեռ. (A), որը հիմքն է մեր բոլոր համեմատությունների, մնացյալ ձեռագրերն ըստ ժամանակագրության ի ցույց են տրված հետևյալ լատիներեն տառերով՝*

| | | | |
|---|---|---|---|
| *20 - (B)* | *1344 - (F)* | *1388 - (J)* | *4985 - (N)* |
| *1130 - (C)* | *1345 - (G)* | *1389 - (K)* | *5232 - (O)* |
| *1880 - (D)* | *1386 - (H)* | *2518 - (L)* | *5502 - (P)* |
| *1262 - (E)* | *1387 - (I)* | *3939 - (M)* | *5769 - (Q)։* |

*Նշենք նաև, որ «և» կամ «եւ» տառի տարբերակները միօրինակացրել ենք՝ գործածելով միայն «և» տարբերակը։*

*Ուղղագրական, հոդի ներկայության-բացակայության հանգամանքը տողատակում չենք նշել.*

| | |
|---|---|
| փափագն *փխ.* փափամն | կանգուն *փխ.* կանկուն |
| կենցաղոյս *փխ.* կենցաղտյս | բրդեա *փխ.* բրթեայ |
| զԱւետաւմ *փխ.* զԱւետեաւմ | վախճան *փխ.* վաղճան |
| սխալեոյն *փխ.* սղալեոյն | անոյշ *փխ.* անուշ |

*Նման աննշան տարբերությունները, որոնք իմաստային որևէ շեղում չեն արտահայտում.*

զլուսոյ ծագումն, որ ի ծնընդեան ժամուն *փխ.* զլուսոյն ծագելն ի ծնընդեան ժամանակի։

*և կամ.*

Եւ թագաւոր երթալ *փխ.* թագաւոր ումն գնացեալ։

*Կետադրությունը և ուղղագրությունն արված են ժամանակակից աշխարհաբարի կանոններով։ Օգտագործված բոլոր ձեռագրերը Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող գրապահոցից են, ուստի տողատակում ավելորդ ենք գտել ամեն անգամ ՄՄ հապավման նշումը։*

*Նշանավոր բանասեր-միջնադարագետ Փայլակ Անթապյանը հայ մեկնաբանական գրականությանը նվիրված իր հոդվածում՝ թվարկելով հայ մեկնողական գրականությանը վերաբերող բոլոր արժեքավոր աշխատասիրությունները, հավելում է, որ.* «Այսուհանդերձ, հայ մեկնաբանական գրականությունը հայագիտության մեջ պատշաճ ուշադրության չի արժանացել, թեկուզ և եղել են փորձեր, և այն, ըստ էության, մնում է չուսումնասիրված»[108]*:*

*1986-ին հնչեցված այս կարծիքից հետո մեր երկրում անգամ հասարակարգ է փոխվել, և, ինչ խոսք, այս գրեթե 30-35 տարիների ընթացքում, իրավիճակը շտկելու համար քայլեր արվել են (սա վերաբերում է, մասնավորապես, բնագրերի հրատարակման գործին)։ Սույն «Ղուկասի Ավետարանի մեկնության» համեմատական բնագրի հրատարակումը ևս մեկ քայլ է այդ ճանապարհին, որ նպատակ ունի առնչակցել մերօրյա ընթերցողին իր սեփական աստվածաբանական մտքի կերպավորման ևս մի նմուշի հետ։*

* * *

*Թույլ տվեք մեր շնորհակալությունները հայտնել Վիգեն Ղազարյանին, ով տրամադրեց մեզ ՄՄ 1345 ձեռագրի իր ընդօրինակությունը, ինչպես և բնագրային համեմատություններում մեզ հետ՝ հետագա տքնանքը կիսելու համար։ Ընդհանրապես, ետխորհրդային տարիներին, եթե չհաշվենք ներկա աշխատանքը, Վ. Ղազարյանը միակ հեղինակն է, ով իր հայացքն ուղղել է Մատթեոս Զուղայեցուն՝ հրատարակելով վերջինիս քարոզները*[109]*։*

*Ուզում ենք մեր հատուկ շնորհակալությունը հայտնել սույն աշխատանքի խմբագիր՝ Արմեն Տեր-Ստեփանյանին, ինչպես և Աննա Օհանջանյանին՝ գիտական և խմբագրական խորհրդատվության համար։*

**Հովհաննես Բեյլերյան**

---

[108] **Փայլակ Անթապյան**, «Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ», *Բանբեր Մատենադարանի*, № 15, 1986, էջ 62:

[109] **Մատթէոս վրդ. Զուղայեցի**, *Քարոզներ*, Ս. Էջմիածին, 2015, 494 էջ:



ՄՄ ձեռ. 1389, թերթ 8ա

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

## Մաքրէոսի վարդապետի Զո-ղայեց-ոյ
## (ԺԳ-ԺԴ դդ.)

# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՅԱՆԿ

## Յանկ Ա–էպարքանին վաղ–[ագ–]

### Առաջին ճառն

- *Նախ այպանումն ծ[ուլիցն]։*
- *Վասն է՞ր յիմարց և յաղքատաց ընտրեաց զառաքեալսն։*
- *[Վասն է՞ր] յառաջ Մատթէոս և ապա՝ Մարկոս և ապա՝ Ղուկաս։*
- *Վասն է՞ր Դ (4) միայն Ա[ւետարանիչք]։*
- *Վասն է՞ր յառաջ գովէ Ղուկաս զԹեոփիլն և յետոյ ոչ վասն էր ամենայն ինչ է։*

### Երկրորդ ճառն

- *Վասն է՞ր զՅովաննու ծնունդն յառաջ պատմէ [և ապա՝ զՔրիստոս]։*
- *Վասն է՞ր կոչի Կարապետ։*
- *ԶԱստուածութիւնն Քրիստոսի աւետէ հրեշտակ Ժ. [կերպիւ]։*
- *Զի՞նչ է մեծացուցանելն։*
- *Զի՞նչ է գովութիւն խոնարհին։*
- *Ուստի՞ գիտեր Եղիսաբեթ զանունն Յովհաննու։*
- *Վասն է՞ր եղջիւր ասէ զՔրիստոս։*
- *Զի՞նչ էր բանքն, զոր խելամուտ լիներ։*
- *Վասն է՞ր թլփատեց[աւ Քրիստոս]։*
- *Վասն ինչ պատճառի հրամայեցաւ թլփատել զ հնումն, Պատասխան Նեստորի։*

### Երրորդ ճառն

- *Ո՞րք են աւուրք սրբութեան։*
- *Զի՞նչ տատրակ և աղաւնին։*
- *Արժան է՞ ամենայն կանանց նստել զ վերայ դաշտանին։*
- *Ո՞վ է Սիմէոնն։*
- *Գովութիւն ծերոյն Սիմոնի։*
- *Խաղաղութիւն է այն կեանք։*

## Յանկ Ա–էպոքանին վաղ–ամ–

- Աքանչելի Տեառն [ի մտանելն տաճար]։
- Ո՞ւմ յայտնեցաւ Աստուածութիւնն ի մարդեղութեանն։
- Ո՞ր էին շնորհքն ի վերայ [նորա]։
- Ծնունդ իժից է անհաւատն։
- Պատուհասն ի տապարն ումն, որ է եկեղեցին։

## Զորրորդ ճառն

- Նախ զվարարդական խրատն ի Մկրտչէն ուսանել։
- Զի՞ ողորմութիւնն պատուական է, քան զամենայն առաքինութիւն։
- Վասն է՞ր ամենեցուն ոչ միապէս օրէնք։
- Զի՞նչ է յազգահամարն Մատթէոս ա՛յլ անուն և Ղուկաս՝ այլ։
- Վասն է՞ սատանայ փորձեր։

## Հինգերորդ ճառն

- Նախ ընդդէմ հոգեմարտին գիշերոյ նմա ի քարոզութիւն մարգարէիցն։
- Նմանեն առաքեալքն որսորդի։
- Մի՛ շատախօս, ասէ և ինքն զգիշերն լրումն է։
- Վայ տայ յագալոցն կերակրով։
- Վա՛յ տայ բարի ասողացն։
- Վասն է՞ր առաւել եղկելի է մա՛հ միամօրն։

## Վեցերորդ ճառն

- Զկատարեալ հաւատն։
- Ո՞վ է Մարիամն, զոր աստ ասէ։
- Վասն է՞ր եմք պարտական Նմա։
- Աղուեսու և թռչնոյ նմանի սատանայ։
- [Ոչ] ետ թոյլ թաղել զհայրն։
- Ոչ եթող հրաժարել յընդանեացն։
- [Վասն] է՞ր նախ՝ ԺԲ. (12) ընտրաց առաքեալս և ապա՝ ՀԲ. (72)։
- Ի ճանապարհի ողջոյն ոչ տալ, և թէ զի՞նչ է ողջոյն։
- Զսատանայ աւձի և կարիճի նման ասէ Տէրն։
- Զի՞նչ է. «Սիրեսցես զՏէր Աստուած» (Մատթ. ԻԲ 37) և երկրորդ՝ «Սիրեսցես զընկեր քո [իբրև զանձն քո]» (Մատթ. ԺԹ 19)։

## Ե–թնէրորդ ճառն

- Վասն է՞ր լուսին կոչի աշխարհ գող է սատանայ։
- Ո՞վ ղևտացի և քահանայ և սամարացի։
- Զգթութիւնք Տեառն։
- Պանտ[ոկ ա]նուանի եկեղեցի։
- Լսելիքս օրինացն ոչ գովի, իսկ առ [Մարիամ, որ] և բարի ասէ։

## Ո–թերորդ ճառն

- Նախ թէ Աստուած ոչ ձանձրանայ ի բազում [խնդրելոյն]։
- Բարեկամ կոչի Աստուած։
- Մահ նմանի գիշերոյ։
- Նկանակն Եր[որդութենէ] օրինակ։
- Ոչ տալն ինչ ուսուցանէ։
- Անկողին է արքայութիւնն։
- [Վասն է՞ր] յարուցեալ տայ։
- Դարձեալ բարեկամ հոգին և մարմին, մանկունք մեղք, որպէս ան[դամքն]։
- Զի՞նչ է գեղեցկութիւն հասակի մարդոյ։

## Իններորդ ճառն

- Նախ վասն էր զոմանս աղք[ատ] և զոմանս [մեծատունն]։
- Բազմակերպ է ագահութիւնն։
- Վասն էր տայ Աստուած աՃումն եր[բ կորուստ բերէ։
- Աղքատն հանգիստ է, քան զմեծ[ատունն]։
- Յիմա[րութիւն |4բ| մեծատան]։
- Զինչ է ածելն Տեառն գօտի և պաշտել զսուրբսն։

## [Տասներորդ]ն ճառն

- Նախ Աւետարան հրոյ նմանի։
- Ամպ կոչի Քրիստոս։

## [Տասն-մեկներորդ]ն ճառն

- Այգի կոչի եկեղեցի, ծառ՝ հաւատացեալք։
- Վասն է՞ր [թզ]ենւոյ նմանեցուցանէ։
- Զի՞նչ իցէ բերելն և արկանել աղբ։

## Յանկ Ա–էպոպոյանին վաղո–ամՅոս–

### [Տասնե–]երկո–երորդ Ճառն

- Նեղ դուռն կոչէ զառաքինութիւնն։
- Մշակ անաւրէնութեան կոչէ զմեղաւորսն։
- Նախ քան զտանջանս կսկծին մեղաւորք։
- Մեզ ևս ահագին է բանս Ծ. կերպիւ, քան զհրէիցն։

### Տասնե–երեվերորդ Ճառն

- Երկու են կատարելութիւն կամացն Աստուծոյ։
- Աշտարակի նմանի առաքինութիւնն։
- Զի՞նչ պարտ է լինել առնողին զկարգն։
- Աղի նմանեցուցանէ զքահանայութիւնն և թէ անհամի՝ անօգուտ է։

### Տասնե–չորսերորդ Ճառն

- Զհրեշտակ ոչխարի նմանէ։
- Անապատ կոչէ զերկինս։
- Դրամի նմանի պատկերն Աստուծոյ, որ ի մարդն։
- Ճրագ անուանէ զմարմինն իւր։
- Տան նմանէ զերկինս և զեկեղեցի։

### Տասնե–հինգերորդ Ճառն

- Էրէց ասէ զհրեշտակս։
- Բազում պատիժ ընկալաւ մարդն ի մեղանչելն։
- Սատանայ խոզի նմանի։
- Եղջեր ասէ մեղացն։
- Անառակն ուստ ուսաւ դառնալ։
- Պատմուճանի նմանի աւազանն։
- Մատանի ձեռն զգործն։
- Զաւրութիւն է կօշիկն։
- Եզն է Տէրն։
- Վասն է՞ր նախանձեացն հրեշտակք։
- Անառակին հակառակ բազում մնաս է մեզ դիպեալ։

# Մաքրէոս Զօ–ղայեցի

## Տաանի–վեցերորդ ճառ

- Քանի՞ են տունք և տնտեսք։
- Աստուած է կատարեալ մեծատուն։
- Յատկութիւն տնտեսին։
- ՊատՀառ ելանելոյն։
- Ո՞վ են ամբաստանողք։
- Հոգոյ մեղքն ձերթոյ նմանի։
- Մարմնոյն ցորեն։
- Իմաստնագոյն է, քան հրեշտակն։
- Հրեշտակք որդիք լուսոյ են։

## Տաանի–է–ՐՆԵՐՈՐԴ ճառ

- Վասն էր առաջին կիրակին ոչ կարդամբ. ոմանք մեծատունք և ոմանք՝ աղքատ։
- Զի՞նչ է փարթամութիւն մեծատանն։
- Ղազարու չարիքն։
- Աստուած փորձէ ոչ, իսկ արդարք՝ փորձին։
- Գոգ է արքայութիւնն և Աբրահամու գոգ։
- Անուն աղքատին ասաց և մեծ[ատուն]՝ ոչ։
- Մի՛ էր դժոխքն արդարոց և մեղ[աւորաց]։
- Որպէս տանջէր հոգիքն անդ։
- Զի՞նչ պապակիլն։

## Տաանի–ՈՐԵՐՈՐԴ ճառ

- Ո՞վ է դատաւորն։
- Քանի՞ են գործ դատաւորին։
- Վասն էր [սխ]ալի դատաստանն։
- Բնութիւնս մեր քաղաքի նմանի։
- Մարդոյս պատուականութիւն։
- Զի՞նչ է դատաստանն, զոր ոչ առնէ միտք։
- Այրի կոչի հոգին։
- Զի՞նչ է դատաստանն, զոր արար։
- Երբ առնէ դատաստան միտքն։

## Յանկ Ա–էպոքանին վաղս–ամս–

### Տասնեւիններորդ ճառն

- Կարգաւորութիւն ժամուցն ու՞ստ է։
- Զի՞նչ առաւելութիւն հպարտութեանն։
- Զի՞նչ պարտ է առնել ի ժամ աղօթիցն։
- Մեղք փարիսեցւոյն։
- Բարութիւն մաքսաւորին։
- Մտեալ շրջեր յերիքով զի՞նչ նշանակէր։
- Զի՞նչ ուսանիմք մտնել Տեառն առ Զակքէոս։

### Քսաներորդ [ճառն]

- Զանազանութիւն Քրիստոսի և մեր մարմնոյս։
- Աշխարհ հեռի. աշխարհ կոչի լուսեղէն խորանն։
- Զի՞նչ է առնուլ թագաւորութիւն։
- Ոչ է նման այս առակ քանքարացն։
- Վասն էր զշնորհս աւազանին հանէ։
- Զի՞նչ է գալիլեացիքն, որ խառնեցաւ արիւնն [Պիղատոս] ընդ [զոհս նոցա]։
- Զի՞նչ նշանք ի լուսաւորքդ երևին։
- Նեռն [Դ.] ոՀիրս առնէ, թուի, թէ զօրութիւն ունի։
- Փայլկան նմանի գալուստն], զի՞նչ է լինելոց։

### Քսան–մեկներորդ ճառ

- Զի՞նչ է խորհուրդ այգաբացին։
- Որոգայթ է մահ։

### Քսան–երկո–երորդ ճառ

- Մեծ է տօն Համբարձման։
- Ընդե՞ր յետ Խ. (40) աւուր։
- Վասն էր Բե[թ]անիայէ և Զիթենեաց համբարձաւ։
- Վասն էր համբարձեալ ձեռօք։
- Զանազանութիւն բանիցն։
- Նստեալ յաջմէ Հօր։
- Թէ զի՞նչ օրինակաւ ընդառաջ Քրիստոսի ելին վերինքն միահամուռ ՃԾ. (150) հարցումն։

ՆՈՒԱՏ ԵՒ ՅԵՏԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՏԹԷՈՍԻ՝
[ԵՌԱՄԵԾ]ԱՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ
ԳՐԻԳՈՐԻ ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ։
[Հ]ԱՒԱՔՈՒՄՆ ԲԱՆԻՑ ՅԱԽԵՏԱՐԱՆԷՆ
ԴՈՒԿԱՍՈՒ ԵՒ ՔԱՐՈԶՈՎՔ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ
ՄԱՆԿԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

# ԱՌԱՔԻՆ ՃԱՌԻՆ

**|5ա|** Ամենայն ոք որ ծոյլ է յաստուածային[1] յուսումն և ի [յընդ]ունել զխրատս հոգէշահս, յորժամ սկսանի ընթեռնուլ զԳիրս Սուրբս չորս կերպիւ այպանէ:

Նախ՝ թէ երկար բանիւ է գրեալն, որոց հանդիպին զփոքրաբանսն գովեն, իբր թէ այս յոլով է և տաղ[տկ]ութիւն է մտաց:

Երկրորդ՝ թէ կարճաբան գրոց դի[պ]ին՝ պարսաւեն, թէ այս կարճ բանս ոչ ունի իմաստս յինքեանս և ոչ ուսուցանէ բազում ինչ:

Երրորդ՝ եթէ [խր]թին և ծածուկ բառ[ով] է գրեալն, զպարզն գովե[ն], իբր թէ] յոյժ դիւրահաս է, և ամենայն մարդ կարէ հասկանալ:

Չորրորդ՝ թէ պարզ լինին գրեալքն, առանց ծածուկ բառի, յայնժամ գովեն զիմաստասիրաց զեղանակ բանիցն, իբր թէ[2] զաւրաւորք են ճոխ բառիւ և բայիւ:

Եւ այս ոչ ուսանելոյն մասն է, այլ՝ զի կամին քամահրել[3] իւրեանց ծուլութեամբն զընտիրսն և զինքեանս ճանաչող երևեցուցանել: Իսկ վարդապետի[4] պարտ է, յորժամ տեսանիցէ զայսոքիկ ամենեցուն այսոցիկ զդիմակն առնել, զի մի գտանիցին ծոյլքն ընդդիմութիւն ինչ: Այս է զմիջինն այդոցիկ ընդրել բան, ո՛չ ամենևին կարճ ասել և ո՛չ յոյժ յերկարել: Եւ դարձեալ՝ ոչ ամենևին ծածկել բառիւ և ոչ առաւել խօսել գեղջուկ ձայնիւ, այլ միջակաբար ուսուցանել, ուստիւ հարկիւ հնազանդին ծուլացեալ[քն]:

---

[1] N **չիք** *Ամենայն ոք որ ծոյլ է յաստուածային:*

[2] M **Յանկ՝ չիք, ինչպես և** *աշխ. սկզբից մինչև... գովեն զիմաստասիրաց զեղանակ բանիցն իբր թէ*:

[3] B, M *հաւաքել* **փխ**. *քամահրել*:

[4] B, O *ճշմարիտ վարդապետի* **փխ**. *վարտապետի*:

***Հարցումն.*** Ընդե՞ր Տէր մեր ո՛չ զիմաստունս և զմեծա[տ]ունս և զիզաւրս ընտրեաց առաքեալս, այլ՝ յիմարց և [յաղ]քատաց և ի տկարաց:

***Պատասխան.*** Զայս վերին իմաստութ[իւնն] կարգաւրեաց, զի կամեցաւ ի շինութիւն եկեղեցոյ ոչ ա[ւգն]ական լինել մարդկային ինչ իրք, յաղագս որոյ ի տգիտաց [ըն]տրեաց զառաքեալսն, զի մի՛ ասիցեն, թէ իմաստութեամբն հիա[ց]ուցին զաշխարհս և դարձուցին, և ի յաղքատաց արար առ[ա]քեալս, զի մի՛ ասիցեն, թէ ընչիւք խաբեցին և ի [տկ]արաց կոչեաց առաքեալս, զի մի՛ ասիցեն, թէ բռնութ[եամբ] տիրեցին աշխարհի[1]:

***Հարցումն.*** Զի՞արդ յԱւետարանին նախ Մատթէոս և Մարկոս կարգեցաւ և ապա՝ Ղուկաս և Յովհանէս:

***Պատասխան.*** Այս է [պատճառն], զի Ղուկաս և Յովհաննէս կոյսք էին, վասն որոյ ի միասին կարգեցան: Եւ զի՞ Ղուկաս նախ գրեաց, քան զՅովհանէս, վասն որոյ նախքան զնա դասեցա[ւ |5բ| իսկ Մատթէոս] և Մարկոս ամուսնացեալք էին, վասն որոյ ի միասին կարգ[եցան]: Եւ զի՞ նախ Մատթէոս և Մարկոս դասեցան, և ապա՝ Ղուկաս և Յովհաննէս [վասն կրկին] պատշաճի[2,3]:

Նախ՝ վասն ժամանակին, զի Մատթէոս և Մարկոս յառաջ գրեցան, քան զնոսա: Եւ երկրորդ՝ զի Ղուկասու և Յովհաննու բանքն դժուարին է հաւատալոյ, զի Յովհանն զանճառական Ծնունդն պատմէ, որ ի Հաւրէ, և Ղուկաս՝ զԱւետաւք յղանալն Կուսին և այլն:

---

[1] E, O **չիf** *Հարցումն. Ընդե՞ր Տէր մեր ո՛չ զիմաստունս... թէ բռնութեամբ տիրեցին աշխարհի:*

[2] E, O **չիf** *Այս է [պատճառն], զի Ղուկաս և Յովհաննէս կոյսք էին... Ղուկաս և Յովհաննէս վասն կրկին պատշաճի:*

[3] C **չիf** *ՆՈՒԱՍՏ ԵՒ ՅԵՏԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՏԹԷՈՍԻ՝ [ԵՌԱՄԵԾ]ԱՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ... Եւ զի՞ նախ Մատթէոս և Մարկոս դասեցան, և ապա՝ Ղուկաս և Յովհաննէս [վասն կրկին] պատշաճի:* C *պատշաճի* **փխ.** *պատճառի:*

Իսկ Մատթէոս և Մարկոս մարդկային պատմեն, իբր զհաւատալի իրաց, վասն որոյ նոքա նախադասք եղեն, զի նոքօք յառաջագոյն կրթեսցին մարդիկն, զի յորժամ հասանիցեն ի նոսա դիւրաւ ընդունիցին զԲանն:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ Դ. (4) միայն են յայտնիք աւետարանիչք: Իսկ Ղուկաս վկայէ, թէ՝ «**Բազումք յաւժարեցին գրել**» *(Համբ. Ղուկ. Ա. 1)*:

***Պատասխան.*** Ճշմարիտ է, ոչ թէ չորեքին միայն գրեցին, այլև բազումք արարին Աւետարան, որպես Ղուկաս վկայէ ի Գործքն, թէ. «**Ի Կեսարիայ աւրեալան կալաք ի դուռն Փիլիպոսի աւետարանչի**» *(Համբ. Գործք. ԻԱ. 8)*:

Արդ, զի՞ մարդկային մտօք գրեցին նոքա և ոչ հրամանաւ Հոգւոյն Սրբոյ, վասն որոյ ո՛չ եղեն հաճոյք Հոգոյն Սրբոյ, և ո՛չ և երևեցան, այլ՝ չորեքինս միայն, ըստ քառաբուխ վտակացն *(տե՛ս Ծննդ. Բ 10)*, և ըստ կառացն Եզեկիէլի *(տե՛ս Եզեկ. Իվ Գ 3)*, և ըստ չորից կողմանց աշխարհիս, և վասն չորից տարերց սոքա միայն յայտնեցան:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ Ղուկաս յերկոսին գիրս իւր հիշատակէ զԹեոփիլոս և յառաջինն՝ գովութեամբ, իսկ երկրորդին՝ ոչ, այլ սոսկ Թէոփիլէ:

***Պատասխան.*** Այս է՝ զի յառաջագոյն քաջալերս տայ ասելով. «**Քաջդ Թեոփիլէ**» *(Ղուկ. Ա. 3)*, իբր զանտեղեակ ոք: Զոր օրինակ՝ նաւավար, յորժամ կամիցի ի խորս ծովու նաւել, խրատէ զանգետքն [ո՛չ] խռովել ի մեծամեծ ալեացն, և, որպէս զաւրավար, գովէ զ[աւ]րս իւր՝ «*քաջ*» ասելով, իբր թէ բարիոք մղեսցեն զպատերազմն, այսպէս յառաջն գովութիւն եդ Ղուկաս, և յերկրորդին՝ ոչ, իբր թէ հասու [եղեալ] է խորհրդոցն Աստուծոյ[1] և ոչ ունի խռովութիւն ինչ:

[1] C չիf *Ասպուծոյ*:

Իսկ թէ ո՞վ է Թե[ոփ]իլոսն ասացից, յորժամ «զԳործքն» քննեսցուք[1]:

***Հարցումն.*** Զի՞նչ է [աս]ելն Ղուկասու. «**Զբանն առաջին, զոր արարի վասն ամենայնի**» ***(Գործք. Ա 1)***: Իսկ Յովհան[նէս աս]է. «**Բազում եւ այլ ինչ է, զոր արար Յիսուս, որ ոչ գրեցան ի գիրս յայս, [զի] ոչ էր աշխարհս բաւական պանելոյ**» ***(հմմտ. Յովհ. ԻԱ 25)*** մի՞թէ հակառակեն միմեանց:

***Պատասխան.*** Ոչ ինչ հակառակութիւն է ի մէջ սոցա, զի բանն Յովհաննու ճշմարիտ է, թէ [ամենայն] սքանչելիք և բանք Քրիստոսի գրեալ էին, ոչ էր բաւական միտք մարդկան [տ]անելոյ: Եւ յայտ անտի է, զի որք, որ գրեցին սակաւ [ինչ] գրեցին, իսկ Ղուկասու բանն, թէ. «**Ա՛ր արարի վասն ամենայնի**» ***(Գործք. Ա 1)***, ոչ թէ [աս]է՝ թէ մի ըստ միոջէ գրեցի մանրամասնաբար, այլ՝ թէ մի [նշան]աւն կամ երկոքումբքն, զորս գրեցի՝ ծանուցի քեզ, **|6ա|** թէ զամենայն, զոր արար Յիսուս, նովիմբ իմացիր, [զի բա]զում արարեալ է, և ոչ հարկ գրել, կամ զամենայն յիշատա[կել], զի հաւատացելոցն մի ինչ բաւական է:

---

[1] B, C, M, O, G չhf. *Իսկ թէ ո՞վ է Թե[ոփ]իլոսն ասացից, յորժամ զգործքն քննեսցուք:*

# ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌՆ

Եւ ասէ հրեշտակն ցԶաքարիա. «**[Մի՛ երկնչիր, Զաքարիա, զի]** *լսելի եղեն աղօթք էո եւ [կին էո Եղիսաբէթ ծնցի էեզ որդի]» (Ղուկ. Ա 13)։*

Աստ նախ զծնունդն Յովհաննու պատմէ, և ապա՝ Զաքարիային: Եւ այս վասն կրկին պատճառի[1]:

Նախ՝ զի Յովհաննէս պա[տ]ուական էր առաջի ժողովրդեանն, զի իբրև զմարգարէ ունէին զնա Աւետարանն, վասն որոյ զսորայս պատմելով կամ ի ծանաւթ առնել սովաւ զՏեառն Ծնունդն:

Եւ երկրորդ՝ քանզի ամենեքեան մարգարէքն վկայեցին վասն Յովհաննու, թէ ընդ Քրիստոսի պարտի լինել, որպէս ասէ Եսայի. «**Զայն բարբառոյ յանապատի» *(Եսայի Խ 3)***, և թէ. «**Առաքեմ զհրեշտակ իմ առաջի էո, որ պատրաստեսցէ զճ[անապարհ առաջի էո]» *(հմմտ. Ղուկ. Է 27)*։** Վասն որոյ նախ զՅովհանն պատմէ զասացեալսն ի մարգարէիցն, զի նոքաւք յամօթ արասցէ զիրէից դասն, թէ ճշմարիտ Քրիստոս էր, որ եկն և ոչ հաւատացին, զորոյ յառաջ ընթացին մեծութիւն բազում կերպիւ պատմէ[2]:

Նախ՝ զի ասէ՝ Յովհաննէս կոչեսցես, այսինքն՝ հնազանդութիւն, որով և լիցի բնակարան Սուրբ Երրորդութեանն, ըստ այնմ, թէ. «**Եւ յո՞ հանգեայցէ, թէ ոչ՝ ի հեզս եւ ի խոնարհս» *(հմմտ. Եսայի ԿԶ 2)*։**

Երկրորդ՝ զի ասէ. «**Ցնծուրիւն եղիցի ամենայն ժողովրդեանն» *(հմմտ. Ղուկ. Ա 14)***, այսինքն՝ ի սքանչելի Ծնունդ Նորա ցնծասցեն:

Երրորդ՝ զի ասէ. «**Եղիցի մեծ առաջի Աստուծոյ» *(տե՛ս Ղուկ. Ա 15)*։**

---

[1] B, C, E, G, M, O չիք *պատմէ, և ապա՝ Զաքարիային: Եւ այս վասն կրկին պատճառի* **փխ**. *պատմէ զմեծութիւն մանկանն բազում կերպիւ:*

[2] B, C, E, G, M, O չիք *Եւ այս վասն կրկին պատճառի: Նախ՝ զի Յովհաննէս պա[տ]ուական... զորոյ յառաջ ընթացին մեծութիւն բազում կերպիւ պատմէ:*

Այս է կատարելապէս ճոխութիւն, որ յԱստուծոյ իցէ:

ա. Զի ծայր է ամենայն բարութեանց:

բ. Զի անլոյծ և մնացական է այն պատիւն: Իսկ երկրաւորքս ընդ դիմակ են Նմա:

ա. Զի փոքր է, բ. Զի [կո]րստական է:

Չորրորդ՝ զի ասէ. «**Գինի եւ ուղի մի՛ արբցէ**» *(Ղուկ. Ա. 15)*, [այսինքն]՝ աշխարհական աւծումն և արբումն մեղաց մի՛ եղիցի ի նա, զայսչափ ի ներքոյ աւրինացն կատարեալ ապրեցոյց և արտաքո [աւր]ինացն ևս[1]:

Հինգերորդ՝ զի ասէ. «**Հոգւով Սրբով լցցի յար[գանդ]ի մօրն [իւրոյ]**» *(հմմտ. Ղուկ. Ա. 15)*, որով հրաշափառ գտաւ, քան զամենայն ծնունդ[ս], զի այլոց ոչ պատահեցաւ այս:

Վեցերորդ՝ զի ասէ. «**Զբաղու

[յար]դոցն Իսրայէլի դարձուցցէ ի Տէր Աստուած [իւրեանց]**» *(Ղուկ. Ա. 16)*, այսինքն՝ զի յոյժ շահ և աւգ[ուտ] եղև հաւատոցն, որ ի Քրիստոս Յիսուս քարոզութիւնն Յովհաննու:

Եւթն[երորդ]՝ զի ասէ. «**Ինքն եկեսցէ հոգւով զաւրութեամբ Եղիայի**» *(տե՛ս Ղուկ. Ա. 17)*, այսինքն՝ զ[կար]ապետութիւնն յայտնէ, օրինակ տալով զերկրորդ՝ կար[ապ]ետն Եղիա, զի նոյն հոգին Եղիայի առաքեսցէ, որպէս[2] Եղիա:

Ութերորդ՝ զի. «**Դարձուցցէ, ասէ, զսիրտս հարց յորդիս**» *(հմմտ. Ղուկ. Ա. 17)*:

Այս է՝ սիրտ հրէիցն ի բանս որդոց ի[ւրոց առա]քելոցն:

Իններորդ՝ զի ասէ. «**Զանհաւատս յիմաստութիւն արդ|6բ|[արոց]**» *(Ղուկ. Ա. 17)*, այսինքն՝ յիմարեալսն մեղօք յառաքինութիւն իմաստութեամբ ածէ:

---

[1] C *կատարեալ ապրեցոյց և արտաքո [աւր]ինացն ևս* **փխ.** *կատարեալ եցոյց*: O **չhf** *մի՛ եղիցի ի նա, զայսչափ ի ներքոյ աւրինացն կատարեալ ապրեցոյց և արտաքո [աւր]ինացն ևս:* M *…և արբեցումն մեղաց մի լիցի ի նա, այսչափ ի ներքոյ օրինացն կատարեալ եցոյց*:

[2] B, C, G, M, O *առաքեսցէ, որպէս* **փխ.** *առաքեսցէ զՅովհաննէս, որպէս:*

Տասներորդ՝ «**Պատրաստել Տեառն ժողովուրդ կապմեալ**» *(Ղուկ. Ա 17)*, այսինքն՝ զիոգիս նոցա պատրաստ է արդարութեամբ լսող լինել նոցա Բանին Աստուծոյ:

***Հարցումն.*** Վասն է՞ր կոչի Սուրբն Յովհաննէս Կարապետ:

***Պատասխան.*** Վասն բազում իրաց:

Նախ՝ զի կարապետ եղև գալըստեանն[1] Բանին մարդացելոյ, ըստ այնմ՝ «**Գայ հզօրագոյն քանզիս, որում չեմ բաւական կարցս կօշկացն լուծիկս**» *(Համար. Մարկ. Ա 7, Համար. Յովհ. Ա 27)*:

Երկրորդ՝ «Կարապետ» կոչի վասն մկրտութեանն սկիզբն առնելոյն, ըստ այնմ. «**Եւ մկրտեմ զքեզ ջրով, իսկ Նա, որ գայ Հոգով եւ հրով**» *(Համար. Մատթ. Գ 11)*:

Երրորդ՝ Կարապետ եղև առաքելութեան շնորհին, ըստ այնմ. «**Զեմ եւ Քրիստոսն, այլ առաքեալ եմ առաջի նորա**» *(Յովհ. Գ 28)*, և ոչ միայն առաքեալ, այլև՝ մարգարէ, և առաւել քան զմարգարէ:

Չորրորդ՝ Կարապետ ասէ. վասն վարդապետական շնորհին, զի ի նմանէ եղև սկիզբն քարոզութեանն ըստ այնմ. «**Յայնժամ Յովհաննէս քարոզէր եւ ասէր. ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ**» *(Համար. Մատթ. Գ 2)*:

Հինգերորդ՝ կոչի «կրկին Կարապետ», վասն նշանակելոյ զԵրկրորդ Գալուստն, ըստ այնմ. «**[Որոյ] հեծանոցն ի չեռին Իւրում, եւ արբեսցէ զկալ աշխարհի, եւ զմեղաւորսն այրեսցէ անշէջ հրով**» *(Համար. Մատթ. Գ 12)*:

Վեցերորդ՝ վասն զի ի նմանէ սկիզբն պահոց և առաքինութեան և խարազնազգեաց և յանապատ բնակիլ, ըստ այնմ. «**Եւ էր յանապատ մինչեւ յաւուր երեւելոյն նորա ի Իսրայելի**» *(Ղուկ. Ա 80)*, և թէ. «**Կերակուր էր նորա մարախ եւ մեղր վայրենի] եւ հանդերձն եւ ուղղոյ**» *(Համար. Մարկ. Ա 6)*:

---

[1] C չիf *գալըստեանն*:

Եւթներորդ՝ «Կարապետ» կոչի, վասն Աստուած դաւանելոյ զմարդացեալն, զի նախքան զնա ոչ ոք ի մարդկանէ դաւանեաց յայտնապէս Աստուած, ըստ այնմ. «**Դառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի**» *(Յովհ. Ա. 29)*, զի մեղս ոչ ոք կարէ թողուլ բացի Աստուած:

Ութերորդ՝ «Կարապետ» կոչի, վասն Հայրական ձայնն լսելոյ ի Յորդանան, այսինքն՝ զհաշտութիւն Հօր Աստուծոյ ընդ մարդկային բնութեան, զի, մինչև ի մկրտութիւնն Քրիստոսի, Հայր Աստուած ո՛չ էր խօսեցեալ ընդ մարդկութեանս, ըստ այնմ. «**Դայ է <դայ է> իմ սիրեցեալ ընդ որ հ[աճեցայ]**» *(Համբ. Մատթ. Գ. 17)*:

Իններորդ՝ «Կարապետ» կոչի, վասն մարտիրոսական մահուամբ վկայելովն, զի ի մարդեղութիւնն Քրիստոսի նա եղև առաջին մարտիրոս, ըստ այնմ. «**Կալաւ զՅովհան Հերովդէս եւ գլխատեաց զնա**» *(Համբ. Մատթ. ԺԴ. 3, 10, Համբ. Մարկ. Զ. 27)*:

Տասներորդ՝ «Կարապետ» կոչի, վասն Աւետիս տալոյ նախահօրն ի դժոխս զփրկութիւն ոգւոցն, ըստ այնմ. «**Դո՞ւ ես որ գալոց ես, թէ այլուա՞մ ակն կալցուք**» *(Ղուկ. Է. 19)*, վասն սրայ հաստատեաց Տէրն և գովեաց, թէ «**Քան զՅովհան ոչ ոք է մեծ ի ծնունդս կան[անց մէջ]**» *(Մատթ. ԺԱ. 11)*:

Նման Յովհաննու նոյն Գաբրիէլ յԱւետիս Կուսին եցոյց զԱստուածութիւն Բանին մարմնացելոյ բազում կերպիւ:

Նախ՝ զի ասէ. «**Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ**» *(Ղուկ. Ա. 28)*, այսինքն՝ |7ա| ուրախացիր, զի ի հարսնութիւն հրավիրեալ ես Հօրն երկն]աւորի:

Երկրորդ՝ «**Ահա յղասցիր եւ ծնցես որդի**» *(Ղուկ. Ա. 31)*, [այսինքն]՝ սերմնաբար ծնունդ, որ է աստուածային իրագործութիւն:

Եր[րորդ]՝ «**Կոչեսցես զանուն նորա Փրկիչ**» *(Համբ. Ղուկ. Ա. 31)*, զի Յիսուսն Փրկիչ թարգմանի, որպէս ասէ հրեշտակն. «**Փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրոց**» *(Համբ. Մատթ. Ա. 21)*:

Չորրորդ՝ զի ասէ. «**Եւ եղիցի մեծ**» *(Ղուկ Ա. 32)*, որ է անզուգական աստուածութեանն [յատուկ], որպէս ասէ մարգարէն. «**Աստուած մեծ է Տէր**»[1], *(հմմտ. Եզեկ ԺԸ. 11)*։

Հինգերորդ՝ այլ ևս յայտնագոյն ասէ. «**Որդի բարձրելոյն կոչեսցի**» *(Ղուկ. Ա. 32)*, զի զհամաբանութիւն Հօրն ցուցանէ «Որդի» ասելն։

Վեցերորդ՝ ասէ. «**Տայէ Տէր Աստուած զաւրութիւն Դաւթի**» *(հմմտ. Ղուկ. Ա. 32)*։ Այս զմարդկային բնութեան միացումն ցուցանէ, ըստ բանին յայտ արարեալ, թէ նոյն որդի բարձրելոյն էր, որ եղև Որդի [Մարդոյ][2], վասն զի անքակ է միացեալ Բանն Աստուած ընդ մարդկային բնութիւնէս։

Եւթներորդ՝ զի ասէ. «**Թագաւորեսցէ [ի վերայ տանն Յակովբայ] յաւիտեանն**» *(Ղուկ. Ա. 32)*։ Այս է՝ ոչ լինի[3] մարդկան թագաւոր, այլ՝ Աստուած յաւիտենից և Արարիչ ամենեցուն։

Ութերորդ՝ զի ասէ. «**Վաղջան ոչ է թագաւորութեանն**» *(հմմտ. Ղուկ. Ա. 33)*։ Եւ զայս զանսկզբանութիւն Բանին ցուցանէ, որ միաւորեալ է ընդ մարդկութեանս, այսինքն՝ ընդ բնութեանս, զի սեպհական ունի զթագաւորութիւնն, զի ամենայն սկսեալ՝ վաղջան ունի, յատ է, թէ նմա վայել է անվաղջանութիւնն, որ սկիզբն ոչ ունի։

Իններորդ՝ ընդ հարցանել Կուսին ասէ. «**Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ**» *(Ղուկ. Ա. 35)*, և այս գործակցութիւն Հոգոյն Սրբոյն ցուցանէ, այսինքն՝ զիջանելն և մաքրելն զարգանդն և միաւորեալ ընդ Բանին զմարմինն։

Տասներորդ՝ զի ասէ «**Սուրբ է ծնանելոցն**» *(պէ՛ս Ղուկ. Ա. 35)*, զի և այս Աստուծոյ միայն վայել է, զի ոչ ոք ի մարդկանէ պարծի սիրտ սուրբ ունել, Ինքն Տէրն ասէ. «**Ո՞վ յանդգիմանեսցէ զիս վասն մեղաց**» *(հմմտ. Յովհ. Ը. 46)*, և թէ. «**Իշխանն աշխարհիս յիւրոցն յիս ինչ**

---

[1] **Հին Կտակարանում՝** *Մեծ է Տէր, քան զամենայն աստուածս։*

[2] B, C *Մարդոյ* **փխ.** *Դաւթի։*

[3] B, C, G, M, O *ոչ լինի* **փխ.** *ոչ է ըստ օրինի։*

ոչ գպանէ» *(համբ. Յովհ. ԺԴ 30)*, ապա յայտ է Աստուածն Բան ի մարմնի միացեալ: Այսպէս վկայեաց Եղիսաբեթ՝ մայրն Յովհաննու՝ աւրհնելով զպտուղ որովայնի Կուսի[ն] և «**Մայր Տեառն**» *(Ղուկ. Ա 43)* կոչելով, և երանի, որ հաւատայ ասացելոցն [զԲանն] Աստուած մարմնացեալ *(տե՛ս Ղուկ. Ա 45)*:

***Հարցումն.*** Զի՞նչ է մեծացուցանելն, զոր ասէ **[Մարիամ. «Մեծացուցոյէ անձն իմ զՏէր»]** *(Ղուկ. Ա 46)*:

***Պատասխան.*** Այս է՝ աւրհնել և փառաւորել և բարձր առնել, սմին և մարգարէն [վկայէ] «**Աւրհնեա անձն իմ զՏէր**» *(Սաղմ. ՃԲ 1)*: Բայց զանազանին, զի աւրհնելն բանի[ւ է], որ յերեսն, իսկ գովելն, որ յետոյ, իսկ փառաւորելն, որ [առ]աջի բազմաց: Իսկ բարձրացուցանելն արդեամբք, այսինքն՝ երեսիւ, իսկ բարեբանելն՝ զարարեալ գործն ասել. [հ]րաւիրել, իսկ մեծացուցանելն ի միտս է, վասն որոյ [անձն] ասէ, զի սովորութիւն է զով մեծ համարի նմա խոնարհի, և [զով ոչ] թէպէտ բանիւ ասէ. «**Գոգծով ոչ հնազանդի**» *(համբ. Եսայի ԾԷ 10)*: Իսկ Սուրբ Կոյսն [ի յոգի] մեծացոյց զԱստուած, վասն որոյ ասէ. «**Եղիցի ինձ ըստ բանի քումդ**» *(Ղուկ. Ա 38)*[1]:

|7բ| ***Հարցումն.*** Զի՞նչ է գովութիւն խոնարհութեանն, զի ասէ Կոյսն. «**Զի հայեցաւ ի խոնարհութիւնս աղ[ախնոյ իւրոյ]**» *(Ղուկ. Ա 48)*:

***Պատասխան.*** Բազում ինչ:

Նախ՝ զխոնարհութիւնն մարգարէին գովեաց Աստուած ասելով. «**Ես ի հեղն հանգեայց**» *(համբ. Եսայի ԿԶ 2)*, ուստի արժան է գովեսցի, զի Աստուծոյ է բնակարան:

Երկրորդ՝ զի ամենայն ոք, որ խոնարհ է, ոչ ունի ընդդիմակ և հակառակ: Ուստի յայտ է, թեև յատենի անդ ոչ ունի հակառակ, որով դատի ինքն:

---

[1] B, C, E, G, M, O չիf *Բայց զանազանին, զի աւրհնելն բանիւ է... մեծացոյց զԱստուած, վասն որոյ ասէ. Եղիցի ինձ ըստ բանի քում:*

Երրորդ՝ զի որ խոնարհ է զայլոյ կամս առնէ, ուստի յայտ է, թէ, որ զամենայն կամս առնէ և Աստուած զնմա կամսն կատարէ, ըստ այնմ թէ. «**Ամենայն, որ առնէ զկամս Հօր իմոյ, նայ է Իմ հայր եւ քոյր եւ մայր**» *(Համբ. Մտթ. ԺԲ 50)*։

Չորրորդ՝ զի հնազանդն զիւր պէտս ուրանայ և զայլոց կարիս լնու, ուստի յայտ է, թէ Աստուած զնմա փառսն լնու։

Հինգերորդ՝ զի հնազանդն սիրէ զամենայն ոք, վասն որոյ յայտ է, թէ Աստուած զնա սիրէ։

Վեցերորդ՝ զի զոչ ոք այպանէ, վասն որոյ և յայտնէ թեև ոչ փոխարէն առնէ, զոր մարգարէն գովէ։

Եւթներորդ՝ զի խոնարհն մեղանչական համարի զինքն, ուստի յայտնի է, թէ արդար է առաջի Աստուծոյ, զի «**Որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի**» *(Մտթ. ԻԳ 12)* ասաց Տէրն։

Ութերորդ՝ զի խոնարհն անգէտ ասէ զինքն, ուստի յայտ է, թէ գիտէ զկամսն Աստուածայինս, ըստ այնմ թէ. «**Յորժամ զամենայն կարարիցէք, ասասջիք ծառայք անպիտան եմք, զ[որ պարտէաքն առնել՝ արարաք]**» *(Հմմտ. Ղուկ. ԺԷ 10)*։

Իններորդ՝ զի խոնարհն ոչ կամի զկորուստ ուրուք, ուստի երևի թեև Աստուած ոչ կամի զկորուստն նորա, զի. «**Որ սուր հանցէ՝ սրով մեռցի**» *(Հմմտ. Մտթ. ԻՁ 52)* ասաց Տէրն, նոյնպէս և ընդդիմակն իւր։

Տասներորդ՝ զի խոնարհն երկնչի յամենայն մարդոյ, ուստի յայտ է, թէ որ երկնչի, ոչ վնասի, վասն որոյ երանէ մարգարէն. «**Երանի՛, որ երկնչի ի Տեառնէ, զպատուիրանս նորա նա կամի յոյժ, զի հզօր եղիցի զաւակ նորա եւ աւրհնեսցի յաւիտեանն**» *(Հմմտ. Սաղմ. ՃԻԼ 1-2)*։

Զայս ամենայն և այլ ևս գերագոյն ունէր Կոյսն Մարիամ, վասն որոյ ասէ՝ հոգին[1]։

---

[1] C, E, M *հոգին* **փխ**. *զի հայեցաւ ի խոնարհութիւն, հոգին* **փխ**. G *Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ* (Ղուկ. Ա 48)։ B *Խոնարհի խոնարհ*։ O *հոգին* **փխ**. *զի հայեցաւ ի փառապանս*։

*Հարցումն.* Զիա՞րդ գիտէր Եղիսաբեթ զանուն Յովհաննու և Զաքարիա պապանձեալ եկն ի տաճարէն անտի *(տե՛ս Ղուկ. Ա. 22, 63)*։

*Պատասխան.* Հոգին Սուրբ, որ յայտնեաց <այտնեաց> Զաքարիայի, յայտնեաց և Եղիսաբեթի, յորժամ. «Հոգով Սրբով լցաւ» *(Ղուկ. Ա. 41)* և աւրհնեաց զԿոյսն. «Մայր Տեառն» *(Ղուկ. Ա. 43)* կոչելով զՆա։

*Հարցումն.* Զի՞նչ է ասելն Զաքարիայի. «Յարոյց մեզ եղջեւր փրկութեան [ի տանէ Դաւթի]» *(Հմմտ. Ղուկ. Ա. 69)*։

*Պատասխան.* «*Եղջիւրն*» զբանն Աստուած մարդացեալ կոչէ։ Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի եղջիւրն հաստատութիւն է կենդանեաց, այսպէս՝ բանն Աստուած մարդացեալ հաստատեաց զանկալ բնութիւնս, ըստ այնմ. «Հաստատեաց զՅակոբ ծառայ իւր» *(Հմմտ. Ա. Մնաց. ԺԶ 17, Հմմտ. Սաղմ. ՃԴ 10)* և այլն։

Երկրորդ՝ զի զէնէ կենդանեացն, որով մարտնչի ընդ թշնամին իւր, այսպէս՝ Բանն Աստուած զէն եղև մարդկային բնութեան, որով կարասցեն զզօրութիւն անմարմին թշնամոյն ընկրկել, ըստ այնմ. «Եղու չեզ ի շքանուրիւն կոխել զօշս եւ զկ[ատրիճս]» *(Ղուկ. Ժ 19)*։

Երրորդ՝ զի եղջիւրն ի մի մասն մարմնոյ է կայացեալ, այսպէս բանն |8ա| Աստուած մի անհատ մարմին ի բնութիւնէս ընկալաւ և ընդ [Իւր միաց]ոյց, ըստ այնմ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» *(Յովհ. Ա. 14)*։

Չորրորդ՝ զի կր[կին] է եղջիւրն, այսպէս բանն Աստուած բանական հոգով էառ զմարմին և ոչ՝ սոսկ մարմին։

Հինգերորդ՝ զի մի գլուխ կենդանւոյն ի մէջ է անկեալ և զերկուսի եղջերսն յինքն միացուցեալ, այսպէս՝ Բանն Աստուած միացեալ է յինքն զբնական հոգին և զմարմինն, ըստ այնմ. «Ի նմա բընակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս» *(Ա. Հռոմ. Թ 5)*։

Վեցերորդ՝ թէպէտ զի եղջերն ի բնութենէ մարմնոյն է, սակայն աննման է մարմնոյն, այսպէս՝ մարդացեալն, թէպէտ ի բնութենէս առեալ է, այլ աննման է մեզ, զի Աստուած է բնութեամբ, ըստ այնմ. «**Որ է ի վերոյ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս**» *(Առ Հռոմ. Թ 5)*։

Եւթներորդ՝ զի սակաւ-սակաւ աճմամբ զաւրանայ և լինի կատարեալ, այսպէս և Բանն մարդկային բնութեամբն ծնաւ ի Կուսէն տղայ, և այնպէս աճմամբ զաւրացեալ եկն ի չափ հասակի մարդկային բնութեանս, ըստ այնմ. «**Մանուկն աճէր եւ զօրանայր [հոգւով]**» *(Ղուկ. Ա 80)*։

Ութերորդ՝ զի յետոյ երևի եղջեւր ի կենդանին, այսպէս՝ բանն Աստուած յետ բազում ժամանակաց, ապա եկն և մարմին էառ, ըստ այնմ. «**Ի մերյենալ ամացն յայսմնեցոյնս ի հասանել ժամանակին երեւեցոյնս**» *(Ա Մաք. Գ 2)*։

Իններորդ՝ զի ի ճակատ կենդանւոյն է եղջերն, այսպէս և Տէրն մեր նախամարտիկ եղև ի մէնջ, այլև առաջնորդ յերկինս ելիցն, ըստ այնմ. «**Յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգ[եցից առ իս]**»[1] *(Յովհ. ԺԲ 32)*։

Տասներորդ՝ զի սուրբ կենդանեաց է եղջիւրն և Տէրն սուրբ ժողովրդեանն եղև Փրկիչ և զաւրութիւն, վասն ասէ. «**Յարոյց մեզ եղջեւր փրկութեան ի տա[նէ Դաւթի, ծառայի իւրոյ]**» *(տե՛ս Ղուկ. Ա 69)*։

*Հարցումն.* Զի՞նչ է ասելն. «**Մարիամ պահէր զամենայն զայսորիկ եւ խելամուտ լինէր ի սրտի իւրում**» *(Ղուկ. Բ 19)*։

*Պատասխան.* Զբազում սքանչելիսն ասէ, որ եղև ի Ծնընդեանն Տեառն։

Նախ՝ զԱւետիս հրեշտակին, որ ընդ տալ հաւանական բանին, էջ Բանն Աստուած յարգանդ Կուսին։

---

[1] B, C, G, M չhf *ըստ այնմ. «Յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգ[եցից առ իս]»*։

Երկրորդ՝ զ[ան]սերմ յղացումն և զանճառելի միաւորութիւն Բանին ընդ մարմնոյն:

Երրորդ՝ զկուսութեամբ Ծնունդն, որ և սա ի վեր է, քան զբնութիւնս, այսինքն՝ զի՞ էր Մայր և Կոյս:

Չորրորդ՝ զլուսոյ ծագումն, որ ի ծնընդեան [ժամ]ուն:

Հինգերորդ՝ զիրեշտակաց փառաբանութիւնն, որք փառ[ք ի] բարձունս երգէին *(տե՛ս Ղ.ուկ. Բ 14)*:

Վեցերորդ՝ զգալ մոգուցն յերկրպագութիւն ծն[եցե]լոյ Բանին և զպատարագօք պատուելն:

Եւթներորդ՝ զհովուս փառաբանելն, ըստ այնմ. «**Դարձան հովիւքն եւ փառաւորք առնէին զԱստուած**» *(հմմտ. Ղ.ուկ. Բ 20)*:

Ութերորդ՝ զհայելն Եղիսաբեթի, որ ասաց. «**Ուստի եկեսցէ մայր Տեառն իմոյ**» *(Ղ.ուկ. Ա 43)*:

Իններորդ՝ զի Սիմէոնի զուգուելն և զարձակումն խնդրելն:

Տասներորդ՝ զիրեշտակին երևիլն և զփախուցանելն յԵգիպտոս և կործանիլ [ձեռ]ագործացն Եգիպտոսի[1]: Զայսոսիկ պահեր և խելամուտ լին[էր]: Զի սովորութիւն է կանանց անմտից, զի զոր ինչ լսենն, իսկոյն ասէն, իսկ Կոյսն, որպէս գերագոյն գտաւ ամենայն իրօք, քան զկան[այս] և այսու ևս, զի կամէր զելք իրացն տեսնել: Իսկ զԱ[ւետիս] Կուսին և զգալն հրեշտակին և զթիւ ժամանակին, ահաւասիկ գրեալ են ի գիրս հ[արցումն][2]:

|8բ| ***Հարցումն.*** Վասն է՞ր թլփատեցաւ Տէր մեր:

***Պատասխան.*** Վասն կրկին պատճառի:

Նախ՝ զի թլփատութեամբն եցոյց զկատարեալ մարդեղութիւնն Իւր, ոչ հատմամբ, այլ՝ ճեղքելով, որպէս աւրէնն էր անդրանկանն:

---

[1] B, C, G, O չhf *Ութերորդ՝ զհայելն Եղիսաբեթի, որ ասաց… Տասներորդ՝ զիրեշտակին երևիլն և փախուցանելն յԵգիպտոս և կործանիլ [ձեռ]ագործացն Եգիպտոսի*:

[2] B, G, M, O չhf *Իններորդ՝ զի Սիմէոնի զուգուելն և զարձակումն խնդրելն… ահաւասիկ գրեալ են ի գիրս հարցումն:* C, E չhf *Իսկ զԱ[ւետիս] Կուսին և զգալն հրեշտակին և զթիւ ժամանակին, ահաւասիկ գրեալ են ի գիրս հ[արցումն]*:

Երկրորդ՝ զի կամեցաւ զաւրենսն կատարել, զի թէ ոչ էր կատարել գոյր կարծիս հերձուածնողացն, որք չար ասէին զօրէնսն կատարեալ, վասն որոյ կատարելով զաւրէնսն, եբարձ զկարծիս նոցա: Եւ դարձեալ՝ պատուելով զօրէնսն եցոյց զԻնքն տուաւղ օրինացն և հարցն Աստուած:

Դարձեալ ըստ այսմ *Հարցումն*, թէ վասն զի՞նչ պատճառի հրամայեցաւ թլփատել ի հինն զմանկունսն:

***Պատասխան.*** Վասն Զ. (6) պատճառի:

Նախ՝ զի որոշեսցին որդիքն Աբրահամու յորդւոցն հեթանոսաց, զի նոքա անթլփատք էին:

Երկրորդ՝ զաւելորդ մորթսն հատանելով ուսոյց զաւելորդ ցանկութիւնն հատանել և ընկենուլ:

Երրորդ՝ զի որպէս զայն մորթն հատեալ ոչ ինչ վնասի ի մարդն, և այնպէս ուսոյց, թեև ի մեղաց ևս հատանիք, ոչ ինչ վնասի հոգիդ ձեր:

Չորրորդ՝ զի գործիք մեղաց նա է, ի նմանէ եհատ և ոչ յայլ ինչ մասն մարմնոյն ուսոյց մեզ զգործ մեղացն ամենևին ի բաց ընկեցէք:

Հինգերորդ՝ նշան այրութեան անդամն է, ի նմանէ հատանել հրամայեաց, իբր թէ հատումն նշան եղիցի հատման անհաւատութեան ի նմանէ:

Վեցերորդ՝ զի ի ծածուկ անդամոցն հրամայեաց, ուստի յայտնագոյն ասաց թէ զծածուկն ևս հատէք ի մէնջ խորհրդոյն, որ ի միտս մարդկան [գործի]:

Եւթներորդ՝ զի զմասն մի հատանել ասաց և ոչ զբոլորին նշանակէր զմասն կուսանացն, որք ի բնութենէս հատան ի նորին գործոյ:

Ութերորդ՝ զի որ հատանել ասէր, նա էր դարձեալ դէղ վիրին այն մասին և այս ցուցանէ զկուսանսն, որք ի նոյն բնութենէ գոլով և ի նոյն անդամոց ծնեալ և դէղ այնպիսի գործոյ կուսանքն են, զի պարծելին առ Աստուած:

Իններորդ՝ զի ի յայն մասնէն սերի բնութիւն մարդկային, վասն որոյ սերական անդամ ասեն նմա, ի նմանէ ասէ՝ հատանիլ:

Ուստի երևի ծածուկ խորհուրդ իմն, թէ ի բնականէն հատանի, ապա [յ]այտ է, թեև յարտաքոյ բնութեանն ոչ ունի իշխանութիւն ձեռնարկել:

[Տասներորդ]՝ զի ծածուկն Աստուծոյ է գիտելի և տեսանելի և ծածկութեանցն [եհատ] ցուցանելով, թէ զայն մեղքն հատէք, որ ես տեսանեմ, [որ] է թլփատութիւն սրտի, զի սիրտն Աստուած տեսանէ:

***Հարցումն.*** Իսկ [թէ Ն]եստոր ասիցէ. *«Ոչ եմ անիրաւ, զի և Քրիստոս թլփատեցաւ վասն [որոյ] և ես հրամայեցի»:*

***Պատասխանեսցէս,*** թէ կարէիր, զոր ինչ Քրիստոս արար զամենայն դու առնել, ապա յիրաւի էր այդ, զի ահա Քրիստոս Խ. (40) օր ոչ ինչ եկեր և զամենայն ցաւս եբարձ և կամաւորութեամբ մեռաւ, և Իւր զօրութեամբն յարեաւ [ա]պա և յայտ է, թէ ոչ արարեալքն ի Քրիստոսէ առնել արժան է մեզ, այլ աս[ացեալ]քն, զի նորայն գործքն այսիւ զանազանի, զի ինքն ի վեր, քան զբն[ութիւն], բայց զոր ինչ բնուիւնն տանէր զայն քարոզէր, և զինչ [առ]նել արժան էր, ասաց պահոցն և ասաց աղօթիցն և ասաց՝ ողոր[մութեա]ննն և ասաց, և որ ինչ յանձն իւր եղև մկրտութիւնն և ասաց՝ խաչն **|9ա|** և ասաց մահն և ասաց:

Եւ զայդ թէ արժան էր առնել [ապա աս]ացեալ էր, զի ոչ, քան զխաչն մեծ է և ոչ, քան զմկրտութիւնն փո[քր] յայտ էր, զի թլփատիլն Նորա: Այդ են պատճառք, որք ասացան և ո՛չ [այն], որ Նեստոր մոլորեցաւ մոռացեալ զՊաւղոսի յայտնի խափանումն թլփատութեանն, որ բերանն էր Քրիստոսի:

Նմանապէս և մահմետականքն մոլորեալ են, զի ի Նեստորէ ուսան և ոչ վասն այն պայքարին, թէ Քրիստոս թլփատեցաւ, նոքա վասն այն թլփատին, այլ զի ի խորհորդ հնոյն հաւասարելոյ, վասն այն և ընդ հնոյն ատելիք են Քրիստոսի[1]:

---

[1] B, C, E, G, M, O չhf *Եթներորդ՝ զի զմասն մի հատանել ասաց և ոչ զբոլորին նշանակէր… ի խորհորդ հնոյն հաւասարելոյ, վասն այն և ընդ հնոյն ատելիք են Քրիստոսի:*

# ԵՐԲՈՐԴ ՃԱՌՆ

«Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ աւրինացն Մովսիսի» *(Ղուկ. Բ 22)։*

Նախ՝ արժան է մեզ քննել, թէ ո՞րք էին աւուրք, որ սրբութեան, և ապա՝ թէ զի՞նչ ունի խորհուրդ պատարագ տալ տատրակ և աղաւնի։

Արդ, սրբութեան աւուրքն այն են, զոր Մովսէս օրինադրեաց, թէ կինոք, եթէ սաղմ առնուցու և ծնանիցի արու, կացցէ զաւուրս քառասուն ի վերայ դաշտանին իւրոյ։ Իսկ եթէ էգ ծնանիցի՝ կացցէ զաւուրս Ձ. (80) ի վերայ դաշտանին իւրոյ սրբութեանն։ Որոյ պատճառ է, զի յաւուրսն հրամայեալ էր, թէ ոք ի մեռեալ մերձենայցէ, պղծեալ եղիցի այն օրն մինչև ցերեկոյ։ Եւ երեկոյն լուանայցէ զձորձս իւր և սրբեսցի, իսկ աւրէնք սրբութեանս այս, ըստ նոյն սահմանիս է, զի <յօրէ> յորմէ անկանի սաղմն յարգանդ կնոջ և լինի աննկար մինչև ի Խ. (40) օրն, և ապա տպաւորի ի նա հոգի բանական և լինի կատարեալ կենդանի։ Իսկ զի դեռ ոչ է նկարեալ բանական հոգին, ըստ մեռելոյ համարեալ լինէր, և ըստ այսմ օրինացս պիղծ էր և կինն զաւուրս Խ. (40) կամ Ձ. (80)։ Վասն զի արուն ի Խ. (40) աւրն յառաջակողմն ընծայի կնոջն, որ է մերձ լերդին։ Եւ վասն ջերմութեան լերդին փութով կատարի հասակն, զոր օրինակ ի դաշտ վայր աշխարհի շուտ հասնեն պտուղքն, վասն ջերմութեան տեղւոյն։ Իսկ իգին ի ձախակողմ ընծայի, որ է մերձ փայծեղան, և վասն ցուրտ բնութեանն փա[յ]ծ[ե]ղանն յամր հասուցանէ զհասակ իգին։

Եւ դարձեալ, զի այ[ր մարդ]ոյ բնութիւնն արի է, վասն որոյ փութով զարգանայ, զորօրին[ակ ծն]նեալ ժամանակն է տեսանել, իսկ կինն՝ թոյլ և կնատ, վասն որոյ [ոչ կար]է փութով հասուցանել։

Արդ, այս հասարակ է ամենայն կանանց: Իսկ առ Մարիամ զի՞նչ է այս, զի Նա էր անախտ և մաքո[ր] յամենայն կրից: Եւ զի ոչ էր ի սերմանէ առն նորայն յղացուս[1], և ոչ ի խաւարն ընկալաւ զբանական հոգին, այլ ի նոյն քթթ[ել]ական, որ էջ Բանն Աստուած յարգանդի Կուսին, և առեալ յարենէ Կուսին, միացոյց ընդ Իւր Բնութեանն նոր խառնմամբ և սքանչելի խառնուածով եղեալ նովաւ մարդ բանական հոգով և մա[րմնով][2], իբր զԽ. (40) աւրեայ մանուկ կատարեալ անդամօք:

Եւ զի՞ [ոչ էր ար]ժան ի սերմանէ առնուլ, զի նա զապականութիւն ուներ բն|**9բ**|[ութեամբ, և ոչ] առանց հեշտութեան մեղաց յառաջ գայ յերիկանցն, զոր ոչ ունէր բնութեամբ Բանն Աստուած: Եւ ոչ ի Խ. (40) օրն յամեաց սակաւ-սակաւ աճել մարմնոյն և կատարեալ հասակաւ, զի այս անասնական էր, որոյ մարդն հաւասարեցաւ, զի ոչ թէ եկն զանասնականն առնուլ մարմին, այլ զադամայինն, զայն, որ ստեղծ իսկոյն կատարեալ անդամօք՝ հոգով և մարմնով, նորին նմանութեամբ ի յարգանդ Կուսին ստեղծ Իւր մարմին և հոգի, կատարեալ ամենայն սգայութեամբ հոգոյ և մարմնոյ միանալովն ի Նա, վասն որոյ և երկրորդ Ադամ կոչի[3]:

Արդ, Կոյսն ոչ էր ի հարկաւ աւրինացն, որ յետ Խ. (40) աւուր ծնընդեանն զդիակրութեանն առաջին պահեալ էր, այլ վասն այն, զի մի քակիչ երևեսցի ի սկըզբանն աւրինացն յանձն առնու զսրբութիւն աւրինացն, վասն սորայ մնա անդէն Խ. (40) օր ուր էր: Եւ յետ կատարմանն «**Եկ ի պաճարն յընծայումն**» *(գէ՛ս. Ղուկ Բ 27)*, զի ընծայեսցէ զբնութիւնս մեր Հաւր Աստուծոյ: Եւ զի Նա գլուխ մեր է, ընդ գլխոյն ընծայեալ եղաք անդամքս: Այս է ասելն. «**Իբրեւ**

---

[1] C, E, G, M, O *ի սերմանէ առն նորայն յղացուս* **փխ**. *ի սերմանէ առն էր նոր յղացումն*:

[2] B, C, E, G, M, O *մարդ բանական հոգով և մա[րմնով]* **փխ**. *մարդ կատարեալ բանական հոգով և մատոռ*:

[3] B, C, E, G, M, O **չիք** *Եւ զի՞ [ոչ էր ար]ժան ի սերմանէ առնուլ… և մարմնոյ միանալովն ի Նա, վասն որոյ և երկրորդ Ադամ կոչի*:

ցան աւուրք սրբութ[ութեան]» *(Ղուկ. Բ 22)*: Զի առաջին ծնունդն Սուրբ էր կոչեցեալ, զոր ցուցանէ հետակայ բանիւ օրինացն, թէ. «**Ամենայն [արու], որ բանայ զարգանդ, Սուրբ Տեառն կոչեսցի**» *(Ղուկ Բ 23)*, որ է առաջին ծնունդ:

Իսկ թէ յորժամ եդան այս օրէնքս ի ժամանակին, որ եհար զեգիպտացիսն ասաց Աստուած. «**Իմ են ամենայն անդրանիկք Իսրայէլի**» *(Հմմտ. Ելից ԻԲ 30)*, փոխանակ զի հարի ես զանտրանիկն եգիպտացւոց: Եւ այնպէս սրբեցան յԱստուծոյ անդրանիկքն Իսրայէլի: Եւ իբրև ոչ կամեցան ժողովուրդն տալ զանդրանիկսն, յայնժամ էառ Աստուած փոխանակ անդրանկացն Իսրայէլի զազգն Ղևայ: Եւ հրամայեաց Ղևայն թուել, և պակաս գտան ազգն Ղևայ, քան զանդրանիկսն Իսրայէլի: Եւ վասն պակասորդութեանն հարկեցան որդիքն Իսրայէլի տալ զերկդրամեայն ի քահանայքն:

Արդ, ցայս յայնմ հետ է մինչ ի Քրիստոս եկն այսպէս: Զի անդրանիկն Աստուծոյ էր բաժին, վասն որոյ պատարագ ևս հրամայեցաւ տանիլ զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց[1]:

Եւ արդ՝ մի թուեսցի թէ այս յատուկ պատարագն, այլ վասն աղքատութեանն այսպէս կարգեցաւ: Բայց մեծատանցն, ըստ կարողութեան հրամայեցաւ, ոմանց՝ զուարակս և ոմանց՝ նոխազս և այլք՝ խոյ: Իսկ Տէրն մերոյ մատուցան աղաւնի և տատրակ, վասն աղքատութեանն:

Եւ աստ լինի ի *Հարցումն*, թեև Աստուածածին Կոյսն ոչ էր ի ներքո հարկի բնութիւնէս, իսկ այլ կանայք քրիստոնէից, ըստ նոյն սարասիւռեն, արժան է նստել Խ. (40) օր ի վերայ դաշտանի, քանզի և նա մեռելակիր է եղեալ:

Այսմ *Պատասխանեմք*, թէ ըստ հին աւրինացն կատարումն ո՛չ է արժան նստել, քանզի ոչ մեռելութիւն մարմնոյ ի կարգի մեղաց,

---

[1] G չիf *եւ վասն պակասորդութեանն հարկեցան որդիքն Իսրայելի... զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց*:

այլ է հաւասարեալ ընդ արդարութեանն յայտ է, զի քարոզի մարմնով մեռանիլ: Այլ է մեռելութիւն հոգւոյ ի հա|**10ա**|մարի մեղաց, յորմէ գարշի Աստուած, որ բնակիչն է [նորա: Այլ] զի աղտեղի է բնութիւնն մինչև ի Խ. (40) օրն, վասն որոյ և հրամայեաց՝ ո՛չ ամուսն առնուլ մինչև ի Խ. (40) օրն, մինչև սրբեսցի բնութիւնն: Եւ մի՛ ծնանիցի խեղ, կամ հաշմանդամ, վասն որոյ, զի գարշելի է ըստ շարժուածոյ և տեսութեան, յորմէ գարշին և գայթակղի տկարքն, կարգեցաւ ո՛չ առնել կերակուր մինչև ի Խ. (40) աւր, և ապա արասցէ կերակուր:

Եւ ոչ է այն, ըստ աւանդութեան եկեղեցոյ, որ մայրն ոչ առնէ կերակուր մինչև մկրտի մանուկն, քանզի ոչ թէ մկրտութիւն մանկանն սրբէ զբնութիւն մօրն, այլ զանձն մանկանն, որով ոչ ինչ մաքրութիւն գտանի ի մայրն, քանզի մայրն վաղ ժամանակաւ մկրտեալ է, այլ կալն նորա առանց առնելոյ կերակուր, վասն աղտեղութեանն մարմնոյ իւրոյ, որ ոչ ազատի յայնմանէ մինչև ի Խ. աւր: Վասն սորայ, թէ մանուկն ժամ առանց մկրտութեան կացցէ, ոչ ինչ պղծութիւն է մօրն, զի ի ստինդիելն բնութենէ կատարելութիւն և նովաւ ոչ պղծի մայրն և յայտ է զի ի բազում իրս հասանէ ձեռն մարդոյ ի շուն և ի կատու և այլ անսուրբ իր, որ պիղծ է, քան զմարդն և ոչ պղծի ձեռն մարդոյն, ապա և ոչ են աւանդութիւնքն այն ի սահմանէ եկեղեցոյ, այլ ի տգիտաց, որք զմժղուկս քամեն և զուղտս կլանեն[1]:

Իսկ թէ վասն է՞ր ամենայն անասնոց սրբոց միայն տատրակ և աղաւնի մատուցանէին: Վասն է զի բազում աւգտութիւն գոյ մեզ ի նոցանէ: Եւ աւրինակ իմն էին Տեառն մերոյ:

Նախ՝ զի տատրակ շատ և երկար ձայն ածէ, և սա նշանակէ զքարոզութիւն առաքելոցն և զՔրիստոսի, ընդ ոլորտս տիեզեր[աց]:

---

[1] B, C, E, G, M, O չ**h** *Եւ աստ լինի ի* ***հարցումն****, թեև Աստուածածին Կոյսն… որք զմժղուկս քամեն և զուղտս կլանեն*:

Երկրորդ՝ զի տատրակն ողջախոհ է, որ նշան է զանմեղութիւն Քրիստոսի:

Երրորդ՝ զի տատրակն միայն թռչի յանապատս և ի մայրիս բնակէ, որ ցուցանէ զճգնաւորսն, որ վասն Քրիստոսի լինելոց էին:

Չորրորդ՝ զի տատրակն գիտէ բնութեամբ խոտ մի, որ հալածէ զայլ թռչունս, զոր քաղ[եալ] դնէ ի բոյն իւր, և սա ցուցանէ զիմաստութիւն սրբոցն որք [իմա]ցան հնար, զղջումն և զխոստովանութիւնն և զապաշխարութիւնն, որով զերծանիմք և դժոխոց և ի սատանայէ:

Հինգերորդ՝ զի տատր[ակն] է գուշակ գարնան, զի բարձր տեղի նստելով ուրախանայ, որ նշանակէ զքարոզութիւն մարգարէիցն, որ վասն Քրիստոսի կատարեալ:

Վեցերորդ՝ զի այնքան զողջախոհութիւնն սրտէ, մինչ զի մինն ի նոցանէ մեռան[ի], նոյնպէս կայ առանց ընկերի մինչ ի մահ, որք գուշակէին զայն սակայն, որք ի մեղաց ինչ զերծեալք, այլ ոչ դարձան ի նոյ[ն]:

Նմանապէս և աղաւնի:

Նախ՝ զի սովորութիւն է աղաւնւոյ[ն], զի յորժամ նստի յեզր գետոյ, տեսանէ զստուեր պտ[ուղ][1] |10բ| ի ջուրն և փութացեալ թաքչի ի ջուրն մինչև անցանէ [նա, և այս ցու]ցուցնէր զսուրբսն, որք յետ Քրիստոսի տեսանեն զփորձութիւնսն սատանայի արկանեն զինքեանց յարտասուս, որով զերծանին:

Երկրորդ՝ աղաւնին է հանդարտ և չէ պատռող, որպէս զարծիւ, որ ցուցանէ զհեզութիւն Քրիստոսի, ըստ այնմ. «Հեզ եմ եւ խոնարհ սրտիւ» *(Մատթ. ԺԱ 29)*:

Երրորդ՝ զի ոչ միայն ձագս իւր խնամէ և սնուցանէ, այլև զօտարս, այսպէս և Տէրն մեր, ոչ միայն յարդարսն գթայ, այլև ի մեղսաւորսն:

---

[1] B, C, E, G, O *պտ[ուղ]* **փխ**. *պտուղ թռչնոյ*:

Չորրորդ՝ զի զբնակութիւնս իւր ի քարանձաւ առնէ, որ նշանակէ զկուսութիւն անձանց նմանելոցն Տեառն, այսինքն՝ և ի Տէր ապաւինեալն, զի նա է վեմ հաւատութեան:

Հինգերորդ՝ զի ունդս ուտէ, որ ցուցանէ զարդարսն, որ զատեալ էին մեղաց ճաշակմանէ:

Վեցերորդ՝ զի լեղի ոչ ունի, որ նշանակէ զքաղցրութիւն օրինացն Տեառն:

Եւթներորդ՝ զի աղաւնին ձայն լալոյ արձակէ, փոխանակ խնդման, որ նշանակէ զՍուրբ Կոյսն, որ է լաց ի վերայ խաչին[1], փոխանակ ուրախութեան, այլև զամենայն սուրբս, որ լացին զաստ ի կեանս:

Ութերորդ՝ զի միամիտ է աղաւնին, որ նշանակէ զմիաւորութիւն Հոգոյն Աստծոյ ընդ մեզ:

Իններորդ՝ զի գէջ և աղտեղի տեղիս ոչ բնակէ, այսպէս և ի զառածեալ մեղօք ոգիս փախչի Հոգին Սուրբ:

Տասներորդ՝ զի երամովին շրջի, որ նշանակէ զբազմութիւն հաւատացելոցն ի Տէր, ըստ այնմ. «**Ուր եան եմ, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի**» *(Յովհ. ԺԲ 26)*:

Զայս ամենայն նշանակութիւնս ունէին ձագք, վասն որոյ և ընձայէին[2]: Արդ, թէպէտ Տէրն աղքատի կերպ եկն ի տաճարն, սակայն ոչ թագեաւ աստուածութիւն Նորա, քանզի Սիմէոն, որ պահեալ էր ՅԽ. (340) ամ, նա եկեալ ընդ առաջ Նորա, առեալ ի գիրկս իւր աւրհնեաց զկուսածին մանուկն Աստուած դաւանելով զՆա: Իսկ վասն Սիմէոնի ո՛չ ինչ ստուգապէս գտաք, բայց միայն ասել ոմանց, թէ յՀԲ. (72) թարգմանչացն է, որ հաւուրս Պտղոմեայ և ի հասանել թարգմանութեանն Եսայեայ մարգարէն յայն բան, որ ասէ. «**Կոյս յղանցի եւ ծնցի**» *(Մատթ. Ա. 23)* և նորա լացեալ դառնա-

---

[1] C, E, M, O *է լաց ի վերայ խաչին* **փխ**. *ելաց ի խաչին*, G *ելաց ի դէմ խաչին*:

[2] B, C, G, M, O *ձագք, վասն որոյ և ընձայէին* **փխ**. *ձագն վասն պատարագ մատուցանելոյ*:

պէս երանելով զտեսողսն կուսածին մանկանն, վասն որոյ Հոգին, որ կայր ի վերայ թարգմանութեանն աւետեաց նմա թէ. «**Ոչ մեռանիս, մինչեւ տեսցես զաւծեալն զկուսածին մանուկն**» *(Համբ. Ղուկ. Բ 26)*, որ և ի գալ Փրկչին ի տաճարն ասէ Հոգին ցՍիմէոն. «**Արի՛ տհա կոյսըդ եւ մանուկ իւր**» *(Համբ. Եռայի ԽԹ 15)*։ Եւ զայս ճըշմարիտ ցուցանեն ի բանիցն Սիմէոնի, որ խնդրեաց արձակիլ, զի թէ ոչ էր կապեալ, զի՞արդ արձակել խնդրեր:

Արդ, յայտ է թէ ծանեաւ զկապօղն, վասն որոյ թախանձեր: Եւ արդ գովութիւն բազում է ծերոյն:

Նախ՝ զի ասէ. «**Այր արդար եւ աւրինապահ եւ երկիւղած յԱստուծոյ**» *(տե՛ս Ղուկ. Բ 25)*։

Երկրորդ՝ զի Հոգին Սուրբ էր ի նմա:

**|11ա|** Երրորդ՝ զի զԱստուածորդին արժանաւորեցաւ առնուլ ի [գիրկս]:

Չորրորդ՝ զի ջերմ փափագ ունէր տեսութեան Որդոյն Աստուծոյ, որպէս մարգարէքն, ըստ այնմ. «**Բազում [մարգարէք] եւ արդարք ցանկացան տեսանել [զոր տեսանէիք]՝ եւ ոչ տեսին**» *(Մատթ. ԺԳ 17)*։ Իսկ ծերունին առեալ ի գիրկս զԱստուած Որդին. նախ սովորականն խնդրողաց կատարեաց, զի գոհացաւ վասն անցեալ ժամանակին, որ արժանի արար զնա հասանել ի տեսութիւն Նորա, և ապա յետոյ արձակել խնդրեաց ի կապանաց:

Արդ, արձակել խնդրեաց յերից իրաց[1]:

Նախ՝ ի հնութէնէ օրինաց ի նորոգութիւն Աւետարանին:

Երկրորդ՝ զհին մարդոյն Ադամայ ի նորոգութիւն կենացն յաւիտենից:

Երրորդ՝ ի կապանաց մարմնոյն ազատիլ և նորոգիլ ի խաղաղութեան կեանսն: Իսկ այն կեանքն «*խաղաղութիւն*» կոչի: Եւ այս վասն բազում պատճառի, զոր ցուցից համեմատութեամբ առ այսու կեանքս:

---

[1] B *երից իրաց* **փխ.** *ի կապանաց*:

Նախ՝ զի այս կեանքս ցաւաւք և երկամբ է, ըստ այնմ. «**Տրտմութեամբ եւ ցաւօք ծնցիս որդի**» *(Հմմտ. Ծննդ. Գ 16)*, իսկ «**Այն կեանքն անցաւ է եւ առանց ախտի**[1] **է**» *(Հմմտ. Յայտ. ԻԱ 4)*, որպէս ասէ առաքեալ:

Երկրորդ՝ զի յայս կեանքս երկիւղ գոյ յամենեցունց ի գազանաց և ի թշնամեաց, իսկ անդ ոչ է երկիւղ, այլ անահ վայելումն ի փառս:

Երրորդ՝ զի այս կեանքս զրկեն զմիմեանս և խաբեն, և զուժեղն զանուժն յաղթահարէ, իսկ անդ ոչ է խաբեութիւն և ոչ կարեն հանել զմի ինչ ի յարդարոցն:

Չորրորդ՝ զի այս կեանք միշտ փոփոխականիմք, երբեմն ի մեղք, երբեմն յարդարութիւն, երբեմն յաղքատութիւն և ի հարստութիւն, իսկ անդ՝ ոչ գոյ այսպիսի փոփոխումնս, վասն որոյ անանց է և յաւիտենական:

Հինգերորդ՝ զի աստ կարաւտիմք ամենայն իրաց, և թէպէտ և անկանի ինչ, սակայն՝ կարօտիմք, իսկ յանտի կեանքն ոչ ոք փափագեսցի իրաց, բայց միայն մեղաւորք:

Վեցերորդ՝ զի աստ ի մեծութիւն և ուրախութիւն դիւրաւ կորնչին, իսկ որ հասանեն այնմ թագաւորութեան, ոչ պակաս է ի նոցանէ ամենայն բարութիւն:

Եւթներորդ՝ զի աստ ի բարութիւնս մեր է վաս[տակ] և հողոյ բերմունք, իսկ անդ աստուածային տեսութիւն լուսափայլութիւնք Նորին:

Ութերորդ՝ զի աստ մասնաւորաբար կրեմք զուրախութիւն կամ մտաւոր, կամ հոգևոր, կամ մարմնաւոր, իսկ անդ[2]՝ հոգւով և մարմնով և մտօք:

Իններորդ՝ զի աստ մահուամբ ապականիմք, իսկ անտ՝ ոչ գոյ ապականութիւն մահու և կամ տարագրիլ ի կենաց:

---

[1] B, C, E, G, M *ախտի* **փխ**. *աշխատութեանց*:
[2] E, G, M *անդ* **փխ**. *անդ՝ համանգամայն*:

Տասներորդ՝ զի աստ հակառակութիւն է ի մէջ հոգոյ և մարմնոյ, ըստ այնմ. «**Հոգին ցանկայ հակառակ մարմնոյ**» *(տե՛ս Ա՛ռ Գաղատ. Ե 17)*, և անդրադարձեալ, իսկ անդ՝ բառն ի պատճառ խռովութեանս այսմ և լինի խաղաղութիւն ի մէջ սոցա, վասն որոյ աղաչէր ծերունին. «**Արյակեա զիս ի խաղաղութիւնս**» *(Համբ. Ղուկ. Բ 29)*։

Արդ, ի գալուստ Տեառն մեր |**11բ**| ի տաճարն, բազում եղեն սքանչելիք։

Նախ՝ զի դուռն տ[աճարին], որ փակեաց Եզեկիէլ, ինքնին բացաւ նմա, [կատար]եցաւ մարգարէութիւն. «**Եւ դուռն այս փակեալ կացցէ, եւ Տէր մտցէ եւ ելցէ**» *(Համբ. Եզեկ. ԽԴ 2)*։

Երկրորդ՝ զի քաղաքն ամենայն դղրդեացն ի դղրդման է դրանն զարհուրեալ, ջահ լուցել ելին ընդ առաջ նորա։

Երրորդ՝ զի ծերացեալն Սիմէոն վազեր առաջի Նորա, ըստ այնմ. «**Վազեր յայնժամ կաղն ի բերեւ մի եղջերոյ, եւ պարզ լիցին լեզուք ծանրախօսացն**» *(տե՛ս Երայի Լ Ե 6)*։

Ի սոյն խորհուրդ և մեք ելանեմք ամեն ոքն[1] ջահիւք և լապտերաւք ընդ առաջ Տեառն և լուցանեմք հուր ի խորհուրդ կրկնակի գալստեանն, զի հուր գայ առաջի Նորա, որպէս ասէ մարգարէն *(տե՛ս Սաղմ. Ղ,Զ 3)*։ Իսկ զի՞ ժամհար հնչեցուցանեմք զփողոյն Գաբրիէլի ունի զնշանակութիւն։ Իսկ խաչ բարձրացեալ ի փայտի զնշան տէրունական ընդ երկնիւք ծագեալ նշանակէ։ Իսկ վառք և ստեղունքն զճառագայթս Նորին նշանակեն[2]։ Իսկ սովորութիւն առեալ ժողովրդոցն աւրհնեալ մոմ բաժանել, զիմաստուն կուսանացն զիւղն նշանակէ, որ է ի մեզ բարի գործքն և լոյս հաւատոյն, զոր հարկիւ պարտ է ամեն ոքն ընդունել զբարի ի գործքն, զի մի ի գալ փեսային անպատրաստ գտանիցիմք։ Եւ ևս, զի ոմանք փութով վազելն ընդ հուրն անկիզելի, այն զարդարոց դասն նշա-

---

[1] C, E *ամեն ոքն* **փխ**. *արտաքոյ*, G *արտաքս*։

[2] C, O *զճառագայթս Նորին նշանակեն* **փխ**. *զճառագայթսն, որ ի նշանին*, G *զճառագայթ Նորին նշանի*։

նակէ, որ իբրև զոսկի անժանկ անցանի, իսկ ոմանք յամրին երեսանգեալ խանծին այն զմեղաւորացն ունի զնշանակութիւն[1]: Եւ արդ մեք զպատրաստութիւնն Սիմէոնի յանձն առնուլ պարտիմք, զի աներկիւղ անցցուք ընդ գետս հրեղէնս և[2] տեսութեան փեսային անմահին արժանի լիցուք: Եւ աղաչել, զի ազատեսցէ զմեզ ի խաբող կենցաղոյս ժամանել մեզ անխռով խաղաղութեանն ի կեանս յաւիտենից, ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

***Հարցումն***[3]***.*** Ո՞մ յայտնեցաւ ստուգապէս ի մարդեղութեան Տեառն մերոյ աստուածութիւն Նորին:

***Պատասխան.*** Յովհաննու, Զաքարիայի և Սիմէոնի: Իսկ Յովսեփայ և մօրն Նորա Մարիամու ոչ յայտնեցաւ, զի թէ յայտնեալ էր, ոչ կարէին հանդուրժել առաջի Նորա կամ սպասաւորել Նմա, այլ՝ իբրև զտղայ համարէին և տեսանէին զՆա:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ասէ «**Էին ի վերայ Նորա շնորհէ յԱստուծոյ եւ ի մարդկանէ**» *(համար. Ղուկ. Բ 52)*:

***Պատասխան.*** Զի Հաւրն յայտնի է, զի Նա գիտէր զՆա, թէ բնութենակից է նմա և Որդի[4], **|12ա|** իսկ ի մարդկանէ, որ որքան առաւել էր ի չափ հասակին փառաւոր էր ի մարդկանէ:

---

[1] C, M, O **չիք** *Եւ ևս, զի ոմանք փութով վազելն ընդ հուրն... զմեղաւորացն ունի զնշանակութիւն*: G *զի ոմանք փութով վազելն... Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից. Ամէն*:

[2] C, E, G, O **չիք** *աներկիւղ անցցուք ընդ գետս հրեղէնս և*:

[3] E *Հարցումն* **փխ**. *Հարցումն. Զի՞նչ է որ ասէ՝ էին ի վերա նորա*:

[4] **ՄՄ 2519 բնագրի սույն հատվածում հետագա հավելագրություն**. *Վասն խորհրդեանս, զի զհուրն Աստուածապաշտ էին: Մեք զհուրն Քրիստոսի ծառայեցուցանեմք /// վեր վազելով կոխեմք, թէ ոչ ես Աստուած, այլ նա որ եկ Խ. (40) օր և ի փաճարն բ////ատենի արհնեալ յերկ ի փասաց Տէրն, որ բորբոքեցաւ եւս շարժութեանն է աղքատաց սիրոյն /// այլևայլ փայլոք մի բոց հանեն, իսկ հեռացեալքն մեղոք տեսեալ զմիաբանութիւն /// դիմեն և միաբանին ընդ նոսա, որ և նախ բորբոքեաց ի խաչին ի վ/// Քրիստոսի*:

# ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌՆ

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ զանհաւատսն. «**Ծնունդէ իժից**» ***(Ղուկ. Գ 7)*** կոչէ:

***Պատասխան.*** Վասն բազում պատճառի:

Նախ՝ զի չարութիւնք ունի իժն, այսպէս և անհաւատն պիղծ լեզու ունի և անբարի:

Երկրորդ՝ զի նմանակից աւծսն սպանանէ, այսպէս և անհաւատք զմիմեանս կորուսանեն:

Երրորդ՝ զի թռչունս ընթանայ և հարկանէ, այսպէս և անհաւատն հպարտութեամբ կամի զամենայն ի ներքոյ իւր արկանել:

Չորրոդն՝ զի շունչն միայն բաւական է, զի սպանցէ զմարդն, այսպէս մերձաւորութիւն անհաւատին միայն բաւական է կորուսանել զհաւատացեալն:

Հինգերորդ՝ զի կրկին տուտն ունի, այսպէս և անհաւատն, երբեմն շողոքորթ, երբեմն՝ խրոխտ և զրկող:

Վեցերորդ՝ զի կրկին տըտամբն խնու զականջսն, «**Զի մի՛ լուցեն նա ձայն թովչի ճարպարի եւ [մի առցէ դեղ ի դեղապուէ իմաստնոյ]**» ***(Հմմտ. Սաղմ. ԾԷ 6)***, այսպէս և անհաւատն մարմնասիրութեամբն և աշխարհասիրութեամբն խցեալ է ականջս հոգւոյն, առ ի չընդունելոյ զԲանն Կենաց:

Եւթներորդ՝ զի ընդ բերանն յղանայ, այսպէս և անհաւատն ընդ յորկորն ուտէ զամենայն փափուկ կերակուրս և նոքօք յղանայ զամենայն մեղս:

Ութերորդ՝ զի իժն յակամայ հնազանդի թովչի, այսպէս և անհաւատն յակամայ ընդունի զհաւատացեալն:

Իններորդ՝ զի զհետս ընթացից մարդոյն հարկանէ, այսպէս և անհաւատն թեև հաւատացելոյն ոչ ինչ կարէ առնել, զինչս նորա խլէ, և զվայելչութիւն նորա քակել ջանայ, որք են պատահմունք:

Տասներորդ՝ զի ի յղանալն հայր մեռանի և ի ծնանելն՝ մայր, այսպէս անաւրէնութիւն անհաւատին ի սիրտն մտանելով զհոգին մեռացուցանէ[1] և ի կատարելն գործն զմարմինն, ըստ այնմ. «**Յանկուցիչնն յղայեալ՝ զմեղս ծնանի**» *(Յակոբ Ա. 15)*: Այսքան առ այս:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ զպատուհասն ի տապար նմանեցուցանէ Յովհաննէս, որպէս ասէ. «**[Զի աւասիկ] տապար՝ առ արմատն ծառոց դնի. ամենայն ծառ, [որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի]**» *(Մատթ. Գ. 10)*:

***Պատասխան.*** Վասն բազում պատճառի:

Նախ՝ զի տապարն ուժգին բախում ունի, քան զամենայն հարկանելիք փայտի և քարի, այսպէս և պատուհասն Աստուծոյ ուժգին հարկանէ մինչև ցորոշումն շնչոյ աւդից և ուղւոյ:

Երկրորդ՝ զի առանց միջնորդի ոչ հարկանէ տապարն, այսպէս պատուհասն Աստուծոյ ոչ հարկանէ առանց մեղաց միջնորդութեան:

Երրորդ՝ զի զմրգաւէտ ծառսն ոչ հատանեն, այսպէս և զառաքինիսն ոչ կարէ հատանել պատուհասն Աստուծոյ[2]:

Չորրորդ՝ զի նախ հատանեն զծառն, եթէ արժանի է հատանելոյ և ապա կտրատեն, այսպէս և [Աստուած նախ |12բ| տեսանէ] զգործս[3] անդարձս ի մեղս, և ապա հատանէ ի կենաց:

Հինգերորդ՝ զի յարմատոց չարանայ ծառն յետ հատմանն և մեղաւորաց զազգատոհմն բառնայ Աստուած յերկրէ, ըստ այնմ. «**Երեսէ Տեառն ի վերայ չարագործաց, սպառակել յերկրէ զյիշատակս նոցա**» *(Սաղմ. Լ. 17)*:

---

[1] B, C, E, G *մտրանելով զհոգին մեռացուցանէ* **փխ**. *յղանալով զհոգին սպանանէ*:

[2] E *Աստուծոյ* **փխ**. *Աստուծոյ, զի ի բաց փախչի ի նմանէ*: B *և զառաքինիսն ոչ կարէ հատանել պատուհասն Աստուծոյ* **փխ**. *և թէ ոչ վնասի պատուհասից, զի ի բաց փախչի ի նմանէ*:

[3] B, C, E *զգործս* **փխ**. *զմարդն*:

Վեցերորդ՝ զի զվայելչութիւն ծառոյն զտերևն իսկոյն թառամեցուցանէ հատումն, այսպէս և զամբարշտաց զփառսն և զմեծութիւնն ամենևին ոչ ինչ առնէ պատուհասն, ըստ այնմ. «**Փառէ մարդոյ իբրեւ ծաղիկ խոտոյ թօթ[ափեսցի]**» *(Եսայի Խ 6)*։

Եւթներորդ՝ զի գոյ ծառ, որ վաղ ժամանակին պտղաբերեալ է, իսկ յետոյ գաւսացեալ, վասն այնորիկ և զայն հատնեն, այսպէս և արդարք զբազում ժամանակս յարդարութեան կայցէ և յետոյ գաւսացեալ է զիոգին մեղօք, վասն որոյ և պատուհասի, ըստ այնմ. «**Մի յիշեսցի արդարութիւն նորա, զոր գործեաց**» *(Հմմտ. Եզեկ. ԺԸ 22)*։

Ութերորդ՝ զի հաւաստեն զծառն զոմանս առ ի յայրել և զոմանս վասն շինութեան, այսպէս և պատուհասս մեղաւորացն հասանի յարդարն[1], ըստ այնմ. «**Ածէ անչրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց**» *(Մատթ. Ե 45)*։ Սակայն մեղաւորքն լուցկիք են հրոյ գեհենոյն և արդարքն՝ տուն և բնակարան Աստուծոյ լինին, ըստ այնմ. «**Եւ եւ հայր առ նա եկեսցուէ եւ աւրե[վանս առ նմա արասցուէ]**» *(Հմմտ. Յովհ. ԺԴ 23)*։

Իններորդ՝ զի թէ փոքր ծառ լինի և պտղաբեր, զայն պահեն վասն պտղաբերութեանն, իսկ թէ մեծ լինի և ճոխ, ո՛չ խնայեն, վասն ոչ ի գոլոյ ի նմա պտուղ, այսպէս և, թէ աղքատ ոք և անանուն և առաքինի լաւ համարեալ է առ Աստուած, քան զգեղեցիկ տեսական օրինին և մեծութիւն, ըստ այնմ. «**Լաւ է սակաւ ինչ արդարոյ, քան զբազում մեծութիւն մեղաւորաց**» *(Սաղմ. Լ,Զ 16)*։

Տասներորդ՝ զի յետ հատմանն ոչ ևս երևի տեղիք ծառոյն, թէ ուր արդեաւք բուսեալ իցէ, այսպէս և մեղաւորք անհետ կորընչին, ըստ այնմ. «**Տեսի զամբարիշտն վերացեալ, անցի եւ ահա ոչ էր, խնդրեսցի՝ եւ ոչ գտաւ տեղի նորա**» *(Հմմտ. Սաղմ. Լ,Զ 35)*։

---

[1] B, C, E *յարդարն* **փխ**. *յորդիսն*։

«Յ[ո]ր ունիցի ի երկուս հանդերձս, տացէ ընկերոջ այնմ, որ ո՛չ գուցէ հանդերձ» *(Համեմ. Ղուկ. Գ. 11)*։

Վարդապետական եղանակն ի սուրբ Մկրտչէն արժան է ուսանել, զի իւրաքանչիւր դիմաց <աւ>աւանդէ զպատշաճն քարոզութիւն, քանզի երեք դասք եկին խնդրել խրատ՝ ժողովուրդքն, մաքսաւորք և զինուորք։ Եւ նոցա յարմար ետ պատասխանի, զի սոքաւք նշանակի երեք դասք մարդիկք, որ կան յաշխարհի։ Զի են ոմանք, որք միշտ տան զինչս իւրեանց, որպէս շինականք և այլ ժողովուրդք, որք ոչ երբեք առնուն։ Եւ են ոմանք, որք միշտ առնուն և ո՛չ երբեք տան, որպէս զինուորք և իշխանք։ Եւ են, որ երբեմն առնուն և երբեմն տան, որպէս արուեստաւորք, մաքսաւորք և այլք։

Եւ արդ՝ զի հասարակ ժողովրդոցն միշտ տալ հրամայէ ասելով. «**Որ ունիցի ի երկուս հանդերձս՝ [տացէ ընկերոջ այնմ այր ոչն գուցէ]**» *(Ղուկ. Գ. 11)*։ Եւ այս յիրաւի, զի ժողովուրդն ոչ կարէ այլ իրաւք արդարանալ, բայց միայն ողորմութեամբն։

Եւ զի՞ գերագոյն է ողորմութիւնն, [քան] զամենայն տեսակս առաքինութեանց ցուցանի բազում կերպիւ։

Նախ՝ որ **|13ա|** պահէն կամ աղաւթէ ոչ երևի ամենեցուն կատարեալ, իսկ որ հանէ զհանդերձսն և տայ, ոչ ունիս չկատարեալ[1] գոլոյ, զի իմացեալ տեսանի ի յանձնէ տուողին հանելով հանդերձս և զգեցուցեալ աղք[ատին]։

Երկրորդ՝ զի որ պահէ, ոչ ինչ պակասի ի նմանէ, այլև յաւելուկս, իսկ որ սգեցուցանէ կամ կերակրէ պակասի, վասն որոյ յաւելցի արքայութիւնն նմա, որ զմարմինն զրկեաց։

Երրորդ՝ զի որ արտասուէ, զղջումն սրտի ցուցանէ, իսկ որ սգեցուցանէ՝ զկատարյալ գործն նշանակէ զարդարութեան, ուրեմն յայտ է, թէ կատարեալն պատուական է, քան՝ զթերակատարն։

---

[1] C, E *չկատարեալ* **փխ**. *կարծիս կատարեալ*։

Չորրորդ՝ զի աղօթքն ոչ պարտական առնէ զԱստուած, այլ է աղաչանք իբր թէ տայ, իսկ որ զգեցուցանէ հարկիւ պարտական առնէ զԱստուած, փոխանակ մարմնաւորիս զգեցուցանել զլուսեղէն պսակն, ըստ այնմ. «**Ոչ ողորմի ազգաւոր՝ փոխ տայ Աստուծոյ**» *(հմմտ. Աստուկ. ԺԹ. 17)*:

Հինգերորդ՝ զի զամենայն առաքինութիւն մեղքն կորուսանէ, իսկ զողորմութիւնն՝ ոչ, քանզի փոխ է, վասն որոյ ասէ. «**Բաղձեա՝ եւ եղ ինչ ուրեալ**» *(տե՛ս Մատթ. Ի. 42)*:

Վեցերորդ՝ զի այլ առաքինութիւնք միայն մեղքն թողուն, թէ առնեն: Իսկ ողորմութիւնն զմեղքն թողուլ տայ և զփոխարէնն առնու, ըստ այնմ. «**Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, եւ պանծրէնութիւնս քո գթովք պանանկեսցս**» *(տե՛ս Դանիէլ Դ. 24)*, և թէ. «**Ողորմութիւն քո յելից յիշատակաւ առաջի Աստուծոյ**» *(հմմտ. Գործք. Ժ. 4)*:

Եւթներորդ՝ զի այլ առաքինութեամբն հպարտանայ ոք, իբր թէ զայս առաքինութիւնս ի յիս բերի, իսկ ողորմութիւն[1] խոնարհեցուցանէ զմարդն, զի պակասեցուցանէ զինչսն, որք հպարտութիւնք են մեծատանց:

Ութերորդ՝ զի այլ առաքինութիւքն զկէտ սահմանին Աստուծոյ ոչ կատարեն, վասն զի Աստուած զոմն արար մեծատուն և զոմանս աղքատ, զի զմիմեանս հաղորդեցուցեն իսկ ողորմածն կատարելապէս առնէ հաղորդ իւրոյ բարութեան, զի և աստուածային փառացն հաղորդ լիցի:

Իններորդ՝ զի այլ ամենայն առաքինութիւնքն մասնաւորաց է հաւանելի, այսինքն՝ միանձանցն, իսկ ողորմութիւնն հանրական է արդարոց և մեղաւորաց, մեծատանց և աղքատաց, զի ամենեքեան հասանին այսն գործոյ, մանաւանդ անհաւատն ևս, որպէս կուռք ել ի տան, որպէս բարբարոսքն ի կաղոջն առ պաղիւ[2]:

---

[1] C, E *ողորմութիւն* **փխ.** *փալն*:

[2] B, C *մանաւանդ անհաւատն ևս, որպէս կուռք ել ի տան, որպէս բարբարոսքն ի կաղոջն առ պաղիւ* **փխ.** *իսկ այլքն ոմանց*: E *հասանին այսն գործոյ, մանաւանդ անհաւատն ևս, որպէս կուռք ել ի տան, որպէս բարբարոսքն ի կաղոջն առ պաղիւ* **փխ.** *բավական են այսմ գործոյ, ըստ իւրեանց չափոյ, իսկ այլքն՝ ոմանց*:

Տասներորդ՝ զի այլ առաքին[ութիւնք]ն ո՛չ են գործ Աստուծոյ, զի ոչ վայել է նմա աղօթել կամ պահել, իսկ ողորմութիւնն բնական գործ է Աստուծոյ, ըստ այնմ. «**Երկերուէ գթած, զի եւ Հայր յեր երկնաւոր գթած է**» *(Ղուկ. Զ 36)*:

Եւ դարձեալ. «**Ողորմած, գթած է Տէր եւ բազմողորմ**» *(Յովել. Բ 13)*: Եւ զի[1] նմանի Տեառն բանի այս բան, զի նա օրէնս ետ աշակերտացն մի ագանել երկուս հանդերձս, և մի են սոքա, զի որ ունի երկու ի տալն զմինն այլում հրամանակատար գտանի Տեառն: Եւ այս գործ ի սիրոյ գայ յառաջ և սէրն է կատարումն պատուիրանաց, ասաց Տէրն *(տե՛ս Մատթ. ԻԲ 38–39)*: Ուստի յայտ է, զի պարունակէ զամենայն սքան[չե]լիս[2]:

Դարձեալ, զի և հանդերձեալ ատենին, վասն նորին |13բ| [լինի քննութիւն], որպէս ասէ. «**Բաղդեա՛ եւ եղուէ Ինչ ուրեալ**» *(Մատթ. ԻԵ 42)* և այլն, և ոմանք պսակին և ոմանք՝ պատժին:

***Հարցումն.*** Ընդե՞ր ամենեցուն միապէս ո՛չ եդ զաւրէնս, այլ առանձնապէս:

***Պատասխան.*** Վասն զի ամենեքեան մի ճանապարհաւ ոչ կարեն գնալ, նաև ոչ ի մի աւթևանս հասանեն, վասն որոյ և ըստ ճանապարհի առաքինութեանս աւթեվանքն կշռեցան, ըստ այնմ. «**Ի դան Հօր իմոյ օթեւանք բազում են**» *(Յովհ. ԺԴ 2)*: Իսկ մաքսաւորացն և շահառողացն օրէնս եդ. «**Երբէ մի ինչ աւելի, էան պահրանայելն յեր առնուցուէ**» *(Հմմտ. Ղուկ. Գ 13)*:

Արդ, այս օրէնք է նոցա, բայց ոչ աստուածային, և զի ոչ կարի բառնալ, քանզի իշխանօք մարդիկ կարգաւորեալ են զայս, և Տէրն ոչ ուսուցանէ աբստամբել աւրինաց թագաւորացն, բայց միայն ի հաւատոցն, եթէ իցէ անհաւատ: Սակայն և առաքեալն խրատէ.

---

[1] B, C, E *եւ զի* **փխ**. *եւ արդ՝ յայսց ամենայնէ յայտ է, թէ կատարեալ է սա, քան զամենայն և զի*:

[2] B, C, E *սքան[չե]լիս* **փխ**. *առաքինութիւնս*:

«Հաստատեալ ամենեցուն զպարտսն, որում զհարկն՝ զհարկն, որում զմաքսն՝ զմաքսն» *(հմմտ. Հռոմ. ԺԳ 7)* և այլն: Արդ, օրէնս այս յարքունուս կարգի, իսկ եթէ ոք իւրոյ անձինն աւելի խնդրէ, քան զիրամայեալն յօրինացն և այն կարի ծանրագոյն մեղք կոչի, զի թէ վասն այլոյ առնուլն մեղք է, վասն զի չէ աստուածային օրէն, ուրեմն յայտ է, թէ վասն ինքեանց լինի, որքան կորուստ բերէ:

Նոյնպէս արուեստաւորն պարտի ի վերայ ժամանակին նայել և զիւր աշխատութիւն գիտել եթէ որքան աշխատանք ունի ի գործն, ըստ[1] աշխատութեանցն և զվարձն խնդրեսցէ: Իսկ եթէ դիպի առն յիմարի, որ ոչ գիտէ զգինն նիւթոյն, նա ավելի խնդրէ: Եւ յիմար գնօղն տայ վասն կարեաց իւրոց: Յայտ է թէ աստուածախաբ կոչի այնպիսին և կարի ծանրագոյն: Եւ տե՛ս զի սոցա ոչ ասաց ողորմութիւն առնել: Զի զինչ օգուտ է ի միոյն գռփել և միոյն տալ, և զի գործս մեղաց ընդ արդարութեան խառնեալ ոչ գոյանայ: Եւ զմարգարէն ասէ. «Զհայց էս բրդեա կարաւարելոց եւ ոչ կայլոց» *(հմմտ. Եսայի ԾԸ 7)*, զի «*այլոցն*»՝ այլոց է աւգուտ և ոչ քեզ:

Եւ արդ՝ եթէ զայս արասցէ, զոր ասացն. «Ալեալի ո՛չ պահանջել, քան զիրամայեալն» *(հմմտ. Ղուկ. Գ 13)*, ապա՝ յետ այնորիկ ողորմութիւն նորա ընդունելի է Աստուծոյ, իսկ. «Եթէ զկէս միոյն, չորեքկին պարտ է հատուցանել» *(տե՛ս Ղուկ. ԺԹ 8)*, որպէս ասաց Զակքէոս: Եւ թէ աստ ո՛չ հատուցանէ, անտ պարտի վճարել: Յետ սոցա ասաց զինուորացն. «Մի՛ զոք խափեցի՛ք, շատ լեցի՛ք յեզ թոշակն յեր» *(հմմտ. Ղուկ. Գ 14)*:

Զի Ե. (5) է յատկութիւն զինուորի:

Նախ՝ զի անձինս իբրև գազան երևեցուցանեն առ տկարսն:

Երկրորդ՝ [յա]փշտակել ջանայ ամենայն ուրէք, ուր և հնար իցէ:

Երրորդ՝ զուր |14ա| ասել ի վերայ անպարտ արանց:

Չորրորդ՝ զի խոժոռ պահէ զդէմսն միշտ, անդադար:

---

[1] Ե չիք *աշխատութիւն գիտել եթէ որքան աշխատանք ունի ի գործն, ըստ*:

Հինգերորդ՝ ոչ խօսել զուղիղն, որպէս պատշաճ է, վասն որոյ յայսպիսեացն հրաժարել հրամայէ և զայնոսիկ առնուլ, զոր թագաւորք հռոգ[1] տուեալ է նոցա և այն հալալ է նմա, զի արեան գինք են, որպէս աշխատող հողոյն պտուղն: Աստ ևս յայտնագոյն ուսուցանէ, զի զրկողքն ոչ կարեն ողորմութիւն առնել, զի թէպէտ առնեն, ասէ մարգարէն. «**Զրկեալն ի յեղջ աղաղակէ եւ բողոքէ հընչողացն եհաս յականջսն Տեառն զօրութեանց**» *(Յակոբ. Ե 4)*, զի պարտ է զրկումն ի մէջ առաքինութեանն ոչ առնել, զի առաքինութիւնն ընդունելի լիցի, զի որպէս ողորմութիւնն ոչ ընդունելի է վասն զրկելոյն, այսպէս՝ պահք ի մէջ պոռնկութեան, նոյնպէս՝ աղօթքն ի մէջ հպարտութեանն, այսպէս և սուտ սէրն ի մէջ ատելութեանն:

Արդ, որոց կամք է արժանաւորիլ Աստուծոյ, ընդ միջին ուղիղ ճանապարհ գնասցէ, զի ողորմութեանն Աստուծոյ հանդիպեսցի ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ յազգահամարն Մատթէոս այլ անուն տայ և Ղուկաս այլ:

***Պատասխան.*** Զի Մատթէոս բնութեանն որդիսն համարէ, իսկ Ղուկաս զշնորհաց որդիսն կարգէ: Եւ այս յիրաւի, զի ուսուցէ մեզ, թէ շնորհօք որդիք լինիմք[2] հոգևոր ծնընդեամբ:

***Հարցումն.*** Վասն զի՞նչ պատճառի սատանայ եկն փորձել զՏէրն:

***Պատասխան.*** Վասն բազում պատճառի:

Նախ՝ զի առցէ զչափ զօրութեան նորա, նոյնպէս և զամենայն փորձէ:

Երկրորդ՝ զի իբրև տկարոք յանդիմանեսցէ զնա, այսպէս և զամենայն ոք, յորժամ տկար գտանին ի փորձութիւնսն, յանդիմանեալ գտանին ի սատանայէ: Իսկ Տէրն մեր յաղթեաց փորձողին և մեզ ուսոյց, թէ մեծ հանդէս կայ առաջի ձեր: Նաև զի և եցոյց

---

[1] *Հռոք-ռոճիկ, դրամական վճար:*
[2] C, E *լինիմք* **փխ**. *լինիմք Աստուծոյ:*

զօրինակ յաղթութեանն պատասխանաւն աստուածային Գրոց բանիւն, զի աւրէն է թագաւորաց նախ զթշնամին ըմբռնել, և ապա՝ ի սահմանս նորա մտանել: Այսպէս և Տէրն մեր արար, նախ կապեաց զիսկայն սատանայ, և ապա՝ եկեալ յաշխարհի առ ի քարոզել զԲանն Կենաց, այսպէս և ամենայն վարդապետի ուսուցանէ, նախ հակառակ բանն դերևս հանել, և ապա՝ զճշմարտութիւնն ուսուցանել: Նմանապէս և զամենայն ոք խրատէ, նախ զչարն ի յինքենէ հերքել և ապա առաքինութիւն առնել:



ՄՄ ձեռ. 2518, թերթ 3ա

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«**Եւ դարձաւ Յիսուս զաւրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա**» *(Ղուկ. Դ 14)*։

Այս բանք ընդդէմ են Մակեդոնի հոգեմարտին[1], զի նա զՀոգին[2] ծառայ ասաց։ Եւ ամենուրեք յայտնի է, զի իբրև զմի և զնոյն էութիւն ընդ Բանին է։

Նախ՝ յղութեանն, ըստ այնմ. «**Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ**» *(Ղուկ. Ա 35)*։

Երկրորդ՝ ի ծնընդեանն, ըստ այնմ. «**Որ ի նըմանէ ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբոյ է**» *(Ղուկ. Ա 35)*։

Երրորդ՝ ի մկրտ[ութեանն], |14բ| ըստ այնմ. «**Տեսանէր զՀոգին, զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ Նորա**» *(Մատթ. Գ 16, հմմտ. Մարկ. Ա 10, հմմտ. Ղուկ. Գ 22, հմմտ. Յով. Ա 32)*։

Չորրորդ՝ վարիչն յանապատ և փորձիչն ի սատանայէ, ըստ այնմ. «**Յայնժամ վարեցաւ Յիսուս ի Հոգւոյն յանապատ փորձիլ ի սատանայէ**» *(Մատթ. Ա 20)*։

Հինգերորդ՝ «**Այնժամ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա**» *(հմմտ. Ղուկ. Դ 14)*։

Վեցերորդ՝ զքանչելիսն գործակցութեամբ Հոգւոյն առնէր, ըստ այնմ. «**Մատամբն Աստուծոյ հանեմ զդեւս**» *(Ղուկ. ԺԱ 20)*։ Ուստի յայտ է, զի Աստուած է ճշմարտապէս Հոգին Սուրբ արարչակից և փառակից և համաբանութիւն Նմին։

«**Եւ եպուն Նմա գիր զԵսայեայ եւ յարեաւ ընթեռնուլ**» *(Ղուկ. Դ 17)*։

---

[1] *Աղանդ, որի հիմնադրոյթները դատապարտվել են դեռևս Գրիգոր Նազիանզացու ճառերում, վերջինս պատվիրում է չքննել Որդու Ծննդյան և Սուրբ Հոգու բխման խորհուրդը, քանզի դրանք վեր են մարդկային ընկալումների կարողությունից*։

[2] Ե *զՀոգին* **փխ**. *զՀոգին Սուրբ*։

## Մեկնութիւն Աւետարանին Ղուկասայ

Աստ ուսուք կանգուն ընթեռնուլ զմարգարէականս և զառաքելականս, իբր զի արի լիցին ի լսելն զԲանն և գործով կատարեսցեն, զի զամենայն գործ կանգուն առնեն զմեծագոյնսն: Եւ ընթեռնուլ զԵսային անդ եցոյց զկարգ դպրութեան, որպէս զդռնաբացութեանն ի շինել խարազան չուանեայ, և եհան զամենեսեան արտաքս ի տաճարէն (տե՛ս Յովհ. Բ 15):

«Զամենայն գիշերս աշխատ եղէ եւ ոչ [ինչ կալեալ, բայց վասն Քոյ բանիդ արկցուք զգործիսս]» (Ղուկ. Ե 5):

Աստ նկատեալ է խորհուրդ մարգարէիցն, զի աշխատ եղեն և ոչ կարացին զոք փրկել: Եւ զի ի գիշեր նմանեցուցանէ զքարոզութիւն մարգարէիցն:

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի գիշերն հեռի է յարեգակէն, վասն որոյ խաւար լինի, այսպէս ի ժամանակ է մարգարէիցն հեռի էր Քրիստոս արեգակն, վասն որոյ քարոզութիւն մարգարէիցն ո՛չ զոք լուսաւորեաց:

Երկրորդ՝ զի գիշերն քուն լինին մարդիկ և ամենայն կենդանիք, այսպէս և ի ժամանակս մարգարէիցն ննջեալք էին ամենեքեան ի մեղս, իսկ զբնական[1] և ի ներգործական[2]: Նախ թեև մարգարէքն իսկ, թէպէտ չունէին ներգործական, սակայն պարտս նախահօրն ամենեքեան ունէին յանձինս:

Երրորդ՝ զի ի գիշերն առաւել գործի մեղք, քան ի տիւն, այսպէս և ի ժամանակս մարգարէիցն առաւելեալք էին ի մեղս, և զի ոչ ոք կարէր գործով արդարանալ, զի ամենեքեան պակաս գտանէին կատարել զօրէնս, այն է առաւելութիւն մեղացն:

Չորրորդ՝ զի ի գիշերի գազանք համարձակ շրջին, այսպէս և ժամանակ մարգարէիցն կռապաշտութիւնն համարձակեալ կայր ընդ ամենայն տիեզերս:

---

[1] C, E *զբնական* **փխ.** *ի սկզբնական*:

[2] E **չիք** *Նախ թեև մարգարէքն իսկ, թէպէտ չունէին ներգործական*:

Հինգերորդ՝ զի ի գիշերի ոչ ոք կարէ առնել վաստակ հասարակ, բայց առանձին հնարին ի տան ճրագով, այսպէս և մարգարէքն ոչ ինչ կարացին առնել բնութեանս, բայց առանձին սրբութեամբ զինքեանս արդարացուցին լուսով նուաղ օրինացն:

Վեցերորդ՝ զի ի սկսման գիշերոյն առաւելանայ խաւարն մինչև ի մէջ գիշերոյն և անտի հետ նուազի և առաւելանայ լոյսն, զի մերձ ի յարեգակն, այսպէս և մեղանչելն Ադամայ եղև խաւար բնութեանս և մահ և անաւրինեցան մարդիկ յոյժ մինչև ի Մովսէս, ըստ այնմ. «**Թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս**» *(Լ՚ս Հռոմ. Ե 14)*: Եւ անտի հետ[1] օգնականութեամբ աւրինացն սակաւ-սակաւ ուսան զխորհուրդ լուսոյն, մինչև մարդացաւ Բանն:

Եւթներորդ՝ զի աստեղք և լուսին ի գիշերի տան[2] |15ա| լոյս, բայց կարեն ստուգապէս առաջնորդ լինել [մարդկան], այսպէս՝ և օրէնքն մարգարէքն խրատէին. «**Մի շնար, մի գողանար**» *(Եչկ Ի 14–15)* և այլն, բայց ոչ կարացին, զի տկարք էին և անզաւր:

Ութերորդ՝ զի փութով անցանի գիշերն, այսպէս և այնքան ժամանակ փութով անցանին, զի ոչ գոյր հանգիստ աստուածայինս:

Իններորդ՝ զի յատուկ է ամենայն կենդանւոյ ի լուսոյն գալն խնդալ և ի խաւարին տրտմելն, այսպէս և այնքան ժամանակն, տրտում էր մարդկային բնութիւն մոլորեալ խաւարաւն անգիտութեան:

Տասներորդ՝ զի ի սպառել գիշերոյն գայ արեգակն և լուսաւորէ, այսպէս և ի մերձենալ ժամանակին գալոյ Բանին Աստուծոյ աւարտ եղև ժամանակաց մարգարէիցն և ծագեաց մեզ արեգակն պայծառ, որով կարեմք առնել զամենայն գործ արդարութեամբ և արկանեմք զաշխատութիւնն[3] մեր սրբութեամբ, ուստի լինի հասանել մեզ արքայութեան տեսուն, վասն որոյ ասէ Պետրոս. «**Վասն էս բանիդ արկցուք [զգործիս]**» *(Գ՚ս Պ.ուկ. Ե 5)*: Այսքան առ այս:

---

[1] Е *Եւ անտի հետ* **փխ**. *Եւ այնուհետև*:
[2] С, Е *տան* **փխ**. *ծագեն*:
[3] Е *զաշխատութիւնն* **փխ**. *զապաշխարութիւն*:

## Մեկնութիւն Աստուածաշնչին Հնգեանց

***Հարցումն.*** Զինչ է, որ ասէ. «**Յայսմ հեպէտ զմարդիկ, որոսայեա ի կեանս**» ***(Հռով Ե 10)***:

***Պատասխան.*** Վասն զի առաքեալքն նմանեցան որսորդի՝ ըստ բազում եղանակաց:

Նախ՝ զի որսորդն խայծ դնէ, և ապա՝ ըմբռնէ զորսն, այսպէս և առաքեալքն խայծ եդին զսքանչելիսն և զսրբութիւնսն և նոքա ըմբռնեցին զնոսա ի հաւատս:

Երկրորդ՝ զի ոմանս նետիւ ըմբռնեն որսորդք, այսպէս և առաքեալքն զոմանս բանիւ դարձուցին ի հաւատ քրիստոնեութեան:

Երրորդ՝ զի որսորդն յոյժ աշխատի, շրջելով զհետ որսոյն, այսպէս և առաքեալքն[1] աշխատեցան շրջելով ընդ տիեզերս, ըստ այնմ. «**Առաքեցից ի նոսա որսորդս բազումս, եւ որսայցեն զնոսա ի վերայ բլրոց և լերանց**» ***(Տե՛ս Երեմ. ԺԶ 16)***:

Չորրորդ՝ զի վայրիսն որսան և ոչ զընդանիսն, այսպէս և առաքեալքն զվայրենացեալ ազգ հեթանոսաց որսացին ի կեանս և ոչ զԻսրայէլ, ըստ այնմ. «**Աշակերտեցէք զամենայն հեթանոսս**» ***(Մատթ. ԻԸ 19)***, և Պաւղոս այսուհետև դառնամք ի հեթանոսս:

Հինգերորդ՝ զի ամենայն որսորդ ոչ կարէ ըմբռնել, այսպէս և ամենայն առաքեալքն քարոզեցին, բայց Պաւղոս ի[2] բանքն արդիւնաւոր եղև, քան զամենայն: Նաև մեր առաքեալ Թադէոս, և ոչ մի ի մերոց ազգաց կարեաց դարձուցանել, որպէս Թումայ ի հնդիկս և այլն:

Վեցերորդ՝ զի ոչ առնէ փոյթ որսորդն, թէ այս մեծ է, կամ այն՝ փոքր, այլ զամենայն ըմբռնէ որոց և հասանէ, այսպէս և առաքեալքն ոչ ընդրեցին զմեծատունս և զաղքատս, կամ զծերս և զտղայս, այլ ամենեցուն յարգեցին զհաւատս:

---

[1] Ե **չիք** *զոմանս բանիւ դարձուցին ի հաւատ քրիստոնեութեան: Երրորդ՝ զի որսորդն յոյժ աշխատի, շրջելով զհետ որսոյն, այսպէս և առաքեալքն*:

[2] Ե *Պաւղոս ի* **փխ**. *Պետրոսի*:

Եւթներորդ՝ զի որս ի ծովու ըմբռնեն, հանեն ի բնական տեղացն, որ է ջուրն, այսպէս և առաքեալքն հանին զմարդիկ ի գիջական ախտից և ի կեանսն հաստատեցին, որ հեռի է յաղտէ մեղաց:

Ութերորդ՝ զի սովորութիւն է որսորդաց սակաւ-սակաւ քարշել զձ|15բ|[ուկն ի ցամ]աք, զի թէ բռնութեամբ քարշէ, ոչ կարէ, այսպէս և առաքեալքն [սակաւ սակաւ խ]րատելով և խոնարհութեամբ ածին զմարդիկ ի հնազանդութիւն [Քրիստոսի], ըստ այնմ. «**Գ·երբեմէ ղամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի**» *(Ա·ռ Բ· Կորնթ. Ժ· 5)*:

Իններորդ՝ զի յորժամ ըմբռնէ զորսորդն, յայնժամ ըստ կամաց իւրոց շարժէ զկենդանին, այսպէս և առաքեալքն յորժամ դարձուցին զամենայն հեթանոսաց ա[զ]գս, ըստ կամաց Տեառն, գրեցին Կանոնս և նոքաւք վարեն զնոսա և ոչ ևս ըստ հեթանոսական սովորութեանն գնան:

Տասներորդ՝ զի պատահի որսորդի գազան, և սպանանէ զնոսա, այսպէս և ի քարոզելն առաքելոցն, ընդդէմ կացին գազանքն կռապաշտքն և սպանանին զնոսա:

Բայց ոչ ամենայն իրաւք հպի օրինակն առ ճշմարտութիւնն, զի ամենայն որսորդ տանի[1] ի կենաց ի մահ, իսկ առաքեալքն որսացին ի մահուանէ ի կեանս զմարդիկք[2]:

Յանդամալոյծին բժշկութիւնն եցոյց Գ. (3) կերպիւ զզօրութիւն Իւր:

Նախ՝ ասաց անդամալոյծին. «**Թ·ողեաւ լիցին էեղ մեղէ էո**» *(Ղ·ուկ. Է· 48)*, այնու զծածուկ գիտութիւնն Իւր յայտնեաց:

Երկրորդ՝ զի զմեղսն եթող, որ է յատուկ Աստուծոյ:

Երրորդ՝ զի առողջացոյց զանդամալոյծն, եցոյց, թէ յամենայնի կարող է: Իսկ այլքն ամենայնքն գրեալ են ի Մատթէ գլխոյն մեկնիչ[3]:

---

[1] C *տանի* **փխ.** *որսան*:

[2] E *ունի հավելյալ. Զառաքելոց կոչումն … զորս և առաքեալս անուանեաց*:

[3] C, E **չիք** *Իսկ այլքն ամենայնքնգրեալ են ի Մատթէ գլխոյն մեկնիչ*:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ասէ Տէրն ի Մատթէոս. «**Մի՛ շատախօս լինիք ի յաղօթս**» *(հմմտ. Մատթ. Զ 7)*, և աստ Ինքն հանէ զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ *(տե՛ս Ղուկ. Զ 12)*, մի՞թէ հակառակ Ինքեան խօսի:

***Պատասխան.*** Ոչ երբէք, զի անդ շատ խաւսութիւն ոչ զբազում մաղթանքն ասէ, այլ զանկարգ բարբառելն, վասն որոյ զի մի՛ կարծիցեն, թէ յերկիր աղօթելն անշնորհ է, հանէ Ինքն զգիշերն յաղօթսն Աստուծոյ, յորմէ ուսեալ մեք կատարել պարտիմք անդադար աղօթել:

Դարձեալ զի ի հասարակաց աղօթսն պարտ է սակաւ ասել, այն ինչ որ կարգեալ է և ոչ շատախօս լինել զ[ի] մի ձանձրասցի զժողովուրդն, իսկ առ անձնական, որպէս Քրիստոս հանել զգիշեր ի գլուխ յաղօթսն Աստուծոյ[1]:

***Հարցումն.*** Վասն է՞ր վա՛յ տայ յագելոցն կերակրովք *(տե՛ս Ղուկ. Զ 25)*:

***Պատասխանի.*** Զի հարկաւոր պէտք բնութեանս ի նոցանէ ոչ բարձաւ և վասն առաւել շուայտութեանն և արբեցութեանն թշնամի արարին զանձինս զիւրեանց Աստուծոյ: Զորոց առաքեալն ասէ. «**Լալով առեմ զքշնամեաց խաչին Քրիստոսի, որոյ Աստուած որովայնքն են**» *(հմմտ. Ա՛ Փիլիպ. Գ 18-19)*, զի խաչն զնեղութիւնս և զչարչարանս ուսուցանէ, իսկ որ որովայնի զհետ շրջին, թշնամի առնէն զանձինս իւրեանց խաչին Քրիստոսի:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ասէ. «**Վա՛յ ձեզ, յորժամ բարի ասիցեն զձեզ ամենայն մարդիկք, զի սուտ մարգարէիցն այնպէս առնէին**» *(հմմտ. Ղուկ. Զ 26)*:

***Պատասխան.*** Որք ճշմարիտ առաքինութեամբ կեան յաշխարհի, նոցա չէ հնար, որ ամենայն մարդ բարի ասէ, զի բարի

---

[1] B, G, M, C չիf *Դարձեալ զի ի հասարակաց աղօթսն... հանել զգիշեր ի գլուխ յաղօթսն Աստուծոյ*:

մարդն զչարն յանդիմանէ և չարն սկսանի հերձուած խօսիլ վասն բարւոյն, և որպէս բարի մարդն զբարին գովէ, այսպէս և չարն զբարին պարսաւէ, զոր օրինակ առցես զՏէրն մեր, զի Նա ճշմարիտ բարի գոլով նախատինս և պարսաւանս կրեաց յամբարշտաց անտի: Իսկ որ ամենեցուն |16ա| հաճոյանալ սիրեն և կամին, որ ամենայն մարդ բարի ասեն, [կեղծաւորք] և կախարդք են, զի զաստուածային աւրինացն փոյթ ոչ ունին, այլ՝ անձանց են ծառայք և ոչ՝ Աստուծոյ, վասն որոյ իրաւի տա նոցա «վայ», որ ամենայն ոք բարի ասէ, զի սիրեցին զփառս մարդկան առ[աւել], քան՝ զփառս Աստուծոյ:



**ՄՄ ձեռ. 1262, թերթ 71բ**

# ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌՆ

***Հարցումն.*** Վասն է՞ր առաւել եղկելի էր մահ միամօրն:

***Պատասխան.*** Նախ՝ վասն առոգութեան հասակին:

Երկրորդ՝ զի նա միայն էր մօրն և այլ ոչ ունէր մխիթար:

Երրորդ՝ զի ոչ այլ ոք յազգականացն ունէր փոխանորդ որդւոյն:

Չորրորդ՝ զի ոչ գոյր այլ յոյս որդեծնութեան:

Հինգերորդ՝ զի ոչ ունէր այլ յիշատակ յետ իւր անցման, վասն որոյ գթացաւ Տէր և յարոյց զնա: Յիմարութիւն տղային երկու կերպիւ երևի, զի ընդ նոսա, որք ոչ ունին պատճառ տրտմութեան՝ տրտմին: Եւ ընդ նոսա, որք ոչ ունին ցնծութիւն՝ ուրախանան: Նովին աւրինակաւ և հրէայքն էին, ի գալն Յովհաննու ծիծաղէին զնովաւ, զի կոչեաց զնոսա յողբս և յապաշխարութիւնս՝ ասելով. «**Դե՛ գոյ ի նմա**» ***(Յովհ. Ժ 20)***: Իսկ յորժամ եկն Տէր մեր Յիսուս Քրիստոս, և զնոսա կամեցաւ իբրև զմանկունս ժողովեալ յուրախութիւն, յայնժամ տրտմեցան՝ ասելով. «**Ահա այր կերող եւ արբեցող, բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց**» ***(Մատթ. ԺԱ 19)***:

«**Աղաչէր զնա ոմն ի [փարիսեցւոցն, զի կերիցէ ճաշ ընդ նմա. եւ մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ]: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր**» ***(Ղուկ. Է 36-37)***:

Զկատարեալ հաւատն ի կնոջէս յայսմանէ ունիմք ուսանել: Զի ամենայն, որ վասն մարմնաւոր ախտի և խոցի, գնա առ բժիշկն այն, ոչ զկատարեալ աստուածպաշտութիւն ցուցանէ, զի թէ ոչ գնայ ախտն նեղէ և բռին առաքէ առ բժիշկն: Իսկ հոգին[1] ոչ այնպէս ցաւեցուցանէ, այլև զդիմակն առնէ, զի եթէ հանդիպի բժիշկն հոգւոյ, այնպէս փախչել ջանայ, իբր ի պատերազմէ: Իսկ այս կին

[1] Ե *հոգին* **փխ**. *հոգևորն*:

կատարեալ հոգով և երկիւղիւ մատեաւ գտանել զմեղաց լուծումն, որ իբրև լուաւ զՏեառնէ, թէ զմեռեալս յարուցանէ, հաւատաց, թէ զհոգի նորա կարեաւ առողջացուցանել ի մեղաց, վասն որոյ եկն անկաւ առ ոտսն Յիսուսի: Եւ ի ձեռն հնգից եցոյց զղջումն սրտին:

Նախ՝ զի յետոյ Տեառն [կանգն]եցաւ, իբրև զամաթալից ևս երես մեղօք, անարժան համարեցաւ զինքն տեսութեան Տեառն:

Երկրորդ՝ զի զոտս Տեառն ըմբռնեաց, որ ցուցանէ զխոնարհութիւնն առ ապաշխարութիւնն[1]:

Երրորդ՝ զի լայր դառնագին ողբով զյանցանս իւր, որ ցուցանէր զամենայն աւուրս զղջումն կալ[2]:

Չորրորդ՝ զի արտասուաքն լուաց զոտս Նորա, որ ցուցանէ զաղերս հոգւոյն, որ մատոյց Տեառն:

Հինգերորդ՝ զի հերովն մաքրէր զոտս Նորա, որ ցուցանէր անզգայութեամբ հերացն զմեղուցեալ անձն իւր, և զի ոչ այլ ինչ պատուական գտաւ առ ինքն, քան զհերն: Բայց վասն այս կնոջն տարակոյս է, զի ամէն աւետարանիչքն յիշեն: Բայց Ղուկասուս **|16բ|** [յայտն]ի է, զի չէ՛ այն, զոր նոքա յիշեն, զի այն Մարիամի քոյրն էր Ղազարու և էր կին պարկեշտ, իսկ այս կին՝ պոռնիկ և մեղաւոր: Եւ մի՛ զարմանար վասն անուան տանուտեառն, զի Սիմոն կոչեն սա և նոքա, զի երկոցունց անուն Սիմոն էր: Իսկ փարիսեցիքն, վասն զի ամենևին անկատար էին ի հաւատս, սկսան տրտնջել ի միտս, թէ սա մարգարէ ոք էր գիտէր, թէ, որպէս ի կին մերձենայ յԻնքն, զի ամենայն, որ ոչ են կատարեալ ի հաւատս, այսպիսիք են, այսինքն՝ ի սուտ պատճառէ գայթակղեալ վնասին, զորօրիանկ այրս այս Սիմոն: Զի յառաջն սակաւ մի հաւատոց թէ մարգարէ է, բայց արդ՝ յայսմանէ ևս հրաժարեաց, զի ամենևին տգետ ասէր[3], զի ո՛չ գիտաց ասէ, թէ մեղաւոր է, կամ

---

[1] C **չիf** *առ ապաշխարութիւնն*:
[2] C, E *զամենայն աւուրս զղջումն կալ* **փխ**. *յամենայն զօրութենէ զղջումն*:
[3] E *ասէր* **փխ**. *կարծեաց զՏէրն*:

թէ ով մերձենայ ի Նա *(տե՛ս Ղուկ. Է 39)*։ Իսկ Տէրն իմաստութեամբն աստուածային, որով քններ զսիրտս մարդկան յայտնի ասաց Սիմոնի, թէ ոչ միայն զծածուկ կնոջն գիտեմ, այլև զամենեցուն։

Եւ վասն ասէ առակաւ. «**Ա՛ռն միոյ էին երկու պարտապանէ, մին ԵՃ. (500) դահեկան եւ մին՝ Ծ. (50)։ Եւ իբրեւ ոչ գոյր երկուց շնորհեաց՝ ո՞ առաւել սիրեսցէ զնա**» *(հմմտ. Ղուկ. Է 41-42)*։ Յայտնի արար զկարծիսն Սիմէոնի, թէ ոչ ծածկեցաւ ամենատես աչացն, զի գիտասցէ թէ Աստուած է քննիչ մարդկան սրտից։ Եցոյց «*այր*» ասելովն զաստուածային բնութիւնն և երկու պարտապանք զմեղուցեալ ազգս մարդկան, զի մինն առաւել ԵՃ. (500) դահեկան ասելով, և մինն նուազ Ծ. (50)՝ ասելով, զի ոմանք առաւել մեղանչէին և ոմանք սակաւ։ Զի ԵՃ. (500) ասելով զկատարեալ մեղսն ասաց, որ ի ձեռն Ե. (5) սգայարանացս գործեմք։ Նոյնպէս և Ծ. (50) Ե. (5) տասն գոլով, նոյն զԵ. (5) սգայարանս յայտն է, բայց զանազանին, զի սա Ժ. (10) չափ սգայարանացս մեղանչեաց, իսկ նա՝ տասնիցս Ժ. (10)։

Եւ արդ՝ ընդե՞ր եմք պարտապան Նմա։ Յայտ է զօրէնսն Նա ետ մեզ և որք զօրէնսն առին, փոխ առին, զի հատուցեն զբարի գործն, իսկ որք մեղանչեն, ոչ կարէն հատուցանել, ապա և պարտապան եմք Աւրինատուին։ Իսկ տուօղ օրինացն իբրև ետես, թէ ոչ ունէաք հատուցանել, եկն ամենեցուն շնորհել թողութեամբ, ըստ այնմ. «**Ամենեքեան մեղան. եւ նուազեալ են ի փառաց անպի Աստուծոյ եւ արդարանան չրի**» *(հմմտ. Առ Հռոմ Գ 23-24)*։ Իսկ Տէրն զչափս[1] սիրոյն եդ և ըստ արժանեացն համարի[ց] զթողութիւն մեղացն։

Իսկ զի՞ դահեկան անուանեաց զպարտսն, այսինքն՝ զօրէնսն և ոչ յայլ ինչ նիւթոյ։ Եւ սա բազում պատճառի։

**|17ա|** Նախ՝ զի նիւթ դահեկանին ոսկին է անապական է [գիր]ն անուն թագաւորի։ Եւ զի ոսկին ամենայն ուրեք յԱստուա-

[1] B, E *զչափս* **փխ**. *զանչափ*։

ծաշունչ [գիրս] աստուածութեանն է առաւել օրինակ, զի նա անաղտ և անապական է, և այս ցուցանէ, թէ աստուածային է բանք օրինացն:

Եւ երկրորդ՝ զհոգիս մեր, զի և սա անապական է, զի ի սմա դնի աւրէնս, իսկ պարտական[1] գտանի յորժամ զմի մասն անկատար պահեմք: Արդ, թէպէտ կինս այս ոչ ուներ գործ ինչ, սակայն կատարեալ ուներ հաւատս, վասն որոյ ընկալաւ զթողութիւն, յաղագս որոյ զնորա բարութիւնն, որ յայնժամ գծեաց առ Սիմէոն ասէ. «**Մտի ի տուն էս Ջուր ոտից իմոց ոչ եպ[ուր] եւ սա եպ**» *(Հմմտ. Ղուկ. Է 44)*, այսինքն՝ զի քեզ դիւրին էր մերձենալ, քան կնոջդ, զի ի քո տունս եկի: Իսկ նա, որ հեռի էր եկն առ իս և դու՝ ո՛չ: Դատաստանաւ խաւսեցաւ առ Սիմոն, իբր թէ. «**Որոյ առաւել ութէ, առաւել առնու պիտղութիւն**» *(Հմմտ. Ղուկ. Է 47)*, որ և ուսոյց մեզ զինարս զաւրանալոյ ի մեղաց համբուրել զսուրբ պատուիրանս նորա, այսինքն՝ գործով կատարել, և հանել արտասուս ջերմ յանկեղծ սրտէ: Եւ զսուրբ հաւատն իբրև զխունկ[2] անոյշ Աստծոյ մատուցանել, որով հոտոտի Տէր ի հոտ անոյշից: Իսկ թէ յայսցանէ որոշեալ գտանիմք, յայտ է, թեև յայնմանէ որոշիմք, և զի այլոց գործեալ արդարութիւն և զղջալ ոչինչ է մեզ օգուտ, որպէս և ոչ պոռնիկ կնոջն Սիմոնի: Այլ՝ ամենայն, որ առնէ զմեղս նորին և պարտ է զղջալ, և թէ ոչ՝ զմեղաւորութիւնն ընդ Սիմոնի ընդունի, թէ մտի ի հոգի քո սուրբ պատուիրանաւն, դու յոչ ինչ համար ի կալար զԻս:

Եւ դարձեալ՝ ոչ հաւատացէր զԻս թողող մեղացն, որպէս պոռնիկն, վասն որոյ եկեալ էին ի զղջումն, յաղագս որոյ ընդ քոյդ առնելոյդ արարից և Ես, զի Ես պատրաստ էի ի տալն, և դու ո՛չ խնդրեցեր և ո՛չ առեր: Յաղագս այսորիկ յայտագոյն ասէ առ կինն. «**Թողեալ լիցին էեղ մեղէ էս**» *(Ղուկ. Ե 20)*, քանզի Աստուած

[1] B, C, E *պարտական* փխ. *պարտապանն*:
[2] B, C, E *զխունկ* փխ. *զեւղ*:

իմացաւ զնորայն կատարեալ զղջումն, եթող նմա, իսկ անարգոյն[1] հրէայքն դեռևս թերահաւատ էին ի Նա, թէ զի՞արդ կարէ թողուլ զմեղս, իսկ Տէրն ոչ ինչ փոյթ առնէր զանհաւատիցն, ասէ առ կինն. «Հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղութիւն» *(Մարկ. Ե 34)։*

Իսկ արդ՝ զի՞նչ է խաղաղութիւնն, այսինքն՝ է, զի բարձաւ խռովարարն մեղք, զոր օրինակ մարմնոց ցաւք պատերազմի ընդ մարմինս և նեղեն և տագնապեն, այսպէս և մեղքն պատերազմի ընդ հոգին և կ[արի] սաստկապէս։ Այլ և ընդ յԱստուծոյ պատերազմի՝ թշնամութիւն առնել, [աւտա|17բ|րա]ացուցանել և հաղորդս դիւաց առնել։ Արդ, յայսպիսի պատերազմէ արձակեաց զանձն աշխատել և հանգեաւ ազատեաւ ի մեղաց յաւիտենական խաղաղութիւնն, ընդ որում և մեզ՝ մեղաւորացս լիցի հասանել ուրախութեանն և խաղաղութեանն յաւիտենից։

***Հարցումն.*** Զի՞նչ է որ ասէ Տէրն. «Ապաշխարեցէք՝ որքէ գոն, եւ թուչնոց երկնից՝ բոյնէ, եւ որդոյ մարդոյ ոչ գոյ պեղիէ» *(Ղուկ. Թ 58)։*

***Պատասխան.*** Զի երկու մտօք իմացեալ լինի։

Նախ՝ զի դպիրն[2] այն գիտաց, թէ Տէր մեր ինչս ժողովէ, ցանկացաւ իբր թէ ինքն ևս բազում ինչս ժողովեսցէ, վասն որոյ ասէր, թէ. «Ապնէտան հեռի եմ յինչս ոպտանալոյ, զի ոչ պուն է իմ բնակելոյ, զոր եւ աղուշանէ եւ թուչուանէ ունին» *(Համբ. Նեեմայ որդւոյ Հէքալիա Դ 1-4)։*

Եւ երկրորդ՝ «*աղուես և թռչունք*» զդևս կոչէ, իբր թէ դիւաց բնակարանէս եղեալ Իմ աստուածութեանն տեղի[3] ոչ գոյ ի քեզ։

Եւ զի՞ «*թռչուն*» երկնից կոչէ զդևս։ Եւ այս վասն բազում պատճառի։

---

[1] C, E *անարգոյն* **փխ.** *անագորոյն*։

[2] C, E *դպիրն այն* **փխ.** *այն այրն*։

[3] C *եղեալ Իմ աստուածութեանն տեղի* **փխ.** *եղեալ ես, Իմ աստուածութենես տեղիք*։

Նախ՝ զի թռչունն բարձրագոյն ընթանայ, այսպէս և սատանայ զմիտս հպարտութեամբ բարձրացեալ է, ըստ այնմ. «**Եդիցս զքիւռս իմ յամպս եւ եղիցս նմա բարձրեալ**» *(Հմմտ. Եսայի ԺԴ 14)*։

Երկրորդ՝ զի փութով ընթանայ, այսպէս և սատանայ փութով յամենայն տեղիս հասանէ ուր և կամի, ըստ Դաւթի. «**[Ոչ ի] Նեպէ, որ թռչի ի պուէ**» *(Սաղմ. Զ 6)*։

Երրորդ՝ զի կրկին թաւք թռչի, այսպէս[1]՝ կրկին կերպիւ կոխէ զմարդն, նախ՝ բռնութեամբ և ապա՝ խաբէութեամբ։

Չորրորդ՝ զի անհամար է թև հաւուն, որով թռչի, այսպէս անհամար է պատրանք սատանայի, որով կորուսանէ զմարդն։

Հինգերորդ՝ զի, որպէս բազում են տեսակք հաւուց, այսպէս և բազում են ազգ դիւաց, որպէս ասաց դիւահարն առ Տէրն. «**Լեգէոն [է] անուն [իմ]**» *(Մարկ. Ե 9)*, այսինքն՝ բազմատեսակ։

Վեցերորդ՝ զի թռչունք, ոմանք ունդ ուտեն, ոմանք՝ միս, այսպէս սատանայ, երբեմն զմեղս մարդոյ ուտէ, և երբեմն՝ զանզղջութիւն մեղացն։

Եւթներորդ՝ զի են ոմանք, որ ի ջուրս բնակեն, որպէս ձկնկուլն և այլն, այսպէս է ոմն դև, որ զգիջական ցանկութիւն սիրէ և ունի իշխանութիւն ի վերայ բղջախոհութեանն, ըստ այնմ. Բեհմովթ[2] ննջէ ի գիջային տեղիս *(պէ՛ս Բ Օրինաց Ժ 1-11)*։

Ութերորդ՝ զի ամենայն թռչունք զաւդս պատառեալ գնայ, այսպէս և սատանայ միշտ զբարի խորհուրդս պատառել ջանայ։

Իններորդ՝ զի «**Զհեպս գնացեալ թռչնոց, ոչ ոք գտանէ**» *(Հմմտ. Իմաստ. Ե 11)*, որպէս ասէ Սողոմոն, այսպէս պատերազմս սատանայի ոչ ոք իմանայ, որ ընդ սուրբսն։

Տասներորդ՝ զի ոմանք ի շէնս բնակեն թռչունք և ոմանք՝ յանապատի, այսպէս սատանայ երբեմն ընդ աշխարհականի պատերազմի, և երբեմն՝ ընդ անապատաւորի։

---

[1] Ե *այսպէս* **փխ.** *սոյնպէս սատանայ*։

[2] **Նոր Կտակարանում՝** *Բերովթ*։

Եւ դարձեալ, երբեմն յաշխարհի տայ գործել [չա]րիս և երբեմն՝ յանապատի, որ է մեղքն սեպհականն բնակութիւն, որպէս ասէ վայելչութիւնն անապատի Եւագրիոս:

[Դարձեալ], զի՞ «աղուեսոյ» նմանեցուցանէ: Եւ այն ևս բազում պատճառի:

**|18ա|** Նախ՝ զի աղուեսն խաբող կենդանի է, այսպէս և սատանայ միշտ խաբել ջանայ զամենայն ոք, զոր օրինակ առ Եւայ է տեսանել:

Երկրորդ՝ զի քծնի է, այսպէս և սատանայ ձգէ ողոքանաւք բանս վասն մեղաց և կորուսանէ:

Երրորդ՝ զի փափուկ է մորթ նորա, քան զամենայն կենդանեաց, այսպէս ցանկութիւն հեշտութեանն յոյժ ընդունի սատանայ, քան զամենայն ստացուածքս:

Չորրորդ՝ զի միսն դառն է աղուեսուն, և գազանք զնա ոչ ուտեն, այսպէս և սատանայ ոչ գոյ քաղցրութիւն հոգևոր, ուստի հանգչի ամենայն արդար:

Հինգերորդ՝ զի գազան է աղուեսն, այսպէս և սատանայ դեղէ[1] զամենայն հոգի անօրէնութեամբ և խոցէ մեղօք:

Վեցերորդ՝ զի ապականիչ է այգեաց, որպէս ասէ յերգսն *(գէ՛ս Երգ. Բ 15)*, այսպէս և սատանայ ապականիչ է առաքինութեանց:

Եւթներորդ՝ զի մորթ նորա թեթև է, քան զամենայն կենդանեացն, այսպէս և սատանայ ի սգեստ թեթև գործն է անօրինութեան:

Ութերորդ՝ զի մերձ ի շէնն ոչ բնակէ, այսպէս և սատանայ ի բնակութիւնն հեռի է յաստուածային արանց, որ շէն են առաքինութեամբ:

Իններորդ՝ զի միշտ շրջէ ընդ երեսս երկրի և խնդրէ կերակուր, այսպէս և սատանայ[2] միշտ յոգիս մեղաւորաց շրջի, որպէս

---

[1] C *այսպէս և սատանայ դեղէ* **փխ**. *սոյնպէս գեզէ*:
[2] E **չիք** *և սատանայ*:

ասաց առ Աստուած. «Ի լիցել շրջեցայ ընդ ամենայն երեսս երկրի» *(հմմտ. Յոբ Բ 2)*, և մարգարէն [ասէ.] «Յիրէ, որ շրջի խաւարի» *(Սաղմ. Ղ 6)*։

Տասներորդ՝ զի մեծատունք զմորթ նորա սգենուն, այսպէս և սատանայ զփարթամսն և զընչասէրսն սիրէ և ընչասէրն զսատանայէ զգեցեալ, վասն որոյ ասէ. «Ազուշտաւոր որջէ գոն, եւ թ[ռչնոյ՝ բոյնէ, եւ Որդւոյ Մարդոյ ոչ գոյ ուր դիցէ գլուխ]» *(հմմտ. Ղուկ. Թ 58)*։

***Հարցումն.*** Ընդե՞ր ոչ ետ թոյլ Տէրն, որ խնդրեաց թաղել զհայրն *(տե՛ս Ղուկ. Թ 59)*։

***Պատասխան.*** Զի մի՛ զժառանգութիւն հօրն տեսցէ և նովաւ սբաղեալ կորուսցէ զլաւագոյնսն։ Նմանապէս մեզ ուսոյց՝ ոչ թողուլ զեկեղեցականս ի մարմնաւոր ժառանգութիւնսն, զի մի՛ զհին մշակութիւնն կորուսանիցէ։

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ոչ եթող հրաժարել յընդանեացն *(տե՛ս Ղուկ. Թ 61)*։

***Պատասխան.*** Զի ընտանիքն երկու կերպիւ խաբեն զեկեղեցականսն։

Նախ՝ գութ արկանեն առաջի ուտելոյ և ըմպելոյ և այլն։

Եւ երկրորդ՝ բանիւ գորովալիր խօսին ընդ նոսա, որովք սովոր են խաբել, վասն որոյ ոչ է պարտ առ նոսա երթալ, կամ հոգալ վասն նոցա, որպէս Պետրոս ոչ ինչ հոգաց զիւր տանէ կամ զնաւէ կամ զգործեաց, այլ թողեալ[1] գնաց զկնի նորա։

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ նախ ԺԲ. (12) ընտրեաց առաքեալս և յետոյ ՀԲ. (72)։

***Պատասխան.*** Զի այս նկարեաց Աստուած աւրինակաւն անդ ի գալ ժողովրդեանն յԱղիմ, ուր էին ԲԺ. (12)ան աղբեւր և ՀԲ. (72) արմաւենիք, որովք շնորհէր ժողովրդեանն ջուր ըմբելոյ և քաղցր կերակուր, ըստ այնմ օրինակի զառաքեալս[2] ընտրեաց, զի արբուսցեն հեթանոսաց զջուրն կենդանի և կերակրեսցեն զԲանն

[1] E *թողեալ* փխ. *թողեալ զամենայն*։
[2] C, E *զառաքեալս* փխ. *զառաքելոց դասն*։

կենաց: Եւ որ նախ ԲԺ. (12)նս ընտրեաց, վասն ԲԺ. (12)ն է ց|**18բ**|[ե]ղիցն և յետոյ ՀԲ. (72) վասն ՀԲ. (72) ազգաց, վասն որոյ՝ «**Հուշնչէ բաղում են եւ մշ[ակ ոակաւ]**» *(Մաղթ. Թ. 37)*:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ասէ թէ. «**Ի ճանապարհի ողջոյն մի պայէ**» *(Համբ. Ղուկ. Ժ. 4)*, իսկ ի տունս ասէ՝ «*Տուք*»:

***Պատասխան.*** Նախ տեսցուք՝ զինչ նշանակէ «*ողջոյն*», և ապա, թէ վասն է՞ր ոչ հրամայեաց տալ: Զի ողջոյնն զհաղորդութիւնն սիրոյն նշանակ է, որպէս Պաւղոս գրէ յամենայն թուղթս իւր: Իսկ ողջոյնն բոլոր ասի, այսինքն՝ զսէր Հոգւոյն[1] նշանակէ կատարեալն, և զի ոչ է նա ձրի խօսք, որ յաւդս ցնդի ընդ վայր մսխել, այլ՝ ազդու և զաւրաւոր է, զի գործ Հոգւոյն Սրբոյ է:

Արդ, զսա տալ ի տուն պատշաճի, զի թէ ընկալցին՝ կեցցեն, այսինքն՝ զսէր Հոգւոցն, և թէ արհամարհեն՝ ընդունիցին զփոշին, վկայ թաւթափել ի նոսա, զի կորնչելոց են: Իսկ *«Ի ճանապարհի տալ»* զսա վայրապար է, զի ոչ ինչ շահ առ չարսն գործէ, զի անփոյթ առնեն և անցանեն, զի ճանապարհ է: Եւ դարձեալ՝ որք տունեն սրբութեան պարտ է տալ ողջոյն, զի գոյ որդի ողջունի ի նմա, իսկ որ ի ճանապարհ չար մեղաց են, ոչ է պարտ տալ ողջոյն, զի ոչ է օգուտ նոցա, զի. «**Հոգին Սուրբ փախչի ի նենգուրեանէ**» *(Համբ. Իմաստ. Ա. 5)*:

Եւ թէ առ այս ոք տարակուսեսցէ, թէ զբանն ոչ արգելեաց յապառաժ անհաւատութենէ, և ոչ ի փշոց և ոչ ի ճանապարհէ, զի՞արդ զողջոյնն արգելեաց: Առ որս ասեմք, թէ զբանն խրատու յամենայն ուրեք պարտ է ընկալուլ, նաև յաճախապէս առ չարն, զի ուսեալք եկեսցեն ի լաւութիւն, ապա թէ ոչ՝ անպատասխանիք լիցին, իսկ ողջոյնն, որպէս ասացաւ սիրոյ է նշանակ, զոր ոչ է պարտ ամենայն ուրեք վայրապարըն կենալ զնա, զի զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի, կամ Քրիստոսի ընդ բելիարայ,- ասէ անաւթն ընտրութեանն *(Համբ. Բ Կորնթ. Զ 14-15)*:

---

[1] B, E *Հոգւոյն* **փխ**. *Հոգւոյն Սրբոյ*:

**Ահա եղու յեղ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն [զաւրութիւն թշնամւոյն, եւ յեղ ոչինչ մեղանչիցեն]»** *(Ղուկ. Ժ 19)*:

Եւ զի՞ զսատանայ աւձոյ և կարճի նմանեցուցանէ: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի աւձ և կարիճ վատթար են յամենայն կենդանիս, որպէս ասէ. «**Ընդծեալ լիջիր դու յամենայն անասնոց**» *(Ծննդ. Գ 14)* և այլն, այսպէս և սատանայ նախքան զմեղանչելն կարի մեծ էր, զի «սա*տ*այէլն»[1] աջ Աստուծոյ ասի, և յետ մեղանչելոյն անարգ եղև, քան զամենայն կենդանիս, որ[2] յարարածս, ըստ այնմ. «**Ընկաւ արօսեակն, որ ընդ առաւօտն ծագէր**» *(Հմմտ. Եսայի ԺԴ 12)*:

Երկրորդ՝ զի աւձ և կարիճ ի վերայ լանջաց գնան, այսպէս և սատանայ երկրաքարշ է բնութեամբ, միշտ ընդ երկրաւ շրջի, որպէս ասէ. «**Յածեալ շրջեցայ ի վերայ երկրի**» *(Հմմտ. Յոբ Ա 6)*:

Երրորդ՝ զի մինն խայթոց ի գլուխն ունի և միւսն ի վերջքն, այսպէս և սատանայ երբեմն ի սկիզբն մեղաց խոցոտէ, երբեմն ի վերջքն՝ յուսահատութեամբ:

**|19ա|** Չորրորդ՝ զի մահաբեր թոյնք ունին, այսպէս և սատանայ մահաբեր թիւնօք լցեալ է խորհուրդ նորա, որ է մեղք և ամենայն ցանկութիւն զոր հեղուի մարդն և սպանանէ:

Հինգերորդ՝ զի ճանապարհն հնգից գալարի աւձն, այսպէս և սատանայ ի հինգ սգայարանաց գործել զամենայն վնաս:

Վեցերորդ՝ զի երկոքինն գաղտնի խածանեն զմարդն, այսպէս և թշնամին գաղտնի խածանէ զհոգիս մեր, ըստ առակի որոմանցն *(տե՛ս Մտթ. ԺԳ 24–30)*:

Եւթներորդ՝ զի աւձն զգլուխն թագուցանէ, այսպէս և սատանայ զչարիս առնել տայ և ինքն յարահետ լինի:

Ութերորդ՝ զի բնական թշնամութիւն է աւձին ընդ մարդոյս, և առաջին թշնամին մեր սատանայ է:

---

[1] **փոխ.** **եբր.**, **նույնն է ինչ** *դիվապետ, բալիար, սատանա:*
[2] Ե **չի՞** *կենդանիս, որ*:

Իններորդ՝ զի մին մասն խածելով զբոլորն ապականէ, այսպէս և սատանայ մին մասն մեղօքն, զոր առնել տայ կորուսանէ ի գեհեանն:

Տասներորդ՝ երկճղի լեզու ունի աւձ, այսպէս և սատանայ երբեմն ծածկէ զմեղս և երբեմն՝ խայտառակէ, վասն որոյ Տէրն Իւր Գալըստեամբն ետ առաքելոցն զայս իշխանութիւնս, որով ապրիմք ի հենից նորա:

*Հարցումն.* Զի՞նչ է որ ասէ. «**Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ**» *(տե՛ս Մատթ. ԻԲ 37)։*

*Պատասխան.* Բազում են աստիճանք սիրոյ: Առաջինն և կատարեալ է առ Աստուած, զի ամենայն աւրէնք և մարգարէք արտաքոյ սորա ոչ ինչ ուսուցանեն, իսկ այլքն՝ առաքինութիւնք են, և վասն որոյ, զի նոքօք ցուցանի, որ առ Աստուած սէրն, վասն որոյ ասէ. «**Սիրեսցես զՏէր Աստուած քո**» *(Մարկ. ԺԲ 30)։*

Երկրորդ՝ սէրն, որ առ ընկերն, որպէս ասէ. «**Սիրեսցես զընկեր քո իբրեւ զա[ռն քո]**» *(Յակոբ Բ 8)։*

Երրորդ՝ զընդանիսն սիրել, որպէս ասէ Պաւղոս. «**Որ ընդանեաց խնամս ոչ պանի չար է, քան զանհաւատսն**» *(Համա. Ա առ Տիմոթ. Ե 8)։*

Չորրորդ՝ պարտ է սիրել զիւր բարեկամն, որպէս ասէ յօրէնքն. «**Սիրեսցես զսիրելիսն քո**» *(Համա. Ղուկ. Զ 32)։*

Հինգերորդ՝ զաւտարն [աշխարհաւ, որ] եկեալ յեցեալ իցեն, ըստ այնմ. «**Աւտար էի եւ ժողովեցէք[ի զիս]**» *(Համա. Մատթ. ԻԵ 35)։*

Վեցերորդ՝ զաղքատսն սիրել, ըստ այնմ. «**Զաղքատս անյարկս տար ի տուն քո**» *(Եսայի ԾԸ 7),* և թէ՝ «**Բրդեա՛ քաղցելոց զհաց քո**» *(տե՛ս՝ Եսայի ԾԸ 7)։*

Եւթներորդ՝ որպէս ուսուցանէ Տէրն, նոր պատիւրան դնելով. «**Սիրեցէք զիշմանս ձեր, բարի արարէք ատելեաց [ձերոց]**» *(Ղուկ. Զ 27),* և Պաւղոս, թէ. «**Թշնամին քո քաղցեալ է, հաց տուր նմա եւ թէ ծարաւի՝ ջուր**» *(Համա. Ա առ Հռոմ. ԺԲ 20):*

# ԵՒԹՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Այր մի ելանէր յԵրուսաղեմէ յԵրիքովն եւ անկաւ ի յեռս աւազակաց» *(Ղուկ. Ժ 30)*։

Սքանչանալ պարտ է ընդ կարգաւորութիւն առակաւոր բանիս Տեառն, զի թէ իմաստակ մարդոյ գոն շարադրութիւն բանից, քանի ևս առաւել մարդացելոյն, որ |19բ| է Աստուծոյ իմաստութիւն և զօրութիւն: Արդ, սկիզբն առակաւոր բանիցս ի յանկմանէն Ադամայ արար և կատարումն ի միւս անգամ գալուստն, անդ ուր ասէ. «Տալ զհամբ ֆանֆարին» *(հմմտ. Մտթ. ԻԵ 19)*, զոր և զայս բան սկզբան մանրամասնաբար մեզ քննելի է:

Արդ, «այր» ասէ զԱդամ, իսկ «Երուսաղէմ»՝ զդրախտն, զի Երուսաղէմ «գե[ւ]ղ խաղաղութեան» կոչի, իսկ «Երիքով»՝ զաշխարհս, զի Երիքով «լուսին» թարգմանի, որ է փոփոխական: Զոր և զփոփոխումն սորին յերկարելով բացայայտեցից, մանաւանդ, զի այսոքիկ յԵրուսաղէմ ոչ գոյն, վասն որոյ «խաղաղութիւն» կոչէ զնա:

Նախ՝ զի այս երկիր միշտ այլայլի երեսօք, երբեմն չոր, երբեմն գեճ, երբեմն՝ սառեալ, երբեմն՝ ջերմացեալ, կանաչ և անբոյս: Եւ այսոքիկ ոչ գոյին ի դրախտին, զի անփոփոխ ունի նա զկայացումն:

Երկրորդ՝ զի այս երկիր միշտ փոփոխի եղանակօք ի գարուն յամառն, ի յաշուն ի ձմեռն, և այսոքիկ ոչ գոյն ի դրախտին, զի անտ միշտ գարուն էր:

Երրորդ՝ զի աստ տիւ զգիշեր փոխէ, և գիշեր՝ զտիւ, և ևս զի գիշերն երբեմն յերկար, և երբեմն՝ կարճ: Նոյնպէս և տիւն: Իսկ յաստուածային վայրն այն ո՛չ գոյր գիշեր, այլ միշտ՝ լոյս:

Չորրորդ՝ զի աստ անկանի սաղմն յարգանդ մօրն, և ցաւօք և երկամբք ծնանիմք, որպէս և պատիժ եդ Աստուած բնութեանս: Իսկ անդ, եթէ կացեալ էին զուղեղն, ոչ էր մեզ ցաւօք և երկամբք ծնանիլ, այլ անախտաբար, որպէս լոյս՝ ի լուսոյ:

Հիգերորդ՝ զի տղայ լինիմք և մանկութիւնն զնա փոխէ և երիտասարդութիւն փոխարկի առ ծերութիւնն և այլն: Իսկ ի լուսեղեն բնակութիւնն ոչ գոյր ծերանալ և հնանալ, այլ միշտ մանկութիւն, որպէս վայրուցն վայել էր:

Վեցերորդ՝ զի երբ հիւանդանամք և դարձեալ առողջանամք, նաև վէրք ընդունիմք ի մեզ, խոց և կսկիծ: Իսկ յերանեալ տեղիքն և ոչ գոյին հիւանդութիւն և տկարութիւն[1], այլ միշտ առողջ և զուարճացեալ դիմօք:

Եւթներորդ՝ զի աստ երբեմն տրտմիմբք և ուրախանամք, և պակասին ախորժակքն մեր և զի թշնամիք կեղեքեն և խլեն և կողոպտեն: Իսկ ի հրեշտակաց վայրքն ոչ գոյր պակասութիւն ինչ ախորժակացն, ուստի բաղկանայ տրտմութիւն, նոյնպէս և ոչ գոյր թշնամի, այլ անձնիշխան կամօք ընկէց զինքն ի փառաց, ըստ այնմ. «**Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ**» ***(Սաղմ. ԽԸ 13, 21)***:

Ութերորդ՝ զի աստ ոմն՝ աղքատ և ոմն՝ մեծատուն, և այն, որ մեծատունն է, ոչ միշտ, նոյնպէս աղքատն: Իսկ ի փառաւոր տեղիքն, ոչ գոյր աղքատութիւն կամ մեծ կամ փոքր, այլ՝ հաւասար ամենեցուն վայելուածք պատրաստեալ է Տէրն:

Իններորդ՝ զի աստ երբ[եմն] արդ[ա]ր և մին՝ դարձեալ մեղաւոր, և ոչ նոյն կացելոցն ևս արդար|**20ա**|ացեալ և միջակ, և առաւել և նուազ: Իսկ յանմեղութեան տեղիք ոչ գոյր մեղք, վասն որոյ և ապաշխարութիւն, այլ արդարութեամբ միշտ ցանկացեալ յաստուածային տեսութեանն:

---

[1] Ե *հիւանդութիւն և տկարութիւն* **փխ**. *այսոքիկ*:

Տասներորդ՝ զի աստ ոչ եմք միշտ կենդանի, այլ մահ փոխէ զմեզ և ոչ ի նոյն յամեմք, այլ դարձեալ յառնեմք ի մեռելոց[1], իսկ անդր ոչ գոյր մահ, և յայտ է, զի պտղոյն ուտելն եդ զմահ[2], վասն որոյ և յարութեան պիտոյացաւ, այլ միշտ կեանք:

Արդ, զայս ամենայն պակասութիւնս եբեր բնութեանս մարդկան՝ իջանելով անձնիշխան կամօք ի մեղս և զրկեաց յանմահ վայրէն, վասն որոյ յիրաւ է ասէ. «**Զի անկաւ ի չեռս աւազակաց**» ***(Հմմտ. Ղուկ. Ժ. 30)***, զի որ բարութեանն ոչ տանի, յիրաւի չարեաց դիպի:

Եւ զի՞ գող սատանայ կոչի և «*աւազակապետ*»: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի գողն ի գիշերի շրջի, այսպէս և[3] սատանայ ի խաւարի շրջի, ըստ այնմ. «**Յիրէ որ շրջի ի խաւարի**» ***(Սաղմ. Ղ 6)***:

Երկրորդ՝ զի գողն փախչի յիշխանաց և ի մեծամեծաց, այսպէս և սատանայ՝ եկեղեցւոյ յԱւետարանէ և ի սրբոցն, ըստ այնմ. «**Ընկցին ի կողմանէ էուռմէ հազարք**» ***(Սաղմ. Ղ 7)***:

Երրորդ՝ զի գողն թագնաբար մտանէ ի տուն հանել զկարասին, մինչ զի ոչ գիտէ տէր տանն, այսպէս և սատանայ թաքնաբար մտանէ ի տուն, այսինքն՝ ի սիրտ մարդոյն, հանել զբարի գործ առաքինութեան, մինչ զի ոչ իմանայ մարդն:

Չորրորդ՝ զի գողք և աւազակք եթէ ոչ կարեն թաքնաբար առնուլ, բռամբ[4] կամին քակել զտունն և զՏէր նորա սպանանել, այսպէս և սատանայ մինչ ոչ կարէ խաբել զմարդն, յարուցանէ փորձանս ի վերայ մարդոյն, թերևս կարիցէ աւերել զբարւոք կամս նորա:

---

[1] E **չիք** *այլ դարձեալ յառնեմք ի մեռելոց*:

[2] C, E **չիք** *և յայտ է, զի պտղոյն ուտելն եդ զմահ*:

[3] B, E **չիք** *«գող» սատանայ կոչի և «աւազակապետ»: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ՝ զի գողն ի գիշերի շրջի, այսպէս և*:

[4] E *բռամբ* **փխ**. *բռնաբար*:

Հինգերորդ՝ զի գողս յորժամ մտանէ ի տունն[1], նախ շիջուցանէ զգիտութիւն մարդոյն, և ապա՝ սերմանէ ի նմա զամենայն մեղս:

Վեցերորդ՝ զի որպէս գողն զազնիւն առնու ի տանէն և զվատթարն թողու, այսպէս և սատանայ առնու զբարիս մարդոյն և զվատթար մեղսն ի նմա թողու սպանելով զնա[2]:

Եւթներորդ՝ զի գողն յորժամ մտանէ ի տունն եթէ ի տունն մի մարդ է, սպանանէ, ապա թէ բազում՝ ոչ կարէ, այսպէս և սատանայ, թէ գտանէ մարդն մի սրբութիւն, վաղվաղակի սպանցէ զնա, որպէս ասէ. «**Վա՛յ միոյն ի ճանապարհի եւ չուառն երեէ կղի մի խղեսցի**» ***(Տե՛ս Ժող. Դ. 9-12)***:

Ութերորդ՝ զի որպէս գողն յորժամ ոչ կարէ ընդ նեղ ծերպս ծածկուց մտանել, յայնժամ արձակէ[3] անդ մանուկ փոքր և մտանէ ի ներքս, նմանապէս և սատանայ յորժամ գայ առ արդարս և ոչ կարէ զմահու չափ մեղս մուածնել ի ներքս, յայնժամ հնարի զներելիսն սակաւ-սակաւ մտուցանել ի նա, ուստի վարժեալ անկանի ի մեղս մահու չափ:

Իններորդ՝ զի յորժամ տեսանէ գողն զտէր տանն յարթուն, ոչ կարէ ինչ գողանալ: Իսկ թէ ննջէ, ապա առնու, նմանապէս սատանայ, յորժամ տեսանէ զժիրսն ի բա|20բ|[ռե]գործութեանն, ոչ կարէ քարշել զնա ի մեղս, իսկ յորժամ ծուլանան, նմանապէս սերմանէ զչարիս իւր:

Տասներորդ՝ զի, որպէս գողն ոչ կարէ ուրանալ զսվորական գործն իւր, այսպէս և սատանայ ոչ կարէ ուրանալ զչարութիւն իւր, վասն որոյ Ադամայ և աստր հասուցանէ զչարիս իւր[4], զի նովաւ ոչ բաւականացաւ կամ կորուստեան բնութեանս, այլև զիւրաքան-

---

[1] C, E *ի տունն* **փխ**. *ի տունն, նախ շիջուցանէ զլոյսն և ապա առնու զինչսն, սոյնպէս սատանայ, նախ*:

[2] E **չիք** *սպանելով զնա*:

[3] E *արձակէ* **փխ**. *մուծանէ*:

[4] E **չիք** *վասն որոյ Ադամայ և ասպր հասուցանէ զչարիս իւր*:

չիւրսն առանձնակի կորուսանէ ի վիհն յաւիտենական, վասն որոյ ասէ. «**Ընկաւ ի յեռս աւազակաց**» *(Ղուկ. Ժ 30)*։

Եւ արդ՝ ո՛չ միայն Ադամայ, այլև ի մեզ գործէ սատանայ, յորժամ ի մեղս անկանիմք զայսոսիկ զոր թուէ Տէրն։

Նախ՝ զի ի մերձենալն ի մեղս գերի լինիմք սատանայի, ըստ այնմ. «**Որ առնէ զմեղս ծառայ է մեղաց**» *(Յովհ. Ը 34)*։

Երկրորդ՝ զի մերկացուցանէ զմեզ, այսինքն՝ զանապականութիւն և զանմահութիւն, այլև զշնորհս աւազանին, զաղօթս և զպահս։

Երրորդ՝ վէրք դնէ ի հոգիսն զխայթոց մահուն յաւիտենական զմեղքն։

Չորրորդ՝ զի կիսամահ առնէ, այսինքն յորժամ մարդն ի մեղքն է, մեռեալ է հոգին, և մարմինն միայն է կենդանի, վասն որոյ կիսամահ կոչէ։ Եւ դարձեալ՝ առ բնութիւնս գործեաց սատանայ, զի կամեցաւ զբոլորն մեռացուցանել։ Իսկ նախախնամութիւնն ոչ եթող, այլ յարոյց ի բնութենէս զարդարս՝ զՆոյ և զԱբրահամ և զայլս, վասն որոյ կիսամահ կոչի։

Հինգերորդ՝ զի անտէր առնէ զմարդն, այսինքն՝ զիրեշտակս պահապանս ի բաց քակէ ի մէնջ և ինքն ո՛չ պահէ, այլ՝ տանջէ։

Իսկ արդ՝ «*վէրք*» զմեղքն ասէ, և զմեղքն վիրաց նման է բազում եղանակաւ։

Նախ՝ զի մեղքն յայլ ումեմն է լինի, զի թէ թրով հատանեն, կամ փայտով հարկանեն, այսպէս և մեղքն ի պատճառէ սատանայի լինի, որ կամի միշտ խոց պահել զհոգին, ըստ այնմ. «**Նախանձաւ բանսարկուին եմուտ մահ յաշխարհս**» *(Իմաստ. Բ 24)*։

Երկրորդ՝ զի գոյ վէրք, որ յանձն է մարդոյն յառաջ գայ, և ոչ ի պատճառէ, այսպէս՝ գոյ մեղք, որ մարդն ինքն խորհելով յառաջն բերէ, առանց աւգնականութեան սատանայի, զի միտք մարդկան ի խնամս չարին հաստատեալ են ի մանկութենէ։

Երրորդ՝ զի վերն շարաւակալի է տուն առնէ, այսպէս և մեղքն[1], ժողովեալ այլ ևս օր ըստ օրէ բնակութիւն կազմէ իւր զհոգին, եթէ ոչ, մարդն փութով արտաքսէ:

Չորրորդ՝ զի մի վիրացն պարտին բազում սպեղանիք լինել, այսպէս և մեղացն պարտին բազում զղջումն և ապաշխարութիւնք:

Հինգերորդ՝ զի դժուարաւ ողջանան զմեղքն[2], այսպէս և մեղքն դժուարաւ ելանէ ի մարդոյն, որք անզեղջք են, զի այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք:

Վեցերորդ՝ զի վէրքն ի մի մասն անդամոյն լինի, բայց զամենայն անդամսն ցաւեցուցանէ, այսպէս՝ մէղքն թէպէտ ի հոգին է, սակայն բոլոր մարդոյն բերէ տանջանք, ըստ այնմ. «**Վշտանայ |21ա| ինչ մի անդամ, վշտանան ամենայն ան[դամքն ընդ նմա]**» *(Եր. Ա. Կորնթ. ԺԲ 26)։*

Եւթներորդ՝ ի լինել վիրացն ի մի անդամն ոչ կարէ առնել այլ ինչ գործ, այսպէս և մեղաւք լցեալ հոգի ոչ կարէ առնել արդարութիւն ինչ:

Ութերորդ՝ զի թէ ոչ ելանէ ամենայն փուտ մարմնոյն ոչ առողջանայ մարմինն, և թէ մին մասն մնայ, նա զառաջին կերպն ստանայ, այսպէս և մէղքն, թէ ոչ հատանէ մարդն ի հոգւոյն, ոչ կարէ ապրել հոգին, այլ զամենայն հանել պարտ է, զի զինչ աւգուտ է զխոտն քաղել և զարմատնին երքս թողուլ, զի վաղիւն կրկին բուսանի, այլ արժան է զարմատն քաղել[3], զի մի ևս բուսցի:

Իններորդ՝ զի իմաստուն բժիշկ պիտոյ է, զի զվէրսն բժշկեսցէ, այսպէս հոգևոր բժիշկն պարտի գիտուն լինել, որով կարասցէ զվէրսն հոգւոյն առողջացուցանել, ըստ այնմ. «**Որ հանճարեղն է՝ զառաջնորդութիւն ոպասցի**» *(զե՛ս Առակ. Ա 5),* զի յիմար բժիշկն առաւել խոցէ զվէրսն:

---

[1] Ε *այսպէս և մեղքն* **փխ**. *սոյնպէս և սատանայ զմեղսն*:
[2] C, E *զմեղքն* **փխ**. *վէրն*:
[3] C, E *քաղել* **փխ**. *քակել*:

Տասներորդ՝ զի թէպէտ բժշկին վէրքն, սակայն սպիքն մնայ ի նոյն տեղիքն, այսպէս և, թէպէտ մեղքն սրբին ի մրդոյն, սակայն յիշատակութիւն մեղացն մնան, այսինքն՝ խղճմտանքն, որ է սպի ի հոգին:

Արդ, զայս ամենայն զոր մեք ի մեղս[1] հանելով ցուցաք, ի յԱդամ գործեցաւ, մինչև մերձ եղև դժոխոցն: Իսկ ասելն. «**Դէպ եղեւ անցանել ընդ այն ղևպացին եւ քահանայն եւ ղանց արարին**» *(տե՛ս Եսայի ԿԶ 21)*:

Նախ՝ «*ղևպացի*» զՄովսէս ասէ և զմարգարէս, զի ոչ ինչ կարիցին օգնել բնութեանս, զի Փրկիչն անմեղ պարտի լինել, և նոքա՝ ի մեղաց մարմնոյ ծնեալ ոչ կարէին ամենևին անմեղ լինել[2]: Իսկ «*քահանայ*»՝ զԱհարոն և զայլ քահանայսն, որք. «**Ոչ կարացին ապրեցուցանել ըստ նուիրեանս**», որպէս ասէ Պաւղոս *(հմմտ. Ա՛ռ Եբր. Ե 3–5)*: Իսկ յորժամ Տէրն ամենեցուն ետես, եթէ ոչ ոք կարեաց աւգնել անկելոցս, Ինքն խոնարհեցաւ և ծնաւ մարդկապէս և փրկեցաւ զմեզ[3]:

Դարձեալ՝ համանգամայն ղևտացիք և քահանայք զիին աւրէնսն է իմանալ, զի «**Գործով ոչ կարաց արդարացուցանել զքնուրիւնս**» *(հմմտ. Ա՛ռ Տիտոս Գ 5)*, որպէս ասէ Պաւղոս: Իսկ «սամարացի» զՆոր օրէնսն ասէ, որ. «**Հաւատով ջանաց եւ ապրեցոյց**» *(հմմտ. Ղուկ. ԻԳ 35)*[4]: Եւ զի Տէր մեր կարող էր զաւրութեամբ բազկի Իւր ապրեցուցանել զմեզ, այլ զի կամեցաւ արդար իրաւամբք փրկել, վասն որոյ մարմին էառ <վասն որոյ մարմին էառ>, և զոր օրինակ տղայօք անկեալ յերկիր, ոչ է հնար կանգնել, եթէ ոչ գրկախառն պատեսցէ և բարձրացուսցէ, այսպէս Տէր մեր մերձ եղեալ անկե-

---

[1] E *մեղս* **փխ**. *մեզ*:

[2] C, E, G, M **չիք** *զի Փրկիչն անմեղ պարտի լինել, և նոքա՛ ի մեղաց մարմնոյ ծնեալ ոչ կարէին ամենևին անմեղ լինել*:

[3] C, E **չիք** *որպէս ասէ Պաւղոս: Իսկ յորժամ Տէրն ամենեցուն ետես, եթէ ոչ ոք կարեաց աւգնել անկելոցս, Ինքն խոնարհեցաւ և ծնաւ մարդկապէս և փրկեցաւ զմեզ*:

[4] E, G, M **չիք** *Դարձեալ՝ համանգամայն ղևտացիք… Հաւատով ջանաց և ապրեցոյց*:

լոցս և բարձրացոյց՝ զչարչարանս, կրելով զչարչարանս վասն մեր, վասն սորայ ասէ. «**Սամարացի ոմն եկեալ ի գիշացաւ**» *(Հմմտ. Ղուկ. Ժ. 33)*, զի սամարացի կոչեցաւ նա ի հրէիցն:

Արդ, Տէր **|21բ|** մեր Ժ. (10) բարութիւնս արար անկելոյն ի ձեռս աւազակաց:

Նախ և առաջին՝ բարութիւն զոր արար Տէր մեր բնութեանս հայելն է յանգեալքս, վասն որոյ զսոյն աւրինադրեաց հայցել յաղքատն և ի տնանգն, ըստ այնմ. «**Հիւանդ էի և եկիք առ Իս**» *(Հմմտ. Մտթ. ԻԵ 36)*:

Երկրորդ՝ բարութիւն զի գթացաւ և զսոյն ուսոյց՝ գթալ յաղքատս և ի տնանկս և ի մեղաւորսն:

Երրորդ՝ զի մերձեցաւ առ հիւանդն կիսամահ: Այս է մերձենալն, զի էառ մարմին ի բնութիւնէս:

Չորրորդ՝ զի պատեաց զվերս նորա, այսպէս Տէրն սուրբ պատուիրանաւ իւրով[1]:

Հինգերորդ՝ զի ձիթով աւծ, այսինքն՝ աւծմամբ Հոգւոյն Սրբոյ ի մկրտութիւնն:

Վեցերորդ՝ զի գինի եհեղ ի վերայ, այսինքն՝ զհաղորդութիւն արեան Իւրոյ պարգևեաց մեզ:

Եւթներորդ՝ զի եբարձ ի գրաստի, այսինքն՝ զցաւս մեր եբարձ ի վերայ խաչափայտին:

Ութերորդ՝ զի եհան յանկեալ տեղէն և աւծ ի պանդոկ[2], այսինքն՝ եհան ի դժոխոց և եդ յեկեղեցի:

Իններորդ՝ զի յանձնեաց ի պանդոկապանն, այսինքն՝ յառաքեալսն և ի հայրապետսն, զոր օրինակ թագաւոր երթալ ի տար աշխարհ և յանձնէ զտուն ի սիրելի բարեկամ իւր[3]:

---

[1] G **չիք** *Չորրորդ՝ զի պատեաց զվերս նորա, այսպէս Տէրն սուրբ պատուիրանաւ իւրով*:

[2] G **չիք** *և աւծ ի պանդոկ*:

[3] E, G **չիք** *զոր օրինակ թագաւոր երթալ ի տար աշխարհ և յանձնէ զտուն ի սիրելի բարեկամ իւր*:

Տասներորդ՝ զի ետ երկու դահեկանս առ ի դարմանել զհիւանդն, այսինքն՝ զՀին և զՆոր Կտակարանսն, որ նոքաւք առողջանա մարդն:

Իսկ զի՞ պանտոկապան ուսանէ[1] զեկեղեցի: Եւ այս վասն բազում պատճառի ըստ համեմատութեան իմն:

Նախ՝ զի «*պանտոկն*» յոյս է ապաւինութեան տեղւոջ ճանապարհորդաց, այսպէս և եկեղեցի յոյս և ապաւէն է հաւատացելոց յանակնկալ տեղիս յայս կենցաղումս, յոր ապաւինեալ հասանիմք վերին խորանին:

Երկրորդ՝ զի հանգիստ է ճանապարհորդաց պանտոկն, այսպէս և մեղուցեալ անձանց հանգիստ է եկեղեցի, ըստ այնմ. «**Եկայք առ Իս ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռ[ին], եւ Ես հանգ[ուցից զձեզ]**» *(Հմտ. Մտթ. ԺԱ 28)*:

Երրորդ՝ զի անասուն մարդիկ ի միասին բնակին ի պանդոկի, այսպէս և մեղաւորք և արդարք ի միասին հաղորդեն յեկեղեցիս ի Սուրբ Մարմնոյ և Արեան, ըստ այնմ. «**Գայլք եւ գառինք ի միասին ճարակեսցին**» *(Եսայի ԺԱ 6)*:

Չորրորդ՝ զի պանտոկն պահէ ի ցրտոյ և ի տաւթոյ, այսպէս և եկեղեցի, ի ցրտութենէ անհաւատութեանն ջերմացուցանէ դաւանութեամբն, և ի ջերմութենէ մեղաց զովացուցանէ խոստովանութեամբ թողութեամբն, ըստ այնմ. «**Երթէ ոք ծարաւ իցէ, եկեսցէ առ Իս**» *(Յովհ. Է 37)*:

Հինգերորդ՝ զի պանդոկն ի գազանաց անվնաս պահէ, այսպէս և եկեղեցի անվնաս պահէ ի գազանէ սատանայէ, ըստ այնմ. «**Դրուշնէ դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցէ**» *(Մտթ. ԺԶ 18)*:

Վեցերորդ՝ զի պանտոկն շինեալ են մասնաւոր տունք, այսպէս և յեկեղեցի կարգեալ են զանազան առաքինութիւնք՝ և բարձր և խոնարհ:

---

[1] C *ուսանէ* **փխ.** *անուանէ*:

Եւթներորդ՝ զի զոր ինչ խնդրէ մարդն, գտանէ անդ, զի պատրաստեն տեարք պանտոկին, |22ա| այսպէս և, զոր ինչ կամի ոք, յեկեղեցւոջ իմաստութիւն և գիտութիւն գտանէ:

Ութերորդ՝ զի պանտոկապան կարգեալ են, այսպէս և յկեղեցի եպիսկոպոսք և քահանայք:

Իններորդ՝ զի զինչս ճանապարհորդաց ի պանդոկապանն հաւատացեալ լինի, այսպէս և գործս մեղաց և արդարոց, առ քահանայսն է հաւատացեալ զի նոյնպէս է պահող և կորուսանող:

Տասներորդ՝ զի վարձ առնու պանդոկապետն, յորժամ զամենայն կատարէ, այսպէս և առաջնորդք եկեղեց[ւոյ], առնուն վարձս յետ ուղղափառ կատարելութեանն[1], վասն որոյ ասէ Տէրն. «**Եթէ [պանդոկապետն] երկու դահեկան եւ տուէ. «Դարմանե՛ա զդա եւ ի միւս անգամ գալուստն ի մեծոյ հաւատոյցիս էեալ»**» *(հմտ. Ղուկ. Ժ. 34-35)*: Վասն որոյ ուրախացեալ առաջնորդք եկեղեցւոյ, ժրացեալք ի գործս բարիս պարտիմք լինել: Զի ահա փոխարէն վաստակոց ձերոց խոստացաւ Տէրն մեր, մի գուցէ ծուլութեամբ և զվատթար գործսն առնելով, զրկիցիմք ի յանճառ բարեացն, և ոչ միայն զրկիցիմք, այլև ի չարիս պահեսցէ զմեզ փոխանակ ուրախութեանն, մանաւանդ զայս օրինակ ետ մեզ Տէր, զի գթասցուք առ միմեանս և զմահ յանձին բերցուք, որպէս նայն, զի և նորին տեսութեանն արժանաւորեսցուք շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք յաւիտեանս. ամէն:

***Հարցումն.*** Զի՞նչ էր որ ասէ Մարիամ. «**...մասն բարի ընտրեաց**» *(Ղուկ. Ժ. 42)*, այսինքն՝ լըսելն: Իսկ ի յայլում տեղոջ ասէ. «**Թէ ոչ լսելիէ օրինացն արդարացուցանէ, այլ առաքելիքն**[2]» *(հմտ. Առ Հռոմ. Բ. 13)*: Մի՞թէ հակառակ է նմին, զի լսելիքն միայն գովին ի Տեառնէ:

---

[1] B, C, E, M, O *ուղղափառ կատարելութեանն* **փխ**. *ուղղապէս կառավարելոյն*:
[2] B, C, M, O *առաքելիքն* **փխ**. *առնելիքն*:

***Պատասխան.*** Պարտ է իմանալ, զի ամենայն իրաց չափող ժամանակաց, գործոց, մտաց տեսութիւնն է, և կամքն՝ յարդարիչ է սոցա, վասն որոյ պարտ է զմիտսն հնազանդեցուցանել, նախ ի ձեռն, որոյ գործի ամենայն ինչ, և զայս ուսանելն առնէ: Եւ դարձեալ, զի ուսանելն առաջին է և գործելն երկրորդ և ամենայն իրաք առաջինն պատուական է, քան՝ զերկրոդն[1]:

Եւ դարձեալ՝ առանց գիտութեան գործն սղալ գտան բազում անգամ: Եւ դարձեալ՝ զի նախ տեսական, և ապա՝ գործնական: Եւ յայսմ ամենայնէ յայտ է, թէ ուսանելն առաջին է և պատուական, քան զգործն: Բայց արդ՝ թէպէտ զուսանելն առաջին ասացաք, բայց զգործն ցուցանէ զուսումն, զի առանց գործոց ոչինչ են, զոր աւրինակ արուեստաւոր ինչ, յորժամ զարուեստն գործէ, յայնժամ շահի ի նմանէ, քան թէ ի մտի ունիցի, այսպէս և ամենայն ուսումն գիտութեան և առաքինութեան, թէ գործ է, ապա՝ առնու զշահ աշխատանաց ուսմանն, իսկ եթէ ո՛չ առնէ, ո՛չ ունի ինչ վարձ[2] նա, թեև տանջանս մեծ ա[ռ]նու գիտողն, և ոչ առնողն, որպէս ասէ. «**Ծառայ, որ գիտէ ըղ|22բ|կամս Տեառն եւ ոչ պատրաստիցէ՝ առցէ գան բազում**» *(հմմտ. Ղուկ. ԺԲ 47)*, ուստի յայտ է, թէ առնելիք աւրինացն արդարացուցին, և ոչ՝ լսելիքն: Բայց աստ Տէրն վասն երեք պատճառի գովեաց զլսելն:

Նախ՝ վասն այն, զի Մարթայ աշխարհաւրէն, և ոչ՝ հոգևորապէս կայր ի սպասաւորութեանն: Զոր աւրինակ, որք զսիրելի բարեկամսն աւելի պատուեն, և զօտարացն՝ ոչ ունին փոյթ, վասն որոյ Տէրն գովեաց զլսելն բանիւքն զայնպիսի գործն: Երկրորդ՝ զի երախտիս մատոյց Մարթայ, վասն սպասաւորութեանն: Երրորդ՝ զի արհամարհեաց զՄարիամու ուսանելն, վասն այն անարգեաց Տէրն զնա և գովեաց զՄարիամուն, զի կամեցաւ ուսանել զառաքինութիւնն և կարգաւ ուղղել զգործն:

---

[1] E չhf *և ամենայն իրօք առաջինն պատուական է, քան՝ զերկրոդն*:
[2] E չhf *իսկ եթէ ո՛չ առնէ, ո՛չ ունի ինչ վարձ*:

# ՈՒԹԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Ոչ ոք իցէ ի յէշՀ մարդ, որոշն իցի բարեկամ, եւ երթիցէ առ նա բարեկամ ի գիշերի եւ ասէ. «Տուր ինՀ երիս նկանակս»» *(Հմմտ. Ղուկ. ԺԱ. Ը)*։

Այս առակս և դատաւորին միապէս խրատեն և ուսուցանեն զմեզ, եթէ բազում պաղատանօք պարտ է խնդրել զԱստուած։ Արդ, վասն զի Ինքն է Տէր և տուող պարգևացն, Ինքն կարևոր համարեցաւ ուսուցանել զմեզ զԻւր սեպհական բնութեան կամսն, զի այլ է կամք մեր, և այլ՝ Նորայն։ Զի մեք ի բազում թախանձելոյ դժուարանամք և զայրանամք, իսկ Նա զայրանայ, յորժամ ոչ բազում բաղձանաւք ստեպ բախեմք և ոչ կարի ժտելով խնդրեմք։ Եւ այս անտի բնաւորեցաւ լինել, զի Նա առատ և ամենեցուն առաջնորդ եդ զպարգևս Իւր, և կամի, զի ամենեքեան յափշտակեսցեն զՆա, և բարկանայ այնոցիկ, որ ոչ բազում յօժարութեամբ փափագեն առնուլ ի նմանէ զպարգևս, այլ կան անշարժ յոչ խնդրելն և մնան թափուր և դատարկ յաստուածայնոցն բարեացն։ Եւ նա, թէպէտ կամի զտալն, սակայն փակէ իրաւամբք յամբարշտաց։ Իսկ եթէ գտանէ[1] յամբարշտութեանց և խնդրեն ունին զայս ընդունել։ Եւ զայս օրինակաւ կամեցաւ յայտնել, զի մեք մարդկային բնութիւնս, որք կամաւ և բնութեամբ, իբրև զքար պինտ ունիմք զտալն[2], և եմք անողորմ բարուք։ Եւ արդ՝ եթէ կրկին անգամ ոք ի մեզանէ իրս խնդրէ՝ բարկանամք։ Արդ, յորժամ առաւել նեղեն զմեզ բազում պաղատանօք, հաւանիմք տալ զխնդրելին, իսկ Նա, որ յամենայնի զխնդրելն կամի և միշտ զտալն, քանի ևս առաւել մեծ խնամակալութեամբ տայ, յորժամ խնդրեմք։

---

[1] B, C, E, M, O *գտանէ* **փխ.** *դառնան*։
[2] B, C, E, M, O *զտալն* **փխ.** *զոչ զտալն*։

Եւ արդ, պարտ է մեզ ուղղութեամբ տեսանել զառակաւորս բանն, զի պատշաճ ունիցի զմեկնութիւնն: |23ա| Արդ, առաջին «*բարեկամ*» մեր կոչի Աստուած: Եւ զի [յատ]կութիւն բարեկամի ունի, Աստուած ցուցից բազում եղանակաւ:

Նախ՝ զի յատուկ է բարեկամին զկենդանի մնալն սիրելոյն կամել, այսպէս և Աստուած կամի, զի ամենեքեան կենդանասցին ի մեղաց և զկենդանիքն արդարութեամբ ոչ կամի մեռանէլ մեղօք, ըստ այնմ. «**Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալն ի չար ճանապարհէն**» *(հմմտ. Եզեկ. ԺԸ 23)*:

Երկրորդ՝ զի յատուկ է բարեկամին զինչս իւր ոչ խնայել նմա, այսպէս և Աստուած յոչնչէ արար զմեզ և իւր ամենառատ պարգևօքն ցոյց զմեզ, ըստ այնմ. «**Զամենայն ինչ հնազանդ արարին երկոյ ոտիցն նորա**» *(գէ՛ս Սաղմ. Ը 8)*:

Երրորդ՝ զի յատուկ է բարեկամին ի նեղութեան օգտակար լինել սիրելոյն, այսպէս և Աստուած յամենայն նեղութիւնս մեր օգնական լինի, ըստ այնմ. «**Տէր ի նեղութեան յիշեցաւ զէնս**» *(Երայ. ԻԶ 16)*, և թէ մինչդեռ ոչ իցէ խօսեցեալ ձեր, ասացից. «**Ահաւասիկ եմ**» *(Երայ. ԾԸ 9)*:

Չորրորդ՝ զի յատուկ բարեկամին է զատելիս բարեկամին ատէլ, այսպէս և զատելիս մեր զսատանայ զԱստուած ատէ ամենևին, ըստ այնմ. «**Տէր ամբարշաւանից հակառակ կայ**» *(Առակ. Գ 34)*:

Հինգերորդ՝ յատուկ բարեկամին տրտմիլ ընդ վիշտ սիրելոյն, այսպէս և Աստուած տրտմի ընդ մեղանչելն մեր, որ է վիշտ հոգւոյն, ըստ այնմ. «**Մի՛ զրդմեցուցանէք զՀոգին Սուրբ**» *(Առ Եփես. Դ 30)*, և թէ. «**Վշտանայ ինչ անդամ, [վշտանան ամենայն անդամք ընդ նմա]**» *(Առ Ա Կորնթ. ԺԲ 26)*:

Վեցերորդ՝ զի յոյս դնելն յատուկ է բարեկամին ի մէջ նեղութեանցն, այսպէս և Աստուած յոյս եղեալ մարդկային սեռին Ադամայ, յորժամ ելեաց ընդդէմ դրախտին, զոր և մարգարէն Դաւիթ ասէ. «**Յիշեա՛ զքան ծառային Քո, որ եւ յուսացուցէր զԱդամ**» *(հմմտ. Սաղմ. ՃԺԸ 49)*:

Եւթներորդ՝ զի յատուկ է բարեկամին ընդ սխալիլ սիրելւոյն քնքշալ, այսպէս և Աստուած քնքշայ մարգարէիւն վասն մեր սխալելոյն, [ըստ այնմ]. «**Լուր երկին, եւ ուշկն դիր երկիր, [զի Տէր խուսեցաւ]։ Որդիս ծն[այ եւ բարձրացուցի, եւ նոքա զիս անարգեցին]։ Ծանեաւ եզն զտիրոջէ իւր, եւ էշ զմսուր [տեառն իւրոյ. եւ Իսրայէլ զիս ոչ ծանեաւ, եւ ժողովուրդ իմ զիս ի միտ ոչ առ]**» *(Եսայի Ա 2-3)*։

Ութերորդ՝ յատուկ է այս փառք բարեկամին խնդրել որքան առաւել բարձրանայ, այսպէս և Աստուած փառաւորեալն մեր այնքան կամի, զի Աստուած արար ի մեր բնութենէս և անզուգական բնութեանն միացոյց, ըստ այնմ. «**Փառօք եւ պատուով պսակեցեր զնա**» *(Սաղմ. Ը 6, Աւետ. Եբր. Բ 7)* և այլն։

Իններորդ՝ զի յատուկ է բարեկամին բարի խրատս տալ սիրելւոյն, այսպէս և Աստուած բարի խրատ տայ մեզ. «**Մի՛ շնանար, մի՛ գողանար**» *(Մատթ. ԺԹ 18)*, և՝ «**Սիրեսցես զՏէր Աստուած քո**» *(Մատթ. ԻԲ 37)* և այլն։

Տասներորդ՝ զի զանձն դնէ ճշմարիտ բարեկամն ի վերայ սիրելւոյ և մահանայ վասն նորա, այսպէս և Աստուած, վասն մեր բնութեանս ամենեցուն մատնեաց զանձն ի մահ, ըստ այնմ. «**Աստուած զՈրդին Իւր ոչ խնայեաց, [այլ՝ վասն մեր ամենեցուն մատնեաց զանձն ի մահ]**» *(Աւետ. Հռոմ. Ը 32)*։ [Եւ Ինքն ասէր]. «**Մեծ եւս [սէր], քան՝ զայս, ոչ ոք ունիցի, եթէ զանձն դիցէ ի վերայ բարեկամաց իւր[ոյ]**» *(Հմտ. Յովհ. ԺԵ 13)*։ Եւ ոչ այսչափ միայն, այլև այլևս գերագոյն և բարձրագոյն զորս ոչ կարէ մարդկային միտք պատմել։

Դարձեալ՝ |23բ| ցուցանէ բանս, թէ յայսքան բարեգործելն Աստուծոյ, մնացին բազումք ի վատթարութեան գործս, այլ անպակաս[1] առնէ, այլ զի և յելսն կենաց խնդրէ, և որքան հնար է ջանայ զփրկութիւն մեր, զի մի՛ ընդ անհաւատսն դասեսցի, վասն որոյ ի ժամ մահուանն մարդն աղաչէ զԱստուած, զի «**Բարեկամ իմ եկեալ**

[1] C, E *անպակաս* **փխ.** *այլ Նայ անյոյս ոչ։*

ասէ յուղղոջ» *(տե՛ս Ղուկ. ԺԱ 6)*, այսինքն՝ պահանջող հրեշտակն, զի և նոքա ունին զայս, քան բարեկամութեան յատկութիւն, որպէս վերոյ ցուցաւ: Այլ՝ ոչ որպէս Աստուած, այլ՝ որպէս ծառայ Տեառն, բայց ի մեղաւորէն գարշին: Իսկ թէ դառնայ մեղաւորն, յոյժ ուրախանան, ըստ այնմ թէ. «**Ուրախութիւն է յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 7)*:

Արդ, եկեալ այսպիսի ուղևոր պահանջող հոգւոյն խնդրէ դնել առաջի իւր սեղան ընդունելութեան զգործսն բարութեանց, և նա թափուր յամենայնի ոչ ունի դնել առաջի: Եւ ժամանակն գիշեր յորում ոչ ինչ գործի: Զի մահն նմանի գիշերոյ: Եւ այս ըստ բազում եղանակի:

Նախ՝ զի երեկունն կատարումն է աւուրն, նոյնպէս և մահն կատարումն է կենացս յայսմանէ:

Երկրորդ՝ զի յերեկոյին դադարեմք ի գործոյ, նոյնպէս և յօր մահուանն՝ յամենայն գործոյ մեղաց:

Երրորդ՝ զի գիշերն լոյսն պակասի, այսպէս և հասանել մահուն սուտակ իմաստութիւնս մեր պակասի:

Չորրորդ՝ զի ի գիշերն հանգչի մարդն, նոյնպէս մարդն յօր մահուն. ըստ այնմ. «**Մահ մարդոյ հանգիպոյ է, [յորմէ ճանապարհն թափեաւ ի նմանէ. զի փակեաց զնովաւ Աստուած]**» *(Յոբ Գ 23)*:

Հինգերորդ՝ զի թէ յաջողուածք լինի ի ցերեկի, երեկունն ուրախանամք, և թէ թշուառութիւնն՝ յերեկոյն տրտմինք, այսպէս, թէ բարիս գործէ մարդն ի կեանս իւր, ի մահուն ճանաչէ զբարի գործս իւր և յուսով յատուցմանն ուրախանայ, և թէ չարիս՝ նոյնպէս տրտմի վասն հանդերձեալ տանջանացն:

Վեցերորդ՝ զի թէ աղքատ և թէ մեծատուն, սակայն ի գիշերին միապէս ննջեն, այսպէս և յօր մահուանն անարգն[1] և հարուստն միապէս մեռանին:

---

[1] B, C, E, M, O *անարգն* **փխ.** *տնանկ*:

Եւթներորդ՝ զի սովորութիւն առեալ մեր տուն շինել և անդ հանգչիլ, այսպէս և ի մահուն հայրենի տունն մեր գերեզմանն է ուր դնին մարմին մեր, ըստ այնմ. «Գ-երեզմանէ պուռնէ նոցա եղիցին» *(Սաղմ. ԽԸ 12)*։

Ութերորդ՝ զի հասեալ մեր ի գիշերն ոչ օգնէ լոյս լուսնին[1], այլ ճրագ առնեմք, այսպէս ի յօր մահուն ոչ օգնեն չարիքս, որք աստ մեզ լոյս երևին։

Իններորդ՝ զի ի գիշերի ննջելն զանցեալսն մոռանամք, այսպէս և ի ժամ մահուն զյետուստ մոռացեալ եմ և յառաջի կայս նկրտիմ։

Տասներորդ՝ զի ննջելով ի գիշերի ակն ունիմք առաւօտուն լուսոյն, այսպէս և ի ժամ մահուն պարտիմք յուսով մեռանիլ և սպասել մեծի լուսոյն գալուստն Տեառն մերոյ։ Զի թէ այսու յուսով ննջեմք, առաւօտուն լսէ մեզ, վասն որոյ մարագարէն ասէ. «**Եւ առ Աւպուռաց կարդացի եւ [Տէր լուաւ ինձ ի վաղորդեան եւ ի հակառակ աւուրք]**» *(Սաղմ. ԾԴ 17)*։

Տասնամեկերորդ՝ զի անհնար է մեզ ոչ ննջել ի գիշերի, այսպէս մարդկային |**24ա**| բնութեանս անհնար է ոչ մեռանել։

Տասներկուերորդ՝ զի ոմն արբե[ալ] ննջէ և ոմն՝ սովեալ, այսպէս և ոմն մեռանի արբեալ մեղօք, և ոմն՝ սովեալ ի չար գործոց։

Տասներեքերորդ՝ զի կատարեալ անդամօք ննջ[եմք] և կատարեալ յառնեմք, նոյնպէս և ի մահուն մեր և յարութեանն։

Տասնչորսերորդ՝ ընդ անուանն գարշեր, այսինքն՝ դառն տարր, այսպէս և մահուն դառն ժամ է, զի մինչև ցայնժամն ոչ է տեսեալ մարդ այնպիսի դառնութիւն։

Տասնհինգերորդ՝ զի յանկարծակի գայ գիշերն, այսպէս և մահուն աւրն, ըստ այնմ. «Զգոյշ լե՛ր, գուցէ ծնար[անայցեն սիրդէ

[1] B, C, E, M, O *լուսնին* **փխ**. *արեգական*։

յեր] շու[այդուրթեամբ] եւ ար[բեցուրթեամբ եւ հոգովէ աշխարհականաւէ], եւ յանկար[ծակի] հասան[իցէ ի վերայ յեր աւրն այն]» *(Զ.ուկ. ԻԷ 34)*:

Իսկ արդ՝ հասեալ յայս ժամ զի՞նչ հնար իցի փրկութեան: Եւ զի ոչ գոյ այլ հնար դառնայ մարդն յառաջին բարեկամն յԱստուած և ի Նմանէ գտանել խնդրէ, զոր կորոյս յանցաւորաւքն: Զի անօրէնքն և չարքն ի հաւատոցն ևս հեռացեալ են, զոր օրինակ, այն որ ընդ մէջն կատարել հրամայեաց, այսինքն՝ եբարձ զանուն քրիստոնեութեանն ի նմանէ, վասն որոյ մատուցեալ աղաչէ առ Աստուած տալ նմա երիս նկանակս, այսինքն՝ դաւանութիւն Սուրբ Երրորդութեանն[1]: Եւ այս վասն հինգ պատճառի:

Նախ՝ զի երեք նկանակն մի բնութիւն հացի ունին, և յերիս անձնաւորութիւնն մի է բնութիւն աստուածային:

Երկրորդ՝ զի զոր մի նկանակն ունի զօրութիւն, նոյն է և երկուքն, այսպէս զոր ինչ Հայր ունի, նոյն է և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, բաց ի հայրութենէն:

Երրորդ՝ զի թէպէտ մին են էութեամբ նկանակքն[2], սակայն զանազանին դիմօք, այսպէս Հայր և Որդի և Հոգի թէպէտ մի են բնութեամբ[3], սակայն այլ է անձն Հօր և այլ անձն Որդոյ, նմանապէս՝ Հոգոյն Սրբոյ:

Չորրորդ՝ զի թէ ոք մի ի նկանակէն, այպանէ կամ արհամարհէ[4]՝ զամենայնս արհամարհէ, այսպէս և[5], թէ ոք զմի յերրորդութենէն ուրանայ՝ զերրորդութիւնն ուրանա, զի երեքեանն մի Աստուած են:

---

[1] C, E *այսինքն՝ դաւանութիւն Սուրբ Երրորդութեանն* **փխ**. *որ է խոստովանութիւն յերիս անձինս և ի մի փէրութիւն և բնութիւն: Եւ զի՞ օրինակ է եդ զերիս նկանակս Երրորդութեան*:

[2] C, E **են** *էութեամբ նկանակքն* **փխ**. *են և բնականքն*:

[3] C, E *բնութեամբ* **փխ**. *բնութեամբ և գոյութեամբ*:

[4] C, E *մի ի նկանակէն, այպանէ կամ արհամարհէ* **փխ**. *զմի նկանակն այպանէ կամ կոխոտէ*:

[5] G **չիք** *այպանէ կամ արհամարհէ՝ զամենայնս արհամարհէ, այսպէս և*:

Հինգերորդ՝ զի հացն կենդանութիւն է մարդոյս, ըստ այնմ. «*Հաց հասպատպէ զսիրտ մարդոյ*» *(Սաղմ. ՃԳ 15)*, այսպէս դաւանութիւն Սուրբ Երրորդութեանն կենդանութիւն է հոգւոց մարդկան:

Դարձեալ՝ զի՞ «*երեք*» ասաց թիւ տալ իմանալ զերիս անձնաւորութիւնս: Իսկ «*նկանակ*» ասելով՝ զիաղորդութիւն մարմնոյ և արեան Տեառն մերոյ ցուցանէ, վասն որոյ մաղթէ բարեկամին, զի մի՛ զրկեալ լիցի: Իսկ որ առատն է ի տուրս, հինգ ինչ ուսուցանէ ի չտալն:

Նախ՝ հրաժարեցուցանէ զխնդրողն, իբր թէ [չէ] արժան այնմ շնորհին:

Երկրորդ՝ ցուցանէ զմեծութիւն պարգևին, վասն որոյ պարտ է սրբութեամբ ընդունել զնա:

Երրորդ՝ զի բազում պաղատելովն և աղաչելովն արժանացուցին շնորհին:

Չորրորդ՝ զի ողորմութեամբ ցուցանէ զտալն և ոչ՝ արդարութեամբ, զի այսպէս ասէ մարգարէն. «**Յողորմութիւն եւ յիրեանս հասպատպել է պիտուռ**» *(տե՛ս Սաղմ. ՁԸ 15)*:

**|24բ|** Հինգերորդ՝ զի հնար ուսուցանէ մեզ հանդիպիլն ի ժամ մահուանն[1] այնմ շնորհին, վասն որոյ հրաժարէ ասելով. «**Դուրբէս փակեալ են**» *(Ղուկ. ԺԱ 7)*:

Իսկ «*դուրք*» նախ՝ զժամանակ ապաշխարութեանն ասէ, զի յայնժամ հասեալ ոչ կարէ ապաշխարել: Եւ ընդե՞ր ոչ կարէ: Զի ապաշխարութիւնն ի ձեռն մորմնոյն լինի, որովք զմեղքն գործեաց: Արդ, նա ի յայն ժամու անշարժ լինի, զի աչօք ոչ կարէ լալ և արտասուել, բերանովն ոչ կարէ խօսել, կամ աղօթել, կամ պահել, ձեռօքն ո՛չ կարէ ողորմութիւն առնել, վասն որոյ փակեալ է ապաշխարութեան ժամանակն:

[1] G չhf *ի ժամ մահուանն*:

Երկրորդ՝ «*դուռն*» զողորմութեանն ասէ, զի մինչ ի մարմնի եմք, առատ[1] է ողորմութիւնն Աստուծոյ, իսկ յետ կենացս այս՝ ոչ ևս: Եւ թէպէտ յայն ժամու դեռևս ի մարմնի էր, սակայն ելքն ի մարմնոյն մերձեալ էր:

Դարձեալ երկու ինչ Աստուած եդեալ է մարդկայինս բնութեան: Նախ՝ զի ժամ մահուանն իմանայ զինքն, թէ արդար է, թէ՝ մեղացեալ: Եւ երկրորդ՝ զի իմանայ զհատուցումն գործոց իւրոց, թէ որպիսի տանջանք է պատրաստեալ Աստուած նմա, կամ պսակ, որ առնու ի հանդերձեալ ատենին: Վասն որոյ իմացեալ բախէ հոգին յայսմ կենդանութեան, զի մի՛այն չարին պատահեսցի:

Իսկ Աստուած ասէ. «**Մանկուշէս ընդ ին ես եւ ես յանկողնի**» *(Ղուկ. ԺԱ 7)*:

«*Մանկունք*» զազատեալսն ի մեղաց ասէ զսուրբսն: Իսկ «*անկողին*»՝ զարքայութիւն կոչեաց զոր յայլում տեղւոջ «*գոգ*» ասաց: Եւ զի՞ զսուրբսն «*մանկունս*» կոչէ:

Նախ՝ զի մանուկն անմեղ է, այսպէս և սուրբքն՝ ազատէն ի մեղաց:

Երկրորդ՝ զի մանուկն միշտ ի գիրկս մօրն և յանկողնի հանգչի, այսպէս և սրբոց բնակութիւնն առ Աստուած է, ըստ այնմ. «**Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ է**» *(գե՛ս Երգ երգոց Գ 1)*:

Երրորդ՝ զի մայրն ոչ երբեք կարէ հոգալ ի միտս կորուսանել զզաւակ իւր, թէպէտ կարի լիրբ իցէ[2], այսպէս և Աստուած ոչ կամի կորուսանել զստեղծածս Իւր, այլ՝ յամենայնի կամի խնամք առնել մինչև ցյետին շունչն:

Չորրորդ՝ զի կատարեալ սէրն այն է, զոր ունի մայրն առ մանուկն, այսպէս գերակատար սիրով միացեալ է Աստուած ընդ սուրբսն, ուստի ոչ գոյ բաժանումն, ըստ այնմ. «**Ոչ ոք կարէ հանել**

[1] C, E *առատ* **փխ.** *ասպ*:
[2] G **չիք** *թէպէտ կարի լիրբ իցէ*:

**զնոսա ի յեռաց իմոց»** *(հմմտ. Յովհ. Ժ. 28)*, զնոյն ցուցանէ, զի ասէ «*յանկողնի*», զի անկողին է, յորում միաւորութիւն ընդ սիրելեաց:

Հինգերորդ՝ զի մայրն ուրախանայ ի վերայ որդւոցն, իբր թէ զնոսա որդիս ունի, այսպէս և Աստուած՝ ի վերայ սրբոց իւրոց ուրախանայ միշտ, որպէս ասէ յառակին. «**Ակամն ուրախ լինել**» *(Ղուկ. ԺԵ 24)*:

Իսկ ի արդար հատուցմանն ոչ ինչ է արժան տալ նմա: Բայց վասն երկուց իրաց յարուցեալ տայ:

Նախ՝ վասն խնդրելոյն և ժտելոյն, և ապա՝ վասն Իւր ողորմած Բնութեանն, [զի վասն այսր գործոյ ողորմած կոչի Աստուած, և ոչ այն միայն, զոր խնդրէ, այլ՝ զոր ո՛չ խնդրեաց, վասն որոյ ասէ]. «**Յարուցեալ տայ, զոր ինչ ե՛ւ պիտոյ իցէ**» *(հմմտ. Թիւք ԺԵ 10)*:

Եւ այս կարի մեծ երանութիւն է մեզ մեղաւորացս, զի մի ոք անյոյս լիցի ի խնդրելն զայսպիսի:

Եւ զի ամենևին բարի է Աստուած, ամենևին կատարեալ շնորհէ զողորմութիւն Իւր և ոչ թերակատար, զի ահաւասիկ ոչ միայն զհաւատոյն բանն շնորհէ, այլև զմեղացն՝ թողութիւն: Բայց ժտելն կարի մեծ պարտ ի լինել և տաժանելի, վասն զի անչափ զղջումն պարտ ի լինել[1], վասն որոյ այնչափ բարի գործէ, մինչև զամենայն տայ:

Դարձեալ՝ զի առակէ բանս ունի և շրջել և յայլ եղանակս բանից: Զի զոր ասացաք առ Աստուած բարեկամս, զնոյն յաւելուն ի միտս և են բարեկամ հոգին և մարմինն[2] այն, որ ի ժամանակս յայս կայ անօրէնութեամբ: Ի գալ պահանջողին մաղթէ հոգին առ միտսն, իսկ նա անյուսացեալ, զի դրունք ապաշխարութեան փակեալ են, և ժամանակն կարճեալ և սգայարանքն փակեալ, ընդ որ ելանեն արտօսրն, որք լուանան զնեխեալ և զփտեալ վէրսն, և մանկունք մեղացն ընդ մտացն, որ է խղճմտանքն այն, որոյ յղա-

[1] Ε *վասն զի անչափ զղջումն պարտ ի լինել* **փխ**. *այսինքն՝ անչափ զղջումն*:
[2] C, E *մարմինն* **փխ**. *միտքն*:

ցաւ զցաւս և ծնաւ զանօրէնութիւն: Եւ զայս պատասխանի տայ միտքն հոգւոյն, ի ներքուստ կուսէն[1], ի տկարացեալ մարմնոյն: Իսկ հոգին ստիպէ, զի մի՛ ընդ անհաւատսն կորիցէ:

Եւ այսպէս ի ժտելն զհաւատն ի միտքն տայ, և ոչ միայն զբան հաւատոյն, այլև զամենայն մեղաց զխոստովանութիւն:

Արդ՝ առաջինն է կարի մեծ, զի կարգաւ ժամանակին ապաշխարիցէ: Նմանապէս և այս փրկական բանք են, զի թէ չէին իւրեանց աւրինակ այսոքիկ բանք, ոչ էր ասացեալ Նա, որ ասաց. «**Երկնի եւ երկրի եւ եղեալ**» *(Հմմտ. Ծննդ. 6-8)*, և թէ. «**Իր երկինքն է եւ երկիր անցեալ, եւ բանք Իմ մի՛ անցցեն**» *(Հմմտ. Ղուկ. ԻԼ 33)*: Ուստի յայտ է, թէ վայրապար և ձրի ոչ խօսեցաւ Նա: Եւ զայս բանիս ճշմարտութիւն յայտնէ յետս որին ասացեալք բանքն ի Տեառնէ, քանզի օրինակ դնէ և վկայ բանից զմարմնաւոր ծնող և զորդի ասելով. «**Ո՞ ոք ի յէՆՁ խնդրէ որդի իւր հաց, մի՞թէ քար տացէ նմա**» *(Հմմտ. Մատթ. Է 9)* և այլն: Եւ թէ դուք, որ չարքդ էք, գիտէք պարգևս բարիս տայ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն ձեր երկնաւոր և բոլորեցունց, որ բարի է բնութեամբ, տայ պարգևս բարիս այնոցիկ, որ խնդրեն ի նմանէ:

Եւ զի լուաք ի պատմութեանց, թէ ոմն աղքատ խնդրեաց հաց ի յԱղէքսանդրէ տիեզերակալէ, և նա հրամայեաց տալ նմա քաղաք մի, քանզի ասէ, թէ. *«Թէպէտ նա չէ՛ արժան մի քաղաքի, և ինձ՝ ոչ արժան տալ հաց մի, քանզի աշխարհս իմ է»:*

Արդ՝ նա, որ անօրէնն էր և մասնաւոր թագաւոր, այսպէս անպատշաճեցոյց, որում և Աստուած կատարեալ Տէր է և թագաւոր երկնի և երկրի, մանաւանդ, թէ առատ է ի տալն, զի ոչ եթէ ըստ արժանաւորութեան տայ, այլ՝ որպէս վայել է Իւր Աստուածութեանն: Զի թէ ըստ արժանաւորութեան տայ[2], ապա վա՛յ էր մեզ,

---

[1] C *կուսէն* **փխ.** *ի տկարացեալ:*

[2] E **չիք** *այլ՝ որպէս վայել է Իւր Աստուածութեանն: Զի թէ ըստ արժանաւորութեան տայ:*

քանզի և ոչ հայելոյ եմք արժանի յանբաւ ողորմութիւն Նորա: Բայց անճառ գթութեամբն շնորհէ, որ ոք և խնդրէ, վասն որոյ և մեք ծնկեալք հոգւով բղխմամբ արտասուաց և զղջմամբ սրտիւ անկցուք առաջի Նորա բարերարութեան, զի զմեզ արժանի արասցէ ողորմութեան Իւրոյ, ժամանել մեզ անտրտում ուրախութեանցն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր:

***Հարցումն.*** Զի՞նչ է գեղեցկութիւն հասակի[1] մարդոյն:

***Պատասխանի.*** Չորք են:

Նախ՝ զի մասունք անդամոցն պատշաճ լինի՝ ոչ խաժ, ոչ արծըռունգն, ոչ կարճունչ և այլն, և ձեռք և ոտք և այլն:

Երկրորդ՝ զի ոչ լինի երկայն մարմնով, որ անհեդեդ երևի տեսողացն, և ոչ կարի փոքր, որ է արհամարհելի, այլ՝ միաչափ, այսինքն՝ երեք կանգուն:

Երրորդ՝ զի պատկերն զուարթ լինի և հրաշալի տեսողացն, որ է կարմիր և սպիտակ, յունօք և այլօք:

Չորրորդ՝ զի իբր երկրորդաբար քաղցր լեզուն և հրաշալի բանքն, որ և զայս ամենայն ունէր Տէրն, և առաւել, քան զոր ասեմս, և որպէս Նմա վայել էր: Եւ զի զայսոսիկ մարգարէն ասէ. «**Գեղեցիկ է գեսուՐեամբ, քան զամենայն որդիս մարդկան**» *(Հմմտ. Սաղմ. ԽԴ 3)*, վասն որոյ տեսեալ կնոջն զայսպիսի գեղահրաշ կերպարն աղաղակեաց. «**Երանի՛ որովայնին, որ կրեացն զքեզ եւ սպեանց, որք դիեցուցին զքեզ**» *(Հմմտ. Ղուկ. ԺԱ 27)*:

Արդարև որովայնին երանի, զի թէ երանի տեսողացն զՆա: Ուրեմն յայտ է, թէ նա ևս երանելի է, որ կրեացն զՆա մարմնապէս: Բայց տե՛ս, զի Տէրն զնոյն երանութիւնս ամենեցուն պարգևեաց, այսինքն՝ նոցա, որ լսեն զԲանն Աստուծոյ և առնեն, քանզի գիտէր, եթէ բազումք հասանելոց էին այնպիսի շնորհացն:

---

[1] Ե չիք *հասակի*:

# ԻՆՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Լռեն յորում մեծապան եպուշն անդէ պոհմականէ» *(Համպ. Ղուկ. ԺԲ 16)* խորհեցաւ ի միտս իւր և ասէ:

Բարերարն մեր և ազատիչն յամենայն անօրէնութեանց Յիսուս: Զայս օրինակ եդ առաջի, զի ուսցուք մեք, և զանձինս մեր ազատեսցուք ի չար ծառայութենէ ագահութեանն, վասն զի խնամք տեսչութեանն Աստուծոյ չառնէ անտես բնաւ զոք, զի թէ աղքատացուցանէ զմեզ, սակայն վասն Գ. (3) պատճառացն:

Նախ՝ փորձէ զմեզ, թէ ժուժկալ եմք և համբերողք ի յաղքատութիւնն, թէ՝ ոչ:

Երկրորդ՝ թէ չարանամք ի յաղքատութեան ի մէջն, թէ՝ ոչ:

Երրորդ՝ թէ կարճամիտք և դիւրակործան եմք, թէ՝ ոչ:

Նոյնպէս թէ և մեծութիւն տայ]»[1]:

**|25ա|** Եւ այն ևս երեք պատճառի:

Նախ՝ փորձ է, թէ չար ինչ գործեմք[2], թէ՝ ոչ:

Եւ երկրորդ՝ թէ յինչսն ամբարտաւանիմք, որ փոփոխական է և ոչ հաստատուն:

Եւ երրորդ՝ զի զԱստուած առնէ ընչիցն տուող, թէ զինքն քաջութիւն:

Արդ, են վկայք բանիցս առաջինք նահապետք, որ փորձեացն և ընտիր գտան, նմանապէս և նոքա որք վատթար գտան և տկարք: Եւ ունիմք այսոցիկ օրինակ զԱբրահամ, զոր Աստուծո հրամանաւ[3] եհան ի հայրենի ժառանգութենէն և ած յերկիրն քանանացւոց:

---

[1] *ՄՄ 2519 թափուած, սույն հատուածը վերականգնուած է ըստ ՄՄ 2518, թ. 30ա-31ա. «զի վասն այսր գործոյ ողորմած կոչի Աստուած, և ոչ այն միայն... թէ կարճամիտք և դիւրակործան եմք, թէ՝ ոչ: Նոյնպէս թէ և մեծութիւն տայ»:*

[2] C, E *գործեմք* **փխ**. *գործեմք մեծութեամբն*:

[3] C *հրամանաւ* **փխ**. *հիմն*:

Եւ ասէ. «**Թեզ տայ զերկիրս զայս**» (**պե՛ս Ծննդ. ԺԲ 7**), և փոխանակ տալոյ ժառանգութիւնն՝ ած ի վերայ նորա վտանկք սովու, զի վասն նեղութեանն մտին յԵգիպտոս: Եւ քանզի զոյգ սովոյ մեծ վտանկ նմա այն էր, զի զկին խլեաց փարաւոն, սակայն արդարն կայր ամենայնիւ ի հասատութեան և ոչ տարակուսէր ընդ այն: Դարձոյց[1] այնուհետև զփորձութիւնսն ի հեշտալիսն և ի փառաւորագոյնսն, զի ետ նմա դարձեալ զկինն բազում ստացուածովք, և Աստուած զնա դարձեալ ի նոյն գաւառ, և այնքան մեծացոյց, մինչ զի իւր ընդոծին ծառայիւքն զգերիչն սոդոմայեցւոց կատարեաց[2], և զաւարն դարձոյց, և չկամեցաւ առնուլ բնաւ ինչ ի յաւարէ անտի, այլ մնաց անըմբըռնելի յայսպիսի կրից, յաղագս որոյ ասէր. «**Զգեցեալ յեռն իմ առ Աբրահամ**» (**պե՛ս Ծննդ. ԺԴ 22**), զի շաղամաթէ միոջէ մինչև ցխրացս կաւշկաց մի ոչ առից:

Երկրորդ՝ ունիմք օրինակ զՅոբ, զի յայնչափ փառսն առաւել ոչ հեշտացաւ և ոչ ամբարտաւանեցաւ: Եւ յորժամ եբարձ ի նմանէ[3] զմեծութիւնն և զորդիսն ոչ զայրացաւ կամ երկմտեցաւ և ոչ ետ անզգամութիւն Աստուծոյ, այլ այնպէս երկոքումբք անպարտելի մնաց, այսինքն՝ գտաւ: Վասն այսորիկ կրկնապատիկ ետ նմա Աստուած զինչսն և զչափ որդոցն և ևս առաւել բարձացոյց[4]:

Դարձեալ, ըստ այնմ օրինակի են բազումք, որ ի նեղութիւնս և ի դժնդակ կիրս, հէք և թշուառական համարին զանձինս, իբրև զայնոսիկ, որ ո՛չ իցէ Աստուած: Դարձեալ են, որ մեծացոյց և նոքա յուսացան ի մեծութիւնս և մոռացան, թէ է Աստուած, որ մեծացուցանէ և աղքատացուցանէ և այնքան խրեալք ի սեր ընչիցն, մինչև խաւարեալք յախտից ցանկութեանց անյոյս եղեն յաստուածային փառացն և ի մեծութենէ անտի, որ արդարոցն պահեալ է յերկինս:

---

[1] C, E *դարձոյց* **փխ**. *դարձոյց Աստուած*:

[2] C, E *կատարեաց* **փխ**. *կոտորեաց*:

[3] E *ի նմանէ* **փխ**. *ի նմանէ Աստուած*:

[4] G **շիf** *Եւ յորժամ եբարձ ի նմանէ զմեծութիւնն… և զչափ որդոցն և ևս առաւել բարձացոյց*:

Զոր օրինակ այրս այս զոր Տէրն նովաւ զարհուրեցուցանէ զագահսն և զթմրեալսն արծաթսիրութեան ախտին: Եւ գիտեալ է, զի ագահութինն մի է յէ. (7) մահու չափ մեղացն: |25բ| Եւ ոչ միակերպ է ագահութիւնն, այլ՝ զանազան և բազմապատիկ:

Նախ՝ կոչի ագահութիւն, որ զընտանիսն զրկէ ի հայրենեացն ընչից և յայլոց նմանեաց:

Երկրորդ՝ որ զաւտարն զրկէ ի յիւրոց հալալ արդեանցն, կամ ի վաճառս և կամ յայլ իրս:

Երրորդ՝ կոչի «ագահ» նա՛, որ զիւր ինչս որ արդարութեամբ ստացաւ, հաստատէ զմիտսն առ նոսա, թէ այս ի՛մ է, և այլում ո՛չ տաց:

Չորրորդ՝ է ագահ, որ ի յինչսն յուսայ, իբր թէ ինչքն փրկեսցէ զնա յամենայն որոգայթից, վասն որոյ ասէ Սողոմոն. «**Ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան**» *(Առակք ԺԱ 4)*:

Հինգերորդ՝ կոչի «ագահ», որ բազում ուտէ և քան զչափն ի վեր, վասն որոյ առաքեալն. «**Լալով ասէ թշնամիք են խաչին Քրիստոսի**» *(տե՛ս Առ Փիլիպ. Գ 18)*:

Վեցերորդ՝ զի գողութիւն է ագահութիւն, զի զորս ոչ կարաց յայտնի տանել՝ գաղտնի տանի:

Եւթներորդ՝ ագահութիւն է, որ շահ առնու ի վերայ փոխոցն, զի ընդդէմ է աստուածային պատուիրանացն:

Ութերորդ՝ է ագահութիւն մատնելութիւնն, զի կամի զարիւն մարդոյ ըմբել, զի կատարեալ մարդասպանութիւն է:

Իններորդ՝ սուտ երդմնահարութիւնն, որ վասն ընչիցն, վասն որոյ ասէ. «**Լամեն եւ ին մի՛ երդնուր**» *(տե՛ս Մատթ. Ե 34)*:

Տասներորդ՝ անհանգստութիւնն, որ ո՛չ կամի հանգչել ի չարչարանաց, այլ՝ յամենայն ժամ կամի ժողովել, կուտել և կուռս շինել, որպէս այրս այս, որ ասէ. «**Որոյ եղուն անդէ պոհմականէ**» *(տե՛ս Ղուկ. ԺԲ 16)*:

Բայց աստ է տարակոյս ինչ, զի ոմանք ընդդէմ բերեն՝ ասելով. եթէ Աստուած առնէ զբազմութիւն պտղոցն, ապա և պատճառ նա է ագահութեան ախտին, զի Նա բազում տայ, վասն որոյ Նա ժողովէ: Զի թէ փոքր էր տուեալ, ոչ անկաներ այրն այն ի մահու չափ մեղս: Զոր օրինակ պատասխանեսցուք, թէ ի կամսն Աստուծոյ ոչ գոյ նշան չար առնելոյ ամենևին, զի զամենայն, զոր ինչ առնէ, վասն բարեաց խորհրդոց առնէ, ըստ այնմ. «**Զոր ինչ արար Աստուած եւ ահա բարի են յոյժ**» *(Ծննդ. Ա. 31)*:

Նմանապէս և բազմացուցանելն արմտեացն առնէ վասն Բ. (2) պատճառի:

Նախ՝ զի օրինակ տայ զերկիր, զի որպէս նա զիւր բարութիւնն աճեցուցանէ, նմանապէս ասէ և դուք աճեցուցէք ի ձեզ զբազումապատիկ առաքինութիւնսն, զի և մեք երկիր եմք աստուածային բանին ընդունակութեան, ըստ այնմ. «**Եւ սերմանայսն սերմանել**» *(Մարկ. Դ. 4)*: Վասն որոյ ասէ մարգարէն. «**Տեսէէ յերկինս ի վերս եւ յերկիր ի խոնարհս**» *(տե՛ս Եսայի Ե 30)*, զի լինիցիք մշտաշարժ ի բարին իբրև զերկինս և հաստատունք ի նոյն բարիս, որպէս երկիր: Իսկ մարդիկ առեալ զմեծութիւնն յԱստուծոյ կամակոր մտօք մերձենան ի մեղս մահու չափս, ապա և ոչ է պատճառ մեղացն |26ա| Աստուած, այլ՝ անձընիշխան կամք մարդոյն:

Եւ երկրորդ՝ զի թէ ոչ տայ Աստուած զաճեցումն պտղոյն, ասեն թէ իրքն, թէ չկամէ Աստուած[1], զի ոչ կամի այլոց մեծութիւնն, վասն որոյ տայ աջողումն ամենայն իրաց նոցա, զի ափ ի բերան լինիցին, յորժամ ոչ կարիցեն տանել մեծութեանն:

Եւ դարձեալ՝ տայ Աստուած զինչս մարմնականս, զի նովաւ գնեսցեն զարքայութիւնն, ըստ այնմ. «**Արարէէ չեչ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան**» *(Ղուկ. ԺԶ 9)*, զի յորժամ պակասեսցի այս՝ ընդունիցին զձեզ յարկսն յաւիտենից: Իսկ այրս այս զդիմակն աս-

[1] Ե *թէ իրքն, թէ չկամէ Աստուած* **փխ**. *թերիքն, թէ չկայ Աստուած*:

տուածային կամացն արար, զի ոչ սփռեաց և ետ աղքատ, զի արդարութիւն նորա մնացեալ էր յաւիտեանն: Այլ ասէր ի միտս իւր՝ զինչ արարից *(տե՛ս Ղուկ. ԺԲ 17)*։

Եւ արդ՝ տե՛ս, զի աստ հաւասարք են մեծատունք և աղքատք, զի աղքատքն հոգան, զի կերակուր գտանիցեն, և մեծատունք, թէ ուր ժողովեսցեն զինչսն: Աստ արդարացաւ ասելն, թէ. «**Հաւատպա-ցելոց ամենայն երկիր լի է քարոզութեամբ, եւ անհաւատին ոչ դանկ մի**» *(Ի՛սայ. ԺԷ 4)*, քանզի աղքատ և ծառայ է ամենայն ոք, որ ախտիւ կապեալ իցէ, թէպէտ և տէրից է ամենայն ընչից, ըստ այնմ. «**Որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց**» *(Յովհ. Ը 34)*։ Զի զի՞նչ աւգուտ է ի փարթամութենէն, յորժամ աղքատ ի նման կարօտութեամբ չարչա-րի: Եւ ցուցից, զի աղքատն հանգիստ է, քան զմեծատունն բազում եղանակաւ:

Նախ՝ զի աղքատն վասն մին բերանոյ կերակրոյ հոգայ, իսկ մեծատունն՝ վասն բազմաց:

Երկրորդ՝ զի աղքատն հարկաւորաւն բաւականայ, որ դիւրաւ գտանին, իսկ մեծատունն՝ զվայելչականն, որ դժուար կրիաք ժողովէ:

Երրորդ՝ զի փոքր ունի աղքատն զտկարութիւն մարմնո[յն] վասն փոքր կերակրոյն, իսկ մեծատունն առաւել է ախտք և ցաւք ի մարմինն կրիս և այլք, և այն վասն բազում և [ան]յագ զամենայն ինչ ուտելոյն:

Չորրորդ՝ զի աղքատն ոչ հոգայ վասն գողոց, այլ հանգիստ ննջէ, իսկ վասն մեծատունն ո՛չ կարէ ճշմարտապէս ննջել, վասն երիւղի գողոցն, թէ յայսմ ժամու կտրեն զտունն, և թէ միւսն՝ այլ[1]:

Հինգերորդ՝ զի աղքատն ինքեամբ միայն կարէ ապրել միայն, իսկ մեծատունն՝ ոչ, այլ պիտոյ է նմա բազում օգնական, զի ըստ այսմ կոճղ է մեծատունն կամ անդամալոյծ:

---

[1] G չիf *թէ յայսմ ժամու կտրեն զտունն, և թէ միւսն՝ այլ:*

Վեցերորդ՝ զի աղքատն ի նեղութեան ժամանակին հեշտաւ փախչի և ի ճանապարի ոչ վախէ, ըստ այնմ. մերկք յաւազակաց ո՛չ երկնչին: Իսկ ի լինել խռովութեանցն մահն հասեալ է մեծատանն, |26բ| զի կողոպտեն և սպանանեն:

Եւթներորդ՝ զի աղքատն ի կապանաց ոչ երկնչի, որ վասն ընչից, զի բազում աղքատ ի հանգիստ ի քուն, իսկ զմեծատունն ըմբռնեալ, և[1] մինն տանջէ Ռ. (1000) խնդրելով և միւսն բեւր և այլն:

Ութերորդ՝ զի աղքատն կարէ Ծ. (50) աւուր ճանապարհ գնալ հետիոտս բոկ, իսկ մեծատունն՝ և ոչ ժամ մին, թէ պատահէ գնալ: Եւ ևս յայտնագոյնս աստ է տեսանել, զի մեծատունն աղքատին սգեստիւն զերծանի ի թշնամեաց, և թէ իւր սգեստիւն կենայ ըմբռնեալ տանջի, զի մատն[իչք են նմա] զգեստքն[2]:

Իններորդ՝ զի ամենայն օրէնք ի վերայ մեծատանն հա[ր]կեն՝ ողորմութիւն, պահք, արտասուք[3], վասն մեծամեծ մեղացն շահ առնելոյն, զրկելոյն և այլոց: Իսկ աղքատին ո՛չ գոյ ամենայն, զի միշտ ի պահս է և առաքինի, և ոչ ոք զրկէ կամ ստէ, վասն որոյ և արդարոց օրէնք ո՛չ գոյ, զի կատարեալ են:

Տասներորդ՝ զի աղքատն ոչ ունի երկիւղ այնմ տանջանաց, բայց երանութիւն, ըստ այնմ. «**Երանի աղէտապայ հոգւով**» *(Մտթ. Ե 3)*, իսկ մեծատանն գոյ, զի ասէ. «**Վա՛յ ձեզ մեծատունք, զի ընկալայք զմխիթարութիւնն ձեր**» *(Համա. Ղուկ. Զ 24)*:

Արդ, ահա ճշմարտապէս ցուցաւ, զի աղքատն է ամենայն ի տէր զաշխարհիս, ինչս արհամարհեալ է[4], քանզի ի վեր անցանի այնպիսին, քան զամենայն սգալիսս և երանելի կեանս ստանայ առանց հոգոց և ցաւոց, որ զմիտս չարչարեն: Իսկ այրս այս ոչ

---

[1] Ե *ըմբռնեալ, և* **փխ**. *կալեալ կապեն և կտրեն*:

[2] Ե **չիք** *զի մատն[իչք են նմա] զգեստքն*:

[3] Ե *արտասուք* **փխ**. *աղօթք, արտասուք*:

[4] Ա *աղքատն է ամենայն ի տէր զաշխարհիս, ինչս արհամարհեալ է* **փխ**. *ազատ է նա և ամենայնի տէր, որ զաշխարհի ինչք արհամարհէ*:

կամեցաւ ազատել զինքն ի չարչարանաց, այլ սկսանի յաշխատանք և ի չարչարանք սկիզբն առնէ մեծամեծ տներ շինել և ամբար, զի ժողովեսցէ բազում տարեն կերակուր:

Եւ զիա՞րդ այրս այս, այլև ի մերում ժամանակի տեսանեմք, զի չգրեն ոչ ինչ զայնչափ աշխատանք, որ վասն մեղաւոր[1] ցանկութեանց[2]:

Իսկ թէ խրատ տամք, թէ մի փող յաղքատ տուր և ահա մեռանի[3], և թէ եկեղեցի յիշենք քար քարշեն: Այլ՝ ըստ նմանութեան առնս ասեն ի մտի. «**Դիպեա՛ զինչ արարից. էակեցից զբշրեա՛[արան իմ]՝ եւ այլեւս մեծ[ամեծս] շին[եցից, եւ անդր ժողովեցից զյորեան եւ ամենայն բարուքիւնս իմ], եւ ասասցից ցանչն [իմ], անչն [ունիս բազում բարուքիւնս համբարեալ ամաց բազմաց, հանգիր, կեր, արբ եւ ուրախ լեր]**» *(տե՛ս Ղ.ուկ. ԺԲ 18–19)*:

Եւ արդ յիմարութիւն սորա բազում է:

Նախ՝ զի խորհեցաւ, թէ պակասեաց յերկրէ զաւրութիւնն, և այլ ոչ տայ պտուղ, վասն որոյ ասէ՝ «**ժողովեցից**» *(Ղ.ուկ. ԺԲ 18)*:

Երկրորդ՝ զի ապաւէն ինքեան զայն չափն արար, որ այն ժամուն կայր, վասն որոյ ասէ. «**Ունիս բազում բարուքիւնս**» *(Ղ.ուկ. ԺԲ 19)*:

Երրորդ՝ զի ասաց թէ այս որչափ կենդանի եմ բաւական է ինձ, վասն որոյ ասէ. «**ամաց բազմաց**» *(Ղ.ուկ. ԺԲ 19)*:

Չորրորդ՝ զի ասաց ի մտի, թէ որք ոչ են ամբարեալ կորչելոց են և ես միայն մնալոց եմ, վասն որոյ ասէ. «**Կեր արբ՝ եւ ուրախ լեր, զի դու յաշխարհի ես մնալոց**» *(հմմտ. Ղ.ուկ. ԺԲ 19)*:

Հինգերորդ՝ զի ինքն առ ինքն խորհեցաւ, և ոչ Աստուած արար կցորդ իւրոցն խորհրդոյ, վասն որոյ ասէ Աստուած՝ «**Ընդիպ**» *(Ղ.ուկ. ԺԲ 20)*:

---

[1] C *մեղաւոր* **փխ**. *մարմնոյ*:
[2] G **չիք** *զի չգրեն ոչ ինչ զայնչափ աշխատանք, որ վասն մեղաւոր ցանկութեանց*:
[3] E *և ահա մեռանի* **փխ**. *մահու չափ դժարանայ*:

Նոյնս է խորհուրդ, որ այժմ յաշխարհի գիրկս արկեալ են և զինքեան միայն խնդրեն ի վերայ յաշխարհիս մեծ: Իսկ որք կամին զուղիղն ընթանալ, ճանապարհ երկու ինչ պարտ է առնել:

**|27ա|** Նախ՝ զի չափ պիտոյիցն հարկաւորաց բաւական ունել ինքեան առ ժամանակին: Եւ երկրորդ՝ զաւելորդսն մասնաւորել կարօտելոցն, ցրուել և սփռել[1], ըստ այնմ. «**Բրդեաց ջհաց կարո-պել[ոցն], եւ ժողովել ջկաղս եւ ջկոյրս յընդունելութեանն**» *(հմմտ. Ղուկ. ԺԴ 13)*: Եւ զայս էր, վասն զի ասէ մարգարէն. «**Բարի առնէ Տէր բարեաց**» *(Սաղմ. ՃԻԴ 4)*: Իսկ զթեւրսն յագահութեան կորուսանէ ընդ այնոսիկ, որք անհաւատք են և անօրէնք: Իսկ որք ինքեանց միայն գանձեն՝ ասէ. «**Ընդմիջ, յայսն գիշերի ջոգիդ [ի էն ի բաց պա-հանջիցեն, իսկ ջոր պատրաստեցերն՝ ո՞ւմ լինիցի]**» *(հմմտ. Ղուկ. ԺԲ 20)*:

Արդարև հիմարութիւն է, զի որ զիւր հոգւոյն համարձակութիւն ոչ ունենայ պահել, այնչափ սիրով յերևելիսս և ի հոսանուտ սխա-լեալ իցէ, վասն որոյ ասէ Ամբակում. «**Վա՜յ, որ յաճախէ յանչին իւրոյ, որ ոչ իւր իցէ, ջի յանկարծակի յարիցեն կերիչէ նոցա եւ ջարթիցեն դաւա-ճանէ նոցա, եւ եղիցի նոցա ի յափշտակութիւն, ջի դու կողոպտեցեր ջազգս բազումս եւ ջէեղ կողոպտեսցեն մնացորդէ ժողովրդոց**» *(Ամբակ. Բ 6-8)*: Նմանապէս և գրեցեալս[2] ի Տէր գուշակէ *(գէ՛ս Ա. Պետրոս Ա. 11)*:

Եւ արդ՝ տե՛ս զայսն ժամանակի զյիմարութիւնն զայսքան խրատս և սպառնալիս, և մեք յիմարեալք ոչ զարհուրիմք ի սպառ-նալեաց աստի, զի ահա տկարացաք[3], թողաք զայն և թափուր գնամք յաստ ի կենացս, և որք ժառանգեն զմերն, ատելիքն մեր և սիրելիքն, զի որք առնուն յԱստուծոյ զապրանքն, մի՛ իմասցին, թէ ձրի առին, այլ վասն այն, զի շահովն ի Տէր ընչիցն դարձուցանեն: Զի, թէ այս կենացս զրկիլն միայն էր պատիժ, երանելի էր, բայց

---

[1] G **չիֆ** *ցրուել և սփռել*:
[2] C, E *գրեցեալս* **փխ**. *ասացեալս*:
[3] C, E *փկարացաք* **փխ**. *օրարացաք*:

սակայն աստ սիրեցին մեծանալ և անձանց գանձեցին և առ Աստուած ո՛չ մեծացան: Յանդ ի ճոխութենէն զրկեալք են և կայ պահ ի նոցա, որ հասարակ քննութեան նա սղալ[1] լինի. «**Դնապէտ յինէն անիծեալք**» *(հմմտ. Մատթ. ԻԵ 41)*, որոց մի՛ լիցի մեզ նմանել: Իսկ որ արարին զկամսն[2], տե՛ս որպէս խրատէ. «**Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք [ողբատոցս]**» *(Ղուկ. ԺԲ 33)*: Մանաւանդ, զի «**հաւտ փոքրիկ**» կոչէ *(Ղուկ. ԺԲ 32)* զառնաւղս[3] կամաց իւրոց, զի քսակ յերկինս ունին և գանձ անպակաս՝ զԱստուած, որ ո՛չ հատանեն ուտիչք դժոխոցն, և դևք խորեն, ոչ կարեն ի նմանէ, որոց լիցի և մեզ հասանել, ուրախանալ ընդ փեսային յուրախութիւնսն անզըրաւ կենօք և Նմա փառք յաւիտեանս:

***Հարցումն.*** Զի՞նչ է ածելն Տեառն գաւտի և պաշտել անցեալ *(տե՛ս Ղուկ. ԺԲ 37)*:

***Պատասխան.*** Ի մերոցս ուսուցուք զայս: Մե՛ք ծառայեցաք նմա, երբ յորժամ զամենայն կամս նորա կատարեսցուք և զոր պատուիրեաց՝ արարիք ծառայէ և մեզ այնու, զի զամենայն կամս մեր կատարեսցէ և զամենայն ցանկութիւն լնու և աստուածայնոց խորոցն զմեզ տեղեակ առնէ, զի այսպէս սպասաւորիմք մեք ի Տեառնէ:

---

[1] C, E *նա սղալ* **փխ.** *ասացեալ*:
[2] C, E *զկամսն* **փխ.** *զկամս Նորա*:
[3] E *զառնօղս* **փխ.** *զարարօղս*:

# ՏԱՄՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Հուր եկի արկանել յերկիր. [եւ զի՞նչ կամիմ, թէ արդէն իսկ բորբո-էէր]» *(Ղուկ. ԺԲ 49)*։

Զաւրութիւն Աւետարանին Տէրն օրինակօք նմանեցուցանէ, |27բ| որպէս հնար է զաւրինակն դնել, որով ճշմարտութիւնն նշանակեալ լինի, զի երբեմն խմորոյ նմանեցուցանէ, վասն ձգիչ զօրութեան: Եւ դարձեալ՝ «*մանանխոյ*», վասն տարածանելոյն ի բազում ճուղս: Նմանապէս և գանձի, վասն փարթամեցուցիչ և պատուականութեան բնութեանս: Իսկ աստ «*հրոյ*» նմանեցուցանէ վասն բազում պատճառի:

Նախ՝ զի «*հուրն*» ջեռացուցանող է բնութեամբ, այսպէս և Աւետարանին շնորհք, որք ի միտ առնուն, ջերմանան ի սէրն աստուածային, ըստ Պաւղոսի. «[Քանզի հասուցանեալ եմ, եթէ ոչ մահ, եւ] ոչ կեանէս, [ոչ հրեշտակէ, եւ ոչ իշխանութիւնք, եւ ոչ որ կանս], եւ ոչ հանդերձեալն եւ ոչ այլն կարեն մեկնել զմեզ ի սիրոյ անդի [Աստուծոյ], որ ի Քրիստոս Յիսուս [ի Տէր մեր]» *(Ա՛ռ Հռոմ. Ը 38)*։

Երկրորդ՝ զի հուրն զառվերն ունի զընթացս իւր, այսպէս և բանք Աւետարանին, հրաւիրէ զմեզ յերկինս ելանել, ըստ այնմ. «Գանձեցէք յեզ գանձս յերկինս, [ուր ոչ ցեց եւ ոչ ուրիճ ապականեն]» *(Մաթթ. Զ 20)*, և Պաւղոս. «Զվերինն խորհեցարուք, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ» *(Ա՛ռ Կոլոս. Գ 1-2)*։

Երրորդ՝ զի «*հուրն*» լուսաւոր է բնութեամբ, այսպէս և բանք Աւետարանին լուսաւորէ զխաւար հոգիս մեղօք, ըստ այնմ. «Մինչեւ ծագեսցի լոյս Աւետարանին ի սիրտս յեր» *(Համբ. Բ Կորնթ. Դ 46)*, և թէ. «Տայցէ լոյս ի խաւարչին պեղլոջ» *(Բ Պետր. Ա 19)*, և թէ. «Մինչեւ պիւն լուսաւորեսցէ, եւ արուսեակն [ծագեսցէ ի սիրտս յեր]» *(Բ Պետրոս Ա 19)*։

Չորրորդ՝ զի հրոյ զօրութիւն է զանպիտան ախտ և զժանգ խառնեալ յոսկի և յայլ ինչ նիւթ սրբէ և յառաջին պայծառութիւնն կացուցանէ[1]: Այսպէս և զբնութիւնս մեր, որ ժանգահարեալ էր մեղօք, հրով Հոգւոյն վերստին ձուլեաց[2] Սուրբ Աւետարանաւն, և յառաջին պայծառութիւնն եհան, ըստ այնմ. «**Նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն Սրբովն եւ հրովն**» *(Մարկ. Ա. 8)*:

Հինգերորդ՝ զի որք որ ի հուրն մերձենան, զամենեսեան միապէս վառէ, այսպէս և որք Աւետարանին հետևեցան, ամենեքեան միապէս որդիք Աստուծոյ եղեն, ըստ այնմ. «**Զիւ խրիր, ոչ հրէի, եւ [ոչ] հեթանոսի**» *(Ա. Գաղատ. Գ. 27)*, զի ամենեքեան որդիք Աստուծոյ եմք հաւատով:

Վեցերորդ՝ զի զցրտութիւնն հանէ հուրն ի նիւթոյն և ապա՝ զիւր տայ, այսպէս և բանքն Աւետարանին զցրտութիւն անհաւատութեանն ի մարդկանէ հանէ, և զհաւատս ուղղափառութեան հաստատէ, ըստ այնմ. «**Որ բերէ պտուղ՝ որբէ զնա, զի առաւել եւս պտղաբեր լիցի**» *(Յովհ. ԺԵ 2)*:

Եւթներորդ՝ զի առաւել հուրն զներհակ զջուրն լափէ, իսկ պակասն անցանի[3] ի նմանէ, այսպէս և, թէ ոք զմին ի բան Աւետարանին միայն առնէ, ոչ կարէ ընդդէմ կալ գիջութեան ախտին, վասն որոյ ասէ. «**Ամենայն որ լսէ զբանս իմս զայսոսիկ եւ առնէ նման է առն իմաստնոյ, զորոյ զտունն հեղեալ ո՛չ կարացին շրջել, իսկ որ ոչ առնէ զամենայն՝ նմանէ յիմարի, զորոյ տունն շրջեաց գետն**» *(Հմմտ. Մատթ. Է 24–25)*, և թէ. «**Որ ոք լծցէ մի ինչ ի պ[ատարագիրս նոցս յայսոցանէ ի փոքունից, եւ ուսուցցէ այնպէս զմարդիկ, փոքր] կոչեսցի [յարքայութեան երկնից]**» *(Մատթ. Ե 19)*:

---

[1] G չիf *կացուցանէ*:
[2] E *Հոգւոյն վերստին ձուլեաց* փխ. *գանձուցեալ վերստին*:
[3] E *անցան* փխ. *շիջուցանի*:

Ութերորդ՝ զի ի հուրն ոչ գոյ խաւար, այսպէս և ի բանքն Աւետարանին ոչ գոյ թիւրութիւն, վասն որոյ Տէրն առաւել ճշմարտութեանն ասէ. «**Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն**» *(Մարկ. ԺԳ 31)*։

Իններորդ՝ զի քակիչ է հուրն ամենայն էութեան, այսպէս և որք Աւետարանին հետևեցան, քակեցան յաշխարհէ և յԱստուած հաստատեցան, վասն որոյ ասէ. «**Եկի արկանել սուր**» *(Ղուկ. ԺԲ 49)*, և «**Քակել զայրի հօրէ եւ զդուստրի մօրէ**» *(Հմմտ. Մատթ. Ժ 35)* և այլն։

Տասներորդ՝ զի զհին նիւթն նորացուցանէ, այսպէս և զինազանդսն[1] մեղօք արագ զարդարեաւնն, |28ա| յաղագս որոյ ասէ. «**Հուր եկի արկանել յերկիր**» *(Ղուկ. ԺԲ 49)*։

Նմանապէս և մկրտութիւնն զմեղսն լծանէ և զանօրէնութիւնս մաքրէ և նորացուցանէ զինացեալքս և այլն ուսցիս յառաջի կայսդ ի գիրս գործոց[2]։

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ասէ. «**Յորժամ պեսանիցէք ամբ ծագեալ յարեւմտից, ասէք անչրեւ գայ, եւ լինի այնպէս**» *(տե՛ս Ղուկ. ԺԲ 54)*։

***Պատասխան.*** «*Ամպ*»՝ զԻնքն կոչէ և զառաքեալսն։ Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի ամպն ի յարևմտից բնաւորեցաւ լինել, այսպէս և Տէրն յարևմտից ծագեալ լուսաւորեաց զտիեզերս, ըստ այնմ. «**Ճանապարհ արարէք այնմ, որ նստի ընդ արեւմուտս եւ Տէր է [անուն նորա]**» *(Սաղմ. ԿԷ 5)*։ Եւ կամ դարձեալ՝ ամպ ծագեալ Տէր մեր ի մեզ յարևմուտս, զի արևմուտ եղաք ի ձեռն մեղացն։

Երկրորդ՝ զի ամպն հովանի առնէ ի վերայ ամենայն երկրի, այսպէս Տէր մեր պարածածկեալ զմեզ ամենակարող աստուածութեամբն Իւրով, ըստ որում գոչէ մարգարէն. «**Ամենակալ Աստուած**» *(Երեմ. Լ 15)*, և թէ. «**Հովանի գլխոյ իմոյ յաւ[ուր պատերազմի]**» *(Սաղմ. ՃԼԹ 8)*։

---

[1] G, C **շիf** *զինազանդսն*։

[2] C *այլն ուսցիս յառաջի կայսդ ի գիրս գործոց* **փխ**. *այլքն նմանապես*։

Երրորդ՝ զի ամպ ի վերայ հողմոց շրջի, և Տէր մեր ի վերայ հողմոց ընթացաւ արտևան[1] լերինն, ըստ այնմ. «**Ո՞ դնէ յամպս ղգնացս իւր, եւ շրջի նա ի վ[երայ թեւոց հողմոց]**» *(Սաղմ. ՃԳ. 3)*։

Չորրորդ՝ երբեմն ցածանայ ամպն և երբեմն՝ բարձրանայ, նմանապէս և Տէրն մեր, երբեմն զբարձրագոյն զգործսն առնէր, այսինքն՝ զաստուածայինս, և երբեմն՝ խոնարհեալ զմեր նուաստականսն՝ զքաղց և զծարաւ, զերկիւղ և զտրտմութիւն և զայն, որպէս պատմի յԱւետարանին։

Հինգերորդ՝ զի զտապ արեգական զովացուցանէ[2] բարեխառնելով։ Այսպէս Տէր մեր՝ զտապ չարին յոգոց մարդկան եհան աստուածային զօրութեամբն և զովացոյց մկրտութեամբ աւազանին, ըստ այնմ. «**Եթէ ոչ ծարաւի իցէ, եկեսցէ առ իս՝ եւ արբցէ**» *(Յովհ. Է. 37)*։

Վեցերորդ՝ զի ամպ կազմի յաւդոյ և ի գոլորշոյ երկրի, և Տէր մեր աստուածային բնութենէն և ի մարդկային մի՛ Քրիստոս եղեալ, ըստ որում. «**Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց [ի մեզ]**» *(Յովհ. Ա. 14)*։

Եւթներորդ՝ զի յորժամ քակի գոլորշոյն, ոչ ևս է ամպ, այլ պարզ օդ, այսպէս, ըստ ոմանց, որք քակեն զԲանն ի մարմնոյ, ոչ ևս մնա Քրիստոս, այլ՝ մերկ Բան, կամ սոսկ մարդ։

Ութերորդ՝ զի յանկասկած ժամու երևի ամպն, և Բանն յանկասկած ժամանակի եկն ի բնութիւնս առնուլ մարմին, այլև յանկարծակի երևեցաւ մարմնովն աշակերտացն յետ յարութեանն, որք զարհուրեալ համարէին ոգի ինչ տեսանել։

Իններորդ՝ զի երբեմն քաղցր խաղաղ անձրևէ, և երբեմն՝ փայլատակմամբ և որոտմամբ և այլն, նմանապէս Տէր քաղցրութեամբ ի յերկրի շրջեցաւ և հեզաբար, ըստ որում ասէր. «**Հեզ եմ եւ խոնարհ սրտիւ**» *(Մատթ. ԺԱ. 29)*։ Իսկ ի միւս անգամ գալստեանն ո՛չ, այսպէս այլ ասէ. «**Զի, որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից՝ [եւ երեւի**

---

[1] *Լեռան բարձրագոյն ծայրը՝ գագաթը։*

[2] C *զովացուցանէ* **փխ.** *զովացուցանէ ամբն։*

մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ]» *(Մտթ. ԻԴ 27)*, թէ. «Դալարին երկիր, որպէս մագաղաթ, եւ լերինք հալեսցին առաջի Տեառն» *(տե՛ս Եսայի Լ Դ 4)*։

Տասներորդ՝ յանձրևոյ ամբոյն բուսանին ամենայն սերմանիք, այսպէս և զԲանն |28բ| կենաց Տեառն մերոյ ընկալ[եալ] ի յոգիս յառաջ բերել պարտեմք զպտուղ արքայութեանն[1], որպէս սերմանիք ի յանձրևոյն զբազմապատիկ արդիւնս տալով պտուղ հարիւրաւոր, նմանապէս և առաքեալքն կոչին ամպ, վասն որոյ և նոցա սերմանելոյն յոգիս բանաւորաց։

Արդ, դէմ այսմ գեղեցկաբար[2] անձրևացս սովորեցաւ չարն շնչել զամենայն փորձութիւնս՝ նման խորշակաւն, զի զոր անձրևն բուսոյց՝ խորշակաւն հնձեսցէ։ Եւ այս, ահա յայտնի է, զի իբրև սկսաւ Աւետարանին շնորհն ցօղել ի մարդիկ, ընդդէմ յարոյց սատանայ զչարսն ի բռնաւորաց պատերազմել ընդ հաւատոյն թշնամութեամբ[3] և օրինօք ախտից մեղացն, որ յանդամս մեր ընդ գործս բարեաց։

Արդ, ոչ եթէ յամբոյ անտի է վնասն, այլ՝ ի հարաւային շնչմանէն խորշակախառը հողմոյն։ Նմանապէս և Տէր մեր, ոչ արկս ուր ի յերկիր, այլ որք ի սատանայէ գռգռեցան, սուր ի գործ արկանել ընդդէմ բարեպաշտիցն։

---

[1] C *արքայութեանն* **փխ.** *առաքինութեան*։
[2] C *դէմ այսմ գեղեցկաբար* **փխ.** *ընդ դէմ այսմ գեղեցկաբեր*։
[3] C *թշնամութեամբ* **փխ.** *ճշմարտութեան*։

# ՏԱՍՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Թ՝ԷՆԻ մի էր պնկեալ յայգոջ ուրուսն, եւ եկն խնդրել պտուղ ի նմանէ՝ եւ ոչ եգիտ» *(Ղուկ. Ժ.Գ 6)*։

Զայսոսիկ խնդրելով զմիտս պարտիմք մաքրել, զի ուղիղ իմաստուք զառակիս զօրութիւնն։ Քան զի «*այգի*» ասելով զեկեղեցի նշանակեաց, և թէ վասն է՞ր «*այգի*» կոչէ զեկեղեցի, և այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի զայգին նախ փորեն և ապա՝ տնկեն, և Տէր մեր նախ կակղացոյց քարոզութեամբ Աւետարանին և առաքելոցն և ապա՝ շինեաց զեկեղեցի։

Երկրորդ՝ զի զոյգ լինի որթն, որ դնեն յածուսն՝ մինն յայս կոյս և մինն՝ յայն, և երկոքին ծայրք որթին ի մէջն, այսպէս և եկեղեցի տնկեցաւ Հին և Նոր Կտակարանօքն, յորոց մինն հայի ի յառաջին արդարսն և մինն ի վերջին սուրբսն, և երկոքեանն ի Քրիստոս նային միաբանութեամբ։

Երրորդ՝ զի որթն փոքր է, քան զամենայն տունկս և բարակ, բայց տերևքն լայն և ողկոյզն զանազան, այսպէս և եկեղեցի անարգէ ի մէջ ամենայն անհաւատիցն և օր ըստ օրէ նուազի, բայց տերև խորհրդոյն լայնատարած, և պտուղ գործոց առաքինութեանն զանազան ճանապարհաւ տան ի կեանսն յաւիտենականս։

Չորրորդ՝ զի միայն որթն ո՛չ է այգի, վասն զի միայն է, և ոչ է յարգեալ, զի զպատուականութիւն նորա այլքն ցուցանեն, վասն տնկի շրջակայն, որին և ի մէջն յայլ պտղոց։ Նախ՝ զի օգնական են մնացականութեան պտղոյ որթոյն, և ապա, զի որթն բարձրացեալ անկանի զնովաւ և առաւել զօրանայ, այսպէս և Տէր մեր ոչ մի ազգս ընտրեաց իւր եկեղեցի, այլ յԲԺ. (12) անից և յՀԲ. (72) լեզու, և ուղղափառն ի մէջ նոցա սնանի, զի ըստ անուանն, որք

Իսրայէլի են, ամենեքեան զմիմեանս պահէն և ի միմեանս նախանձելով գործք բարին աճեն, վասն որոյ Պաւղոս ասէ. «**Զորս եդ Աստուած յեկեղեցիս՝ այս է, նախ առաքեալս եւ երկրորդ՝ բանաւորս մարգարէս**» *(Առ Կորնթ. Ա. ԺԲ 28)*, և ապա ասէ. «**Նախանձայուր լերուք շնորհացն, [առաւել զի եւ դուք մարգարէանայիք]**» *(տե՛ս Առ Կորնթ. Ա. ԺԴ 1)*։

|29ա| Հինգերորդ՝ զի մորթն ոչ այգի է և ոչ ի նմանէ հնարի գինի լինել կամ կարաս լնուլ, այսպէս և մի ազգ Հայոց, կամ այլոց մի[այն ոչ] է կատարեալ յեկեղեցիսն Աստուծոյ, զի Տէր զսա ժողովեաց ի մի առ ի [լնուլն] զտեղի անկելեցն, յորոյ մի ազգէ անհնար է լնուլ նա, վասն որոյ և յամենայն ազգս շինեաց զեկեղեցի և ի սոցա անկաւ զիւ լնանի վերինն Երուսաղէմ, զի հակառակն մերձ է։

Վեցերորդ՝ զի կրկին անուամբ յորջորջի՝ հասարակ և յատուկ. հասարակ՝ «*այգի*» և հատուկ՝ որթ, այսպէս և քրիստոնէից աղօթարանք հասարակ եկեղեցի կոչին, իսկ յատուկ ի նոսա խբտի, հնդի և ասորի, հայ և հռոմք և լատինք և այլք։

Եւթներորդ՝ զի սակաւ խորշակն զայգին անպտուղ գործէ, մանաւանդ մերձ ի հասանելն, այսպէս և զհաւատացեալսն, որ յեկեղեցի, եթէ հնար ինչ իցէ և զընտրեալսն փոքր ինչ տեսակ մեղացն խանծատէ, և առաւել ի ծերութեանն, զի այն է կամք չարին, զի մերձ ի տկարանալ մարդոյն, որ է ծերութիւնն, դիւրաւ սահեցուցանէ զի տկարացեալ է ամենայն իրօք, վասն որոյ երանի, որք մանկութեամբ մեռան։

Ութերորդ՝ զի ի մէջ ամենայն տնկոց այգոյն առաւել է չարչարանք, զի աշունն թագուցանեն ընդ հողով ի դաշտավայրն, զի մի չոր ցուրտն ապականէ և գարունն յօտելն և կրկին բերել և զքոսն քաղել և զխոտն, և ցանկել յամենայն կողմանց, ուրեմն հազիւ գայ ի կատարումն, այսպէս և եկեղեցւոյ Քրիստոսի առաւել է չարչարանք, քան զամենայն ազգաց, զի յաշուն մարգարէիցն թագուց

զհաւատալ նոցա ի բանս նոցա. «**Եւ եկեսցեն օպարածին՝ հովիւ խաշանց էոց, եւ այլազգին այգեգործ եւ մաճկալք էո**» *(Երայ. ԿԱ. 5)*։ Իսկ ի գարուն գալուստեան Բանին յայտնի արար. «**Դնացէք այսու–հետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա**» *(Մատթ. ԻԸ 19)*։ Այլև եհատ զամենայն յաւելորդս եկեղեցւոյ զկռապաշտսն և զքո՛սն հերձուածողաց քաղեաց և ցանկեաց հաւատացեալ թագաւորքն, և այժմ անօրէն փշովք պարսպեալ է, զի քրիստոսնեայք գթութեամբ կակուղեն և ոչ վարել զհակառակսն, զոր անօրէնն անողորմաբար, որպէս փուշս խածանեն զօտար հակառակսն, և ոչ թողուն մերձենալ յեկեղեցին Աստուծոյ։

Իններորդ՝ զի դառն է և թթու [պտուղ] այգոյն մինչև յաշուն, իսկ աշունն հասնի, վասն որոյ և կաթի հասարակաբար և յնձան արկանի, որ ի մէջ այգոյն, յորմէ ելանեն նախ՝ քաղցրահամ քաղացու և ի լնուլ զկարասն և թաղելն յետ ժամանակաց, ապա բանան և է գինի ուրախարար, այսպէս և կեանք եկեղեցւոյ և հաւատացելոց։ Ի յայս կեանքս դառն է, զի որք կամին Աստուած պաշտութեամբ կեալ ի հալածանս, կացցեն, մինչև հասանին յաշուն մահուամբ, որք հատանին յեկեղեցւոյ մահուամբ և ժողովին ի գերեզմանս ի դուռն [եկեղեցւոյ |29բ| յոր]ոց ելանեն կատարեալ զղջումն և յոյս առ Աստուած, և պատգամ մեռելոց աղօթք, յորմէ լնանի կարաս արքայութեանն ամբարք զղջողոցն և այլ սրբոցն։

Եւ յետ այս կենցաղոյս, բանայ Տերն զկատարելոցն դաս և տանի յառագաստ արքայութեանն, մատուցանէ Հօր զիւրաքանչիւր դասս սրբոց՝ իբր զբաժակ լի անուշահամ գինով, զոր մարդեղութեամբն իւրով վաստակեաց ասելով. «**Ակնուսուկ ԵՍ եւ մանկուն է ինձ**» *(Ես Եբր. Բ 13)*։

Տասներորդ՝ զի այգին քակի նախ ի գազանաց գայլոց և աղուեսաց, ըստ երգոյն *(Հմմտ. Երգ երգոց, Բ 15)*, և ապա, ի յոչ լինել այգեգործին և դարձեալ ի դառնութենէ ժամանակին, որ ի հեծելոց շարժմանէ, մանաւանդ, թէ տեր այգոյն մեռեալ լինի և գնացեալ։

Այսպէս և եկեղեցի քակի ի չորից յայսցանէ, նախ՝ ի գազանաց անհաւատից և յաղուտսուց հերձուածողաց, և առաւելն յոչ լինել իբրև գործ առաջնորդաց եկեղեցւոյ, որք եմք աստի յայսն ժամանակիս, վասն որոյ և քակեցան եկեղեցիք: Այլև ի դառնութենէ հեծելոց, որ իբրև «**Զծովու խռովուեալ, [յելանելոյ ոգւոյ մարդկան յերկիւղէ՝ եւ ի կարծեալս] եկելոց ի վերայ պիտեղերաց**» *(տե՛ս Ղուկ. ԻԱ 25-26)* ասաց Տէրն, մանաւանդ, զի ցամաքեցաւ սէր բազմաց, և ատելութիւն բազմաց: Եւ ատելութիւն ո՛չ միայն միմեանց, այլև օրինաց ժամատեղուց վանից, բանից և առաքինութեանց, զի հաւասար ատեն զամենեսեան միայն սիրեն զպորտ և զորովայն, վասն որոյ և քակեցաւ եկեղեցի:

Իսկ տեր այգոյս ոչ թէ մեռեալ է, այլ գնացեալ ի տարաշխարհ, մանաւանդ, զի բարձիթողի արար զմեզ: Զի գնացաք ըստ կամս անձաց, վասն որոյ յիմարութիւն է ի մեջ այս ամենայն պակասութեանցս, թէ նստի ոք առնել ինչ:

Իսկ յեկեղեցւոջն տնկեալ զմեզ: Եւ զի՞ ծառոյ նմանեցուցանէ զհաւատացեալսն: Եւ այս վասն բազում բազում պատճառի:

Նախ՝ զի ծառն ի մէջ այգւոյն տնկի և ոչ արտաքոյ, այսպէս և հաւատացեալք ի յեկեղեցի ի ծոց աւազանին ծնանին, ըստ այնմ. «**Տնկեալք եղիցին ի տուն Տեառն**» *(Սաղմ. ՂԱ 14)*:

Երկրորդ՝ զի մատաղ լինի տունկն յորժամ տնկեն, այսպէս հաւատացեալք երեխայանան և ապա մկրտին, մանաւանդ թէ յերախայութեանն աւրինադրեցաւ մկրտել, ըստ այնմ. «**Իբր եւ զորդի ծնեալ մանկունս [խաւսուանս]**» *(Ա Պետրոս Բ 2)*:

Երրորդ՝ զի ծառ ջրով աճէ, այսպէս և հաւատացեալք՝ բանիւ գետոց աստուածային, որ բ[ղ]խէ յեկեղեցւոջ, ըստ այնմ. «**Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան**» *(Յովհ. Է 38)*, և թէ. «**Աղբիւր ի տանէ Տեառն ելցէ եւ արբուսցէ [զդրան վիճակաց]**» *(Յոել Գ 19)*:

Չորրորդ՝ զի ի մի ժամանակս ո՛չ բերեն ամենեքեան պտուղ, այսպէս և հաւատացեալք, ոմանք ի ծերութեանս արդարանան, և

այլք՝ ի մանկութենէ սուրբք: Եւ դարձեալ՝ յիւրաքանչիւր ժամանակս եղեն առաքինիք և արդարք, յառաջն և յետոյ:

Հինգերորդ՝ զի իւրաքանչիւր ծառ իւր պտղովն զարդարի, զոր յինքենէ հանէ, այսպէս և ամենայն ոք իւր գործովն պայծառանայ, ըստ այնմ. «Յայնժամ ծագեսցեն արդարքն յարքայութեան [երկնից], իբրեւ զարեգակն» *(տե՛ս Մատթ. ԺԳ 43)*:

Վեցերորդ՝ զի և ոչ միահամ [լինի ա]մենցունց, այսպէս և ոչ ամենայն հաւատացեալք առաքինանան միապէս, զի. «Այլ[և] փառք արեգական եւ լուսնի, եւ աստղեաց» *(տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 41)*:

Եւթներորդ՝ զի ծաղկին և ապա պտուղն երևի, այսպէս և հաւատացեալք՝ նախ ծաղկին սրբութեամբ և պտուղ զարքայութիւնն ժառանգեն, ըստ այնմ. «Ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղ[կեսցին]: Եւ եւս բազմամբ [եղիցին ի ծերութիւն պտղաբերութեան, գերգէ եւ փափուկք եղիցին]» *(Սաղմ. ՂԱ 14–15)*:

Ութերորդ՝ զի է ի ծառոցն, որ պտուղ բերեն եզր քաղցր և մէջն դառն, և են, որ եզր դառն և մէջն քաղց[1], այսպէս և յեկեղեցի, ոմանք կեղծաւորին արտաքուստ ի ցոյցս մարդկան երևիլ առաքինի, վասն որոյ ասէ. «Նման է գերեզմանաց բռելոց, [որ արտաքոյ երեւին գեղեցիկք, եւ ի ներքոյ լի են ոսկերաւէ մեռելոց]» *(Մատթ. ԻԳ 27)*: Իսկ ոմանք խոշորս սգեստիւ պահօք զառաքինութիւն ի հոգին գործեն[2], ըստ այնմ. «Շրջեցան լեշկ մաշկօք, [եւ մորթովք այծենեաւք]: Կարօտեալք, նեղ[եալք, չարչարեալք]» *(Ա՛ռ Եբր. ԺԱ 37)*, յաղագս որոյ ասէ. «Հարիւրապետքդ առցեն եւ [զկեանսն յաւիրենականս ժառանգեսցեն]» *(Մատթ. ԺԹ 29)*:

Իններորդ՝ զի այգէգործն հանապազ խնամէ զծառն և խնդրէ պտուղ, այսպէս և Տէր մեր միշտ խնամէ զմեզ և պահանջէ պտուղ առաքինութեան, ըստ այնմ. «Եւ եմ որք եւ դուք ուռ. [որ հասցա-

[1] С *քաղց* փխ. *քաղց, որպէս ընկոյզ*:
[2] С *գործեն* փխ. *գանձեն*:

պետք է յիս՝ եւ ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել]» *(Յովհ. ԺԵ 5)*։ «Եթէ ոք ո՛չ բերէ պտուղ կտրէ զնա» *(հմմտ. Յովհ. ԺԵ 2)*, և թէ. «[Եւ ես որքան ճշմարիտ՝ եւ] Հայրն իմ մշակէ» *(Յովհ. Ժ 1)* և այլն։

Տասներորդ՝ զի թէ ոչ բերէ պտուղ՝ հատանէ զնա տէր այգւոյն, այսպէս և, թէ ոք ոչ առնէ առաքինութիւն յեկեղեցւոջ՝ հատանէ Աստուած զնա ի կենաց, ըստ այնմ. «Բակեցիս զքանակ նորա եւ էր վայրի արածեցոյն ի նմա» *(հմմտ. Սաղմ. ՀԹ 13-14)*, և թէ. «Որ ո՛չ առնէ պտուղ հատանէ եւ ի հուր արկանէ» *(Մատթ. Լ 19)*։

Իսկ զի՞ թզենոյ նմանեցոյց և ոչ այլ ինչ ծառոց։ Եւ այս ևս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի յաշխարհն Պաղեստինէ ոչ են առաւել ծառք, բայց թզենիք յոլովք զամենեսեան, վասն որոյ և զնա եդ օրինակ, բայց և ոչ այս առանց խորհրդոյ։

Երկրորդ՝ զի թզենին ոչ ունի ծաղիկ, այլ՝ ի բնէ պտուղ։ Զնոյնս խնդրէ Տէրն, ոչ սուտ հեթեթանք առաքինութեան, այլ՝ կատարեալ սրբութիւն. «Երանի [այնոցիկ], որ սուրբք են որպիւ, զի նոքա [զԱստուած պեսցեն]» *(տե՛ս Մատթ. Ե 8)*։

Երրորդ՝ զի կարճ է հասակաւ և ոչ կարէ բարձրանալ, որպէս զընկոյզն, և թէ բարձրանայ՝ չորանայ յարմատոցն[1], այսպէս՝ ուսոյց խոնարհ լինել, զի զնա սիրէ Աստուած, ըստ այնմ. «Եւ յո՛ հանգ[եայց], եթէ ոչ ի հեզ[ս] եւ ի խ[ոնարհս]» *(Եսայի ԿԶ 2)*[2]։

Չորրորդ՝ զի ի սկիզբն փոթոթ[3] է պտուղ թզենոյն և յետոյ քաղցրանայ, այսպէս՝ զնեղ և զանձուկն այսմ աշխարհիս սիրէ Տէրն, որով կարեմք վերին քաղցրութեանն հասնել և յայտ է, զի

---

[1] C *յարմատոցն* **փխ**. *յատակաց*։

[2] C **չիք** *իսկ թէ հպարտանայ, անգանի ի խոնարհ, ըստ այնմ՝ «Որ բարձրացուսցէ զանձն, խոնարհեսցի»*։

[3] *փոթոթ* **փխ**. *դառն*։

տեսանելով վկայէ մեր անօրէնք թքանեն ի մեզ[1], վասն որոյ գրէ Պաւղոս. «**Բազում նեղութեամբ պարտ է [մեզ] մտ[անել] յար[քայութիւն Աստուծոյ]**»[2] *(Գործք Ա.. ԺԴ 21)*։

Հինգերորդ՝ զի թէ ոք բազում ուտէ վնաս առնէ մարմնոյն, այսպէս, թէ բազում է առաքինութիւնն, վնաս բերէ մարմնոյն, վասն որայ պիտոյ է ընդ մէջն գնալ ճանապարհ ոչ հոգին վնասել և ոչ՝ զմարմինն։

Վեցերորդ՝ զի ոչ պատուաստի ընդ այլ ծառոյ, այսպէս՝ ուսոյց թէ առաքինութիւնն ոչ [մի]աբանի ընդ աշխարհական պատրանս, ըստ այնմ. «**Ոչ կարէէ, երկուս Տէրանց Ծառայել**» *(Համա. Զ.ուկ. ԺԶ 13)*։

**|30բ|** Եւթներորդ՝ զի են ի թզենեաց, որ ամենևին դառն բերեն պտուղ, վասն որոյ *«ժանդք»* կոչին, այսպէս և որք ոչ ունին պտուղ արժանի սրբութեան, որդիք ժանդք կոչին, որպէս որդիքն Հեղեայ *(տե՛ս Ա. Թագ. Դ)*։

Ութերորդ՝ զի մի արմատոց բազում ճուղք արտաքս գան, նմանապէս, յորժամ ոք զառաքինութիւնն կամի ինքնին աճեն զայլ ամենայն, քանզի շարեալ են ընդ միմեանս իբրև զշղթայսն[3]։

Իններորդ՝ զի ի մէջ պտղոյն բազում հատիկ լինին և սերմ, նմանապէս և զայն առաքինութիւնն սիրէ Տէրն, որ բազում աշխատանօք լինի և ոչ որ դիւրութեամբ, ըստ այնմ. «**Որ կամիցի գալ զկնի իմ, ուրասցի զանձն եւ առցի զխաչ եւ եկ[եսցէ զկնի իմ]**» *(Համա. Մտթ. Ը 34)*։

Տասներորդ՝ զի երիս անգամ պտուղ բերէ թզենին, և առաջինն ոչ հասանի և վերջինն թերակատար մնայ, իսկ միջինն՝ կատարեալ լինի։ Որով եցոյց զերից ժամանակաց ապաշխարութիւն

---

[1] C **չիք** *և յայտ է, զի տեսանելով վկայէ մեր անօրէնք թքանեն ի մեզ*։

[2] C *յարքայութիւն Աստուծոյ* **փխ**. *յայն հանգիստն*։

[3] C *կամի ինքնին աճեն զայլ ամենայն, քանզի շարեալ են ընդ միմեանս իբրև զշղթայսն* **փխ**. *առնէ, ուսոյց ի վերայ միոյն կարգեալ զամենեսեանսն, այսինքն՝ ի վերայ պահոցն զողորմածութիւն, զարտասուս և զգեղնախշտութիւն, ըստ այնմ՝ բազում նեղութիւնք են արդարոց*։

և զսրբութիւն[1], այսինքն՝ տղայս զերիտասարդութեանն և զծերութեանն: Զի տղայութեանն ապաշխարութիւնն ոչ հասնէ ի կատարումն[2], զի ունի[3] անդորր միտք մանուկն, մանաւանդ բարութեամբ ոք երիտասարդականն առաջի կայ[4]: Եւ ծերութեանն թերակատար է, զի ոչ զորէ մարմին աղօթել և պահել: Իսկ միջին հասակին, որ է երիտասարդութիւնն, կարէ ուղղապէս ապաշխարել, զի բաւականանայ աղօթել և պահել, և արտասուել և հաստատեալ է միտքն յընդունել զապաշխարութիւնն, վասն որոյ Ադամ երեսնամեայ ստեղծաւ, զի այն է ժամանակ զղջման և սրբութեան:

Եւ դարձեալ՝ երիս ժամանակս խնդրէ պտուղ Տէրն, և ամենայն ժամու: Եւ թէ ի տղայութեանն ոչ տայ՝ չկտրէ, զի ի միջին ժամանակն տացէ: Եւ թէ յայն ևս գտանի անպտուղ՝ խնայէ, թէ ի ծերութեանն զղջացցի, ըստ այնմ թե. «**Ո՛չ կամիմ զմահ մեղ[ուցելոյ՝ ասէ Աստուծոյ Տէր], այլ զի դարձ[ցի ի Ճանապարհաց իւրոց չարեաց, եւ կեցուցցէ զանձն իւր]**» *(Երեմ. ԺԸ 32)*: Իսկ թէ ի ծերութեանն ևս ոչ տացէ, յայնժամ ասէ. «**Երեք ամէ են յորում ոչ եպ պտուղ, կտրեա զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ**» *(Հմմտ. Ղուկ. ԺԳ 7)*: Եւ զայս է՞ր վասն արար, զի ներեաց մինչև ի ծերութիւնն, զի առանց պատասխանոյ արդարացցի դատել:

Արդ, տե՛ս զամենախնամ գութն, զի. «**Գործ է Աստուածոյ ի բարկութեանն զողորմութիւնն յիշել**»,- ըստ Ամբակումայ. *(Հմմտ. Ամբակ. Գ 2)*: «**Ի ժամանակի բարկութեան ողորմութիւն յիշեսցես**» *(Հմմտ. Ոգեհ. ԺԲ 6)*: Զոր և աստ եցոյց զողորմութիւնն իւր, զի թէ կամք էին նորա կտրելն զողորմութիւն Իւր, զի թէ կամք էին Նորա կտրելն, զի՞նչ պետք էր զայգեգործն առ այս գործակից ունել, այլ՝ հատանել առանց հարցանելոյ այգեգործին:

---

[1] C *և զսրբութիւն*:
[2] C *կատարումն* **փխ**. *կատարելութիւն*:
[3] C *ունի* **փխ**. *ոչ ունի*:
[4] C **չիք** *մանաւանդ բարութեամբ ոք երիտասարդականն առաջի կայ*:

Վասն որոյ ուսանիմք աստ, թէ օրէն եդ առաջնորդացն բարեխօս լինել աղօթիւք ի վերայ մեղաւորաց և հաշտեցուցանել զայն, որ ո՛չ երբեք բարկանայ, սակայն ձևանայ բարկանալ, զի զարհուրեցուցէ զմեզ և ուսուցէ զառաջնորդսն զարժանն ի ներքս բերել զխնամակութեամբ: Զոր օրինակ Մովսիսի ասէր. «**Թողլ հարկց ապտակեցիկց զդրասս**» *(հմմտ. Եզէ ԼԲ 10, Լ Գ 5)*:

**|31ա|** Եւ արդ՝ եթէ կամեր սատակել զնոսա, զի՞նչ պետք էր ասէ. «Թոյլ տուր», այսինքն՝ ի բաց կաց, և ով ոք էր Մովսէս, որ ընդդէմ [կայր] այն, որ բազում մաղթանօք ընդ Յորդանան ոչ անց: Այլ վասն այսորիկ ուսոյց, զի ընդդէմ կացցէ ասել, թէ. «Թողուս դոցա՝ թող», ապա թէ ոչ՝ և զիս ջնջեա ի դպրութենէս յորս գրեցեր: Այսպէս և աստ ասէ. «Կտրեա՛»: Եւ ապա՝ զոր պարտն էր առնել մշակին, ինքն առաջի դնէ, ասէ թէ. «**Թոյլ տուր, զի բրեցիկց եւ արկիկց ազբ**» *(հմմտ. Ղուկ. ԺԳ 8)*:

Արդ, այսոցիկ երկոցունց պարտապան են վերակացուք:

Նախ՝ տքնել, և ապա աղօթիւք առ Աստուած պաղատել, որպէս ասէ Պաւղոս. «**Նոքա զվիճին վասն ոգւոյ յերոց, զի համարս տալոց են ընդ յեր**» *(տե՛ս Ա.Ռ Եբր. ԺԳ 17)*:

Երկրորդ՝ առ մարդիկ զգործս առաքինի մշակացն ցուցանել, ըստ այնմ, զոր Պաւղոս Տիմոթէոսի գրեաց. «**Յանդիմանե՛ա, սասպե՛ա, [մխիթարե՛ա], ամենայն երկայնամտութեամբ եւ վարդապետութեամբ**» *(Ա.Ռ Բ Տիմոթ. Դ 2)*: Եւ որպէս ինքն իսկ Պաւղոս ընդ հիւանդացեալսն հիւանդանայր և ընդ գայթակղեալսն տապանայր *(տե՛ս Բ Կորնթ. ԺԱ 29)*: Վասն որոյ Աստուած առ Եզեկիէլիւ ասաց. «**Դէպ կացուցի զքեզ, զեա[անիցես] զա[ուրն եկեալ], զգու[շացո] մեզ[աւորին], ապա թէ ոչ՝ զար[ին նորա ի] յեռաց [էոց խնդրեցիկց]**» *(հմմտ. Եզեկ. Լ Գ 6–7)*:

Որպէս և Դաւիթ ասէր զայս գործ առաքինութեան. առ Աստուած ասէր. «**Եւ հովիւս մեղայ, խաշինէդ զի՞նչ գործեցին, եղիցի սուր**

**Քո յիս [եւ ի պուն հաւր իմոյ]»** *(Հմմտ. Բ Թագ. ԻԴ 17)*։ Իսկ առ ժողովուրդն ասէր. «**Ապգ չար եւ դառնացողդ, [ապգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր]**» *(Աշխ. ՀԸ 8)*։

Արդ, բազմապատիկ է այսպիսի բանք ի գիրս աստուածային, թէ զի՞նչ պարտ է առ Աստուած խօսել, և որպէս ժողովուրդն խրատել։

Իսկ թէ զի՞նչ իցէ «բրելն և արկանել աղբ»։ Սոքա արուեստք են երկրագործոց, որով զանբան երկիրն ածեն ի պտղաբերութիւն։ Եւ դիւրին է զայս իմանալ, այսինքն՝ զի բրելն զխրատ վերակացուացն նշանակէ։ Եւ այս ըստ բազում յեղանակի։

Նախ՝ զի կոշտ է երկիրն, վասն որոյ բերեն, այսպէս և սիրտ մեղաւորին՝ քարացեալ կայ ի մեղքն, ըստ այն[մ]. «**Հանիցս զսիրտ քարեղէն ի մարմնոյ յերոց**» *(Եզեկ. Լ,Զ 26)*։

Երկրորդ՝ զի սակաւ-սակաւ բրեն զերկիրն, այսպէս և առաջնորդք պարտին սակաւ-սակաւ խրատիւ կակղացուցանել զսիրտ մեղաւորին։

Երրորդ՝ կրկին բրեն, որ ամենայն տեղ հաւասար բրեալ լինի, այսպէս և զխրատն պարտ է կրկնել և երեքկնել, ըստ Տեառն եթէ. «**Ասա յորժամ դու եւ նա միայն իցէք**» *(Հմմտ. Մատթ. ԺԸ 15)*, և այլն։

Չորրորդ՝ զի զսէզն և զաւելորդն հանեն, այսպէս և վերակացուին պարտ է նախ զմեղս ապաշխարութեամբ մաքրել տալ, և ապա՝ զուղիղ կանգն յաւրինել։

Հինգերորդ՝ զի յորդոր ջրով զովացուցանէ զ[ծառ]ն, այսպէս և քահանային պարտ է յորդառատ իմաստիւք զովացուցանել զպասքեալ ոգին, ըստ այնմ. «**Շրջ[ուն]է քահանային զգո[ւշացեն] գիպ[ուրեան] եւ օր[էնէ] խնդրեսցեն [ի նմանէ]**» *(Հմմտ. Մաղաք. Բ 7)*։

Վեցերորդ՝ զի բրիչն սուր պարտի լինել, որով փորեն, այսպէս և բանք [քահանային, |31բ| աստուածային գրոց պարտ ի լինել, որ սուր է, քան զամենայն երկսայրի և հատանէ մինչև ցորոշումն շն[չոյ]։

Եւթներորդ՝ զի բռամբ փորեն և ոչ ըստ հողին կամաց, այսպէս և քահանային պարտ է ջանիւ խրատել, զի մեղաւորն ոչ կամի զխրատելն, վասն զի դժուար թուի նմա, որպէս Պաւղոս ասէ. «**Փուրթամ ճեպիմ միշտ պչեպ յորդորել**» *(հմմտ. Բ Պետրոս Ա! 15)*։

Ութերորդ՝ զի աղբ ածեն շուրջն զծառովն, զի ջերմ պահեսցեն զարմատն, այսպէս և առաջնորդն պարտի զարթուցանել զջերմ սէրն Աստուծոյ ի սիրտս մեղաւորին, այսինքն՝ յոյս դնել անկեալ և բեկեալ սրտին։ Այլև ինձ թուի «*աղբ*» աստ զմարմնաւոր ինչսն ասէ, զոր պարտ է տալ զառաջնորդին անզեղջ մեղաւորին, զի գոնեա ի սիրոյ մարմնաւոր տրոցն դաճցի ի մեղաց զայ[ս] կ[եա]նքն յայտնի անուն ասեն մարմնաւոր ընչիցն[1]։

Իններորդ՝ զի աղբն զպտուղն բերէ, այսպէս և յոյսն զառաքինութիւնն աճեցուցանէ, որով լինի զերծանիլ ի հատմանէ կենացն և մնալ յարաժամ ի տանն Աստուծոյ տնկեալք։

Տասներորդ՝ զի զայս ամեն յամենայն ամի առնեն այգեգործքն։ Իսկ թէ ոչ առնեն, ոչ բերէ պտուղ, այսպէս՝ քահանայքն պարտին յամենայն տարի և յամենայն ամիս, նա թեև յամենայն օր խնդիր առնել, զբեկեալսն կապել, զխոցելոցն դև[2] դնել, զի թէ ոչ դնեն, ո՛չ կարեն արդարանալ ժողովուրդքն։ Իսկ եթէ զայս ամենայն առնեն, և դարձեալ ի նոյն անպտղութեանն մնան, յիրաւի կտրի ծառն, որպէս ասացաւ։

Այսպէս և մեղաւորն յետ այսչափ ուսուցանելոյ յամէ ի մեղս և ոչ դառնայ իւրաւամբք յարմատոյ հաւատոյն և ի կենաց աստի հատանէ զնա Տէրն։ Լուարո՛ւք ծերք, որք զժամանակս ձեր ի մէջ մեղաց էք դեգերեալ, այժմ ահա ժամ է, մի՛ յապաղէք, զի ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան, մի՛ դնէք պատճառ, զի այլ

---

[1] C **չիք** *ինձ թուի «աղբ» աստ զմարմնաւոր ինչսն ասէ, զոր պարտ է տալ զառաջնորդին անզեղջ մեղաւորին, զի գոնեա ի սիրոյ մարմնաւոր տրոցն դաճցի ի մեղաց զայ[ս] կ[եա]նքն յայտնի անուն ասեն մարմնաւոր ընչիցն։*

[2] C *դև* **փխ.** *դեղ։*

տղայանալ ոչ կարէք, այլ պատրաստեցէք զձեզ մահու, զի կէս մարմնոյ ձեր ի գերեզմանի կախեալ կայ, զի մի՛ զվերջին հատումն ընդունիցիք, քանզի ասէ. «**Զչարան չարեաւ կոր[ուսցէ]**» *(Մտթ. ԻԼ 41)*։

Իմացարուք և զայս քահանայք, որք էք այգեգործք եկեղեցւոյ, մի՛ ծուլասցուք և մի՛ հեղգասցուք ի բժշկելոյ զմեզ և զժողովուրդն Աստուծոյ մերոյ։ Զի թէ ոչ սգաստանամք ասէ. «**Զչար հովիւն չարա-չար կորուսցէ**» *(Հմմտ. Մտթ. ԻԼ 41)* և՝ «**Իմում հիւանդին ես խնա-[մա]րկեցիք**» *(Հմմտ. Ծննդ. ԽԴ 21)*։ Մանաւանդ, թէ կրկին պատժոց դիպիմք, մին վասն մեր մեղացն, և մին՝ վասն ժողովրդեանն։ Եւ արդ՝ բաւական է մերն կորուսանել զմեզ, ժրասցո՛ւք, զի մի՛ զնոցա բեռն ի վերայ մեզ դիցի, այլ պատրաստ լինել ընդ շահաւէտ ծառայիցն արժանի լինել, այնմ որ ասէ. «**Ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակ[աւուրդ հաւատարիմ ես] մուտ յուրախութիւնն Տեառն**» *(Մտթ. ԻԵ 21, Հմմտ. Ղուկ. ԺԹ 17)*, ի Քրիստոս Յիսուս, Տէր մեր, Որով և ընդ Որում Հօր մի և Հոգոյն Սրբոյ վայել է փառք։

# ՏԱՄՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՃԱՌՆ

|32ա| **Զանազարուվ մրանել ընդ նեղ դուռն, ասէ յեկ, զի բազում են կոչեցեալք [եւ սակաւ ընտրեալք]** *(Հմմտ. Ղուկ. ԺԳ 24)*։

Զայս ասելով ուսուցանէ մի՛ վայրապար և ոչ ինչ զմուտ կենացն յաւիտենից իմանալ։ Այլ մեծի ճգնութեան և արեամբ չափ ջանալոյ և զամենայն ինչ, որ յաշխարհին են ի բաց դնել։ Եւ ոչ այսչափ միայն, այլև զանձն ևս կորուսանել և ապա գտանել զայն կեանքն։

Եւ զի՞ «*նեղ դուռն*» կոչէ զմուտ արքայութեանն։

Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի «*դուռն*» արգելումն է մտողացն ի տունն, զի այս է գործ յատուկ նմա, այսպէս՝ ճանապարհ արդարութեանն փակեալ է մեղաւորացն, որք ոչ ընդ նայն գնացին ի կեանս յայսմիկ, վասն որոյ և անտ արգիլին։

Երկրորդ՝ զի դուռն յայտնի ճանապարհ է ի տունն ցուցանէ, թէ այլ կողմն ոչ է հնար, այսպէս արդարութեան գործն յայտնի ճանապարհէ մտանել ի կեանսն, ըստ այնմ. «**Կամիս ի կեանսն հաւիրեցեալսն մրանել, զբարին գործեա**» *(Հմմտ. Մատթ. ԺԹ 17)*։

Երրորդ՝ զի դժվար է մտանել ընդ նեղ դուռն, իսկ յորժամ մտանէ ի ներքս հանգիստ է, այսպէս և զկամս Աստուծոյ կատարել դժուարին էր, և ի առ ժամանակ ինչ, իսկ ի կատարել գործոյն սրբութեան[1] հանգստան արժանաւորին, ըստ այնմ. «**Զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի։ Այսուհետեւ կայ մեայ [ինչ արդարութեան պսակն]**» *(Առ Բ Տիմոթ. Դ 7-8)*։

[1] C *սրբութեան* փխ. *արդարութեան*։

Չորրորդ՝ զի որք որ մտանեն ի նեղ դուռն, զսպեն զինքեանս յամենայն կողմանց, և ապա մտանեն, այսպէս և որ կամին յարկն կենաց մտանել, պարտ է զսպել զինքեանս յամենայն ցանկութենէ աշխարհիս, որք և հեշտ մտանեն, ընդ այնմ. «**Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հ[անգիստն]**» *(հմմտ. Գործք. ԺԴ 21)*։

Հինգերորդ՝ զի դուռն թագաւորի փակեալ է և երբեմն բացեալ։ Յորժամ կամի թագաւորն, իսկ փողոցին, և որք աղբով լի են, բաց են միշտ և ո՛չ ունին փակ։ Այսպէս և դուռն երկնից արքայութեանն, երբեմն է ի բաց, այսինքն՝ ի սրբութեան ժամանակն և ապաշխարութեան, զի այս է ժամանակ, զորս և կամի Տէր։ Իսկ դժոխոցն բաց և լի ժահահութեամբ, որք և անյապաղ մտանեն ի նա, ըստ այնմ. «**Ազչակ է դուռն, որ ապնի ի կորուստն եւ բազումք մտանեն ի նա**» *(հմմտ. Մատթ. Է 13)*։

Վեցերորդ՝ զի արգելումն մտանելոյ ընդ նեղ դուռն լինի Բ. (2) ինչ։

Նախ՝ թէ բազում հանդերձ լինի զգեցեալ, և երկրորդ՝ թէ մարմինն թանձր և գեր լինի և յաղթանդամն, այսպէս և վերին դրանք նոյնս է արգելումն, զի թէ ոք զաշխարհիս փառաց սգեցեալ է և կամ թէ զմարմինն պարարեալ գեր և փափուկ կցեալ, անհնար է ի կեանս հաւիտենից մտանել, ըստ այնմ. «**Վա՛յ ձեզ մեծապանց, զի ընկալայք զմխ[իթարութիւն ձեր]**» *(Ղուկ. Զ 24)*։

Եւթներորդ՝ զի թէ զաւրաւոր ոք լինի, ոչ ինչ համարի զնեղութիւնն դրանն և զպահապանս նորա, որպէս |32բ| [Սա]մփսոն, որ է առ զդուռն քաղաքին սեամքն հանդերձ[1], այսպէս և թէ ոք սիր[եցեալ] զլինի յԱստուծոյ արդարութեամբն, ոչ ինչ փոյթ է նմա վասն նեղութեան դրանց և քերովբէիցն և պահպանեն ծառոյն կենաց։ Այլև ունի համարձակութիւն և այլոց մատուցանել առ Աստուած, ըստ այնմ. «**Զկամս երկիւղածոց իւրոց առնէ զՏէր**» *(Սաղմ. ՃԼԴ 19)*։

Ութերորդ՝ զի մինչդեռ ոչ լինի գնացեալ ի դուռն արքունի, այնպէս իմանան, իբր թէ զամենայնսն ի ներքս թողուն, իսկ յոր-

[1] C չիք *որպէս [Սա]մփսոն, որ է առ զդուռն քաղաքին սեամքն հանդերձ։*

ժամ երթան, յայնժամ երևենայ՝ ով են այնոքիկ, որ մտանեն, այսպէս մինչդեռ յաշխարհիս եմք, այնպէս իմանան աշխարհասէրքն, թէ ընդ արդարսն դասին: Իսկ հասեալ ի տեղի դատաստանին անդ իմանան զարժանաւորս արքայութեան Տեառն, ըստ այնմ, որ ասէ. «**Յորժամ պեսին զԱբրահամ եւ զՍահակ յարքայութեանն եւ յեկ հանեալ արտաքս**» *(հմմտ. Ղուկ. ԺԳ 28)*, և թէ յորմէ հետէ մտանէ տանուտերն յայնժամ[1]:

Իններորդ՝ զի յորժամ վնասակար ոք լինի թէպէտ աղաղակէ և աղաչէ, ոչ ոք բանա նմա, այսպէս և յորժամ պարտապան մեղօք անդ հասանիցեմք, թէպէտ և աղաչեմք, ոչ լսէ, ըստ այնմ. «**Տէր պէր բաց մեզ**» և նա ասէ. «**Ոչ գիտեմ զձեզ**» *(հմմտ. Մատթ. Լ 23)*: Եւ զի ոչ է անդ ժամանակ ապաշխարութեան, և ոչ արտասուք աւգնէ, և ոչ զղջումն արդարացուցանէ:

Տասներորդ՝ զի մի քաղաքին բազում դրունք լինին, եթէ կամի ոք ի քաղաքն մտանել, ընդ որ դուռն մտանէ ի քաղաքն տանի, սակայն ջանալ արժան է, զի մտցէ, այսպէս՝ արքայութիւնն Աստուծոյ, դրունք բազում են, այսինքն՝ պահք, աղօթք, ողորմութիւն, արտասուք, զղջումն, բարի առնելն չարեաց և այլ նմանք սոցա:

Արդ, եթէ ոք մեծատունէ ողորմութեան դրաւքն մտցէ հանդերձ զղջմամբ մեղացն, և թէ աղքատք աղօթիւք և պահօք: Նմանապէս ըստ դիմաց և ըստ ժամանակին, և որք որ փութան առ Նա ոչ հանէ արտաքս: Եւ արդեն կարողութիւն է այսմ գործոյ, այսինքն՝ յանցաւոր ժամանակիս, ի ծերաց և ի մանկանց, ըստ այնմ. «**Ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան մի եւ մի իւիւէ [պայծէէ պարծառս]**» *(Բ Կորնթ. Զ 2)*:

Եւ արդ այս ամենայն քարոզք յականջս մադկան վասն բառնալոյ յանօրէնութենէ և գործելոյ զբարիս է, իսկ մեք կուրացեալք ի մեղս անլուր լինիմք բանից Նորա, մանաւանդ, թեև մեղադրութիւն

[1] Ե *յայնժամ* **փխ**. *յայնժամ սկսանիցիք կալ արտաքոյ*:

ևս ի Նա հանեմք, վասն որոյ կըրկին պատասխանաւ նա ասէ. «**Ի բաց կացէք յԻնէն ամենայն մշակք անօրէնութեան**» *(հմմտ. Ղուկ. ԺԳ 27)*։ Եւ երանի թէ միայն արտաքս հանէր, այլև տանջանաց մատնէ՝ ասելով. «**Անդ եղիցի լալ եւ կրճել ատամ[անց]**» *(Ղուկ. ԺԳ 28)*։

Եւ զի՞ «*մշակ անօրէնութեան*» կոչէ զմեղաւորսն։

Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի մշակն ըմբռնի վասն վարձու յամենայն ումեքէ ի գործս[1], այսպէս և սատանայ զմեղաւորս ըմբռնեալ է ի վարձու, և վարձ խոստացեալ զիեշտ|**33ա**|ութիւն աշխարհիս։

Երկրորդ՝ զի մշակն ըստ կամաց Տեառն առնէ զգործքն, այսպէս և մեղաւորք ըստ սատանայի կամացն գնան և հանապազ հաճոյս նորա առնեն։

Երրորդ՝ զի մին օրն մին դահեկան լինի վարձ մին մշակին, այսպէս և մեղաւորին աշխատանքն զցանկութիւն փափկութեանն բերէ շահ, որ փոքր և ոչ մի ինչ։

Չորրորդ՝ զի ամենայն ոք կամաւ մշակէ և ոչ հարկիւ, այսպէս սատանայի ոչ գոյ իշխանութիւն հարկել մարդոյն ի մեղս, բայց ի խնդիր ելանեն մեղացն, և ի գտանել զմեղսն ընդ նմին երևի սատանայ։

Հինգերորդ՝ զի որք զմշակութիւնն ուսանի և զնոյն անխնայ առնէ, այսպէս և որք մեղս սովորին, անյապաղ գործէն՝ ոչ երկնչելով ի Տէր։

Վեցերորդ՝ զի մշակօք ոչ կարէ ազնիւ նիւթ գործել կամ կարել, այսպէս և մեղաւորն ոչ կարէ բարիս առնել առ որ հանգչի Աստուած։

Եւթներորդ՝ զի մշակն ոչ կարէ ինչս յետս ձգել վասն վաղուեանն, զի հազիւ զաւուրն հանէ, այսպէս մեղաւորն ոչ կարէ գանձս ժողովել վասն այնմ կենաց, այլ՝ հազիւ ի մարմին սերմանէ։

---

[1] C, E *մշակն ըմբռնի վասն վարձու յամենայն ումեքէ ի գործս* **փխ**. *մշակն ի վարձու կալու ամենայն ոք վասն գործոյ ինչ*։

Ութերորդ՝ զի մշակն յայտնի գործէ առանց ամաւթոյ, այսպէս և մեղաւորն համարձակապէս գործէ և ոչ յումեքէ ամաչէ:

Իններորդ՝ զի մշակն շալակով մտէ ի տուն, զի զոր եգիտ, զնոյնն բերէ, այսպէս և մեղաւորն մեղօք մտանէ ի գերեզմանն, զի զոր ինչ արար ի ժամանակն իւր, զնոյն տանի հետ իւր:

Տասներորդ՝ զի չարչարեալ է մարմինն մշակին, կեղտոտեալ և սևացեալ և նոյնպէս ննջէ, այսպէս և մեղաւորն, սևացեալ ոգով և չարչարեալ ի մեղս մարմնով մեռանի, վասն որոյ ասէ. «**Ի բաց կացէք ամենայն մշակ[էդ անիրաւութեան]**» *(Ղուկ. ԺԳ 27)*:

Եւ արդ՝ մեղաւորքն բազում կսկիծ ընդունին նախ, քան զտանջանքն:

Նախ՝ այն իսկ զի փակեալ դրաննն արտաքոյ մնան:

Երկրորդ՝ զի ի բախելն ասէ. «**Ոչ գիտեմ զձեզ**» *(Ղուկ. ԺԳ 27)*:

Երրորդ՝ զի յորժամ յաճախեն զպատճառն փակելոյն[1], նա պատասխանէ՝ մշակ անօրէնութեան:

Չորրորդ՝ յետ որոյ լալ աչաց և կրճել ատամացն, որ զանհնարին ցաւոցն ունի զնշանակ:

Հինգերորդ՝ և ևս կսկծելի, զի զնահապետսն և զարդարսն տեսանեն, յորս պարծէին ընդ Աստուծոյ թագաւորեալս և զինքեան տարագիր արարեալ արտաքս: Եւ զի՞արդ տեսանեն յարքայութեանն զսուրբսն, ոչ եթէ զայն ասէ, յորժամ վերանան և մտանեն յերկինս, քանզի զայն անհնարին է տեսանել մեղաւորաց: Այլ՝ աստ «արքայութիւն» զայն ասէ, յորժամ երկնից թագաւորն յերկիր իջանէ և ատեան դնի, և Երեքանձնեայ Տէրն նստի ի դատել, և ամենայն բնութիւնք անդ գումարեալ լինին, յայնժամ տեսեալ լինին արդարքն պայծառ, քան զարեգակն: Եւ այն է ասելն. «**Տեսանիցէք զնահապետսն եւ զմարգարէսն |33բ| արքայութեանն Աստուծոյ**» *(հմմտ. Ղուկ. ԺԳ 28)*, զի չի՛ք ինչ այլ արքայութիւնն, բայց միայն Աստուած: Եւ յորժամ Նա ամենայն զօրաւք յերկիր իջանէ, յայտ է,

[1] C, E *փակելոյն* **փխ.** *փրկութեան*:

թէ արքայութիւն Նորա յերկրի է, զոր տեսանեն ամբարիշտք և անհնարին սգով և տրտմութեամբ հարեալ լինին: Եւ այս թէպէտ Տէրըն առ հրէայսն ասաց, այլ սակայն և մեզ ահագին է և կարի իսկ:

Նախ՝ զի այսքան խրատու և գիտութեան յետոյ ոչ ի փրկելոցն, այլ ի դատելոցն դասուն գտաք:

Երկրորդ՝ զի զոր վասն այլոց կորըստեան խօսիմք, անձամբ ի նմին եմք:

Երրորդ՝ զի հեք և թշուառական զանձինս իմանամք, քան զնոսա, զի նոքա ոչ ունէին օրինակ կորստեան, իսկ մեք՝ ունիմք զնոքա և կորնչիմք:

Չորրորդ՝ զի նոքա յիմարութեամբ ըմբռնեալ խաբեցան, իսկ մեք՝ զամենայնս ճշմարտապէս ուսաք և դեռևս կորստեան ճանապարհաւն վարիմք:

Հինգերորդ՝ զի նոցա պարսաւանս դնեմք, թէ լուան և ոչ զղջացան, իսկ մեք՝ ուսաք և ո՛չ զղջացաք:

Վեցերորդ՝ զի նոքա միայն մարգարէից բանքն գիտէին և[1] անարգեցին, իսկ մեք՝ զառաքելոց և զմարգարէից, այլև զՏեառն ևս:

Եւթներորդ՝ զի նոքա աստուածամարտք էին յայտնի, իսկ մեք՝ աստուածապաշտ անուանեալք և ի ծածուկ հակառակ նմին և այպանօղ:

Ութերորդ՝ զի նոքա ի մի ժամանակս և մարմնապէս, իսկ մեք՝ յամենայն ժամ և հոգեպէս:

Իններորդ՝ զի թէպէտ զՏեառն անարգեցին զօրէնս, սակայն զիւրեանցն պահէին, իսկ մեք՝ անարգելով զօրէնս աստուածայինս, և այլ ոչ ունիմք փոխանակ նմին:

Տասներորդ՝ զի նոքա յիմարութեամբ խաչեցին [զՏէրն], ըստ այնմ. «**Եթէ գիտեցեալ էին ոչ արդեաւք զՏէրն փառաց ի խաչ հանէին**» *(Հմմտ. Ա Կոր. Բ 8)*, իսկ մեք՝ գիտցեալ և հաւատացեալ զՆա

[1] Ե չիք *գիտէին և*:

Աստուած անարժան պատարագեմք, մանաւանդ, թէ առանց փորձանաց զանձինս, զմարմին Տեառն ճաշակեմք, վասն որոյ դատաստանի մեծի հանդիպելոց եմք, վասն որոյ ասէ ի կարգ բանիս. «**Եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ բազմեսցեն ընդ Աբրահամու եւ, որդիք արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին**» *(Հմմտ. Մատթ. Ը 11-12)*։

Արդ, հրէիցն յայտնի է, զի որդիք Աբրահամու էին, առ որ գոգ արքայութեանն Քրիստոս, որք ոչ հաւատալովն ելան յարդարութենէ արքայութեանն։ Իսկ հեթանոսք ի հեռաստանէ դիմեցին առ Նա և կալան զտեղի ելելոցն, վասն ասէ. «**Եղիցին առաջինք, որ լինիցին յետինք եւ հակադարձեալ**» *(Հմմտ. Ղուկ. ԺԳ 30)*։ Զի առաջինք էին հրէայքն հաւատովք և վերջացան, քան զհեթանոսք ի գալ Բանին Աստուծոյ, իսկ հեթանոսութեամբ[1] վերջինք էին և օտարք և եղէն առաջինք բազմեալք յարքայութեանն Աստուծոյ, վասն որոյ ասէ մարգարէութիւն թե. «**Ամենայն ազգ ի չորից ծագեաց եկեսցեն առ Աստուածն Աբրահամու**» *(Հմմտ. Սաղմ. ԽԶ 10)*։ Սորին վասն և Բարուք պատուիրէ Իսրայէլի. «**Զգոյշ լեր Իսրայէլ, մի՛ տար զքառս քո այլուն և զօգուտն քո աւտարաց**» *(Հմմտ. Բարուք Դ 3)*։ Ընտրեսցէ Աստուած զհեթանոսս, զի նախ անձամբ եկ արասցէ զհրէայսն։ Եւ Մովսէս ասէ թէ. «**Այլ|34ա|գաւ անմտաւ զկծեցուցիչ զնոսա**» *(Հռոմ. Ժ 19)*։

Իսկ մեզ ևս յայտնի թէ չգնամք, ըստ կամաց Տեառն ամենայն կամ արարք նորա գայցեն յարևելից և յաւմտից, որք ոչ են սպասաւորք խորհրդոց Նորա, և բազմեսցէ ի սեղան Հօրն և մեզ հանդիպի ելանել և զետին տեղին ունել, վասն որոյ աղօթք ի խոր հոգւոց առ խնամածօղն[2], զի փութով հասցէ մեզ և[3] մի որոշեսցէ զմեզ ի քաղցր տեսութենէ Նորա և կալ մնալ ընդ մտերիմ ծառայիցն, որք զքանքարն շահեցուցին ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրինեալ յաւիտեանս. ամէն։

---

[1] C, E *հեթանոսութեամբ* **փխ.** *հեթանոսք*։
[2] E *խնամածօղն* **փխ.** *խնամակալն հասցէ*։
[3] E **չիք** *փութով հասցէ մեզ և*։

# ՏԱՄՆԵԻԵՐԵՔԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Այր ոչ եթէ կամիցի աշխարհակ շինել. նախ [նստեալ] հաշուիցի, թէ ունիցի բաւական [ի կատարուն]» *(հմմտ. Ղուկ. ԺԴ 28)*։

Դէմք առակիս այսպիսիս տայ մեզ կարծիս, թէ ոք որ բաւական է զամենայն իմաստութիւն ի կատարումն ածել, նա աշակերտել պարտ է, ապա թէ ոչ, բնաւ չէ պարտ աշակերտութեան սկիզբն առնել։ Նաև յորմէ սկսաւ և յոր կատարեաց ի նոյն հայել տայ իմաստս։ Բայց ծանիցեն որք այսպիսեացս են քննիչ հաւաստի, զի անտեղի է ասել զայս, թէ որ ոչ է բաւական բառնալ զխաչ չարչարանացն Քրիստոսի և յամենայնէ մերկանայ։ Նաև ո՛չ զայս ասել արժան է, թէ ոք ոչ կարէ զամենայն արդարութիւն առնել մի սկսանիցի առաքինութիւն ամենևին։ Զի երիցս այսոցիկ իմացումն ունի տեսութիւն պատուիրանիս։ Այլ պարտ է ուղղել զմիտս մեր ի տեսութիւն այսմ։ Զի ոչ մի դէմ է աշակերտութեան Տեառն, քանզի են առաջին կամք Տեառն, են և երկրորդ։

Իսկ թէ ոք կամի զանձն ի հնազանդութիւն Տեառն Քրիստոսի տալ, տեսցէ նախ, թէ առաջին կամացն կարող է տանել, որ կուսութիւն, ձեռնարկեսցէ ի նա, ապա թէ ոչ, երկրորդին հնազանդեսցի, որ է ամուսնութիւնն։ Եւ զայսոցիկ որպիսութիւն առաքեալն Պաւղոս յայտնապէս ցուցանէ, քանզի ասէ թէ. «**Կամիմ զի ամուրիէն եւ այրիէն լիցին**» *(հմմտ. Ա Կորնթ. Է 7-8)*, իբրև զիս, այսինքն՝ թէ կամիցին լինիցին ըստ նմանութեան Տեառն, ընդ կուսութեամբ զանձն նուաճել, ապա թէ ոչ ունիցին համբերութիւն զերկրորդ կամքն ընտրել, և զպատճառն յաւելու. «**Լաւ է ամուսնանալ, քան ջերմնուլ**» *(հմմտ. Ա Կորնթ. Է 9)*։

Այսպէս և Յովհաննէս խրատ տայր ժողովրդեանն այլ կերպիւ կարգէր զզինուորսն և այլ կերպիւ՝ զմաքսաւորս, որպէս ասա-

ցաք ի վերոյ, նոյնն է և հրամանքս Տեառն, քանզի զի այլ է առաքելոցն պատուէր և եկեղեցականաց և աշխարհականաց: Դարձեալ փորձութեան ժամանակն յորժամ հասանեն հալածանք վասն Տեառն, յայնժամ պարտ է ամենայն ումեք հրաժարել յամենայն աստ ի կենացս, ապա թէ ոչ կրկին անգամ կամիցիս կրկին սնոտի **|34բ|** աշխարհաւս գիրկս արկանել և զՏէրն ուրանալ վասն սորա, յայնժամ կորոյս զաշակերտութիւնն Տեառն: Եւ արդ գիտեալ է, զի զառաքինութիւնն յաշտարակ նմանեցուցանել: Եւ այս ըստ բազում եղանակի:

Նախ՝ զի զաշտարակին հիմն ի վերայ վիմի դնեն, այսպէս և առաքինութիւնն ի վերայ վիմի հաւատոյ պարտ է դնել, զի զհաստատութիւնն ունիցի, ըստ այնմ թե. «**Որ արասցէ զքառս Իմ, նման է առն իմաստնոյ, որ շինեսցէ զբուռնն իւր ի վերայ վիմի**» *(Հմմտ. Ղուկ. Զ 47-48)*:

Երկրորդ՝ զի աշտարակին յատուկ է բարձր լինելն, այսպէս և առաքինութեանն յատուկ է անշաղախ լինել ի պատրանաց աշխարհիս, ըստ այնմ. «**Որ կամիցի աշակերտ լինել, ուրասցի զանձն իւր եւ առցէ զխաչ**» *(Հմմտ. Մատթ. ԺԶ 24, Հմմտ. Ղուկ. Թ 23)*:

Երրորդ՝ զի պահապան կարգեալ են աշտարակին առ ի պահել զնա, նմանապէս և պահապանք պարտ է կարգել մտացն զպահս և զարտասուս և զաղօթս, զի սոքա պահեն զհոգին անվրէպ ի փորձութենց աշխարհի, ըստ այնմ. «**Ով մարդ, որ կամիս զկենա[նն], լո[ե]ց[ս զլեզու էս ի չարուրթենէ]: Խ[ս]գ[ս]ր[եայ ի չարէ եւ արա զքարի], խնդ[րեայ զխաղաղութիւն]**» *(Հմմտ. Ա Պետ. Գ 11)*:

Չորրորդ՝ զի թէ խախուտ լինի շինուածն շուտով փլանի, այսպէս թէ ակամայ կամօք ոք ըմբռնէ զառաքինութիւնն շուտով ոչընչանայ, զի ակամայից բռնադատելոցն ոչ է կտրեալ սէր, ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն:

Հինգերորդ՝ զի թէ պահապանք ոչ լինի աշտարակին առնու թշնամին և բնակէ ի նմա, այսպէս և թէ ասացեալ պահք և աղ ոչ լինի փութով լինի բնակարան սատանայի, ըստ այնմ. «**Եկեալ**

գրանէ պարապարդ, մաէրեալ եւ յարդարեալ, եւ բնակէ անդ, եւ լինի մարդոյն այնորիկ յետինն չար, քան զառաջինն» *(հմմտ. Մտթ. ԺԲ 44-45)*։

Վեցերորդ՝ զի նետակալք շինի ի գլուխ աշտարակին վասն պատերազմողացն, այսպէս և առաքինւոյն պարտ է զԲանս Սուրբ Գրոց ի բերան ունել, որով կարասցէ հակառակել ընդդէմ ներհակին, որպէս Տէրն արար ի փորձութեան լեառնն, զի զինչ փորձիչն խօսեցաւ, Նա Աստուածաշունչ գրոց վկայութեամբ խափանեաց զնորա պատրանքն։

Եւթներորդ՝ զի թէ ոք խորհի աշտարակ շինել ընդ չկարելն նախատինք ընդունի ի դրացեացն և յայլոցն, այսպէս և որք կամին սուտ կեղծաւորութեամբ առաջի մարդկան ձևանալ առաքինի և այն ի գլուխ ոչ գնայ, յայնժամ լինի ծաղր դիւաց, որք այպանէն զանկատար կամքն նորա։

Ութերորդ՝ զի ամենայն մարդոյ ոչ է կար աշտարակ շինել, այսպէս և ոչ ամենայն մարդ քահանայութեան կամ առաքինութեան բաւականանայ, այլ՝ որոց տուեալ է *(հմմտ. Մտթ. ԺԹ 11)*, որպէս ասաց Տէրն։

Իններորդ՝ զի աշտարակ շինելն արուեստ է, իսկ շէն պահելն՝ իմաստութեան գործ, այսպէս ամենայն ոք արուեստիւ շինէ զառաքինութիւն կամ զքահանայութիւն, զի զոր օրինակ ի մերում ժամանակիս ետես անել, զի ոչ թէ Աստուծոյ սիրոյն համար առնեն, այլ ի ցոյցս մարդկան թակարդս շինել արծաթոյ։ Այլ այն է |35ա| կատարեալն, որ իմաստութեամբ զգործն իւր ոչ յաջ խոտորէ և ոչ յահեակ, ըստ այնմ. «Յորժամ յարէուն պողպոյն ընթանաս, մի՛ յաջ խաւարուրիր եւ մի՛ յա[հեակ]» *(հմմտ. Առակ. Դ 26-27)*։

Տասներորդ՝ զի հաստատուն շինեալ աշտարակն ոչ ինչ վնասեն հողմք և մրրիկք և գետք, այսպէս և ոք յորժամ Աւետարանաւ հաստատի յառաքինութիւն կամ ի քահանայութիւն, ոչինչ ցաւէ նոցա ի դիւական փորձութեանցն որ յախտսն որ մտացուցանեն ամբոխումն և ի հալածանաց հեղեղաց այլազգաց թագաւորաց և գետք պատուհասիցն ոչ վնասէ նմա, և մրրիկ նախատնաց ո՛չ լլկեն զնա։

Դարձեալ, ըստ այնմ, և այլ առակ օրինակի արկ համանման մտաց սորին, քանզի ասէ. «**Ո՞ր թագաւոր պատերազմ պայի ընդ թագաւորի, որ գայցէ ԻՌ.-աւ (20.000), թէ ոչ նախ խոնարհիցի զայս**» *(հմմտ. Ղուկ. ԺԵ 31)*։

Եւ զայս խոնարհել ի վերայ քահանայական կարգի պարտի առնող, զի ամենայն ոք ոչ է բաւական այսմ գործոյս, քանզի այս գործ առնուլ պատրաստութիւն տայ քան զայլ առաքինութիւնս։ Քանզի աղօթք քահանային սուր է սրեալ, որ մտանէ ի սիրտ նորա, և պատարագն հատանող կենաց նորա, և արտասուքն հալածող է նմա, վասն որոյ ընդ նմա առաւել պատերազմի։ Զի ամենայն առաքինութիւն մասնաւոր է, իսկ քահանայն զամենայնս յինքն ունի կատարելապէս, վասն պարտ է խոնարհել, թէ կարիցէ ի գլուխ հանել զայնպիսի գործ, ապա թէ ոչ ամուսնասցի և ոչ ունի մեղադրանս։ Եւ թագաւոր զմիտըս մարդկան, որ իշխէ ի վերայ չարեաց[1], վասն որոյ յանձնել պարտ է զայս առաքինութիւնս։ Եւ զի բազումք են, որ պարտ է խոնարհել և ապա ի ներքս մտանել։

Նախ՝ պարտ է քահանային սուրբ լինել յամենայն պղծութեանց մարմնով։ Այս առաջինս սրբութիւն։ Իսկ այլք հետևեալ սմին, զի թէ է սա պիտան և այլքն, զի թէ ոչ՝ ոչ պիտանանան[2], վասն որոյ դժուարին է զայս առնել, զի որք առնեն զմահ յանձն առնուլ պարտին, զոր աւրինակ ճգնաւորք և սուրբքն մեր արարին։

Երկրորդ՝ ըստ այսմ զմիտս մաքուր պահել պարտ է քահանային, և ոչ զայն ասեմ, իբր թէ զմիտս կուրացուցանել, որ բնաւ[3] ոչ ծնանի, այլ՝ բնաւորեալ է մտացն միշտ բերել զամենայն խորհուրդ առ ինքն։ Այլ զոր նա բերէ ոչ ըմբռնեսցէ առ ինքն, այլ կամաւորաբար խոտեսցէ զվատսն, զի ի յամելն առ միտսն լինի մեղք խորհրդոց, վասն որոյ ասէ Տէրն. «**Թէ որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ [նմա], անդէն շնացուսցիս [ընդ նմա ի սրտի իւրում]**» *(հմմտ. Մատթ. Ե 28)*։

---

[1] C *չարեաց* **փխ**. *չարեաց և բարեաց*։
[2] C *զի թէ ոչ պիտանանան* **փխ**. *իսկ եթէ ոչ է սա՛ նաև ոչ պիտանանան և այլքն*։
[3] C *բնաւ* **փխ**. *բան*։

Երրորդ՝ պարտ է քահանային փախչել ի սիրելութենէ կանանց և ի նոցունց ծանաւթութեանց, զի հուր և խոտ ի միասին ոչ բնակեն, զի շատացեալ հուրն այրէ զխոտն, մանաւանդ յիւրսն ազգականաց, զի |35բ| քահանային ոչ գոյ մարմնաւոր մերձաւոր, այլ զամենայն թողեալ ըստ Տեառն բանին. «**Ամենայն, որ եթող զտուն, զկին եւ զորդիս**» *(հմմտ. Ղուկ. ԺԸ 29)* և զայլսն, և յայնժամս Քրիստոս է նմա հայր և քոյր և եղբայր:

Չորրորդ՝ պարտ է քահանային պահել զինքն ի դատարկաբանութենէ, այլ երբեմն աղօթեսցէ, երբեմն ուսանի, երբեմն ուսուցանիցէ, երբեմն ընթեռնու, և եթէ գուցե այլ ևս ժամ, որ հրավիրէ զնա ի ստախօսութիւն և յայլաբանութիւն, լաւ է, զի ննջիցէ, քան թէ ընդ վայրախաւսել և զի դատարկ կեալն մեղք բերէ մահու չափ, այսինքն՝ զբամբասանքն, վասն որոյ ասէ առաքեալն. «**Բամբասողէ զարէայուրիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն**» *(հմմտ. Ա Կորնթ. Զ 10)*, և Տէրն թէ. «**Ամենայն դատարկ բանի համարս պալոց է։ Զի ի բանից [էոց] արդ[արասցիս], եւ ի բանից էոց պարդ[ուրեսցիս]**» *(հմմտ. Մատթ. ԺԲ 36-37)*։

Հինգերորդ՝ զի[1] այսոքիկ երգ դիւաց են, մանաւանդ թէ ի ծիծաղելոյ, զի ի բանալ շրթանցն վերանայ Հոգին Սուրբ ասէ միտքն անապատի Եւագրիոս, մանաւանդ թէ անմըտութեան է նշան և զի փոքր ի շատէ լինի կորուստն և ոչ համանգամայն:

Վեցերորդ՝ ոչ է պարտ քահանային ընչասէր լինել, այլ փոխանակ ընչիցն Աստուած ունել իւր ապաւէն և զի ինքն է արմատ ամենայն մեղաց և գործիք արուեստին այնմիկ, վասն որոյ ասէ Տէրն յառաջիկայսդ. «**Ամենայն, որ ոչ հրաժարիցէ յընչից իւրոց ոչ կարէ իմ աշակերտ լինել**» *(հմմտ. Ղուկ. ԺԴ 33)*։

---

[1] C *Հինգերորդ՝* **փխ**. *Հինգերորդ՝ պարտ է փախչել քահանային ի խեղկատակութենէ և ի խաղալոյ, զի*։

Եւթներորդ՝ ոչ է պարտ արբեցող լինել քահանային, քանզի խելագարեցուցանէ զմարդն, և զբանական մասն ծառայ առնէ ցանկականին և լինի անասուն: Իսկ անասունն ոչ է պատկեր Աստուծոյ, և մանաւանդ, զի հանէ ի պատրաստութենէն, զոր ունէր ի մտի, յորոյ վերայ հասեալ օր մահուն կտրէ ընդ մէջ, յաղագս որոյ ասէ Տէրն. «**Զգոյշ լերուք [անչանց], գուցէ ծանր[անայցեն սիրտք] ձեր շու[այտուութեամբ] եւ արբ[եցողութեամբ], եւ հոգովք [աշխարհականաւք], եւ յանկ[արծակի] հասանիցէ [ի վերայ ձեր] օրն այն»** *(Ղուկ. ԻԼ 34)*:

Ութերորդ՝ զի պարտ է աղօթասէր լինել քահանային, զի յատուկ այն է գործ նմին, որպէս ամենայն արուեստաւորի իւր արուեստն: Եւ զի՞ փոխանակ ժողովրդեանն պարտ ի աղօթել: Զի նոքա զմարմնաւոր կերակուրն տան, իսկ քահանային պարտ է զհոգևորն փոխարինել, վասն որոյ ասէ առաքեալն. «**Սոցա առաւելութիւնն ի ձեր պակասութիւնն»** *(Համբ. Բ Կորնթ. Ը 14)* և անդրադարձեալ ևս, և Տէրն ասէ. «**Աղքատն կայէ եւ ամենայն ժամ աղօթէ արարէ»** *(Համբ. Ղուկ. ԻԼ 36)*: Զի աղօթք քահանային սինք են աշխարհիս տանս, և ի պակասելն փուլ գայ աշխարհն, այս է՝ գայ պատուհասն և առնէ բազում վնաս և զայն ամենայն վճարել պարտի քահանային, վասն որոյ Եզեկէլիւ ասէ Աստուած. «**Դէպ կայուցի զէնս ի վերայ պատն Իսրայէլի»** *(Համբ. Եզեկ. Գ 17)* և այլն:

Իններորդ՝ ոչ է **|36ա|** պարտէ ծախել և ի գին հանել զխորհուրդ եկեղեցւոյ, բայց ընտրութեամբ առնուլ և նովիմբ թողուլ: Այս է, զոր կարգեալ է ի Հայաստան եկեղեցի, զի մեռելոյն ինչքն քահանային է, ըստ այնմ. «**Զմեղս ժողովրդեանն էահանայքն կերիցեն»** *(Համբ. Ղևտ. ԺԴ 13)*, և զի յիշատակ հոգւոյն քահանայն է և ո՛չ մարմնաւոր զաւակն և այլն: Եւ զի նա է օգնական մեռելոյն աղօթիւք և պատարագօք, ապա և նմա արժան է առնուլ, այլ ոչ պատերազմաւ, զի մի լիցի գայթակղութիւն: Այլև զայն ևս ի նոցա կամս թողուն, զի որպէս հաճոյ է, նոյնպէս արասցեն: Այլև զմկրտութեանն լուսոյ և խնգի գին պարտ է առնուլ, զի այն ոչ է

խորհրդոյն գին, ըստ կարծեաց երկաբնակացն, այլ լուսոյ, որպէս ասացաւ: Իսկ եթէ հակառակն ի մէջ բերցէ ասելով. «Ստոյգ գին առնոյք <գին առնոյք> խորհրդոյն», քննութեամբ տեսցուք, զի ամենայն ոք որ որդի մարդոյ է, Ռ. (1000) դահեկան բերէ և այլ առ աւելի, իսկ Աստուծոյ Որդին պատուական է, քան մարդոյն, և այս յայտ է, զի Բ. (2) և Դ. (4) Նորա գին չէ[1], զի սա սրբութեամբ Ծնունդ է և նա մարմնական ախտալից: Նմանապէս և պսակին: Իսկ խոստովանադրամն և ժամուց պահանջելն կարի իսկ անօրէնութիւն է, զի բազում պատճառ կորստեան բերէ: Քանզի աղքատն ոչ խոստովանի, վասն ոչ ունելոյն դրամ, ապա նա մեղօք մեռանի և քահանային պարտ է վճարել:

Եւ դարձեալ՝ շատ պահանջելովն գայթակղի ժողովուրդն և առնու քահանայն «զվա՛յ» ասելն Տեառն, թէ. «**Վա՛յ որ գայթակղեցուցանէ զմի ի փոքրականացս, լաւ էր նմա կախեալ երկան ի շոյ [ի պարանոցէ] եւ անկանել ի ծով [էան թէ գայթակղի զմի ի փոքր[կանցս յայսցանէ]**» *(Համբ. Մաթթ. ԺԸ 6, Համբ. Մարկ. Թ 41, Համբ. Ղուկ. ԺԷ 1-2)*:

Տասներորդ՝ պարտ է քահանային ուսումնասէր լինել, և զոր ինչ կարգեալ է յեկեղեցի անսխալապէս գիտել. «**Զի շրթունքք քահանային զգուշացսցին գիտութեան**» *(Մաղաք. Բ 7)*, և օրէնս խնդրես[2], զի հրեշտակ Ամենակալի է: Նախ՝ զի առաջնորդ է, գործէ նմա ուսուցանելն, իսկ թէ ոչ գիտէ զինչ ուսուցանէ: Երկրորդ՝ զի բժիշկ է հոգւոց:

Եւ բժշկին պարտ է Դ. (4) ինչ:

Նախ՝ զի թագաւորեալ լինի ի վերայ արուեստին իւրոյ բազում ուսմամբն:

Երկրորդ՝ զվէրսն ճանաչել, թէ ինչ ազգ խոցէ:

Երրորդ՝ զդեղ վիրացն[3] գտանել, թէ որն է առողջացուցիչ դեղ վիրացն, զի մի որ գլխոյն է՝ ոտիցն տացէ, և ձեռացն՝ սրտին:

---

[1] C *Նորա գին չէ* **փխ.** *ոչ են Աստուծոյ Որդւոյն գին*:
[2] C *խնդրեսցի ի նմանէ*:
[3] C *դեղ վիրացն* **փխ.** *խոցին*:

Չորրորդ՝ հանապազ մերձ լինել հիւանդին, նմանապէս և ի հոգին[1] իմայ, զի մի՛ որ հիւանդն է հոգով մեռանիցի:

Հինգերորդ՝ զի միջնորդ է Աստուծոյ և մարդկան, և միջնորդին պարտ ի լինել երիս ինչ:

Նախ՝ |36բ| զգուշութիւն բանից, որպէս ասէ[2] Սողոմոն. «**Զայր ղգոյշ եւ պատրաստ պարտ է առաջի թագաւորի կացուցանել**» *(Համբ. Ա։Առակ. ԻԲ 29)*։

Երկրորդ՝ իմաստուն և այս ի բազում ուսմանց գոյանայ, կամ ի շնորհացն Աստուծոյ, որպէս Յովսէփն էր, զի անցոյց զսովն յաշխարհէն իմաստութեամբ:

Երրորդ՝ հեզ պարտ է լինել, որպէս Մովսէս, զի կարիցէ հաշտեցուցանել զԱստուած ընդ մեղաւորին, որպէս Մովսէս, զԱստուած ընդ մոլորեալ ժողովրդեանն[3]: Եւ զի հաւատոյ դաւանութիւնն ժողովուրդն ի քահանայէն ուսանի, և թէ քահայնայն ոչ գիտէ դաւանել, ուրեմն ժողովուրդն կո՞յր է: Եւ Տէրն նախատէ. «**Կոյր կուրի յորժամ առաջ[նորդէ՝ սխալէ եւ] երկոքին ի խորխորատ [անկանին]**»[4] *(Մատթ. ԺԵ 14)*։

Եւ զի՞ ամենայն իմաստասիրութիւնն յերկուս բաժանի. ի տեսականն և ի գործնականն: Գործնականն այն է, զոր ասացաք: Իսկ տեսականն գիտութիւն և հաւատն է, որով կարէ ամենայն բառնալ[5] զինքն յաստուածային տեսութիւնն և մերձաւոր լինել ան-

---

[1] C *հոգին* **փխ**. *հոգևորսն*:

[2] C *և միջնորդին պարտ ի լինել երիս ինչ: Նախ՝ զգուշութիւն բանից, որպէս ասէ* **փխ**. *պարտ է իմաստութեամբ հաշտացուցանել զԱստուած ընդ մեղավորին, որպէս Մովսէս զԱստուած ընդ ժողովրդեանն, որպէս ասէ*:

[3] C **չhf** *Երկրորդ՝ իմաստուն և այս ի բազում ուսմանց գոյանայ, կամ ի շնորհացն Աստուծոյ, որպէս Յովսէփն էր, զի անցոյց զսովն յաշխարհէն իմաստութեամբ:*

*Երրորդ՝ հեզ պարտ է լինել, որպէս Մովսէս, զի կարիցէ հաշտեցուցանել զԱստուած ընդ մեղաւորին, որպէս Մովսէս, զԱստուած ընդ մոլորեալ ժողովրդեանն:*

[4] C **չhf** *Եւ Տէրն նախատէ. «Կոյր կուրի յորժամ առաջ[նորդէ՝ սխալէ և] երկոքին ի խորխորատ [անկանին]»*:

[5] C *բառնալ* **փխ**. *համբառնալ*:

մահ վարուց[1] և հրաշալի խորհրդոցն, վասն որոյ ասէ Դաւիթ. «Քահանայք Քո զգեցցին զարդ[արութիւն]» *(հմմտ. Սաղմ. ՃԼԱ 9)*։

Դարձեալ զի զսահմանս իմաստութեանն պարտ է յինքն բերել քահանային, քանզի ասէ. «Իմաստասիրութիւն է խոկումն մահու» *(հմմտ. Ժող. Նախ. ԺԸ)*։ Ոչ այլ ինչ հոգալ, բայց միայն զելք կենաց, քանզի ասէ Տէրն. «Յորս գտայց, ի նոյն դատեցայց» *(հմմտ. Յովհ. Ե 30)*։ Եւ թէ. «Զի՞նչ օգուտ է զաշխարհս ամենայն շահել եւ զանձն կորուսանել» *(հմմտ. Մատթ. ԺԶ 26, հմմտ. Մարկ. Ը 36, հմմտ. Ղուկ. Թ 25)*։ Իսկ որ թողեալ զայս ամենայն ծառայեն միայն պորտոյ և որովայնին, յայնժամն լսեն «զվա՛յն» ի յառակախօսէն. «Վա՛յ, որ եթող զուսումն մանկութեանն եւ մոռացեալ զուխտն ասպուծեղէն» *(հմմտ. Ի.Ռամ. Բ 17)*։ Իսկ արդ՝ զայս ամենայն խորհել արժան է, և ապա ի գործ աստուածային մերձենալ: Իսկ եթէ ոչ կարիցէ, ոչ մերձենալ անտ, այլ լինել ընդ հաւատացեալ ժողովրդեանն, զի. «Ոչ հանճարեղն է՝ զառաջնորդութիւն ասպասի» *(հմմտ. Ի.Ռամ. Ի 5)*։

Արդ, այս է ասելն Տեառն, զի թշնամի է սատանայ կարգաւորաց եկեղեցւոյ և կրկնապատիկ ունի զօրք պատերազմելոյ, վասն որոյ քսան հազար ասաց Տէրն զհակառակին: Այսինքն՝ փորձեսցէ, թէ կարող է բիւր առաքինութեամբ ի ձեռն սգայարանացս պատերազմել ընդ այնմ, որ զկրկնապատիկն ունի զհակառակութիւն: Զի երբեմն ահեկաւն կորուսանէ զվատթարսն պոռնկութեամբ և այլօք, և երբեմն՝ աջեկաւն, զառաքինիսն և վարին[2], այսինքն՝ հպարտութեամբ և այլովք: Իսկ եթէ իմացեալ ի մտի, եթէ անկար է ընդդէմ կալ այնմ, լաւ է ամենևին ոչ ձեռն արկել զայս գործ, քան թէ |37ա| տկարութեամբ յամօթ լինել յԱստուծոյ և ի մարդկանէ: Այս խրատ նոցա ևս է, որք կամին եպիսկոպոս լինել կամ կաթողիկոս կամ վարդապետ, և ոչ ունին զօրութիւն հանճարեղութեամբ առաջնորդել, մի՛ ցանկասցին բնութեամբ մեծութեանն և պատուոյ,

[1] C *վարուց* **փխ**. *վայրուցն*:
[2] C *վարին* **փխ**. *զարիսն*:

զի որում շատ տուաւ՝ շատ պահանջեսցի ի նմանէ: Իսկ որք սակաւին եղէն ընդունողք, պարտ է նոցա ընդ հնազանդութեամբ կալ հզօրագունիցն, զոր օրինակ, որ ոչ է հմուտ նաւակառոյց լինել, թողու ի գիտունսն, որք կարող են ընդդէմ կալ ալեացն ծփանացն ծովուն: Այսպէս և հոգևոր առաջնորդաց, որ ոչ կարէ թափել ի գայլոցն զհօտսն[1], պարտ է առանց ամբոխի ունել զկեանս:

Յաղագս այսոցիկ ի սոյն յարեալ ասաց. «**Բարիոք է աղն, թէ աղն անհամեսցի, [ի՞ւ համեմեսցի]**» *(Համբ. Ղուկ. ԺԴ 34)*, իբր թէ բարիոք է քահանայութիւն, բայց թէ ըստ իւր կարգին լինիցի, իսկ զի՞ «*աղ*» անուանէ զառաջնորդսն: Եւ այս ըստ բազում պատճառացս:

Նախ՝ զի աղն ի ջրոյ բնաւորեցաւ լինել, այսպէս և առաքինութիւն քահանային յիմաստութենէն յառաջագայի, ըստ այնմ. «**Որ հանճարեղն է զառաջնորդութիւն ոպասցի**»[2] *(Ի.Առակք Ի. 5)*:

Երկրորդ՝ զի աղն է համեմիչ ամենայն կերակրոց, այսպէս վարք քահանային համեմիչ է անհամութեան գործոց ժողովրդեանն, ըստ այնմ. «**Տեսցեն զգործս յեր բարիս, եւ փառաւորե[ցեսցեն զՀ[այր յեր, որ յերկինս է]**» *(Մատթ. Ե 16)*:

Երրորդ՝ զի աղն զհում միսն ոչ թողու հոտել, այլ՝ պահէ ի նոյնութեան, այսպէս և ժողովուրդն հում են ի բարեաց գործոց, իսկ առաքինութիւն առաջնորդին կարէ պահել զնոսա, ոչ գայթակղել ի գործս անիրաւս, ըստ այնմ, որ ասէ Պաւղոս. «**Ելմանողէ ինչ եղեր-ուէ, որպէս եւ ես՝ Քրիստոսի**» *(Ի.Առ Ի. Կորնթ. ԺԻ. 1)*:

Չորրորդ՝ զի ի ջրոյ գոյանայ, այլ թէ[3] ի ջուր անկանի՝ հալչի և կորնչի, այսպէս և քահանայն ի կնոջէ ծնանի, այլ թէ ի կին պոռնկի, կորնչի[4] սրբութիւն նորա և ոչ ևս է պիտանացու ասաց Տէրն:

---

[1] C *զհօտսն* **փխ**. *զհաւատն:*

[2] C *Որ հանճարեղն է զառաջնորդութիւն ստասցի* **փխ**. *Ցանկալի է նա, քան զոսկի և քան զականս պատուականս*:

[3] C *զի ի ջրոյ գոյանայ, այլ թէ* **փխ**. *զի աղն եթէ*:

[4] C *ի կնոջէ ծնանի, այլ թէ ի կին պոռնկի, կորնչի* փխ. *անկեալ ի պոռնկութիւն կորնչի ամենայն*:

Հինգերորդ՝ զի աղն կսկիծ բերէ մորմնոյն, որ վէրս ունի, բայց առողջացուցանէ, այսպէս և սրբութիւնն ցաւեցուցանէ զմարմինն, զի զդիմակս նորա առնէ[1], բայց առողջանայ, հոգին ի վիրաց մեղացն և յամենայն անաւրէնութիւնէ:

Վեցերորդ՝ զի քան զամենայն իրս աղն է պիտանացու, զի առանց այլոցն սև է մարմինն, իսկ առանց աղի՝ ոչ, այսպէս քահանային, քան զամենայն իր պիտանացու է առաքինութիւն[2]:

[Եւթներորդ]՝ զի առանց նորա ոչ կարէ ապրեցուցանել զնա, այսպէս[3] յամենայն տեղիս պարտ է առաքինութիւն առնել քահանային յեկեղեցւոջն և արտաքոյ, մանաւանդ, թէ զվարս առաջի հե|**37բ**|թանոսաց պարկեշտս ցուցանել[4] և դիւրին է առնելն, եթէ կամեսցի, ըստ այնմ. «**Լուծ իմ էաղոյր է**» *(Մտթ. ԺԱ 30)*:

Ութերորդ՝ զի զայն ոչ այրէ հուր, այսպէս առաքինի ոք ոչ տանջի ի[5] դժոխոցն, ըստ այնմ. «**Աւրդաւրէն ի կեանան յաւիրեանական**» *(Հմպ. Մտթ. ԻԵ 46)*:

Իններորդ՝ զի ի կրկին սգայարանս մարդոյ կրկին զօրութիւն ստանայ, զի ի բերանն համ տայ և զաչսն կուրացուցանէ, այսպէս և առաքինութիւնքն, եթէ ոք արտաքուստ ի նէրքս քարշէ գործելով ծածուկ, նորոգէ զհոգին: Իսկ եթէ արտաքս բերցէ ի ցոյցս մարդկան, ասէ Տէրն. «**Այն իսկ են վարձէ նոցա**» *(Մտթ. Զ 2)*: Այլ՝ ծածուկ պարտ է առնել, որպէս խրատէ Տէրն:

Տասներորդ՝ զի ի մեղրն խառնեալ դառնացուցանէ աղն զքաղցրն բնութեամբ, որպէս զլեղի, այսպէս և ի կարգ քահանայութեան խառնել ընդ արծաթսիրութեան, զի նա է քաղցրութիւն

---

[1] C *առնէ* **փխ**. *գործէ*:

[2] C *առաքինութիւն* **փխ**. *առաքինութիւն, զի առանց նորա ոչ կարէ ապրել, զի քահանայութիւն ի նա էանայ*:

[3] C *զի առանց նորա ոչ կարէ ապրեցուցանել զնա, այսպէս* **փխ**. *զի յամենայն աշխարհի կայ աղ և ամենայն ոք կարէ առնուլ զնա, սոյնպէս*:

[4] C *ցուցանել* **փխ**. *առնել*:

[5] C *ի* **փխ**. *ի հուր*:

աշխարհիս և քահանայ, յոր արծաթ ժողովէ, ոչ հոգւոյ առնէ մասն և ոչ մարմնոյ, վասն որոյ առաքինութիւնն այն ոչ է ընդունելի Աստուծոյ, զի առաքինութեան գործն խափանէ, որ է փրկութիւն, և մանաւանդ զայնոցիկ, որ գնեն արծաթով զարքայութիւնն: Զոր օրինակ մեղրն յայլ իմն զօրութիւն ունի, բայց ի աղն՝ ոչ, այսպէս աղն համեմիչ է, բայց ի մեղրն ոչ: Նոյնպէս և առաքինութիւնն կարողութիւնն ունի, բայց յարծաթսիրութիւնն՝ ոչ: Այսպէս արծաթն յաշխարհականաց ձեռն գնող է արքայութեանն, իսկ ի ձեռն քահանայի ոչ տայ թոյլ սատանայ գնել զարքայութիւնն, այլ՝ պահէ Նեռինն, խորել և թաղել, վասն որոյ ասէ Տէրն. «**Բարւոք է աղն, իսկ թէ անհամի աղն**» *(Հմմտ. Ղուկ. ԺԴ 34)*, չէ բնաւ յիրս ինչ պիտանի, ի յերկրի պիտանացու ոչ է, թէ տացէ պտուղ, որպէս հող երկրին: Եւ չէ իբր աղբ արկանել զնա ի պարտեզ, և ոչ իբրև փայտ ի շինել տուն, կամ այրելի հուր ի ջերմանալ ի նմանէ, և գործել զկերակուրս, այսպէս ամենայն նիւթ իրաց մի պիտանացուցէ: Իսկ աղն, թէ զիւրն կորոյս, անհամի և այլոց պիտանացու ոչ լինի: Այսպէս և որ զառաջնորդութիւն ստացաւ և իւրով հեղգութեամբն անպիտան գտաւ, չէ այլ ինչ պիտանացու յեկեղեցի Աստուծոյ, այլ ընկենուլ արտաքս և կոխան լինել ի մարդկանէ, զի ասէ մարգարէն. «**Մարդ ի պատուի է եւ ո՛չ իմացաւ**» *(Սաղմ. ԽԸ 13, 21)*:

Զայսպիսիս Եզեկիէլ որթոյ փայտի նմանեցուցանէ, և զանպիտանութիւնն ցուցանէ յասելն. «**Զինչ իցէ փայտ որթոյ, զի ոչ լինի ի նմանէ անաւուղ ինչ եւ ոչ ցիցի յորմ, թէ կախեսցի ինչ ի նմանէ**» *(Հմմտ. Եզեկ. ԺԵ 3)*, այլ՝ զհատուցումն նորա հրով սպառնայ՝ ասելով. «**Զարմատ նորա ծակէ հուր**» *(Հմմտ. Երայ. Ե 24)*: Իսկ աստ զնկենուլն արտաքս զամօթ լինելն ի մարդկանէ ասէ, Զի յամենեցունց ընդունի քամահանս և ի հանդերձելումն գե|**38ա**|հենոյն պատրաստեալ: Զայս ասելով, եղբայրք իմ կոչեցեալք, ի սպասաւորութիւն Սուրբ Եկեղեցւոյ, փորձեցէք զանձինս ձեր, զի այնմ դիւրին է զամենայն ինչ առնել ձեզ: Իսկ եթէ այժմ պատրաստեալ էք լինել սպասաւոր

սուրբ խորհրդոյս և յետոյ յառաջին փսխածն դառնայք, լինիք ամօթով յԱստուծոյ և ի մարդկանէ: Բայց այս ամենայն ձեզ իբրև նախագուշակութիւն լինիցի, որովք իմացարուք զհակառակն ձեր ի նոյն գործատարութեանդ, զի ամենայն աշխարհս սիրելի է սատանայ և ձեզ թշնամի, զի դուք էք հակառակ նմա:

Եւ յատուկ է, որ ամենայն ոք ընդ իւր հակառակն պատերազմի և ոչ ընդ սիրելին, այսպէս կամ արարք սատանայի են ամենայն մեղաւորք, և դուք որոշեցայք ի նոցանէ կալ ընդ նմա: Այժմ պատրաստեցէք զձեզ տալ պատերազմ, զգեցարուք զրահն հաւատոյ և զվահանն յուսոյ, և ընկալարուք ի բերան ձերն ետ զԲանն Տեառն, և սուր ընդ մէջ ածէք զճշմարիտ Սուրբ Հոգին, և սաղաւարտ դիք ի գլուխս ձեր զնշանս խաչին, ըստ խրատոյն Պաւղոսի[1] *(տե՛ս Եփես. Զ 17)*, զի սոքա միշտ ընդ ձեզ են, այլ և դասք հրեշտակաց, զի ասէ. «**Բանակ հրեշտակաց շրջեն զերկիւղածովք եւ պահէ զնոսա**» *(Հմմտ. Սաղմ. Լ Գ 8)*, որպէս առ Եղիսէիւն, և թէ. «**Անկցին ի կողմանէ քումէ հազարք եւ բեւրք**» *(Սաղմ. Զ 7)*: Եւ Պաւղոս ասէ. «**Ոչ է մեզ պարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ այսոս չարութեան**» *(Հմմտ. Ա՛ռ. Եփես. Զ 12)*:

Եւ Տէրն ասէ. «**Եթող չեպ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւնս թշնամոյն, եւ չեպ ինչ ոչ մեղանչիցեն**» *(Ղուկ. Ժ 19)*: Որ և ձեզ մերձ կացցէ Տէրն, և զամենայն, որոգայթս փորձութեանց բռնաւորին, քակեսցէ ընդդէմ ձեր, և եղիջիք ժիր մշակ, արթուն կալ ի սպասու Տեառն և ծառայել զսուրբ սեղան Նորա և ժողովուրդսն հովուել արդարութեամբ և իրաւամբք, լինել օրինակ հաւատին՝ առնելովն և ուսուցանելովն, զի երևել հաւատապետին ընդունիցիք զանթառամ պսակն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով և ընդ որում Հօր համահզօրի և փառակցի Սուրբ Հոգոյն. վայել է փառք, իշխանութիւն և զաւրութիւն, այժմ և [յաւիտեանս. ամէն]:

---

[1] C չhf *ըստ խրատոյն Պաւղոսի*:

## ՏԱՄՆԵԻՁՈՐՍԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Ով ոչ իցէ ի յէՇ մարդ, որ ունիցի Ճ. (100) ոչխար, և կորուսանիցէ մի ի նոցանէ, [ոչ] թողուցցու զ[ինանուն եւ զկին յանապատի, եւ երթիցէ զՀետ կորուսեալոյն՝ մինչեւ գտանիցէ զնա» *(Ղուկ. ԺԵ 4)*։ Կամ. «Կին, որ ունիցի դրամ Ժ. (10)]» *(Համա՛ Ղուկ. ԺԵ 8)*։

Բազմադիմի առակաւք զամենախնամ տեսութիւն աստուածային սիրոյն զոր ունի առ արարածս յայտ առնէ, զի սովորութիւն է բժշկացն առ հիւանդն գնալ։ Է երբեմն, զի դեղ առնէ վիրացն և ցաւոցն, և է, զի բանս մխիթարականս խօսի և է ինչ, |38բ| զի յոյս դնէ զայլք աւրինակ տալով, զոր առողջացուցեալ է։ Այսպէս և Տէր մեր եկեալ առ հիւանդացեալ բնութիւնս, երբեմն խրատեաց ըզմեզ վարդապետութեամբ, երբեմն բժշկեաց զախտաժետս մեր, երբեմն յոյս դնէ հոգւոցն, որ ի դժոխս, իբր թէ վասն նոցա է մարմնացեալ։ Եւ երբեմն մեզ յետոյ եկեալ այլ խրատ տայ՝ գործեցեալ զօրութեամբն, որ ի ձեռն իւր չարչարանացն գտաւ զմարդկային բնութիւնս, վասն որոյ առակաւոր բանիւք ասէ. «Ո՞վ ոչ իցէ [ի յէՇ]» *(Ղուկ. ԺԵ 4)*։

Աստ տեսանելի է, զի կրկին առակ համանգամայն ասաց աստ վասն մի խորհրդոյ, այսինքն՝ մարդկային բնութիւնեանս զՃ. (100) ոչխարն և կորուսեալ դրամն։

Բայց նախ տեսցուք վասն ոչխարացն, և զի՞ զիրեշտակաց բնութիւնն և զմարդկան ոչխարաց նմանեցուցանէ։

Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի սուրբ կենդանի է ոչխարն, այսպէս և սոքա[1] էին մարդկային բնութիւնս յառաջին անմեղութեանն ընդ հրեշտակաց,

---

[1] C *սոքա* **փխ**. *սուրբք*։

որպէս և հրեշտակք, վասն որոյ ասէ մարգարէն. «**Փութ ինչ խոնարհ արարեր զնա, քան զհրեշտակս [քո], փառօք եւ պատիւ[ուով պսակեցեր զնա]**» *(Սաղմ. Ը 6)*։

Երկրորդ՝ զի ոչխարն ասր սուրբ ունի հանդերձ իւր, այսպէս և լուսով պարածածկ էր մարդն, որպէս և հրեշտակք, զոր և յետ մեղանչելոյն ասէ. «**Ծանեան, զի մերկացեալ[է] էին ի լուսոյն**» *(Հմպ. Ծննդ. Գ 7)*։

Երրորդ՝ զի անսղալ ճանաչէ ոչխարն զՏէրն իւր, այսպէս և յայնժամ դէմ յանդիման տեսանէր մարդն զԱստուած, որպէս հրեշտակք, զոր պատմէ Մովսէս ի գիրս իւր։

Չորրորդ՝ զի աւձահալած բնութիւն է ոչխարացն, այսպէս և ամենայն ախտք, որ իբրև զաւձ խածանեն զմեզ հալածական լինէր ի մարդոյն, որպէս և ի հրեշտակաց։

Հինգերորդ՝ զի յոյժ փափագէ ոչխարն աղի և փութայ առ նա, այսպէս և մարդն բանին կենաց և լուսափայլութեանն միշտ փափագէր ընդ հրեշտակաց, վասն որոյ ընդ մեղանչելն ասէր. «**Մի՛ մնասցէ Հոգի ի մի դրան, վասն զի[ի դրան] մարմին**» *(Հմպ. Ծննդ. Զ 3)*։

Վեցերորդ՝ զի ոչխարք ի մէջ գաւթին անմոլարք են, այսպէս և յանմահական վայրքն անմոլարք էին մարդիկք ընդ հրեշտակս։

Եւթներորդ՝ զի յանկարծակի փողատէ գայլն զոչխարսն, մինչ զի ոչ իմանայ, այսպէս և սատանայ խաբեաց զմարդն, մինչ ոչ գիտաց նա զխաբէութիւն նորա, վասն որոյ ասէ. «**Ելանէջուս բանաստեղծին եմուտ մահ յախտարհս**» *(Հմպ. Իմաստ. Բ 24)*։

Ութերորդ՝ զի այն ոչխարացն որք են ի գաւիթն, ոչ ինչ հոգայ տէրն, այլ վասն կորուսելոցն, այսպէս և Աստուած ոչ ինչ հոգայ վասն հրեշտակացն, զի անմոլարք են, այլ վասն մարդկային հոգոց, զի հեռացեալ էր ի նմանէ։

Իններորդ՝ զի տեարք ոչխարացն խնդիր է ելանեն և ոչ ծառայքն, զի չէ փոյթ ծառային վասն կորուստեան ոչխարին, այսպէս

և հրեշտակաց ոչ փոյթ է **|39ա|** վասն կորստեանն մարդկան: Եւ յայտ է ի զենումն պարարակին, զի չաղէին, թէ դմա արարեր և մեզ՝ ոչ:

Տասներորդ՝ զի քան զամենայն կենդանի սիրեցեալ լինի յաչս Տեառն իւրոյ, այսպէս և յամենայն կենդանիս, զոր ստեղծ Աստուած, միայն մարդն սիրեաց[1], վասն որոյ «*մարդասէր*» կոչի, և ո՛չ՝ հրեշտակասէր, կամ անասնասէր, յաղագս որոյ առակէ Տէրն ի յոչխար զմարդկային բնութիւնն:

Իսկ զի՞ Ճ. (100) թիւ:

Այս զկատարեալն ցուցանէ, զի Ճ. (100) թիւն կատարեալ է, զի Ժ. (10) Ժ. (10) անգամ պատկեալ լինի, որ է կրկնապատիկ կատարեալ, այսպէս՝ կրկին ստեղծուածոցս կատարելութիւն մարդկան է հրեղինաց և հողեղինաց: Իսկ զի՞ Ճ. (100) թուոյվն զմինն կորուսեալ եցոյց, զի մարդովն Ժ. (10) էին, ինն դաս հրեշտակ և մինն մարդ, որ լինի Ժ. (10), վասն որոյ ի կորուսել միոյն, ել ի խնդիր կորուսելոյն:

Եւ զի՞ «*անապատ*» կոչէ զերկինս: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի յանապատին ոչ է գործ մարդոյ, այսինքն՝ վարել և ցանել և այլն, այսպէս և յերկինս ոչ գոյր աշխատանք մարմնականք[2]:

Երկրորդ՝ զի կենդանիք, որ յանապատի են առանց վաստակոց ապրին, այսպէս և ի դրախտին առանց քրտանց և ճգանց ի հանգստեան էր մարդն, զի յորժամ անէծ ասէ. «**Բրդամբ երեսաց քոց կերբ[իցես] զհաց [քո]**» *(Ծննդ. Գ 19)*:

Երրորդ՝ զի յանապատի ոչ գործի մեղք, այսպէս և երկնայինքն անապատ են ի մեղաց, զի ոչ գոյր անդ ախտ կամ ցանկութիւն ինչ:

---

[1] C *սիրեաց* **փխ**. *սիրեաց, և յայտ է ի մարդանալոյն*:
[2] C *աշխատանք մարմնականք* **փխ**. *աշխատութիւն ի մարդկան*:

Չորրորդ՝ զի անապատն հեռաւորութիւնն նշանակէ, այսպէս և երկինքն իմանալի հեռի է ի սգայական աշխարհէս, ըստ այնմ. «**Գնաց յաշխարհի հեռի առնուլ իւր թագաւորութիւնն**» *(Ղուկ. ԺԹ 12)*։

Հինգերորդ՝ զի որ յախարհի կենան ի մէջ շինութեան, ոչ կարեն բնակել յանապատի վասն անսովոր տեղեացն, այսպէս և որք այժմ ոչ սովորին մտաւք յերկինս լինել միշտ, ո՛չ կարեն բնակել անտ, զի չունին ծանաւթութիւն ի նմա, վասն որոյ և Պաւղոս ասէ. «**Զվերինն խոհեսարուք ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ**» *(Համբ. Ա՛ Կորնթ. Գ 1-2)*։

Վեցերորդ՝ զի որք կամին դիւրաւ հասանին յանապատ, այսպէս և որք ցանկան ելանել յերկինս, դիւրին է, զի Տէրն ասէ. «**Լուծ իմ քաղցր է եւ բեռ թեթեւ, որով գրջիք,**- ասէ,- **հանգիստ անչանց ձերոց**» *(Համբ. Մատթ. ԺԱ 29-30)*։

Եւթներորդ՝ զի յանապատի սակաւ կենդանիք բնակին, այսպէս և յիմանալի խորանսն սակաւք վայելեն, ըստ այնմ. «**Սակաւ են, որ մտանեն ընդ նա**» *(Համբ. Մատթ. Է 13)*։

Ութերորդ՝ զի թէ ոք գնայ յանապատ ի շինութենէ տանի հետ իւրն հաց և փայտ և այլն, այսպէս և յաշխարհէ աստ, թէ ելանել կամիմք յերկինս, պարտիմք հանդերձ սգենուլ զառաքինութիւն և կե|39բ|րակուր պատրաստել զսրբութիւն։ Զի թէ յանկասկած ժամու գնամք, գուցե ոչ իցէ մեզ տեղիք, և յայնժամ սկսանիցիմք զյետին տեղին ունել ամօթով, և լսել զձայնն, որ ասէ. «**Ընկեր ընդեր մտեր այսր, զի ոչ ունիս հանդերձ հարսանեաց**» *(Մատթ. ԻԲ 12)*, կամ «**իւղ լապտերաց**» *(տե՛ս Մատթ. ԻԵ 1-13)*։

Ինսներորդ՝ զի «*անապատն*»՝ «*անշէն*» ստուգաբանի, նմանապէս և յերկինս ոչ գոյ շինութիւն մեղաւորաց, զի որք աստ պատրաստեցին բնակութիւն, անդ ոչ ունին, ըստ այնմ. «**Ի բաց գնացէք ամենեքեան, զի ոչ գիտեմ զձեզ մշակք ան[իրաւութեան]**» *(Համբ. Ղուկ. ԺԳ 27)*։

Տասներորդ՝ զի յանապատի գող ոչ գոյ, այսպէս և յերկինս ոչ գոյ խաբիչ, պատրիչ, վասն որոյ թողու զհաւատն զըւարթնոցն և եկն խնդրել զկորուսեալն ոչխար, յաղագս որոյ ասէր Դաւիթ. «**Մոլորեցայ ես, որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո, զի զպատուրաստս քո ես ոչ մոռացայ**» *(Սաղմ. ՃԺԸ 176)*։

Արդ, եկեալ Տէր մեր և ստեղծաւղ և եգիտ զմոլորեալ բնութիւնս ի մէջ մեղաց, և եբարձ ի վերայ ուսոցն զփայտ խաչին, որ գուշակէր զբարձրութիւն մարդկան յապականութենէ մահու և մեղաց յանապականութիւն և ի կեանս։ Այսքան առ այս։

Իսկ ըստ այսմ յարացուցի յաւել և զդրամն Ժ. (10) թուովն։ Զի թէպէտ Տէր մեր եկն և մարմին առեալ և զբնութիւն մարդկան հանեալ յերկինս, որպէս ցուցաւ, այլ յետ մարդեղութեանն մնացեալ որդիքս Ադամայ ծնեալ յաւազանէն, զոր կնոջ անվամբ յորջորջէ, եդեալ զպատկեր անմեղութեանն ի սրբելն եւթնապատիկ շնորհօք հոգւոյն ի հաւատացեալսն։ Դեռևս կորուսանէ եկեղեցի զմի ոք, զի դեռ խաբէութիւն չարին մերձ է և մարմին՝ ցանկացող, վասն որոյ ոչ բաւականացաւ առաջին գտանելովն, զոր ինքն եգիտ, այլև զնոյն գործ գտանելոյն ի ձեռն եկեղեցւոյ, յորժամ մեղանչէ ոք լուցանել ճրագ իմաստնութեան, զի առաջին գտմանն ոչ պիտոյացաւ այս, քանզի հոգով և մարմնով կորեալ էր մարդն, վասն որոյ և ինքնեկն ի խնդիր, իսկ երկրորդիս, միայն գործով կորուսանէ սատանայ զմարդն և մնայ միտքն և սգայութիւնքն զոր կարողանայ լոյս իմաստութեանն խրատիւ և քարոզութեամբ դարձեալ գտանել զնա, վասն որոյ ասէ. «**Ո՞ւր է կին որոյ է դրամ Ժ. (10)**» *(Ղուկ. ԺԵ 8)*։

Եւ զի՞ յառաջն զերկուս բնութիւնսն ասաց՝ զիրեշտակաց և զմարդկան, վասն որոյ Ճ. (100) ասաց, և մի ի նոցանէ մարդն էր, իսկ աստ զմարդկային բնութիւնս միայն ասէ, վասն որոյ Ժ. (10) միայն ասէ, որ ունի Ժ. (10) սգայութիւնս՝ հոգեկանս և մարմնականս, յորոց անհնարին է ի միասին կորչել։ Բայց մի նոցանէ սխալի, քանզի գող է սատանայ այժմ և ոչ բռնաւոր, վասն որոյ

որպէս գող զմինն տանի, այսպէս և սատանայ զմի մարդ, կամ զմի ի սգայարանացն պարտ է նախ, և ապա՝ զայլսն ընդ կարգի: Եւ ի դրամ օրինակէ զպատկերն իւր զոր նոր նորոգեաց: Եւ այս ևս ունի պատճառ բազում բաղդատութեամբ **|40ա|** իմն[1]:

Նախ՝ զի դրամն արծաթի լինի և ունի յինքն ձևագրեալ զպատկեր թագաւորի և զանունն, այսպէս և մարդն է ի մահկանացուածս և նկարեալ ունի յինքն զպատկերն Աստուծոյ, այսինքն՝ զանձնիշխանութիւնն և զանմահութիւնն հոգւոյն:

Երկրորդ՝ զի անբաժանելի է պատկերն և գիրն յարծաթոյն, այսպէս և անքակ է անմահութիւն հոգւոյն և անձնիշխան կամքն, վասն որոյ և բնաւորեցաւ և մարմնոյն և զանմահական կեանս ստանալ ի կրկին նորոգմանն:

Երրորդ՝ զի ժանգ առնու դրամն ի պատճառէ իմիքէ, այսպէս և հոգին առնու աղտեղութիւն մեղաց ի ներգործութենէ չարին, ըստ այնմ. «**Նախանձու բանաստրկութիւն եմ[ուրպ մահ աշխարհ]**» ***(Իմաստ. Բ 24)***:

Չորրորդ՝ զի դրամն անդրադարձեալ «մարդ» կոչի, ըստ գրոյն, և մարդն նոյնպէս՝ դրամ, այսպէս և Աստուած մարդ եղև, և մարդն՝ աստուածացաւ, զի անբաժանելի են ի միմեանց այժմ[2]:

Հինգերորդ՝ զի զդրամն տեսեալ ճանաչեմք զթագաւորին պատկերաւն, որ ի նմա, այսպէս և. «**զԱստուծոյ չիք տեսեալ ոք**», ըստ Աւետարանչին ***(Համբ. Ա. Յովհ. Դ 12)***, բայց Միածնաւն, որ է պատկեր աներևութին Աստուծոյ, ճանաչեմք զԱստուած Հայր, քանզի նա ուսոյց մեզ զնա[3]:

---

[1] C, O **չիք** *Իսկ ըստ այսմ յարացուցի յաւել… պատճառ բազում բաղդատութեամբ իմն*:

[2] G **չիք** *Աստուած մարդ եղև, և մարդն՝ աստուածացաւ, զի անբաժանելի են ի միմեանց այժմ*: C **փխ**. *սոյնպէս և հոգւոյն թողութիւն մեղքն թողուի վասն մարմնոյն, և մարմնոյն այրի պարգևի վասն հոգւոյն, որպէս ասէ Նիւսացին*:

[3] C *բայց Միածնաւն, որ է պատկեր աներևութին Աստուծոյ, ճանաչեմք զԱստուած Հայր, քանզի նա ուսոյց մեզ զնա փխ. բայց պատկերաւն իւրով իմանամք զնա, որպէս ասէ առաքեալ. «Աներևոյթքն Աստուծոյ երևելի արարածովքս իմացեալ տեսանի»*:

Վեցերորդ՝ զի զաւրութեամբ ունի արծաթն զանուն թագաւորին, իսկ յորժամ ընթեռնումք, երևի ներգործութեամբ, այսպէս և ոք յորժամ ի չար գործսն է ո՛չ է պատկեր Աստուծոյ, զի զայն անասնոց արար պատկեր և զանձնիշխան կամքն ընդ լծով ախտին հնազանդեցուցեալ, յաղագս որոյ ո՛չ նա ներգործութեամբ պատկեր Աստուծոյ: Իսկ յորժամ ի բարի գործսն է, յայտնի երևի ներգործութեամբ ի բարի գործոցն, թէ պատկեր է նա նախատպին, զի այսքան ամենայն բարի են, այս է ընթեռնուլն:

Եւթներորդ՝ զի հող ծածկէ զդրամն, և այն է կորնչելն, այսպէս՝ ծուլութիւնն զբարութիւն գործոցն կորուսանէ զպատկերն Աստուծոյ, զի հողոյն յատկութիւն է ծուլութիւնն:

Ութերորդ՝ զի զարծաթ ի հողէն պարզեն և յիստակեն, ըստ մարգարէին, և ապա յետոյ զպատկերն նկարեն, այսպէս և զմարմինս մեր ի հողոյ կազմեալ է Արարիչն, և ապա զբանական հոգին ի նմա եդեալ, ըստ այնմ. «**Եւ Տէր Աստուած հող յերկրէ եւ ստեղծ զմարդն**]» *(հմմտ. Ծննդ. Բ 7)*, և կամ. «**Նախ ծնանիմէ ի մարմնոյ, եւ ապա՝ ի հոգւոյն աւազանի**»[1] *(հմմտ. Մատթ. Ի 20)*:

Իններորդ՝ զի ամենայն դրամ, յորում դրոշմեալ է պատկերն, միապէս ունի զպատկեր թագաւորին, այսպէս և ամենայն հաւատացեալ միապէս պատկեր Աստուծոյ, զի չիք խտիր ոչ արուի և ոչ՝ իգի: Իսկ անհաւատքն անպատկեր են, զոր այլ ազգիքն «*մուրալաս*» կոչեն, այսինքն՝ ձևով միայն և ոչ արդեամբք պատկեր Աստուծոյ[2]:

Տասներորդ՝ զի արծաթն բնականապէս ունի զպայծառութիւնն իւր, իսկ թէ ոք պղինծ խառնէ ի նմա, ապա՝ նուաղանայ, այսպէս և մարդն՝ բնականապէս անմեղ ստեղծաւ յԱրարչէն, իսկ յազդմանէ չարին խամրացաւ և խառնեաց զորումն չարութեան ի մէջ ցորենւոյն, ըստ բանին Տեառն *(տե՛ս Մատթ. ԺԳ 25–30)*:

---

[1] C չիք և կամ. «Նախ ծնանիմք ի մարմնոյ, և ապա՝ ի հոգւոյն աւազանի»:

[2] C խտիր ոչ արուի և ոչ՝ իգի: Իսկ անհաւատքն անպատկեր են, զոր այլ ազգիքն «մուրալաս» կոչեն, այսինքն՝ ձևով միայն և ոչ արդեամբք պատկեր Աստուծոյ փխ. մեծ և փոքրն և այլն:

|40բ| Մետասաներորդ՝ զի բնաւորեալ է արծաթոյ, ոչ կարող գոլ թաքուցանել զայն, ինչ որ ի նմա խառնեն պղինձ, կամ այլ ինչ, այսպէս և ի մարդն եդ բնական Աստուած զխիղճ մտացն, որով ոչ կարէ թաքչել մեղք ի մարդումն, ըստ այնմ. «**Ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի, եւ ի գաղտնի, որ ոչ ծանիցի**» *(Մարկ. Դ 26)*։

Տասնեամեկերորդ՝ զի հնարեցան մարդիկ զպղծնախառն դրամն ջլետալ և պայծառ երևեցուցանել, այսպէս և մարդս հնարի կեղծաւորութեամբ ծածկել զմեղս, որ ամբարեալ է ի հոգին, ըստ փիլիսոփային. *«Աղքատութիւն կեղծաւորեալ զհարստութիւն և դիմակն նոյնպէս»:*

Տասներկուերորդ՝ զի թէպէտ զայս հնարեցան, փութով բացուի այսպէս դրամին, և ամենեքեան տեսանեն, և է փող, այսպէս և մարդըն թէպէտ ի կենդանութեան իւրում սակաւ ժամանակս ծածկել զմեղս, սակայն դիպի աւուր, յորում գաղտնիք ամենայն յայտնին, ըստ այնմ. «**Ապրուռէ եդան եւ դպրուՐիւնէ բացան**» *(Հմմտ. Դան. Է 9-10)*, և թէ. «**Մեզ ամենեցուն յանդիման առ[աջի], զի ընկ[ալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի եւ եթէ չար]**» *(Հմմտ. Բ Կորնթ. Ե 10)*։

Տասներեքերորդ՝ զի զաւեր դրամն ոչ ոք ընդունի, մանաւանդ զայն, զոր թագաւորն հրամայէ ո՛չ ընդունել, այսպէս և ի լինել բազում ամաց ի մեղս մարդոյն, և ներողութեամբն Աստուծոյ յամեալ յոլով ժամանակս՝ թերևս դարձցի, ըստ մարգարէին. «**Ոչ կամիմ զմահ մեղաւորին**» *(Հմմտ. Եզեկ. ԺԸ 32)*։ Իսկ յորժամ ոչ կամի դառնալ, յայնժամ շարժի բարկութիւնն Աստուծոյ վերայ որդւոցն անհաւանութեան և ամենայն արարածոց ատելի լինի, և հրեշտակաց և ամենայն սրբոց:

Տասնևչորսերորդ՝ զի յորժամ ի հուր անկանի դրամն ոչ ևս երևի պատկերն, որ ի նմա, այսպէս և մարդն, յորժամ ի դժոխքն անկանի, ոչ ևս է ի համարի մարդկան, զի ոչ է խնամքն Աստուծոյ

առ նմա, այլ, որպէս ծառայ[1], բորբոք ցանկութեանցն, թողուլ զաստուածային բորբոքումն սիրոյն, այսպէս և Տէրն արդար դատաստանաւ հատուցանէ մարդկան, ըստ վկայութեան խղճմտանաց իւրոց:

Արդ, այս ամենայն պատահեալ բնութեանս մերում և անկեալ ի դժոխս: Իսկ Տէրն մեր և թագաւորն Աստուած կամեցաւ նորոգել զպատկերն իւր՝ խոնարհեալ ած աւել տան յաշխարհիս տնաւրէնութեամբ մարդեղութեանն իւրոյ կամ սքանչելոգործութեամբն ի մի վայր ժողովեաց[2] և գտեալ զմարդն ժանգոտեալ և մեղօք լցեալ, զոր և սրբեալ մաքրեաց աւազանաւն և եհան յառաջին պատիւն ի պատկերակցութեանն իւր, վասն որոյ և ուրախակից եղեալ հրեշտակք, փառք ի բարձունս առաքեն նմա վասն փրկութեան մարդկան: Այսպէս և եկեղեցի ետ զօրութիւն զհեռացեալն յինքենէ խոնարհութեան աւելաւն ժողովել ի ծոց իւր և փութով գտանել ճրագիւ մարմնոյ աստուածութեանն նորա՝ օրինակ տալով զՆա, որ վասն մեր կրեաց զամենայն, զի դարձուք և կեցցուք[3]:

**|41ա|** Եւ քանզի «*ճրագ*» անուանէ զմարմին իւր, և այս ըստ բազում եղանակի:

Նախ՝ զի ճրագն է խաւար առանց լուսոյ և սևադէմ, այսպէս և մարդկային բնութիւնս գոյր նախքան զմարդանալն Քրիստոսի խաւարեալ մեղօք և սևասացեալ անաւրէնութեամբ:

Երկրորդ՝ զի ճրագին մին մասն վառի ի լոյս, այսպես և Բանն Աստուած ոչ զբոլոր մարդիկ էառ միաւորութեամբն, այլ՝ մի անհատ մարմին միաւորեաց բանական հոգվն ընդ լոյս աստուածային բնութեանն:

Երրորդ՝ զի ճրագն յանկարծակի երևի ի խաւարեալ տանն, այսպես և Բանն Աստուած յանկարծակի եկն և մարմնացաւ և զլոյս փառաց Իւրոց ծագեաց աշխարհի, ըստ այնմ. «Յանկարծակի

---

[1] C *ծառայ* **փխ**. *ծառայեաց*:

[2] C **չhf** *տնաւրէնութեամբ մարդեղութեանն իւրոյ կամ սքանչելոգործութեամբն ի մի վայր ժողովեաց*:

[3] C, O **չhf** *Այսպէս և եկեղեցի ետ զօրութիւն... զի դարձուք և կեցցուք*:

եկեսցէ, Տէր, ի պաճար ուխտին» *(Մաշտ. Գ 1)*, և թէ. «Որէ նստէին ի խաւարի՝ լոյս ծագեցաւ նոցա» *(Հմմտ. Մտթ. 16)*։

Չորրորդ՝ զի Տէրն ասէ, թէ ճրագն ի վերայ աշտարակի դնի և լոյս տայ ամենեցուն, որ ի տան իցեն, այսպես[1] և Տէր մեր բարձրացաւ ի խաչին, և անտի ծագեաց լոյս համապայծառ որդւոց մարդկան, ըստ այնմ. «Յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին յգ[եցից] առ [ի]ս» *(Յովհ. ԺԲ 32)*։

Հինգերորդ՝ զի ի վառել ճրագին փախչի խաւարն ի տանէ, այսպես ընդ մարմնանալ Բանին Աստուծոյ, փախեաւ սատանայ ի յաշխարհէս[2], ըստ այնմ. «Իշխանուքիւն աշխարհիս [այսորիկ] ընկեսցի արտաքս» *(Յովհ. ԺԲ 31)*։

Վեցերորդ՝ զի լուսոյն, որ ի տան վառի, ամենեքեան հաղորդին՝ մարդ և անասուն և գազան, այսպես և ընդ իջանել Տեառն մերոյ ի դժոխս, ոչ ոմանք լուսաւորեացն, այլ՝ զամենեան եհան, ըստ այնմ. «Որէ ի կապանս էէ, ելեէ եւ որէ ի խաւարի՝ յայտնեցարուէ» *(Հմմտ. Եսայի ԽԹ 9)*, և թէ. «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ» *(Հմմտ. Ղուկ. Գ 6)*։

Եւթներորդ՝ զի մինչդեռ ոչ է վառեալ ճրագ ի տան՝ ոչ գիտեն զի՞նչ գործի ի տանն, այսպես մինչև ի մարմնանալ Բանին, ոչ կարացին իմանալ զգրեալսն ի մարգարէիցն, ըստ այնմ. «Տեառնելով պեսցեն եւ մի՛ պեսցեն [եւ լսելով լուիցեն եւ մի՛ իմասցեն]» *(Հմմտ. Եսայի Զ 10, Հմմտ. Մտթ. ԺԳ 14)*։ Իսկ Տեառն մերոյ գալստեամբն յայտնեցան միտք գրոց և գործոց, որպէս ասի յԱւետարանին. «Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս» *(Ղուկ. ԻԴ 45)*։

Ութերորդ՝ զի լոյս առանց պատրոյգի ոչ երևի, և պատրոյգ առանց լուսոյ ոչ վառի, այսպես Բանն Աստուած առանց մարմնոյն ո՛չ է Քրիստոս, և ո՛չ մարմինն առանց Բանին միաւորութեանն՝ Աստուած։

---

[1] C *իցեն, այսպես* **փխ**. *իցեն, ըստ Իւր հրամանին, սոյնպես*։

[2] C **չիք** *ի յաշխարհէս*։

Իններորդ՝ զի նուաղ աչքն նուաղ տեսանէ զլոյս ճրագին և պայծառն՝ առաւել, այսպես և հերձուածողն նուաղ ունի հաւատս, վասն որոյ բաժան կարծէ զԲանն ի մարմնոյն, իսկ ուղղափառ հաւատացեալն, ընդ ուղիղ տեսութեան հաւատոյն, ուղիղ տեսանէ զԲանն միացեալ ի մարմնի, որպէս և է իսկ, ըստ այնմ. «**Բանն մարմին եղեւ եւ բ[նակեաց ի մեզ]**» *(Յովհ. Ա. 14)*։

Տասներորդ՝ զի յորժամ իր ինչ կորնչի ի խաւարչտին տեղւոջ ճրագիւ գտանի, այսպես և մարդկային բնութիւնս կորեալ էր ի խոր խաւարի, վասն որոյ վառեաց զմարմինն Բանն Աստուած պայծառ լուսով աստուածութեամբն և ելեալ ի խնդիր եգ|**41բ**|իտ, որպէս ասացաւ ի վերոյ։

Իսկ թէ զի՞արդ ի «*ճրագ*» առակեաց մարմինն և ոչ [յ]արեգակ կամ ի լուսին։ Այս է, զի ճրագն մերձ լինի մեզ, վասն որոյ զայն ետ աւրինակ, որ մերձ մեզ էր, իբր թէ ինքն այնպէս մերձ եկեալ, որպէս ճրագն և ոչ հեռու, որպէս արեգակ և լուսին։ Նմանապէս և եկեղեցի վառէ ճրագ զվարդապետսն, յորժամ և պիտոյ իցէ, վասն որոյ, վասն զի մին մասն է ճրագին, որ լուսաւորէ, և այն առանց տարակուսանաց, այսպէս և ի վարդապետսն բանն ուղիղ է, զի թէպէտ և ինքն վատթար և սևասացեալ լինի գործով, ոչ կարէ զգործն իւր ուսուցանել, այլ զայն լոյս շնորհացն, որ յԱստուծոյ տուեալ է ի բերան նորա[1]։

Իսկ զի՞ «*փան*» նմանեցուցանէ զաշխարհս և զեկեղեցի, որ ի քարանց[2]։ Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի տունն չորեք անկիւնի լինի, այսպէս և աշխարհս չորս կողմ ունի. արևմուտք և արևելք և այլն, և ի նոյն ձև շինի եկեղեցի[3]։

---

[1] C, G **չhf** *Նմանապէս և եկեղեցի վառէ ճրագ... յԱստուծոյ տուեալ է ի բերան նորա*։

[2] C *և զեկեղեցի, որ ի քարանց*։

[3] C *և ի նոյն ձև շինի եկեղեցի*։

Երկրորդ՝ ի վերայ հիման շինի տուն, այսպէս՝ լերինք և բլուրք հիմունք են երկրի, ըստ այնմ, որ ասէ Յոբ. «Հիմունք երկրի սարսեցին» *(Յոբ. ԺԶ. 18)*[1]: Եւ կամ դարձեալ՝ աշխարհ ի վերայ հիման Աստուծոյ է շինեալ, ըստ այնմ. «Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ» *(Սաղմ. ՃԺ. 5)*: Եւ եկեղեցի ի վերայ հիման հաւատոյ, զոր ոչ կարացին շարժել հեղեղք[2]:

Երրորդ՝ զի մասամբ ժողովեալ քար և փայտ և այլն, և ապա կոչի տուն, այսպէս յերկնէ և յերկրէ, և որ ի մէջ սոցա պարառեալ են զմիմեանց բնութիւնք, է աշխարհ, քանզի այս է սահման սորա,- ասէ փիլիսոփայ: Եւ եկեղեցի ի բազում խորհրդոց և ի շնորհաց պայծառանայ, վասն որոյ ոչ ունի գեղեցկութիւն ի եկեղեցի որոյ ոչ ունի վարդ և զայլսն[3]:

Չորրորդ՝ զի ի ձեռն ճարտարի շինի տուն, այսպէս և ի ձեռն ամենահնար իմաստութեանն Աստուած շինեաց զաշխարհ, ըստ այնմ. «Ընդուած իմաստութեամբ [Իւրոյ] հիմունս արկ [երկիր]» *(Հմմտ. Առակ. Գ. 19)*: Նմանապէս և զեկեղեցի նա շինեաց[4]:

Հինգերորդ՝ զի հաստատ է շինութիւն տանն, այսպէս և Աստուած զաշխարհ հաստատեաց <զաշխարհ>, զի մի սասանեաց ի յաւատն, ասաց մարգարէն: Նմանապէս և կազմուածք տաճարին Աստուծոյ[5]:

Վեցերորդ՝ զի ձեղունք և տանիս գոն տանն, այսպէս և աշխարհ ձեղունք ունի զէ. (7) գաւտիոսն և տանիս զջրեղէն կամարն, ըստ այնմ. «Խոռէ որպէս [զգեսպ] վերարկու է նորա» *(Սաղմ.*

---

[1] C *Յոբ. «Հիմունք երկրի սարսեցին»* փխ. *ի պաշտաւն եկեղեցւոյ. հիմունք երկրի փտանէին*:

[2] G չիք *Եւ եկեղեցի ի վերայ հիման հաւատոյ, զոր ոչ կարացին շարժել հեղեղք*: C փխ. *ասաց և եղեն, հրամաեաց և հաստատեցան*:

[3] C, G չիք *Եւ եկեղեցի ի բազում խորհրդոց… ոչ ունի վարդ և զայլսն*:

[4] C, G չիք *Նմանապէս և զեկեղեցի նա շինեաց*:

[5] G չիք *զի մի սասանեաց ի յաւատն… կազմուածք տաճարին Աստուծոյ*: C փխ. *հաստատեաց զերկիր ի վերա հաստատութեան իւրոյ, ասաց մարգարէն*:

*ՃԳ 6)*, և թէ. «**[Զգեստք] արկեր ի վերայ ջուրց պէրոայարկս նորա**» *(հմմտ. Սաղմ. ՃԳ 3)*։ Յայս միտս և եկեղեցի շինեցաւ ներքին կամարօքն և վերին գումբեթաւն[1]:

Եւթներորդ՝ զի տուն կամարաձև կապի և մարգարէն ձգեցէր զերկինս, որպէս խորան և եկեղեցի ի նոյն ձև կիսաբլուր կամար կապի:

Ութերորդ՝ զի զտուն վասն հանգստեան շինի, այսպէս և աշխարհ վասն բնակութեան կենդանեաց շինեցան:

Իններորդ՝ զի ի տունն ննջեն և յառեն մարդիկ, այսպէս և յաշխարհի մեռանին մարդիկ, և աստ դարձեալ յառնեն ի մեռելոց, **|42ա|** ըստ այնմ. «**Խաղաղութեամբ ի՛ոյ այս եւ ի ա՛ոյն ննջեսցո՛ւք եւ ս՛ուրբ[ի՛ցո՛ւք]**» *(Սաղմ. Դ 9)*։ Յայս միտս ի դուռնս եկեղեցւոյ թաղուիմք, զի ի նորին խորհուրդ յառնիցեմք[2]:

Տասներորդ՝ զի գոյ նորա[3] զիին տունն քակել, և դարձեալ նորոգել, այսպէս և ի հանդերձեալն կրկնակի նորոգեսցէ զաշխարհս Տէրն, ըստ այնմ. «**Եղիցին երկինք նոր եւ երկիր նոր**» *(Եսայի ԿԵ 17)*, զոր Տէր նորոգեսցէ, այսպէս և փոխանակ այսմ եկեղեցւոյ վերինն Սիոն նորոգի ի վայելումն արժանաւորաց իւրոց, յորոց յայսցանէ յայտ է ասելն Տեառն՝ մտանել ի տունս յայս և լուսաւորել զմեզ[4]:

Արդ,՝ այսքան բարերարութիւն ցուցեալ Տէրն մեր և այլս բազում զոր կամիմք յառաջիկայդ ուսանել[5]: Եւ արդ, Նա ստեղծաւղ է գոյիցս, կարող է օգնական լինել մեզ և սրբել զմեզ ի ժանգոյ մեղացն: Զի թէ զբոլոր բնութիւնս ազատեաց ի մեղաց, յայտ է, թէ և զմեզ կարող է արդարացուցանել, բայց այսքան ևեթ, զի մեք

---

[1] C, G **չիf** *Յայս միտս և եկեղեցի շինեցաւ ներքին կամարօքն և վերին գումբեթաւն*:

[2] C, G **չիf** *Յայս միտս ի դուռնս եկեղեցւոյ թաղուիմք, զի ի նորին խորհուրդ յառնիցեմք*:

[3] C *նորա* **փխ**. *հնար*:

[4] C, G **չիf** *այսպէս և փոխանակ այսմ... յայս և լուսաւորել զմեզ*:

[5] C *ուսանել* **փխ**. *ուսանել և մեք յամառեալ ի մեղս կամիմք ձրի առնել զչարչարանս Նորա և զմահ*:

կամակար մտաւք զանձինս խոնարհեցուսցուք ի ներքոյ սրբութեան և ապաշխարութեան, զի մինչդեռ չիք մեր աղաղակել լուիցէ մեզ, և մինչդեռ չիք ինչ գործեալ, Նա ձեռն կալու լինի մեզ:

Իսկ արդ, այսքան ողորմութեան շնորհք եցոյց մեզ Տէր, զի մի՛ յաւիտենական կորստեանն պատահիցիմք, զի չիք մեր ապաւէն բաց ի նըմանէ, վասն զի բազմագութ է և անսխակալ և անյիշաչար, և բազում անգամ ողորմի, և թէ Հ. (70) եկին մեղուցեալ իցեմք, զամենայն թողու, վասն որոյ մի զանյիշաչարութիւն նորա պատճառս առնելով անդարձ լիցուք, այլ յիշեսցուք և զպատուհասսն և երկնչելով ի նմա երկիւղիւ վարեսցուք զկեանս մեր և արժանի լիցուք մասին սրբոցն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, շնորհօք և ողորմութեամբ Հօր նորին և Հոգոյն Սրբոյ, որին փառք [յաւիտեանս. ամէն][1]:

[1] C, G, O չիք *զամենայն թողու, վասն որոյ մի զանյիշաչարութիւն … որին փառք յաւիտեանս. Ամէն*:

# ՏԱՄՆԵԻՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Ընդ մեջ էին երկու որդիք։ Եւ կր[պ]ուերն ի նոցանէ. «[Հայր], տուր ինչ բաժին, որ անկանի յընչ[իցդ]։ Եւ նա բաժանեաց նոցա [զկեանսն]» *(Ղուկ. ԺԵ 12)*։

Սովորութիւն է մարմնաւոր ծնողաց[1] ի փոքրկութեանն այլ ազգ[2] սնուցանել զմանուկն, և ի մեծութեանն՝ այլ կերպիւ խրատել, քանզի մինչև յէ. (7) ամն ի հրոյ և ի ջրոյ պահեն, և անտի յետ ի դատարկաբանութենէ և յայլոց։ Այսպէս և Տէր մեր առնէ՝ խնամելով զբնութիւնս։

Նախ՝ ասաց մարգարէիւքն. «Մի՛ շնար, եւ մի՛ գողանար» *(Մաղաք. ԺԹ 18)*։ Իսկ յորժամ հասեալ ի տիս մանկութեանն խօսի այլ կերպիւ ընտանեգոյն[3], իբր զարմատ մեղաց ի մէնջ կտրելով, զի զոր աւրինակ ծառ ի յարմատոցն զարգանայ և պտղաբերի, այսպէս և մեղքն |42բ| ի խորհրդոցն յառաջացեալ ի մահն վճարի, որպէս ուսուցանէ առաքեալն *(տե՛ս Յակոբ. Ա 15)*, վասն որոյ ասաց յառաջագոյն. «Լեր իրաւախոհ [ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատաւորն դահճի, եւ արկանիցին ի բանդ]» *(Մաղաք. Ե 25)*, և մի՛ բարկանար, զի անտի ծնանի սպանութիւնն, և մի՛ հ[այ]իր յարատ *(հմմտ. Մաղաք. Ե 28)*, զի անտի ծնանի շնութիւնն, և մի՛ երդուիր ամենևին *(հմմտ. Մաղաք. Ե 34)*, զի անտի ծնանի ուրացութիւնն։ Իսկ մեք յամառեալ ի մերն, զհակառակ բնութիւնից Նորա առնեմք, վասն

---

[1] G չիք *մարմնաւոր ծնողաց*։
[2] G չիք *ազգ*։
[3] G չիք *կերպիւ ընտանեգոյն*։

որոյ օրինակ բերէ մեզ զայս. «*Առն միոջ է*», իբր թէ ի սա հայելով իմասցուք զանմտութիւնն մեր, ըստ անառակին՝ վատնելով զխրատն աստուածային անառակ գործովք:

Եւ դարձեալ, զի՞ մեղանչել բնաւորեցաւ մեզ ըստ այնմ. «**Մինչ մարդկան ի խնամս չարին հասուցեալ են ի մանկ[ութենէ իւրում]**» *(Հմմտ. Ծննդ. Ը 21)*, սակս որոյ և զդարձն ասէ, զի ի նըմանէ ուսցուք վասն որոյ ասէ. «**Առն միոջ էին երկու որդիք**» *(Ղուկ. ԺԵ 11)*:

Արդ, ոմանց այսպէս թուեցաւ, թէ երկուս որդիս զարդարս և զմեղաւորս ասէ, զոր ոչ պատշաճեցուցանէ կարգ առակաւոր բանիս, քանզի ասէ երէց որդին. «**Երբէք պատուիրանաւ էր՝ չանցի**» *(Ղուկ. ԺԵ 29)*: Իսկ թէ արդարք, թեև մեծ ոմն է, ո՛չ է առանց մեղաց, ըստ այնմ. «**Թէ եւ մի աւրեայ իցէ կեանք մարդոյ, ո՛չ է առ[անց մեղայ]**» *(Հմմտ. Յոբ ԺԴ 5)*:

Եւ դարձեալ, թէ ըստ ներգործութեանց ոչ ունի ինչ մեղս, սակայն զնախահօրն պարտիսն ամենեքեան ունէին, ապա և յայտնի է անպատշաճութիւն բանից նոցա, որ վասն առակիս: Բայց արժան է բարեպաշտ մտօք տեսանել զբանս, զի «*այր*» կոչէ զԱստուած, վասն արիականն բնութեանն:

Եւ դարձեալ, իբր զնախատիպ պատկերին: Իսկ «երկու որդին» ասէ՝ զիրեշտակս և մարդիկ: Եւ արդ, քանզի «*երէց*» ասէ զիրեշտակս, քան զմարդիկ:

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ ըստ ժամանակին, զի յառաջ զիեշտակսն գոյացոյց յառաջնումն աւուր, իսկ ի վեցերորդ աւուրն, ապա՝ արար զմարդն:

«**Յետ ո՛չ բաղում աւուրց**» ասելով՝ յայտ արար, եթէ ոչ եկաց ի դրախտին ժամանակ ինչ, այլ՝ փութով անցեալ զպատուիրանն Աստուծոյ: Այս է. «**Գնալն յաշխարհ հեռի**» *(Հմմտ. Ղուկ. ԺԵ 13)*: Վասն զի ոչ գոյ տեղի, ուր ոչ գոյ Աստուած, ըստ մարգարէին. «**[Մի՞թէ] զերկինքն եւ զերկիր ես [ոչ] լնում**»,- ասէ Տէր ամենայն *(Հմմտ. Երեմ.*

*ԻԳ. 24)*, և թէ. «Ելանեմ յերկինս՝ Դու անդ ես» *(Սաղմ. ՃԼԸ 8)*, յաղագս որոյ չիք տեղի որոշելոյ զմեզ յԱստուծոյ: Բայց ասէ մարգարէին. «Ես Աստուած մերձաւոր եմ ես ոչ՝ հեռաւոր, այլ մեղքն չեր որոշեն ի մէջ իմ ես ի մէջ չեր» *(Երեմ. ԻԳ. 23, Եսայի ԾԹ. 2)*: Զի Աստուած ոչ գոյ ամենևին աղտ, վասն որոյ հնարեաց սատանայ զմեղս մարդկան միջնորմն արկանել և հեռացուցանել այն աղտեղութեամբն ի մէնջ զանմեղն: Եւ զի ի պատուիրանազանցութենէ մարդոյն բազում ինչ պատահեաց նմա:

Նախ՝ զի ի լուսոյն մերկացաւ, որով կարեր մերձաւորիլ առ Աստուած:

Երկրորդ՝ ամօթով եղեալ յԱստուծոյ կորանայր:

Երրորդ՝ զի մոռացաւ զԱստուծոյ ամենատես բնութիւնն՝ ծածկելով զինքնին ներքոյ թզենւոյն:

Չորրորդ՝ զի ծառայ եղև մահու, ըստ այնմ. «Հո՛ղ էիր ես ի հողդ դարձցես» *(Ծննդ. Գ. 19)*:

Հինգերորդ՝ զի անմահութենէն զրկեցաւ:

Վեցերորդ՝ զի հանեալ վարեցաւ ի գեղեցիկ վայրուցն:

Եւթներորդ՝ զի զտեղի անասնոց վայելեաց փոխանակ դրախտին:

Ութերորդ՝ զի զտրտմութիւն ժողովեաց յինքն, փոխանակ ուրախութեանն, ըստ այնմ. «Տրտմութեամբ ծնցես որդի» *(Համբ. Ծննդ. Գ. 16)*:

Իններորդ՝ զի անկաւ ի մտաց, զի ոգիք ըմբռնեալք ի մեղս ի մտաց ևս անկնին:

Տասներորդ՝ զի յաստուածային տեսութենէն և ի խաւսակցութենէն զրկեցաւ:

Տասնևմեկերորդ՝ զի ապականացու եղև մարմնովն:

Տասնևերկուերորդ՝ զի հոգւովն ի դժոխս գ[երեցաւ]:

Տասնևերեքերրորդ՝ զի զծնունդս իւր ընդ իւր քարշեալ:

Տասնևչորսերորդ՝ զի զՀոգին[ս Աստուծոյ] |43բ| հեռացոյց յինքեանէ, ըստ այնմ. «Մի՛ մեռցէ Հոգի իմ ի մարդկանս, [յայդմիկ յաւիտեան], վասն լինելոյ [դոցա] մարմին» *(Ծննդ. Զ 3)*:

Տասնևհինգերորդ՝ զի ապաշխարութեան կարօտացաւ:

Տասնևվեցերորդ՝ զի փուշ և տատասկ բուսոյց յինքեան:

Տասնևեւթերորդ՝ զի քրտամբ երեսաց եկեր զհացն, փոխանակ անաշխատ ուտելոյն ի դրախտին:

Տասնևութերորդ՝ զի սովորեցաւ ի մեղանչելն:

Տասնևիններորդ՝ զի զանասնոց կերակուր կերաւ:

Քսաներորդ՝ զի զթագաւորութիւնն կորոյս, զայն որ ասէ. «**Կացուցեր զնա ի վերայ ամենայն յեռակերպ[այ էոյ]**» *(Սաղմ. Ը 7)*:

Քսանևմեկերորդ՝ զի մարգարէութիւնն բարձաւ:

Քսանևերկուերորդ՝ զի կամարար սատանայի գտաւ:

Այս է ասեալն. «**Վարձեայ զինչս իւր, զի կայր անառակութեամբ**» *(Ղուկ. ԺԵ 13)*, այսինքն՝ զի ի բազմանալ մեղացն հեռանայ Հոգին շնորհաց, այս է «*վատնեալն*»:

Իսկ «*անառակ*» ասելն, այս է անաւրինակ, իբր թէ նախքան զնա մեղանչական, ոչ գոյր օրինակ նմա, որպէս և նա մեզ, յաղագս որոյ դիպաւ սովոյ, զի ասէ. «**Եղեւ սով սաստիկ**» *(Ղուկ. ԺԵ 14)*:

Իսկ «*սով*»՝ հոգւոյն սով ասէ, զի չիք ինչ, քան զնա դժուարագոյն, և առաւել է, քան զմարմնոյ սովն:

Նախ՝ զի մարմնոյ սովն ինքեան միայն առնէ վնաս, իսկ հոգւոյն՝ զմարմինն ևս սպանանէ:

Երկրորդ՝ զի մարմնոյ սովն հացի է, իսկ հոգւոյն՝ առաքինութեան և Բանին կենաց, ըստ այնմ. «**Ոչ պաց յեղ սով հացի, այլ լսելոյ զԲանն կենաց**» *(Համբ. Ամոս Ը 11)*:

Երրորդ՝ զի մարմնոյ սովն երևի և հնար գտանի, իսկ հոգւոյն սով՝ ոչ ոք գիտէ, եթէ ոչ ինքն, ըստ այնմ. «**Ոչ ոք գիտէ զմարդն, եթէ ոչ հոգին, որ ի մարդն**» *(Համբ. Ա Կոր. Բ 11)*:

Չորրորդ՝ զի մարմնոյ սովն մարդ լցուցանէ, իսկ հոգւոյն՝ Աստուծոյ է կարիս աւգնականութեան:

Հինգերորդ՝ զի մարմնոյ սով աստ միայն տանջէ, իսկ հոգւոյն սով և ի հանդերձեալն առաւելու, վասն որոյ ասէ. «**Սով սաստիկ**» *(Ղուկ. ԺԵ 14)* և ո՛չ՝ լոկ «*սով*»:

Արդ, ասէ. «**Դնացեալ յարեցաւ ի միւռան ի էաղէացեաց յաշխարհին յայնմիկ**» *(Ղուկ. ԺԵ 15)*:

Աստ յայտնի են, զի որք յԱստուծոյ հեռանան, դիւաց ընկեր լինին, զի քաղաքակից այսմ աշխարհի դևք են, ըստ այնմ. «**Իշխան աշխարհիս այսորիկ [ընկեցցի արտաքս]**» *(տե՛ս Յովհ. ԺԲ 31, ԺԶ 11)*:

Իսկ զի՞ ասէ. «**Դնաց յարեցաւ**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 18)*, այն է՝ զի բազում չարիս գործեցին բնութեանս դևք:

Նախ՝ զի ախտիւ լցին զբնութիւնս:

Երկրորդ՝ խաւարաւ տգիտութեան՝ յԱստուծոյ աւտարացուցին:

Երրորդ՝ զի զմարդիկ ծառայս ինքեան գործեցին:

Չորրորդ՝ զի փոխանակ Աստուծոյ՝ զինքեանս պաշտել ետուն:

Հինգերորդ՝ զի ընկերակից տանջանաց ինքեանս գործեցին ի դժոխս: Եւ այսոքիկ վասն այն պատճառի, զի նախ ընդ Աստուծոյ ի թշնամութիւն խորհեցաւ, ըստ այնմ. «**Եդիցց ցաքուռն իմ յամպս եւ եղէց նման բարձելոյն**» *(Եսայի ԺԴ 14)*: Եւ Աստուծոյ ոչ ինչ կարաց առնել զքէն նախնձուն ի բնութիւնս մեր հանել կամեցաւ: Զոր օրինակ, ո՞ք թշնամի իցէ թագաւորի և նմա ոչինչ կարիցէ առնել, եթէ **|44ա|** զսիրելի թագաւորին ըմբռնէ, փոխանակ նմա զնա ցաւեցուցանէ: Սոյնպէս սատանայ ընդ մեզ արար, յաղագս որոյ ասէ. «**Ընդարձեաց յաղթարակս իւր արտածել խոցս**» *(Ղուկ. ԺԵ 15)*:

Այս է, քան զամենայն վատթար կենդանիս, ներքին կամեցաւ առնել, ըստ այնմ. «**Հաւասարեցաւ անասնոց [անբանիկ] եւ նմանեցաւ նոցա**» *(Սաղմ. ԽԸ 13, 21)*:

Եւ զի՞ սատանայ «*խոզի*» նմանի: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի վատթար կենդանի է խոզն, այսպէս սատանայ վատթար է այժմ, քան զամենայն կենդանիս և զգոյքս:

Երկրորդ՝ զի խոզն միշտ յոգոց հանելով երթայ, այսպէս սատանայ միշտ ի լացէ և ոչ ունի ուրախութիւն ինչ:

Երրորդ՝ զի տղմասէր է, այսպէս և սատանայ, մեղսասէր է յոյժ:

Չորրորդ՝ զի ոչ կարէ յերկինս նայել, այսպէս և սատանայ ոչ կարէ զԱստուած տեսանել:

Հինգերորդ՝ զի խոզն ունի մասն ինչ սրբութեան՝ զկճղակն, այսպէս և սատանայ ունի զանմահութիւն յինքեան ան ի բաց դնելի:

Վեցերորդ՝ զի ժանիս ունի երկակի, այսպէս և սատանայ ունի կրկին կորուսիչ. նախ՝ մեղս տայ առնել, երկրորդ՝ յետ մեղացն յուսահատութեամբ կորուսանէ:

Եւթներորդ՝ զի ի վարդի հոտէն փախչի խոզն, այսպէս և սատանայ յառաքինութեան հոտոց սրբոցն յարահետ լինի:

Ութերորդ՝ զի ընդ ամենայն կենդանիս պատերազմի, այսպէս և սատանայ, ընդ ամենայն ոք զհէնն իւր ցուցանէ՝ ընդ ծեր և ընդ տղայ, ընդ սրբոց և անսրբոց:

Իններորդ՝ զի կրկնակենցաղ է խոզն՝ ուտելով ունդս և միս, այսպէս սատանայ այլազգաբար շրջի ընդ մեղսասիրացն, և այլ ընդ առաքինեացն, զի մեղսասէրսն միշտ գործելով զմեղս կորուսանէ, իսկ զառաքինիսն՝ հպարտութեամբ:

Տասներորդ՝ զի, քան զամենայն կենդանիս, բազում ծնունդս առնէ, այսպէս և սատանայ ի բազում է և անթիւ է հնարքն և զօրք, վասն որոյ ասէ. «**Գնաց յաթեցաւ ի մի ի քաղքացեացն եւ արածէր խոզս**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 15)*:

Իսկ աստ ասէ. «**Ցանկայր լնուլ յեղջերուացն, զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք տայր նմա**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 16)*:

«*Եղջե[ւ]րն*» մեղաց նմանի, վասն երկու պատճառի:

Նախ՝ զի բազմաճուղ է, այսպէս և մեղք բազում է և անթիւ: Եւ երկրորդ՝ զի, մինչդեռ ոչ է հասեալ, քաղցր է, իսկ յորժամ հասանի՝ դառնանայ: Այսպէս և մեղքն՝ յառնելն քաղցր երևի, իսկ յորժամ հասանի ի հոգին և դառնացուցանէ յաւիտենականապէս:

Եւ զի՞ ասէ. «*Ոչ ոք գայր նմա*»: Զի՞նչ իցէ այս կերակուր, որ խոզից անկանէր և մարդն չգտանէր: Եւ այս երկու մտաւք իմացեալ լինի:

Նախ՝ զի անասունքն բնականապէս ունին առաքինութիւն ինչ, որպէս արագիլ՝ արդար, ուղիղ, խոհեմ, առեւծ՝ արի, տատրակ՝ ողջախոհ, իսկ մարդն մի ի սոցանէ ոչ գտաւ:

Եւ երկրորդ՝ զի անասունք զբն[ական] գործս ոչ փոխեն, այսինքն՝ արուն առ էգն: Իսկ մարդիկ և զայն |44բ| քակեցին ըստ այնմ. «**Զպէրս բնականս ի պէրս անբնականս**» *(Ա՛ռ Հռոմ. Ա՛ 26)*: Եւ այլ մեծամեծ չարիս գործեցին, զորս ոչ է արժան յիշել, վասն որոյ ասէ. «**Ցանկայր լնոյլ զոր[ովայն իւր յեղջերէն, զոր խոզէն ուտէին]**» *(Ղուկ. ԺԵ 16)*, այսինքն՝ նմանիլ անասնոց գնացիցն. «**եւ ոչ ոք տայր նմա**» *(Ղուկ. ԺԵ 16)*:

Իսկ իբրև տեսեալ մարդոյն զայնքան անարգութիւն իւր ի միտս եկեալ ասէ. «**Քանի՞ վարձկանք են ի տան [հօր իմոյ] հացալիցք, եւ ես սով սով[ամահ կորնչիմ]**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 17)*:

Բայց աստ է տարակոյս ինչ, զի ցանկայր լնուլ յեղջերացն, և մեղքն պատրաստ գոյր, զի՞արդ կամեցաւ դառնալ ի հայր իւր: Այլ այս է, զի հացին կենաց ցանկացաւ և զի պակասեալ էին, վասն որոյ. «**Դնացեալ յարեցաւ յեղջիւրսն խոզաց**» *(հմմտ. Ղուկ. ԺԵ 15)*: Արդ տեսեալ, զի ո՛չ ունէին նոքա զհացն կենաց, խնդրեաց զնա, որ կարողն էր տալ նմա զխնդրելին:

Ասէ. «**Քանի՞ վարձկանք են ի տան [հացալիցք]**» *(Ղուկ. ԺԵ 17)*:

Եւ ևս կրկին լինի հարց, թէ անառակ ի խոր խաւարի կացեալ, զիա՞րդ իմացեալ դարձաւ: Զայս առաքեալն ուսուցանէ, թէ. «**Աղերեւոյթքն Աստուծոյ երեւելի արածովքս իմացեալ պեսանի**» *(հմմտ. Ա՛ռ Հռոմ. Ա՛ 20)*: Զի մարդիկ ունէին բնական իմաստնութիւն, որովք զբնութիւն արարածոց գտին և զշրջանս լուսաւորացտ, նմանապէս և զանազան արուեստս նովին քննութեամբ իմացան և զԱրարիչն ամենայնի: Եւ արդ, յորժամ մի ոք նկարեալ առաջի դնեմք՝ ի նա

կապակցեալ ամենառակ բնութեանս դարձումն: Եւ եղիցի մեզ օրինակ Աբրահամ, զի նա եղև սկիզբն աստուածապաշտութեան, զի մինչ ի նա ոչ գոյր, և զի ընտրիչ եղև ամենայն ի զոր ասեմս:

Նախ՝ հայեցաւ ի բնութիւն անասնոց և գիտաց, զի անբանք էին, և ոչ գոյր ի նոսա զօրութիւն:

Երկրորդ՝ ետես զքարինս և զայլ անշունչս, զի ոչ ինչ էին:

Երրորդ՝ զլուսաւորս իմացաւ, թէ ի սպասաւորութեան են, ուստի յայտնի երևեցան, թէ ծառայք են:

Չորրորդ՝ զսովամահ բնութիւնս և ետես զսոսա որոշեալս յԱստուծոյ, և յայսքան գարշելի ախտս անգեալ:

Հինգերորդ՝ և զայն ևս ետես, զի քան զամենայն բնութիւն պատուական էր ստեղծեալ զմարդն, վասն մտաւոր և անձնիշխան կամացն:

Վեցերորդ՝ ծանեաւ և զայն, թէ պիտանի է Արարչին իւրոյ, զի զամենայն արարածս ի նմա ծառայութիւն կացոյց, և այս յամենայնէ գիտացեալ ասաց. «Քանի՞ վարձկանէ են ի տան [հաւր իմոյ հացալիցէ]» *(Ղուկ. ԺԵ 17)*:

Եւ ո՞վք իցեն. «*վարձկանքն հացալիցն*»:

Թուի, թէ զլուսաւորսդ ասէ, որք միշտ, անդադար ի շարժման կան: Իսկ «*հացալիցք*» են, այսինքն՝ լուսով լցեալ են և ամենայնիւ անկարօտ: Եւ այս է «*հացալիցն*»:

Եւ ասացից. «Հայր՝ մեղայ յերկինս՝ եւ առաջի քոյ» *(Ղուկ. ԺԵ 18)*:

Աստ երևի խնամք |45ա| Արարչին ի բնութիւնս, զի թէպէտ դիւրակործան եմք ի մեղս, սակայն ինքնագտակք եմք ապաշխարութեանն, վասն այնոցիկ, որ գծեցաքն, զոր և առ տնտեսն գովեաց զՏէրն: Զոր օրինակ նինուէացիքն իմացան, թէ վասն ինքեանց անաւրէնութեանցն քաղաքն կործանի, և դարձան ի մեղաց: Սոյն աւրինակաւ և բնութիւնս:

«Եւ յարուցեալ եկն առ Հայրն» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 20)*:

Եւ այս ոչ սոսկ բան, այլ կատարելապէս «*եկն*», այսինքն՝ ի զղջումն: Ա՛յս է գալն: Եւ աստ երկու խնամք առաւել երևի Քրիստոսի առ մեզ: Նախ՝ զի ծառայք չէաք արժանի, որդի անուանէ զմեզ: Եւ երկրորդ՝ զԱրարիչն մեր «*Հայր*» անուանէ, որ և այս գթութեան ցոյցք և ողորմութեան:

«**Յարեաւ ի հեռասպանէ ընդառաջ գ[նայ]**» *(հմմտ. Ղուկ. ԺԵ 20)*:

Ոչ ապաշխարութեան արտասուս կամ հառաչանք, այլ միայն դիմեցաւ գալ՝ ասէ. «**Ընկաւ պպարանոցաւն նորա եւ համբուրեաց զնա**» *(Ղուկ. ԺԵ 20)*: Եւթնազգ խոնարհութիւն երևի աստ և քաղցրութիւն[1]:

Նախ՝ զի խոնարհեցաւ ընդառաջ գնալ անառակ որդւոյն:

Երկրորդ՝ ոչ գարշեցաւ ի գարշելի պարանոցէն, որ համբուրեաց զնա:

Երրորդ՝ զի զառաջին պատմուճանն ագոյց նմա:

Չորրորդ՝ զի մատանի եդ ի ձեռս նորա:

Հինգերորդ՝ կաւշիկ յոտս նորա:

Վեցերորդ՝ զի եզէն զեզն պարարակ վասն նմա:

Եւթներորդ՝ զի ուրախ եղև ընդ գտումն մեղաւորին:

Իսկ ի հանդիպել հաւրն՝ ասէ որդին. «**Հայր՝ մեղայ յերկինս՝ եւ առաջի քոյ**» *(Ղուկ. ԺԵ 18)*:

Ի սմանէ պարտ է ուսանել մեզ մեղաւոր[ա]ցս, զի ա՛յն է պատճառն, որ թէպէտ Աստուած անյիշաչար լինի մեզ, մեք զմեր մեղանչականութիւնն ոչ մոռանամք: Իսկ ընդառաջ գնալն հօրն ցուցցուք ի յԱբրահամն, զոր օրինակ եդաք ասէ Ստեփանոս. «**Աստուած փառաց երեւեցաւ Հօրն մերում Աբրահամու, մինչդեռ ի Խառան էր**» *(հմմտ. Գործք Է 2)*: Եւ ի Ծննդոցն ասէ. «**Եւ երեւեցաւ նմա Աստուած առ կաղն[ե]ան Մամբ[րէի]**» *(Ծննդ. ԺԸ 1)*: Եւ ուտելն զբաղարճն ընդ Աբրահամու առ խորանաւն, և աղաչանքն Աբրահամու վասն Սոդոմայեցւոցն, և զաւետիսն որդւոյն ծնընդեան,

[1] C *քաղցրութիւն* փխ. *գթութիւն*:

վասն որոյ դէպ է ասել, թեև զայս ևս պաղատեցաւ հառաչանօք. «*Հայր՝ մեղայ յերկինս՝ և առաջի քոյ*», զի զդէմ Ադամայ ունի նահապետն, ըստ որում ասաց՝ «*Հ[այր մեղայ յերկինս]*»:

Իսկ «*յերկինս*» ասելն՝ զդրախտն ասէ, ուր առաջին հանցանքն Ադամայ եղև: Իսկ «*երկին*» կոչի դրախտն, վասն հինգ եղանակի:

Նախ՝ զի բարձր է տեղեաւ:

Երկրորդ՝ վասն անմահութեան տ[եղ]եացն:

Երրորդ՝ վասն մերձ լինելոյն յերկինս:

Չորրորդ՝ վասն անապականութ[եան] |45բ| պտղոցն:

Հինգերորդ՝ վասն միշտ կանաչութեանն և պայծառութեանն:

Իսկ «*առաջի քո*» ասէ, զի չէ՛ հնար, ասէ, թաքչել ի քում ամենատես աչացդ, այլ ես հնարեցայ թաքչել ի ներքոյ թզենւոյն: Զի յորժամ մարդն զարհուրելով և ամաչելով առնէ զմեղսն, այն կես վնասու է, զոր օրինակ՝ լիրբն և անամօթն առաւել է:

Նոյնպէս զարհուրանաւքն նուաղէ, քան զնա, վասն որոյ խոստովանի անառակ որդին. «**Ոչ եմ արժանի կոչել որդի քո. արա զիս իբր ե՛ւ [զմի ի վարձկանացդ քոց]**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 19)*:

Աստ երիս իրս ուսուցանէ յանցաւորացս, որ թէպէտ խնամօքն Աստուծոյ արժանաւորի թողութեան մեղաց:

Նախ՝ զանձն ընդ անցաւորսն ունել պարտ է:

Եւ երկրորդ՝ ոչ մոռանալ զյանցանս իւր:

Եւ երրորդ՝ զի խոնարհ լինիցիմք, զի յորժամ զայս առնէ յանցաւորն, Աստուած զայսոց ընդ դիմակն առնէ: Զի որչափ մեք զմեզ մեղանչական ըմբռնեմք, Նա արդարացուցանէ զմեզ, և որչափ խոստովանիմք, Նա մոռանայ զմեր մեղքն, և որչափ ի խոնարհ ունիմք զանձինս, Նա բարձրացուցանէ զմեզ, ըստ այնմ. «**Որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձցի**» *(Ղուկ. ԻԳ 12)*, որպէս աստ է տեսանել: Զի ասէ անառակն՝ «**Մեղա [յերկինս]**», իսկ հայրն՝ **անկեալ համբուրէ: Եւ ասէ անառակն. «Զեմ արժանի կոչիլ որդի [քո]»: Իսկ հայրն ասէ. «Հանէք զպատմուճանն առաջին, եւ ագ[ուցէք նմա]**» *(Ղուկ. ԺԵ 22)*:

Իսկ «*պատմուճանն*»՝ զշնորհ աւազանին ասէ, զոր ի դրախտին մերկացաւ: Եւ զի՞ պատմուճանի նմանեցուցանէ: Եւ այս վասն հինգ պատճառի:

Նախ՝ զի պատմուճանն բոլոր մարմինն ծածկէ, այսպէս և աւազանին շնորհք՝ զբոլոր մարդն:

Երկրորդ՝ զի պատմուճանին յատուկ է պայծառ լինել, այսպէս և մկրտութեամբն պայծառանայ հոգին, զի. «**Որք ի Քրիստոս մկրտեցայք զՔրիստոս ագեցեալ էք**» *(Ա՛ռ Գաղատ. Գ 27)*:

Երրորդ՝ զի յետոյ պատահի մարդոյ ագանել պատմուճանն, այսպէս և մկրտութիւնն, յետ մարմնական ծնընդեանն պատահի մարդոյն:

Չորրորդ՝ զի որք կամին, նոքա սգենուն պատմուճանն, այսպէս և որք կամին, նոքա ծնանին աւազանաւն:

Հինգերորդ՝ զի թէ կամի ոք, հանէ զպատմուճանն, այսպէս և կամօք ուրանաք զշնորհս աւազանին, զոր օրինակ կամաւ խոնարհեցաւ Ադամ ընդ կնոջ և կերան և մերկացան զլոյսն: Իսկ զմերկութիւնն Ադամայ ոչ ոք առաջնոցն չկարաց ծածկել, վասն զի ամենեքեան ի ներքոյ պարտուց նախահօրն անկեալ էին: Ապա և ի ձեռն Տեառն գալստեանն արժանացաք նորին շնորհի, ըստ որում ասէ. «**Դնայէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք [զնոսա յանուն Հաւր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյ սրբոյ]**» *(Մատթ. ԻԸ 19)*:

Բայց այս սրբութեան նշանս գոյր ի յառաջինսն, վասն որոյ յուսացաւ Ենովն և Աբրահամ հաւատաց, բայց առժամայն ընկալան և ոչինչ: Բայց զօրութեամբ առին ի ձեռն հաւատոցն, զոր օրինակ Ադամայ ասացաւ՝ ի նմին ժամու մեռանել յաւուրն, յորում ուտիցէ զպտուղն *(տե՛ս Ծննդ. Բ 17)*: Եկեր և ոչ մեռաւ ներգործութեամբ, |**46ա**| այլ զաւրութեամբ մեռաւ, ըստ նմին օրինակի և զառաջինսն իմասցիս, առ որս իմացեալ եղև խորհրդոյս տեսութիւն, բայց առանց Քրիստոսի ոչինչ առին:

Իսկ զի՞ հրամայէ հանել զպատմուճանն և ագուցանել: Եւ այս դէմք բանի միայն: Զի Աստուծոյ ոչ է կարիս սպասաւորութեան, այլ՝ հրամանաւ լնու, զոր ինչ կամի: Բայց ըստ օրինակի թագաւորաց խօսի: Այլ դէպ է ասելն, որպէս ասաց առաքելոցն. «**Գնայէ՛ք [այսուհետեւ], մկըրտեցէք զամենայն [հեթանոսս]**» *(Մատթ. ԻԸ 19)*:

Իսկ զի՞ «*մատանի*» եդ ի ձեռն: Այս զպատկերին նորոգիլն յայտնէ, ըստ այնմ, որ ասէ Եսայի. «**Ցնծասցէ անձն իմ Տէր, զի զգեցոյց [ինձ] հանդերձս փ[րկութեան] եւ պատմու[ճառ ուրախութեան], իբրեւ փեսայի [եդ ինձ պսակ], եւ [իբրեւ] հարսն զարդ[դ զարդարեսցի զիս]**» *(Եսայի ԿԱ 10)*: Եւ այն, զի ի ձեռն աւանդեաց զպատկերին նորոգիլն, ուստի յայտ է, զի ի գործն կայացոյց զպատկերն իւր: Զի որք սուրբ են վարուք, նոքա ունին զպայծառ պատկերն աստուածային:

Եւ զի՞ «*ձեռն*» զգործն նշանակէ: Եւ այս վասն հինգ պատճառի:

Նախ՝ վասն սովորութեան հասարակաց, որք ամենայն ձեռօք առեն զարուեստն:

Երկրորդ՝ է միջակ տեղաւ ձեռն, որով կարէ մարդն զմարմնոյ գործն ևս կատարել և զհոգւոյ: Զհոգւոյն, զի աղօթէ ձեռօք և մարմնոյն. «**Զվարդակս յեռաց էոց կերիցես, երանի է էեզ, եւ բարի [եղիցի]**» *(Սաղմ. ՃԻԷ 2)*:

Երրորդ՝ զի կարէ ձեռն և պատկեր յօրինել ի ձեռն դեղոց, այսպէս և բարի գործք զպատկերն Աստուծոյ կարէ կանգնել:

Չորրորդ՝ զի ձեռն է կենդանացուցիչ մարմնոյ և գործքն՝ հոգոյ:

Հինգերորդ՝ զի ամենայն փառք մարդոյ յառաջին ի ձեռաց Աստուծոյ, այսպէս և փառք հանդերձեալ կենացն յառաջին ի բարի գործոց, ըստ այնմ. «**Տեսցեն զգործս յեր բարիս, եւ փառաւորեսցեն [զհայր ձեր, որ երկինս է]**»[1] *(Մատթ. Ե 16)*:

---

[1] Ե չhf *Եւ այս վասն հինգ պատճառի: Նախ՝ վասն սովորութեան հասարակաց… «Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն [զհայր ձեր, որ երկինս է» (Մատթ. Ե 16)*:

Եւ ասէ. «**Ազուցէէ զկոշիկն յոտսն**» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 22)*։

Այն է, զոր ասէ Տէրն. «**Եղուս չեզ իշխանութիւն կոխել զուշտ եւ զկարիճս, եւ [զամենայն զաւրութիւն թշնամւոյն, եւ չեզ ոչինչ մեղանչիցեն]**» *(Ղուկ. Ժ 19)*։

Եւ զի՞ «*կաւշիկն*» զզօրութիւն նշանակէ:

Նախ՝ զի թագաւորական է կաւշիկն, այսպէս յաստուածային զօրութենէն նորոգեալ մարդս պատերազմի ընդ թշնամոյն:

Երկրորդ՝ զի զսպէ զոտսն յամենայն կողմանց, այսպէս աստուածային զօրութիւնն յամենայն չարէ պահէ:

Երրորդ՝ զի մեռելոտի մորթի լինի կօշիկն, այսպէս մահկանացու բնութեանս ետ Աստուած զզօրութիւն իւր:

Չորրորդ՝ զի կօշիկն զմարդն փառաւոր ցուցանէ, այսպէս և աստուածային խնամքն զսուրբսն գերագոյն ցուցանէ ամենայն աշխարհի:

Հինգերորդ՝ զի կաւշիկն զմարդն բարձր պահէ յերկրէ, այսպէս և աստուածային զօրութիւնն հեռի պահէ զմարդն ի չարեաց, որպէս ասէ Յ[ո]հ[աննէս]. «**Ո՞, որ զին պահեցեր անմերչ ի խառնակութենէ կանանց**» *(հմմտ. Ա Կորնթ. Ե 9, հմմտ. Յայտն. ԺԴ 4)*։ Յետ որոց խրախութիւնս առնէ, ասէ. «**Ածէէ զեզն պարարակ, զենէէ կեր[իցուք եւ ուրախ լիցուք]**» *(Ղուկ. ԺԵ 23)*։ Եւ այս է ճշմարիտ պատարագիլն ի խաչին նշանակէ, ըստ որում ասէ մարգարէն. |46բ| «**Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ, իբրեւ զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ**» *(Երայ. ԾԳ 7)*։

Եւ զայս աւրինակ տպաւորեցաւ առ Աբրահամ ի պատարագելն ի Սահակայ, վասն որոյ ասէր Տէրն. «**Աբրահամ, հայր չեր, ցանկացաւ տեսանել զօր Իմ, եդեա՝ Իսահակ եւ ուրախ եղեւ**» *(Յովհ. Ը 56)*։ Յաղագս որոյ ասէ. «**Կերիցէէ եւ ուրախ լիցուք, զի այս որդիս մեռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ էր՝ եւ գտաւ**» *(հմմտ. Ղուկ. ԺԵ 23)*։

Իսկ զի՞ «*եզին*» նմանեցուցանէ զՏէրն:

Նախ <նախ>, զի եզն հեզ ստուգաբանի, և Տէրն ասէր. «**Եւ հեզ եմ եւ խոնարհ սրտիւ**» *(Մատթ. ԺԱ 29)*։

Երկրորդ՝ զի եզն սուրբ կենդանի է, և Տէր մեր ոչ արար մեղս. «**Եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերանն նորայ**» *(Ա Պետրոս Բ 22)*։

Երրորդ՝ զի պատարագելի է, և Տէրն պատարագեացաւ ի վերայ խաչին, ընդ որում, «**Արբուցիցն մեզայս մերոյ արարեալ, նոպաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս**]» *(Ա՛ Եբր. Ա 3)*։

Չորրորդ՝ զի եզն գործէ զերկիր և սերմանէ, և Տէր մեր ասէ. «**Եկ սերմանացան՝ սերմանել**» *(Ղուկ. Ը 5)*, որ և սերմանեաց զԲանն կենաց ի յոգիս մեր, և հերկեալ պատառեաց զքարացեալ սիրտս մեր, յուսով անվաղջան կենացն։

Հինգերորդ՝ զի եզն յոյժ աշխատի, քան զամենայն կենդանիս, և Տէր մեր աշխատեալ մարմնով վասն մեր, ըստ որում, ասէ. «**Վասպակեալ ի ճանապարհին, նոպեր**» *(Հմմտ. Յովհ. Դ 6)*։ Եւ հանգիստ եղև ամենեցուն, ըստ այնմ. «**Եկայք առ իս, ամենայն աշխատեալք**[1] **եւ ծանրաբեռնիք, եւ ես հանգ[ուցից զձեզ]**» *(Հմմտ. Մատթ. ԺԱ 28-30)*։

Իսկ զի՞ «*մեռեալ էր և եկաց*»։ Ըստ կրկին պատժոյն կրկին նորոգումն արար։

Նախ՝ զի մեռեալ էր մեղօք, այս է անբերելի մահ, զի ճշմարիտ կեանս սպանանէ, ընդդէմ այսմ՝ կենդանութիւն ետ. կարի, զարմանալի և աստուածային և անապական։

Երկրորդ՝ զի կորուսեալ էր անհամեմատ, այս է հոգին ի դժոխս մաշելով, ընդդէմ այսմ. ի յարկսն յաւիտենից գտաւ անդ, ուր ուրախութիւն է մշտնջենաւոր։

Արդ, վասն զի եհեղ Որդին Միածին զարիւն Իւր Սուրբ, ի ձեռն Իւր արեան միջնորդութեան ընծայեաց զբնութիւնս մեր Հօրն երկնաւորի, յաղագս որոյ ասէ. «**Ակոսան ուրախ լինել**» *(Ղուկ. ԺԵ 24)*։

---

[1] *Ասպվածաշնչում հենց «վասպակեալք»*։

Իսկ ասելն թէ. «Ալծէէ զեզն պարարակ, զեռէէ» *(Ղուկ. ԺԵ 23)*, և ո՛չ ասաց, թէ՝ տուք ի ձեռն անառակ որդւոյն, զի զենցէ: Ուստի ուսաք յեկեղեցի, որ թէպէտ մեղուցեալն զղջանայ և արժանի լինի թողութեան, բայց ոչ է արժան նմա այն, որ պոռնկեալն է ևս սպասաւորել անարատ խորհրդոյն և պատարագել: Այլ, որք պահեցին զսրբութիւն նմա, նոքա մերձ լիցին նմա: Եւ թէպէտ մեղքն թողեալ է ի ձեռն զղջմանն, սակայն ի դասս ապաշխարողաց է, այսուհետև և ոչ յառաջ կատարելոցն, վասն որոյ թէպէտ զշնորհս աւազանին ետ կրկին Հայրն Երկնաւոր, որպէս զառաջինն, այլ ոչ հրամայեաց ի զենումն համարձակիլ անարատ գառինն, այլ լինել ուրախակից, որո[ւ] պատճառ է: Զի |47ա| կրկին է գործ պատարագին:

Նախ՝ էութեամբ նմանիլ Աստուծոյ, որ է կուսութիւնն, որպէս և Քրիստոս կոյս էր:

Եւ ապա՝ ծառայ լինել սրբութեան Նորա, ըստ խորհրդոցն մաքրութեան և զղջման: Արդ, եթէ նման է Քրիստոսի մարդն ըստ սրբութեան կուսութեանն, կարէ գործակից լինել Քրիստոսի, ըստ որում ասէր. «Եղերուէ ուուրբ, զի ես ուուրբ եմ» *(Պետրոս Ա 16)*:

Իսկ եթէ կորոյս զայսպիսի սրբութիւն, ոչ կարէ գործակից լինել Քրիստոսի, ըստ նմանութեան Նորա, որ ի յէութիւնն, այլ գործեցելոցն ուրախակից լինել, վասն տրտմութեան կամացն և արտասուացն և բազում սիրոյն, որ ի Նա, զի. «Որում շատ սիրէ՝ թողու» *(հմմտ. Ղուկ. Է 47)* ասաց Տէրն[1]:

«Եւ էր երէց որդի նորա յագարակին եւ [մինչդեռ գայր՝ եւ մերձ եղեւ ի տունն], լուաւ ձայն [երգոց եւ զպարուց, եւ] կոչեցեալ զմի ի ծառայիցն՝ [հարցանէր, թէ զի՞նչ իցէ այն]: Եւ նա ասէ [ցնա. «Զի եղբայր էր եկեալ է եւ] եղէն հայր էր զեզն պարարակ, [զի ողջամբ ընկալաւ զնա]» *(Ղուկ. ԺԵ 25–27)*:

---

[1] Ե **չhf** *որո[ւ] պատճառ է: Զի կրկին է գործ պատարագին... «Որում շատ սիրէ՝ թողու» (հմմտ. Ղուկ. Է 47) ասաց Տէրն*:

Այս է տեսութիւն բանիս, զի զուարթունքն ոչ էին տեղեակ Քրիստոսի մարդեղութեանն, բայց միայն հրեշտակաց դասք: Եւ զի տեսան յեկեղեցի զուրախութիւն հագեալ ի համբառնալն ի յերկինս հիացեալ հարցանէին վերինքն զներքինն դասն. «**Ո՞վ է սա, որ դիմեալ գայ [յ]Եդոմայ**» *(համար. Եսայի ԿԳ 1)*, որպէս պատմէ Եսայիաս: Նմին և Պաւղոս վկայէ, թէ. «**Յեկեղեցւոյ ուսան զքաղաքապետիկ իմաստնութիւնս էս պնաւրէնութեանդ**» *(համար. Եփես. Գ 10)*:

Արդ, աստ կարգաւորի բանք մարգարէին Եսայեայ, որ յելսն վերին պատմէ, քանզի մերձեալ Տէր մեր յառաջին դասն, որ տեղեակ էին Տեառն, զի Գաբրիել և դասք իւր ի ծնընդեանն և յամենայն տեղիս սպասաւորէին Նմա: Եւ ընդառաջ եղև նմա անթիւ բազմութիւնն, և սկսան աւրհնել զանճառ խորհուրդն, վասն զի տեսին Աստուած մարդացեալ և այնպէս աւրհնութեամբ յուղարկէին ի վերին դասն: Իսկ վերինքն, որ բուն անգէտք էին իջանելոյ և մարդանալոյ Նորա, տեսեալ զմարմնովն վեր ընթանալն, այլև զանլուր ձայնն առաջի դասուն, զի ընդ Նմա գնային սկսան հիացմամբ ասել. «**Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ գայ յԵդոմայ**» *(Եսայի ԿԳ 1)*: Եւ սկսանի Տէրն ինքնին տալ պատասխանի, զի առաջի նոցա գնայր, ասէ. «**Էս խօսիմ զարդարութիւն եւ զիրաւունս փրկութեան**» *(Եսայի ԿԳ 1)*: Ի գործոյն զինքն յայտնեաց, և ոչ ի բնութեանն է պատուոյն: Իսկ նոցա անգիտացեալ տակաւին համարձակեալ ասեն. «**Ընդէ՞ր են կարմիր յոլոյէ էս**» *(Եսայի ԿԳ 2)*: Իսկ նա պատասխանեաց, թէ. «**Ո՞վ իցէ**» *(համար. Սաղմ. ԻԳ 8)*, ըստ նմանութեան այսր բանի, զոր հայրն ասէ. «**Մեռեալ էր եւ եկաց, կորուսեալ էր եւ գտաւ**» *(Ղուկ. ԺԵ 24)*:

Ընդ նմին և Տէրն առաջի դնէ հարցաքննողացն զթշուառութիւն և զկորուստ մարդկան, |47բ| և զի ոչ ոք էր, որ փրկէր, ապա ողորմեցայ կորուսելոցն և հնձան հարի միայն զթշնամին ի խաչին և գտի զկորուսեալն և կենդանացուցի զմեռեալ ոգի մարդկան:

Իսկ ներքին դասքն տեսին, զի անգիտութեամբ, իբրև զմարդ ոք հարցաքննեն, սաստեն իշխանութեանցն ասելով. «Համբարձէ՛ք ի՛շխանք զդրուանս [յեր ի վեր, համբարձցին դրուանք յաւիրեանից], եւ մտցէ թագաւոր փառաց» *(Սաղմ. ԻԳ. 7)*։ Այսինքն՝ թոյլ տուք ճանապարհ արարէք։ Իսկ նոքա ընդ այս ևս զարմացան, քանզի ոչ գիտէին զոր մարմնով թագաւոր հզօր, ասեն. «Ո՞վ է սա թագաւոր փառաց» *(Սաղմ. ԻԳ. 7)*, ապա ասեն ներքինքն. «Տէր զօրութեանց. սա ինքն է թագաւոր փառաց» *(Սաղմ. ԻԳ. 10)*։ Եւ դարձեալ՝ այս ևս իսկ, զի տեսին զնա վերացեալ, քան զամենայն պետութիւնս, և անցեալ ի ներքին կողմ վարագուրին, նստի ընդ առաջմէ մեծութեանն ի բարձունս։ Ապա հարցեալ զներքինքն, և ուսեալք ի նոցանէ զխորհուրդ մարդանալոյն, այս է երէց որդւոյն կոչել զմի ի ծառայիցն և հարցանելն ի նմանէ, այս ամենայն, որ ասացաք, կրեցաւ առ հրեշտակաց դասն, վասն որոյ ասէ. «Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել» *(Ղուկ. ԺԵ 28)*։ Զայս մարդկաւրէն ձևացուցանէ զբանս, զի ահա յայտնի է, զի ահիւ և դողիւբ կան առաջի Աստուծոյ, այլ զի տեսին բազում գործս, զոր ինքեանք ոչ գիտէին։

Նախ՝ զի իմացան թէ զմարդկային բնութիւնն միացոյց ընդ իւրում բնութեան աստուածութեանն։

Երկրորդ՝ զի նստաւ մարդացեալն ընդ աջմէ Աստուծոյ։

Երրորդ՝ զի իմացան, թէ նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց։

Չորրորդ՝ զի ծանեան, թէ մարդկային ազգ ի վեր անց քան զնոսա, զի առ Հայր ոչ ոք յիմանալեացն եմուտ, ըստ այնմ. «զԱ՛ստուածն ոչ ոք եթէ տեսեալ է» *(Յովհ. Ա. 18)*։

Հինգերորդ՝ զի լուան, թէ զմարդկային ոգիքն զամենեսեան հանեալ ի դժոխոցն, և ճանապարհ յերկինս արարեալ, ապա բարկացան, զի կրեն նոքա զայս ախտ, քանզի նման են հոգւոց մերոց, և զինչ հոգի ունի և զայն նոքա ունին, այսինքն՝ նախանձ, փառասիրութիւն և ամբարտաւանութիւն, ապա այս է զինազնդութիւն, զի

ի վերայ նոցա ոչ բռնանան և նեղէն զնոսա, որպէս և մեզ: Վասն սորայ ի դէպ ասել, թէ ախտացան: Եւ ասեն. «**Այս էանի ամէ են՝ [զի ծառայեմ էեզ], եւ երբէէ զպատուիրանաւ [էով ոչ անցի]. ուլ մի երբէէ ոչ եպուր մեզ**[1]**՝ զի ուրախ [եղէց ընդ բարեկամս իմ]: [Յորժամ եկն որդիդ էս այդ, որ եկեր զկեանս էս ընդ պոռնիկս], իսկ արդ զեներ դմա զեզն պարարակ» *(Ղուկ. ԺԵ 29)*:**

Իսկ արդ. «**Զեներ դմա զեզն պար[արակ]**» *(Ղուկ. ԺԵ 30)*:

Զայս ասել ոչ ոք բաւականէ, այլ խոհեաց անախտիւ նախանձու: Այլ Հայրն բոլորից սփոփանս մխիթարութեան եդ առաջի նոցա ասելով. «**[Որդեակ], դու հանապազ ընդ իս ես: Եւ [ամենայն], որ ինչ իմ է, էս է**» *(հմմտ. Ղուկ. ԺԵ 31)*:

Այս զիրեշտակաց զբարի կեանսն յայտնէ:

Նախ՝ զի են անկարաւտ բնութեամբ:

Երկրորդ՝ զի ի վերին բարձրութիւնս կան յիմանալի աշխարհն:

Երրորդ՝ զի չեն ախտալից, որպէս մեք, այլ՝ անախտ:

Չորրորդ՝ զի ոչ ունին տրտ|**48ա**|մութիւն երբէք ամենևին:

Հինգերորդ՝ զի չունին իր ինչ, որ հարկ է ի վերայ նոցա մեղս առնել:

Եւ արդ՝ զայս ամենայն և այլ ևս առանց ճգնութեանց և առանց աշխատութեանց ստացան: Այլ ընդ ստեղծանելն ամենառատ բնութիւն եդ ի նոսա շնորհօք ողորմութեանն իւրոյ, իսկ ընդդէմ նոցա հէք և թշուառականքս մեք ունիմք բազում նեղութիւնս:

Նախ՝ զի ընդ թանձրագունի և ընդ վայրաբերի մարմնոյ եմք կապեալ:

Երկրորդ՝ զի օրէնք ախտից բազում է ի վերայ մեր, ըստ չափոյ մեղացն:

Երրորդ՝ զի մեր բնութիւնս հակառակ և պատերազմող է ընդ մեզ:

Չորրորդ՝ զի թշնամի ևս ունիմք աւծ խաբող:

---

[1] *Ղուկ. ԺԵ 29՝ «ինձ»*:

Հինգերորդ՝ զի յիմարութեան տեղի եմք անկեալ[1]:

Վեցերորդ՝ զի ցանկութիւն ունիմք քարշող բռնութեամբ:

Եւթներորդ՝ զի հեշտութիւնն զմեզ պատրէ:

Ութերորդ՝ զի օգնական ունիմք զգալիսս:

Իններորդ՝ զի յորժամ ի մեղս անկանիմք, մեծաւ բռնութեամբ կապիմք[2]:

Տասներորդ՝ զի յետ մեղանչելոյն յուսահատութեամբ փակեմք զդրունս ողորմութեան:

Տասնևմեկերորդ՝ զի անգիտանամք զճանապարհ փրկութեան:

Տասնևերկուերորդ՝ զի հիվանդութիւն մեղացն զչափաւոր իմաստնութիւնս մեր լուծանէ[3]:

Տասնևերեքերրորդ՝ զի թմրեալ ի մեղս, դատաստան ինչ երևեցուցանեն մեզ զդժվարութիւն[4]:

Տասնևչորսերրորդ՝ զի կամաւ կուրացուցանեմք միտս մեր:

Տասնևհինգերորդ՝ զի լուծիչն այս ամենեցունց կարի ծանրագոյն և այպանելի, որ փրկէ զմեզ յամենայն տկարութենէ, այսինքն՝ զարիւն հեղուլ պարտ է, սով կրել, մերկութեան տանել, արտասուս չափել, միշտ հառաչել, բանդի և կապանաց համբերել, աշխատանաց և քրտանց, թքոց, պահոց և գետնախշտութեան[5] և այլն ամենայն բժիշկ հնարեալ, ըստ զանազան մեղացն, յորոց յայսոցիկ հեռի են իմանալեացն դասքն: Ապա և յիրաւի էր ասելն. «**Դու հանապազ ընդ իս ես**» *(հմմտ. Զուկ. ԺԵ 31)*, յուրախութեանս կաս, և մարդկային ազգ ի չարչարանս: Եւ զի եղբայր քո է, ո՛չ էր պարտ թողուլ զնա յայնպիսի տանջանս: Արդ, յիրաւի էր զենուլն նմա զեզն պարարակ և քեզ՝ ոչ: Զի դու կենդանի էիր և աստ, առ իս,

---

[1] Ե *անկեալ* **փխ**. *եղեալ*:

[2] Ե *չիք մեծաւ բռնութեամբ կապիմք*:

[3] Ե *լուծանէ* **փխ**. *կորուսանէ*:

[4] Ե *դատաստան ինչ երևեցուցանեն մեզ զդժվարութիւն* **փխ**. *դատաստան արդար ոչ իմանամք*:

[5] *Աղքատության պատճառով հողի վրա պառկել, անկողին չունենալ: Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 540-541:*

իսկ եղբայրն քո՝ մեռեալ էր և կենդանացաւ, կորուսեալ էր ի դժոխս, բայց արդ գտաւ յերկինս: Վասն սորայ ասէ յայլում տեղւոջ, թէ. «**Ոչ է պէտք բժիշկ ողջաց, այլ՝ հիւանդաց**» *(Մարկ. Բ 17)*:

Այսուհետև բանս իրաւապէս զկայ առցէ: Բայց աղաւթից ձերոց բարեխաւսութեամբ եղբարք խնդրեսցէ Տէր, ըստ անառակին կորուսեալ և զտառապեալ ազգս մեր, զի բազմացան մեղք մեր և կորուսին զմեզ, քակեալ ի յեկեղեցւոյ, որոշեալ ի թ[ա]գ[աւորաց], սպառեալ ի հայրապետաց և պակասեալ ի տաւնախմբութեանն **|48բ|** և յաղօթից և ի բարի գործոց, և այն, որ անառակ որդւոյն դիպեցաւ, առաւել բազմապատիկ ազգիս հայկազեան պատահեցաւ: Զի գնացեալ յարեցաք ի խոզեանն Թուրքաստանեաց, և զոր ինչ նոցա դիւրին անկանի, մեզ ոչ ոք տայ: Եւ վա՛յ է ինձ, զի անառակ որդին եկեալ ի միտս, և զպակասութիւնն իւր գտեալ, դարձաւ՝ մեղայ ասելով: Իսկ ի յազգի իմում ոչ ոք է, որ զմտաւ ածէ զկորուստ հոգւոց և մարմնոց մերոց և կամ թէ իմասցի, թէ այսչափ վտանգի եմք տարակուսեալ, վասն որոյ աղաչեմ ի զիմաստս ի գործ արկանել և իմանալ զտառապանս մեր և ասել ընդ անառակ որդւոյն. «**Մեղա՛, յերկինս եւ առաջի քո**» *(Ղուկ. ԺԵ 18)*, զի ոչ արասցէ, ըստ անաւրէնութեան մերում, այլ հայեցեալ յանարատ Միածինն, որ վասն մեր մեռաւ, և զգինս արեանն Նորա առ Ինքն հաւաքեսցէ և քակեսցէ բազմամանուած մեղս մեր: Եւ փրկական բղխմամբ կողին Իւրոյ սրբեսցէ զշարաւացեալ հոգիս մեր և զերծուսցէ զմեզ ի դառն տանջանացն և յանբերելի ցաւոցն: Մանաւանդ տացէ մեզ զեղջ և աղբե[ւ]ր արտասուաց լուանալ զաղտեղի խորհուրդս մեր, զի և սրբոյ յարութեանն Իւրոյ արժանաւորք լիցուք հաղորդել Սուրբ Մարմնոյ և Արեանն Իւրոյ, շնորհօք Քաւչապետին, Ստեղծողին և Անմահացուցանողին, ուրում պատիւ և փառք և զօրութիւն, յաւիտեանս. ամէն[1]:

---

[1] Ե **չիք** *Բայց աղաւթից ձերոց բարեխաւսութեամբ եղբարք խնդրեսցէ Տէր, ըստ անառակին... ուրում պատիւ և փառք և զօրութիւն, յաւիտեանս. Ամէն:*

# ՏԱՄՆԵԻՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«**Այր մի էր մեծապուշ, որոյ էր պնդպես եւ եղեւ պնդանէ ամբասպանութիւն, որպէս թէ վասն[իցէ պինչս նորա]։ Կոչեցայ՝ [եւ ասէ] պնա. [«Զի՞նչ է այս պոր լսեմս պէէն], պուր [պհամար պնդպեսութեան էոյ, պի ոչ եւս կարես լինել պնդպես]» *(Ղուկ. ԺԶ 1-2)*։**

Ընդ սքանչելի առակացս Տեառն զարմանալ արժան է, թէ զիա՞րդ մարդասիրութեամբ լցեալ գոյ, զբոլորն խրատէ և զմասնաւորսն ուսուցանէ, զառաքինիսն յորդորէ և զմոլորսն յուղղութիւն ածէ, որպէս հայր գթած զանկիրթ որդի ուսման աւրինակաւ վարժեցուցանէ, այսպէս և Տէր մեր արար, զի թէ զանձն իւր ոչ խնայեաց, այլ վասն ամենեցուն մեր մատնեաց զնա։ Ապա և զամենայն ինչս տնաւրինեաց փրկութեան մերոյ հնար, վասն որոյ առակաւոր բանիւ ուսուցանէ զմեզի մեղաց զերծանել. «**Այր մի էր մեծապուշ» *(ԺԶ 1)*։**

Արդ, նախ տեսցուք, թէ քանի տունք են և տնտեսք, և ապա՝ թէ առ որ տնտես է բան[1]։ Արդ, նախ «տուն» կոչի երկինքն, այսինքն՝ իմանալի աշխարհն, ըստ այնմ. «**Իմասպուրթեամբ շինեցայ իւր պուն» *(Առակ. ԻԴ 3)*։** Իսկ «*տնտեսք*» ի նմա՝ դասս հրեշտակաց, ըստ այնմ. «**Պաշտօնեայք եւ հոգիք հարկաւորք են, որ առաքին սպասաւորութիւն» *(Հմմտ. Աւ Եբր. Ա 13)*։**

Երկրորդ՝ կոչի տուն դրախտն եդեմական, ըստ այնմ. «**Տէր սիրեցի պվայելչութիւն պան Քո» *(Սաղմ. ԻԵ 8)*,** իսկ «**պնդպես ի նմա» *(Ղուկ. ԺԶ 1)*՝** զմարդն առաջին, ըստ այնմ. |49ա| «**Եդ զմարդն ի դրախտին գործել զնա եւ պահպանել» *(Հմմտ. Ծննդ. Բ 15)*։**

---

[1] Ե չիք *և ապա՝ թէ առ որ տնտես է բան։*

Երրորդ՝ «տուն» կոչի աշխարհս սգալի, ըստ այնմ. «**Ոչ լուսանէ ճրագ եւ ածէ աւել ի դան**» *(Ղուկ. ԺԵ 8)*, իսկ «տնտես» ի սմա մարդկային բնութիւնս, ըստ այնմ. «**Զամենայն ինչ հանապանդ արարեր [ի ներքո ոտից նորա], գլխաշն եւ գարջառս եւ զամենայն ինչ**» *(Սաղմ. Ը 7-8, հմմտ. Աւ Եբրայեցւոյ Բ 22)*:

Չորրորդ՝ տուն կոչի եկեղեցի՝ Նոր Սիոն, ըստ այնմ. «**Տան քոում վայել է սրբութիւն**» *(Սաղմ. ՂԲ 5)*, իսկ տնտեսք ի սմա՝ առաքեալք և մարգարէք և վարդապետք և հայրապետք, ըստ այնմ. «**Զորս եդ [Աստուածն] յեկեղեցւոջ՝ այս են, նախ՝ զառաքեալս, [երկրորդ՝ զմարգարէս]**» *(Աւ Բ Կորնթ. ԺԲ 28)*:

Հինգերորդ՝ «տուն» կոչի իւրաքանչիւր մարդ, ըստ այնմ. «**Եւ յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեղս**» *(հմմտ. Եսայի ԿԶ 2)*: Եւ Պաւղոս ասէ. «**Որոյ տունն մեք իսկ եմք**» *(Աւ Եբր. Գ 6)*: Իսկ տնտեսք ի սմա՝ միտքն, որպէս ասէ աստ. «**Որոյ էր պնդէս. եւ եղեւ զնմանէ ամբաստանութեամբ**» *(Ղուկ. ԺԶ 1)*:

Արդ, յայսցանէ, զոր ասացաք բան զՍուրբ Աւետարանիս, երկնայնոցն ոչ պատշաճի, զի ոչ կարեն մեղանչել ի տնտեսութեանն և պարտապան գտանել, այլ են դժուարաշարժք ի մեղս կամ ամենևին անշարժք: Իսկ Ադամայ ոչ պատշաճի, զի դեռևս յանմեղութեանն էր, և տակաւին ոչ տիրէին մեղք, մինչև խաբեցաւ յաւձէն: Իսկ բոլոր բնութեանս ոչ հետևի, զի բնութիւնն առհասարակ ոչ կարէ մեղանչել, այլ առանձին միոյ-միոյ մարդոյ: Եւ եկեղեցւոյ տնտես ի պատշաճի սակաւ ինչ այնու, զի նոքա ի մարդկանէ են, իսկ այնու՝ ոչ, զի թէ ոք տնտես կարգեցաւ յեկեղեցի, ոչ ևս կարէ ելանել ի նմանէ: Ուրեմն յայտ է, թէ իւրաքանչիւր առանձին մարդոյ պատշաճի:

Արդ, առձեռն պատրաստեսցուք ո՞վ է այրն: «*Այր*» է այրացեալ Աստուածն մեր, Յիսուս, զոր և սակաւ յառաջ ասացեալսն՝ «*զուարակ*» ասաց: Եւ յիրաւի, զի նա միայն է ճշմարիտ այր, զի ոչ ինչ է, զոր կարօտի նա:

Իսկ «*մեծատուն*» կոչի: Եւ սա առաւել մեծատուն, քան որ յաշխարհի:

Նախ՝ զի ամենայն մեծատուն մասամբ ունի մեծութիւն, իսկ նա՝ ծայրագոյն և կատարեալ, ըստ այնմ. «**Երկինք աթոռ իմ են եւ երկ[իր պատուանդան ոտից իմոց]**» *(Եսայի ԿԶ 1)*:

Երկրորդ՝ զի սոքա ստացմամբ ունին, իսկ նա՝ բնութեամբ:

Երրորդ՝ զի սոքա կարօտ են օգնականի, իսկ նա՝ անկարօտ բնութիւն է, ըստ այնմ. «**Ուր էիր մինչ ես հիմուն արկանէի երկրի**» *(Յոբ ԼԸ 4)*:

Չորրորդ՝ զի սոքա զոմանց կարուտութիւն լնուն և ոչ իսկապէս, իսկ նա՝ զամենեցուն և կատարելապես, ըստ այնմ. «**Եկայք առ իս ամենայն աշխ[ատեալք] եւ ես հ[անգուցից զձեզ]**» *(հմմտ. Մատթ. ԺԱ 28)*:

Հինգերորդ՝ զի ի սոցա տ[ալն պա]կասին մեծութիւնք սոցին, իսկ նորայն անպակաս մնայ:

Վեցերորդ՝ զի [սոքա] |**49բ**| ոչ կարեն ստեղծանել և տալ, իսկ նա՝ Ստեղծաւղ և Արարիչ, ըստ այնմ. «**Ամենայն ինչ նովաւ եղեւ**» *(Յովհ. Ա 3)*:

Եւթներորդ՝ զի սոքա թէպէտ մեծատունք, սակայն դեռևս կարօտին առնուլ, իսկ նա՝ ոչ փափագի իրաց:

Ութերորդ՝ զի սոքա չարչարանօք են ստացեալ, իսկ նա՝ ոչ ունի աշխատանք:

Իններորդ՝ զի սոցա ինչքն կորստական է, իսկ նորայն՝ անկորուստ, ըստ այնմ. «**Զուրախութիւնն յեր ոչ ոք հանէ ի յէնջ**» *(Յովհ. ԺԶ 22)*:

Տասներորդ՝ զի սոքա մարդ սոսկ ի մեծութեան, իսկ նա՝ Աստուած մարդացեալ, յաղագս որոյ ասէ. «**Այր մի էր մեծապուռն**» *(ԺԶ 1)*:

Իսկ յատկութիւն տնտեսի բազում ինչ է:

Նախ՝ զի տնտեսն ոչ ունի իւր ինչ, այլ ի տէրունեացն հաւատացաւ նմա:

Երկրորդ՝ յատուկ է տնտեսին ըստ կամաց տեառն գնալ և պատրաստել զամենայն, որպէս և կամեսցի:

Երրորդ՝ ժիր լինել ի գործն, յոր հրաւիրեալ է և ոչ երբեք ծուլանալ:

Չորրորդ՝ զկերակուրն պատրաստել ի ժամու:

Հինգերորդ՝ տալ յամենայն ժամու ծառայակցացն առատապէս:

Իսկ ելանելն ի տնտեսութենէն լինի վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ժիր ոչ լինի գործն:

Երկրորդ՝ թէ վատ շինէ զկերակուրն:

Երրորդ՝ թէ գող լինի:

Չորրորդ՝ թէ ընդ վայր մսխէ:

Հինգերորդ՝ թէ լիրբ լինի լեղուաւ և դիմաւք:

Վեցերորդ՝ թէ պեղծ լինի գործով:

Եւթներորդ՝ թէ անհնազանդ լինի բարուք:

Ութերորդ՝ թէ հիւանդ լինի մարմնով:

Իններորդ՝ թէ անհամբեր լինի:

Տասներորդ՝ թէ պինտ լինի ռիշտ[1]: Այսոքիկ պատճառք են ելանելոյ:

Արդ, այսպէս, որ ասացաք մարդկային բնութեանս ոչ ինչ է, այլ յԱստուծոյ տուեալ է պարգևքն ամենայն, զոր ինչ տեսանես ի վերայ երկրի, ըստ այնմ. «**Զի՞նչ է, զոր ոչ առեր եւ զի՞արդ պարծիս առեալդ, իբր զչառեալ**» *(հմմտ. Ա Կոր. Դ 7)*, թէ քահանայութիւն է և թէ վարդապետութիւն, թէ այլն ամենայն: Եւ զայսոսիկ սակս այնր տայ, զի փոքուաւս զմեծ և զանճառելին ստացուք, ըստ այնմ. «**Ի փոքուն հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ**», և թէ. «**Որ ի փոքուն հաւատարիմ է եւ ի բազում հաւատարիմ է**» *(հմմտ. Ղուկ. ԺԶ 10)*:

Արդ, ամենայն քահանայ և ամենայն ոք, որ շնորհի ընկալեալ է յԱստուծոյ տնտես է այնմ գործոյ և շնորհի, յաղագս որոյ պարտի ըստ յառաջ ասացեալ. յատկութեանցն տնտեսին գնալ: Իսկ եթէ զմի ի պատճառաց ելանելոյն գործէ, ըստ վերոյ ասացելոցս ելանէ յայնմ բարեաց տնտեսութենէ:

---

[1] *Ժլատ, ագահ: Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 681:*

Եւ յայտ է, թէ այլ իրաց հանդիպի, յորժամ յայնմանէ զրկիցի, քանզի հակառակ են այնմ գործոյ տասնեքին սոքա, որպէս ասացաւ ի կարգէ բանիցդ. Զի եթէ ի մարմնաւորս, որք զայսն գործեն, եղկելիք են: Յայտ ուրեմն է, թէ առ Աստուած և առաւել պարտի զգուշութեամբ: Իսկ եթէ ոք ոչ կարէ տանել այսմ և սխալեալ ի գործն զինչ և իցէ առնէ, քանզի յուսահատութիւն ուսուցանէ առ|50ա|ակաւս մինչ ի յելս շնչոյն խնդրել զԱստուած և բարեգործել: Այլև զայս յառաջագոյն ուսոյց, այսինքն՝ զկամս քաղցրութեան հաւրն առ անառակ որդին, զի ընդունի յամենայն ժամ, միայն զդարձն խնդրէ առ ինքն: Զի թէ ոչ ընդունի ի մահուան ժամանակի ծերութեանն, զի՞արդ յերկարէ զժամանակ մեղաւորին, զի ասէ. «**Ոչ կամիմ զմահ մեղաւորին**» *(Հեզ. Եզեկ. ԺԸ 32)*, քանզի որքան կ[ե]այ ի ծերութիւն մերձի և ի մահուան ամբաստանութիւն[1], այսինքն՝ վատնելոյ զինչս նորա:

Արդ, զի՞արդ լինի այս, զի Աստուած ծածկագետ է, զանգործսն գիտէ, զիարդ գործելեացն անգէտ մնալով կարօտի ամբաստանութիւն: Արդ, թէպէտ նա ամենագետ է, և ոչ է կարիս ամբաստան լինելոյ, սակայն երկայնամիտ է, ներէ ժամանակ ինչ յանցաւորաց: Իսկ մարդիկ կարճամիտ գոլով և զոմանք ի չարութեանն տեսեալ ի յափշտակութեան և ի նեղել զտնանակս և յայլ ամենայն գործս զազրալիս ձանձրացեալք յայսպիսեացս, զձեռն յերկինս համբարձեալ, բողոքեն առ Աստուած, ըստ այնմ. «**Զրկեալն ի յէնջ ազատակէ, եւ բողոքէ հանդերձ եհաս յականջս Տեառն զօրութեանց**» *(Յակոբ. Ե 4)*: Նաև հրեշտակք, որք կարգեալ են պահապան մարդկան, նոքա ամենևին մաքուր, և տեսանեն զգործս ամբարշտաց և ձանձրացեալ ամբաստան լինին նոքա առ Աստուած, զի մի միշտ երկայնամիտ լիցի, այլև վրէժխնդիր, ըստ այնմ.

---

[1] Ե *մահուան ամբաստանութիւն* **փխ**. *մահուան աւուրն, ուստի յայտ է, թէ ընդունի յամենայն ժամ, վասն որոյն կարգաւ ուսուցանէ զելս իրացն: Ասէ եղև ամբաստանութիւն:*

«Յայտնելոց է բարկութիւն Աստուծոյ ի վերայ ամբարշտութեան մարդկան» *(Համար. Հռոմ. Ա 18)*, և թէ «Բարկութիւն Տեառն իբրեւ պՀուր յորալից պարանոցաքաղ յորդեսցէ» *(Համար. Եսայի Լ 27-28)*։

Արդ, գիտասցուք եղբարք, զի բազում ժամանակս երկայնամիտ լինի մեզ Տէր, մի՞թէ դարձուք ի մեղաց, որպէս և ասացաք յԱւետարանէ աստի։ Իսկ ի բազմանալ մեղաց մերոց լինի ամբաստանութիւն, և շարժեն զԱստուած ի վրեժխնդրութիւն, վասն որոյ կոչեաց զնա և ասէ. «Զի՞նչ է, որ լսեմս զքէն, տուր ինչ զՀամար գնդեսութեան, զի ոչ եւս կարէ[ս լինի]լ գնդես» *(Համար. Ղուկ. ԺԶ 2)*։ Մարդկաբար խօսի, իբր թէ ոչ գիտէ և դեռ յերկբայս է։ Եւ արդ՝ վասն այն արար, զի մեզ ուսուցանէ, թէ մի առանց քննութեան ոչ դատել, զի թէ նա, որ ամենեցուն գիտողն է, առանց քննութեան ո՛չ դատէ, և մեք անսզգամեալ միայն սուտ համբաւիւն զեղբայրն մեր ջանամք խեղդել։

Արդ, կոչելն զհիւանդութիւնն ասէ, որ կոչէ ի դուռն մահուն։ Իսկ ասելն. «Ո՛չ եւս կարէս լինել գնդես» *(Ղուկ. ԺԶ 2)*, յիրաւի, ամենայն, |50բ| որ չարանայ, և այն բարեգործիւք, ոչ միաբանի ընդ բարւոյն, ըստ այնմ. «Զի՞նչ մթաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի» *(Համար. Բ Կորնթ. Զ 14)*։

Իսկ արդ, զի իմաստուն արար Աստուած զմարդն, յորժամ տեսանէ զայս, խորհի միտքն իմաստութեամբ իւրով, ըստ անառակին. «Իմաստնութիւն յելս ՀանապարՀաց գովի» *(Լուսաւ. Ա 20)*։ Խորհեցաւ և ասէ. «Զի՞նչ արարից, զի պէր իմ Հանէ ի գնդ[եսութենէ]» *(Համար. Ղուկ. ԺԶ 3)*, այսինքն՝ լուծանէ ի կենաց աստի. «Գործել ոչ կարեմ» *(ԺԶ 3)*, զի չիւ ինչ ժամանակ ապաշխարութեան, զի էերեցիս զաղջ ի հոգւոյս եւ փոխանակ չարեացն բարի արարից, եւ ի հանդերձեալն յանփոփոխ կեանս ժամանել։ «Մուրանալ ամաւթ է» *(Համար. ԺԶ 3)*, զի այն չէ տեղի մուրանալոյ, և թէ մուրանամ ևս, ո՛չ ոք տայ ինձ, զի ոչ է անտ ողորմութիւն։ Զոր օրինակ յիմար կուսանք, վասն որոյ հնար

իմանայ և ասէ. «Դիպեմ ովքո՞նչ արարիցս» *(Դ.Զ 4)*։ Եւ կոչեաց զմի ի պարտ[ապանացն]. «Դու էանի՞ ինչ պարտիս», «Ճ. (100) մաս չիքիոյ», ասէ. «Կա ղգիր էս նոպի գրեա՛ Ծ. (50), եւ երկրորդ՝ Ճ. (100) էոռ ցորենոյ։ «Կա ղգիր էս, եւ ն[իսպ եւ գրեայ] Զ. (80)» *(Հմմտ. Դ.Զ 6-7)*։

Եւ այս յիրաւի, զի դիւրաւ մեղանչէ հոգին և փոքր հեշտանայ ի մեղքն, վասն որոյ ըստ արդար դատաստանին զկէսն եթող։ Իսկ զմարմնոյն զինկէն մինն, վասն զի նա ունէր ի ձեռն ո՛չ առնել զմեղս և արար, զի դիւրին է, թէ կամի ոչ զշնութիւնն գործել և ոչ զայլն։

Եւ զի՞ կամաւորութեամբ գործեաց զմարմնաւորքն։ Յիրաւի զմինն թուղու ի զղջումն, իսկ զայլսն՝ խոստովանութեամբ[1] և ողորմութեամբ, և տրաւք տնանկաց։

Դարձեալ՝ զոր յետ աւազանին գործեցաք, պարտապան եղաք նմին, զկէսն թողու, իսկ եթէ լրբութեամբ ի մարմին Տեառն մերձեցաք, այն դժուարին է ինկէն մինն[2], ըստ որում. «Որ ուրէ զմարմին զմարմին Տեառն անարժանութեամբ, դատապարտան անչին իւրում ուրէ եւ ըմբէ, զի ոչ խորհեայ զմարմին Տեառն» *(Հմմտ. Ա. Կորնթ. ԺԱ. 29)*։

Իսկ Ճ. (100) ասաց, որ զկատարեալն նշանակէ, զոր օրինակ առաքինութիւնն ի Ճ.աւորն պատշաճեցան, նոյնպէս և մեղքն կատարեալ թուով ասէ։

Իսկ զի՞ զհոգւոյն մեղքն ի «*ձէթ*» առակէ։ Եւ այս վասն բազում պատճառի։

Նախ՝ զի ձէթն լուսոյ նիւթ է, այսպէս և բանբասանքն և սուտն հոգւոյն մեղքն են։

Երկրորդ՝ զի անաւար իմն է ձէթն, այսպէս և հոգւոյն մեղքն ոչ նիւթաւոր, որպէս մարմնոյ։

Երրորդ՝ զի դիւրաւ տարածանի ձէթն ի վերայ հանդերձին, այսպէս և հոգւոյն մեղքն փութանակի լինի։

---

[1] C *խոստովանութեամբ* **փխ**. *խոստովանութեամբ, պահօք և աղօթիւք*։
[2] C *ինկէն մինն* **փխ**. *ինգէն միոյն լինի քաւութիւն*։

Չորրորդ՝ զի ոչ իջանէ ձէթ յատակ ջրոյ, այլ յերեսն ելանէ, այսպէս և նախանձ և ամբարտաւանութիւն ոչ մտանէ ի մարմին, այլ ի հոգին:

Հինգերորդ՝ զի դժուարաւ ելանէ ձէթ ի նիւթոյ, այսպէս և հոգւոյն դժուար է լինել առանց մեղաց:

Վեցերորդ՝ զի կրկին զհակառակսն յինքն յինքն ընդունի զջեր|51ա|մութիւն և զցրտութիւն, այսպէս և հոգին միշտ զղջայ և միշտ մեղանչէ:

Եւթներորդ՝ զի ի վայթելն ոչ ածէ զձայն, այսպէս և մեղքն ի հոգին ոչ երևի մարդկան:

Ութերորդ՝ զի թափանց զօրութիւն ունի ձէթն, այսպէս և մեղքն թափանցանէ ի մարմինն և ի հոգին հասանէ:

Իններորդ՝ զի ինքն ըստ ինքեան ոչ լինի ձէթն, այլ ի նիւթոյ իմեքէ, այսպէս և հոգին ոչ ունի բնութեամբ մեղք, այլ՝ ի պատճառէ իմիքէ լինի:

Տասներորդ՝ զի հնարին մարդիկք հանել զձէթն ի հանդերձէն, այսպէս և գոյ հնար և զհոգին սրբել ի մեղաց, որպէս ասէ Տէրն. «**Կա՛ զգէր էո եւ նիւոպ գրեա Ծ. (50)**» *(համա. Ղուկ. ԺԲ 6)*։

Իսկ զմարմնոյն մեղք ի «*ցորեան*» առակեաց (*տե՛ս ԺԲ 7*), և այս ևս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ցորեանն ոչ է մի թուով, այլ անթիւ, այսպէս և մարմնոյն մեղք ո՛չ են մի, այլ՝ բազում:

Երկրորդ՝ զի ծանր է ցորեանն, այսպէս և մեղք մարմնոյն ծանր են, քան զհոգւոյն:

Երրորդ՝ զի ի յաշխարհի ոմանք վաստակին ցորեանն, այսպէս և ոմանք գործեն մեղս մարմնով և ամենեքեան:

Չորրորդ՝ զի առանց ծասկելոյ ոչ ոք առնու զհամ ցորենոյն, այսպէս և առանց մերձաւորութեամբ ի մեղս մարմնաւոր, ո՛չ ոք գիտէ զնա:

Հինգերորդ՝ զի մի հատ ցորեանն բազում ճուղք բերէ, այսպէս և մի մեղք մարմնոյն սովորեալ բազում ստանայ գործել:

Վեցերորդ՝ զի դժուարին է ի հացէ կտրիլ և ոչ ուտել, այսպէս և թէ ոք սովորեցաւ ի շնութիւն, ոչ կարէ զերծանել ի նմանէ, եթէ ոչ օգնականութեամբ Աստուծոյ:

Եւթներորդ՝ զի քաղցրութիւն տայ սակաւ մի և կորնչի յորկորն, այսպէս և մեղք մարմնոյն սակաւ մի հեշտացուցանէ և այլ ոչ ևս:

Ութերորդ՝ զի հաստատ է զսիրտ մարդոյն, այսպէս և և մեղք մարմնոյն կապէ զմարդն և ոչ տայ թոյլ զղջալ կամ ապաշխարել:

Իններորդ՝ զի առատ է ցորեանն, և ամենայն մարդ գտանէ, այսպէս և մեղք մարդոյն[1] առձեռն պատրաստ է ամենեցուն գործողաց իւրոց:

Տասներորդ՝ զի թէ ի ջուր անկեալ ցորեանն՝ փտի և կորնչի, այսպէս և մեղք մարմնոյն արտասուօք դիւրաւ կորուսանի, որպէս ասէ. «**Կաւ ղգիր էո ե՝ Ինոպ գրեայ Զ. (80)**» *(հմմտ. ԺԶ 7)*:

Իսկ արդ գիտեա՛, ով է եղբայր, զի որպէս ասացաւ ամենայն մեղաց կէսն թողութիւն, և մարմնոյ և արեան պարտուցն հնգէն մին: Մի յուսահատեսցիս, այլ ուղղեա՛ զքեզ ո՛չ լինել պարտապան նմա, զի դիւրին է ոչ լինել պարտապան, այս է, փոքր ժամանակաւ խոստովանութեամբն յայս ամենայն ահէ և երկիւղէ: Իսկ թէ սխալիս և ի նոյն մի յամեսցիս, այլև զայն փութով խոստովանեայ: Զի թէ ի հնումն, որք զաւրէնսն անցանէին Մովսիսի քարամբք սատակել հրամայէր, քանի ևս առաւել զորդին Աստուծոյ առ ոտն է հար և զարիւն Նորոյ Ուխտի **|51բ|** խառնակ համարեցաւ[2]:

Ուրեմն յայտ է, թէ որ չափ վնաս է անարժանութեամբ ուտել և ըմբել, բայց զի մի յուսահատութեան ալիս զմեզ ընկղմեսցէ, ուսուցանէ քաղցրութեամբ այսու բանիւք, որ ասացաւ ի յելս շնչոյն, թէպէտ անբաւ լինի պարտիքն, և է ժամանակդ ապաշխարութեան, վասն որոյ գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան զի իմաստութեամբ արար: Արդ, աղաչեմ սիրելիք, մի՛ վերջասցուք ի ելք կե-

---

[1] Ե *մեղք մարդոյն* **փխ**. *մեղք մարմնոյն կապէ մարդն*:
[2] Ե **չիք** *խառնակ համարեցաւ*:

նաց մերոց խնդրել զնա, թէպէտ և կարի ծանր է բեռն մեր, և բարձրացեալ է, քան զերկինս, զի թողութեանց պարգևողն ինքն է: Զի թէպէտ ոչ ունի յայնմ ժամու ընդ սուրբսն դասել, սակայն յայնմանէ ազատեցաւ, որ ընդ մէջն կտրի և ընդ անհաւատսն դատի: Եւ զոր կապեալ ոտիւք և ձեռաւք, հանին ի խաւարն արտաքին ի լալ աչացն և կրճել ատամանցն[1]:

Եւ այս մեծ ողորմութիւնն է մեզ, թէ յայսպիսեացս զերծանիցեմք: Զայս եթէ ոք ընդդէմ բերիցէ ո՛չ հաւատալ նախ ինքն գիտէ, որ զայս առակս ասաց, զի ոչ թէ սուտ ասաց Նա, որ Ճշմարտութիւնն է, քաւ լիցի, այլ՝ զի ճշմարիտ է բանք նորա, վասն որոյ ունի կարողութիւն այսպիսեաւքս տալ զքաւութիւն: Իսկ եթէ ոք անհաւատ եղեալ բանիցս հակառակիցի, մեք ոչ ունիմք զայն սովորութիւն և ոչ եկեղեցիքն Աստուծոյ[2], յաղագս որոյ գովէ զտնտեսն անիրաւութեան. «**զի իմաստուութեամբ արար**» *(Ղուկ. ԺԶ 8)*: Զնոյնս. «**Իմաստուութիւն յելս**» գովէ Սողոմոն *(տես Առակ. Ա 20)*, և թէ. «**Յորս գտայց ի նոյն դատեցայց**» *(Յովհ. Ը 30)*:

Իսկ արդ՝ իմաստնագոյն ասէ զմարդիկք, քան զորդիս լուսոյ, այսինքն՝ քան զիրեշտակս: Եւ այս ըստ բազում եղանակի:

Նախ՝ զի մարդկան ազգ դարձ ունի ի մեղաց, իսկ հրեշտակք՝ ո՛չ ունին, զոր օրինակ՝ դևք:

Երկրորդ՝ մարդիկք կարեն ապաշխարութեամբ ապրել, իսկ հրեշտակաց՝ ոչ գոյ հնար ապաշխարութեան:

Երրորդ՝ զի առնուն թողութիւն մեղաց, իսկ հրեշտակաց՝ ո՛չ գոյ հնար թողութիւն մեղաց:

Չորրորդ՝ զի մարդիկ կարեն զինքեանս նուաճեցուցանել ընդ հրամանօք նորագունիւք, իսկ նոքա՝ բնականապէս վարին և ոչ ունին փոփոխումն:

---

[1] E **չիք** *արտաքին ի լալ աչացն և կրճել ատամանցն*:
[2] C **չիք** *և ոչ եկեղեցիքն Աստուծոյ*:

Հինգերորդ՝ զի յորժամ ի մեղք ինչ արկանիմք, ի յետ մեղացն ողբամք զանցեալն, իսկ նոքա, թէ ի չար անկեալ և չարանան ևս, որպէս սատանայ և իւրքն:

Վեցերորդ՝ զի մեք առաւելացուցանեմք զառաքինութիւն, իսկ նոքա ոչ կարեն, զի ոչ ունին մարմնական գործիք:

Եւթներորդ՝ զի մեք գնեմք արեամբ մերով զարքայութիւնն, իսկ նոքա՝ ոչ կարեն հեղուլ զարիւն և գնել, քանզի ո՛չ ունին մահ և ո՛չ արիւն:

Ութերորդ՝ զի մեզ կարողութիւն գոյ ի հրեշտակաց դասն մերձաւոր լինել, և ևս գերի վերոյ, իսկ հրեշտակք՝ միոյ ճգնաւորի պսակի ոչ կարեն հասանել:

Իններորդ՝ զի մեք ձեռինն Աստուծոյ եմք ստեղծուած, իսկ հրեշտակք՝ բանիւ միայն, որպէս և անասունք:

Տասներորդ՝ զի Աստուած ի մեր բնու|**52ա**|թիւնէս էառ մարմին և ոչ ի հրեշտակաց, վասն որոյ ասէ Տէրն վասն ինքեան՝ «*իմաստնագոյն*», այսինքն՝ գերագոյն և բարձրագոյն է, քան զնոսա, վասն զի Աստուած է բնութեամբ, իսկ հրեշտակք՝ սպասաւորք են նմայ:

Իսկ զհրեշտակ «*որդիս լուսոյ*» *(Ղուկ. ԺԶ 8)* կոչէ:

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի լուսոյ արարան հրեշտակք, վասն որոյ որդիք նմին կոչին, ըստ այնմ. «**Աւասյ Աւպուռաժ. «Եղիցի լոյս»**» *(Ծննդ. Ա 3)*, և թէ. «**Ո՞ր արար զհրեշտակս իւր յոգիս եւ զպաշտօնեայս իւր ի հուր**» *(Ա՛ռ Եբր. Ա 7)*:

Երկրորդ՝ զի պարզ է լուսոյ բնութիւնն, այսպէս և հրեշտակաց:

Երրորդ՝ զի անաղտ է լոյսն, այսպէս և հրեշտակք, որք մնացին յանկմանէն, ո՛չ կարեն մեղանչել:

Չորրորդ՝ զի անորակ է լոյսն, այսպէս և՝ հրեշտակք:

Հինգերորդ՝ զի անձև է, այսպէս և՝ զւարթունքն:

Վեցերորդ՝ զի չէ մարմին լոյսն, այսպէս և՝ հրեշտակք:

Եւթներորդ՝ զի թափանցէ լոյսն ընդ ջուր և յապակի, այսպէս և հրեշտակք՝ ո՛չ ինչ արգելք ունին:

Ութերորդ՝ զի բարձր է տեղեաւ լոյսն, այսպէս և կայանք հրեշտակաց գեր ի վերոյ է յիմանալի Տեառն[1]:

Իններորդ՝ զի ունի շարժումն լոյսն, այսպէս և հրեշտակք, որք առաքին ի սպասաւորութիւն, ըստ առաքելոյ[2] *(տե՛ս Աւ. Եբր. Ա. 14)*:

Տասներորդ՝ զի լոյսն ոչ շեղի ի բնութենէ իւրմէ, այսպէս և հրեշտակք՝ ոչ ապականին: Դարձեալ, զի լոյսն յումեքէ ոչ ըմբռնի, բայց ինքն զայս ջերմացուցանէ, այսպէս և զհրեշտակք ոչ ոք կարէ ըմբռնել, բայց նա պատուհասէ զոք հրամանաւ Աստուծոյ:

Արդ, այսոքիկ գովութիւն, զոր կարգեաց Տէրն, յորդորէ զմեզ միշտ պատրաստ ի կալ: Եւ մանաւանդ, զի աւրինակաւս պարզ է զմիտք բանին, զի ասէ. «**Աբարէէ յեպ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակեսցի այս կեանէս ընկալցի զյեզ ի յակոն յաւ[իրենական]**» *(հմմտ. Ղուկ. ԺԶ 9)*:

Ուստի յայտ է, զի զանտի կեանքն ոչ ինչ իրաւք է գտանել, բայց միայն ողորմութեամբ, զի զայս ինչ, զոր անիրաւութեամբ գծեմք, զնոյն դարձեալ առցուք ի բարեգործութիւն, զի զստոյգ զմեղքն մեր ջնջէ ողորմութիւնն, ըստ այնմ. «**Զմեղս էս ողորմութեամբ էաւեսցես եւ զանօրէնութիւնս էս՝ պրօէ պնանկաց**» *(հմմտ. Դան. Դ 24)*: Վասն որոյ, զոր օրինակ զպահս ի յանձին ունիմք, ընդ նմին և զաղաւթս, ըստ սոցա կարաւտի ողորմութիւնն, զի կատարեալ լիցուք ի յառաքինութիւնն]: Եւ այս փոխէ մեզ, զոր օրինակ առնեմք և նմին իրի հանդիպիմք, վասն որոյ մի՛ հեղգասցուք առնել զողորմութիւն, զի ողորմութեանն Աստուծոյ արժանաւոր լիցուք ի <ի> Քրիստոս Յիսուս, Տէր մեր, որ է աւրինեալ յաւիտեանս. [ամէն]:

---

[1] C *յիմանալի Տեառն* **փխ**. *յիմանալի աշխարհին*:

[2] C *առաքելոյ* **փխ**. *առաքելոյ. «Հոգիք հարկաւորք են, որք առաքին ի սպասաւորութիւն»*:

# ՏԱՄՆԵԻԵԻԹՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Այր մի էր մեծապուշ եւ ագահէր բեհեղս եւ ծիրանիս, եւ հանապազ ուրախ լինէր» *(հմմտ. Ղուկ ԺԶ 19)*։

Առակիս բանս ոմանց այսպէս թուեցաւ, թէ |52բ| առանց էութեան սոսկ բան ասացան, և ունի զկատարումն խորհրդին ի հանդերձեալ ատենին: Եւ զայս յայնմանէ առնուն կարծիս, որ մեծատունն տանջէր և զՂազար հանգչէր, և վկայ բերեն, թէ նախքան զամենեցուն յարութիւնն, հատուցումն ոչ է, ո՛չ արդարոց և ո՛չ մեղաւորաց, ըստ առաքելոյ *(հմմտ. Բ Կոր. Ե 10)*։ Ասդ զայս մտաւ ածին և յայն ոչ կարացին հայել, զի մեծատունն մաղթեր նահապետին, թէ առաքեա զՂազար, զի մի՛ եղբարքն իմ աստ եկեսցեն, վասն որոյ ասէ. «Զմարգարէին ունին, նոցա լուիցեն» *(հմմտ. Ղուկ. ԺԶ 29)*։ Եւ այս ի յարութեանն ոչ է, զի ամենեքին յառնեն, և ոչ աշխարհ ինչ է, յայնժամ, որ պիտոյանայ քարոզութիւնն, կամ թէ բնաւ մեղաւորքն զարդարսն տեսանել կարասցեն: Ապա և պարտ է մեզ ուղիղ պահել զմիտս բանիս, զի մի՛ ուրեք անկանիցեմք ի սխալանս ըստ ոմանց:

Արդ, այժմ գիտելի է, զի ամենայն առակք ի տեղի աւրինակի առեալ լինի ի Տեառնէ: Է երբեմն, զի յանշնչիցն առեալ լինի առակն, որպէս ուռկանն: Եւ է, զի ի կենդանեաց, որպէս ի մարդկանէ առ մարդիկ, որպէս մշակք այգւոյն, և որք զսերմանսն հնձեցին: Եւ երբեմն յեղելոց իրաց և ի հին պատմութեանց առաջի դնէ առակս, որպէս աւձ կախեալ յանապատի *(տե՛ս Յովհ. Գ 14)*, և զԱբրահամ, նմանապէս, և այս առակս եղելոց իրաց է: Եւ այսու կամեցաւ զարհուրեցուցանել և տալ գիտութիւն, որք աստի ի բաց վճարեացն: Արդ, երկաբնակք խնդան ընդ այս օրինակ, իբր հաստատել իւրոց քաւարան, որք խայտառակին յայտնի բանիւք, վասն

զի Տէր մեր տակաւին, ոչ ևս էր չարչարեալ: Իսկ յառաջ քան զխաչիլն յայտ է, թէ հոգիքն ամենայն ի դժոխս էին՝ արդարք և մեղաւորք: Իսկ յետ յարութեանն ոչ ևս, այլ ազատեցան ամենեքեան, ըստ այնմ. «**Որք ի կապանս էք ելէք, եւ որք ի խաւարի յայտնեցարուք**» *(Համբ. Եսայի ԽԹ. 9)*, և թէ. «**Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ**» *(Ղուկ. Գ. 6)*:

Ուստի յայտ է, թէ սուտ է քաւարան նոցա: Նաև ոչ յառաջ, քան զՔրիստոսէ քաւարանն, զի այն, որ ի դժոխս էին, ոչ թէ տանջէին, իբր թէ քաւէին, այլ անկարգ էր տանջանք նոցա, այսինքն՝ զի ոչ էր վասն իւրեանց գործոցն, այլ վասն նախահաւրն յանցանացն: Իսկ առանձին գործոց դեռևս պահի հատուցանել ի դատաստանի, ըստ այնմ. «**Դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս**» *(Սաղմ. Թ. 18)*, և թէ. «**Մեզ ամենեցուն յանդիմանեալս**» *(Համբ. Բ.Ա Տիմոթ. Ե 20)*:

Արդ, Տէր մեր ուսուցանէ մեզ աւրինակաւս ի պատրաստի կալ, զի մի՛ ընդ մեծատանն պապակիցիմք ի տապ գեհենոյն, վասն որոյ առակէ ասելով. «**Այր մի էր**» *(Համբ. ԺԶ 19)*:

Արդ, նախ քննեսցուք թէ զայս Աւետարանս Տէրնս, վասն է՞ր յառջնում կիրակէին և երկրորդին ոչ կարդամք, այլ՝ ի չորրորդին: Այս է պատճառն, |53ա| զի կարգաւոր է ուղղեալ, այսինքն՝ նախ պարտ է գալ ի խնդիր կարեալ «ոչխարին» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 4-6)* և «դրամին» *(տե՛ս Ղուկ. ԺԵ 8-10)*, և յորժամ գտաւ զեզն պարարակ ի զենումն էած վասն անառակ բնութեանս: Իսկ յետ զենման Գառինն ո՛չ գոյր պատճառ գնալոյ մեր ի դժոխս, բայց միայն մեղքն մեր, վասն որոյ աստ ընթեռնումք զսա, իբրև զգուշացուցանելով խորհրդով հադերձեալ ատենին, յաղագս որոյ ասէ. «*Այր մի*»:

Դարձեալ, զի երանեաց զաղքատութիւնն և արհամարհեաց զմեծութիւնն մեծատանն ասելով. «**Վայ ձեզ, մեծապանց[դ]**» *(Համբ. Ղուկ. Զ 24)*, վասն որոյ զասացեալսն յուր հաւատարմացուցէ յեղելոց իրաց մեծատամբն և Ղազարու:

Դարձեալ զքահանայքն տեսանէին աշակերտքն փարթամացեալս և զինքեանս աղքատս և գծուծս, վասն որոյ առակէ զքահանայսն ի մեծատունն և զառաքինիսն ի Ղազարու, զի հաստատուն լիցին և մի՛ երկմտիցեն, յաղագս որոյ ասէ. «**Այր մի էր մեծապուռն**» *(Ղուկ. ԺԶ 19)*։

Արդ, է տարակոյս մի աստ, թէ զի՞նչ պատճառի Աստուած զոմանս աղքատս արար և զոմանս՝ մեծատուն: Արդ, կամ աղքատ պարտ էր առնել, կամ՝ մեծատուն, զի բազումք յուսահատին այսու: Զայս տարակուսութիւնս լուծանելով՝ ասեմք, թէ այս Աստուծոյ նախախնամութեանն է գործ, զի ծածկագետ է և զամենեցուն միտս գիտէ, և զի կամի զամենայնս արժանի առնել այնմ բարեացն: Արդ, ոմանք ի վերայ երկրի անժոյժք են, և ոմանք՝ համբերողք: Արդ, տայ անժոյժիցն զփարթամութիւնն, զի ունիցին այնու լցուցանել, զիւրեանց կարիս և աւելորդաւքն հաղորդել զաղքատս և գնել զանտի հանգիստն, վասն որոյ զոմանս աղքատս արար, զի տեղիք լիցին մեծատանց բարիս գործելոյ: Զի թէ ամենեքեան մեծատունք էին՝ լինէին իբրև զայս մեծատուն, և թէ ամենեքին աղքատ, սակայն և այն ոչ վայել էր բարերար բնութեանն, այնպես աղքատ թողուլ զմարդիկ՝ զրկեալ ի դրախտէն, վասն որոյ զոմանս մեծատունս արար, և զոմանս՝ աղքատ, վասն ասացեալ պատճառացդ:

Եվ դարձեալ՝ աղքատ և մեծատուն արար, զի կարիս լիցին միմեանց, և այնու յաջողեսցի գործ աշխարհի, վասն որոյ ասէ. «**Ա[յր մի էր մեծապուռն]**» *(Ղուկ. ԺԶ 19)*։

Աստ՝ «*մեծութիւն*», ո՛չ զտան մեծութիւն ասէ, այլ՝ զփարթամութիւն ընչիցն, զի բազում բարութիւնք մարմնականք կային, այլև զանկարգութիւն[1] նմին, զոր կարգէ աստ:

Նախ՝ ասէ, փարթամ էր ընչիւք և հացիւն և գինովն և այլովքն։

[1] Ե *զանկարգութիւն* **փխ**. *զփմարդութիւն*:

Երկրորդ՝ զյատուկ սգեստն, որ ասէ. «**Ազանէր բեհեղս եւ ծիրանս**» *(Յ.Զ 19)*. բեհեզն վուշն է, և ծիրանին՝ թագաւորական սգեստ:

Երրորդ՝ զի ոչ էր յազգի նորա պակաս, քանզի այս է յատուկ մեծատանն:

Չորրորդ՝ զի հանպազ ուրախ լինէր, և ոչ երբեք տրտմեցաւ ի կեանս իւր:

Հինգերորդ՝ զի ամենայն ոք կարօտ |53բ| էր ի նմանէ ինչ առնելոյ, որպէս ասէ. «**առատութեամբ**» *(տե՛ս Յ.Զ 19)*:

Վեցերորդ՝ զի առողջ էր մարմնովն:

Եւթներորդ՝ զի էր տմարդի բարուքն, այսինքն՝ անողորմ:

Ութերորդ՝ զի ոչ հայեցաւ[1] ի վիշտս աղքատին:

Իններորդ՝ զի հպարտութեամբ շրջէր ի մէջ բազմութեան քաղաքին:

Տասներորդ՝ զի միայն զմարմինն հոգաց և ոչ՝ զհոգին:

Ընդդէմ այսմ և Ղազարու չարիքն էին պատահեալ:

Նախ՝ զի աղքատ էր ամենևին:

Երկրորդ՝ զի հիւանդ էր մարմնով:

Երրորդ՝ զի անկեալ դնէր ի դրան նորա:

Չորրորդ՝ զի վիրաւորեալ էր բազում վիրաւք[2] անձն նորա:

Հինգերորդ՝ զի շունք էին սպասաւորք նորա, զի լիզէին զթարախ վիարցն:

Վեցերորդ՝ զի ցանկայր փշրանաց անկելոցն ի սեղանոյ մեծատանցն:

Եւթներորդ՝ զի ոչ ոք տայր նմա զինչ և պիտոյից էր:

Ութերորդ՝ զի ոչ ունէր ազգականս:

Իններորդ՝ զի ոչ ոք ունէր մխիթարիչ իւրոյ վշտացն:

Տասներորդ՝ զի և ծառայք մեծատանցն հարկանէին զնա, վասն որոյ ետ Տէրն փոխանակ նմա ուրախութեանն զվիշտս պա-

---

[1] C *հայեցաւ* **փխ**. *հայեցաւ երբէք*:
[2] E *վիրաւք* **փխ**. *աղտիւք*:

պակմանն և փոխանակ չարչարեացն Ղազարու զհանգիստն կենաց, զոր և ասէ. «**Եղեւ մեռանիլ աղէտպին, եւ պանել [զնա] հրեշտակացն ի գոգն Աբրահամու. [եւ մեռաւ] եւ մեծապուռնն [եւ թաղեցաւ։ Եւ]՝ ի դժոխս[ն ամբարչ զաչս իւր մինչ ի պանջանան էր]**» *(Ղուկ. ԺԶ 22)*։

Աստ է հարցումն։ Վասն զի՞ ասէ Աստուածային գիր, թէ. «**Գիպէ Տէր զասպուածապաշտն փրկել ի փորձութենէ եւ զանիրաւսն պահել ի պ[անջանս աւուրն դատաստանի]**» *(Հմտ. Բ Պետրոս Բ 9)*։ Եւ առաքեալ ասէ, թէ. «**Ամենայն ոք փորձիցի իւրոց ցանկութենաց**» *(Հմտ. Յակոբ. Ա 17)*, և թէ. «**Աստուած փորձէ ի չարեաց**» *(Հմտ. Յակոբ. Ա 13)*։

***[Հարցումն].*** Արդ զի՞արդ է, զի ամենայն արդարք միշտ ի փորձութեանն են, և զի՞ արդարքն ոչ ունին ցանկութիւն, որ ի նոցանէ փորձին։ Ուրեմն երևի, զի Աստուած անիրաւ փորձէ զարդարսն։

***Պատասխան.*** Թէպէտ Աստուած անփորձ է ի չարեաց, սակայն զարդարսն ի փորձութիւն ձգէ, վասն բազում պատճառի։

Նախ՝ զի թէ ոչ փորձէ Աստուած զարդարսն, ո՛չ երևին արդարութիւնք սրբոցն, վասն որոյ փորձէ, զի յայտնի արասցէ զքաջութիւն արդարոյն, որպէս Յոբայն և Աբրահամն, ըստ այնմ. «**Այժմ ծանեալ, թէ երկիւղած [ես Աստուծոյ]**» *(Հմտ. Ծննդ. ԻԲ 12)*, այսինքն՝ ծանուցի մարդկան։

Երկրորդ՝ զի երբեմն սուրբքն հպարտացեալ արդարութեամբք համասեռք լինին սատանայի և այնպէս ընդ Բելիարայ կորնչին յաւիտենական, վասն որոյ թոյլ տայ Աստուած սրբոցն անկանել ի փորձութիւն, զի ի հպարտութենէն ի խոնարհութիւն անկցին, և ապա յետոյ զղջմամբ խոստովանութեանն ապրեսցին։

Երրորդ՝ թոյլ տայ Աստուած, զի ի ձեռն անտեղի չարչարանաց սրբոյն մեծ իմն և սքանչելի գործ կանգնեսցի, որպէս յայտ է ի Քրիստոս, զի և ոչ վասն ինքեան չարչարեցաւ, այլ վասն մեր, զի ի ձեռն նորին չարչարանացն ապրեսցուք մեք։

Չորրորդ՝ թոյլ տայ սրբոյն անկանել ի փորձութիւն, զի ի յուղիղ մտացն մի թիւրեսցին, որպէս Պաւղոսի, զի ետ խայթ մարմնոյ սատանայ կռփել զնա, զի մի անկցի ի բարուոք մտացն և գնացիցն:

Հինգերորդ՝ թոյլ տայ Աստուած սրբոցն անկանիլ ի փորձութիւն, վասն փառացն Աստուծոյ, որպէս ի ծնէ կուրին, զի նա ոչ ունէր մեղս, յայտ է, զի ծնէ կոյս էր և հաւատաց Տեառն և ոչ Հաւր և **|54ա|** մաւր իւր, որպէս ասաց Տէրն, այլ վասն փառացն Աստուծոյ եղև այնպէս:

Վեցերորդ՝ թոյլ տայ Աստուած չարչարել սրբոց վասն նախանձու այլոց, զի այլքն տեսեալ զսուրբսն ի չարչարանսն, փութասցին և նոքա, որպէս զսուրբ մարտիրոսն, և որք զանձինս ի մահ ետուն վասն Քրիստոսի: Բայց աստ տարակուսելի է, զի զի՞նչ փառք է սրբոյն մեռանելն, զի այլոց աւգտութիւն լիցի: Այսմ պատասխանէ սուրբն Գրիգոր Նիւսեայ, թէ. «*Հանդիսի տեղի է այս կեանքս, ոչ թէ վասն այլոց միայն է աւգուտ սրբոյն չարչարելն, այլև վասն ինքեան, զի պսակաց չափն ի չարչարանք սրբոյն է, զի որքան փանջանաց համբերեսցէ, այնքան և պակասեսցի»:*

Եւթներորդ՝ թոյլ տայ Աստուած սրբոյն ի փորձութիւնն, զի յամենայնի յաղթող և կատարեալ երևեսցի: Քանզի երկու են պատերազմողք, մինն՝ ներքուստ և մինն արտաքուստ: Արդ, միայն չէ բաւական, թէ միայն ի ներքս ի բնութիւնն միայն պատերազմեսցի, այլ և արտաքնոցն ևս յաղթող երևեսցի, որ է չարչարելն և նախատելն ի ձեռն այլոցն: Վասն որոյ թոյլ տայ Աստուած, զի կրկին յաղթողութեանն կրկին և պսակեսցէ: Եւ թէ ոչ տայր Աստուած զարտաքին փորձանսն, ասէին ոմանք, թէ ոչ են կատարեալ սուրբքն, զի զարտաքին չարչարանքն ո՛չ տեսին:

Ութերորդ՝ թոյլ տայ Աստուած, զի որ երբեմն ողորմութեամբ վայրի առ ամենայն մարդիկ, այսպէս և երբեմն արդարութեամբ: Արդ, զի՞նչ արդարութիւն էր Աստուծոյ, զի աշխարհի փորձութիւն միշտ տայ վասն մեղաց, և միայն մեղաւորաց: Քանզի սուրբքն թէպէտ ներգործութեամբ ոչ արարին մեղս, սակայն ի մեղանչա-

կան բնութենէս էին, և թէ. «**Ոչ ոք է առանց մեղաց**»,- ասէ Յոբ *(Հմմտ. Յոբ ԺԴ 14, ԺԵ 14)*։ Վասն որոյ թոյլ տայ, զի արդարսն վասն իւր մեղաց կրեսցէ պատիժս, և զի՞ Աստուածային գիր ասէ. «**Ապաշն, որ մեղիցէ, նոյնն եւ մեռցի**» *(Եզեկ. ԺԸ 4)*։ Արդ, ոչ է դատաստան, զի արդարոցն վասն փոքր մեղացն զյաւիտենական զմեռեալութիւնն տալ, վասն որոյ հարկի, զի աստ մեռցին, զի անդ՝ զերծցին:

Իններորդ՝ զի խնամքն Աստուծոյ, որ հաւաստի է յամենայնէ երևեսցի, զի որպէս զարարածս ամենայն յորժամ բարեպէս խնամէ, ո՛չ թէ զարդարսն արտաքս հանէ ի մարմնատար բարութենէն, այլ՝ ի միասին շնորհէ ոչ խտրելով: Այսպէս և ի ժամանակի նեղութեան աշխարհի և արդարքն չարչարին, զի որպէս կցորդեցան խաղաղութեանն և առողջութեանն արդարք և մեղաւորք, այսպէս և չարչարեսցին ի միասին, զի աստի կեանքս զայս խնդրէ, զսոյն և զՏէրն ասէ, թէ. «**Զաշխարհ իւր ծագէ ի վերայ չարեաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց [եւ մեղաւորաց]**» *(Մատթ. Ե 45)*։ Որ է աշխարհական հանգիստ և տանջանք:

Տասներորդ՝ զի ծածկագետ է Աստուած, տեսանէ զանգործսն, որպէս զներկայ և գիտցեալ, զի սուրբքն յառաջիկայսն ի չար գործ ինչ անկանին, խնամօք իւրովք ի փրձութիւն ձգէ, զի մեռցի արդար, զի մի մեղաւոր լիցի և կ[որ]ուսցէ զայնչափ արդարութիւնն:

Տասնևմեկերորդ՝ զի հանդիսա|54բ|դիրն ամենեցուն Քրիստոս է: Արդ, որպէս նա որ Աստուածն է և սուրբն սրբոց, չարչարանօք ել յաշխարհէս, այսպէս և հետևողին պարտ է հետոց նորա հետևել, վասն որոյ թոյլ տայ Աստուած:

Տասնևերկուերորդ՝ զի սրբոց բնակութիւնն հաւաստի ոչ է յայսմ աշխարհի, վասն որոյ նեղութիւն քարշեն, որպէս Տէրն ասէ. «**Յաշխարհի ասա նեղութիւն ունիցիք**» *(Յովհ. ԺԶ 33)*։ Եւ յայտ է ի յանասունսն և ի թռչունս, զի ի բնակութենէ իւրեանց արտաքս գոլով ոչ ունին հանգիստ, նոյնպէս և սուրբքն, ի սեպհական բնակութենէ իւրեանց արտաքս գոլով չարչարին:

Տասնևերեքերորդ՝ զի թէ սուրբքն ո՛չ անկանէին ի չարչարանք, գիտէաք, թէ Աստուած ամենեցուն միապէս տայ զիւր արքայութիւնն, իսկ զնոսա տեսանելով այնպիսի նեղութեամբ գտանել զերկիրն կենդանեաց, իմասցո՛ւք, թէ. «**Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն**» *(հմմտ. Գործք ԺԴ 21)*, որպէս ասէ առաքեալ:

Տասնևչորսերորդ՝ զի սովորութիւն է տնկոց, զի որք պտուղք ունին առաւել տեարք նոցա յաւտեն զաւելորդն և ջրեն, և այն նեղութիւն է ծառին, այսպէս և զսուրբսն առնէ, որ պտղաբեր ծառք են Աստուծոյ, միշտ յաւտէ և սրբէ փորձութեամբ, զի առաւել ևս պտղաբեր լիցի, որպէս ասէ Տէրն *(տե՛ս Յովհ. ԺԵ 2)*:

Տասնևհինգերորդ՝ թոյլ տայ ի փորձութիւն առ ի յուղղութիւն այլոց, զի ի նորա դիպուածոցն, որ անկաւ ի փորձութիւնն, այլքն խրատեսցին, որպէս Ղազարու և մեծատանն, զի թէ Ղազարու և մեծատունն ոչ էին պատուեալ և անպատուեալ, ոչ ցանկայք աղքատութեանն Ղազարու և ո՛չ արհամարհէաք զմեծութիւն մեծատանն, վասն որոյ ասէ. «**Մեռաւ մեծատուն եւ ի դժոխս ամբարձ զաչս իւր**» *(հմմտ. Ղուկ. ԺԶ 22, 23)*[1]:

Իսկ թէ վասն է՞ր կոչի արքայութիւնն «**գոգ Աբրահամու**» *(Ղուկ. ԺԶ 22)*, և ոչ՝ գոգ Մովսէսի և կամ Նոյի և այլոցն: Վասն Դ. (4) պատճառաց:

Նախ՝ «*գոգ Աբրահամու*» վասն հաւատոյն ասէ, ըստ այնմ. «**Հաւատացաւ Աբրահամ յԱստուած եւ համարեցաւ նմա արդարութիւն**» *(հմմտ. Ծննդ. ԺԵ 6)*, զի որք զնորին հաւատն ստանան, մտանեն ի հանգիստն նորին:

Երկրորդ՝ վասն Քրիստոսի, որ էր ի գոգոյն, այսինքն՝ յերանացն Աբրահամու ի զաւակէ նորին, ըստ այնմ. «**Գիրք ծնընդեան... որդւոյ Աբրահամու**» *(Մատթ. Ա 1)*: Եւ զի՞ Քրիստոս է «*արքայութիւն*»

---

[1] C, E չhf *Ասի է հարցումն: Վասն զի՞ ասէ Աստուածային... մեծատունն և ի դժոխս ամբարձ զաչս իւր:*

և «*հանգիստ*», ինքն ասէր. «**Եկայէք առ իս, ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք**» *(հմմտ. Մատթ. ԺԱ 28)*, և ընդ աւազակն ասէր. «**Այսօր ընդ իս իցես ի դրախտին**» *(Ղուկ. ԻԳ 43)*։

Երրորդ՝ վասն աւրհնութեանցն, որպէս ասէ. «**Ի գաւակի քումն աւրհնեսցին ամենայն ազգ երկրի**» *(Գործք Գ 25)*, զի որ ոք բարի գործեսցէ զնորայն աւրհնութեանց նորին արժանաւորին։

Չորրորդ՝ զի Աբրահամ պատկեր է Աստուծոյ Հօր, զի որպէս նայ ետ զորդին միամաւր Իսահակ պատարագ Աստուծոյ, և Հայր Աստուած զՄիածինն ետ ի մահ վասն մեր, ըստ այնմ. «**Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհ մինչեւ զորդին իւր միածին ետ**» *(Յովհ. Գ 16)*, այսինքն՝ ի մահ։

Իսկ արքայութիւնն «*գոգ*» կոչի, վասն բազում պատճառի։

Նախ՝ զի գոգ զժողով իրացն նշանակէ, որ ցուցանէ զժողովումն սրբոցն յարքայութիւնն երկնից, ըստ այնմ. «**Ուր գելն է անդր արծուիքն ժողովեսցին**» *(հմմտ. Մատթ. ԻԴ 28)*։

|55ա| Երկրորդ՝ զի լայնատարած և ընդարձակ է ամենևին, որ է երկինք երկնից, ըստ որում ասէր Քրիստոս. «**Ի տան Հօր իմոյ աւրիեւանք բազում են**» *(հմմտ. Յովհ. ԺԴ 2)*։

Երրորդ՝ զի ապահով յամենայն հակառակորդաց որդին ընդ հովանեաւ ձեռաց Հօրն, այսպէս և. «**Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, եւ ո՛չ մերձենայ ի նոսա մահ**»,- ասէ իմաստունն *(Իմաստ. Գ 1)*։

Չորրորդ՝ նշանակէ ամենևին զհանգիստ, որպէս Որդի ի գոգս Հօրն, և վասն ընտրելոցն ասէ իմաստունն. «**Թուեցան յաչս անզգամաց, թէ մեռան**» *(Իմաստ. Գ 2)*, այլ նոքա են ի խաղաղութեան, այսինքն՝ ի հանգիստ, որպէս յայտ է ի Ղազարու։

Հինգերորդ՝ նշանակէ զգորովագութ համբոյրն հօրն առ որդին, այսպէս և Աստուած զմեղաւորս համբուրէ յորժամ դառնայ և ապաշխարէ, որպէս յայտ է յանառակ որդւոյն, զի «**Եւ ընդ առաջ եւ համբուրեաց զնա**» *(հմմտ. Ղուկ. ԺԵ 20)*։

Վեցերորդ՝ նշանակէ զմխիթարութիւն, զի որպէս հայրն յետ լալոյ առնու զորդին ի գոգն և մխիթարէ զնա, այսպէս և Աստուած Հայր, զչարչարեալսն և զնահատակեալսն յետ աստ ի կենացս մխիթարէ ի հանդերձեալսն, որպէս ասէ իմաստունն, սակաւ. «**Սակաւ ինչ խրատեալք գրգեն զմեծ բարութիւնս**» *(հմմտ. Իմաստ. Գ 5)*, զի Աստուած փորձեաց զնոսա, որպէս զոսկի ի բովս, այսինքն՝ չարչարանօք մարմնոյն մաքրեաց զժանգ մեղացն:

Եւթներորդ՝ զամենևիմբ ուրախութիւնն նշանակէ որդւոց ի գիրկս հօրն, այսպէս և սրբոցն ի տեսութենէն Աստուծոյ անտրտում ուրախութիւն դիպի, որպէս ասէ Տէրն. «**Դարձեալ պեսիցս զձեզ եւ ուրախ լիցին սիրտք ձեր և զուրախութիւնն [ութիւնն ձեր] ոչ ոք հանիցէ ի ձենջ**» *(Յովհ. ԺԶ 22)*:

Ութերորդ՝ նշանակէ զամենայն բարութեանց վայելումն որդւոյ ի գիրկս Հօրն, այսպէս և սրբոցն յարքայութեանն ըստ խոստման բանին. «**Ի սեղան Հօրն նստուցանել եւ անցեալ պաշտել**» *(հմմտ. Ղուկ. ԺԲ 37)*:

Իններորդ՝ զի փոքր մանուկն առնու հայրն ի գիրկն, որ նշանակէ զանմեղութիւնն արժանացելոցն, ըստ այնմ, որ առ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա, և առեալ ի գիրկս աւրհնեաց և ասէ. «**Որ ոք ոչ դառնայցէ եւ լինիցի անմեղ, իբր զմանուկ՝ [ոչ մտցէ ի նա]**» *(հմմտ. Մարկ. Թ 35-36, հմմտ. Ղուկ. Թ 47-48)*:

Տասներորդ՝ զանհեռանալի մերձաւորութիւնն նշանակէ գոգ հօրն, այսպէս և առաքեալն ասէ. «**Ամբով ընդ առաջ Տեառն ելցուք**» *(հմմտ. Ա Թեսաղ. Դ 16)* և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք, որ և կեանք է յամենայնից, ըստ այնմ. «**Եկայք աւրհնեալք Հօր իմոյ**» *(Մատթ. ԻԵ 34)*:

Իսկ աստ է տարակոյս ինչ, թէ վասն է՞ր զանուն աղքատին ասաց, և զմեծատանն՝ ոչ:

Արդ, նախ այսպէս ասեն վարդապետք, թէ զառաջնոցն զբարի անունս ունէր մեծատուն, վասն որոյ ոչ յիշեաց, զի մի բարի անունն ի վերայ չարեացն դիցի:

Եւ երկրորդ՝ զի ի ժողովրդենէն, որք լսէին, էր ոք անուամբ մեծատանն, խնայեաց ի նա, զի մի խռովեսցի, կարծելով թէ առ նա իցէ բանն:

Եւ երրորդ՝ այլ յայտնագոյն, զի անուանք մեղաւորաց ջնջեալ են ի դպրութենէ կենաց, որպէս Դաւիթ ասէ. «**Ջնջեսցին նոքա ի գրքոյ[ուրթեանէ քուամբէ կենաց] եւ ընդ արդ[արս քո մի գրեսցին]**» *(Սաղմ. ԿԸ 29)*: «**Մի յիշ[եսցի անուանդ նոցա ի շրթունս իմ]**» *(Հմմտ. Սաղմ. ԺԵ 4)*:

Իսկ[1] զի՞ մեծատանն թաղումն ասէ, և զաղքատին՝ ոչ:

**|55բ|** Այն է՝ զի զոր ինչ արար մեծատունն յերկրի առ բարեկամքն և այլն, ուտելն և ըմբելն և փառաւոր կենալն, այնքան զաւրեցին, մինչ զի գերեզմանն իջուցին, այլ յետոյ ոչ ինչ կարացին առնել: Ուստի ուսանիմք, ո՛վ մեծատունք, զայն բան, յորում զոր ասաց յառաջագոյն Տէրն, թէ. «**Ուրարէէ չեչ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան**» *(Ղուկ. ԺԶ 9)*, զի յորժամ պակասիցի այս, լինիցի մեզ տեղի յայնմ արքայութեանն[2], զի աստ ի պարտ է շինել զարքայութիւնն զայն: Ապա թէ անհոգ կենամք, որպէս զմեծատունն ուտելով և ըմբելով, և զայն կեանքն ոչ հոգամբք, ուրեմն օրինակ է մեզ մեծատունն[3], ստուգիւ պապակիմք ի տապոյ մեղաց չարեացն: Իսկ զաղքատին ոչ յիշեաց, զի մեծ, քան զայն էր, որ ի կենդանութեանն չարչարանքն:

Եւ դարձեալ, զի՞ կենդանութեանն շունք էին սպասաւորք նմա, ո՞վ էր, որ թաղէր զնա: Ուրեմն յայտ է, զի ոչ թաղեցաւ, զի աստ զչարչարանքն կատարեալապէս ընկալաւ, վասն որոյ բարեացն կատարելապէս հասաւ: Իսկ արդ՝ ասելով զայս աղքատս անթաղ թողցուք, և կամ զթաղեալսն այպանեսցուք, այլ ի վարքն հայել արժան է, զի թէ վարք արդարոյն գոյ ի մեռելն ոչ ինչ պակասեցու-

---

[1] E *Իսկ* **փխ**. *Իսկ զաղքատին յիշեաց, քանզի անուանք արդարոց գրեալ են ի դպրութիւն կենաց: Իսկ…*:

[2] C **չիք** *զի յորժամ պակասիցի այս, լինիցի մեզ տեղի յայնմ արքայութեանն*:

[3] E **չիք** *ուտելով և ըմբելով, և զայն կեանքն ոչ հոգամբք, ուրեմն օրինակ է մեզ մեծատունն*:

ցանէ թաղեալն և թէ ոչ՝ ոչ յաւելու: Նոյնպէս և աղքատն, թէ բարիոք գնացս ունի, ոչ պակասեցուցանէ չթաղելն, և թէ ոչ ունի գործս բարիս, թէ քան զլերինս բարձրացուցանէ սգերեզմանս նոցա, ոչ ինչ յաւելու:

Իսկ զայս, զոր Ղազարոս պատմեցաք, զոչ թաղելն ոչ թէ հարկիւ ասացաք ամենայն արդար անարգ լինել ի մահուանն, և մեծատուն մեղաւորին փառաւոր, այլ միայն կարճամտացն ասացաք, որք յերևելիս ևեթ հային և իմանալեացն չեն տեսողք[1], քանզի ահա բազում արդարոց քաջավայելուչ են շիրիմք նոցա, և բազում անաւրէնք անթաղ մնացին և ոչ ինչ սոքա գրեցաւ առ Աստուած ի հատուցումն նոցին:

Իսկ մեր բանս վասն Ղազարու անարգ կրիցն մարմնոյն և բարձրատոհմութեան հոգւոյն և մեծատան վշտացն է: Իսկ լսելով զայն, թէ Ղազար ի գոգն Աբրահամու, և մեծատունն՝ ի դժոխս պապակէր, մի՛ կարծէր հակառակ բանից առաքելոյն որ ասէ. «**Զեւ եւս ընկալեալ զաւետիսն Աստուծոյ, լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին**» *(համար. Ա՛ առ Եբր. ԺԱ՛ 39-40)*, զի դեռևս ի դժոխք էին հոգիքն, և Տէր մեր ոչ էր խաչեալ, որով աւերեցաւ դժոխքն, որպէս ասացաւ առաջագոյն: Զի վասն դժոխոցն, որ յառաջ քան զչարչարանքն Տեառն պարտ է այսպէս գիտել, զի դժոխքն է ի ներքին մասն երկրի: Եւ զի նախքան զՔրիստոս ամենեքեան անդ գնային՝ արդարք և մեղաւորք: Եւ մի է դժոխքն և ոչ՝ բազում, որպէս հաջեն երկաբնակքն[2], զոր ցուցից աւրինակաւ երկրի, ըստ չորից եղանակաց զկերպ բնակելոյ, անդ ի միասին արդա|**56ա**|րոց և մեղաւորաց:

Նախ՝ զոր աւրինակ երկիր պատժապարտութեան տեղիք էր, և ամենեքեան ի միասին բնակեն՝ արդարք և մեղաւորք, այսպէս և ի մի դժոխքն բնակէին արդարք և մեղաւորք, և ոչ է բազում

---

[1] G չիf *միայն կարճամտացն ասացաք, որք յերևելիս ևեթ հային և իմանալեացն չեն տեսողք*:

[2] G չիf *որպէս հաջեն երկաբնակքն*:

դժոխս, այլ մի: Այլև այս գիտելի է, զի արքայութիւնն երկնից ո՛չ ոք էր յայնժամ և ոչ այժմ ի դժոխքն, այլ ամենեքեան առ հասարակ ի մի դժոխք էին:

Երկրորդ՝ զի յերիս յայսմ զոմանս տանջեն դևք, այսինքն՝ զչարսն և յոմանց հալածական լինին, այսպէս և դժոխս ոչ գոյր այրիչ, որպէս ի հանդերձելումն, զի այն հուր տանջիչ ի մի անգամ գալստեանն կազմի: Այլ զչարսն դևք տանջէին և ի սրբոցս հալածական լինէին: Եւ այս ևս գիտելի է, զի ի հանդերձելումն դևք ոչ զոք տանջեն, այլև ինքեանք տանջին ի հուրն, ըստ այնմ. «**Երթայք [յինէն, անիծեալք] ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա**» *(Մատթ. ԻԵ 41)*:

Երրորդ՝ զոր աւրինակ ի մէջ քաղաքի բազում տեղիք, ոմանց՝ դարպաս, ոմանց՝ խանութ, ոմանց՝ բանտ և ոմանց՝ տանջանարանք, և ոմանց՝ հանգստարանք, այսպէս և ի դժոխս, ոմանց՝ տանջանք և կսկիծ, որպէս սոդոմայեցւոց, մեծատանն և այլոցն, և ոմանց հանգիստ, որպէս Աբրահամու և այլ նահապետացն:

Չորրորդ՝ զի աստ դևք մեղաւք և անհաւատութեամբ ծառայեցուցին, և անդ անխնայ անհնարին լլկանօք չարչարեն: Իսկ սուրբքն ի մարմնի գոլով հալածէին զդևս, և թէպէտ ի դժոխքն գնացին վասն պարտուց նախահօրն, սակայն զօրութեամբն Աստուծոյ հալածէին զդևսն, զի չիք ինչ տեղիք, ուր ոչ է ձեռն Ամենակալին:

Եւ դարձեալ, զոր աւրինակ աստ առ Եղիսէիւն տեսաք բանակք հրեշտակաց *(տե՛ս Դ Թագ. Բ 11-14)*, նոյնպէս և անդ էին, որ և յատակս դժոխոցն գոլով մեծատանն, համբարձ զաչս և ետես զԱբրահամ ի հեռաստանէ և ասէ. «**Հայր Աբրահամ. «Ողո[րմեա ինձ եւ] առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին [իւրոյ ի ջուր եւ գուցացուցցէ զլեզու իմ, զի պապակիմ ի փոպոյ սոպի]**» *(Ղուկ. ԺԶ 24)*:

Եւ աստ ևս բազում յիմարութիւն երևի մեծատանն:

Նախ՝ զի անտի կեանքն զգործն Աբրահամու ոչ գործեաց, որով որդի լինէր նմա: Իսկ իմացեալ զտանջանսն՝ Հայր կոչէ զնա[1]:

Երկրորդ՝ զի յայն կեանքն ոչ ումեք ողորմեցաւ, իսկ ի դժոխքն ասէ «*Ողորմեա՛ ինձ*»:

Երրորդ՝ զի իւր կեանքն առ Ղազար ոչ գնաց և ոչ ետես զնա ի հիւանդութեանն, իսկ ի դժոխս զՂազար առ ինքն մեծարէ:

Չորրորդ՝ զի յիւր կեանսն Ղազարու ոչ ետ ի փշրանաց սեղանոյ իւրոյ, իսկ ի դժոխս Ղազարու գալ ասէ. «**Թոնաալ ցծագ մատին եւ ցովացուցանել**» (Ղուկ. ԺԶ 24):

Հինգերորդ՝ զի յիւր կեանքն ի հանգստէնէն ոչ ումեք հաղորդեցոյց, անտ զտապն պատմէ: Եւ դարձեալ ասէ անգիտութեամբ, եթէ հայր ես, արդարութիւն արա, զի զՂազար զինգէն մինն մեղք է արարեալ, և նովին չափով ես՝ արդարութիւն: Արդ, հաւասարաբաշխութիւն արա և առաքեա զդա, զի մի մասն տանջի, և ես՝ մի մասն հանգչիմ, զի զայս ունի խորհուրդ, որ |56բ| զծայր մի մատինն յիշէ:

Եւ զի՞ ծայրն յիշէ:

Այն է՝ զոր աւրինակ ծայր մատինն փոքր է, այսպէս՝ արդարութիւն մեծատանն կարի փոքր էր: Իսկ «*տապ*» զնեղութիւն դիւացն ասէ, որ լլկէինն: Իսկ «*զովացուցանել*»՝ զհալածումն ասէ դիւացն: Եւ զոր աւրինակ՝ յերկրի այսակիրք ապաւինին ի սուրբսն զերծանել ի վտանգէն, զոր կրեն ի դիւաց: Նա և մեծատունն գիտէր, զի սուրբքն ունին կարողութիւն ազատել ի դիւաց:

Իսկ զի՞ լեզու յիշէ, այն է հայհոյութեամբն, զոր մեղանչելովն նովիմբ տանջի: Իսկ արդ, տե՛ս զի՞նչ տայ պատասխանի:

«Յիշեա»,- ասէ, այսինքն՝ զքո բարիսն և զՂազարու չարչարանսն, և զի ոչ եմ անիրաւ, զի դու մի մասն բարեացն փոխարէն զկեանսն ընկալար, և սա նոյնպէս զտանջանսն:

---

[1] C չիք *զի անտի կեանքն զգործն Աբրահամու ոչ գործեաց, որով որդի լինէր նմա: Իսկ իմացեալ զտանջանսն՝ Հայր կոչէ զնա:*

Արդ, դատաստան ձեր վճարեալ է, վասն որոյ սա աստ մխիթարի, և դու՝ այդր պապակիս:

Եւ երկրորդ՝ զի ողորմութեան չափ և սահման է այն յաւիտեան: Եւ մինչդեռ ի մարմնի էր և քան անցանել ոչ է, զի այս աւուրս արդարութեան է և ո՛չ ողորմութեան, վասն որոյ. «**Սա ասդ մխիթարի, եւ դու ա[յդր պապակիս]**» *(Ղուկ. Ժ.Զ 25)*:

Եւ երրորդ՝ զի աւրինաւքն ոչ արդարացուցար, ընդ քեզ ի դժոխս իջուցեր, ոչ է հնար քեզ ելանել այտի: Նմանապէս և զՂազարոս ոչ ունի աստի ելանել, վասն որոյ և ես թէպէտ կարի ողորմած եմ, աստ անողորմ գտանիմ: Նոյն է և այժմ ժամանակի, եթէ ոք մեղօք ի գերեզման մտանէ, և թէպէտ հիմա ոչ առնու զհատուցումն, սակայն ի հանդերձելումն նոյնն պատահի, զոր և ասէ առ մեծատանն. «**Դու ընկալար զմխիթարութիւնն**» *(հմմտ. Ղուկ. Ժ 24)*, զի զայն ընտրեցեր, այսինքն՝ զագահութիւնն և զշուայտանալն և զայն, և դու ասացեր, թէ ոչ է պարտ վշտացելոյն առնել սփոփանս և խնամակարութիւն, վասն որոյ. «**Սա ասդ մխիթարի, եւ դու այդր պապակիս**» *(Ղուկ. Ժ.Զ 25)*:

Արդ, իմացարուք, եղբարք, զի որք աղքատին ասեն ոչ ողորմել, ինքնին հատանէն զողորմութիւն իւրեանց յԱստուծոյ, զի զոր աստ առնենն, նոյնն և անդ պատահին, վասն սորայ ասէ. «**Վիհ մեծ է ընդ մէջ մեր եւ ընդ մէջ ձեր**» *(հմմտ. Ղուկ. Ժ.Զ 26)*, այսինքն՝ հեռի է փառք մեր ի ձեր տանջանաց: Եւ կամ դարձեալ՝ ոչ ոք աստ եկեալ արդարանալ կարէ, և ոչ, որ արդարն է՝ մեղանչել, այն է ասելն. «**Ուստի ա[ն]դր ոչ կարեն անցանել**» *(հմմտ. Ղուկ. Ժ.Զ 26)*:

Իսկ մեծատունն յինքենէ յուսահատեալ սկսաւ վասն ազգականացն աղաչել առաքեայ ի տուն հօր իմոյ *(տե՛ս Ղուկ. Ժ.Զ 27)*, վասն զի ուսաւ, թէ լաւ է զայնքան ժամանակն տանջել, որպէս Ղազարու, և անդ հանգչել, քան թէ տէր լինել ամենայն աշխարհի և ի կատրածին դժոխոցն ժամանել: Նոյնպէս և մեզ ուսանել ար-

ժան է, վասն զի ասէ Տէրն. «**Զի՞նչ օգուտ է մարդոյ, թէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր պուժեսցի, զի զի՞նչ փոխցէ փոխանակ անձին իւրոյ**» *(Մարկ. Ը 36-37)*:

Ապա և ընտրել արժան է, այսինքն՝ զամենայն կեանս մեր լնուլ կոծելով և տրտմութեամբ |57ա| և հեծութեամբ և արտասուօք մաշել զանձինս, և զամենայն աստի նեղութիւնս ոչ ինչ գրել, և զոր ինչ հեշտալի է, զամենայն ի բաց ձգել և կամաւ զճգնութիւն ի յանձին բերել, որովք զաղէտն զայն և զտարակուսանքն զայն ի բաց կարիցեմք ձգել, զոր փորձիւ ուսեալ մեծատանն աղաչէր, զի քարոզս առաքեսցէ, զի այսպէս կարծեաց նա, թէ եղբայրքն այլ այնպէս հաւատային, որպէս և նա հաւատաց փորձիւ, ո՛չ գիտէ, թէ նոքա զիւր առաջին ախտն կրէին և ոչ հաւատային: Իսկ «*եղբարք*» զամենայն բնութիւնս է իմանալ:

Եւ հինգ ասելն *(տե՛ս Յ.Զ 28)*, վասն սգայարանացն թուոյ, զի մի՛ աչօք խաբեալ կամ ականջովք և այլովք: Եւ եթէ ճշմարտութեամբ էին եղբարք չարք և անհաւատք, վասն որոց ողորմել աղաչեր: Իսկ Աբրահամ, տե՛ս զինչ պատասխանէ ասէ. «**Ունին զքանէ մարգարէիցն ի նոցանէ լուիցեն զպատնջանս մեղաւորաց եւ զփառս արդարոց**» *(հմմտ. Յ.Զ 29)*: Եւ որք կամին կարող են ապրեցուցանել զանձինս, զոր ասացան, քանզի լի են Աստուածաշունչ գիրք, որք սպառնան մեղաւորաց փախչել ի մեղաց: Իսկ նա վասն զի գիտէր, զի ո՛չ լսէին մարգարէիցն բանից, զի և ինքն ոչ լսեաց, ասէ. «**Ոչ հայր, բայց թէ ի մեռելոց երթիցն, յոյժ հաւատցին**» *(հմմտ. Յ.Զ 30)*: Իսկ աստ վեցերորդ անմտութիւն է, զի ի կենդանութեանն ամենայն բանք մարգարէիցն առասպել թուէր, զի հեշտացեալ էր ի սէր ընչիցն, իսկ յորժամ զերծաւ ի հեշտութենէն և անմարմնութեամբն ծանեաւ զշահն լսելոյ, կարծէր, թէ և նոքա լուիցեն: Իսկ Աբրահամ ճշմարտագոյնս գիտէր զբանք մարգարէիցն, քան զմեռելոց յառնելն: Ասէ, թէ. «**Աստուածաշունչ գրոցն ոչ հաւատցին, եւ ոչ թէ յառնեցեն ի մեռելոց, նոցա հաւատցին**» *(հմմտ. Յ.Զ 31)*: Եւ ստոյգ

գիտասցուք, զի լաւագոյնք են բանք Աստուածաշունչք, քան թէ ոք ի մեռելոց յառնէ, վասն զի մեռելոյն բան մարդոյ բան է, իսկ գիրք՝ Հոգւոյն Սրբոյ: Իսկ որք Հոգոյն Սրբոյ ոչ հաւատան, և ո՛չ յարուցելոյն ի մեռելոց:

Եւ արդ, վասն զի բազումք գոն յայսմ ժամանակի, զի ոչ այնմ հաւատան, և ոչ՝ այնմ քան զի յոյժ անհաւատացեալ են, բայց մեք սիրելիք ունկնդիր լիցուք բանիցս աստուածային, և պահեսցուք զմեզ ի մեղաց, զի մի՛ ընդ պապակողացն դասիցիմք: Մանաւանդ ողորմած լիցցուք և միտ ածցուք զանողորմութեան դատաստան մեծատանն, զի թէ ոչ պատրաստիցեմք զմեզ, անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնէ զողորմութիւն, իսկ եթէ կրեմք փոքր ինչ նեղութիւն ի սակաւ ժամանակս, անդ յաւատական կենացն հասցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով և ընդ որում Հօր միանգամայն և Հոգոյն Սրբոյ վայել է փառք:

# ՏԱՍՆԵԻՈՒԹԵՐՈՐԴ ՃԱՌՆ

|57բ| «Դատաւոր մի ի քաղաքի ուրուռն յԱստուծոյ ոչ երկնչեր եւ ի մարդկան ոչ ամաչէր եւ այր ի մի էր» *(Ղուկ. ԺԸ 2)*։

Բարեխնամն և ամենագութն Յիսուս յամենայն ժամ կամի կեցուցնել զոգիս մեր, և ոչ ունի նախանձ ըստ մերոյ անօրէնութեան: Նա թեև վասն մեր խաչեցաւ, և զի մեռաւ վասն մերոյ անօրէնութեան, ուրեմն յայտնի է, զի կամի կեցուցանել զոգիս մեր, վասն որոյ զահ դատաստանին առաջի եդ մեզ այսօր և պատմեաց զարհաւիրսն, մանաւանդ, թէ զհատուցումն, որ անդ զորմէ երկնչեալ տարակուսիմք, վասն սորայ մեծն և ամէնողորմն խնամէ զմեզ խրատիւ և առակաւ ցուցանէ մեզ ուսանել մեզ նա ի չարչարանաց զերծումն, վասն որոյ ասէ. «Կալ միշտ յաղօթս եւ ոչ յանձրանալ» *(Հմմտ. ԺԸ 1)*, և ընդ նմին զառակն յաւրինէ. «Դատաւոր մի էր ի քաղաքի» *(Ղուկ. ԺԸ 2)*։

Բայց՝ նախատեսցուք, թէ ո՞վ է դատաւորն, և զի՞ ոմանք ասացին զԱստուած գոլ դատաւոր, պատճառելով, թէ ո՛չ ունի վերոյ ինքեան մեծ յորոյ երկնչի, և ո՛չ ի մարդկանէ ամաչէ *(տե՛ս Ղուկ. ԺԸ 2)*։ Եւ ի յետին բան ոչ նայեացն, որ ասէ. «Տեսանէք զի՞նչ դատաւորն անիրաւութեան արար» *(Հմմտ. ԺԸ 6)*, յորոց յայտնի ստուգիւն այնմ բանի, վասն զի զԱստուած՝ «*դատաւոր արդարութեան*» ուսաք ի Սուրբ Գրոց, ըստ այնմ. «Յարդարութիւն եւ յիրաւունս հաստատեալ է Աթոռ Նորա» *(Հմմտ. Սաղմ. ՁԸ 15)*։ Այլ «դատաւոր» զմիտս մարդոյ ասէ, իսկ «*զքաղաք*»՝ զմարդ, և «*այրի*»՝ զհոգին և զայլն նմանապէս, զոր ի կարգի ուսուցուք:

Նախ՝ տեսցուք, թէ զի՞նչ է գործ դատաւորին:

Եւ երկրորդ՝ թէ վասն է՞ր թիւր ի դատաստանն:

Եւ երրորդ՝ թէ, որպէ՞ս նմանի բնութիւնս մեր քաղաքի:

Եւ չորրորդ՝ ո՞ր է առաւելութիւն այսմ քաղաքի:

Եւ հիգերորդ՝ թէ զի՞նչ է դատաստանն, զոր ոչ կամեցաւ առնել:

Վեցերորդ՝ թէ զիա՞րդ յետոյ արար[1]:

Եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ քանի են գործ դատաւորին: Արդ, առաջին գործ է դատաւորին լսել զբան դատախազացն, զոր ասեն:

Երկրորդ՝ քննել և որոնել զասացեալսն, թէ ճշմարտութեամբ ասեն, թէ՝ ոչ, թէ պատրուակաւ և զստոյգն հանել:

Երրորդ՝ զերկուսին դատախազին համանգամայն քննել, և ոչ առանձին:

Չորրորդ՝ վկայս խնդրել երկու կամ երիցս, ըստ բանին Տեառն. «**Յերկուս եւ յերիս վկայիս հաս[տատեսցի]**» *(հմմտ. Մատթ. ԺԸ 16)*:

Հինգերորդ՝ զսուտն սուտ առնել, և զճշմարիտն՝ ճշմարիտ:

Վեցերորդ՝ վճիռ հատանել երկոցունց: Արդ ահա յայս է գործ դատաւորին:

Իսկ միտքն, զի դատաւոր ետ Աստուած, ամենևին ոչ կամեցաւ զմի ի սոցանէ ի գործ ածել[2]: Եւ այս յայտնի ի պատճառացն, թէ. «**ՅԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր**» *(Ղուկ. ԺԸ 2)*:

Իսկ արդ՝ տեսցուք զերկրորդ գլուխն, թէ վասն է՞ր թիւրի ի **|58ա|** դատաստանն: Եւ այս վասն չորս պատճառի:

Նախ՝ վասն անգիտութեանն, զոր ո՛չ իմանայ դատաւորն զուղիղն, այլ՝ ըստ թիւր իմացմանն վատթար առնէ զդատաստանն[3]:

Երկրորդ՝ զի առնու կաշառս, վասն որոյ կապի զլեզու նորա ոչ խօսել զճշմարիտն:

---

[1] E *Եւ հիգերորդ՝ թէ զի՞նչ է դատաստանն, զոր ոչ կամեցաւ առնել: Վեցերորդ՝ թէ զիա՞րդ յետոյ արար* **փխ**. *Եւ հիգերորդ՝ թէ վասն է՞ր այրի կոչէ զհոգին: Եւ վեցերորդ՝ թէ զի՞նչ է դատաստանն, զոր ոչ կամեցաւ առնել: Եւ եօթներորդ՝ թէ զիա՞րդ յետոյ արար*:

[2] E *զմի ի սոցանէ ի գործ ածել* **փխ**. *առնել մի ի սոցանէ*:

[3] C, E *վատթար առնէ զդատաստանն* **փխ**. *և սխալ գործէ*:

Երրորդ՝ թէ երես առնէ, կամ վասն մերձաւորութեան ազգականութեան, կամ վասն սիրելութեան, կամ վասն աղքատութեան և աղաչանաց:

Չորրորդ՝ թէ երկնչի ի բռնաւորաց և յիշխանաց և յաղագս այսոցիկ թիւր ի դատաստանն[1]:

Արդ՝ միտքն զայս ամենայն առնէ: Նախ՝ զի յիմարի ի մեղացն, զի հոգիք ըմբռնեալք ի մեղս, ի մտաց ևս անկանին, և ապա՝ առնու կաշառ զհեշտութիւն մեղաց, զի նախ նա հեշտանայ, և ապա՝ մարմինն: Իսկ երես պահէ մարմնոյն, ա՛յս է: Զի սիրեցեալ ի նմանէ վասն զկամսն կատարելոյ գործով և երկնչի ևս, գուցէ թէ դատ առնէ, վնասեսցի բաժանմամբ:

Արդ, պարտ է հոգւոյն, որ խաւարեալ է ի մեղս, յոյժ գոչալ և յԱստուած յուսալ, որ սաստեսցէ անխիղճ մտացն, զի արասցէ դատաստան:

Իսկ զերկրորդ գլուխն տեսցուք, զի զբնութիւնս մեր քաղաքի նմանեցուցանէ, որպէս ասէ. «**Դատաւոր մի էր ի քաղաքի**» *(Ղուկ. ԺԸ 2)*:

Եւ այս ըստ բազում եղանակի:

Նախ՝ զի քաղաքն ամրացեալ է պարսպաւք և բրգաւք, այսպէս և մարդն՝ մարմնով և ջլօք և ոսկերօք և նէարդեամբք:

Երկրորդ՝ զի ի քաղաքն են տունք բաժանեալք ի միմեանց, այսպէս և ի մարդն, զի գլուխն բաժանեալ է ի լանջացն, և ի գլուխն տունս երիս. տեսողական, դատողական և յիշողական, նա թէ և որպէս է սիրտն որոշեալ է բոլորակութեամբն իւրով ի լերդէն և ի թոքոյն և երիկամունքն, և այլն նմանապէս:

Երրորդ՝ զի յիւրաքանչիւր տուն գործի որիշ գործ ի քաղաքն, այսպէս և ի մարդն, ի խելսն ունի որիշ գործ բաժանումն առնել, այլև խելապատակն, նոյնպէս ստամոքսն հալել եփել և պարզել և արտաքս վտարել, և լերդն կարմրել և ներկել, և սիրտն ընդ ամենայն յօդուածս բաժանել, և այլն նմանապէս:

---

[1] G չիք *երես առնէ, կամ վասն մերձաւորութեան ազգականութեան, կամ վասն սիրելութեան, կամ վասն աղքատութեան և աղաչանաց: Չորրորդ՝ թէ երկնչի ի բռնաւորաց և յիշխանաց և յաղագս այսոցիկ թիւր ի դատաստանն:*

Չորրորդ՝ զի բարերարսն պահեն ի քաղաքի, իսկ զվատթարսն արտաքս հանեն, այսպէս և ի մարդն, զի ստամոքսն զգեղեցիկն ի գոլորշեացն առ խելապատակն առաքէ և զպարզ ջուրն ի լեարդն, իսկ զդուրտն արտաքս վտարէ[1], այսպէս և խելապատակն՝ զաղի նորա յաչսն, և զդառն՝ ընդ ականջն, |58բ| և զկծուն ի քիթսն, այսպէս և այլքն:

Հինգերորդ՝ զի սպասաւորք կարգեալ են ի քաղաքի բերել ի նա զամենայն ինչ, նմանապէս և ի մարդիկ կարգեալ է աչքն ծառայ է, զի տեսանիցէ և ի ներքս ի միտքն տանի զկերապրն, զի ճանաչիցէ, և զձեռն, զի գործեսցէ և զճաշակելիքն, զի մանրեսցէ և հոտոտելիքն և այլն:

Վեցերորդ՝ զի բազում դրունք են քաղաքին, այսպէս և ի մարդն ԲԺ. (12) ան դրունք կարգեալ են յԱրարչէն, ընդ որում մտանեն և ելանեն: Այս են Բ. (2) ականջն, Բ. (2) աչք և Բ. (2) ը ռնգունք և մի բերան և Բ. (2) ծիծն, և պորտն, և յառաջքն և յետքն:

Եւթներորդ՝ զի են ի քաղաքին, որ բարեկամք են քաղաքին, և են, որ ոչ, այսպէս և ի մարդն, կամի զառաքինութիւնն, որով ապրի մարդն, իսկ մարմինն զիակառակն նորին խորհի, ըստ առաքելոյ *(հմմտ. Լ՚ռ Գ.ոշպտ. Ե 17)*։

Ութերորդ՝ զի ի գիշերի դադարին ամենեքեան ի գործոց, որ ի քաղաքի, այսպէս և մարդոյն, ի ննջելն դադարին ամենայն սգայարանք ի գործոց իւրեանց:

Իններորդ՝ զի թագաւոր կարգեալ է ի քաղաքի, և նա նստի ի բարձր տեղւոջ, այսպէս և ի մարդն, թագաւոր միտքն է, այն, որ նստի գլուխն՝ ըստ Սողոմոնի *(պէ՛ս Ժ.ող. Բ 14)*։

Տասներորդ՝ զի թշնամիք քաղաքին քակեն զքաղաքն և զինչսն տանին և փլուցանեն զշինուածսն, որ ի նմա, այսպէս և մահն զմարդն քակէ, զգեղեցկայարմար շինուածն և զպատուա-

---

[1] Ե **չիf** *և զպարզ ջուրն ի լեարդն, իսկ զդուրտն արտաքս վտարէ:*

կան ի նմա զհոգին հանէ ի նմանէ, և զմարմինն լուծանէ ի միմեանց ապականութեամբ, վասն որոյ ասէ. «**Դարձուր մի էր ի խաղաւթի [ուրեմն]**» *(Ղուկ. ԺԸ 2)*։

Հետևմամբ տեսցուք զչորրորդ գլուխն, թէ քանի պատուականութիւն մարդոյս քաղաքի, քան զանշնչիցն։ Եւ արդ՝ բազումք են պատուականութիւն սորա։

Նախ՝ զի քաղաքն ձեռագործ է մարդոյ, իսկ մարդն՝ Աստուծոյ։

Երկրորդ՝ զի քաղաքն բնակութիւն է մարդոյ, իսկ սա՝ Աստուծոյ, որպէս թէ քաղաքի է քաղաք։

Երրորդ՝ քաղաքն պատկեր է հողոյ, իսկ մարդն՝ Աստուծոյ։

Չորրորդ՝ զի քաղաքն անկենդան է, իսկ մարդն՝ կենդանի։

Հինգերորդ՝ զի քաղաքն ապականացու, իսկ մարդն՝ անապական հոգւով։

Վեցերորդ՝ քաղաքն վասն մարդոյ ամենայն պիտոյիւք, իսկ մարդն՝ վասն Աստուծոյ։

Եւթներորդ՝ զի զաւրութիւն սորա և փառք անցաւոր է, իսկ մարդոյն՝ մշտենջենաւոր։

Ութերորդ՝ զքաղաքս աւերեալս շինէ այլ ոք, իսկ զբնութիւնս քակեալ, որ ստեղծ՝ նա շինէ յարութեամբ։

Իններորդ՝ մեծ է որքանութեամբ, զի սա ի տեղիս-տեղիս, իսկ նա՝ յարևելից մինչ ի մուտս և այլսն։

Տասներորդ՝ զի տեղիք այսմ քաղաքի է երկիր խոնարհ, իսկ մարդոյս քաղաք է երկին, ի բարձունս և քաղաքակից հրեշտակաց։

Տեսցուք և հինգերորդ գլուխն, թէ զի՞նչ է դատաստան, զոր ոչ առնէ միտքն։ Այս է ի հասանել ժամանակին ի գործել մեղացն հեշտանայ միտքն և թոյլ տայ առնել։ Եւ զոր աւրինակ լուծ եզանց զերկոսինն ուղիղ վարէ, իսկ ի խոտորել լծոյն խոտորնակի միակողմանի գնա նայ, այսպէս զմիտքն՝ դատաւոր, և լուծ է դրել Աստուած ի վերայ հոգւոյ և մարմնոյ առնել դատաստան և ուղղել, և միջինն |59ա| գնալ ճանապարհ։ Իսկ նա ո՛չ երկնչի ի նմանէ վասն բազում պատճառի։

Նախ՝ զի ոչ հաւատայ հատուցման գործոցն, թէ այս մեղացս վճարել կայ զփոխարէնն: Եւ երկրորդ՝ զի զինքն միայն գիտէ, և ոչ զայլ ոք:

Իսկ ոչ ամաչէ ի մարդկանէ: Նախ՝ զի ծածուկ է և անտես ի մարդկանէ յամենեցունց, և երկրորդ՝ վասն նրբութեանն: Ուստի զամենայն ստուգապէս ճանաչէ, և թէ ուղիղ է բանն, նա ունի ամբարեալ, և ամենեցուն հետևող է: Յաղագս այնր, զի ոչ ոք տեսանէ զնա, և յանդիմանէ նմին իրի, և ոչ ամաչի և ոչ երկնչի, վասն որոյ և ոչ առնէ դատաստան այրի [հոգւոյն][1] *(պէ՛ս ԺԸ. 4–5)*:

Քննեսցուք և վեցերորդն գլուխն, թէ վասն է՞ր «*այրի*» կոչէ զհոգին: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի այրին յոյժ տառապանօք կենայ, այսպէս և հոգին մէջ մեղաց և անաւրէնաց, ըստ այնմ. «**Տոռոշեալ մեղայ պապեցեան ինեւ**» *(Սաղմ. ՃԺԸ. 61)*:

Երկրորդ՝ զի միշտ աղաչէ այրին, և ոչ ոք լսէ, այսպէս և հոգին միշտ աղաչէ զմիտքն, և ոչ ոք լսէ նմա, որպէս և ասէ. «**Այրի մի էր ի քաղաքին գայր առ նա եւ ասէր. «Դատ արա՛ ինձ, յոսոխէ իմէ»**» *(Ղուկ. ԺԸ. 3)*: Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս:

Երրորդ՝ զի գծուծ է հանդերձիւ այրին, այսպէս և հոգին մերկ է ի բարեացն, յորժամ ի մեղքն է:

Չորրորդ՝ զի չունի ակնկալութիւն ումեքէ այրին, այսպէս և հոգին անյոյս լինի ի մէջ անհուն մեղացն:

Հինգերորդ՝ զի այրին «*անայր*» կոչի, այսպէս և հոգին ի մէջ մեղաց անբարի կոչի:

Վեցերորդ՝ զի «*այրի*»-ն այսպէս ստուգաբանի. «*այրի*», այսինքն՝ կսկծի և խորովի, այսպէս և հոգին յոյժ կսկծի ընդ կորուստ իւր:

Եւթներորդ՝ զի այրին իւրովի ջանայ, և ոչ կարէ ապրել, այսպէս և հոգին առանց մարմնոյն ոչ կարէ արդարանալ:

---

[1] Ե չիք *Տեսցուք և հինգերորդ գլուխն, թէ զի՞նչ է դատաստան, զոր ոչ առնէ միտքն… առնէ դատաստան այրի հոգւոյն*:

Ութերորդ՝ զի այրին աղքատ լինի ամենևին, այսպէս և հոգին աղքատ կոչի ի բարեաց կամ ի չարեաց:

Իններորդ՝ զի ամենայն ոք կամաւ ողորմի այրոյն, և ոչ բռնութենէ հարկիւ, այսպէս և միտքն ոչ բռութեամբ հարկիւ առնէ դատ հոգւոյն, այլ յինքենէ շարժել:

Տասներորդ՝ բազում անգամ կամի այրին մեռանիլ և ոչ կարէ, այսպէս և հոգին ցանկայ ելանել ի ժահահոտ մարմնոյն և զերծանիլ ի նմանէ, որպէս ասէ Դաւիթ. «**Տէր հան ի բանտէ զանձն իմ**»[1] ***(Սաղմ. ՃԻԵԼ 8)***, վասն որոյ այրի կոչէ զնա:

Հետևաբար տեսցուք և զեւթներորդ գլուխն, թէ զի՞նչ է դատաստան, զոր արար միտքն[2]:

Արդ՝ այս է դատելն մտաց, յորժամ բաժանէ մարմնոյն չափով կարեաց բնութեանն տալ, վասն հաստատուն պահելոյ զնա, և ոչ այնչափ հեղուլ ի նա զարատաւոր կիրսն: Նոյնպէս և զհոգւոյն մասինն զիւր պատշաճ զառաքինութիւնսն, որք զհոգին պահեն կենդանի, և զի մի կրեսցէ հոգի զմահ: [Ի]սկ բողոքել հոգւոյն առ մի[տս] յերիս ժամանակս լինի:

Նախ՝ յորժամ զղջացեալ երբէք [խոցո]|**59բ**|տեն ի միտս, յիշատակելով զվատթար գնացս և զհեղգութիւնս անուղղայս, որով ժամանակն ծախեցաք:

Երկրորդ՝ յորժամ առանց ջանալոյ ընդ արտասուսն ցնդիմք, այս է զղջական բանս ի սրբոց, և նա հանէ զարտասուսն առանց կամաց մարդոյն:

Երրորդ՝ յորժամ նեղանամք յաշխարհէ, ատեմք զմեղս և կամենամք ելանել զերծանել ի սմանէ: Եւ այս ամենայն ի թախանձանաց հոգւոյն: Իսկ ցանկութիւն մեղաց ընդ նմա կապեալ է, և ոչ տայ թոյլ առ ժամայն մերկանալ զչարն, այլ միշտ խաբէ, թէ յառաջիկայ ժամանակն բարի առնես, այժմ ժամանակ չէ: Եւ այսպիսի չար յուսով բազումք են կորեալ, յանկարծակի գալ ի վերայ լու-

---

[1] Ե չիք *որպէս ասէ Դաւիթ. «Տէր հան ի բանտէ զանձն իմ»*:

[2] Օ չիք *Քննեսցուք և վեցերորդն գլուխն... թէ զի՞նչ է դատաստան, զոր արար միտքն*:

ծումն կենաց, անպատրաստ և դատարկ ի բարեաց գործոց գտեալ, մտեալ ի մշտնջենաւոր կապանսն, վասն որոյ ոմանք, որք ունին խղճմտաք, փոքր մի ասէ միտքն, թէ. «**ՅԱստուծոյ ոչ երկնչիմ, [եւ ի] մարդկանէ ոչ ամաչեմ, գոնեա՝ վասն աշխատ առնելոյն [զիս այրուոյն], որ[որից նմա] դատ**» *(Ղուկ. ԺԸ 4–5)*։ Եւ արդ՝ երեք իրք տայ ասել զայս։

Նախ՝ որ ասէ մարդն, թէ լինի յԱստուծոյ իբր մի՛ տանջանք գայ ի վերայ իմ, վասն այս ամբարշտութեանս դառնամ։

Երկրորդ՝ թէ երկնչի ի գազանաց կամ ի բռնաւորաց չարեաց կամ ի ճանապարհէ, և կամ յայլ իրաց, և ասէ՝ դառնամ։

Երրորդ՝ թէ խղճայ հոգւոյն և նեղանայ ի նորին թախանձանացն, ասէ՝ բաւական է դառնամ։ Իսկ զայս օրինակ Տէրն վասն հաւատացելոցն ետ, որք ի նեղութիւնս և աղաղակեն առ Աստուած, եթէ իցէ ոք տարակոյս վասն այսմ, թէ. «**Լոէ Աստուած ազատչանայ ծառայից իւրոց**» *(Համբ. Բ Մնայ. Զ 19)*, կամ «**Վրէժխնդիրն լինի նոցա**» *(Համբ. Սաղմ. ՂԸ 8)*,- ասէ Տէր, զի զանմարդի և զվայրենամիտ դատաւորն բազում մաղթանօքն հաւանեցոյց դառնալ յիրաւունս, քանի ևս Աստուած, որ ամենառատն է, նա զի և յամենայնի պատրաստէ ի տալն, այլ այս միայն, որ զարժանն խնդրիցեմք ի նմանէ, որ մեզ աւգտակար իցէ, և նմա տալն՝ պատշաճ։

Եւ արդ՝ սկիզբն բանին յայն եդ, թէ. «**Պարտ է սպէպ յաղօթս կալ եւ ոչ յանձրանալ**» *(Համբ. Ղուկ. ԺԸ 1)*, և թէ՝ չէ՛ք հաւատալ, թէ առնոյք զխնդրուածն, օրինակ ձեզ դատաւորն անիրաւութեան, որ բազում խնդրելով էառ։ Ապա այս միայն է ի նմա տալն և վրէժխնդիր լինիլն, զի երկայնամիտ լինի մեզ, իսկ մեզ կարճամիտ լինելն չէ աւրէն։

Դարձեալ՝ որպէս այրոյ հոգւոյն ոսոխ զմարմին իւր աւրինակ ետ, նոյնպէս սատանայ բոլոր մարդկութեանս թշնամի է, իսկ Աստուած՝ վրէժխնդիր, զի զինչ իրաւք նեղէ զմեզ, Աստուած ամենայնի վրէժ հատուցանէ նմա[1]։

---

[1] G չիք *իսկ մեզ կարճամիտ լինելն չէ աւրէն... Ասպուած ամենայնի վրէժ հատուցանէ նմա։*

Դարձեալ՝ չարք ի մարդկանէ թշնամի են հաւատացելոցն և նեղեն զտնանկս և զաղքատսն, |60ա| զապրանքն տանին և թալանեն և զայլն ամենայն, սակայն չէ պարտ զրկելոցն զԱստուած ի վրէժխնդրութիւն կոչել, զի Աստուած զիւր դատաստանն դատէ և ոչ թողու խուն մի մինչև հաւատացեալ[1] զամենայն: Եւ զայս յետակայ բանիւն ուսաք, որ ասաց պնդութեամբ, թէ. «Այո՛, ասեմ ձեզ, ճշմարտութեամբ առնէ վրէժխնդրութիւն» *(հմմտ. ԺԸ 8)*: Եւ զայս վասն այնր կրկնեաց, զի են մարդիկ, որ ոչ համբերեն երկայնամտութեան տանջանացն, վասն որոյ յուսադրէ զմեզ Աստուած, թէ ստուգիւ առնէ վրէժխնդրութիւն:

Արդ՝ թէպէտ մասնաւորաբար աստ տայ հատուցումն, սակայն կատարեալն ի հանդերձեալն իւրաքանչիւրոցն պահի անվաղջան տանջանքն, բայց զայս յուսադրութիւնս, ո՛վ եղբարք, մի՛ մոռացուք, զի Աստուած է մեր ապաւէն, և թէ ոք նեղէ զմեզ կեղեքելով զկեանսն, այլ մեք մի՛ տրտմեսցուք վասն մարմնաւոր իրաց զրկելոյն, զի որպէս լուաք ի Տեառնէ վրէժս առնու ի նոցանէ Աստուած, թէպէտ յայսմ ժամանակի պակասեալ է հաւատք ի մարդկանէ, զի ոչ հաւատան Աստուածաշունչ Գրոցն, այլ՝ զոր ինքեանք ի միտս բերեն և այնմ հաւանին: Եւ զոր մարմնոյ աչօք տեսանեն, նոցին և ցանկան, որոց ոչ է մեզ փութալ ուղիղ քրիստոնէիցս: Այլ կալ ըստ հրամանաւ Տեառն մերոյ, մանաւանդ ո՛չ առնել չար մարդոյ, զի մի՛ և նա բողոքեսցէ և վրէժխնդիր երևեսցի մեզ Աստուած, և տանջանացն պատահիցիմք, այլ՝ ուղղելով զվարս մեր ճշմարտութեամբ, զի պատրաստեալ պսակացն սրբոցն հասցուք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որով և ընդ որում Հօր, միանգամ [վայել է փառք յաւիտեանս. ամէն]:

---

[1] E, G *հաւատացեալ* **փխ**. *հատուցէ*:

## ՏԱՄՆԵԻՒՆՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«**Աւրէ երկու ելին ի պաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի եւ միւսն՝ մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի, եւ զայս առանձին աղաւթս մատուցանէր. Աստուած իմ՝ գոհանամ զքեզ. զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ, պայծառակուզս՝ եւ զանիրաւս՝ եւ զշուշան, կամ իբրեւ զայս մաքսաւոր**» *(Ղուկ. ԺԸ 10-11)*։

Գիտել արժան է, զի ժամ աղաւթիցն, որ կարգեալ են մեզ, ոչ ի նորումս միայն է, այլև ի հնումն կարգաւորեալ գոյր և օրէնս եդեալ, ըստ այնմ. «**Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ Տէր**» *(հմմտ. Սաղմ. ՃԺԸ 62)*, և թէ. «**Ի գիշերի համբ[ուրէք զձեռս ձեր ի սրբութիւն, եւ աւրհնեցէք զՏէր]**» *(Սաղմ. ՃԼԳ 2)*, և թէ. «**Ընդ առաւօտս կանխեցիս յանդ[իման]**» *(հմմտ. Սաղմ. Ե 5, ԿԲ 7)*, և թէ. «**Եւ առ Աստուած կարդասցի եւ լու[սաւ ինչ] յերեկ[ոյս], ի վաղ[որդայն], ի հասարակ աւուրն**» *(Սաղմ. ԾԴ 17-18)*։

Եւ այլ ևս բազումս զորս գտանեմք ի Սուրբ Գրոց, մանաւանդ, թեև առաքելոցն իսկ կարգեաց մերս եկեղեցւոյ կարգաւորութիւնք, զորս ուսանիմք յառաջիկայսդ ի գիրս գործոց, որում ոչ է արժան հեղգալ և ծուլանալ ի ժամուն յայնմիկ, և ոչ միայն յայնմ ժամու, զի Տէրն ասէ. «**Յամենայն ժամ յաղօթս արթուցէք**» *(Ղուկ. ԻԼ 36)*։ Իսկ թէ ոչ գոյ մեզ յամենայն ժամ հասանել յայնմ գործոյ, զի զբաղիմք ի մարմնաւոր պիտոյից վաստակ, գոնեա |60բ| ի սահմանեալ ժամն պատրաստ լիցուք, զի թէ ի հնումն մաքսաւորին, որին արժան էր աղաւթել, ապա և մեզ, որ շնորհօքն Քրիստոսի արդարանամք, վասն որոյ ի մէջ բերէ աստանաւր Տէրն, առակաւոր բանիւք զմեզ ուսուցանելով, իբր յորդորելով և աւրինակ եդեալ, թէ որպէս կացցուք յաղօթս՝ ասէ. «**Աւրէ երկու ելին ի պաճարն [կալ յաղօթս]**» *(Ղուկ. ԺԸ 10)*։

Նախ՝ տեսցուք, թէ վասն է՞ր ասաց զառակս զայս: Այն է, զոր Աւետարանաւն յայտնէ, թէ վասն այնոցիկ, որք հպարտացեալ էին և զինքեանս արդարս կարծէին և զայլս մեղաւորս, վասն որոյ ասէ զառակս:

Բայց տեսցուք, թէ զի՞նչ է առաւելութիւն հպարտութեան, քան զամենայն մեղաց: Արդ՝ հպարտութիւնն մեկին է, և ոչ ունի ճիւղս կամ դստերս, և մի է յէ. (7)անց մահու չափ մեղաց և առաջին ամենեցուն: Եւ այս է սորա առաւելութիւնն, զի բազում վնասս գործեն զմեզ:

Նախ՝ զի ի բարիսն, որ ի մեզ իցէ, արտաքս հանեն, զոր օրինակ, եկեալ խաւարն հանէ զլոյսն, այսպէս և ի հանդիպիլ հպարտութեանն ելանեն ամենայն բարութիւք մեր:

Երկրորդ՝ զի որք զհպարտութիւն կրեն, զվատթար մեղսն ամենևին իմանալ ոչ տայ, վասն իւր առաւել չարութեանն:

Երրորդ՝ զի որք հպարտք են, ոչ ունին հանգիստ մտաց և մարմնոյ, քանզի որքան մարդ խոնարհ է, այնքան հանգիստ է:

Չորրորդ՝ զի ամենայն տեսակ ախտիցն իր մի ցուցանեն մեզ, թէ գողութիւն զինչսն, թէ պոռնկութիւն զհեշտութիւնն, և ագահութիւն, և որկրամոլութիւն զկերակուրն: Իսկ հպարտութեանն ոչ ինչ գոյ ամենևին:

Հինգերորդ՝ զի մարմնական ախտն և այլն առ այնոսիկ լինի, որք հեղգ են և թոյլ և տարտամ և գիջասէր: Իսկ հպարտութեանն առ առաքինիքն, և որք փոյթ սրբութեամբ վարին, անդ առ նոսա զօրանայ:

Վեցերորդ՝ զի յորժամ ոք առ պոռնիկսն երթայ, գիտէ ճշմարտութեամբ, թէ վրիպեցաւ ի ճշմարտութենէն: Իսկ ամ*պ*արտաւանն ո՛չ իմանայ զմեղս, զոր գործէ հպարտութեամբ, այլ՝ գիտէ ևս, թէ առաքինութիւն է:

Եւթներորդ՝ զի փութով կորնչի ամբարտաւանն, ըստ այնմ. «Տեսի զամպարիշտն վերացեալ բարձրացեալ իսն զմ[այրս Լիբանանու]։ Անցի, եւ ահա ոչ էր, խնդ[րեցի՝ եւ ոչ գտաւ տեղի նորա]» *(Սաղմ. ԼԶ 35–36)*:

Ութերորդ՝ զի ամենայն մեղք մի ժամ լինի մեզ, իսկ հպարտութիւնն՝ ոչ երբեք անկանի ի մտաց:

Իններորդ՝ զի յամենայն մեղաց կարող գոյ զերծանիլ, իսկ ի հպարտութենէն՝ ոչ է հնար ամենայնիւ, զոր օրինակ, սատանայէ տեսանել:

Տասներորդ՝ զի ամենայն մեղք ընդ մարդոյ լինի, իսկ հպարտութիւնն յածէ ամբարշտութիւն, ըստ այնմ. «Եդիցս զաթոռն իմ յամպս, եւ եղէց նման բարձրելոյն» *(Հմմտ. Եսայի ԺԴ 14)*, վասն որոյ մեծ է, քան զամենայն մեղս, այսինքն՝ մեծագոյն մեղք և առաւել է կորուսիչ ոգոց, որպէս ցուցաւ: |61ա| Եւ արդ՝ զի մի ոք առանց գիտութեան գոլով ըմբռնեսցի յայսպիսեաց վնասակար ախտից, վասն որոյ Տէրն ասաց զառակս զայս. «Արէ երկու [ելին ի պատճառն կալ յաղօթս]» *(Ղուկ. ԺԸ 10)*։

Արդ՝ տեսցուք, թէ վասն է՞ր անդ ելանէին ամենայն ոք: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի անդ էր սահմանեալ աւրէնքն յաղօթս կալ, ըստ այնմ. «Տունն Իմ տուն աղօթից կոչեսցի» *(Հմմտ. Մատթ. ԻԱ 13)*, որպէս ասէ առ Մովսէս. «Արասցես խորան, զի անդ երթ եւ եցայց ինչ» *(Հմմտ. Ելից ԻԶ 1, ԻԵ 8)*, և Սողոմոնի թէ. «Շինեսցես տուն անուան Իմոյ» *(Հմմտ. Բ Թագ. Է 13, Գ Թագ. Ե 5)*, զոր և յաղօթսն ասէր. «Եթէ ոչ կացցէ յաղօթս ի տանս, զոր շինեցի» *(Հմմտ. Գ. Թագ. Ը 27)*։

Եւ երկրորդ՝ զի ամենայն գոհութիւնք, պարգևք և ընծայք անդ մատուցանէին Աստուծոյ: Իսկ սոքա ելին ի տաճարն, ոչ վասն պատարագ մատուցանելոյ, այլ զպատճառն յաւելու՝ ասելով. «կալ յաղօթս» *(Ղուկ. ԺԸ 10)*։

Իսկ զի՞ ասէ «*յաղօթս ելին*», և ոչ յայլ ինչ ուսուցանէ զմեզ աստանօր, յորժամ առաջի սրբոյ եկեղեցւոյ գալ զաղօթսն խոկալ, և ոչ զայլ ինչ, զի պատճառ գալոյ մեր աղաւթքն է:

Եւ արդ՝ բազում ինչ է, զոր ոչ է պարտ մեզ առնել յեկեղեցւոջ:

Նախ՝ չէ պարտ ի տեղի աղօթիցն զրոյց տալ, զի սատանայ է խօսակից, եթէ ոք զրոյց տայ, զի անդր խօսակից մեր Աստուած է, ըստ սահմանի աղօթիցն, զի զինչ է աղօթքն, եթէ ոչ խօսակցութիւն առ Աստուած, ապա և զնա թողեալ, և ընդ[1] այլում զրուցել ոչ է արժան:

Երկրորդ՝ ոչ է պարտ ի տեղի աղօթից յետս դառնալ և հայել ի կին մարդ կամ յայլս, զի միայն, որ ասաց Տէրն, զարատն սատանայ բերցէ ի մեզ հակառակ փրկութեան աղօթիցն:

Երրորդ՝ ոչ է պարտ ի ձայնս քաղցրանուագս նայել, այլ՝ ի զղջական բանսն, որ ի մէջ քաղցրանուագացն երգողին, զի երգողն և առաւել պարտի պատրաստել, զի մի փքեսցի ի քաղցրութիւն ձայնին և ձրի աշխատի գլուխ նորա, քանզի ոչ ունի վարձս, ըստ այնմ. «**Զի է ձեր բողոքելն եւ ինձ ոչ լսել**» *(հմմտ. Եսայի ԾԸ 4)*[2]:

Չորրորդ՝ ոչ է պարտ ծիծաղիլ, այլ՝ լա՛լ, զի այն լալոյ տեղիք է և արտասուելոյ, զոր Սողոմոն խրատէ. «**Լաւ է գնալ ի տուն սգոյ, քան ուրախութեան**» *(հմմտ. Ժող. 3)*[3], զի ասէ Տէրն. «**Վա՛յ ձեզ, որ ծիծաղիք**» *(Ղուկ. Զ 25)*, քանզի այնպէս կարծեն, թէ դժոխք ոչ պատէն զնոսա:

---

[1] G չիք *ըստ սահմանի աղօթիցն, զի զինչ է աղօթքն, եթէ ոչ խօսակցութիւն առ Աստուած, ապա և զնա թողեալ, և ընդ*: E *զի զինչ է աղօթքն, եթէ ոչ խօսակցութիւն առ Աստուած* **փխ**. *զի անդ խօսակից մեր Աստուած է*:

[2] G չիք **ըստ այնմ**. *«Զի է ձեր բողոքելն և ինձ ոչ լսել (հմմտ. Եսայի ԾԸ 4)*: E *...որ ի մէջ քաղցրանուագացն երգողին, զի երգողն և առաւել պարտի պատրասստել, զի մի փքեսցի ի քաղցրութիւն ձայնին և ձրի աշխատի գլուխ նորա, քանզի ոչ ունի վարձս, ըստ այնմ. «Զի է ձեր բողոքելն և ինձ ոչ լսել»* **փխ**. *մանաւանդ երգողին, զի ի յիւր ձայնի ճոխութենէն փքանայ, և ձրի աշխատի գլուխ նորա, քանզի ոչ ունի վարձս*:

[3] G չիք *զոր Սողոմոն խրատէ. «Լաւ է գնալ ի տուն սգոյ, քան ուրախութեան (հմմտ. Ժող. 3)*:

Հինգերորդ՝ ոչ է պարտ խարբալել[1] զմիտս անցեալ բանիւքն, զի աղօթքն խօսակցութիւն է առ Աստուած, որպէս և ասացաւ, զի թէ դու, որ աղօթես և խնդրողդ ես, ո՛չ իմանաս զի՞նչ խօսիս, զիա՞րդ պիտի առնուս փոխարէնն կամ պարգևք:

Վեցերորդ՝ ոչ է պարտ ննջել ի տեղի աղօթիցն, այլ՝ արթուն կալ, ըստ այնմ. «**Արթուն կացէ՛ք, զի ոչ գիտէք զի [երբ պէր պանն գայցէ]**» *(Մատթ. ԺԴ 35)*, զի թէ անդ ննջես, զի՞նչ զանազանութիւն ունի քունն, որ ի տունն, և թէ քնոյ համար գաս, յոյժ **|61բ|** բարի է ոչ գալն:

Եւթներորդ՝ ոչ է պարտ զառանձնականն աղաւթսն աղաղակելով առնել, այլ ի սրտին գոչել՝ ըստ Մովսիսի, զի եդ զծունկսն դէմ երեսացն և ի սրտէն գոչեաց, վասն որոյ ասէր Տէր. «**Զի՞ գոչես առ Ի՛ս**» *(Եղից ԺԴ 15)*: Նմանապէս և Տէրն մեր ուսոյց. «**Մուտ ի սենեակ հոգւոյդ, եւ փակեա զդրուանս ոգայարանացդ եւ Հօրն քումն ի ծածուկ առ Աստուծոյ, եւ Նա հատուցցէ քեզ յայտնապէս**» *(Հմմտ. Մատթ. Զ 6)*:

Ութերորդ՝ ոչ է պարտ զբան Աստուածաշունչ գրոց առանց հասկանալոյ թողուլ, զի մի՛ զուղիղն թիւր իմասցիս, և լինի քեզ գայթակղութեան պատճառ: Եւ զի նա է կերակուր հոգւոց մերոց, պարտ է ծասկել, զի համ առցուք:

Իններորդ՝ ոչ է պարտ փութալ, թէ երբ ելանիցեմք ի ժամատեղեացս, այլ՝ որքան խնդրես, այնքան առնուս, և զի Տէրն հանէր զգիշէր ի գլուխ յաղօթս, ըստ այնմ, թէ. «**Որ հայցէ՝ գտանէ**» *(Մատթ. Է 8)*:

Տասներորդ՝ ոչ է պարտ յորժամ ի յաղաւթսն կալ ի մտի խոստանալ, թէ յորժամ ելանեմք ի յեկեղեցւոյս, զայն չար առնեմք, կամ զայն, այլ՝ զայն խոստանալ, թէ այլ ոչ գործեմ, զոր գործեցի, վասն որոյ ասէ Տէրն. «**Արդ երկու ելին ի տաճարն կալ յաղօթս**» *(Ղուկ. ԺԸ 10)*:

---

[1] *Մաղել, փոխ. իմաստով՝ փորձության ենթարկել, խախտել, խռովվել: Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզվի, հտ. 1, էջ 930:*

Իսկ արդ՝ որք աղօթեն, յերկուս բաժանէ Տէրն՝ մին՝ փարիսեցի, և միւսն՝ մաքսաւոր, այսինքն՝ ոմանք լաւագոյնք, և ոմանք՝ չարագոյնք: Զորոյ զգերագունին պատիւն տեսցուք, և չարագունին՝ զանօրէնութիւնն: Արդ, ասէ. «**փարիսեցին կայր մեկուսի**» *(Ղուկ. ԺԸ 11)*, զի թէպէտ ոք առանձին աղօթէ, սակայն Աստուած գիտէ զսիրտս նոցա, վասն որոյ ասէ. «**Զայս առանձին աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զՔէն**» *(Ղուկ. ԺԸ 11)*:

Արդ՝ փարիսեցւոյն ամբարտաւանութիւնն յայտնի ի բազում իրաց:

Նախ՝ զի հպարտութեամբ զառանձին տեղն կալաւ և ո՛չ խոնարհութեամբ:

Երկրորդ՝ զի զԱստուածն ամենեցուն «իմ» ասաց, վասն որոյ Տէրն ուսոյց ասել. «**Հայր մեր, որ յերկինս**» *(Մատթ. Զ 9)*:

Երրորդ՝ զի ասաց՝ «**գոհանամ զՔէն**», և այս բարւոք է, բայց նա, ոչ այսպիսի խորհրդով, այլ՝ թէ իբր ամենևին ո՛չ եմ յանցաւոր, և զներքոյ անկեալ կարեաց բնութիւնս անկարիս եցոյց:

Չորրորդ՝ զի մարգարէն ասէ. «**Ես որդն եմ եւ ոչ եմ մարդ, նախատինք [մարդկան] եւ արհ[ամարհանք ժողովրդոյ]**» *(Սաղմ. ԻԲ 7)*, իսկ սա ասէ. «**Ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ**» *(Ղուկ. ԺԸ 11)*:

Հինգերորդ՝ զի Յոբ ասէ. «**Եթէ միաւրեայ իսէ կեանք մարդոյ ի վերայ երկրի, ո՛չ է առանց մեղաց**» *(Հմմտ. Յոբ ԺԴ 5)*, իսկ սա ամենևին անմեղ ցուցանէ զինքն՝ ասելով. «*ոչ եմ*», իբրև թէ ոչ գոյ առ իս մեղք:

Վեցերորդ՝ զի զԱստուած զանգործսն գիտէ, ըստ մարգարէին *(Հմմտ. Սաղմ. ՃԼԸ 16)*, իսկ սա կամեցաւ զԱստուծոյ կանխագիտութիւնն կորուսանել, զինքն արդար երևեցուցանելով:

Եւթներորդ՝ զի առակախօսն ասէ. «**Մի՛ գովեսցէ զէնս էս բերան, այլ ընկերին**» *(Հմմտ. Առակ. ԻԷ 2)*, իսկ սա՝ զինքն գովէ, թէ. «**Տամ պատանորդս յամենայն ապացուածոյ իմոց**» *(Ղուկ. ԺԸ 12)*:

Ութերորդ՝ զի զամենեսան, որք զպահքն պահէին, չար համարեցաւ, և զինքն միայն ար|62ա|դար՝ ասելով. «*պահեմ*», իբր թէ նոքա չեն իմ ընկեր:

Իններորդ՝ զի ասէ իմաստունն. *«Ինքեանս գիտա[կք ե]ն իմաստունք են»,* իսկ սա զինքն մոռացաւ և զայլոց գովութիւնն իւրն համարեցաւ:

Տասներորդ՝ առաւել չարութիւն սորա այս է, զի մաքսաւորն արհամարհեաց՝ ասելով. «**Իբրեւ զայս մաքսաւորս**» *(Ղուկ. ԺԸ 11)*: Զի թէպէտ ամբարտաւանութեան գործ է հասարակաբար ձգել զմիտս, այլ՝ այն առաւել է, զի առ մինն և զմերձակայնն, որ առ ոտն եհար, որպէս փարիսեցին, որ ոչ խնայեաց, որ անկեալ էր առաջի Աստուծոյ, և խնդրէր զթողութիւն, այլև զնա ևս անգոսնեաց:

Արդ՝ այսքան միայն ասացան ի նորայն չարութենէ, իսկ զայլ ծածուկսն Աստուած գիտէ:

Ընդ դիմակ նմին մաքսաւորին բարութիւնն բազում երևի:

Նախ՝ զի որպէս փարիսեցին հպարտութեամբ կորեաւ, ըստ նմանութեան բնութեանս մեր, որ զառաջինն կորեաւ հպարտութեամբ, իսկ մաքսաւորն խոնարհութեամբ գտաւ բարձրացեալ, ըստ այնմ. «**Եւ յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս [եւ ի խոնարհս]**» *(հմմտ. Եսայի ԿԶ 2),* և. «**Որ բարձրացուցանէ զանձն [իւր]՝ խոնարհեսցի**» *(Մաղթ. ԻԳ 12)*:

Երկրորդ՝ զի որպէս փար[իսեցին] մեծ համարեցաւ զինքն, քան զամենայն, իսկ սա, քան զամենայն վատ և ցած համարեցաւ զինքն, քան զամենայն, ըստ ասելոյն. «**չկամէր**» *(գԵ՛ս ԺԸ 4),* այսինքն՝ ոչ մեծացոյց զինքն[1]:

[1] G չիf *այսինքն՝ ոչ մեծացոյց զինքն*:

Երրորդ՝ զի այնքան անարժան համարեցաւ զինքն, մինչ զի ոչ կամէր զաչսն յերկինս համբառնալ[1], ըստ այնմ. «Զեմ արժանի հայել եւ պեսանել [աչքարչրութիւնս երկնից]»[2]:

Չորրորդ՝ զի լայր աղաղակելով, որ և այս զկատարեալ զղջումն ցուցանէ:

Հինգերորդ՝ զի կոծէր զկուրծսն *(տե՛ս ԺԸ 13)*, և այս զփափագ սրտին նշանակէր:

Վեցերորդ՝ զի ոչ գովէր զինքն, որպէս փարիսեցին:

Եւթներորդ՝ զի ասէր. «Աստուած քաւեա ինձ զմեղաւորս» *(Ղուկ. ԺԸ 13)*, այսինքն՝ մի՛ արա զիս, որ երկուացեալս եմ մեղօք, և կամ սրբեա՛ զիս ի յանցանացս:

Ութերորդ՝ զի և ոչ մի զարդարութիւն իւր յիշեաց, որպէս փարիսեցին, որ և զայս առնել պարտ է, ոչ ասել զոր գործեն զարդարութիւն կամ զարդիւնս:

Իններորդ՝ զի և ոչ զփարիսեցին ի միտ էած և ոչ չար ևս խօսեցաւ զնմանէ:

Տասներորդ՝ զի խոստովան եղև զմեղս իւր, զի որք ոչ խոստովանին կորուսին, զոր ասեն՝ ըստ այնըմ. «Ասա դու նախ զանօրէնութիւնս քո, զի արդարասցիս» *(Եսայի ԽՄ 26)*:

Արդ՝ զայս օրինակ ետ մեզ Տէրն, զի յորժամ յեկեղեցին գնայցեմք, զամենայն ինչ ի բաց ընկենուցումք, և որպէս յառաջագոյն ասացաք զայն առնել, քանզի ի մեծ ծփանաց ալեկոծութեան եմք, պարտ է ձեռն ձգել առ նաւապետն, աւգնականութիւն խնդրելով ի նմանէ, թերևս յեզր ելանիցեմք ի մէջ խռովութեան մեղաց ծովուս, այլև ոչ անհոգ լինել, զի մի՛ հեղձուսցէ զմեզ յուսահատութեան ալիքն: Եւ արդ՝ մարդ ինքն ինքեան ոչ է բաւական, որպէս ոք ի խորխորատ անկեալ կամ ի ծով, ինքեամբ ոչ կարէ ելանել, ապա

---

[1] G չhf *մինչ զի ոչ կամէր զաչսն յերկինս համբառնալ*:

[2] *Աղօթք Մանասէի թագավորի, տե՛ս «Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1860, էջ 1215*:

թէ ոք արտաքուստ մերձաւորի |62բ| նմա և ձեռն ձգեալ հանէ, այսպէս թէ ի նա ապաստան կացցեմք, որ կարողն է խոնարհել[1] և բարձրացուցանել զմեզ: Եւ զի ըստ չափու պարտ է ունել զանձինս մեր խոնարհ և հնազանդ, զի ի նմանէ փառաւորիցիմք, իսկ որք փառասիրութեամբ զանձնս յառաջ մատուցեալ ի փառսն և ոչ յԱստուած վստահանան առնուլ զփառս և զգովութիւնս, վասն որոյ նա, որ ծածկագէտն է զիւրն յինքն ամփոփէ, յայնժամ ծանակ լինին այնոքիկ տկարութեամբք իւրանց, զի ոչ զաւրէն առ խուն մի բարկութեանն Աստուծոյ: Եւ զի՞նչ է այս, զի աստ գողանամք փոքր մի ժամանակ զմեզ առաջի մարդկան սուրբ[2] երևեցուցանել և փարթամ, արդար: Եւ զայն մոռանամք, թէ որ բարձր է առաջի մարդկան, պեղծ է առաջի Աստուծոյ, վասն որոյ աղաչեմ պատրաստ լինել, զի այն է աղօթից դիտաւորութիւնն՝ գնալ աղօթել, զի փառաւորեսցի յԱստուծոյ և արդարասցին:

Իսկ զի՞նչ աւգուտ է անմեղ գնալ ի ժամատեղն և մեղօք ի տուն գալ, Աստուծոյ բաժին գնալ և սատանայի՝ դառնալ[3], որպէս փարիս[եցին]: Եւ այս յոլով ի մեր աւուրքս, քանզի եմք գերի եղեալ սատանայի, զի այնոքիկ որք գիտունք են, թէ Բ. (2) պատահի ի մին եկեղեցի, նախանձու պաշտեն՝ զմիմեամբք ելանելով: Ես լավ պաշտեմ և իմ ձայնս քաղցր է և արուեստիւ ի յայս անուն վարդապետէ ուսեալ և զոր, ինչ զգիշերն ամենայն սրբութեամբ կեցեալ, անդ անօր նախանձիւ բանսարկու լինին և ելանեն արտաքս: Իսկ որք տգետքն են, զայն ինչ լուեալ, թէ և յերեկորեայ զբանս աստուածային իցեն լուեալ, ոչ ինչ արձանանայ ի նոցին, միտս բայց աղաղակ պաշտաւնէից և նախանձն իբրև զբևեռս ի սիրտս նոցա հարեալ աղջամղջին սրտիւ ելանեն յեկեղեցւոյն գաղթակղեալք, և ո՛չ իմացան, թէ յինչ պետս գնացին յեկեղեցին և կամ զինչ առին, որ և այս աներևոյթաբար կորուստ հասարակաց է, և ոչ իմանան,

[1] G չիf *խոնարհել*:
[2] G չիf *սուրբ*:
[3] G չիf *դառնալ*:

զի թէ մի բան փարիսեցւոյն, որ ասաց. *«պահեմ» (Ղուկ. ԺԸ 12)*, և ուղիղ էր կորոյս զնորին արդարութիւնն, քանի ևս առաւել, որ անիծիւք անարգեն զընկերն և նախատինս բարուրանաց դնեն, և այն, զի ոչ ելանէ, խէթն այն ի մտաց երկոցունցն, և յետ այնորիկ անզղջաբար և առանց մեղայի ձեռնարկել ի սուրբ խորհուրդն, որ բերէ զանբերելի պատուհասն յԱստուծոյ: Վասն որոյ աղաչեմ մանկունք եկեղեցւոյ ուսումնակից Լիմ, մի՛ զծածուկ նետս բանսարկութիւնն ի սիրտս ձեր հարկանիջիք, այլ խոնարհութեամբ իւրաքանչիւր ոք, զոր շնորհ ունի ի պէտս Աստուծոյ ծախիցէ, իսկ եթէ ծնանի ոխ և բարկութիւն ի քոյդ ասելոյ, լռեա՛ ի բարկութենէ և հանգիր, զի անդ ի լռութիւն քո հաճի Աստուած և ոչ ի պատաւնն, զի մի տկարք եղբայրն քո գթիցի[1], բայց ակն ունիմք Փրկչին, զի մի՛ տացէ գերի գերողին զփրկեալքս պատուական արեամբն **|63ա|** իւրով, զի գինք արեան նորա եմք, և ազատեալք անարատ ձեռացն, յորում վայել է փառք յաւ[իտեանս. ամէն]:

***Հարցումն.*** Վասն է՞ր մտեալ շրջէր ընդ յերիքով:

***Պատասխան.*** Վասն զի Երիքով նմանի դժոխոց, իսկ Տէրն մեր ըստ նմանութեան յԵսուայ, զոր գործեաց առ Երիքով:

Նախ՝ որպէս Յեսու տապանակաւն դարձոյց զՅորդանան, և Տէրն մեր խաչիւ զմահ, յորդեալ գետաւրէն դարձոյց ի սկիզբն իւր սատանայ:

Երկրորդ՝ զի որպէս Յեսու զժողովուրդս անցոյց ընդ Յորդանան, և Տէր մեր զծով աշխարհիս պատառեաց և անցոյց զմեզ յերկիրն աւետեաց:

Երրորդ՝ զի որպէս Յեսու մերձեցաւ տապանակովն յերիքով, և Տէր մեր խաչիւն էջ ի դժոխս:

Չորրորդ՝ զի Յեսու յեթնապատիկ շրջեցաւ զԵրիքովաւ, և Տէրն եթն զօրութեամբ հոգւոյն քակեաց զամուրս բանսարկուին:

---

[1] E, G չիք *զի այնոքիկ որք գիտունք են, թէ Բ. (2) պատահի ի մին եկեղեցի... զի մի տկարք եղբայրն քո գթիցի*:

Հինգերորդ՝ զի որպէս Յեսու էառ զԵրիքով ոչ պատերազմաւ, այլ՝ ձայնիւ հնչմամբ, այսպէս և Տէրն մեր կապեաց զսատանայ և սպան զմահ ձայնիւ աստուածային, ըստ այնմ. «Ո՞ւր է, մահ, յաղ-թութիւնդ էս, [ո՞ւր են դժոխք, խայթոցք էս]» *(հմմտ. Ովսէ. ԺԳ 14, հմմտ. Ա Կոր. ԺԵ 55)։*

Վեցերորդ՝ զի Յեսու զպոռնիկ կինն ապրեցոյց զՐահաբ, և Տէրն մեր զպոռնիկ ազգս հեթանոսաց կենդանացոյց հաւատով:

Եւթներորդ՝ զի Յեսու յօրէնս եդ ոչ առնուլ յաւարէ անտի Երի-քով ի յանիծիցն[1], այսպէս և Տէրն մեր օրէն եդ՝ տալ զհաշիւն ընդ ոսոխին յայսմ ճանապարհի:

Ութերորդ՝ զի անէծ Յեսու զշինողն Երիքովի, նմանապէս և անիծեալ են որ շինեն մեղօք զդժոխսն:

Իններորդ՝ զի առ Յեսուաւ գողն Աքար սպանաւ, և առ Տեառն մերոյ Յուդաս գող խեղդեցաւ:

Տասներորդ՝ զի Յեսու կոյս զամենայն թագաւորսն հնազան-դեցոյց ի ծառայութիւն ժողովրդեանն, և Տէր մեր ետ մեզ զօրու-թիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամոյն, վասն որոյ մտեալ շրջէր յԵրիքով, զի զայս մեզ բացայայտեսցէ:

***Հարցումն.*** Զի՞նչ ուսանիմք ի մտանել Տեառն առ Զաքէոս[2] *(տե՛ս Ղուկ. ԺԹ 1–10)։*

***Պատասխան.*** Բազում ինչ, զի Զակքէոս աւրինակ էր մարդ-կային բնութեանս, ըստ բազում յեղանակի:

Նախ՝ զի որպէս նա էր մաքսապետ, այսպէս և ամենայն ազգ մեծացեալ էին մեղօք և շահեցուցեալ ի քսակն Բելիարայ:

Երկրորդ՝ զի որպէս Զակքէոս ցանկայր տեսանել զՅիսուս և ոչ կարէր ի բազմութենէն, նմանապէս և մարդկային ազգ կա-մեցան տեսանել զստոյգ գիտութիւնն և ոչ կարէին վասն բազում մեղացն:

---

[1] G չիք *Երիքով ի յանիծիցն*:

[2] *Այստեղ և հաջորդիւ որոշ տեղեր՝ Զաքէոս* փխ. *Զակքէոսի*:

Երրորդ՝ զի որպէս Զակէոս կարճ էր հասակաւն, վասն որոյ ոչ կարաց տեսանել զՏէրն, այսպէս և հեթանոսք սուտ և փոքր գիտութեամբն ոչ կարէին հասանել գիտութեան հաւատացն Քրիստոսի:

Չորրորդ՝ զի որպէս Զաքէոս ընթացաւ, ել ի մոլաթզենին, զի ընդ անցանելն Յիսուսի տեսցէ զՆա, այսպէս՝ բնութիւն մարդկան խափ|63բ|անեալի իմաստութեամբ բարձրացան քննել զարարածս, և գտանել զԱրարիչն:

Հինգերորդ՝ զի ընդ այն անցանէր Յիսուս, այսպէս և Տէրն մեր եկն յաշխարհ և էանց ընդ ճանապարհ, որ կռապաշտութիւնն էր:

Վեցերորդ՝ զի որպէս Տէրն ասէ առ Զակքէ. «**Փութացայ, էջ այսր**», այսպէս և Տէր մեր իջուցանէ զիեթանոսս ի բարձրացեալ իմաստութենէն մարդկային, որով քննէին տեսանել[1] զՆա, և եցոյց, թէ քննութեամբ ոչ տեսանի Աստուած, այլ՝ հաւատով ճանաչի:

Եւթներորդ՝ զի ասէ Տէրն Զակքէի՝ «**Այսաւր ի տան քումդ արժան է [ինչ] ագանել**» *(Ղուկ. ԺԹ. 5)*, նմանապէս և Տէրն կամեցաւ ի մեղուցեալ բնութենէս մարմնանալ և էառ:

Ութերորդ՝ զի որպէս Զակքէոս ոչ ունէր ակն, թէ Տէրն իւր գայցէ ի տունն, վասն խղճի մտացն իւրոց, այսպէս մարդկային ազգ, ոչ ունէին յոյս փրկութեան իւրեանց, վասն կարի հեռանալոյն յԱստուծոյ բազմապատիկ մեղօք:

Իններորդ՝ զի որպէս Զաքէոս փութացաւ և ընկալաւ զՏէրն ուրախութեամբ, այսպէս և հեթանոսաց ազգս ուրախութեամբ հաւատացին ի Տէր, և փութանակի սփռեցաւ Աւետարանն ընդ ոլորտս տիեզերաց:

Տասներորդ՝ զի որպէս Տէրն առ մեղաւորն եմուտ լուծանել, որպէս տրտնջէին հրէայքն, այսպէս՝ Տէրն մեր, ի մեղաւորաց ո՛չ գարշի, զի սրբիչ է, և ի խաւարէ ո՛չ զանգիտէ, զի՝ լոյս է, և զմեղս

[1] G չիf *տեսանել:*

ոչ արար և զբազում մեղս վերացոյց: Եւ վասն այնորիկ էջ առ Զակքէոս, զի զմեղաւորքս ժողովեսցէ առ Ինքն: Այսքան առ այս:

Իսկ մտանել առ մաքսապետն Զակքէոս, Դ. (4) իր ցուցանէ:

Նախ՝ զԱւետարանին <փոխիլ> փոխելն ի հրէից անտի առ հեթանոսս:

Երկրորդ՝ զի մարդիկք, որ զդևս զգեցեալ էին, զՔրիստոս զգեցան:

Երրորդ՝ զի որք կոխեալ էին ի սատանայէ մեղաւք, հաւասար հրեշտակաց գտան:

Չորրորդ՝ զի որ սատանայի էին որդիք, որդիք Աստուծոյ եղեն:

Դարձեալ՝ որպէս ի մտանելն ի տունն Զակքէի, ոչ միայն Զակ-[ք]է փրկեցաւ, այլև ամենայն տունն, այսպէս և քարոզ Բանին Ճշմարտութեանն մտեալ ի յաշխարհ, իբր ի մի տուն, և ամենայն հեթանոսք եղեն հաւատովք որդիք Աբրահամու:

## ՔԱՌՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«**Այր մի էր ազնուական, գնաց աշխարհ հեռի առնուլ թագաւորութիւն եւ դառնալ**» *(Հմմտ. Ղուկ. ԺԹ 12)*։

Զի «*այր*»՝ վասն բնութեանս մերոյ ասէ, զոր էառ Բանն Աստուած, իսկ «*ազնուական*»՝ վասն միաւորութեան Բանին։ Եւ արդ՝ զի՞ էր Նա ազնիւ, քան զամենայն գոյքս, ցուցից բազում յեղանակաւ։

Նախ՝ զի Աստուած է բնութեամբ Տէր մեր մարմնով, իսկ այլ ամենայն գոյքս՝ ծառայք և ստեղծուածք։ Եւ այս մի համեմատութիւնս բաւական է ցուցանել զամենայն, բայց յերկարեցից սակաւ մի, վասն համբակացն, վասն զի որպէս կատարեալ Աստուած է Բանն մարմնով, և նոյնն կատարեալ մարդ է։

Երկրորդ՝ զի անապական է մարմնով, ըստ այնմ. «**Մարմին Նորա ոչ եպեսա կապականութիւն**» *(Հմմտ. Գործք Բ 31)*, |64ա| իսկ մարմինս մեր ապականացու և ի հող լուծանելի։

Երրորդ՝ զի մեք միշտ մեղանչեմք, իսկ Նա. «**Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն [ի բերան Նորա]**» *(Ա Պետրոս Բ 22)*։

Չորրորդ՝ զի մեք ոչ մազ մի կարեմք սպիտակեցուցանել, իսկ Նա կարէ և այլ ևս բազում արարածս ստեղծանել։

Հինգերորդ՝ զի մեր կամքս և կարն հակառակ են, զի զոր ինչ կամիմք՝ ոչ կարեմք առնել։ Իսկ Նորայն հաւասար է, զի զոր ինչ կամի՝ և կարէ, և զոր ինչ կարէ՝ և կամի, ըստ այնմ. «**[Զամենայն], զոր ինչ կամեցաւ եւ արար**» *(Սաղմ. ՃԼԴ 6)*։

Վեցերորդ՝ զի մի մասն մարդոյ, այսինքն՝ հոգին կամ մարմին ոչ է առանձնակի կատարեալ մարդ։ Իսկ Նորա Հոգին կամ Մարմին կատարեալ Աստուած է, վասն զի ի Բանն միաւորեալ է անբաժանապէս։

Եւթներորդ՝ զի մեր մարմին ոչ կարէ կենդանացուցանել զհոգիս մեր, իսկ Բանին Աստուծոյ մարմին և արիւնն սրբէ զմեզ յամենայն մեղաց, ասէ առաքեալն. «**Եւ կենդանանէ զՀոգիսն**» *(տե՛ս Ա Յովհ. Ա 7)*։

Ութերորդ՝ զի մարմին մարդոյ ոչ է ճաշակելի մեզ, իսկ Նորայն ճշմարիտ կերակուր է, և արիւնն՝ ըմպելի, որպէս Ինքն ասաց *(տե՛ս Յովհ. Զ 56)*։

Իններորդ՝ զի սոսկ մարդ ոչ կարէ զմեղս թողուլ, իսկ Նա կարէ թողուլ, զի Աստուած է բնութեամբ, որպէս ասաց. «**Թողեալ լիցին քեզ մեղք քո**» *(Ղուկ. Է 48)*, որ է՝ իշխանաբար։

Տասներորդ՝ զի ամենայն ոք, թէ աստ է՝ անդ չէ, և թէ անդ է՝ աստ ոչ է, իսկ Տէրն մեր յերկինս ընդ աջմէ Հօր նստի, և յամենայն յեկեղեցիս պատարագի անծախապէս, այլև բնակի ամենայն սուրբս, որպէս ասէ առաքեալն. «**Փորձ ունիք զՔրիստոս, որ ինեւս ընդ յեզ խօսի**» *(Համբ. Բ Կորնթ. ԺԳ 3)*[1]։

Մետասաներորդ՝ զի արարածքս կարաւտինք ամենայն իրաց, իսկ Նա անկարօտ է բնութեամբ, ըստ այնմ. «**Ոչ միայն ունի զանձամբուրիւն՝ բնակեալն ի լոյս անմատոյց**» *(Ա առ Ա Տիմ. Զ 16)*։

Երկոտասաներորդ՝ զի մեք ցանկամք հրեշտակաց նմանիլ, իսկ Նա ի հրեշտակաց երկրպագութիւն առնու, ի սերովբէից և ի քերովբէից։

Երեքտասաներորդ՝ զի մեք փափոխական եմք և այլայլական բնութեամբ, իսկ Նա անփոփոխ և անեղ ի բնութեամբ։

Չորեքտասաներորդ՝ զի մեք այլ կերպիւ եմք նախքան զյարութիւնն և այլապէս յետ յարութեանն, իսկ Նա մի և նոյն գոլով մարմնովն յառաջ և յետոյ, ըստ որում ասէր. «**Շօշափեցէք եւ պե[ցէք], զի Ես նոյն եմ**» *(Համբ. Ղուկ. ԻԴ 39)*։

---

[1] G չիք *որպէս ասէ առաքեալն. «Փորձ ունիք զՔրիստոս, որ ինևս ընդ ձեզ խօսի» (հմմտ. Բ Կորնթ. ԺԳ 3)*։

Հնգետասաներորդ՝ զի մեք ի դատաստան մտանեմք, իսկ Նա դատէ զմեզ և պատժէ և փառաւորէ, ըստ այնմ. «**Զամենայն դատաստան եպ Որդւոյ Իւրոյ**» *(Յովհ. Ե 22)*։ Է՛ և այլ բազումք, զոր առ ի չձանձրանալոյ, վասն ոչ գրեցի։ Բայց այսքան պատճառ լիցի իմաստութեան ձեր, զի իմացիք ի սկզբանէ յղացման նորին և ի ծնունդն և ի գործն և յետ յարութեան ուտելն և հանդրձիւ երևիլն[1], որով ցուցեալ զնա ազնիւ և գերակատար, վասն որոյ ասէ. «**Այր մի ապնուական**» *(Հմմտ. ԺԹ 12)*։

Իսկ զի՞ ասէ. «**Գնաց աշխարհ հեռի**» *(Ղուկ. ԺԹ 12)*։ Այսինքն՝ ի ներքին կողմն վարագուրին, այսինքն՝ «**Յերկինս լուսեղէն յանմատոյց բնակարանս**» *(տե՛ս Առ Եբր. Զ 19)*,- զոր Պաւղոս ասէ։

**|64բ|** Իսկ «*գնալ*» զհամբառնալն ասէ, զի կամաւ ել և նստաւ ընդ աջմէ Հաւր։ Իսկ այն բնակութիւնն, զոր «*հեռի*» կոչէ, ոչ այնպէս հեռի է, իբր թէ ոտամբ չափի կամ աւուրբք և տարով չափի նորա հեռաւորութիւնն։ Այլ՝ «*հեռի*» ասի նա ըստ Ե. (5) եղանակի։

Նախ՝ զի նա բնակարան է Սուրբ Երրորդութեանն, իսկ այս երկիր անասնոց վայր։ Եւ տե՛ս, թէ որքա՞ն են հեռաւորութիւն է Աստուծոյ առ անասնոց բնութիւնն։

Երկրորդ՝ զի նա անտեսանելի է զգայարանաց մարմնոյ, իսկ այս զգալի աչօք տեսանի։ Եւ իմա՛, թէ քանի՞ հեռաւորութիւն է ի սգայութեանցս առ միտս։

Երրորդ՝ զի նա անմարմնոյ վայրք է, իսկ սա՝ մարմնաւորաց։ Եւ գիտեա, թէ որքա՞ն հեռաւորութիւն է ի մարմնոյ, առ անմարմինսն։

Չորրորդ՝ զի նա անեղին տեղիք է, իսկ սա՝ եղականացս, և տես, թէ որքան է անդր եղականն յանեղէն։

Հինգերորդ՝ զի այս ապականեալ վայր է, իսկ նա՝ անապական, որով ճանաչել կարես զհեռաւորութիւն այնմ աշխարհին։ Իսկ

---

[1] G **չիք** *զի իմացիք ի սկզբանէ յղացման նորին և ի ծնունդն և ի գործն և յետ յարութեան ուտելն և հանդրձիւ երևիլն*։ E **փխ**. *ըստ իմաստնոյն*։

զի՞ «*աշխարհ*» ասաց և ոչ երկիր, որ ցուցանէ, թէ արտաքոյ է յամենայն աշխարհիս, որ յերկնէ և յերկրէ, և որ ի մէջ սոցունց պարառեալ են բնութիւնքն:

Իսկ զի «*աշխարհ*» կոչի նա, վասն Է. (7) պատճառի:

Նախ՝ զի որպէս աշխարհս հանգիստ է կենդանեաց, այսպէս և լուսեղէն խորանն հանգիստ է աստուածութեանն, ըստ այնմ. «**Ելոպի յերկինս յերկնից, եւ Տէր է անուն Ելորա**» *(հմմտ. Սաղմ. ԿԷ 34, ԿԷ 5)*:

Երկրորդ՝ զի որպէս աշխարհի բնակեն մեծ և փոքր, այսպէս և ի լուսեղէն խորանն հանգիստ է[1] հրեշտակաց և արդարոց և սրբոց և զղջացողաց, ըստ այնմ. «**Ի սեղան Հօր Իմոյ բազմեցուսցից եւ անցեալ պաշտեցից**» *(հմմտ. Ղուկ. ԺԲ 37)*:

Երրորդ՝ զի որպէս աստ յայտնի են թագաւորք և իշխանք և ծառայք, այսպէս և անդ Աստուած բազմի ի կառս քերովբէականս և հրեշտակք շուրջ զնովաւ, ըստ այնմ. «**Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ. եւ [լի էր տունն փառօք նորա]: Եւ սերովբէէ [կային] շուրջ զնովաւ**» *(Եսայի Զ 1)*:

Չորրորդ՝ զի որպէս աստ ամենեքեան հնազանդ կան հրամանաց թագաւորին, այսպէս և անդ մնան և սպասեն հրամանաց արքային Աստուծոյ, և ոչ ոք ելանէ արտաքոյ հրամանաց Նորա, ըստ այնմ. «**Զամենեքեան էին սպասեն [եւ դու պատ զկերակուր նոցա ի ժամու]**» *(Սաղմ. ՃԳ 27)*:

Հինգերորդ՝ զի որպէս աստ կերակրով ապրին ամենայն կենդանիք[2], այսպէս և անդ, յաստուածային լուսափայլութենէն զմայլեալ հոգիքն կան և մնան յաւիտենական:

Վեցերորդ՝ զի որպէս աստ որոշեալ է իւրաքանչիւր տուն, այսպէս և ամենայն սրբոց զանազանեալ է բնակութիւնք նոցին ի վայրի միոջ, ըստ այնմ. «**Ի տան Հօր Իմոյ օթեւանք բազումք են**» *(հմմտ. Յովհ. ԺԴ 2)*:

---

[1] G չիք *հանգիստ է*:
[2] G չիք *կենդանիք*:

Եւթներորդ՝ զի որպէս աստ ոմն զօրաւոր և ոմն նուազ փառս ունի, այսպէս և անդ, ոմն հարիւրաւոր և ոմն վատցունաւոր և ոմն երեսնաւոր, և այլ փառք արեգական և այլ՝ լուսնի: Իսկ զի գերագոյն է նա, քան զսա: Այս է, զոր ինչ տեսանեմք ի սմա: Մեղք, մահ և ապականութիւն, կարաւտութիւն, ցանկութիւն, զրկումն, |65ա| սպանումն, ախտ և այլն, ամենայն, ոչ է անդ ամենևին, ըստ այնմ. «**Ուսպի մերժեալ են ցաւէ եւ պրպտուրիւն եւ հեծուրիւն**» *(հմմտ. Եսայի ԾԼ 11)* և այլն:

Իսկ ասելն՝ «**Առնուլ իւր թագաւորուրիւն եւ դառնալ**» *(ԺԹ 12)*, թէպէտ և տան զայսպիսի իրս առնելոյն, սակայն առ նա անպատշաճ է, վասն զի ընդ առնուլն զամենայն ունի գերալրապէս: Բայց որպէսզի՞ իմասցուք զայս:

Արդ՝ վասն զի եկն Տէրն մեր և ամենայն ինչ Նորա ծածկեցան աստ, զի մի՛ չարն գիտասցէ զայս, այս է, զի աղքատ կերպիւ շրջեցաւ և յաղքատ մօրէն ծնաւ և հետիոտս ընթացաւ և չարչարեցաւ: Նա, թէև մեռաւ, այլև ամենայն նուաստականքն, որք կարծիս տան մարդկան, իբր թէ ընդ աղքատ կերպին, որ յաշխարհի երևեցաւ առնուլ զթագաւորութիւնն: Այլ՝ Նա ի բնութենէ ունի զթագաւորութիւնն: Այլ զի յայտնին այժմ նա Տէր գոլով և թագաւոր երկնի և երկրի, այն է «*առնուլն*»: Իբր թէ յայտնի է թագաւորութիւնն, Նա, որ աղքատ կերպիւ երևեցաւն յերկրի[1]: Ապա թէ ոչ, զի՞նչ ցուցանէ ասելն. «**Իշխանուրիւն ունի Որդի Մարդոյ [յերկրի] թողուլ զմեղս**» *(Մտթ. Թ 6)*, և իշխանութիւն և ետ աշակերտացն թողուլ և առնուլ, և հաւատայ նմա զփականս արքայութեանն և այլն:

Եւ արդ՝ այս ամենայն ցուցանէ նախքան զյարութիւնն: Իսկ յետ յարութեանն ոչ էր Նմա այս իշխանութիւն, զի ասէր. «**Տուաւ Ինձ ամենայն իշխանուրիւն յերկինս եւ յերկրի**» *(Մտթ. ԻԸ 18)*: Եւ Պօղոս, որպէս թէ տակաւին ևս ոչ ունի, ասէ. «**Յորժամ պայէ ի յեռս զթագաւորուրիւնն Աստուծոյ եւ Հօր**» *(Ա Ի Կորնթ. ԺԵ 24)*: Նմանապէս և

[1] G չիf *Այլ զի յայտնին այժմ նա Տէր գոլով… աղքատ կերպիւ երևեցաւն յերկրի*:

Դանիէլ, թէ՝ «**Տուաւ Նմա իշխանութիւն եւ թագաւորութիւն յաւիտենական**» *(հմմտ. Դան. Է 14)*: Այլ ասէ, ըստ որում ասացաւ, զի վասն յայտնելոցն ասէ, ուր յայտնի երևի Աստուածութիւն Նորա և Թագաւորութիւն: Իսկ յորժամ յերկրի շրջեցաւ, ի ծածուկ էր: Իսկ զի՞ «*դառնալ*» ասէ: Իբր զի հաստատեաց աւր մի, յորում գայ կրկին անգամ դատել զկենդանիս և զմեռեալս: Եւ յայն ժամ յայտնէ զԻնքն իւր ընտանի փառօքն: Այսքան վասն վերանալոյն ասաց և դարձեալ վասն գալոյն[1]: Իսկ յորժամ երևեցաւ մեզ ծննդեամբն ի Կուսէ և վարագուրեաց ի մէնջ զԱստուածութիւնն Իւր թանձրագոյն մարմնովն: Եւ կոչեաց զամենայն ազգաց ծառայս Իւր, և ետ նոցա տասն մնաս, և ասէ. «**Շահեցուցէք ցայդ**» *(հմմտ. ԺԹ 13)*: Արդ, յայսմ առակ նման է այնմ առակին, որ ի Մատթէոս գրեալ են՝ «**Էանէտրէն**» *(տե՛ս Մատթ. ԻԵ 14–30)*: Եւ կարծելի եղև, թէ նոյն է, սակայն յԲ. (2) իրաց յայտնի է այլ գոլ:

Նախ՝ զի անդ այլ չափով առաջնոյն էր ետ, և այլ՝ երկրորդին, և երրորդին, իսկ աստ հաւասար չափէ ամենեցուն:

Երկրորդ՝ զի անդ, որչափ ընկալան, կրկնապատիկ շահ բերին, իսկ աստի հաւասար է, զոր ընկալան, ոմն՝ բազում |65բ| և ոմն՝ սակաւ մատոյց: Արդ՝ ի համեմատութենէ ուսաք, զի զքանքարսն առ վարդապետսն ասաց[2], իսկ զմնասս զայս հասարակաբար առ ամենեսեան տուեալն աւրինաց Նորա հնազանդութիւն, գործել զնա և պահել, որում ամենայն ոք կարէ տիրել: Իսկ զտասն ասացեալ զմնասն, զկամսն զգայարանաւք չափէ, որով ընդունիմք կամ ի բաց ընկենումք: Եւ դարձեալ զաւրէնս Իւր թուեաց՝ ըստ օրինացն ի մի ածեալ, վասն զի մինն միւսովն պահեալ լինի: Արդ՝ այս է. «**Շահեցուցէք մինչեւ գամ Ես միւս անգամ**» *(հմմտ. ԺԹ 13)*: Իսկ այս յայտնի է ի տեսողացն, զի զաւրէնսն, զոր

---

[1] G **չիf** *Աստուածութիւն Նորա և Թագաւորութիւն… վերանալոյն ասաց և դարձեալ վասն գալոյն*:

[2] E *վարդապետսն ասաց* **փխ**. *առ վատթարսն խօսի*:

ետ, պարտ է ի գործ արկանել ամենայն զգուշութեամբ և միշտ սպասել և ակն ունել գալստեան Նորա: Եւ ըստ աշխատանաց աւրինացն ակն ունել հատուցման պսակին:

Իսկ զի՞ ասէ. «**Բաղաքացիք յղեցին, թէ ոչ կամիմք զքեզ թագաւորել դորա ի վերայ մեր**» *(Համա. Ղուկ. ԺԹ 14)*: Այն է, զոր հրէայքն աղաղակէին. «**Զիւ մեր թագաւոր, [բայց ի կայսերէ]**» *(Յովհ. ԺԹ 15)*, վասն որոյ Յովհաննէս վկայէ. «**Յիւրոցն եկ, եւ իւրքն զՆա ոչ ընկալան**» *(Յովհ. Ա 11)*: Եւ զպատճառն ասէ, թէ. «**Սիրեցայ զքաւար առաւել, քան զլոյս**» *(Համա. Յովհ. Գ 19)*, զի լոյս յայտնի առնէ զգողն: Իսկ խաւարն ծածկէ: Եւ ոչ միայն ատեցին, այլև սպանին, մանաւանդ, թէև զվկայս աստուածութեան Նորա հալածականս առնէին: Եւ այս է ասելն, թէ. «**Ո՛չ կամիմք զքեզ թագաւորել Դորա ի վերայ իմ: Եւ եղեւ դառնալ նորա**» *(Համա. Ղուկ. ԺԹ 14-15)*:

«*Դառնալն*» յայտնի ցուցանէ զբնականապէս թագաւորութիւն Իւր և նստի ի դատել, ըստ այնմ. «**Հայր ո՛չ դատի զոք, այլ՝ զամենայն դատաստան եպ Որդւոյ Իւրոյ**» *(Յովհ. Ե 22)*: Աստ ստուգապէս զքննութիւն ուսուցանէ, զոր առնէ ի հանդերձեալ դատաստանին: Եւ նախ զառաքինիսն դատէ, որք ասեն. «**Մնասն էր դասն մնաս արար**» *(Ղուկ. ԺԹ 16)*, այսինքն՝ զի կատարեալ արարի զառաքինութիւնն, զի Ժ. (10) թիւն զկատարեալն ցուցանէ, որպէս ասացաւ ի վերոյ: Եւ Նորա ասացեալ. «**Ծառայ բարի ի սակաւ հաւատարիմ լիջիր ի վերայ Ժ. (10) քաղաքի**» *(Համա. Ղուկ. ԺԹ 17)*, այսինքն՝ կատարեալ պսակ քեզ շնորհեսցի, զի թէ զաւտարն ճշմարտապէս շահեցուցէր, զիմն կարես ամբողջ պահել:

Եւ զի՞ բազմապատիկ խոստացաւ կատարողացն զօրէնսն՝ ասելով. «**Հարիւրապատիկ առցէ, եւ զկեանսն յաւիտենական ժառանգեսցէ**» *(Մատթ. ԺԹ 29)*: Նոյն և աստ ի Ժ. (10) քաղաքաւս զնոյն ի նոյն նշանակէ իմանալ, զի տե՛ս, թէ քանի շատ է Ժ. (10) քաղաքն, քան զտասն արծաթն:

Նմանապէս և երկրորդին պատասխանէ տալ իշխանութիւն ի վերայ Ե. (5) քաղաքաց: Իսկ երրորդ թշուառականն և անաւրէնութեամբ կացեալ, մատուցեալ ամբաստան լինի զքաղցրութենէ Նորա, և այսպիսի բանս ասէ, որ ոչ արդարացուցանէ, այլև բարկացուցանէ: Ասէ. «**Գիրքէի, զի այր մի խիստ ես, հնձես զոր ոչ սերմանեցեր**» *(հմմտ. Ղուկ. ԺԹ 20, Մատթ. ԻԵ 24)*: Եւ թէ հեզ էր ասացեալ, գոյին ամենայն իրաւունք, իբր թէ ասէր՝ վստահացայ ի քո հեզութիւնդ և հեղգացայ:

Այլ՝ աւտարոտի ասաց, |66ա| և ստամբակ, այսինքն՝ գոռոզ և այլն, վասն որոյ ասէ. «**Ծառայ անհաւատ**» *(Ղուկ. ԺԹ 22)*:

«*Անհաւատ*» ասելով ընկենու ի հաւատոցն: Եւ յիրաւի, զի զյոյսն ոչ յորդորեաց ի գործ պատուիրանին, և ի սպառնալեաց տանջանացն ոչ երկեաւ, որ զպատուիրանն արարեալ էր, վասն այն անհաւատ ասէ. «**Ընդէ՞ր ոչ տրկեր ի սեղանաւորս և ես եկեալ տոկոսիւք պահանջէի**» *(հմմտ. Ղուկ. ԺԹ 23)*: Իսկ աստ ընդդէմ բերեն, զի թէ քանքարացն առակքն ի վարդապետսն առեալ լինին: Եւ այս ևս ահա տարեալ եհան ի վարդապետսն, որոց պատասխանեմք, թէ արդարև ամենեցուն հարկ է այս, զի որպէս վարդապետաց է խրատել զեկեղեցիս, նոյնպէս և ամենայն ումեք իւրում տանն պարտ է վերակացու լինիլ և խրատել բարւոք: Եւ թէ յառաջնորդէն ամենայն արիւն ժողովրդեանն խնդրի, քանզի ևս առաւել ի մարմընաւոր ծնաւղացն զորդւոցն, զոր ծնաւ՝ պահանջէ, թէ երկիւղն Աստուծոյ ոչ սնուցանէ, վասն որոյ ասէ. «**Ելէէ ի դմանէ [ըստանան] եւ տուէ այնմ, որ ունի զքառանն**» *(հմմտ. Մատթ. ԻԵ 28, հմմտ. Ղուկ. ԺԹ 24)*: Այս է լուծանել ի հաւատոցն, զոր այլում վայրի ընդ մէջ կտրել հրաման ետ, զի զբան հաւատոցն, զոր խոստովանեաց Բանիւն, և զմկրտութեան շնորհն առնու և ընդ անհաւատսն պատժէ յաւիտենական հրով: Իսկ հրեշտակք յաչաղկոտք են, ասեն Տէրն ունի զԺ. (10)ն մնասն: Եւ արդ, այնչափ առաւել է պլսակք արդարոցն, որ զհրեշտակս ի նախանձ արկանէ:

***Հարցումն.*** Իսկ ընդէ՞ր զշնորհս աւազանին հանէ:

***Պատասխան.*** Այս է, յորժամ յաւազանն մըկրտին, որդիք Աստուծոյ լինին, իսկ զԱստուած զԻւր որդիսն ոչ տանջէ: Այլ, զոր օրինակ, թագաւոր ոք, յորժամ զիշխան ոք յիշխանութենէն կամի ձգել և սպանանել, յառաջ զպատիւ իշխանութեանն զհանդերձն հանել տայ, և ապա՝ սպանանել:

Նոյնպէս և Աստուած ոչ կամի որդիական անուամբ տանջել զմեղաւորսն, այլ՝ նախ քակէ ի նմանէ զանուն, և ապա՝ դժոխոցն մատնէ: Իսկ զթշնամիսն, այսինքն՝ զիրէայսն, որք ոչ կամեցան զթագաւորութիւն նորա, տանջէ սպանմամբ, զի մի՛ միայն[1] զայժմու գթութիւնս նորա իմանալով հեղգասցուք ի սուրբ պատուիրանաց նորա, այլ՝ զսաստն և զվրէժ դատաստանին ի միտ ածցուք և պատրաստ լիցուք սուրբ գործովք, այսինքն՝ ոչ միայն սուտ անուն քրիստոնեութեան, այլ՝ ըստ անուանն և զգործն հաստատուն ունիմք, զի մի՛ ընդ անհաւատսն պատիժ կրեցեմք, վասն որոյ այս ամենայն օրինակ վասն տկար մտաց մերոց հրամայեցաւ:

Այլ, ո՛վ սիրելիք որդեակք իմ, զի զոր ինչ առնեմք մեք և մոռանամք, Նա անմոռաց պահէ, և զի զիւր խնդրէ և զշահն պահանջէ: |66բ| Արդ՝ եթէ զշնորհս աստուածային առեալ ի գանձուց Նորա ձրի և ծախէ ոք մեծամեծ գին առնելով, ուրեմն լսէ նա «*զծառայն չար և վատ*», զի այնպիսին շահ ոչ բերէ Տեառն իւրոյ, այլ՝ որպէս ձրի գտաւ և ձրի վաճառեսցէ, ըստ այնմ. «**Ձրի առէք եւ ձրի տուէք**» ***(Մատթ. Ժ. 8)***: Մանաւանդ, զի շահ ի յոգիսն ածէ, որ ձրի վաճառեաց: Իսկ որ զմարմինն պարարէ աստուածային շնորհօք՝ թաղելով յերկրի զանճառ գանձ Նորա, վճիռ դատաստանին երևեսցի նմա: Իսկ մեզ մի՛ հասցէ պարտապան գտանել զմեծի տանուտեառն, այլ՝ պարզ դիմօք ցուցանել զշահն ի Քրիստոս Յիսուս ի Տէր [մեր, որում վայել է փառք յաւիտեանս. ամէն]:

---

[1] C, E *սպանմամբ, զի մի՛ միայն* **փխ**. *սպանմամբ ի գեհեանն յաւիտենական: Արդ, զայսոսիկ օրինակ տա Տէրն, զի մի՛ միայն*:

***Հարցումն.*** Զի՞նչ են նշանք, որք ի լուսաւորսդ երևին, քանզի ասէ. «**Եղիցին նշանք [յ]արեգակն եւ [ի] լուսինն**» *(համա. Զ.ուվ. ԻԼ 25)*։

***Պատասխան.*** Զայն նախախնամութիւն Աստուծոյ առնէ յամենայն ժամ, զի մի՛ իմասցի, թէ այս գործ ի յարարածս երևի։ Նեղութիւնք, որ հասանեն, վասն որոյ նա յարեգակն և ի լուսին նկարեալ նեղութիւն ցուցանէ[1], զի ուսցուք, թէ ի վերուստ կարգեալ է այն պատիժն, և ապա գայ ի մեզ, զոր ի ձեռն արեգականն մեզ երևին յառաջագոյն։

Եւ ո՞րք են նշանքն։ Այն է, յորժամ մթագոյն ներծագէ, արեգակն կամ լուսինն խաւարի։ Նոյնպէս և յաստեղսն երևի նշանք, այն է, յորժամ նոր աստեղք երևին այլակերպք և յոտանաւորք և կամ, որք նիզակ ի նման ունին զնըշոյլս դնդման լուսոյն։

Եւ դարձեալ՝ վասն այն ցուցանէ Տէրն զայսոցիկ նշանս նախ, քան զպատիժն, իբր թէ իմասցուք, զի պատուհաս գալոց է։ Եւ **|67ա|** այն վասն մեղաց գայ, զոր իմացեալ ի ձեռն նշանին դարձցի ի մեղաց, յայնժամ կարողանամք դարձուցանել զպատուհասն, զոր օրինակ նինուէացիքն։ Իսկ թէև զայն նախախնամութիւնն անփոյթ առնեմք, վասն որոյ գայ բարկութիւն ի վերայ որդւոցն անհաւանութեան։ Իսկ ոմանք ասեն, թէ Նեռն առնէ զայսպիսի նշանս, իբր թէ հաւանեցուցէ, թէ նա է Քրիստոսն։ Այլ արդ՝ նորայն չեն նշանք, այլ՝ խաբէութիւն միայն առ աչօք երևին և ոչ են ճշմարտապես նշանք, զի ազդեցութեամբն սատանայի լինի սուտ նշանք և արուեստք։ Եւ զի կորուսելոցն միայն երևի, իբր թէ նշանք են, իսկ առ ընտրեալքն խայտառակեալ է սուտ նշանք նորա։

Իսկ Նեռն Դ. (4) ոճիրս գործէ յայնժամ։

Նախ՝ զթերիսն և զանկատարսն սուտ նշանօք հաւանեցուցանէ։

Երկրորդ՝ զի զնոսա, որ պինդ են հաւատովք, բռնութեամբ չարչարէ։

Երրորդ՝ զարծաթասէրսն և զագահսն ընչիւք դարձուցանէ։

---

[1] C *նեղութիւն ցուցանէ* **փխ**. *զնեղութեան ցասումն*։

Եւ ուստի՞ է այս ինչք, զի նա ոչ ունի:

Այս է, զոր այժմու կռապաշտ մարդիկ թաղեն զոսկին և զարծաթն և վասն առաւել ագահութեանն ումեք ոչ ասեն, և այնպէս մեռանին: Իսկ սատանայ գիտէ զտեղիք արծաթին, քան զի նա տայ թաղել: Եւ Նեռն բնակարան է սատանայի, վասն որոյ գտանէ զիւր պահեստն և հանեալ տայ արծաթասիրացն, և այնպէս դարձուցանէ:

Եւ չորրորդ՝ զնոսա, որք իմաստութեան ցանկան և բանից քարոզութեամբ և բանիւք, զոր սատանայ նկարեալ ունի ի մտի զամենեսեան, «**Եթէ հնար ինչ իցէ եւ զնդրեալսն**»,- ասէ Տէրն *(հմմտ. Մարկ. Ժ.Գ. 22)*:

***Հարցումն.*** Եւ արդ՝ եթէ այս այսպէս է, երևի թէ գոյ իմն զաւրութիւն սատանայի, որ զայս ամենայն առնէ:

***Պատասխան.*** Ոչ ինչ գոյ զօրութիւն սատանայի առնել զայս կամ զաւրացուցանել զՆեռն, այլ՝ կատարին այս ամենայն թոյլ տալովն Աստուծոյ, զի փորձեալ յանդիմանեսցին անհաւատքն, որք վասն մարդկութեանն ուրանան զաստուածութիւնն Քրիստոսի, զի ահաւասիկ Նեռն մարդ լցեալ անաւրէնութեամբ և հաւատան նմա, որպէս թէ Քրիստոսի, և ի Քրիստոս ոչ հաւատացին, որ լի էր ամենայն բարութեամբ, վասն որոյ թոյլ տայ Աստուած լինել այսմ, զի անպատասխանիս արասցէ զանհաւատսն, և ոչ ունին ասել, վասն զի մարմին զգեցար և յայնմանէ սղալեցաք և ոչ կարացաք հաւատալ մարդոյ, իբրև Աստուծոյ: Իսկ հաւատալ Նեռինն կշտամբեալ յանդիմանին ի հաւաստի քննութեանն Աստուծոյ, քանզի զայս ասէ առաքեալն՝ յայտնելով. «**Փոխանակ, զի զսէրն Աստուծոյ զճշմարտութիւնն ոչ ընկալան, զի ապրեսցին, վասն որոյ առաքեաց նոցա Աստուած ազդեցութիւն |67բ| մոլորութեան հաւատալ նորա սրութեանն, զի դատապարտեսցին ամենեքեան, որք ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ՝ հաճեցան ընդ անօրէնութիւնն**» *(հմմտ. Բ Թեսաղ. Բ 10-11)*:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ զգալուատն Իւր Տէրն ի փայլակն նմանեցուցանէ՝ ասելով. «**Զի որպէս փայլակն փայլատակեալ**» ***(Ղուկ. ԺԷ 24)***։

***Պատասխան.*** Վասն բազում պատճառի:

Նախ՝ զի որպէս փայլակն յանկարծակի երևի, նոյնպէս և Տեառն մերոյ գալուստն լինի, ըստ այնմ. «**Յանկարծակի հասանիցէ ի վերայ չեր օրն այն**» ***(Ղուկ. ԻԱ 34)***, և թէ՝ «**Եղ եւ բարբառ, ահա փեսայն գայ, ելէք ընդ առաջ նորա**» ***(Մատթ. ԻԵ 6)***։

Երկրորդ՝ զի փայլակն յամենայն տեղիս երևի, ևս Տէրն մեր ի գալստեանն, ըստ այնմ. «**Տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ ամ[պովք զօրութեամբ եւ փառօք բազմօք]**» ***(Ղուկ. ԻԱ 27)***, և թէ՝ «**Հայեսցին ի Նա, յոր խոցեցին**» ***(Յովհ. ԺԹ 37)***։

Երրորդ՝ զի փայլակն է ահեղ իմն զաւրութեամբ, այսպէս և Տէրն մեր ահեղ իմն զօրութեամբ երևի, ըստ այնմ. «**Գալ ի վերայ ամբոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք**» ***(Հմմտ. Մատթ. ԻԴ 30)***։

Չորրորդ՝ զի ի մեծ ձայնէ որոտմանն լինի փայլակն, այսպէս և Տէր մեր փողով մեծաւ ելանէ, որպէս Պաւղոս ասէ, թէ. «**Տէր ի՛ջանէ ի փող Աստուծոյ, եւ ի յայն հրեշտակապետին, եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն**» ***(Հմմտ. Ա Թեսաղ. Դ 15)***։

Հինգերորդ՝ զի փայլակն զամենայն ոք զարհուրեցուցանէ, այսպէս և Տեառն մերոյ գալուստն զարհուրին ամենայն ազինք, ըստ այնմ. «**...այնժամ կոծեսցին ամենայն ազինք**» ***(Հմմտ. Մատթ. ԻԴ 30)***։

Վեցերորդ՝ զի յամպն երևի փայլակն, այսպէս և Տէր մեր ի վերայ ամբոց գայ, ըստ այնմ. «**Այս Յիսուս, որ վերացաւ ի քէնջ յերկինս**» ***(Գործք. Ա 11)***, և՝ «**Տեսի զբերեւ Որդի Մարդոյ, զի գայր ընդ ամպս երկնից**» ***(Հմմտ. Մատթ. ԻԴ 30, ԻԶ 64, Հմմտ. Մարկ. ԺԳ 26, Հմմտ. Ղուկ. ԻԱ 27)***։

Եւթներորդ՝ զի փայլակն ընդ երկնիւք ծագէ, այսպէս և Տէր մեր յերկնից գայ, ըստ այնմ. «**Եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ երկնից զօրութեամբ և փառաւվք**» ***(Ղուկ. ԻԱ 27)***։

Ութերորդ՝ ի լինել փայլատակման հալածի խաւարն, այսպէս և ի ծագել Տեառն մերոյ, յերկնից հալածի խաւար մեղաց յաշխարհէ, ըստ այնմ. «**Եւ ես լոյս աշխարհի**» *(Յովհ. Ը 12)*, և թէ՝ «**Եկեսցեն հրեշտակք եւ ժողովեսցեն զամենայն գայթակղութիւնս եւ հանցեն զնոսա ի խաւարն արտաքին, [անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց]**» *(Հմտ. Մատթ. ԺԳ 49, ԻԵ 30)*:

Իններորդ՝ զի որպէս մեք փայլակն նախ տեսանեմք, քան զլսել ձայն ի որոտալոյն, այսպէս և ի գալստեան Տեառն, նախ խաչն երևի, և ապա՝ Տէր մեր, ըստ այնմ. «**Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս**» *(Հմտ. Մատթ. ԻԳ 30)*:

Տասներորդ՝ զի զոմանս պատուհասք փայլակն, այսպէս և Տէր մեր, զոմանս պատուհասք ի միւս անգամ գալստեանն, ըստ այնմ. «**Երթայք յինէն անիծեալք ի հուրն [յաւիտենական]**» *(Մատթ. ԻԵ 41)*:

*Հարցումն.* Զի՞նչ է ասելն. «**Յաղուրն կայէք, զի չգիտանիցիք յայնմանէ, որ լինելոցն է**» *(Հմտ. Ղուկ. ԻԼ 36)*: Զի՞նչ է, որ լինելոցն է:

*Պատասխան.* Զորս ինչ լինելոց է, նախ ժամանակ Նեռինն, և զի դառն աւուրք են և տանջանաց, մանաւանդ, թէ վերստին կռապաշտութեան, զոր չարն զինքն պաշտել տայ, վասն որոյ ասէ Տէրն. «**Ոչ եղև այնպիսի նեղութիւն ի սկզբանէ աշխարհի, և մի այլ լիցի**» *(Հմտ. Մատթ. ԻԳ 21)*:

Երկրորդ՝ դատաստան, որ լինելոց է մեղաւորաց և անողորմիցն, ըստ այնմ. «**Ողորմ դատաստան լինելոց է անողորմիցն**» *(Հմտ. Յակոբ. Բ 13)*:

Երրորդ՝ ահարկու դէմք սատանայի, որ մերձակից |68ա| լինի մեղաւորացն ի դժոխք:

Չորրորդ՝ տանջանքն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա, յաղագս որոյ պատրաստութեամբ պարտ է կալ մեզ, զի մի՛ մատնիցեմք նոցա: Եւ տե՛ս զգթութիւն Տեառն մերոյ, թէ որպէս զամենայն մի ըստ միջէ մեզ ուսոյց, որով և ապրիմք ի դառն տանջանացն:

## ՔԱՌԱՍԵԿԵՐՈՐԴ ՃԱՌՆ

***Հարցումն.*** Զի՞նչ է խորհուրդ գալոյ մեր առաւօտուն ի գերեզմանն մեռելոյ, որ կոչի այգելաց և կամ վասն է՞ր:

***Պատասխան.*** [Վասն] բազում պատճառի:

Նախ՝ զի երեկեան աւրն բազումս արտասուեցաք՝ առաւել, քան զչափն, և ճչեցաք ընդ դէմ Աստուծոյ, և զաղաղակ բարձաք, զոր ոչ էր պարտ առնել, վասն որոյ այսօր իմացեալ մեր զմեղս, զոր արարաք, եկեալ առ գերեզմանն՝ «մեղայ» ասեմք, իբր թէ աղէտ մեր հարկեաց զմեզ և անցեաք զպատուիրանաւն Աստուծոյ:

Երկրորդ՝ զի յերեկեան օրն փոխեցաւ եղբայրն մեր, և մեք կոծոյ պարապեցաք, և ոչ կարացաք փառք տալ Աստուծոյ, այսօր եկեալ փառս ի վեր առաքեմք Աստուծոյ, հանդերձ գոհութեամբ՝ ըստ Յոբայ. «**Զի որպէս կամեցաւ, նոյնպէս եւ արար, Տէր եղ եւ Տէր էառ**» ***(Հմմտ. Յոբ Ա 21)***:

Երրորդ՝ զի երեկ տեսաք զմարմին եղբօր մեր եդեալ առանց կենդանութեան, և ոչ երթայ նա ի մտաց մերոց, այսօր եկեալ զգերեզման տեսանեմք, զի փոքր մի սփոփեսցի միտք մեր ի խղճէ նորա, այսինքն՝ ամփոփեալ տեսանել զնա:

Չորրորդ՝ յերեկեան օրն աղաչանք և պաղատանք մեր վասն մարմնոյ թաղման էր, իսկ առաւօտուս վասն հոգւոյ հանգստեան էր, իբր թէ աղաչեմք, զի մի՛ ըմբռնեսցի հոգի նորա ի դիւաց, որք կան ի խաւարային աւդտ, այլ՝ համարձակութեամբ վեր ընթասցի ի կայանք հոգւոցն:

Հինգերորդ՝ զի ոչ միայն մի առաւօտու պարտ է գալ ի գերեզմանն, այլ՝ յամենայն առաւօտու, նոյնպէս և յամենայն երեկոյի պարտ է Աւետարան ընթեռնուլ, զի ասեն, թէ Է. (7) աստիճանք են, յոր մի աւր յամէ հոգին յամեն աստիճան: Եւ յետ Է. (7) աւուրն,

ապա հասանէ հոգին ի կայանս իւր, վասն որոյ երեկունն ընթեռնումք զԱւետարան, զի բարւոք հանգիցէ նա յաստիճանն յայն: Եւ յառաւօտուն բարւոք ուղևորեսցի հասանիլ ի միուս աստիճանն:

Վեցերորդ՝ զի երգ սաղմոսի առաւօտուս ուսուցանէ մեզ, զի մինչև յերեկունն լիցի սուգ, իսկ առաւօտին՝ ուրախութիւն, ըստ այնմ. «**Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն**» ***(Սաղմ. ԻԹ 6)***, վասն որոյ առաւօտուն ընթանամք ի գերեզմանն ուրախութեամբ, որ ցուցանէ զտրտմութիւն մեր բարձեալ, և թէ քան զառաւօտն անցեալ է լալն, այն ի հեթանոսաց կարգն է, որք **|68բ|** ոչ ունին յոյս յարութեան:

Եւթներորդ՝ գամք առաւօտուն ի գերեզման մեռելոյն երանելով մեռելոյն[1], որ այս կենացս երեկոյ եղև նմա ի վշտաշատէս և անվաղջան կենացն առաւօտ:

Ութերորդ՝ ընթանամք ի գերեզման առաւօտուն, իբր թէ ի միտ ածեմք զայն, որ երեկ կենդանի էր և այսօր ի գերեզման ի դնի կոծեսցուք և մեք, զի նոյնպէս լինելոց եմք, որպէս ասէ Յոբ. «**Ի մինչ ածս զքարտուղարանն իմ, զի եւ այնպէս լինելոց է քարտուղարանն Քո**» ***(Հմմտ. Յոբ ԻԲ 4)***, զղջասցուք ի մեղաց, զի մի՛ ըստ մարմնոյ մեռելութեանն և զհոգւոյն կրեսցուք:

Իններորդ՝ զխորհուրդ իւղաբերիցն ունի, որք կանխեալ ընդ առաւօտն ի գերեզմանն Քրիստոսի, և տեսին յարուցեալ և ընդ նոսա առաքեալքն, վասն որոյ պարտիմք արք և կանայք գալ ի գերեզմանն ի խորհուրդ յարութեանն Քրիստոսի:

Տասներորդ՝ ի խորհուրդ հասարակաց յարութեանն, որպէս թէ աղաչեմք, զի բարձրագոյն փառաւք յարիցէ ընդ արդարսն և մի՛ ընդ մեղաւորսն յառաւօտին յայնմին, վասն որոյ խաչ վառեմք, որ նշանակէ զգալ նշանին Քրիստոսի, իսկ զի՞ խաչն ի գլուխ փայտին հանեմք, որ ցուցանէ զգալ խաչին ընդ ամպս երկնից: Իսկ զի՞ կտաւ ինչ կապեալ է ի ներքոյ խաչին կարճ և երկայն, ցուցանէ

[1] C չիք *երանելով մեռելոյն*:

զճառագայթ խաչին, որ եաւթնապատիկ է, քան զարեգակն: Իսկ զի՞ խունկ ծխեմք, ցուցանէ զանուշահոտ վարս արդարոցն, և մոմ լուցանեմք, որ ցուցանէ զպայծառ հաւատս նոցա:

Դարձեալ՝ եկեալ մեր առ ի գերեզմանն, ուսանիմք ի Քրիստոսէ բան խրատական, որպէս ասէ Տէրն. «**Զգոյշ լերուք, գուցէ ծան-[րանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ, եւ արբեցութեամբ], իբր թէ պարտասուք եղերուք ի յուրելոյն եւ յըմպելոյ եւ ի պոռնկութենէ, այս է հոգօք աշխարհականք, զի մի՛ եկեալ օր մահուն, որպէս յորոգայթ կորուսանիցէ զմեզ**» *(Հմմտ. Ղուկ. ԻԱ 34)*:

Եւ զի «*որոգայթ*» անուանէ զաւրն զայն:

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի յորոգայթն յանկարծակի կազմի, այսպէս և օր մահուն[1] և Գալստեանն յանկարծ[2] ժամու լինի, վասն որոյ ասէ յայսմ տեղւոջ. «**Զգոյշ լերուք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք, գայ Որդի Մարդոյ**» *(Հմմտ. Մատթ. ԻԴ 41)*:

Երկրորդ՝ զի որոգայթն ոչ տայ թոյլ այլ շարժել, այսպէս և Գալուստն, ոչ տայ թոյլ, առնել գործ մարդոյ[3] կամ խաւսել կամ ապաշխարել, ըստ այնմ. «**Ընդ մէջ նորա կրրել [զնա], եւ [զմտան նորա ընդ անհաւատս դիցէ]**» *(Հմմտ. Ղուկ. ԺԲ 46)*:

Երրորդ՝ զի որք պատրաստին, ոչ հոգան յորոգայթից, այսպէս և որք սրբութեամբ պատրաստեալ են զանձինս, ոչ հոգան յաւրն յայն, այլ՝ խնդան, զի այն է օր ազատելոյ նոցա յաշխարհահեղձ պատրանաց:

Չորրորդ՝ զի որոգայթն վասն մեղաց դիպի մարդոյն, այսպէս և հանդերձեալ օրն վասն մեղաց լինի, զի քննեսցի և պատիժ իւրաքանչիւրոց տացի, ըստ այնմ. «**Ընկալցի իւրաքանչիւր ոք [իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ]**» *(Հմմտ. Բ Կորնթ. Ե 10)*:

---

[1] C չիք *մահուն*:
[2] C *յանկարծ* փխ. *յանկասկած*:
[3] C *մարդոյ* փխ. *մարմանական*:

Հինգերորդ՝ զի ոմանք անկանին յորոգայթն և ոչ ամենեքեան, այսպէս մարդկային բնութիւնս ո՛չ ամենեքին կենդանի լինին յայնմ աւուր, այլ՝ |69ա| ոմանք:

Վեցերորդ՝ զի որոգայթն ի մի ական թոթափելն լինի, այսպէս և օր գալստեանն՝ ի մի վայրկեան ժամու, մեռանիլն և յառնելն և ընթանալն ի դատաստան ի մի պահու լինի: Եւ այս ցուցանէ զամենակարող զօրութիւնն Աստուծոյ:

Եւթներորդ՝ զի զկսկիծ որոգայթին ոչ ոք գիտէ, զի թէ գիտէր ոք պատրաստէր, այսպէս եթէ ոք զտանջանս դատաստանին գիտէր՝ պատրաստէր սրբութեամբ, զի ծածկեալ են յայժմու տեսութենես:

Ութերորդ՝ զի մանրէ զոսկերս նոցա[1], որոց և հատանէ[2], այսպէս և յաւուր կատարածին հանէ զթանձրութիւն մարմնոյ մարդկան և զգեցուցանէ այլ իմն կերպարան:

Իններորդ՝ զի ոչ խնայէ որոգայթն մանկան կամ ծերոյ, այսպէս և օր Գալստեանն, ոչ են խնայումն մեղաւորաց, թէպէտ և կարի ծեր լինի կամ տղայ, ըստ այնմ, որ ասէ Եզեկիէլ. «**Մի՛ խնայէ ծերին եւ երիտասարդին**» *(Հմմտ. Եզեկ. Թ 6)* և այլն:

Տասներորդ՝ զի որք յորոգայթ անկանին՝ վերջք է նոցա, այսպէս և վերջին օրն է աշխարհի դատաստանին աւրն, ըստ այնմ. «**Հասարակեաց օր մի յորում դարձելոց է ցամենայն**» *(Հմմտ. Գործք ԺԷ 31)*, որ է անսերեկ և անփոփոխ, վասն որոյ ասէ. «**Զգոյշ լերուք, զի մի յանկարծակի ըմբռնիցիք**» *(Հմմտ. Ղուկաս. Զ 1)*:

Եւ արդ՝ աստ գերագոյն իմն բան ուսաք ի սուրբ աւետարանէս, զի ասէ ժողովուրդն կանխէր ընդ առաւօտն ի տաճարն լսել [ի նմանէ], յորմէ առաք[3] զհոգևոր կերակուրն ուտել և ապա մարմնաւորին հետևիլ, զի թէ որ հին օրինակն էր, այնպէս առնէին, նախ՝ զաստուածային Բանն ճաշակել, և ապա՝ զմարմնաւոր հացն: Քա-

---

[1] C *նոցա* **փխ**. *նոցա որոգայթն*:
[2] C *հատանէ* **փխ**. *հասանէ*:
[3] C *առաք* **փխ**. *ուսաք նախ*:

նի ևս առաւել Նորա, որ Ճշմարտութիւն է, պարտիմք առնել, յորոց և յանդիմանեալ ևս լինիմք, զի նոքա, որ զհոգևորն, քան զմարմնաւորն ընտրեցին[1], որք սոսկ մարմինք էին, իսկ մեք զհոգևորն անարգեալ նախ զորովայնսն խճողեմք, և ապա՝ ուրեք, եթէ ոք ունկն դնէ բանից աստուածայնոց, վասն որոյ պարտ է յառաւօտու զարթնուլ ի քնոյ և մերձ լինել Աստուծոյ: Իսկ եթէ զմարմնաւորն հոգամք, նա ասէ իմաստունն. «**Յագեալ ղորովայն եւ ղմեղր արհամարհէ**» *(հմմտ. Լ.առակ. ԻԷ 7)*:

Ուստի յայտ է, որով յագեալք յետոյն արհամարհելի լինի, բայց քաղց պահիցեմք զանձինս, որովք տեղիք լինիցիմք աստուածային բանին, զի աստ ճաշակելով զՍուրբ Բանս Նորա, անդ ի կենացն հաղորդ լիցուք ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որով և յորում Հօր միանգամայն և Հոգւոյն Սրբոյ վայել է փառք և իշխանութիւն:

[1] C *ընտրեցին* **փխ**. *գերագոյն ընտրեցին*:

## ՔԱՀԱՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՃԱՌՆ

«Եհան զնոսա՝ մինչեւ ի Բեթանիա. եւ ամբարձեալ զձեռս իւր աւրհնեաց զնոսա։ Եւ եղեւ յաւրհնելն [նորա զնոսա], մեկնեցաւ [ի նոցանէ, եւ վերա]նայր յերկինս։ Եւ նոցա [երկիր պագեալ նմա]՝ դարձան յԵրուսաղէմ [ուրախութեամբ մեծաւ]» *(Ղուկ. ԻԴ 50-51)*։

Նախ՝ գիտելի է, զի այս տաւն գերագոյն է, քան զամենայն տաւն, բազում եղանակաւ։

Նախ՝ զի ամենայն տաւն կարծես տան սոսկ մարդ լինել Քրիստոսի, որպէս տաւն ծննդեան և չարչարանացն և այլն, իսկ այս տաւնս Աստուած ցուցանէ յայտնապէս, որ համբարձեալ է ի յերկինս։

|69բ| Երկրորդ՝ զի մինչև ցայս վայր տրտում էին առաքեալք, թէպէտ զամենայն սքանչելիսն տեսին, և զտնօրէնութեան, ըստ այնմ. «Տրտմեցան աշակերտքն» *(Հմմտ. Մարկ. ԺԴ 19)*, իսկ այսաւր «...ուրախացեալ դարձան Երուսաղէմ»,- ասէ աւետարանիչն *(տե՛ս Ղուկ. ԻԴ 52)*։

Երրորդ՝ զի մինչև ցայս վայր եկեղեցի ոչ ունէր զկատարեալ իշխանութիւնն, իսկ Համբարձմանս արար զառաքեալսն կաթողիկոս և զանզուգական անունն պարգևեաց մեզ։

Չորրորդ՝ զի մինչև ցայսօր հրէիցն առանձին ասէր քարոզել, և ոչ էր մեզ աւգուտ, իսկ այսօր հրամայեաց աշակերտել զամենայն հեթանոսս, որով արժանացաք աստուածային շնորհին։

Հինգերորդ՝ զի մինչև ցայսօր ոչ էր եդեալ մեզ աւրէնք մաքրելոյ ի սկզբնական մեղաց, իսկ այսօր ետ հրաման մկրտել զմեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որովք ապրիմք յամենայն աղտէ մեղաց։

Վեցերորդ՝ զի յԱդամահետ է մինչև ցայսօր Ադամայ բնութիւնն ի ներքոյ անիծից էր, ըստ այնմ. «**Անիծեալ լիցի երկիր ի գործս էս**» *(Ծննդ. Գ 17)*, իսկ այսաւր նոյն Աստուածն զանէծքն ի յաւրինութիւն փոխարկեաց, ըստ այնմ. «**Հաճաբարձեալ զչեռս աւրհնեալց զնոսա**» *(Հմմտ. Ղուկ. ԻԴ 50)*։

Եւթներորդ՝ զի երկնայնոց դասքն թերի էին և պակաս յան[կ]մանէն սատանայի, ըստ այնմ. «**Որոյ իցէ Ճ. (100) ոչխար եւ կորուսանիցէ զմիոն**» *(Ղուկ. ԺԵ 4)*, իսկ այսօր սկիզբն արարեալ լնուլ պակասութիւն նոցա, ըստ այնմ. «**Գտանէ զնա եւ դնէ ի վերայ ուսուցն իւրոց**» *(Հմմտ. Ղուկ. ԺԵ 5)*, և հանեալ յերկինս զմարդկային բնութիւնս արար դասակից հրեշտակաց:

Ութերորդ՝ զի թէպէտ զամենայն տնօրէնութիւնն կատարեաց, վերին դասքն անտեղեակք էին նորա տնօրէնութեանն, իսկ այսօր ուսոյց վերնոցն զանճառ խորհուրդն, ըստ այնմ. «**Հնչան հարքն մեծայն ի խաչին**» *(Հմմտ. Եսայի ԿԳ 3)*, վասն որոյ աղաղակէին հրեշտակք. «**Ուլ մի երբէք ոչ եղուր մեզ**» *(Հմմտ. Ղուկ. ԺԵ 29)*։

Իններորդ՝ զի մինչև ցայսօր հրեշտակք միայն էին երկրպագողք և փառաբանիչք Տեառն, ըստ այնմ. «**Հաղարք հաղարաց եւ բիւրք բիւրուց կային առաջի Նորա**» *(Հմմտ. Դան. Է 10)*, իսկ այսօր մարդկան ազգ գերագոյն գտաւ, քան զհրեշտակս, քանզի նոքա ոչ իշխէին հայել ի փառս աստուածութեան Նորա, իսկ մարդիկք առին հրաման՝ ճաշել զՆա և մերձենալ ի նա:

Տասներորդ՝ զի սա է կատարումն ամենայն տնաւրէնութեանց Նորա և մարդեղութեանն և զկամս Հօրն կատարելոյ վասն մարգարէն ասէ. «**Ուրհնեսցի պսակ տարւոյ էաղրուրթեան էս Տէր**» *(Սաղմ. ԿԴ 12)*։ Յաղագս որոյ պարտ է երկրրպագանել անճառ մարդա-

սիրութեանն Նորա և Աստուածութեանն[1], յաղագս որոյ ասէ աւետարանիչն. «**Եւ ամբարձեալ զչեռս իւր աւրհնեաց զնոսա**» *(հմմտ. Ղուկ. ԻԴ 50)*։

Բայց նախ տեսցուք, թէ վասն է՞ր յետ Խ. (40) աւուր համբարձաւ Տէր մեր յերկինս՝ ըստ ասելոյն ի Գործքն. «**Իբրեւ կատարեաց Խ. (40) երեւել նոցա**» *(հմմտ. Գործք. Ա 3)*։

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ ասեն ոմանք, թէ ըստ չափոյ ամացն, որ եկեաց ի վերայ երկրի, այսինքն՝ Լ. (30) ամ և Գ. ու կէս (33), և նոյն քան |70ա| ժամաւ եկաց ի դժոխս, նմանապէս և յաւդտ եկեաց և Է. (7) աւր զէ. (7) աստեղեան խորանսն մաքրեաց, և ի կատարման սոցա համբարձաւ յերկինս:

Երկրորդ՝ զի Խ. (40) թիւն պատուելի էր ի սրբոցն առաջնոցն, որպէս Խ. (40) աւր պահեաց Աբրահամն, Մովսէս և Յեսու, վասն որոյ ի նոյն քանեաւն յամեաց յաւդտ, զի սրբեսցէ ի ճենճերից զոհից դիւաց, և ծառայեցուսցէ Ինքեան:

Երրորդ՝ ըստ բարոյական տեսութեանն, զի ի Խ. (40) օրն ապա հոգևորի[2] տղայն, վասն որոյ Տէրն յաւդտ կալով արժանի արար զնա միշտ գալ Հոգւոյն Սրբոյ, և ի նմա շրջել, իբր ի նախաստեղծումն, այսպէս և յայսմ հետէ ի վերայ աւազանին գոլովս հոգևորս կազմեսցէ:

Չորրորդ՝ ըստ այլաբանութեան, զի քառիցս կրկնեաց զԺ. (10)ն որ է կատարեալ թիւն, այսինքն՝ եցոյց մարդկային բնութեանս, որք ի տարերացս, թէ ճշմարիտ յարուցեալ է Տէրն մեր, և մեզ քաջալերեաց, իբր թէ զամենեսեանն նոյնպէս յարուցանեմ:

---

[1] G չիf *մերձենալ ի նա: Տասներորդ՝ զի սա է կատարումն... մարդասիրութեանն Նորա և աստուածութեանն*:

[2] G չիf *հոգևորի*:

Հինգերորդ՝ զի ցուցանէ, թէ յորժամ տարերքս զկատարումն առնուն աճելութեամբն իւրեանց, ապա զարժանատրսն վերին խորանին արժանատրեմ, որպէս յետ Խ. (40) աւուրն, ապա համբարձաւ:

Վեցերորդ՝ զի Խ. (40) Ը. (8) հինկ է, և Ե. (5) Ը. (8), որ ցուցանէ յամենելովն անդ, թէ զութ գլխաւոր իշխանս աւդային, որ զԵ. (5) զգայարանս ձեր խօտորէ ի չարիս ըմբռնեալ կործանեցի յերկրի, զայնոսիկ, զոր Եւագրիոս ասէ. *«Զիւրաքանչիւր զգայարանսն ութնապատիկ որոգայթիւք պաշարեն»։*

Եւթներորդ՝ զի յետ մկրտութեանն Խ. (40) օր եկաց Տէրն յանապատին, նոյնպէս աստ, զի ցուցանէ, թէ նոյնն եմ, որպէս և յառաջ, քան զչարչարանսն, ըստ այնմ. «**Շուշափեցէք զԻս եւ տեսէք մթոք, զի Ես նոյն եմ**» *(Համա. Զուկ. ԻԴ 39)։*

Ութերորդ՝ եցոյց Տէրն ի յօդս մնալով խորհրդաբար զչորս վերապատուեալ արանցն, որ յետ Նորա ընդրելոց էին, այսինքն՝ զառաքեալսն, զեկեղեցական դասն, զճգնաւորաց և զնահատակաց, որք իւրաքանչիւր դասուք կատարելապէս ընծայեցին զինքեանս Աստուծոյ:

Իններորդ՝ եկաց Տէրն յաւդս Խ. (40) օր և արար բազմապատիկ ճանապարհս մեզ յերկինս ելից, զոր օրինակ, եթէ թագաւոր ոք ընդ անկոխ ճանապարհ գնասցէ և ի մացառուտ վայրս, և հրամայիցէ հարթել և հաւասարել, զի դիւրագնաց լիցի, այսպէս՝ Տէրն զանկոխ ճանապարհն ի մարդկանէ հարթեալ հաւասարեաց, զի դիւրաւ ընթասցուք յերկինս, վասն որոյ բազում աւուրս համեաց, զի յերկար էր ճանապարհ:

Տասներորդ՝ զի ի ներքոյ երկնից, որպէս ասէ առաքեալ. «**Դ. (4) պատերազմիչէ են ընդ մեզ**» *(Համա. Յայտ. Յովհ. Ի. 7),* այսինքն՝ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և արեան, այլ՝ ընդ |70բ| իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսմիկ, և ընդ այս չարութեան, որ ի ներքոյ երկնից, որք բազմապատկաբար հենիւք ջանան կորուսանել զոգիս մարդկան, յաղագս որոյ

Տէրն նախընթաց եղև հոգւոց մարդկան և կործանեաց զբազմապատիկ հենս նոցա, և անցեալ ի ներքին կողմն վարագուրին ձայնէ զհետ Նորին հետոց գնալ:

Իսկ տեսցուք զերրորդ գլուխն, թէ վասն է՞ր ի Բեթանիայ և ի Ձիթենեաց լեռնէն համբարձաւ:

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի «*Բեթանիա*» տուն սգոյ թարգմանի, զոր ցուցանէ, թէ զսգոյ տունն Ադամայ փոխեաց յուրախութիւն յերկինս:

Երկրորդ՝ զի ի Բեթանիայ մերձ է ստորինս Երուսաղէմի՝ ըստ Աւետարանին, այսպէս և եցոյց, թէ ստորին աշխարհս, յորում եմք բնակեալ[1], մերձ է վերնոյն Երուսաղէմի, եթէ կամիք փութով ելանմք:

Երրորդ՝ զի ուր զչորեքաւրեայն յարոյց, անտի համբարձաւ, ցուցանէ թէ զդևք նիւթեա բնութիւնս Ադամայ յերկինս հանեմ, զոր աւրինակ Ղազարուն յարուցի:

Չորրորդ՝ զի ցուցանէ, թէ մինչև ի միւսանգամ գալուստն Իւր սուգ եթող մեզ՝ ըստ առաքելոյ, թէ՝ «**Որք կամին ապրուստ ծպաշրուբեամբ կալ, ի հալածանս կացցեն**» *(հմմտ. Ա՛ռ Բ Տիմ. Գ 12)*, և թէ՝ «**Աշխարհի ապր նեղութիւն ունիցիմք**» *(հմմտ. Ա՛ Կորնթ. Է 28)*:

Հինգերորդ՝ զի զսիրելին իւր, որ անդ մխիթարեսցէ ի համբարձմանն Իւր իսկ, ըստ այնմ, թէ՝ ընդէ՞ր ի Ձիթենեաց լեռնէն համբարձաւ:

Վեցերորդ՝ զի Տէրն նախ, քան զխաչելութիւնն միշտ անդ նստէր ուսուցանել զաշակերտսն, վասն որոյ յետ յարութեանն անդի համբարձաւ, զի ցուցցէ, թէ նոյն Տէրն է, որ միշտ անդ նստէր:

Եւթներորդ՝ զի ի լեառն հանելով եցոյց, թէ նախ հեռացիք յաշխարհական գործոց, իբրև զլեառնս, և ապա կարողանայք փոխիլ յիմանալի լեառն:

---

[1] G չիf *բնակեալ*:

Ութերորդ՝ զի լեառն Զիթենեաց իմանալ լեառն պարարտութեան, զի լեառն պարարտ է, նշանակէ մեզ զպարարտ ողորմութիւն աստուածային գթութեանցն, յորոց ցուցանէ անդ ի համբառնալ, ովն միշտ բաշխէ զողորմութիւն Իւր:

Իններորդ՝ զի ձիթենին նիւթ լուսոյ է, ուստի ցուցանէ մեզ, թէ որք նիւթ բարեգործութեան պատրաստեն, որ է լոյս, անդի ել և էջ իմ, որպէս ի Սինեա սիւն լուսոյ բորբոքէր:

Տասներորդ՝ զի ձիթենին մշտասաղարթ է, յաղագս որոյ ուսանիմք, թէ մշտնջենաւոր կամօք ի բարիս կատարեցէք, որպէս ինձ վայել է ելանել և մտանել:

Բեր տեսցուք և զչորրորդ գլուխն, թէ վասն է՞ր համբարձեալ ձեռօք յերկինս ել, ըստ այնմ. «Համբարձեալ զձեռս [եւ օրհնեաց]»։

Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի ցուցցէ, թէ ոչ միայն զաշ|**71ա**|ակերտսն աւրհնեց, այլև զհետևողս նոցա, և զյետոյ եկեալսն որ նոցին հետոցն հետևին, նաև օրհնէ զԿաթուղիկոս, վասն որոյ զսովորութիւն առեալ Եկեղեցի, ոչ օրհնէ քահանայապետն ի տեղի ինքեան, այլ՝ քահանայապետ որպէս ի հինն, այլ՝ ինքն փոխելով յաշխարհէ, աւրհնող փոխարինին կենդանի է, և միշտ աւրհնէ ի ձեռն այլ եպիսկոպոսաց:

Երկրորդ՝ ուսոյց մեզ, թէ այսպէս համբարձէք զձեռս ձեր սրբութեամբ առ Իս, և յորժամ յաղօթս կայք՝ որպէս ուսոյց մարգարէն. «Յանուն Քո համբարձի զձեռս իմ» *(Սաղմ. ԿԲ 5)*։

Երրորդ՝ զի որպէս Նա մշտատարած ձեռօք համբարձաւ, նոյնպէս ասէ՝ և դուք, որքան էք ի մարմնի, անդադարապէս յաղօթս կացէք, որպէս ասէր. «Յամենայն ժամ աղօթս արարէք» *(Հմմտ. Ղուկ. ԻԸ 36)*։

Չորրորդ՝ եցոյց, թէ զաղաչանս ձեր և բարիոք գնացս Հաւր Իմ ընձայ մատուցանեմ, որպէս ի սկուտեղ եդեալ ձեռին իմոյ, որով հոտոտեսցի ի հոտ անուշ:

Հինգերորդ՝ եցոյց, թէ յաջ և յահեակ տարածեալ եմ զձեռս, որպէս զի պահեցից զձեզ յաջ և ահեակ կորստենէ, որ ի ձեռն բանսարկուին:

Վեցերորդ՝ տարածեալ ձեռօք եցոյց, թէ միշտ կարօտ եմ ձեզ գիրկս արկանելոյ, որք ի մէջ հետևողք և ընթանայք զհետ կամաց Իմոց:

Եւթներորդ՝ եցոյց համբարձեալ[1] ձեռօք զաստի կենաց վարիլս, որ խառնէ ողորմութեամբ և արդարութեամբ դատաստանն, զի երբեմն ողորմի զղջացելոցն և անզղջիցն պատիժս տայ և զառհաւատչեայն տանջանացն նմա երևեցուցանէ:

Ութերորդ՝ կրկին ձեռօք համբառնալն ուսոյց, թէ Բ. (2) են ձեռք սատանայի, այսինքն՝ բռնութեան և միւսն խաբէութեանն, զերկոսեանն կապեալ եմ, վասն որոյ ոչ կարէ զձեզ կորուսանել: Արդ՝ պատրաստեցարուք ոչ գնալ կամաւ ի կորուստն յաւիտենից:

Իններորդ՝ ցուցանէ, թէ զիոգիս մարդկան, զոր ազատեցի ի դժոխոցն՝ զարդարս և զմեղաւորս[2], վերաբերեալ բազկաւ հանեմ յերկնից բնակութիւնն:

Տասներորդ՝ յայտնեաց մեզ զխորհուրդ մարմնոյ և արեանն Իւրոյ պատարագելոյ, թէ միշտ ընդունիմ զայն, որ զԻմն Ինձ մատուցանէք սրբութեամբ, այսինքն՝ զբաշխումն մարմնոյ և արեանն Իւրոյ, և առնեմ քաւութիւն յանցանաց ձերոց:

Իմասցուք այժմ զԵ. (5) գլուխն, թէ զի՞նչ է զանազանութիւն բայիցս այսոցիկ, որ ասի. «*սլացաւ*», «*վերացաւ*», «*համբարձաւ*», «*փոխեցաւ*», «*թռեաւ*»:

Գիտելի է, զի սլանալն թռչնոյ է ընդ օդս, որպէս արծուի սլանայ ըմբռնել յորս, իսկ թռչելն մանր թռչնոյ է, որ աշխատութեամբ ընթանայ, **|71բ|** իսկ փոխիլն այն է, որ ի ձեռն այլոց տարուի, որպէս Սուրբ Կոյսն փոխեցաւ յապականացութենէ աստի յանապա-

---

[1] G չիք *համբարձեալ*:
[2] G չիք *զարդարս և զմեղաւորս*:

կան կեանքն ի ձեռն Որդւոյ իւրոյ: Նմանապէս և զսիրեցեալ աշակերտն Յովհաննէս, քանզի սոքա ընկալան զյարութիւն մարմնոյ, վասն օրինակ մեզ լինելոյ: Իսկ բարձրացաւ զանտանելի բարձրութիւնն նշանակէ, որ Տէր մեր եմուտ ի ներքոյ կողմ վարագուրին: Իսկ համբարձեալն զինքնակար իշխանութիւն յայտնեաց, որ իւրովի համբարձաւ յերկինս, և ոչ կարօտացաւ այլոց օգնականութեան: Իսկ երբեմն սոքա ամենեքեան ակնարկեն առ Տէրն, որպէս մարգարէն ասէ. «**Թռեաւ ալեցաւ ի թեւս հողմոյ**» *(հմմտ. Սաղմ. ԺԷ 11)*: Այս զմարդեղութիւնն յայտնէ, որ մարմնովն ել, որպէս զԱստուած:

Նմանապէս և փոխիլն, որպէս ասէ Աւետարանիչն. «**Զի փոխեսցի յաշխարհէ սոպի առ Հայր**» *(Յովհ. ԺԳ 1)*: Այս զգալի տեսութեանս զանյայտումն ասէ, ըստ յորում. «**Այժմ պեսանեմք զնա զգալի կերպարանաւ, այլ՝ իմանալաբար եւ հանդիպի**»:

Իսկ զվերացումն Տեառն մի այլապէս իմասցիս, որպէս թէ Եղիայ վերացաւ և այլ ոչ է առ մեզ, այլ՝ զոր աւրինակ Աստուած ընդ ամենայն տեղիս է, այլ վասն ի մարմին միաւորելոյն «*գալ*» ասի Նմա: Այսպէս և զգալն իմայ, վասն անյայտ լինելոյն ի մէնջ «*վերանալն*» ասի, և ոչ թէ Աստուած միայն յերկինս է այլ ընդ ամենայն տեղիս, ըստ մարգարէին, որպէս ասէ իմաստունն *(հմմտ. Սաղմ. ՃԲ 22, հմմտ. Լուսկ. ԺԵ 3)*:

Իսկ զի ասեն. «**Նոպաւ ընդ աջմէ Հօր**» *(Մարկ. ԺԶ 19)*, ըստ Աւետարանչին Մարկոսի, և մարգարէին՝ «**Նիոպ ընդ աջմէ Իմմէ, [մինչեւ եդից զքշնամիս Քո պարարանդան ոտից Քոց]**» *(Սաղմ. ՃԹ 1)*:

Արդ՝ «*աջ*» ասի նմա, որ է մարմին և պարունակելի և երևի ահեակ:

Իսկ զի՞ Հայր Աստուած անմարմին է, զի՞արդ ասի «*աջ*» և «*ահեակ*» Նմա, որ անպարունակելի է բնութիւն, և զայս որպէս իմասցուք:

Գիտելի է, նախ՝ «*աջ*» ասի Աստուծոյ անեղականն փառք, ըստ որում եղականքս ամենայն ահեակք են Նմա:

Երկրորդ՝ զի մինչև ցայն վայր Բանն Աստուած մարմնով ի չարչարանսն էր, իսկ ի չարչարանացն ի հանգիստ փոխեալ «*աջ*» ասի, ըստ որում հանգչի ի քերովբէս:

Երրորդ՝ զկամս Հօր կատարեաց Տէրն մեր, որ էր փրկութիւն մարդկան, այս «*աջ*» ասի ի Սուրբ Գրոց, ըստ այնմ. «**Փրկեաց նմա աջ իւր**» *(Սաղմ. ՂԼ 1)*, և թէ. «**Աջ Տեառն արար զօրութիւն**» *(Սաղմ. ՃԺԼ 16)*, որ է զօրութիւն Աստուծոյ, վասն որոյ ընդ աջմէ ասէ, որք զդժոխսն շինեն «*ձախ*» ասին, և «**Լուանց Նորա եղեն,**- ասէ աւետարանիչն,- **[եւ ոչինչ՝ որ ինչ եղ եւ ն]**» *(Հմմտ. Յովհ. Ա 3)*:

Չորրորդ՝ երկիր գալ և մարդ լինել «*ձախ*» կոչի, վասն որոյ յերկրէ համբառնալն՝ «*աջ*» ասի և մարմնով, որպէս անմարմին ներգործել:

Հինգերորդ՝ մարմնական սրբութիւնսն զոր գործեաց Տէրն մեր ի մէնջ մեղաւորաց էր, վասն որոյ համբառնալն ի մէջ արդարութեանն Աստուծոյ ասի նստիլ, որ է աջ Նորին[1]:

Իսկ զի Ստեփաննոս ասէ. «**Տեսանեմ զՅիսուս, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ**» *(Հմմտ. Գործք Լ 55)*, այս զտեսութեամբ ընդունելն ասէ, Աստուծոյ զնահատակսն նշանակէ:

Եւ դարձեալ՝ զաւգնական լի|**72ա**|նիլն ի հանդէս պատերազմին սրբոցն նշանակէ: Եւ զմարմնացեալ բան կանգնելոյն և նստելոյն գտցես յառաջիկայսդ ի Գիրս Գործոցն[2]:

Իսկ զի ասէ Պօղոս. «**Բնակեալ է ի լոյս անմատոյց**» *(Հմմտ. Ա Ա Տիմ. Զ 16)*, և ի միատեղն, թէ. «**Եմուտ ի ներքին կողմն վարագուրին**» *(Հմմտ. Ա Եբր. Զ 19)*: Եւ մարգարէն ասէ. «**Եդ զխաւարն ծածկոյթ իւր**» *(Սաղմ. ԺԼ 12)*, և Աւետարանիչն՝ «**Ամբն կալաւ զնա յաչաց նոցա**»

---

[1] G չhf *Հինգերորդ՝ մարմնական սրբութիւնսն զոր գործեաց Տէրն մեր ի մէնջ մեղաւորաց էր, վասն որոյ համբառնալն ի մէջ արդարութեանն Աստուծոյ ասի նստիլ, որ է աջ նորին:*

[2] G չhf *Եւ զմարմնացեալ բան կանգնելոյն և նստելոյն գտցես յառաջիկայսդ ի Գիրս Գործոցն:*

*(Գործք Ա. 9)*, և Մարկոսն ասէ. «**Նոպաւ ընդ աջմէ Հօր**» *(հմմտ. Մարկ. ԺԶ 19)*, նոյնպէս և Ստեփաննոս: Զի՞արդ իմասցուք զսոսա:

Գիտելի է, զի նախ՝ ամենեքան սոքա զանհաս բարձրութիւն նշանակեն, որպէս զի լոյսն ոչ թողու մերձենալ, նոյնպէս և խաւարն ոչ թողու տեսանել զնա: Նոյնպէս և «*վարագոյրն*» և «*ամպն*», զի Աստուածութեանն փառքն հեռի է յեղականացս, վասն որոյ սոքա ամենեքան զանյայտութիւնն նշանակեն:

Իսկ երկրորդ՝ ցուցանէ, թէ ոք մեղօք կամի մերձենալ յԱստուած, նմանապէս և մէգ և խաւարն է տեղի, և վարագոյր է ընդ դէմ, և ոչ կարէ տեսնել զԱստուած: Իսկ արդարոցն լոյս է անմատոյց և աջմէ են Հօր, ըստ այնմ. «**Կայցուսցէ զաւդիան յաջմէ իւրմէ**» *(հմմտ. Մաթ. ԻԵ 33)*:

Դարձեալ երրորդ՝ իւրաքանչիւր ոք ի սոցանէ իր ինչ յայտնէ զիւր տեղիսն, զի լոյսն անմատոյց զանճառ փառս աստուածութեանն ասէ, ուր անմտանելին է եղակաց, հրեշտակաց և մարդկան: Իսկ վարագոյր լուսեղէն երկնիցն ասէ, որով բաժանի յայսմ աշխարհէ բնակութիւն իմանալեացն: Իսկ «*խաւարն ծածկոյթ*» զզաւրութիւն ասէ, զի ահեղ լուսոյ նորա կուրանան ամենայն տեսութիւնք, զոր օրինակ ոք յանդգնի հայել արեգակն և առժամայն կուրանայ: Իսկ «*ամպն*»՝ զնշան կրկնակի Գալստեանն Իւր յայտնէ, ըստ որում՝ գալոց է ընդ ամբս երկնից: Իսկ յաջմէն Հօր զսեփհական տեղին ասէ, ուր էր անմարմին: Եւ արդ՝ նոյն մարմնովն է յայն տեղի, այսինքն՝ ի ծոց հօր բնակեալ, ըստ այնմ. «**Միածինն, որ ի ծոց Հօր, պատմեաց**» *(հմմտ. Յովհ. Ա 18)*:

Արդ՝ յայտ եղև ասութիւնքս այսոքիւք:

Յետ սոցա տեսցուք և զվեցերորդ գլուխն, թէ զի՞նչ օրինակաւ ընկալան զՆա վերին զուարթունքն:

Արդ՝ ըստ օրինակի թագաւորաց մարմնոյ, որ գալ ի պատերազմէ, բազում եղանակաւ ցուցից զընդառաջ լինել Տեառն, որպէս մարգարէն ասէ. «**Եկ ի բարձունս եւ գերեցայ զգերութիւնն**»

*(Մտթ. Բ. ԻԸ 5)*։ Եւ Տէրն նախ զիզօրն կապիցէ և ապա զտունն նորա աւր հարկանիցէ և թէ նման ողբ եղերուք մարդկան, որք ակն ունին Տեառնից, թէ երբ դառնայցէ։

Նախ՝ յորժամ թագաւորք յորժամ ի պատերազմ երթան, մասն ինչ ի զօրացն հետ ինքեան տանին և մասն ինչ ի քաղաքն թողուն։ |72բ| Այսպէս և Տէրն մեր, ի գալն և ի պատերազմելն սատանայի, սուղ ինչ ի դասուցն ներքնոց ընդ Իւր էառ, որք տեղեակ էին Նորա տնօրէնութեանն, որպէս ասէ. «**Հրեշտակք մատեան եւ պաշտէին զՆա**» *(Մատթ. Դ 11)*։

Երկրորդ՝ զի խորհուրդս Իւր արքայ ումէք ոչ յայտնէ, մինչև վճարի, որպէս ասէ ի Տուբիթ. «**Զխորհուրդ արքայի ծածկել արժան է**» *(Հմմտ. Յոբ ԺԲ 11)*, այսպէս և Տէր մեր, ոչ ումեք յայտնեաց զխորհուրդ մարդանալոյն վերին դասուցն, վասն որոյ անգիտացեալ հարցանէին. «**Ո՞վ է Սա թագաւոր փառաց**» *(Սաղմ. ԻԳ 8, 10)*։

Երրորդ՝ զի թագաւորք ծածկեն զգնացս՝ թագնաբար ընթանալով, զի թշնամին տեսեալ փախիցէ, այսպէս և Տէր մեր, ծածկեաց մարմնական գնացիւք զաստուածութիւն Իւր, այսինքն՝ ուտելով, ըմպելով և ննջելով, մինչև ի ժամ խաչին, զոր տեսեալ սատանայ այնպէս կարծեաց, որպէս թէ սոսկ մարդ ոք և կործանեցաւ ի Տեառնէ, վասն որոյ ասէ առաքեալ. «**Եթէ էր ծանուցեալ, ո՛չ արդեաւք զՏէրն փառաց ի խաչ հանէին**» *(Ա՛ռ Ա՛ Կորնթ. Բ 8)*։

Չորրորդ՝ զի յորժամ զթշնամին ըմբռնեն թագաւորք, զգերեալսն ի նոցանէ ազատեն, այսպէս և Տէր զդրունս դժոխոց խորտակեաց, որ է բռնութիւն սատանայի, և ազատեաց զգերեալսն ի նմանէ զարդարս և զմեղաւորս, ըստ որում ասէ[1]. «**Ա՛ռ աւար բաշխեաց եւ վակեաց զհզաւրս յաթոռոց**» *(Հմմտ. Ղուկ. Ա՛ 52)*։

Հինգերորդ՝ ի դառնալն թագաւորաց յաղթութեամբ ի պատերազմէ աւետաւորք յառաջ ընթանան, այսպէս և ի յարութեան

[1] G չիf *զարդարս և զմեղաւորս, ըստ որում ասէ։*

Տեառն, որով յաղթեաց մահու, եղեն աւետաւորք կանանց հրեշտակք, ըստ այնմ. «**Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. [չէ ասդ, այլ՝ յարեաւ]**» *(Ղուկ. ԻԳ. 5–6)*։

Վեցերորդ՝ զի քաջ պատերազմող վերս առնու յանձն, վասն խիստ պատերազմի, այսպէս և Տէր մեր զխոցումն ընկալաւ ի խաչին, և զբևեռումն, որ և խոցեաց զսատանայ, և կորզեաց ի միջոյ ժանեաց զստեղծուածս իւր։

Եւթներորդ՝ զի թագիւ պսակի արքայ յետ յաղթութեան և կարմրացեալ գունով զգեստաւորի, այսպէս և Տէր զփուշ պսակն ի գլուխ Իւր ընկալաւ, որ և զպսակ լուսոյ շնորհեաց մարդկայինս բնութեանս, որպէս ասէ յԵրգսն. «**Տեսէք զՍողոմոն արքայ, զոր պսակեաց մայր իւր յաւուր փեսայութեան [իւրոյ]**» *(Հմմտ. Երգ. Գ. 11)*, այսինքն՝ ի խաչին, այլև արեամբ կարմրացեալ, վասն որոյ հարցանէին վերինքն. «**Ընդէ՞ր կարմիր են յորչէ Քո**» *(Հմմտ. Եսայի ԿԳ. 2)*։

Ութերորդ՝ ի դառնալն արքայի յաղթութեամբ, ընդ յառաջ ելանելն ծառայք նորա և ուրախանան, այսպէս և ի յարութեանն Տեառն, աշակերտքն Տեառն ընդ առաջ ընթացան խնդութեամբ, այլև հրեշտակք, յորժամ տեսին յարուցեալ, փառաւք վերացեալ դէմ ընդ յառաջ Նորա ընթացան, հազարք հազարաց **|73ա|** փառս մատուցին Նմա։

Իններորդ՝ զի հասեալ ի դուռն պաղատին արքայ, սպասաւորք բախեն զդրունս և գովեն զքաջութիւնս նորա, նմանապէս Տէր մեր ի հասանել յիմանալի բնակութիւնն, ասէին ներքինքն. «**Համբարձէք [իշխանք] եւ մտցէ թագաւոր փ[առաց]**» *(Հմմտ. Սաղմ. ԻԳ. 7, 9)*, վասն որոյ հակառակեալ ասէին. «**Ո՞վ է Սա թագաւոր փառաց**» *(Սաղմ. ԻԳ. 8, 10)*, և նոքա պատասխանեն. «**Տէր զօրութեանց, Սա [Ինքն] է թագաւոր փառաց**» *(Հմմտ. Սաղմ. ԻԳ. 10)*։

Տասներորդ՝ զի մտեալ թագաւորն ի գահոյս իւր բազմի և հրամայէ ռոճիկս բաշխել կարաւտելոց, վասն յաղթութեան իւրոյ, այսպէս և Տէր մեր այսօր նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բար-

ձունս և բաշխեաց զպարգևս Իւր, այսինքն՝ զՀոգին Սուրբ առաքելոցն և ամենայն հաւատացելոց, վասն որոյ ասէր. «**Նստարուք ի քաղաքն Երուսաղէմ, մինչ եւ զգեցուցուք զօրութիւն ի բարձանէ**» *(հմմտ. Ղուկ. ԻԴ 49)*, վասն որոյ և մեք ընդ վերին զաւրսն փառս ի վեր առաքեսցուք՝ ասելով. Փառք Քեզ Տէր և ամենազօր կարողութեան Քո, և ըստ առաքելոցն պատրաստեսցուք զանձինս, զի Գալըստեան Հոգւոյն Սրբոց և նորին շնորհացն արժանաւորեսցուք, շնորհօք Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի, որով և ընդ որում Հաւր միանգամայն և Հոգւոյն Սրբոյ վայել է փառք յաւիտեանս. Ամէն:

***Հարցումն.*** Զի՞նչ է, որ ասէ Ղուկաս. «**Գալիլեացիքն, զորոց արիւնն խառնեաց Պիղատոս ի զոհս նոցա**» *(հմմտ. Ղուկ. ԺԳ 1)*:

***Պատասխան.*** Գալիլեացիք նոքա են, որք կամակից եղեն գլխատմանն Յովհաննու, յորժամ եկին Երուսաղէմ ի տօն զոհել, Պիղատոս դատաւորն հրէաստանի եղեն զնոսա և զարիւն ընդ իւրեանց զոհսն խառնեաց, զի Յովհաննէս յիշխանութենէն Պիղատոսի էր և առանց նորա հարցանելոյն սպանին, վրէժխնդիր եղև արեան նորա:

Իսկ ութուտասանքն վերակացուք էին կոտորուածոյ մանկանցն Բեթլէհէմի և ի դառնալն կոտորածէն առ ընթեր աշտարակին նստան և փլաւ աշտարակն ի վերայ նոցա, զայս գիտելով Տէրն ասաց. «**Մեղաւորք էին**» *(հմմտ. Ղուկ. ԺԳ 2)*, սակայն նոքա մարդիկք սպանին և դուք հանդերձեալ էք տիրասպան լինիլ, թէ չապաշաւէք նոյնպէս ըմբռնիք յորոգայթ Տիտոսի և Վէսպիանոսի, զառհաւատչեայ զյաւիտենական տանջանաց: Տասն ազգ սքանչելիք եղև մինչև ի գալն Քրիստոսի Խ. (40) օրեա ի տաճարն:

Նախ՝ անսերմն յղիութիւնն:

Երկրորդ՝ ըստ մտանել յարգանդ բանին շնչաւորելն և գտանիլն որպէս Խ. (40) օրեա մանուկն:

Երրորդ՝ Յովաննու խայտալն:

Չորրորդ՝ հովուաց և մոգուց գալն:

Հիներորդ՝ Սիմէոնի գգուելն և զնա յարձակելն:

Վեցերորդ՝ Եգիպոսի կռոցն խորտակելն:

Յոթերորդ՝ ԲԺ. (12) ամեա վարդապետելն:

Ութերորդ՝ Հոգւոյն էջ ի Յորդանանն:

Իններորդ՝ յաղթելն փորձչին:

Տասներորդ՝ դուռն տաճարին, որ ինքնին բացաւ Նմա:

***Հարցումն.*** Զի՞ սադուկեցիքն ոչ հաւատան Յարութեան, քանզի ասեն թէ զիա՞րդ յառնէ յղացեալ մարմին և զի դժվարին է հաւատալոյ, զի փտեալ և կորեալ փոշիքն և խառնեալ ընդ յիրարս, որպէս որոշեսցին իւրաքանչիւրքն:

***Պատասխան.*** Գիտելի է, զի բազում կերպիւ հաստատի յարութիւն հղացեալ մարմնոյս:

Նախ՝ ի բնութիւնէս մերմէ յայտնի է, զի ամենայն բարի կատարեալ է, այսինքն՝ անսկիզբն և անվախճան: Իսկ չարն վախճան ունի և սկիզբն, և է սա ի մէջ բարւոյն, զորօրինակ ստուեր ինչ ի մէջ արեգակին լուսոյն անկեալ լինի յամպոյ և յամենայն կողմանց լոյս:

Արդ՝ եթէ ոք մտեալ ի շուքն և ելեալ ի լուսոյն, մտեալ դարձեալ առ լոյսն ել, այսպէս մարդկային բնութիւնս միշտ կենդանութեամբ էր և անկաւ ի Նեռն մեղաց ի ներքոյ ստուերի մահու: Արդ՝ յորժամ կատարի մահւամբ ստուերն սկիզբն է ելանելոյն ի մահուանէ ի կենդանութիւն, զի վճարեաց զպարտս մեղացն, ապա և յառնէ ի մեռելոց:

Երկրորդ՝ յայտ է ի բուսաց և ի տնկոց, զի նոքա մեռանին ի ձմերայնի և յառնեն ի գարունն, արդ նոքա, որ անբանք են և անկենդանք և անզգայք, մեռնին և բուսանին, ապա և բանական մարդն յառնէ ի մեռելոց, զի բանական է և կենդանի:

Երրորդ՝ յայտ է յօրինականաց, զոր Քրիստոս յարոյց ի մեռելոց զԳ. (3)իս մեռեալս, այլև Եղիայ և Եղիսէ է յարուցին նոյնպէս և

առաքեալքն զարս և զկանայս յարուցին, ուստի յայտնապէս երևեցաւ, զի զամենայն հասակ յարուցանէ ի մեռելոց:

Չորրորդ՝ յայտ է ի յաւատացելոց, քանզի, որ հաւատոյ, թէ Աստուած է, հաւատասցէ, թէ է յարութիւն մեռելոց, քանզի Աստուած յոչնչէ գոյացոյց զմարդն, արդ յարուցանելն ի մեռելոց դիւրին է, քան զստեղծանելն, ապա և Նա, որ ստեղծն յոչնչէ, կարող է յարուցանել ի փոշոյ:

Հինգերորդ՝ յայտ է ի վկայութեանց աստուածային գրոց, քանզի ասէ մարգարէն. «**Յարիցեն մեռեալք՝ եւ կանգնեսցի՛ն, որ իցէն ի գերեզմանս**» *(Եսայի Իզ 19)*, և Տէր ասէ . «**Ամենեքին, որ ի գերեզմանս կայցեն՝ լուիցե՛ն ձայն Նորա**» *(Յովհ. Ե 28)*, *և առաքեալ, թէ.* «**Զի ինքն Տէր հրամանաւ ի ձայն հրեշտակապետի, եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ մեռեալք ի Քրիստոս յարիցե՛ն յառաջագոյն**» *(Ա՛ռ Թեսաղ. Դ 15)*:

Վեցերորդ՝ յայտ է ի յուսոյ առաջն սրբոց, քանզի ասէ մարգարէն. «**Հաւատացի զէր զքարոզիլն զեառն յերկիր**» *(Սաղ. Իզ 13)*, այսպէս և Ենովս, որ յուսացաւ, թէ գոյ կարողութիւն ի յԱստուծոյ յարուցանել զյղացեալ մարմինս, այսպէս և ամենայն սուրբք, որք չարչարեցան այսու կենաւք, որպէս առաքեալն վկայէ. «**Կարաւաղեա՛լք, չարչարեա՛լք, նեղեա՛լք, զորս ոչ արժէ աշխարհս**» *(Ա՛ռ Եբր. ԺԱ 37)* և այս վասն այն, զի լաւագոյն կենաց հանդիպեսցեն, ապա և յառնեն ի մեռելոց:

Եւթներորդ՝ յայտ է ի նոյն ինքն ի Քրիստոսէ, որ յարեաւն ի մեռելոց և եղև առաջնապտուղ ննջեցելոց, որպէս ասէ առաքեալն. «**Եւ զմեզ ըստ նմին օրինակի յարուսցէ ի մեռելոց**» *(Բ Կորնթ. Դ 14)*:

Ութերորդ՝ դեղն պատասխանի տայ հիւանդութեանն, որպէս առաջն Ադամաւն ամենքն մեռան, սոյնպէս և Բ. (2) երորդ Ադամաւն ամենքն յարիցուք, քանզի մեղքն այնչափ զօրեաց, որ զամենայն բնութիւնս քարշեաց ի մահ, որչափ ևս արդարութիւնն Քրիստոսի զօրեսցէ զամենայն բնութիւնս կենդանացուցանել:

Իններորդ՝ յայտ է ի յարդարութեանցն Աստուծոյ, քանզի օրինադրեց. «**Ապամ ընդ ապամն**» *(Եզկ ԻԼ 24)* և «**Խարան ընդ խարանի**» *(Եզկ ԻԼ 25)*, իսկ ի յայս կեանքս գթութիւն եցոյց Աստուած և ոչ հատոյց արդարութեամբ, զի պատճառն գոյր ի միջի միմիանս մեղանչական, ապա և յարուցանէ զմեռեալս, զի հատուցէ իւրաքանչիւրոցն արդարութեամբ, ըստ գործոց իւրոց:

Տասներորդ՝ յայտ է ի ստեղծմանէ մարդոյն, քանզի Աստուած զմարդն վասն անկելոց դասուցն ստեղծ, զի նովաւ լցուսցէ զթերութիւն նոցա, արդ եթէ ոչ յառնեն, զիա՞րդ լցցի պակասութիւնն այն: Ուստի յայտ է, զի կատարեալ կամացն աստուածային, ապա և յարուցին մեռեալք՝ անձանց մաքրութիւն, անախտութիւն մարմնոյ, գնացք հեզութեամբ, ձայն չափաւոր, բան անխռով, կերակուր և ըմպել ի բաւական, առաջի ծերոց՝ լռութիւն, առաջի իմաստնոց՝ լսողութիւն, առ վերակացուս՝ հնազանդս, խրատ անկեղծաւոր, սակաւ խօսել և յոլով իմանալ, մի՛ յաճախել ի բանս, մի՛ յանդգնիլ ի ծաղրս, ամոթխածութեամբ զարդարեալ, ընդ անպարկեշտ կանայս ամենևին մի խոսել՝ ի վայր ունելով զակն, ի վեր զմիտսն, փախչե՛լ ի հակառակութենէ, մի՛ իշխանաբար ուսուցանել, մի՛ ընդունել յամենեցունց հեշտաբար զպատիւս:

Եւ որ կարողն է ի ձենջ փոխ տալ ընկերին, մի՛ դարձեալ պահանջեսցէ զկշիռն, այլ Աստուծոյ վարձայատոյցն ակն ունելով և յաւիտենական կենացն հատուցումն ի Քրիստոս Յիսուս Տէր մեր: Խնդրուածք, զոր կամիմք յԱստուծոյ առնուլ բազում կերպիւ զանազանի ի մարդկանէ, զոր խնդրեմք: Զի մեք բազմաց ոչ տամք:

Նախ՝ թէ թշնամի ոք խնդրէ ի մէնջ ոչ տամք նմայ:

Երկրորդ՝ թէ սիրելի և անժամանակ խնդրէ, ոչ տամք զխնդիրն:

Երրորդ՝ թէ բազում ինչ խնդրեն աւելի քան զկարն մեր ո՛չ տամք:

Չորրորդ՝ թէ բազում անգամ խնդրեն, ձանձրանամք և ոչ տամք:

Հինգերորդ՝ թէ զայն ինչ խնդրեն, զոր ոչ ունիմք, զիա՞րդ տացուք:

Վեցերորդ՝ թէ զայն խնդրեն, զոր ոչ կարեմք տալ, որպէս թէ ոք խնդրէ զորդին մեր ի սպանումն, ո՛չ տամք:

Եւթերորդ՝ թէ զմահ արարն խնդեն ո՛չ տամք, որպէս որդի մեր խնդրէ սուր, ոչ տամք, զի վնասակար է նորա:

Ութերորդ՝ թէ կեղծաւորութեամբ խնդրեն, ո՛չ տամք:

Իններորդ՝ թէ անծանօթ ոք խնդրէ, ո՛չ տամք:

Տասներորդ՝ թէ ոչ գիտեմք երախտիս ինչ ի մարդկանէ, սակաւ տամք, թէ խնդրեն:

Արդ՝ Աստուած ոչ է այսպէս, այլ ամենայն սոցա զհակառակն առնէ, զի առատ է բնութեամբ և անպակաս ի բարութենէ[1]:

[1] M, հավելյալ ունի թ. 226ա-227բ՝ *«Հարցումն. Զի՞նչ է, որ ասէ Ղուկաս. «Գալիլեացիքն … առատ է բնութեամբ և անպակաս ի բարութենէ»:*

ՄՄ ձեռ. 5232, թերթ 57ա

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

## ՁԵՌԱԳՐԵՐ

**ՄՄ Հմր 20**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, Սուչովա՞, Լվո՞վ: ԳՐԻՉ՝ Սիմէոն եպս. Օլախաց երկրի և Յովանէս երէց (1497 թ.), Ղազար (1614-ից առա՞ջ), Թորոս դպիր (1614 թ.՞), Նիկոլ Լվոցի (1614 թ.), ԹԵՐԹ՝ 408:

**ՄՄ Հմր 425**, ԳԱՆՁԱՐԱՆ (բաղկացած երկու ձեռագրից): ՁԵՌԱԳԻՐ Ա., Արծկէ, 1466 թ.: ԳՐԻՉ՝ Ատոմ քհյ.: ՍՏԱՑՈՂ՝ խոջայ Յովանէս, ԹԵՐԹ՝ 354:

**ՄՄ Հմր 474**, ԳԱՆՁԱՐԱՆ, 1474 թ.: ԳՐԻՉ՝ Ալեքսիանոս: ԹԵՐԹ՝ 335:

**ՄՄ Հմր 969**, ԺՈՂՈՎԱԾՈՅ (բաղկացած երկու ձեռագրից): ՁԵՌԱԳԻՐ Ա., Կոստանդնուպոլիս, ԺԸ դար, ՍՏԱՑՈՂ՝ Իսահակ պատրիարք (Սահակ-Ապուչեխցի՝ 1707, 1708-1714), ԹԵՐԹ՝ 237:

**ՄՄ Հմր 1130**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, ԺԵ դար: ԳՐԻՉ՝ Պետրոս, Յովանէ՞ս, ՍՏԱ-ՑՈՂ՝ Վարդան վրդ., ԹԵՐԹ՝ 434:

**ՄՄ Հմր 1344**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, Արղնի, 1693 թ.: ԳՐԻՉ՝ Պօղոս Ամթեցի: ՍՏԱ-ՑՈՂ՝ Իսահակ վրդ.: ԹԵՐԹ՝ 329:

**ՄՄ Հմր 1345**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, Անդրիանուպոլիս, 1697 թ.: ԳՐԻՉ՝ Մինաս երէց: ՍՏԱՑՈՂ՝ Եփրեմ պատրիարք: ԹԵՐԹ՝ 355:

**ՄՄ Հմր 1387**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, Պրուսա, Անդրիանուպոլիս, 1733-1735 թթ.: ԳՐԻՉ՝ Սարգիս: ԹԵՐԹ՝ 203:

**ՄՄ Հմր 1388**, ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒ-ԿԱՍՈՒ, ԺԸ դար: ԹԵՐԹ՝ 132:

**ՄՄ Հմր 1389**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, ԺԷ դար (1654-ից առաջ): ԹԵՐԹ՝ 369:

**ՄՄ Հմր 1880**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, Երուսաղէմ, 1786-1787 թ.: ԳՐԻՉ՝ Ղուկիա-նոս: ԹԵՐԹ՝ 473:

**ՄՄ Հմր 2219**, ՔԱՐՈԶԳԻՐՔ, ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, էջնիածին, 1789-90: ԳՐԻՉ՝ Զաքարիա սրկ.: ԹԵՐԹ՝ 329:

**ՄՄ Հմր 2229**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, 1689թ.: ԳՐԻՉ, ԾԱՂԿՈՂ՝ Մինաս էտրէնէցի, ՍՏԱՅՈՂ՝ Եփրեմ վրդ.: ԹԵՐԹ՝ 356:

**ՄՄ Հմր 2518**, ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԺԵ դ.: ԹԵՐԹ՝ 360:

**ՄՄ Հմր 2519**, Ապրակունեաց վանք (Երնջակ), 1391թ., ԳՐԻՉ՝ Մատթէոս Ջուղայեցի, ԹԵՐԹ՝ 295:

**ՄՄ Հմր 3939**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, ԺԵ դար: ԳՐԻՉ՝ Դիմեա: ԹԵՐԹ՝ 380:

**ՄՄ Հմր 4985**, Ս. Կարապետի վանք (Մուշ), 1738թ.: ԳՐԻՉ՝ Մկրտիչ, ՍՏԱՅՈՂ՝ Ղազար վրդ.: ԹԵՐԹ՝ 143:

**ՄՄ Հմր 5232**, ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ, Մատրասայ գիւղ (Շիրվան), 1403թ.: ԳՐԻՉ՝ Թումայ դպիր Թաւրիզեցի, ՍՏԱՅՈՂ՝ Ստեփաննոս վրդ.: ԹԵՐԹ՝ 251:

**ՄՄ Հմր 5502**, ԺՈՂՈՎԱԾՈՅ, ԺԶ դար, ԳՐԻՉ՝ Վարդան Կաֆացի, անանուն, ՍՏԱՅՈՂ՝ Ստեփաննոս վրդ.: ԹԵՐԹ՝ 421:

**ՄՄ Հմր 5769**, ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ, ՀԱՒԱՔՈՒՄՆ Ի ՂՈՒԿԱՍՈՒ ԳԼԽՈՅ, ԺԸ դար, ԹԵՐԹ՝ 96:

**ՄՄ Հմր 8444**, ԺՈՂՈՎԱԾՈՅ (բաղկացած տարբեր ձեռագրերից), Ասպահան (Գ), 1651 թ., 1695 թ., 1731-1735 թթ.: ԳՐԻՉ՝ Յովհաննէս (Ա), Մովսէս Ջուղայեցի (Բ), Յակոբ Շամախեցի, Մակար դպիր (Գ): ՍՏԱՂՈՂ՝ Յակոբ Շամախեցի (Գ), ԹԵՐԹ՝ 536:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈԴՎԱԾՆԵՐ

**Արմեն Տեր-Ստեփանյան, եզնիկ եպս. Պետրոսյան**, *Ս. Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն*, Երևան, 2002:

**Բարսեղ վրդ. Սարգսեան**, *Սրբոյն հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք,* Վենետիկ, 1907:

**Գարեգին Զարպհանալեան**, *Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց*, Վենետիկ, 1878:

**Գարեգին Զարպհանալեան**, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳ դար)*, Վենետիկ, 1889:

**Գրիգոր Կիրակոսյան**, «Վանքապատկան հողատիրության ընդարձակման ուղիները XIV-XV դդ.», *Լրաբեր հասարակական գիտությունների,* 1971, № 4, էջ 78-87:

**Եւագր,** *Գիրք ութն խորհրդոց մեղաց,* Կ. Պոլիս, 1750:

**Թովմա Մեծոփեցւոյ**, *Պատմութիւն*, Փարիզ, 1860:

**Իգնատիոսի Սկևռացի,** *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի...*, Կ. Պոլիս, 1824:

**Լևոն Խաչիկյան**, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ,* Երևան, 1950:

**Լևոն Խաչիկյան**, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ,* մասն Ա., Երևան, 1955:

**Լևոն Խաչիկյան**, «Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը», *Բանբեր Մատենադարանի,* № 3, 1956, էջ 57-84:

**Լևոն Խաչիկյան**, «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը», *Բանբեր Մատենադարանի*, № 11, 1973, էջ 125-210:

**Լևոն Խաչիկյան**, *Աշխատություններ*, հտ. Գ., Երևան, 2008:

**Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն Հայոց Սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ եկեղեցւոյն Հռովմայ*, Հռոմ, 1650:

**Կորիւն**, «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի», *Մատենագիրք Հայոց*, հտ. Ա., Անթիլիաս, Լիբանան, 2003:

**Հակոբ Քյոսեյան**, «Մատթեոս Ջուղայեցու ջատագովական գրությունը», էջմիածին, 2010 (Ե), էջ 97-110:

**Հակոբ Քյոսեյան**, «Մեկնողական գրականություն», *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան*, 2002, էջ 714-718:

**Համազասպ Ոսկեան**, «Մատթէոս վ. Ջուղայեցի», *Հանդէս Ամսօրեայ*, յուլիս-սեպտեմբեր, 1966, էջ 275-290:

**Համազասպ Ոսկեան**, *Ստեփանոս վրդ. Ռօքշա, Մատթէոս վ. Ջուղայեցի*, Վիեննա, Մխիթարեան տպ., 1968:

**Հովհաննես Մործորեցի**, *Մեկնություն Մատթեոսի Ավետարանի*, պրակ Բ., թարգմ. և ծանոթ. Սեդա Ստամբոլցյանի, Ս. էջմիածին, 2010:

**Հրաչյա Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ., Երևան, 1946:

**Մաղաքիա Օրմանեան**, *Ազգապատում*, հտ. Բ., Ա գիրք, Բեյրութ, 1960:

**Մանուկ Աբեղյան**, *Երկեր*, հտ. Գ., Երևան, 1968:

**Մատթէոս վարդապետ Ջուղայեցի**, *Քարոզներ, Ուսումնասիրություն, Քննական բնագրեր*, աշխ. խաղ բհն. Ղազարյանի, Ս. էջմիածին, 2015:

**Յովհան Ոսկեբերան**, *Ճառք, նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց*, Ս. էջմիածին, 2008:

**Ներսէս Ակինեան**, *Յովհաննու Ոսկեբերանի Եսայեայ մեկնութիւնը հայ մատենագրութեան մէջ*, Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն եւ բնագիր, հտ. Դ., Վիեննա, 1938:

## Օգտագործած աղբյուրներ և ուսումնասիրություններ


**Ներսէս Ակինեան**, *Ներսէս Լամբրոնացի կեանքն ու գրական վաստակները, հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց և Լամբրոնի Հեթումեանց*, Վիեննա, 1956:

**Ներսէս Շնորհալի**, *Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի*, Կոստանդնուպոլիս, 1825:

*Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, աշխ.՝ **Հ. Գաբրիէլի Աւետիքեան**, **Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան**, **Հ. Մկրտչի Աւգերեան**, Վենետիկ, 1836:

**Սարգիս Կունդ,** *Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու*, աշխ. Պետրոսյան Եզնիկ եպս., Էջմիածին, 2005:

**Ստեփանոս Սիւնեցի**, *Մեկնութիւն չորից Աւետարանչացն*, աշխ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի, Երևան, 1994:

**Փայլակ Անթապյան**, «Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ», *Բանբեր Մատենադարանի*, № 15, 1986, էջ 60-94:

**Seta B. Dadoyan,** «Islam and Armenian Political Strategies at the End of an Era: Matt'eos Jowlayec'i and Grigor Tat'ewac'i», *Article in Le Muséon* 114(3): 305-326, July 2001:

**Сен Аревшатян**, **Самсон Лалафарян**, «Сочинение Иоанна Воротнеци “об элементах”», *Բանբեր Մատենադարանի*, № 3, 1956, էջ 343-386:



ՄՄ ձեռ. 1130, թերթ 199բ



ՄՄ ձեռ. 20, թերթ 200ա

# ՅԱՆԿ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

### Ծննդոց

Ծննդ. Ա 3 - էջ 222:
Ծննդ. Ա 31 - էջ 135:
Ծննդ. Բ 10 - էջ 59:
Ծննդ. Գ 14 - էջ 108:
Ծննդ. Գ 17 - էջ 282:
Ծննդ. Գ 19 - էջ 180, 194:
Ծննդ. Զ 3 - էջ 194:
Հմմտ. Ծննդ. Զ 3 - էջ 179:
Ծննդ. ԺԸ 1 - էջ 200:
Ծննդ. ԽԴ 21 - էջ 157:
Հմմտ. Ծննդ. Բ 7 - էջ 184:
Տե՛ս Ծննդ. ԺԲ 7 - էջ 133:
Հմմտ. Ծննդ. Բ 15 - էջ 212:
Հմմտ. Ծննդ. Գ 16 - էջ 80, 194:
Հմմտ. Ծննդ. Գ 7 - էջ 179:
Հմմտ. Ծննդ. Ը 21 - էջ 193:
Հմմտ. Ծննդ. ԺԵ 6 - էջ 231:
Հմմտ. Ծննդ. ԻԲ 12 - էջ 228:
Տե՛ս Ծննդ. ԺԴ 22 - էջ 133:

### Ելք

Ելից Ի 14-15 - էջ 94:
Ելից ԺԴ 15 - էջ 254:
Հմմտ. Ելից ԺԸ 11 - էջ 65:
Հմմտ. Ելից ԻԲ 30 - էջ 75:
Հմմտ. Ելից ԻԶ 1, ԻԵ 8 - էջ 252:
Հմմտ. Ելից ԼԲ 10, ԼԴ 5 - էջ 154:

### Ղևտացոց

Հմմտ. Ղևտ. ԺԴ 13 - էջ 170:

### Թագաւորաց

Հմմտ. Բ Թագ. Է 13, Գ Թագ. Ե 5 - էջ 252:
Հմմտ. Բ Թագ. ԻԴ 17 - էջ 155:
Հմմտ. Գ Թագ. Ը 27 - էջ 252:

### Օրինաց

Տե՛ս Բ Օրինաց Ժ 1-11- էջ 104:

### Մնացորդաց

Հմմտ. Ա Մնաց. ԺԶ 17, Սաղմ. ՃԴ 10 - էջ 68:
Հմմտ. Բ Մնաց. Զ 19 - էջ 248:

### Սաղմոս

Սաղմ. Դ 9 - էջ 190:
Սաղմ. Ը 6 - էջ 123, 179:
Սաղմ. Ը 7 - էջ 195:
Սաղմ. Թ 18 - էջ 225:
Սաղմ. ԺԷ 12 - էջ 289:
Սաղմ. ԻԱ 7 - էջ 255:
Սաղմ. ԻԳ 10 - էջ 208:
Սաղմ. ԻԳ 7 - էջ 208, 292:
Սաղմ. ԻԳ 8, 10 - էջ 291, 292:
Հմմտ. Սաղմ. ԻԳ 8 - էջ 207:
Սաղմ. ԻԵ 8 - էջ 212:
Սաղմ. ԻԹ 6 - էջ 277:
Սաղմ. ԼԳ 17 - էջ 84:
Սաղմ. ԼԶ 35-36 - էջ 252:

Սաղմ. ԼԶ 16 - էջ 85:
Սաղմ. ԽԸ 12 - էջ 125:
Սաղմ. ԽԸ 13, 21 - էջ 111, 176, 196:
Սաղմ. ԾԴ 17 - էջ 125, 250:
Սաղմ. ԿԲ 5 - էջ 286:
Սաղմ. ԿԴ 12 - էջ 282:
Սաղմ. ԿԷ 5 - էջ 143:
Սաղմ. ԿԸ 29 - էջ 234:
Սաղմ. ՀԷ 8 - էջ 155:
Սաղմ. Ղ 6 - էջ 104, 106, 112:
Սաղմ. Ղ 7 - էջ 112, 177:
Սաղմ. ՂԱ 14 - էջ 149:
Սաղմ. ՂԱ 14-15 - էջ 150:
Սաղմ. ՂԲ 5 - էջ 213:
Սաղմ. ՂԷ 1 - էջ 289:
Սաղմ. ՃԲ 1 - էջ 66:
Սաղմ. ՃԳ 15 - էջ 127:
Սաղմ. ՃԳ 27 - էջ 266:
Սաղմ. ՃԳ 3 - էջ 144, 190:
Սաղմ. ՃԳ 5 - էջ 189:
Սաղմ. ՃԳ 6 - էջ 189-90:
Սաղմ. ՃԹ 1 - էջ 288:
Սաղմ. ՃԺԷ 16 - էջ 289:
Սաղմ. ՃԺԸ 176 - էջ 182:
Սաղմ. ՃԺԸ 61 - էջ 246:
Սաղմ. ՃԻԱ 1-2 - էջ 67:
Սաղմ. ՃԻԴ 4 - էջ 139:
Սաղմ. ՃԼԳ 2 - էջ 250:
Սաղմ. ՃԼԳ 6 - էջ 263:
Սաղմ. ՃԼԸ 8 - էջ 194:
Սաղմ. ՃԽԱ 8 - էջ 246:
Սաղմ. ՃԻԷ 2 - էջ 203:
Հմմտ. Սաղմ. Ե 5, ԿԲ 7 - էջ 250:
Հմմտ. Սաղմ. ԺԵ 4 - էջ 234:
Հմմտ. Սաղմ. ԺԷ 11 - էջ 288:
Հմմտ. Սաղմ. ԻԳ 10 - էջ 292:
Հմմտ. Սաղմ. ԼԶ 35 - էջ 85:
Հմմտ. Սաղմ. ԽՁ 10 - էջ 164:
Հմմտ. Սաղմ. ԾԷ 6 - էջ 83:
Հմմտ. Սաղմ. ԿԷ 5, ԿԷ 34 - էջ 266:
Հմմտ. Սաղմ. ՀԹ 13-14 - էջ 151:
Հմմտ. Սաղմ. ՁԸ 15 - էջ 127, 241:
Հմմտ. Սաղմ. ՂԸ 8 - էջ 248:
Հմմտ. Սաղմ. ՃԲ 22, հմմտ. Առակ. ԺԵ 3 - էջ 288:
Հմմտ. Սաղմ. ՃԺԸ 49 - էջ 122:
Հմմտ. Սաղմ. ՃԺԸ 62 - էջ 250:
Հմմտ. Սաղմ. ՃԼԱ 9 - էջ 173:
Հմմտ. Սաղմ. ՃԼԸ 16 - էջ 255:

**Առակաց**

Առակ. Ա 20 - էջ 217, 221:
Առակ. ԺԷ 4 - էջ 136:
Առակ. ԻԴ 3 - էջ 212:
Առակք Ա 5 - էջ 174:
Առակք Գ 34 - էջ 122:
Առակք ԺԱ 4 - էջ 134:
Հմմտ. Առակ. ԺԹ 17 - էջ 87:
Հմմտ. Առակ. Ա 5 - էջ 115, 173:
Հմմտ. Առակ. Բ 17 - էջ 173:
Հմմտ. Առակ. Գ 19 - էջ 189:
Հմմտ. Առակ. Դ 26-27 - էջ 167:
Հմմտ. Առակ. ԻԲ 29 - էջ 172:
Հմմտ. Առակ. ԻԷ 2 - էջ 255:
Հմմտ. Առակ. ԻԷ 7 - էջ 280:

ԺՈՂՈՎՈՂ
Տե՛ս Ժող. Բ 14 - էջ 244:

ՅՈԲ
Հմմտ. Յոբ Ա 6 - էջ 108:
Յոբ Գ 23 - էջ 124:
Յոբ ԼԸ 4 - էջ 214:
Հմմտ. Յոբ Բ 2 - էջ 106:
Հմմտ. Յոբ Ա 21 - էջ 276:
Հմմտ. Յոբ. ԺԲ 11 - էջ 291:
Հմմտ. Յոբ ԺԴ 14, ԺԵ 14 - էջ 230:
Հմմտ. Յոբ ԺԴ 5 - էջ 193, 255:

ՅՈՎԵԼ
Յովել Գ 19 - էջ 149:
Յովել. Բ 13 - էջ 88:

ԱՄԲԱԿՈՒՄ
Ամբակ. Բ 6-8 - էջ 139:
Ամբակ. Գ 2 - էջ 69:
Հմմտ. Ամբակ. Գ 2 - էջ 153:

ԱՄՈՍ
Ամովս Ը 11 - էջ 195:

ԵՍԱՅԻ
Եսայի Զ 1 - էջ 266:
Եսայի ԺԱ 6 - էջ 118:
Եսայի ԺԴ 14 - էջ 196:
Հմմտ. Եսայի ԺԴ 14 - էջ 104, 252:
Եսայի ԻԶ 16 - էջ 122:
Եսայի Խ 3 - էջ 61:
Եսայի Խ 6 - էջ 85:
Եսայի ԽԳ 26 - էջ 257:
Եսայի ԾԳ 7 - էջ 204:
Եսայի ԾԸ 7 - էջ 89, 109:
Եսայի ԾԸ 9 - էջ 122:
Եսայի ԿԱ 10 - էջ 203:
Եսայի ԿԳ 1 - էջ 207:
Հմմտ. Եսայի ԿԳ 1 - էջ 207:
Եսայի ԿԳ 2 - էջ 207:
Հմմտ. Եսայի ԿԳ 2 - էջ 292:
Եսայի ԿԵ 17 - էջ 190:
Եսայի ԿԶ 1 - էջ 214:
Եսայի ԿԶ 2 - էջ 151:
Հմմտ. Եսայի ԿԶ 2 - էջ 61, 66, 213, 256:
Եսայի ԿԱ 5 - էջ 148:
Հմմտ. Եսայի Զ 10, հմմտ. Մատթ. ԺԳ 14 - էջ 187:
Հմմտ. Եսայի ԺԴ 12 - էջ 108:
Հմմտ. Եսայի ԾԱ 11 - էջ 267:
Հմմտ. Եսայի ԿԳ 3 - էջ 282:
Հմմտ. Եսայի Լ 27-28 - էջ 217:
Հմմտ. Եսայի ԽԹ 9 - էջ 187, 225:
Հմմտ. Եսայի ԽԹ 15 - էջ 79:
Հմմտ. Եսայի ԾԷ 10 - էջ 66:
Հմմտ. Եսայի Ե 24 - էջ 176:
Տե՛ս Եսայի Ա 2-3 - էջ 123:
Տե՛ս Եսայի Ե 30 - էջ 135:
Տե՛ս Եսայի ԿԶ 21 - էջ 116:
Տե՛ս Եսայի ԼԴ 4 - էջ 145:
Տե՛ս Եսայի ԼԵ 6 - էջ 81:

ԴԱՆԻԷԼ
Հմմտ. Դան. Դ 24 - էջ 223:
Հմմտ. Դան. Է 9-10 - էջ 185:
Հմմտ. Դան. Է 10 - էջ 282:
Հմմտ. Դան. Է 14 - էջ 268:

**Բարուխ**
Համմտ. Բարուխ Գ 3 - էջ 164:

**Երգ երգոց**
Տե՛ս Երգ երգոց Գ 1 - էջ 128:
Համմտ. Երգ երգոց Գ 11 - էջ 292:

**Իմաստնութիւն Սողոմոնի**
Իմաստ. Բ 24 - էջ 114, 183:
Համմտ. Իմաստ. Բ 24 - էջ 179:
Իմաստ. Գ 1 - էջ 232:
Իմաստ. Գ 2 - էջ 232:
Համմտ. Իմաստ. Ա 5 - էջ 117:
Համմտ. Իմաստ. Ե 11 - էջ 104:

**Երեմիա**
Երեմ. ԺԸ 32 - էջ 153:
Երեմ. ԻԳ 23, Եսայի ԾԹ 2 - էջ 194:
Երեմ. ԼԲ 15 - էջ 143:
Տե՛ս Երեմ. ԺԶ 16 - էջ 95:
Համմտ. Երեմ. ԻԳ 24 - էջ 193-4:

**Եզեկիել**
Եզեկ. ԺԸ 4 - էջ 230:
Եզեկ. ԼԶ 26 - էջ 155:
Համմտ. Եզեկ. Գ 17 - էջ 170:
Համմտ. Եզեկ. Թ 6 - էջ 279:
Համմտ. Եզեկ. ԺԵ 3 - էջ 176:
Համմտ. Եզեկ. ԺԸ 23 - էջ 122:
Համմտ. Եզեկ. ԺԸ 22 - էջ 85:
Համմտ. Եզեկ. ԺԸ 32 - էջ 185, 216:
Համմտ. Եզեկ. ԼԳ 6-7 - էջ 154:
Համմտ. Եզեկ. ԽԳ 3 - էջ 59:
Համմտ. Եզեկ. ԽԴ 2 - էջ 81:

**Ովսէ**
Համմտ. Ովսէ. ԺԲ 6 - էջ 153:
Համմտ. Ովսէ. ԺԳ 14, հմմտ. Ա Կոր. ԺԵ 55 - էջ 260:

**Մաղաքիա**
Մաղաք. Բ 7 - էջ 171:
Համմտ. Մաղաք. Բ 7 - էջ 155:
Մաղաք. Գ 1 - էջ 187:

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

**Մատթէոս**
Մատթ. Ա 1 - էջ 231:
Մատթ. Ա 20 - էջ 92:
Համմտ. Մատթ. Ա 20 - էջ 184:
Մատթ. Ա 21 - էջ 64:
Մատթ. Ա 23 - էջ 78:
Մատթ. Գ 10 - էջ 84:
Մատթ. Գ 16 - էջ 92:
Մատթ. Դ 11 - էջ 291:
Մատթ. Ե 3 - էջ 137:
Մատթ. Ե 16 - էջ 174, 203:
Մատթ. Ե 19 - էջ 142:
Մատթ. Ե 25 - էջ 192:
Տե՛ս Մատթ. Ե 34 - էջ 134:
Համմտ. Մատթ. Ե 34 - էջ 192:
Մատթ. Ե 45 - էջ 85, 230:
Մատթ. Զ 20 - էջ 141:
Մատթ. Զ 9 - էջ 255:
Մատթ. Է 8 - էջ 254:
Մատթ. Թ 37 - էջ 107:
Մատթ. Թ 6 - էջ 267:
Մատթ. Ժ 26 - էջ 185:

Մատթ. Ժ 8 - էջ 271:
Մատթ. ԺԱ. 11 - էջ 64:
Մատթ. ԺԱ. 19 - էջ 99:
Մատթ. ԺԱ. 29 - էջ 77, 144, 181, 205:
Մատթ. ԺԱ. 30 - էջ 175:
Մատթ. ԺԳ 17 - էջ 79:
Մատթ. ԺԳ 4 - էջ 135:
Մատթ. ԺԵ 14 - էջ 172:
Մատթ. ԺԶ 18 - էջ 118:
Մատթ. ԺԹ 18 - էջ 123:
Մատթ. ԺԹ 29 - էջ 150, 269:
Մատթ. ԻԱ. 41 - էջ 157:
Մատթ. ԻԲ 12 - էջ 181:
Մատթ. ԻԲ 37 - էջ 51, 109, 123:
Մատթ. ԻԳ 12 - էջ 67, 256:
Մատթ. ԻԳ 27 - էջ 150:
Մատթ. ԻԴ 27 - էջ 145:
Հմմտ. Մատթ. ԻԵ 1-13 - էջ 181:
Մատթ. ԻԵ 24 - էջ 270:
Մատթ. ԻԵ 34 - էջ 233:
Մատթ. ԻԵ 41 - էջ 236, 275:
Հմմտ. Մատթ. ԻԵ 41 - էջ 140:
Մատթ. ԻԵ 42 - էջ 87, 88:
Մատթ. ԻԵ 6 - էջ 274:
Մատթ. ԻԵ 21, հմմտ. Ղուկ. ԺԹ 17 - էջ 157:
Մատթ. ԻԸ 18 - էջ 267:
Մատթ. ԻԸ 19 - էջ 95, 148, 202:
Հմմտ. Մատթ. 16 - էջ 187:
Հմմտ. Մատթ. Գ 11 - 63:
Հմմտ. Մատթ. Գ 12 - 63:
Հմմտ. Մատթ. Գ 2 - 63:
Հմմտ. Մատթ. Ե 28 - էջ 168, 192:
Հմմտ. Մատթ. Զ 6 - էջ 254:
Հմմտ. Մատթ. Զ 7 - էջ 97:
Հմմտ. Մատթ. Է 9 – էջ 130:
Հմմտ. Մատթ. Է 13 - էջ 159, 181:
Հմմտ. Մատթ. Է 23 - էջ 160:
Հմմտ. Մատթ. Է 24-25 - էջ 142:
Հմմտ. Մատթ. Ը 11-12 - էջ 164:
Հմմտ. Մատթ. Ժ 35 - էջ 143:
Հմմտ. Մատթ. ԺԱ. 28 - էջ 118, 214, 232:
Հմմտ. Մատթ. ԺԱ. 28-30 - էջ 205:
Հմմտ. Մատթ. ԺԲ 36-37 - էջ 169:
Հմմտ. Մատթ. ԺԲ 44-45 - էջ 167:
Հմմտ. Մատթ. ԺԳ 49, ԻԵ 30 - էջ 275:
Հմմտ. Մատթ. ԺԴ 3, 10 - էջ 64:
Հմմտ. Մատթ. ԺԶ 24 - էջ 166:
Հմմտ. Մատթ. ԺԹ 11 - էջ 167:
Հմմտ. Մատթ. ԺԹ 17 - էջ 158:
Հմմտ. Մատթ. ԻԱ. 13 - էջ 252:
Հմմտ. Մատթ. ԻԴ 21 - էջ 275:
Հմմտ. Մատթ. ԻԴ 28 - էջ 232:
Հմմտ. Մատթ. ԻԴ 30 - էջ 274, 275:
Հմմտ. Մատթ. ԻԴ 30, ԻԶ 64, հմմտ. Մարկ. ԺԳ 26, հմմտ. Ղուկ. ԻԱ. 27 - էջ 274:
Հմմտ. Մատթ. ԻԴ 41 - էջ 278:
Հմմտ. Մատթ. ԻԵ 19 - էջ 110:
Հմմտ. Մատթ. ԻԵ 28, հմմտ. Ղուկ. ԺԹ 24 - էջ 270:
Հմմտ. Մատթ. ԻԵ 33 - էջ 290:
Հմմտ. Մատթ. ԻԵ 46 - էջ 175:
Հմմտ. Մատթ. ԻԶ 52 - էջ 67:

Հմմտ. Մարթ. ԻԱ. 19 - էջ 203:
Հմմտ. Մատթ. ԺՁ 26, հմմտ. Մարկ. Ը 36, հմմտ. Ղուկ. Թ 25 - էջ 173:
Հմմտ. Մատթ. ԺԸ 16 - էջ 242:
Հմմտ. Մատթ. ԺԸ 6, հմմտ. Մարկ. Թ 41, հմմտ. Ղուկ. ԺԷ 1-2 - էջ 171:
Տե՛ս Մատթ. Գ 17 - էջ 64:
Տե՛ս Մատթ. Ե 8 - էջ 151:
Տե՛ս Մատթ. ԺԳ 25-30 - էջ 184:

**Մարկոս**

Մարկ. Ա. 8 - էջ 142:
Մարկ. Բ 17 - էջ 211:
Մարկ. Ե 34 - էջ 103:
Մարկ. Ե 9 - էջ 104:
Մարկ. ԺԲ 30 - էջ 109:
Մարկ. ԺԳ 31 - էջ 143:
Մարկ. ԺՁ 19 - էջ 290:
Հմմտ. Մարկ. ԺՁ 19 - էջ 288:
Հմմտ. Մարկ. ԺԳ 22 - էջ 273:
Հմմտ. Մարկ. ԺԴ 19 - էջ 281:
Հմմտ. Մարկ. Ա. 10 - էջ 92:
Հմմտ. Մարկ. Ա. 6 - էջ 63:
Հմմտ. Մարկ. Ա. 7 - էջ 63:
Հմմտ. Մարկ. Ջ 27 - էջ 64:
Հմմտ. Մարկ. Ը 34 - էջ 152:
Հմմտ. Մարկ. Թ 35-36 - էջ 233:

**Ղուկաս**

Տե՛ս Ղուկ. Ա. 13 - էջ 61:
Ղուկ. Ա. 15 - էջ 61, 62:
Հմմտ. Ղուկ. Ա. 15 - էջ 62:
Տե՛ս Ղուկ. Ա. 15 - 61:
Տե՛ս Ղուկ. Ա. 15 - էջ 62:
Ղուկ. Ա. 16 - էջ 62:
Ղուկ. Ա. 17 - էջ 62:
Հմմտ. Ղուկ. Ա. 17 - էջ 62:
Ղուկ. Ա. 28 - էջ 64:
Տե՛ս Ղուկ. Ա. 17 - էջ 63:
Տե՛ս Ղուկ. Ա. 22, 63 - էջ 68:
Տե՛ս Ղուկ. Ա. 33 - էջ 65:
Ղուկ. Ա. 35 - էջ 65:
Ղուկ. Ա. 35 - էջ 92:
Տե՛ս Ղուկ. Ա. 35 - էջ 65:
Ղուկ. Ա. 3 - էջ 33, 59:
Ղուկ. Ա. 31 - էջ 64:
Հմմտ. Ղուկ. Ա. 31- էջ 64:
Ղուկ. Ա. 32 - էջ 65:
Հմմտ. Ղուկ. Ա. 32 - էջ 66:
Ղուկ. Ա. 38 - էջ 66:
Ղուկ. Ա. 41 - էջ 69:
Ղուկ. Ա. 43 - էջ 67, 69, 71:
Ղուկ. Ա. 45 - էջ 67:
Ղուկ. Ա. 48 - էջ 66:
Հմմտ. Ղուկ. Ա. 69 - էջ 68:
Տե՛ս Ղուկ. Ա. 69 - էջ 69:
Ղուկ. Ա. 80 - էջ 63, 69:
Ղուկ Բ 23 - էջ 75:
Ղուկ. Բ 19 - էջ 69:
Ղուկ. Բ 22 - էջ 73, 75:
Ղուկ. Գ 11 - էջ 86:
Ղուկ. Գ 6 - էջ 225:
Հմմտ. Ղուկ. Գ 6 - էջ 187:
Ղուկ. Գ 7 - էջ 83:
Ղուկ. Դ 14 - էջ 92:
Ղուկ. Դ 17 - էջ 93:

Ղուկ. Ե 5 - էջ 93:
Տե՛ս Ղուկ. Ե 5 - էջ 94:
Ղուկ. Ե 20 - էջ 102:
Ղուկ. Զ 24 - էջ 159:
Հմմտ. Ղուկ. Զ 24 - էջ 137, 225:
Ղուկ. Զ 25 - էջ 97, 253:
Ղուկ. Զ 27 - էջ 109:
Ղուկ. Զ 36 - էջ 88:
Ղուկ. Է 19 - էջ 64:
Ղուկ. Է 36-37 - էջ 99:
Ղուկ. Է 44 - էջ 102:
Ղուկ. Է 48 - էջ 96, 264:
Ղուկ. Ը 5 - էջ 205:
Ղուկ. Թ 47-48 - էջ 233:
Ղուկ. Ժ 19 - էջ 68, 108, 177, 204:
Ղուկ. Ժ 30 - էջ 110, 112:
Հմմտ. Ղուկ. Ժ 30 - էջ 112:
Ղուկ. Ժ 42 - էջ 119:
Ղուկ. ԺԱ 20 - էջ 92:
Ղուկ. ԺԱ 7 - էջ 127:
Ղուկ. ԺԲ 18 - էջ 138:
Տե՛ս Ղուկ. ԺԲ 18-19 - էջ 138:
Ղուկ. ԺԲ 20 - էջ 138:
Հմմտ. Ղուկ. ԺԲ 20 - էջ 139:
Ղուկ. ԺԲ 32 - էջ 139:
Ղուկ. ԺԲ 33 - էջ 140:
Հմմտ. Ղուկ. ԺԲ 46 - էջ 278:
Ղուկ. ԺԲ 49 - էջ 141, 143:
Ղուկ. ԺԳ 28 - էջ 161:
Հմմտ. Ղուկ. ԺԳ 28 - էջ 160:
Ղուկ. ԺԳ 6 - էջ 146:
Ղուկ. ԺԵ 11 - էջ 193:
Ղուկ. ԺԵ 12 - էջ 192:
Ղուկ. ԺԵ 13 - էջ 195:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 13 - էջ 193:
Ղուկ. ԺԵ 14 - էջ 195, 196:
Ղուկ. ԺԵ 15 - էջ 196:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 15 - էջ 198:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 15 - էջ 197:
Ղուկ. ԺԵ 16 - էջ 198:
Ղուկ. ԺԵ 17 - էջ 198, 199:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 17 - էջ 198:
Ղուկ. ԺԵ 18 - էջ 196, 199, 200, 211:
Ղուկ. ԺԵ 20 - էջ 200:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 20 - էջ 199:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 20 - էջ 232:
Ղուկ. ԺԵ 22 - էջ 201:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 22 - էջ 204:
Ղուկ. ԺԵ 23 - էջ 204, 206:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 23 - էջ 204:
Ղուկ. ԺԵ 24 - էջ 129, 205, 207:
Ղուկ. ԺԵ 25-27 - էջ 206:
Ղուկ. ԺԵ 28 - էջ 208:
Ղուկ. ԺԵ 29 - էջ 193, 209:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 29 - էջ 282:
Ղուկ. ԺԵ 4 - էջ 178, 282:
Ղուկ. ԺԵ 8 - էջ 182, 213:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 8-10 - էջ 225:
Ղուկ. ԺԶ 1-2 - էջ 212:
Ղուկ. ԺԶ 19 - էջ 226:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 19 - էջ 225:
Ղուկ. ԺԶ 22 - էջ 231:
Ղուկ. ԺԶ 24 - էջ 236, 237:
Ղուկ. ԺԶ 25 - էջ 238:
Ղուկ. ԺԶ 9 - էջ 135, 234:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 9 - էջ 223:

Ղուկ. ԺԷ 24 - էջ 274:
Ղուկ. ԺԸ 10 - էջ 250, 252, 254:
Ղուկ. ԺԸ 10-11 - էջ 250:
Ղուկ. ԺԸ 11 - էջ 255, 256:
Ղուկ. ԺԸ 12 - էջ 255, 259:
Ղուկ. ԺԸ 13 - էջ 257:
Ղուկ. ԺԸ 2 - էջ 241, 242, 243, 245:
Ղուկ. ԺԸ 3 - էջ 246:
Ղուկ. ԺԸ 4-5 - էջ 248:
Ղուկ. ԺԹ 12 - էջ 181, 263:
Հմմտ. Ղուկ. ԺԹ 12 - էջ 263:
Ղուկ. ԺԹ 16 - էջ 269:
Ղուկ. ԺԹ 22 - էջ 270:
Ղուկ. ԻԱ 27 - էջ 274:
Ղուկ. ԻԱ 34 - էջ 126, 170, 274:
Հմմտ. Ղուկ. ԻԱ 34 - էջ 278:
Ղուկ. ԻԱ 36 - էջ 250:
Հմմտ. Ղուկ. ԻԱ 36 - էջ 170, 275, 286:
Ղուկ. ԻԳ 12 - էջ 201:
Ղուկ. ԻԳ 43 - էջ 232:
Ղուկ. ԻԴ 5-6 - էջ 292:
Ղուկ. ԻԴ 45 - էջ 187:
Հմմտ. Ղուկ. Է 47 - էջ 102:
Հմմտ. Ղուկ. Ա 1 - էջ 59:
Հմմտ. Ղուկ. Ա 14 - 61:
Հմմտ. Ղուկ. Ա 52 - էջ 291:
Հմմտ. Ղուկ. Բ 26 - էջ 79:
Հմմտ. Ղուկ. Բ 29 - էջ 81:
Հմմտ. Ղուկ. Գ 13 - էջ 88, 89:
Հմմտ. Ղուկ. Գ 14 - էջ 89:
Հմմտ. Ղուկ. Գ 22 - էջ 92:
Հմմտ. Ղուկ. Զ 26 - էջ 97:
Հմմտ. Ղուկ. Զ 32 - էջ 109:
Հմմտ. Ղուկ. Է 27 - էջ 61:
Հմմտ. Ղուկ. Է 41-42 - էջ 101:
Հմմտ. Ղուկ. Է 47 - էջ 102:
Հմմտ. Ղուկ. Թ 23 - էջ 166:
Հմմտ. Ղուկ. Թ 58 - էջ 106:
Հմմտ. Ղուկ. Ժ 33 - էջ 117:
Հմմտ. Ղուկ. Ժ 34-35 - էջ 122:
Հմմտ. Ղուկ. Ժ 4 - էջ 107:
Հմմտ. Ղուկ. ԺԱ 5 - էջ 121:
Հմմտ. Ղուկ. ԺԲ 37 - էջ 140:
Հմմտ. Ղուկ. ԺԲ 47 - էջ 120:
Հմմտ. Ղուկ. ԺԳ 1 - էջ 293:
Հմմտ. Ղուկ. ԺԳ 24 - էջ 158:
Հմմտ. Ղուկ. ԺԳ 27 - էջ 161:
Հմմտ. Ղուկ. ԺԳ 7 - էջ 153:
Հմմտ. Ղուկ. ԺԳ 8 - էջ 154:
Հմմտ. Ղուկ. ԺԴ 13 - էջ 139:
Հմմտ. Ղուկ. ԺԴ 28 - էջ 165:
Հմմտ. Ղուկ. ԺԴ 33 - էջ 169:
Հմմտ. Ղուկ. ԺԴ 34 - էջ 174, 176:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 31 - էջ 168, 209:
Հմմտ. Ղուկ. ԺԵ 5 - էջ 282:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 3 - էջ 217:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 6-7 - էջ 218:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 10 - էջ 215:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 13 - էջ 152:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 2 - էջ 217:
Տե՛ս Ղուկ ԺԶ 19 - էջ 224:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 22, 23 - էջ 231:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 26 - էջ 238:
Ղուկ. ԺԶ 28 - էջ 239:
Հմմտ. Ղուկ. ԺԶ 29 - էջ 224:

Համմտ. Ղուկ. ԺԶ 29 - էջ 239:
Համմտ. Ղուկ. ԺԶ 30 - էջ 239:
Համմտ. Ղուկ. ԺԶ 31 - էջ 239:
Համմտ. Ղուկ. ԺԷ 10 - էջ 67:
Համմտ. Ղուկ. ԺԸ 1 - էջ 248:
Համմտ. Ղուկ. ԺԸ 1 - էջ 241:
Համմտ. Ղուկ. ԺԸ 6 - էջ 241:
Համմտ. Ղուկ. ԺԸ 8 - էջ 249:
Համմտ. Ղուկ. ԺԸ 29 - էջ 169:
Համմտ. ԺԹ 12 - էջ 265:
Համմտ. ԺԹ 13 - էջ 268:
Համմտ. Ղուկ. ԺԹ 14-15 - էջ 269:
Համմտ. Ղուկ. ԺԹ 17 - էջ 157, 269:
Համմտ. Ղուկ. ԺԹ 23 - էջ 270:
Համմտ. Ղուկ. ԻԱ 25 - էջ 147, 272:
Համմտ. Ղուկ. ԻԱ 33 - էջ 130:
Համմտ. Ղուկ. ԻԴ 39 - էջ 264, 284:
Համմտ. Ղուկ. ԻԴ 49 - էջ 293:
Համմտ. Ղուկ. ԻԴ 50 - 51 - էջ 281:
Համմտ. Ղուկ. ԻԴ 50 - էջ 282, 283:
Համմտ.՝ Ղուկ. ԺԵ 31 - էջ 168:
Տե՛ս Ղուկ. Բ 20 - էջ 70:
Տե՛ս Ղուկ. Բ 25 - էջ 79:
Տե՛ս Ղուկ. Թ 59 - էջ 106:
Տե՛ս Ղուկ. Թ 61 - էջ 106:
Տե՛ս Ղուկ. ԺԱ 6 - էջ 124:
Տե՛ս Ղուկ. ԺԲ 16 - էջ 134:
Համմտ. Ղուկ. ԺԲ 16 - էջ 132:
Տե՛ս Ղուկ. ԺԲ 17 - էջ 136:
Տե՛ս Ղուկ. ԺԲ 37 - էջ 140:
Տե՛ս Ղուկ. ԺԲ 54 - էջ 143:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 19 - էջ 201:
Տե՛ս Ղուկ. ԺԵ 7 - էջ 124:
Տե՛ս Ղուկ. ԺԹ 1-10 - էջ 260:
Տե՛ս Ղուկ. ԺԹ 8 - էջ 89:
Տե՛ս Ղուկ. ԻԴ 52 - էջ 281:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ**

Յովհ. Ա. 11 - էջ 269:
Յովհ. Ա. 14 - էջ 68, 144, 188:
Յովհ. Ա. 18 - էջ 208:
Համմտ. Յովհ. Ա. 18 - էջ 290:
Յովհ. Ա. 29 - 64:
Յովհ. Ա. 3 - էջ 214:
Համմտ. Ա. 3 - էջ 289:
Յովհ. Ա.. 14 - էջ 68, 188:
Յովհ. Գ 16 - էջ 232:
Յովհ. Գ 28 - 63:
Յովհ. Դ 6 - էջ 205:
Յովհ. Ե 22 - էջ 265, 269:
Յովհ. Ե 30 - էջ 221:
Համմտ. Յովհ. Ե 30 - էջ 173:
Յովհ. Է 37 - էջ 118, 144:
Յովհ. Է 38 - էջ 149:
Յովհ. Ը 12 - էջ 275:
Յովհ. Ը 34 - էջ 114, 136:
Յովհ. Ժ 20 - էջ 99:
Յովհ. ԺԲ 26 - էջ 78:
Յովհ. ԺԲ 31, ԺԶ 11 - էջ 196:
Յովհ. ԺԲ 32 - էջ 69, 187:
Յովհ. ԺԳ 1 - էջ 288:
Յովհ. ԺԴ 2 - էջ 88:
Համմտ. Յովհ. ԺԴ 2 - էջ 232, 266:
Յովհ. ԺԵ 1 - էջ 151:
Յովհ. ԺԵ 2 - էջ 142, 151:
Համմտ. Յովհ. ԺԵ 2 - էջ 151:

Յովհ. ԺԵ 5 - էջ 151:
Յովհ. ԺԶ 22 - էջ 214, 233:
Յովհ. ԺԶ 33 - էջ 230:
Յովհ. ԺԹ 15 - էջ 269:
Յովհ. ԺԹ 37 - էջ 274:
Հմմտ. Յովհ. Ա 27 - 63:
Հմմտ. Յովհ. Գ 19 - էջ 269:
Հմմտ. Յովհ. Ժ 28 - էջ 129:
Հմմտ. Յովհ. ԺԴ 23 - էջ 85:
Հմմտ. Յովհ. ԺԴ 30 - էջ 66:
Հմմտ. Յովհ. ԺԵ 13 - էջ 123:
Հմմտ. Յովհ. ԻԱ 25 - էջ 60:

Գործք Առաքելոց
Գործք Ա. 1 - էջ 60, 61:
Գործք Ա. 11 - էջ 274:
Գործք Ա. 9 - էջ 290:
Գործք Գ 25 - էջ 232:
Գրոծք ԺԴ 21 - էջ 159:
Հմմտ. Գործք Ա. 3 - էջ 283:
Հմմտ. Գործք Բ 31 - էջ 263:
Հմմտ. Գործք Է 2 - էջ 200:
Հմմտ. Գործք Է 55 - էջ 289:
Հմմտ. Գործք ԺԴ 21 - էջ 159:
Հմմտ. Գործք ԺԴ 21 - էջ 231:
Հմմտ. Գործք ԺԷ 31 - էջ 279:
Հմմտ. Գործք ԻԱ 8 - էջ 59:

Թուղթ Առ Կորնթացիս Ա
Առ Ա Կորնթ. ԺԲ 28 - էջ 213:
Առ Ա Կորնթ. ԺԵ 24 - էջ 267:
Առ Ա Կորնթ. Բ 8 - էջ 291:
Առ Ա Կորնթ. ԺԱ 1 - էջ 174:
Առ Ա Կորնթ. ԺԲ 26 - էջ 115, 122:
Հմմտ. Առ Ա Կորնթ. Ե 9, հմմտ. Յայտն. ԺԴ 4 - էջ 204:
Հմմտ. Առ Ա Կորնթ. Զ 10 - էջ 169:
Հմմտ. Առ Ա Կորնթ. Է 28 - էջ 285:
Հմմտ. Առ Ա Կորնթ. Է 7-8 - էջ 165:
Հմմտ. Առ Ա Կորնթ. Է 9 - էջ 165:
Հմմտ. Առ Ա Կորնթ. ԺԱ 29 - էջ 218:
Տե՛ս Առ Ա Կորնթ. ԺԵ 41 - էջ 150:
Հմմտ. Առ Ա Կորնթ. ԺԵ 55 - էջ 260:

Թուղթ Առ Կորնթացիս Ա
Բ Կորնթ. Զ 2 - էջ 160:
Բ Կորնթ. Ժ 5 - էջ 96:
Տե՛ս Բ Կորնթ. ԺԱ 29 - էջ 154:
Հմմտ. Բ Կորնթ. Ե 10 - էջ 185, 224:
Հմմտ. Բ Կորնթ. Զ 14 - էջ 217:
Հմմտ. Բ Կորնթ. Դ 46 - էջ 141:
Հմմտ. Բ Կորնթ. Զ 14-15 - էջ 107:
Հմմտ. Բ Կորնթ. Ը 14 - էջ 170:
Հմմտ. Բ Կորնթ. ԺԳ 3 - էջ 264:

Պետրոս Ա
Տե՛ս Ա Պետրոս Ա. 11 - էջ 139:
Ա Պետրոս Ա. 16 - էջ 206:
Ա Պետրոս Բ 2 - էջ 149:
Ա Պետրոս Բ 22 - էջ 263:

Պետրոս Բ
Հմմտ. Բ Պետրոս Ա. 15 - էջ 156:
Հմմտ. Բ Պետրոս Բ 9 - էջ 228:
Տե՛ս Բ Պետրոս Ա. 19 - էջ 141:

Տիմոթէոս
Առ Տիմոթ. Զ 16 - էջ 264:
Հմմտ. Ա. Տիմոթ. Զ 16 - էջ 289:

Բ Տիմոթ. Դ 7-8 - էջ 158:
Համմտ. Ա Տիմոթ. Ե 20 - էջ 225:
Համմտ. Բ Տիմոթ. Ե 8 - էջ 109:
Համմտ. Բ Տիմոթ. Գ 12 - էջ 285:
Բ Տիմոթ. Դ 2 - էջ 154:

**Առ Փիլիպեցիս**
Համմտ. Առ Փիլիպ. Գ 18-19 - էջ 97:
Տե՛ս Առ Փիլիպ. Գ 18 - էջ 134:

**Առ Հռոմեացիս**
Առ Հռոմ. Ա 26 - էջ 198:
Առ Հռոմ. Ե 14 - էջ 94:
Առ Հռոմ. Ը 32 - էջ 123:
Առ Հռոմ. Ը 38 - էջ 141:
Առ Հռոմ. Թ 5 - էջ 68, 69:
Առ Հռոմ. Ժ 19 - էջ 164:
Համմտ. Առ Հռոմ. Ա 18 - էջ 117:
Համմտ. Առ Հռոմ. Բ 13 - էջ 119:
Համմտ. Առ Հռոմ Գ 23-24 - էջ 101:
Համմտ. Հռոմ. ԺԳ 7 - էջ 89:
Տե՛ս Առ Հռոմ. Ա 20 - էջ 198:

**Առ Կողոսացիս**
Առ Կողոս. Գ 1 - էջ 141:
Համմտ. Առ Կողոս. Գ 1-2 - էջ 181:

**Առ Թեսաղոնիկեցիս Բ**
Համմտ. Առ Բ Թեսաղ. Բ 10-11 - էջ 273:

**Առ Գաղատացիս**
Համմտ. Առ Գաղատ. Ե 17 - էջ 244:
Առ Գաղատ. Գ 27 - էջ 142, 202:
Առ Գաղատ. Ե 17 - էջ 81:

**Առ Եբրայեցիս**
Առ Եբր. Ա 3 - էջ 205:
Առ Եբր. Ա 7 - էջ 222:
Առ Եբր. Բ 13 - էջ 148:
Առ Եբր. Բ 7 - էջ 123:
Առ Եբր. Գ 6 - էջ 213:
Առ Եբր. ԺԱ 37 - էջ 295:
Տե՛ս Առ Եբր. Զ 19 - էջ 265:
Տե՛ս Առ Եբր. ԺԳ 17 - էջ 154:
Համմտ. Առ Եբր. Ա 13 - էջ 212:
Համմտ. Առ Եբր. Զ 19 - էջ 265:
Համմտ. Առ Եբր. ԺԱ 39 - 40 - էջ 235:

**Առ Եփեսացիս**
Առ Եփես. Դ 30 - էջ 122:
Համմտ. Առ Եփես. Գ 10 - էջ 207:
Համմտ. Առ Եփես. Զ 12 - էջ 177:
Համմտ. Առ Եփես. Ա 22, Սաղմ. Ը 7-8 - էջ 213:

**Յակոբոս**
Յակոբ. Ե 4 - էջ 90, 216:
Յակոբ. Ա 15 - էջ 84:
Յակոբ. Բ 8 - էջ 109:
Համմտ. Յակոբ. Ա 13 - էջ 228:
Համմտ. Յակոբ. Ա 17 - էջ 228:

**Յովհաննու Ա**
Տե՛ս Ա Յովհ. Ա 7 - էջ 264:

**Յայտնութիւն**
Համմտ. Յայտ. ԻԱ 4 - էջ 80:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԱՌԱՋԱԲԱՆ ..... 5

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ ..... 49

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՑԱՆԿ ..... 50

Առաջին ճառ ..... 57

Երկրորդ ճառ ..... 61

Երրորդ ճառ ..... 73

Չորրորդ ճառ ..... 83

Հինգերորդ ճառ ..... 92

Վեցերորդ ճառ ..... 99

Ե-ՐՆԵՐՈՐԴ ճառ ..... 110

Ո-ՐԵՐՈՐԴ ճառ ..... 121

Իններորդ ճառ ..... 132

Տասներորդ ճառ ..... 141

Տասնե-մեկերորդ ճառ ..... 146

Տասնե-երկո-երորդ ճառ ..... 158

Տասնե-երեվերորդ ճառ ..... 165

Տասնե-չորսերորդ ճառ ..... 178

Տասնե-հինգերորդ ճառ ..... 192

Տասնե-վեցերորդ ճառ ..... 212

Տասնե-ե-ՐՆԵՐՈՐԴ ճառ ..... 224

Տասնը-ութերորդ ճառն ..... 241
Տասնը-իններորդ ճառն ..... 250
Քսաներորդ ճառն ..... 263
Քսանմեկերորդ ճառն ..... 276
Քսանը-երկու-երորդ ճառն ..... 281
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 299
ՑԱՆԿ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ..... 306

# ՄԱՏԹԷՈՍ ՁՈՒՂԱՅԵՑԻ

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

*Էջադրումը, գրքի և շապիկի ձևավորումը՝*
*Հասմիկ Մխիթարյանի*
*Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան*
*Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան*

Գրքի շապիկին՝
ՄՄ յեռ. 9422, թերթ 14ա, «Ա-երգ-ան գժոխքից» Ի
Տաթևի վանքը

ISBN 978-9939-897-04-2

9 789939 897042

*Մատենադարան*
*Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի*
*հրատարակչական բաժին*
*ՀՀ, Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (+374) 10 513033*
*publishing.matenadaran@gmail.com*

*Տպագրվել է «.....» տպագրատանը։*
*ՀՀ, Երևան, .....*
*Չափը՝ 60x84 1/16։ Ծավալը՝ 20 տպ. մամուլ։*
*Տպաքանակը՝ 200 օրինակ։*